



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀԱԿՈՒՄԱՆԱՆԴՅԱՆ

Է

ՀԱԿՈՐ
ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԿԵՐ

Է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 800
ԳՄԴ 80
Մ 243

Մանանդյան Հ. Հ.

Մ 243 Երկեր, հատոր Է., Բանասիրական ուսումնասիրություններ.
Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը. - Եր.:
Երևանի պետ. համալս. հրատ., 2010. - 580 էջ + 1 ներդիր:

Հակոբ Մանանդյանի երկերի յոթներորդ հատորն ընդգրկում է ականավոր հայագետի քանասիրությանը նվիրված ուսումնասիրությունները: Բացառիկ արժեք են ներկայացնում հունարան դպրոցին և դրա առանձին ներկայացուցիչներին նվիրված աշխատությունները:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 800
ԳՄԴ 80



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Խմբագրական հանճնաժողով

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պ. Հ., ՄԱՂՈՅԱՆ Ա. Գ.
ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա. Ա., ՍՏԵՓԱՆՅԱՆ Պ. Գ.

Հատորը հրատարակության պատրաստեց
Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ISBN 978-5-8084-1232-3

© Հովհաննիսյան Պ. Հ., 2010 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.

INDIAN UNIVERSITY
LIBRARY
1910
1911
1912
1913
1914
1915
1916
1917
1918
1919
1920
1921
1922
1923
1924
1925
1926
1927
1928
1929
1930
1931
1932
1933
1934
1935
1936
1937
1938
1939
1940
1941
1942
1943
1944
1945
1946
1947
1948
1949
1950
1951
1952
1953
1954
1955
1956
1957
1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025



ՄՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Այնուամենայնիվ պատմաբան, ՄՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հակոբ Հաճադասյի Մանանդյանի ծննդյան 100-ամյակի առթիվ (1973 թ.) Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտն ակադեմիայի նախագահության Հանձնարարությանը մեղմանալուց եղավ նրա աշխատությունների ամբողջական հրատարակության նախապատրաստմանը՝ ուժ հատրով:

Սմբարական Հանձնաժողովը (Լ. Հ. Բարսյան, Ս. Տ. Սերեյան, Վ. Ա. Հակոբյան, Ռ. Ի. Մաթևոսյան և Գ. Ս. Սարգսյան) 1977-1985 թվականների ընթացքում լույս բնծայեց Հ. Հ. Մանանդյանի երկերը վեց հատորով: 1-3-րդ հատորներում (1977, 1978) լույս տեսան Հայ ժողովրդի քաղաքական պատմությանը նվիրված Հ. Մանանդյանի կապիտալ ուսումնասիրությունները («Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության», «Տիգրան Բ և Նոսր» և մի քանի մանր հետազոտություններ): 4-րդ հատորն (1981) ամփոփում էր Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի յուսարանմանը նվիրված աշխատությունները, իսկ 5-րդը (1984)՝ Հայաստանի պատմական աշխարհագրությանն ու տեղագրության հարցերին վերաբերող ուսումնասիրությունները:

Լույս տեսած վերջին՝ 6-րդ հատորում (1985) գետնադրվել են Հին և Միջնադարյան Հայաստանի քաղաքների ու ամառիկ պատմությանը և չափալիտությանն ու կլիմաներին նվիրված ուսումնասիրությունները:

Ցավոք, տարրեր պատճանով նախատեսված յոթերորդ և ութերորդ հատորները լույս չտեսան: Հայտնի չէ անգամ, թե իսմբարական Հանձնաժողովն այդ ուղղությամբ որևէ աշխատանք մեղմարկել էր, թե ոչ: Սնդհատված աշխատանքն ինչ-որ չափով ավարտին Հասցնելու և Հ. Մանանդյանի բունասիրական երկերն ընթերցող հանրությանը ներկայացնելու ազնիվ մտահոգությամբ, Փայուստ Գյուլբենկյան Հիմնարկության (Լիսաբոն) Հայկական բաժանմունքի տնօրեն, անվանի Հայագետ գեղտոր Ջավին Եկավյանը սիրահոմար նախաձեռնեց այս հատորի լույս բնծայումը:

Հ. Ղ. Մանանդյանի երկերի սույն յոթներորդ հատորն ամփոփում է Հայագետի բանասիրական Հիմնական ուսումնասիրությունները: Այս բնագավառին վերաբերող նրա առանձին աշխատությունները չափաճառարանված տեղ են գտել երկերի նախորդ հատորներում և, բնականաբար, չեն զետեղվելու այստեղ: Ձևն զետեղվելու նաև է Մանանդյանի աշխատասիրած բնագրերի հրատարակությունները, ինչպես օրինակ՝ Արիստոտելի, Ներմես Նոամածի, Քևոն Աղերքանաղբայցի, Ջևնոն Մտոխի և այլոց: Գերմաներեն և ռուսերեն հրատարակված աշխատությունները սրբում են Հայերեն թարգմանություններով: Աշխատությունների ռուսերեն ու գերմաներեն հեղինակային ամփոփումները կամ Համառոտ բովանդակությունը գտնջ են առնված: Հատորում զետեղված նյութերը հրատարակվում են նույնությունը՝ միայն անհրաժեշտ ուղղադրական և կետադրական միջանոթություններով: Աշխատությունները դասակարգված են ըստ գրությունից ժամանակագրության:

Բանասիրության հարցերին նվիրված Հ. Ղ. Մանանդյանի ուսումնասիրությունները գրվել են շատ վաղուց և Հայագետը, բնականաբար, երբևէն տուրք է տվել իր օրերում տիրապետող տեսակետներին, մասնավորապես Մովսես Խորենացու ժամանակաշրջանի վերաբերյալ: Այնուհանդերձ, զրանք ունեն ճանաչողական մեծ արժեք և կարևոր ներդրումներ են Հայագիտության բնագավառում:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ՌԻՏԵՑՈՒ
ՎԵՐԱԲԵՐՏԱԼ
(ԳՆՂԱՆԳՍԿԱՅԻ)

Բարձամթիվ Հայ պատմիչներ ու ժամանակագիրներ մինչ այժմ նվազ չափով են քննություն ենթարկվել արևմտյան գիտնականների կողմից: Գեոևս կան մի ամբողջ շարք կարևոր երկասիրություններ, ինչպես օրինակ Սերևոսիքի¹, Մովսես Կաղանկատացուր և այլն, որոնք թարգմանվել են միայն ռուսերեն, իսկ արևմտակարգական օրեկ լեզվով՝ ոչ: Ձնայած Հայ պատմագրական երկերի գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է Հայրենակա պատմությանը, սակայն զրանց շարքում կան նաև այնպիսիները, որոնք մեծազույն կարևորություն ունեն նաև Հարևան բարբարոս ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Առաջին հերթին զրանց թվին է պատկանում Մովսես Կաղանկատացու «Աղվանից (Աղվանքի) աշխարհի պատմությունը»: Այդ որոշ առումներով արժեքավոր աշխատության անտեսումը կարևոր է բացատրել նրանով, որ այն հրատարակվել է միայն 1860 թվականին: XIII դարի Հայ ժամանակագիրների միջոցով էր Հայտնի զորմել, որ Մովսես Կաղանկատացին զրկ է Աղվանքի պատմությունը: Զգալի ֆաեքեր են զործադրվել Հայտնաբերելու այդ հեղինակի մեռարկերը: Հայր Մ. Ջամչյանը², Հայր Մուսիս Մամադը³ և Կ. Ֆ. Նոյմանը⁴ հիշատակում էին Մովսես Կաղանկատացուին՝ առանց կարողանալու նրան ավելի հանգամանայից

¹ Սերևոսի երկասիրության եղբայրակի մասը (դ. 30-38) գերմաներեն է թարգմանվել Հ. Հուրշմանի կողմից (H. Hübschmann, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber aus d. Armen, des Sebäos);

² Մ. Ջամչյան, Պատմություն Հայոց, Վենետիկ, 1784-1786, հատ. Բ, էջ 1046:

³ «Quadro della storia letteraria di Armenia», Venezia, 1829, p. 44.

⁴ «Versuch einer Geschichte der armenischen Literatur», Leipzig, 1836, p. 103-104.

կարելի է գտաւարար Համարկ VII զարի առաջին կերի Հեղինակի: Ըստ նրա, երրորդ զիբբը պետք է լինի Հետազայում կատարված Հալվում: Որպես ժամանակի իր որոշարկման միակ հիմնավորում, նա վկայակոչում է այն Հանգամանքը, որ Մովսես Կաղանկատվացին իր պատմության մի քանի տեղերում Հանդես է գալիս որպես VII զարի պատմական իրադարձությունների ժամանակակից և ակտիւտես: Մենք ստորև ցույց կտանք, սակայն, թե որքան երևում է այդ հիմնավորումը:

Այնուհետև կարելի է հիշատակել նաև «Աղվանից պատմության» Ք. Պատկանյանի կողմից կատարված ուսուերն թարգմանությունը (Ս. Պետերբուրգ, 1861): Թեև նա մի Համառոտ ներածությունում պարզաբանում է այն հիմնավորումները, բայց որոնց Մովսես կարող էր VII զարին պատկանել, սակայն, չնայած դրան, նա նրան Համարում է X զարի Հեղինակ, քանի որ XIII զարի Հայ ժամանակագիրները տեղյակ են Աղվանից պատմության բոլոր երեք գրքերի մասին: «Մենք կՀամաձայնեինք, — գրում է նա, — Հեղինակին Համարկ VII զարի մասունագիր, եթե Հայ մատենագիրներին որևէ մեկը «Աղվանից պատմությունը» հիշատակեր երկու գրքով, քանի որ երրորդ գիրքն անկասկած X Հարյուրամյակի գործ է» (ուսուերն թարգմանություն, ներածություն, էջ VIII-IX)²:

4. Ծանազարյանի տեսակետին է անդրադառնում նաև Գ. Զարպանաչյանը («Հայկական Հին դպրութիան պատմություն» (Դ-ԺԳ զար»), Վենետիկ, 1886, էջ 422-435): Նա նույնպես Մովսեսին VII զարի պատմագիրների շարքում է դասում, իսկ երրորդ գիրքը Համարում է Հետազայում կատարված շարունակություն: Երրորդ գիրքը մյուս երկու գրքերից գատկու Հարցում նրա Համար վճռորոշ լեզվական զանազանությունն է: Դա, սակայն, սկզբից ենթ կարելի է մերժել, քանի որ մի բանաբարի պարագայում, որն իր պատմագրական գործը տարրեր սղը-

¹ Այդ նույն կարծիքին էր նաև Հայր Ս. Սոմայը. «Նա, ով գրել է այդանների՝ Հայաստանին սահմանակից այդ ժողովրդի պատմությունը, բայց չտեսի կարծիքի, սպրել է VII զարի վերջում» («Quadro della storia letteraria di Armenia», Venezia, 1829, p. 64):

² Իր Հետազայ գործերում Ք. Պատկանյանը մեր Հեղինակին տեղադրում է մերթ VII, մերթ X դարում (Հճճճ. «Geographie des Moses von Choren», 1877, p. XIV. «Bibliogr. Umriss», 1879, p. 36-37):

յուրերից է քաղում և ի մի բերում, ո՞նի զանազանությունն, անշուշտ, Հասկանալի է:

«Լերջերս Ս. վրդ. Գաղայանի կողմից Մովսես Կաղանկատվացու էջմիածնում գտնվող ձեռագրերի մասին «Արարատ» ամսագրում Հրատարակվեց նա մի Հոդված (1895 թ. Հունիս, սեպտեմբեր, Հոկտեմբեր, նոյեմբեր, 1896 թ. Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ: 1897 թ. փետրվար): Այդ Հոդվածը մեզ Համար այն առումով է Հետաքրքրությունն ներկայացնում, որ, բայց դրա, հիշատակված՝ 1289 թիվակախի Հնագույն ձեռագրում, որը Հանդիսանում է մեր կողմից լույս բնծայված ընագրերի հիմքը, մի քանի Հատվածներ պետք է կեղծված լինեն:

II

«Աղվանից պատմությունը» թեև բաղկացած է երեք գրքերից, այնուհանդերձ, ամենեկին չկա նյութի տրամաբանական դասակարգություն ու բաշխվածություն:

Գրքի Հեղինակը՝ բայց երևույթին մի ազվան Հողերտական¹ Ռաիբ զավառից², որոշում է բայց իրեն մատչելի պատմական երկերի, նամակների և այլ գրավոր նյութերի ներկայացնել իր երկրամասի պատմությունը, և միաժամանակ, ինքինի Հասկանալի է, որ նա իր ժամանակին Համապատասխան, հիմնական առանցքը դարձնում է եկեղեցիապատմական իրադարձությունները: Այն, ինչ նա մեզ առաջին գրքում իր երկրի Հնագույն պատմության մասին կարող է պատմել, քաղել է Հայտնի Հայ մատենագիրների երկերից: Դրան Հակառակ երկրորդ գիրքը, որն ի միջի այլոց արժեքավոր, որևէ այլ բնագրում Հնադորդված տեղեկությունների է պարունակում խաղաղների, Հոների, ապա նաև Ներալի I կայսեր արշավանքների և աղվանական Միհրանյան իշխանական տան մասին, պատմաբանի Համար ստանձնահատուկ Հետաքրքրություն է ներկայացնում:

Հեղինակը մեզ ներկայացնում է միայն Հուն նյութը, որը Համարս ստակ տարեկանություն է կապում Աղվանից երկրի իրա-

¹ Հնագրերից մեկում «Աղվանից պատմության» վերնագիրը Հետևյալ կերպ է ձևակերպված՝ «Գիրք պատմության Աղուսան Ալուսարին ի իրիս Հատորս բանասեր, շարադրեցալ ի Մուսիպ գրքիմաստ փարսպուսե Կաղանկատվացու, ի փողիւոց ժամանակոց» (էջմիածնի ձեռագր. № 632, Հճճճ. «Արարատ», սեպտեմբեր, 1895, էջ 333):

² Հճճճ. Մովսես Կաղանկատվացի, գիրք Բ, գլ. Ժ, էջ 107:

կան պատմության Հետ: Նա կրկնում է միմիայն այն, ինչ գտնում է իր սկզբնաղբյուրներում, առանց այդ նյութերի մեջ համա-
կարգված կերպով կամ գեթ քննակա. ողով խորանույն լինելու: Այն, որ մենք այստեղ գործ ունենք մի այնպիսի բանաբաղային
երկասիրության Հետ, ինչպիսին է նույն X դարին պատկանող Ռվառանու
կախկապուհի երկը, կասկած չի կարող հարուցել, բայց որ գրքի մի
զգալի մասի վերաբերմամբ մենք կարող ենք մասնանշել զենու
գոյություն ունեցող աղբյուրները¹: Գրքի այն հատվածների
գեղարվում, որոնց աղբյուրները մեզ անհայտ են, կարելի էր հազանով
կերպակապուհի, որ այստեղ ասկա է Մովսեսի բուն աշխատանքը:
Ավելի շուտ, սակայն, եթե նկատի առնենք նրա գրքի
բանաբաղային բնույթը, հնարավոր, այդ հավանական է դառնում,
որ այդ հատվածները նույնպես փոխառված են այլ աղբյուրներից:
Այդ իսկ պատճառով է. Բորևի, Կ. Ծահաղարյանի և մյուսների
սխալն այն է, որ նրանք առանց այլևային այդ հատվածները
վերագրում են անձամբ Մովսես Կաղանկատվացուն: Մենք
փորձ-ինչ ավելի ուշ կտեսնենք, թե որպիսի ճակատագրական
նշանակություն է ունեցել նման ենթադրությունը Հեղինակի
ժամանակի որոշարժման հարցում:

Մովսեսը, որը փոխառման բնիացրում իր աղբյուրների մաս-
րամասն տեղեկությունները բազմակիտրման կրճատել է, այդ կերպ
է վարվում նաև նամակների Հետ: Դրանում համոզվելու համար
Բ գրքի խի՞ գլխում գետնզված «Պատասխանի թղթիցն Մխի-
թարայ՝ Ամարասայ կախկապուհի ի Հայոց» նամակը (Մովսեսյան

¹ Ք. Պատկանյանն ի մի է բերել մեր Հեղինակի սկզբնաղբյուրներից շատերը (ուսու. Թարգմ., ներածություն, էջ X-XII): Ըստ նրա, Մովսես կաղանկատվացու կողմից օգտագործվել են Հետևյալ սկզբնաղբյուրները. գիրք Ա, զլ. գ՝ վերջված Մովսես Խորենացուց: Ա, զլ. դ և է՝ «Վալար արոց», մաս XII, էջ 145: Ա, զլ. բ և Բ՝ Մովսես Խորենացի ե «Հայաստապոլոց», մաս I, սեպտեմբերի 21: Ա, զլ. Ժ՝ եղիլ: Ա, զլ. Ժր և Ժզ՝ Մովսես Խորենացի Ա, զլ. Ժդ-ից մինչև Ժր՝ «Վալար արոց» և «Հայաստապոլոց», մաս VII, էջ 5-21, մաս I, սեպտ. 5, «Հայ եկեղեցու ժողովածու» (թիվ 84):... Հմտ. «Mémoires histor. et géogr. sur l'Arménie», Հաս. I, էջ 217: «Հայաստապոլոց», մաս II, մարտ 16: Ա, զլ. Ժթ-ից մինչև ից՝ «Վալար արոց», մաս V, էջ 376, մաս VII, էջ 5-21: Ա, զլ. իր՝ «Վալար արոց», մաս III, էջ 421, մաս V, էջ 281: Գիրք Բ, զլ. ա՝ Պետրոս Մյունցիցի Բ, զլ. բ եղիլ: Բ, զլ. գ՝ Մովսես Խորենացի Բ, զլ. ծե՝ Վիրո, Աղվանից կաթողիկոս: Բ, զլ. ծբ՝ «Վալար արոց»:

Հրատ., էջ 219) կարելի է համեմատող մեզ ավելի ընդարձակ
ձևով ավանդված նամակի Հետ, որը սպառզգիվ է «Արա-
րաստ»-ում (1896 թվական): Ինչպես երևում է, Մովսեսը նույն
գործելակերպն է ցուցաբերել նաև մյուս նամակների գեղարվում,
որոնք միայն նրա կողմից են մեզ ավանդվել:

III

Վերոնշյալից պարզ է դառնում, որ բոլոր քննադատները,
որոնք Մ. Բրտանից Հետո գրադրվել են «Աղվանից պատմու-
թյան», առաջին երկու գրքերի շարադրումը վերագրում են VII
դարին, իսկ երրորդ գիրքը համարում են Հետագա շրջանում կա-
տարված շարունակություն, և որ միայն Ք. Պատկանյանն է այդ
գործը տարակույսով վերագրում X դարին, առանց, սակայն,
Հերբելու VII դարի օգտին կատարվող Հիմնավորումները: Կ. Ծա-
հաղարյանը և նրանից Հետո նաև մյուս ուսումնասիրողներն
իրենց տեսակետի Հիմնավորման համար ուղարկություն են հրա-
վիրում այն հանգամանքի վրա, որ Աղվանից պատմության
երկրորդ գրքում ի Հայտ են գալիս հատվածներ, որոնցից կարելի
է կռահել, որ պատմիչն այդ իրադարձությունները սեփական
աչքերով է տեսել և նաև անձամբ մասնակցել դրանց: Աղվանից
կաթողիկոս Վիրայի պատվիրակության մեկնումը խաղարների
առաջնորդ Ծաթի մոտ, սովր, որ այն ժամանակ ընկնել էր
Աղվանքում, աղվանից իշխան Ջվանշիրի Հզորությունն ու
մեծությունը, նրա իշխանության ներքո երկրի ծաղկումը և նաև
որոշ այլ իրողություններ շարադրված են մեծ մանրամաս-
նությամբ և ակնհայտորեն ակնաստետի կողմից, ինչն արդեն
Ծահաղարյանը մասնանշել էր¹:

Պագարական իշխան Ծաթի՝ Ալեքո Մարանի որդին, 628
թվականին հարձակվում է Ջերմերի վրա, ավերում և

¹ Անուշտ սխալման է, երբ Կ. Ծահաղարյանը որպես սպառչայն այն բանի,
թե Մովսեսն ապրել է VII դարում, վկայություն է մատուցառություն կրել
ուսմանի մասին հաղորդումից Հետևյալ դարձվածը (ներածություն, էջ 83).
«Եստեպ ըստդ» (Ա, զլ. Ժր, էջ 144): Այս խոսքերն առում է ոչ թե դրոշմ, այլ
այն պատմակի, որը նկարագրում է մասնահատուկը: Այդ կեղծ ուսմանը
գոյություն է ունեցել Վաշաղան Բարեպաշտի օրոք (V դար): Ռեքոն, ըստ այդմ,
Ծահաղարյանը սխալ է Մովսեսին տեղադրել V դարում, Հմտ. Ք. Պատկան-
յան, ուսու. Թարգմ., էջ VII, VIII:

կողմնակցում է երկրորդ, այնպես որ աղվաններն իրենց կաթնղիկուս Վիրոյի Հետ Հարկադրված են եղել անչափազանց պարսիկներից և հպատակվել Շաթ արքայարքու տիրապետությանը: Դրանից Հետո կաթնղիկուս Վիրոն, մի պատվիրակության գլուխ անցած, առատ բնձաներով գնում է Շաթի մոտ՝ նրան իր ժողովրդի հպատակությունը ծանուցելու և իր զորավարների ու խորհրդականների Հետ միասին նրան առատ բնձաներով խաղաղեցնելու համար: Պատվիրակները մտնում են Շաթի համարը և նրա կողմից քննուկնում ողորմածարար: Այդ իսկ տեղում ներկայացվում է խաղաղական Հորդան և նկարագրվում է, թե պատվիրակությունն ինչպես ներկայացրեց արքայորդի Շաթին, ինչն անկասկած կարող էր պատվիրակության անդամի կողմից զբաղվել: Հեղինակը որչափի կերպով ստում է. «Անդ տեսաք զբազմոցս նոցա ի դունս ի վերայ ծնագ ըստ նմանութեան փաղանգաց ծանարբուն ուղտոց. խրաբարանչիւր կոնք մի յցնայ մտով յանտորք անասնոց, ըստ նմին և սկսեղք, յորում թնամային յուտեկն իւրեանց յաղաջուր, և զբաժակս և զբնակչիս արծաթեղէնս քանդակունս յուկի համակնայ, զորս բերեալ էին յափարէն Տփլիսեաց, քնդ նմին և զըմբոցս եղջիրեղէնս և զչորոմաձես փայտեղէնս մեծամեծս, որով զարգանան յափէին, և նովին պարարտական սաղոյց անյուայ աղտութն՝ յարխտուն յանգոպս, ի միոյ բաժակ՝՝ երկու կամ երեք ի նոցանէ՛ զանապակ զինկն, կամ՝ զկաթն ուղտոց և շինց յանպղ որովայնս իւրեանց իրեն ի տիկս ուտոցիկս յափէին... Եւ իրեն մուժին զնոսա ի ներքո ըստ մի զոնապաշս մինչև ցերկորդն և զրնձայս ողջունին բարձեալ ի բաղկաց մերոց զկին կաթնղիկոսին, ապա բնփացան ընդ առաջի նորս և հրամայեցին ամենեցունս փոխել ոտն ոտն և երկրպագանել երկից անգամ և այլն» (Բ, գլ. ԺԳ, էջ 125-126):

Մեջբերված հատվածները պարզորոշ ցույց են տալիս, որ նկարագրությունը կատարված է մի ականատեսի կամ Վիրո կաթնղիկոսի պատվիրակության անդամներից մեկի կողմից, քանի որ այն անձամբ Վիրոյի կողմից, որին իրավացիորեն վերագրվում է հաջորդ գլուխը, չի կարող շարադրված լինել, ինչպես ենթադրում էր Պատկանյանը (Ներածություն, էջ XII), նայի, որովհետև այդ գլուխն ամենից առաջ փաստարանում է նրա արձանագրությունը և նրա հայրական հոգածությունն իր ժողովրդի նկատմամբ, և մենք, անչուչս, չենք կարող նրան ընդունակ համարել այն բանին, որ նա երրորդ զեմքով Հեղինակել է իր

ինքնապաշտամունքը, և երկրորդ, որովհետև «և զրնձայս ողջունին բարձեալ ի բաղկաց մերոց զկին կաթնղիկոսին» բառերն ակնհայտորեն պատկանում են ոչ թե անձամբ Վիրոյին, այլ նրա պատվիրակներից մեկին: Կ. Շահապարյանը և Գ. Զարպճանայանն ի դեմս խոսողի տեսնում են Մովսիսին և այդ պատճառով նրան զարձուձ են Վիրոյի ժամանակակից:

Մեկ այլ հատված, որտեղ երևան է զայնս պատմողի անձը, որին բնագրատեղեր զարձայ նույնացնում են Հենց Կաղանկատվացու Հետ, մենք ունենք նույն զրքի 28-րդ գլխում (Բ, գլ. իր, էջ 158-159): Մեծ, խիղիս իշխան Զփանչիրը՝ Միհրանական տոհմից¹, որի սխրագործությունները մեր երկում մանրամասնորեն հաղորդվում են, հրավիրում է մի ընդհանուր ժողով, որին ըստ երևույթին նաև պատմողն է մասնակցել: Ընդ որում թագավորական թիռուկ և փիղը որ պարզամտու պատմողի երևակայության վրա առանձնահատուկ ուժեղ տպավորություն են գործել: Այստեղ մենք ներկայացնում ենք մի հատված նրա հաղորդումից. «այնիմոս լինելք անդ համալխարհական ժողովուր տեսանէանք զնա ոչ միայն սովորական շափով, այլ առասել ևս բազմապատիկ արքայական շքով պճնեալ պերեհետալ, տեսանէար ևս զարքայականն Հաւ, որոյ տեսուկն ցանկայի էր, զի ընդ զեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համալար խառնեալ արտաքս ճոճէր...» և այլն: Այստեղ նույնպես մենք այն հանձնգրման ենք հանգում, որ ոչ միայն Վիրոյին վերաբերող հաղորդումները, այլև նրանք, որ վերաբերում են Զփանչիր իշխանին, սերում են մի ժամանակակիցի:

Երբ, սակայն, Շահապարյանը և Զարպճանայանը պնդում են, թե ըստ հղված հատվածների «տեսուկանեղիւրեն» կարելի է ընդունել, որ Մովսես Կաղանկատվացին Վիրո կաթնղիկոսի ժամանակ և Զփանչիր իշխանի օրոք է ապրել, նրանք թույլ են տալիս մեթոդական սխալ, քանի որ, առանց որևէ հիմքի Մովսեսին համարում են անձամբ այդ արժեքավոր նկարագրությունների ուղղակի Հեղինակ և ամենեին ուշադրություն չեն զարձուձ փոխառման հնարավորության վրա: Մենք այլապես ևս ապացույցներ ունենք այն բանի, որ մեր Հեղինակը, քանի որ հոգ չի տանում վերամշակելու իր սկզբնաղբյուրները, իր երաշխավոր

¹ Միհրանը պետք է եղած լինի Մասանյան Խորովի II (Փարվիկ) արքայի (590-628) ազգականը: Մովսես Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ, էջ 135:

անձանց անձնական դիտողություններն ուղղակիորեն ներառել է իր գործի մեջ¹, և եթե, այսպիսով, երկրորդ գրքում այս ու այնտեղ ի Հայտ են գալիս Հատվածներ, որոնք ստաջին Հայացքից կարծես թե որպես պատճոհ մեր Հեղինակին են ներկայացնում, ապա դրանք չեն կարող Հուսույի փաստարկ մատակցել իր՝ բանաբառի ժամանակը որոշելու Համար: Չի կարելի նաև առանց այնուայի ենթադրել, թե Վերսի կախիղկոտի պատվիրակը և Զվանշիրի կողմից հրավիրված ժողովի մասնակիցը միևնույն անձն են, քանի որ մեր Հեղինակը կարող է տվյալ գլուխները երկու տարբեր արդյունքներից փոխառած լինել:

Մենք Հիմա կփորձենք ապացուցել, որ Հանգամանակից ուսումնասիրությունն զեպրում Հարկադրաբար պետք է Հանդել այն Էդրակացություն, որ Մովսեսը վերևում քննարկված՝ ժամանակակից Հաջորդումները փոխառել է այլ գրավոր աղբյուրներից, քանի որ երկրորդ գրքի մի քանի Հատվածներ, որոնք մենք իրավունք չունենք Համարել Հետագայում կատարված Հավելումներ, պարզորոշ կերպով մատնում են Հետագա բանաբառի՝ Հեղինակ լինելը: Կաղանկատվացին ՅՂ գլխում (գիրք Բ)՝ «Վասն Միհրական տահմին լինել ի Սասանեական Ռոստոմու ցեղն և լինել նախագահ տանն Աղուանից», ներառում է և Հետևյալ խոսքերով. «Ե՛ս ստոյղ և ի բուն պատմաբանց այսպէս ծանեալ, եթէ Բնդոյ և Վատան եղբարք՝ ազգայինք Պարսից թագաւորին, յարեան ի վերայ Ռոմզղի արքայի Հօր Ռոստոմու և սպայինն զնա» (Բ, գլ. ժե, էջ 134): Մարդապաններն իրենց քեռորդի Ռոստով Փարվեղի Հետ փախչում են բյուզանդական կայսր Մավրիկիոսի (582-602) մոտ: Ռոստովը նրա օգնությամբ հռչակվում է թագավոր: Մի քանի տարի անց նա կամենում է վրեժ չունել իր Հօր մահվան Համար և կորզադրում է քոյոր վտանգավոր մարդկանց, որոնք սպանել են իր Հօրը, մահապատմի ենթարկել: Դրա Հետևանքով նրա ազգական Միհրանը փախչում է Ազգային և գալիս Պարտավ մեծ քաղաքը: Ռոստովն այնուհետև Հաշտվում է նրա Հետ և նրան նշանակում

այդ երկրի տիրակալ: Մովսեսն այնուհետև մեզ է ավանդում Միհրական տան ծննդաբանությունը (Բ, գլ. ժե, էջ 135-136). «Լինի սորա որդի Արմայել, որ ծնա զՎարդ, Վարդ ծնա զբաջն Վարդակ, որ շինեաց զբերքն Գարդմանալ զերխս ամս... Սորա լինի որդի Վարդ, Վարդ զնա ծնալ զՎարագան, զԾուշի տրինն և զՎարագ-Գրիգոր՝ գտաւջին իշխանն Աղուանից, որ էտ զվարտութիւն ի Վիրայ, Աղուանից կախիղկոտի: Վարագ-Գրիգորի լինին որդի չորք՝ Վարագ-Փրած, Ջիւանշիր, Յեղուան-Ռոստով և Վարագման: Հիմա խոսա տարօրինակ է, որ մեր Հեղինակը, որն իբրև թե Վերսիի պատվիրակ (628 թ.) և Զվանշիրի ժամանակակից է, իր ժամանակին այնքան մոտ այդպիսի իրադարձությունների մասին միայն «Զծնարխո և իսկական պատմագիրներից» է տեղեկանում: Էյ այլևի արտատոջ է, այս, պատմականորեն անհարին, որ նա Միհրական Ռոստով Փարվեղի (590-628) ազգականից մինչև իշխան Զվանշիրը (նա կառավարել է քսա մեր Հեղինակի 637 թվականից Հետո)¹ Հաջորգած վեց սերունդներին կառավարել է տալիս մի քանի տասնամյակում²: Ընչպե՞ս կարելի է զա Համատեղել այն ենթադրությունն, թե Մովսեսը ապրել է VII դարում: Անհար է, որ մեկը, որը մեզ կենդանի նկարագրություններ է տալիս խաղաղների մոտ գնացած պատվիրակության մասին, միաժամանակ այդպիսի միակզամայն առասպելաբանական տեղեկություններ չարագրի ազլանական իշխանական տան մասին: Դա, սակայն, X դարի մի բանաբառը, անշուշտ, կարող էր անել:

Այդ գլուխը, որը չի կարող պատկանել ժամանակակից պատմագրի, միակը չէ: Երկրորդ գրքի իմ և լզ գլուխներում մենք ունենք երկու պատմություններ Սուրբ Իսրայել անձնավորություն միջոցով Սուրբ Ռաշի գտնվելու մասին: Նա պետք է ապրած լինի VII դարում, քանի որ Հշչատակվում է որպես Հայոց կախիղկոտ Սահակ Գ Զորոտրեցու (677-703) և իշխան Գրիգոր Մանլիկոնյանի ժամանակակից (Բ, գլ. լբ, լս): Նա պետք է,

¹ Հճոտ, Ա, գլ. զ, էջ 92 - «Յատաճամ ամի Հայրապետութեանն Արտալայ տնայն անտարման Վեհիկ ի տնայնա զար մի անուպատական ... և այնն: Բ, գլ. ժե, էջ 130, ևնս Վիրոյ՝ Աղուանից և Լինուց և Ջոյայ կախիղկոտ, թողո՞մ ասել զայ աննայն պէտպէս զազգայի...»:

¹ Հճոտ, Բ, գլ. ժթ, էջ 142 - «Եւ ի քսաներորդ ամի Յաղկիկոսի (632/3-651/2) Հանօրն ի բաց բանալոյ ի միջոյ տէրութիւնն Պարսից, և այն երեսուն և մի ամ եր տիկերամատմութեան Հազարացոյց և տեսան իմոյ Ջիւանշիրի տան և Հիղ ամս»:

² Հճոտ, M. Brosset, Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie, St. Pétersb., 1851, p. 476:

ուրևն, Մովսես Գաղանկատպացու ժամանակ ապրած լինել: Եթև, սակայն, Մովսես իրոք արդևն 628 թվականին որպես պատվիրակ, այսինքն՝ որպես Հասուն մարդ, ուղարկվել էր խազարների առաջորդ Ծաթի մոտ, ապա նա պետք է ավելի Հասուն տարիք ունեցած լինի, քան Բարայելը: Այդ ղեկավարում արդար աչքի չի՞ գարկում, որ նա Բարայելի՝ իր կրտսեր ժամանակակցի միջոցով առասպելական գունամոխրում ունեցող մի պատմություն է մեջբերում և միաժամանակ նշում, որ այդ բաների մասին ճշմարիտ ավանդությունները շատ Համառոտ են, և նա այդ պատճառով ի վիճակի չէ Սուրբ Բարայելի ճղնաժորական կյանքի սկզբի մասին ավելի որոշակի տեղեկություն հաղորդել (Հճմտ. գիրք Բ, գլ. իթ, էջ 160): Բ գրքի լոգ գլխում խոսքը վերաբերում է Ազվանից կաթողիկոս Եղիազարի ժամանակ Ռտի գավառի Գիս գետում սուրբ մատույնների և Փրկիչ Ռաչի մի մասի Հայտնաբերմանը: Գրան Հակոսակ իթ գլխում (գիրք Բ) խոսվում է Ազվանից կաթողիկոս Ռխտանի՝ Եղիազարի նախորդի օրոք Մեծիորդանքի Ռոստակ գավառում, Տրտու գետի ափին, Չղախյան Հովտում, Ապարիտական փորժրկի դաշտում Սուրբ Ռաչի գտնվելու մասին: Ենթադրվում էր, որ Սուրբ Մովսեսն ինքն է այդ սուրբ մատույնները նախկինում բերել Ազվանը: Այն, որ գտածոյի մասին հաղորդումը պատմական ենթատեսքտ ունի, կտակաբն ենթակա չէ, քանի որ միաժամանակ տեղեկացվում է այն նամակի մասին, որը Գավիթ և Լավել եպիսկոպոսներն այդ աստվածային ոգորածությունն պատճառով ուղարկեցին Ռխտանես կաթողիկոսին և Զվանչիք իշխանին, և նաև այն պատասխանի, որը նրանք զբանից Հևոտ ստացան: Այդ երկու գրությունների խոսքերից նկատելի է, որ մեր Հեղինակը երկու գտածոների նույնական է Համարում: Եթև մենք իրոք այդ գրություններում մեր առջև ունենք միևնույն իրադարձությանը վերաբերող երկու միջանցից տարբերվող ավանդություններ, ապա ակնհայտորեն այդ երկու հաղորդումներից մեկը պետք է սխալ լինի, առաջացած լինի սուկ մի ավելի ուշ դարաբջխանում: Այդ ղեկավար, սակայն, VII դարի Հեղինակը չի կարող Հին, անխառն ավանդությունը և միաժամանակ նրա Հևոտաց փոխակերպումն օգտագործած լինել: Եթև, սակայն, այստեղ խոսքը վերաբերում է երկու տարբեր գտածոների, ինչը մեզ նաև Հավանական է լինում, ապա ակնհայտ է գտածում, որ Գաղանկատպացին գրությունների վերնագրերում միմյանց Հևո է շփոթում այնպիսի իրադարձ-

ություններ, որոնք պետք է պատկանեն իր ժամանակին: Այդ ղեկավարն պետք է ենթադրել, որ գրությունների վերնագրերն անորոշություն միայն Հևոտացում են ավելացվել: Այստեղ նույնպես, ինչպես Միհրապետ տան ժողովանք վերաբերող պատմության ղեկավարն, պետք է նկատի առնել այն փաստը, որ մեր Հեղինակը որոշակիորեն վկայում է, որ նա այդ տեղեկությունները փոխառել է այդ գրավոր աղբյուրներից՝ չնայած նա ինքը պետք է պատկանի այդ ժամանակին: Այն խոսքերը, որ նա միայն Հակոբ Հաղորդումներ է գտել, ժամանակակցի ղեկավարն Հասկանալի չեն, սակայն X դարի քանաքաղի ղեկավարն, անուշա, այո:

Այն ենթադրություններ, թե Մովսեսը VII դարում է ապրել, մի ակնհայտորեն Հակասող փաստ առկա է Բ գրքի խո գլխի 219-րդ էջում: Այդ գլխում նշվում է, Հայոց Սեյիս Ա Արճիշեցի կաթողիկոսի մասին, որի կաթողիկոսական պաշտոնավարումը տեղի է ունեցել VIII դարի սկզբում¹: Բնչպե՞ս պետք է VII դարի սկզբի ղեկավարի ժամանակակիցը կարողանա շարագրել նաև VIII դարի իրադարձությունները: Մեզ Հավանաբար կտատասխանեն, որ Մովսեսն իր պատմությունը գրել է առաջացած տարիքում: Բայց զրան կարելի է առարկել նրանով, որ խազարների ներխուժման և Հզոր իշխան Զվանչիքի կառավարման շրջանի նկատարությունները, որոնք չի են մանրամասնելով, ժամանակակցի կողմից կատարված գրառումներ են երևում: Մի տեղում նաև Հեղինակն ինքն է մեզ ասում, որ զեռ արուեստ Համակված է բարբարոսների ստակալի ներխուժումների Երկուրդով ու արքատիով (Հճմտ. Բ, գլ. թ, էջ 99): Դա ցույց է ապրի, որ զբառումը կատարվել է այդ ղեկավարից կարճ ժամանակ անց: Երբ, սակայն, նույն Մովսեսը, որը VII դարի առաջին քառորդում որպես ակնառատես հաղորդում է խազարների ներխուժման մասին և

¹ Հճմտ. գիրք Բ, էջ 160 – «Ճնշմարտախաս դրուագս քանից սակա ինչ տուպ գոտ»: 1

² Հճմտ. Բ, գլ. խո, էջ 219 – «Ակա վասն տեսան եղխոյի խաղարդութեան յերիցո վան, յորժամ յկուսան երթայր՝ սակա այն ոչ գրեցին ի ծառայել, արգելին և նորս զՆովար տերն»: Ստեփանոս Սրբեյանի մոտ գուգահեռ Համովանք (Մատ. Հրատ., 1861, էջ 76-77) Հևոտայց կերպ է մտակերպված. քայց վասն եղխոյի կաթողիկոսի խաղարդութեանն յերիցո վան (?): մինչ վնայր ի Տուպատել զկուսան՝ ոչ գրեցին սորս ի ծառայել և նորս՝ զՆովար տերն»: 2

VIII դարի սկզբին կամենում է որպես ականատես նկարագրած լինել Հայոց եղյա կաթողիկոսի ճանապարհորդությունը դեպի Աղվանք, ապա մենք ստիպված ենք նրան, ինչպես Մովսես Ստրենացուն, ավելի քան Հայոցը տարվա մի միանգամայն աստապկական տարիք վերադրել: Այս պարզաբանումները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ մինչևայժմյան գրեթե Համբողջանուր կերպով տիրող այն տեսակետը, ըստ որի Մովսես Կազանկատվացին VII դարի պատմիչ է, բնութիյուն բռնել չի կարող:

Այնուհանդերձ, կարող է ստվել, որ սխալ, աստապկական է ժամանակագրորեն անխույսարկի Հաղորդումները, որոնք սովա են Մովսեսի մոտ, մեկ այլ գրչի կողմից են ներմուծվել: Եթե մենք այժմյան բնագրում սովա Հակասությունները ոչ մի այլ Հնարավոր եղանակով տեղ կարող բացառելը, ապա միայն մեկտեղապես շարունակ լրացումներ Հարություն՝ օտար ներմուծումների ենթադրության հետ կարող ենք համաձայնել: Նաև անպատճառ անհրաժեշտ չէ երրորդ գիրքը, որը «Աղվանից պատմությունը» շարունակում է մինչև X դարը, համարել մի հետագա շարունակողի գործը: Չնայած միանգամայն ճիշտ է, որ այդ մասն ինչպես ձևով, այնպես էլ պատմական հետաքրքրահանութեամբ երկրորդ գրքին է անպակ զիջում է, բայց այնուամենայնիվ դա չի խանգարում երկու գրքերն էլ նույն Հեղինակին վերագրել: Փաստաբար Հենց կարող է լինել այն, որ մեր բանբարացն իր երկի VII դարին Հաջորդող պատմության համար միայն ազբատիկ է անբավարար աղբյուրներ է գտել, մի ենթադրություն, որն անպատճառ Համապատասխանում է այն ժամանակաշրջանի պատմական իրադրությունը:

Բոլոր երեք գրքերի միասնականությունը հաստատվում է նաև երրորդ գրքի նախավերջին գլխում գտնվող մի հատվածով: Միհրական տան աղվանից տիրակալների համառոտ այցուսակային պատկերման առաջին տպիկում Հեղինակը որոշակիորեն ասում է. «Ջանուսան արքայիցն վերագոյն (= առաջին գրքում) գրեցար ի քաջն Վաչագանայ մինչև ցարակալտն Վաչագան» (Փ, գ, իզ, էջ 271): Գրանից հետևում է, որ երրորդ գրքի Հեղինակը որոշակիորեն իրեն մատնանշում է նաև որպես նախորդների Հեղինակը Պետր է օւրման ընդունել, որ կարծեցյալ շարունակողը ոչ միայն շարունակել է Մովսեսի գիրքը, այլև դրա հետ մեկտեղ գիտափորձայ կերպով փորձել է ստեղծել այն ինչ

ստավորությունը, ին ինքն է առաջին երկու գրքերի Հեղինակը, այսինքն՝ որ նա ուղղակի կեղծարար է. մի ենթադրություն, որն ամենևին հավանական չէ:

Եթե, սակայն, երրորդ գիրքը, որը եղբայրակցում է ուղղիկների կողմից Պարտավ մայրաքաղաքի գրավմամբ (944), սերում է Հենց Մովսես Կազանկատվացուց, ապա մենք պետք է, իհարկե, ընդունենք, որ Հեղինակը Վիրոյի պատվիրակի նկարագրությունները և այն մարդու սեղեկությունները, որը մասնակցել է Ջվանկիրի կողմից հրավիրված ժողովին, նախկին Հեղինակների գրառումներից է վերցրել և դրանք նույն կերպով, ինչպես Մովսես Ստրենացու, Պետրոս Մյունեցու, Վիրոյի և բազմաթիվ ուրիշ գրավոր տեքստերից փոխառված Հաղորդումները, ներառել է իր բանաբարություն մեջ:

Ի նպաստ մեր այդ տեսակետի է խոսում առանձնապես Հենց իր պատմագրի մի վկայությունը, որը մինչև այժմ տարօրինակ կերպով ամրոցմովին անտեսվել է: Երկրորդ գիրքն ունի հետևյալ վերնագիրը՝ «Փաստմիխն ի ղևպ գրոցա»¹: Ըստ մեր բանաբարության, զա նշանակում է «Փաստությունն ըստ իմ ձեռքի տակ գտնված աղբյուրների»: Վերնագրի այդօրինակ բնկալման ճշմարտացիությունը մեզ երաշխավորում են դրան Հաջորդող երկրորդ գրքի առաջին խոսքերը, որոնք մենք ներկայացնում ենք ստորև. «Գտանին զդոցը Արևելից կողմանց, որք ոչ են անկեալ ի զիրս Հաղիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաբ մակարկել ի տառս տողաչափութեան մերում» (Ք, գլ, ա, էջ 81): Այս խոսքերը Հեղինակին պարզորոշ խոստովանություն են այն մասին, որ նա երկրորդ գիրքը կազմել է մի շարք գրավոր աղբյուրներից, և ըստ այդմ մեր մինչևայժմյան նկատառումները լավագույնս հիմնավորվում են:

Կազանկատվացու ժամանակի մեր որոշարկման համար բացի շարագրված ներքին հիմնավորումներից նկատի են առնվում նաև Հայ ժամանակագիրների վկայությունները: Մխիթար Այրիվանցին XIII դարի մի Հայ ժամանակագիր, պատմագիրների իր

¹ Այս վերնագիրը վերաբերում է, ինչպես հավաստում է Եսևնաղբյուրի հրատարակությունը, ամբողջ երկրորդ գրքին: Ք. Պատկանարի Թարգմանությունը՝ «Գրքի բովանդակության մեկտեղություն», ակնհայտորեն սխալ է (Պատկ., ուս. Թարգմ., էջ 79):

ցուցակում «Մովսես Աղվանացուն» տեղադրում է Աերեսի (VII դար) և Ղևոնդ վարդապետի (VIII դար) միջև¹: Հայր Շահաարյանը և Հայր Զարպհանապանը Հիշատակված նշանն մեջ տեղադրում են ապացույց իրենց այն ենթադրությունյան համար, թե Մովսեսն ապրել է VII դարում: Այնուհանդերձ Մխիթար Այրիվանեցու այդ ցանկում պատմագիրների անունները խիստ ժամանակագրական կարգով տեղակայված չեն: Նույն ցանկում Թովմա վարդապետը (X դար) տեղակայված է Մովսես Մորենացուց, Ղազար Փարպեցուց և Եղիշեկից առաջ: Աերեսար (VII դար) և Ղևոնդ վարդապետը (VIII դար) ի հայտ են գալիս միայն Շապուհ Բագրատունից հետո (IX դար) և այլև: Նույն Հեղինակի ժամանակագրական պատմական ցանկերում այդ նշումից շատ ավելի կարևոր մեկ այլ հատված, որտեղ «Աղվանից պատմագիր Մովսես Կաղանկատվացու և պատմագիր Ուխտանեսի» ստեղծագործական ծագումն շրջանը սահմանված է 980-1000 թվականների միջև²: Այդ ճշգրիտ տվյալը հազիվ թե կարելի լինի հորինված համարել: Այն ավելի շուտ անկասկածելիորեն ծագում է ավելի հին աղբյուրներից: XIII դարի մեկ այլ պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցին, որը հայ պատմագիրներին ներկայացնում է ժամանակագրական կարգով, նույնպես բանաբաղ Մովսես Կաղանկատվացուն հիշատակում է միայն Հովհաննես Կաթողիկոսից (X դարի սկզբից) հետո և Ուխտանես կախկոտուցից (X դարի վերջ) առաջ³: Ռեբան, մենք լիբրավո կերպով կարող ենք պնդել, որ հետագա պատմական տեղեկությունները միանգամայն համապատասխանում են մեր այն տեսակետին, ըստ որի Մովսեսը X դարի բանաբաղ է:

Եթե մենք հիմա կաննում ենք ճշգրիտ որոշել Աղվանից պատմության գրությունյան ժամանակը, ապա պետք է նախ և առաջ քննության արժանացնենք վերջին գրքի երբապակից մասը: Վերջին զեպրը, որի մասին Մովսեսը մեզ հաղորդում է իր

գրքում, ուղղիկների կողմից Պարտավ բազարի գրավումն է: Այդ փաստը, ըստ արարական աղբյուրների, տեղի է ունեցել 944 թվականին¹: Մովսեսի մոտ այնուհետև հաջորդում են Աղվանքի գահակալների և կաթողիկոսների երկու ցուցակներ, որոնք ձգվում են զբեթն մինչև X դարի վերջը (987 թ.): Գահակալների ցանկում որպես վերջինը հիշատակվում է Անադայի որդի Հովհաննես-Մեներկերնը՝ Գալիթի Մաղխարոսի (X դարի երկրորդ կես) ժամանակակիցը: Կաթողիկոսների ցանկում մտադրվող կաթողիկոս Տեր-Գավթից հետո (958-963), որը ձեռնադրվել է Հայոց Անանիա Ա Մովսեսի կաթողիկոսի կողմից, հիշատակում են նա երկու կաթողիկոսներ՝ Տեր-Պետրոսին² (18 տարի) և Տեր-Մովսեսին (6 տարի): Ըստ այդմ երևում է, որ Մխիթար Այրիվանեցին, որը «Մովսես Աղվանացուն» տեղակայում է X դարի վերջին (980-1000), մեր բանաբաղի ժամանակը, ըստ էության, ճիշտ է որոշել:

Մեր այդ ենթադրությունյան զեմ, անշուշտ, կարելի է առարկել՝ ասելով, որ զեմ Հայոց Անանիա Ա կաթողիկոսն (943-964) Աղվանից եկեղեցու վերաբերյալ իր գրությունն մեջ օգտվել է Մովսեսի Պատմությունից³: Այնուհանդերձ այդ տեսակետը, ինչպես մենք շուտով կտեսնենք, անհնայտորեն սխալ է: Անանիայի գրություն համար չարժատիվ դարձան Աղվանից եկեղեցու հետ առարամայնությունները: Նույն ի վեր բնորոշված կարգ էր, որ Աղվանից կաթողիկոսներն իրենց օժանտ ստանալու Գրիգոր Լուսավորչի հաջորդներին: Հայոց եկեղեցու վրացական եկեղեցու բաժանումից հետո (VI դարի վերջին), սակայն աղվանները նույնպես փորձեցին իրենց եկեղեցին անկասկա դարձնել,

¹ Հեմո, Մխիթար Արիվանեցի Թարգմանությունը Մ. Բրոսսի (Mém. de l'Acad. Imp., VII, 13, № 5), Ս. Պետրոսով, 1869, էջ 25:

² Հեմո, Մխիթար Արիվանեցի (Քրոսակ), էջ 88:

³ Հեմո, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1858, էջ 47:

¹ Մ. Բրոսսն ուսանելի ավագակային արշավաբեր զեպի Պարտավ վերաբերում է 914 թվականին: Այնուհանդերձ այն մասին, որ ուսանելը 914 թվականին զբավել են Պարտավ բազարը, մենք ամենին ոչինչ չգիտենք: Գրա փոխարեն արարական պատմագիրներից մեզ հայտնի է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 944 թվականին: Մովսեսի հաղորդում նաև ընդհանուր ամամը համապատասխանում է իրն այ-Աթիթի տեղեկություններին: Հեմո, Dorn, Über die Einfälle der alten Russen in Tabaristan, p. 296, Mém. de l'Acad., VII, 23, St.-Pét., 1877:

² Ամենահին մտադրում Տեր-Պետրոսի փոխարեն զրված է Տեր-Պետրոս, Հեմո, «Արարատ», ապրիլ, 1896, էջ 178:

³ Հեմո, «Արարատ», 1896, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ:

և Հայաստանի քաղաքական ինչությունն ու նրա եկեղեցու կազմավորման շրջաններում ազգանից հոգևորականությանը համախառն հաղորդում էր իրականացնել քաղաքի ինքնուրույնությունը: Մակայե նոր Հայաստանը դարձավ Հասնում էր քաղաքական հզորության առաջին քարքար ստեղծանի, Հայ հոգևորականությունը նույնպես կարգավորում էր Ազգանքի եկեղեցական անկախությունը կամ խաղաղ ճանապարհով կամ նաև բռնակցությամբ մշել, այդպես էր և Հայոց կաթողիկոս Եղիս Ա Արմինյանը ժամանակ ունեցողը Հարությունյանի սկզբին: Հայերի համար զեփար չէր ազգանական ինքնուրույնության մշտումը, քանի որ Ազգանից եկեղեցին մշակութային շատ ավելի էր սերտանել հայկականին, քան իրերազանցանը: 949 թվականին Անանիոս Ա Մովսեյան եկավ Ազգանք՝ կաթողիկոս Տեր-Գաղբկին իր պաշտոնից հեռացնելու համար, քանի որ նա Հայոց կաթողիկոսի կողմից չէր ձեռնադրվել: Այս ու այնտեղ, սակայն, ինչպես Անանիոս ինքն է իր գոյություն մեջ մեզ հաղորդում է («Արարատ», 1896, հունվար, էջ 24), ազգանքերը կանխում էին Հայոց եկեղեցու զերբազույն իշխանությունն ու հեղինակությունը վիճարկել՝ պեղելով: Քն ազգանական եկեղեցին ավելի հին է, քան հայկականը: Այդ ժամանակ Անանիոս, ինչպես ինքն է անգնեկացեում, պահանջելը նրանից «Ազգանից պատմությունը»՝ նրանց լուսավորման սկզբնական շրջանի պատմությունն ուսումնասիրելու համար: «Տե՛ղ նրանք մեզ թույլ չտվեցին...» առում է Անանիոսը,՝ այն տեսելը, բանդի այն ազգանից հոգևոր առաջնորդին ցույց էր տալիս որպես արքեպիսկոպոս, իսկ հայերի առաջնորդին՝ պատրաստ: Եվ քանի որ նրանք դիտարկեցին, որ ավելի ցածր դիրքը (քառասյի միաստության մասը) իրենց կողմում էր, գաղտնի պահեցին Ազգանից պատմությունը» (Հեմտ. «Արարատ», 1896, հունվար, էջ 24): Ի վերջո, սակայն, պահանջված գիրքը ներկայացրեցին նրան, և այն, հաղորդում է Անանիոսը, «զոր սիրվար, որ ուներ դայա մե օրինակի, թե...»¹:

¹ «Արարատ», 1896, հունվար, էջ 25: Հեմտ. նաև Մետիստոս Օրբիլյան, «Այնուհետև, պատմության ու մեծարժեքի հետ Գանձաարի եկեղեցական գրքերային ժամանակների ժամանակ նրան ներկայացնում է մի գիրք, իբր Քն Հովհան Ռեբերիանի, և նրան խնդրում են կաթողիկոսին (այն) կարդալ, և նա այն բացելով՝ տեսավ (զրա մեջ), ինչ վերաբերում էր, քանի որ զու Ազգանից պատմությունն էր» (Մակգո, 1861, էջ 203):

«Մենք դայա մե օրինակի» բառերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ Անանիայի քաղաքամերձ քառասյիորեն վերջվել են իրենց աղբյուրից: Այնուհանդերձ, դրանք Մովսեսի գուգահեռ հատվածներից միանգամայն տարբերվում են ոչ միայն իրենց մեղով, այլև քան իրենց բովանդակությամբ: Ըստ Անանիայի գրության, Մավրիկիոս կայսրը Գվինում արժուակալող Արախան Ա Արաբիանցի կաթողիկոսի 9-րդ տարում պետք է Հռոմեական Հայաստանի համար նշանակված լինի մի հաստակ կաթողիկոս Հովհաննեսին («Արարատ», 1896, փետրվար, էջ 69): Գրան հակասակ, նույն իրադարձությունը Մովսես Կաղանկատվացու կողմից վերագրվում է Մովսես Բ Եղվարդյանի կաթողիկոսի ժամանակին (Բ, գլ. խր. էջ 217): Հայոց եկեղեցուց բաժանված ազգանականը, քան Անանիայի, նրա հետ վերամիավորվել է Հայոց Կոմիտաս Ա Աղջյցի կաթողիկոսի միջոցով («Արարատ», 1896, մարտ, էջ 126): Մովսեսը, դրան հակասակ, միավորումը կատարել է տալիս Արախան Ա կաթողիկոսի միջոցով (գիրք Բ, գլ. խր. էջ 217): Կոմիտաս կաթողիկոսը Մովսեսի մոտ ընավ չի հիշատակվում: Բացի այդ, մյուս տեղեկությունները նույնպես Անանիայի մոտ միանգամայն այլ կերպ են պատմվում, քան Մովսեսի, այնպես որ Պաշիկ վրդ. Գաղանի արտահայտած այն պնդումը, թե իբր Անանիոս օգտագործել է Մովսեսի ալ-խատուությունը, անհիմն է («Արարատ», 1896): Անանիայի աշխատությունում՝ Ազգանից պատմությունը՝ խորհրդի ներքո գտնվող մասը, ուրեմն, չպետք է ընկալվի որպես Մովսեսինը: Այսպիսով, Անանիայի գրությունը չի հակասում մեր ստացած արդյունքին, քան որի Կաղանկատվացու պատմությունը գրվել է X դարի վերջին:

Մովսեսի ժամանակը չի կարելի տեղակայել X դարից հետո, քանի որ մենք միանգամայն որոշակիորեն կարող ենք սպասելու, քան որ Ռեխտանես կաթողիկոսը Հայոց Պաշիկ Ա Արաբիանցի կաթողիկոսի (972-991) ժամանակակիցը, օգտագործել է «Ազգանից պատմությունը»¹: Որպես դրա սպասույց մենք հղում ենք մի հատված, որում Ռեխտանես ազգանական պատմություններին մատնանդում է որպես իր ստղյուղը և միաժամանակ գրեթե քառասյիորեն ընդգրկեցնակում է Մովսեսի երկասիրությունը:

¹ Հեմտ. M. Brosset, Deux historiens arméniens, Kiracos de Gantzac, Oukhtanés d'Ourha, Sec. livr., 1871.

Հնժու. Ուխտանեսն, Հատ. Բ, «Հայերից վրացիների բաժանման պատմությունը», Վաղարշապատ, 1871, Բ, 65, էջ 122-124:

Ճանկով զայս մեզ (ի) պատմագրացն Աղուանից զարդար և զբուն և զառաջին Հասարակն աշխարհին իրենանց Հասարակ մեզ պատմեալ զի պատմութիւն ճշմարիտ է. և ստանալ ջան զիտարհարհն զԱռանայ ի Վաղարշակայ տանն Աղուանից, այլ ինչ (ոչ) զտաք՝ սակ պատմութիւնն՝ մինչև զքաջն Վաչագան, որ միանգամայն տիրեաց կողմանցն Աղուանից»:

Վերջապես, ինչ վերաբերում է Հեղինակի անձին, այսպե՛ս մենք տրոպիված ենք ապավինել նրա աշխատությունում գտնվող մի նշումի, որտեղ հարորդում է Հետևյալը¹. «Երբև իրազգած եղևն թշնամիրն եղևոցն՝ պղծեանց զՀետ փայտակից և Հասակայ ի մինչ ինչ նոցա առ ստորոտով լերինն՝ որ է յանդիման գեղջն մեծի Կազանկատուաց, որ ի նմին յևտի գաւառի՝ յորժն և ե...»:

Այս Հատվածի մեկնարանման ղեկչություն շատ ավելի բնական կլինի զորժն և ես-ր կապել ոչ թե՛ զգեղջն մեծի Կազանկատուաց»-ի, այլ՝ «ի նմին յևտի գաւառի»-ի Հետ: Այդ ղեկչություն այն ենթադրությունը, թե՛ Մովսէսը ծնվել է Կազանկատուր գյուղում, կե՛րպ, ոչ՝ ճիշտ: Քանի որ, սակայն, Մովսէսը Հին ժամանակագիրների կերպուս Գանձակցու և Մոսիմար Արիվանցու մոտ արդեն իսկ անվավերում է Կազանկատուացի (այսինքն՝ ծնված Կազանկատուրում), այսպե՛ս մենք տարիված ենք, եթե՛ ճիշտ է վերոնշյալ բացատրությունը, թե՛ Մովսէսը սերունդ է Ռոտից, բնույնն, որ այդ ժամանակագիրները նրա ծննդավայրը որոշարկում են բացառապես հղված Հատվածի մի ոչ ճշգրիտ մեկնարանություն հիման վրա:

Հնժու. Մովսես Կազանկատուացի, Մոսկվայի Հրատ., 1861, Ա, գլ. գ. էջ 8:

«Պատմութիւն ճշմարիտ ստանալ ջան զվախագահին Առանայ ի Վաղարշակայ տանն Աղուանից այլ ինչ ոչ զտաք մինչև զքաջն Վաչագան, որ միանգամայն տիրեաց կողմանցն Աղուանից»:

ԱՂՎԱՆԻՑ ԵՆԵՂԵՑԻՆ

Գրիտոնեություն տարածու՞մ Աղվանքում Հետագայում առաջացած առասպելական ավանդությունը վերացրում է ղեկ առաքելական ժամանակաշրջանին: Հատ ավանդադրույցի՝ Սուրբ Թադևոս առաքյալն Արտազ զավստու՞մ սպանվել է Հայոց Թադավոր Մանասրուկի հրամանով: Նրա աշակերտը՝ Սուրբ Եղիշան, զրանից Հետո վերադառնում է Երուսաղեմ, որտեղ նա ղեկեցում է իր ուսուցչին նահատակության մասին: Այնտեղ նա պետք է մեռնադրված լինի Փրկչի եղբայր Հակոբի՝ Երուսաղեմի առաջին պատրիարքի կողմից: Նա այնուհետև, Հայերից խուսափելով, Պարսկաստանով գնում է մասսպետների երկիրը՝ (ի Մազրուխա): Նա իր բարդու՞մը սկսում է Ջողո՞ւմ և այնտեղից երեք աշակերտների Հետ զայլա է Ռուրի զավստը՝ Մահատ քաղաքը: Այն բանից Հետո, սակայն, երբ Հեթանոսներն սպանում են նրա աշակերտներից մեկին, մյուս երկուսը լքում են իրենց ուսուցչին և Հետևում են մարդասպաններին: Սուրբ Եղիշան ինքը զրանից Հետո գնում է Գիս և այնտեղ կառուցում մի եկեղեցի: Ջերգունի փոքրիկ զաչտու՞մ Հեթանոսական զոհամատուցման վայրի մոտ նա ստանում է նահատակության պատկը: Այդ սուրբ մարդու մատուցները Հռոմեկում նետում են Հանցագործների մի վերելգմանափոսի մեջ, և զրանք այնտեղ մտնւմ են, մինչև Հետագայում տեսիլքով և հրաշքով Հայտնի են զանու՞մ բարեպաշտ մարդկանց և անվովիվում են Ռոսեկան գյուղում: Այնտեղից զրանք տեղափոխում են Ներսմիհրի սուրբ վանքը, որ Հետագայում կոչվել է Ջրվտիկ: Փոսի վրա՝ նահատակության վայրում, բարեպաշտ Վաչագանը (V զարի վերջ) պետք է մի կոնիոզ կանգնեցրած լինի, որտեղ, ըստ ավանդության, որպես ճգնավոր մահացել է նրա սենեկավարը:

Ինչպես Հայոց երկրի Գրիգոր Լուսավորչին է, այդպես Մովսես Կազանկատուցում ավանդադրույցի Սուրբ Եղիշային՝ Թադևոս աշակերտին, Համանման կերպով զարմնում է Աղվանից երկրի յուսավորիչ (Արևելեայցս Լուսավորիչ): Արդեն ապացուցված է

¹ Հայ պատմագիրների մասագրուները բնակվում էին Կասպի ծովի արևմտյան կողմում: Գիսն Կասպուր (69, 15, 1) և Ամմիանոս Մարկելիմուսը (XXIII, 5, 16) նույնպես Հիշատակում են կովկասյան մասագրուներին:

¹ Հնժու. Մովսես Կազանկատուացի, Բ, գլ. մա, էջ 107:

(Ա. Կարինը, Արգարի առասպելը Մովսես Քորենացու «Հայոց պատմության» մեջ, Փարիզ, 1895), որ Քաղևոսի առասպելի պատմական արժեքը հավասար է զրոյի: Նրա աշակերտ Եղիշայի մասին ավանդությունն, անկասկած, ավելի ուշ շրջանի առասպելական գործունեության արդյունք է, քանի որ զրանում Տիչատակում է Աղվանից թագավոր Վաչագան Քարեպաշտը (V դարի վերջ): Այնուամենայնիվ, այդ առասպելն ունի պատմական մեծ նշանակություն: Դրա միջոցով հավաստվում է աղվանական եկեղեցու իրը թեև առաքելական ծագումը. մի ուժեղ նպաստ կեղեցեական փառասեր իշխանավորների համար, որոնք կամենում էին ազատվել Հայոց կաթողիկոսության հանդեպ ստորադասությունից:

Աղվանական եկեղեցու վերաբերյալ հնագույն պատմական վկայությունն ի Հայոց է գույնի Աղվանքի թագավոր Վաչակի՝ պարսից Պերոզ արքայի (484-487) ջնարդույն ուղղված Հայոց Գյուտ կախկոպտի մի նամակում: Դրանում մեզ տեղեկացվում է, որ Աղվանից թագավոր Ռունայրը եկել է Հայաստան՝ Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի մոտ (III դարի վերջին և IV դարի սկզբին) և այնտեղ մկրտվել է իր քնկերների ու զորքի հետ մասին: Այն ժամանակ Հայերը պետք է Աղվանքի թագավորի հետ մի Հոռմուշից կախկոպտի, որը Տրդատի հետ էր եկել Հայաստան, ուղարկած լինեն Աղվանք: Ի դեմս նրա, տերեկափորը նկատի ունի ոչ թե հարևան փոքրասիական մի զավառից սերող մի Հույնի, այլ որոշակիորեն մասնանշում է. «այդ մի երանելի մերազբեայ յնախկոպտությունն ի Հռոմի թագաբն»:

Այնուհետ դարձր Աղվանքում, ինչպես Հայաստանում, իրագործվել է վերեկ ներքև կարգով, բայց և այնպես քնակիների վարկությունը, որը միայն երկար ժամանակ անց անհետացավ. և պարսից թագավորների քաղաքական ազդեցությունն այնտեղ Հայրուրամյաններ շարունակ եղև են մեծագույն խաչքնդատների քրիստոնեության ամրապնդման համար:

Ավանդությունը մեզ ասում է, որ աղվանական քարեպաշտ թագավորները և Հայերի պատգամարկները մինչև V դարի երկրորդ կեսը հարկազրկված էին պարսերի աղվանական ժողովրդի հեթանոսական տարրերի դեմ:

IV դարի սկզբին Գրիգորիսը՝ Վրթանեսի ավագ որդին,

նշանակվեց վրացիների և աղվանների եպիսկոպոս: Նրա գործունեության վերաբերյալ Մովսես Կաղանկատվացու Հաղորդումը կարեւորագույն կետերում համապատասխանում է Փավստոս Բուզանդի տեղեկությունների հետ, որոնց պատմական հուսալիությունը կասկած չի հարուցում: Նրա ժամանակ Աղվանքում՝ Կուրից այն կողմ, զեռ ուժեղ հեթանոսության դեմ երիտասարդ քրիստոնեության պայքարը պետք է շատ սաստիկ եղած լինի: Մովսեսն այդ մասին պատմում է հետևյալը. Ցրի քաղաքի մազդեզական կրոնի հետևորդ քնակիները, որտեղ Գրիգորիսը ցանկացել է եկեղեցի կառուցել, ըմբոստացան Աղվանից թագավորի դեմ և սպանեցին քահանային՝ Գրիգորիսի աշակերտին, որին նա թողել էր նրանց քաղաքում: Ռոմիսարները պարսիկներից օգնություն են ստանում, և Արգևաքցիները զրամում են քաղաքը: Այս դեպքը պետք է պատասխան լինի աղվանական թագավոր Վաչագան (Վաչե) Քաջի՝ ժամանակ: Երիտասարդ Գրիգորիսի նախատաղիքը շատ ռիթորական էր: Նա իր առաքելական գործունեությունը ծավալեց մինչև Աղվանից երկրի ամենահեռու սահմանային երկրամասերը, եկավ մասաղիտների թագավոր Մանասորուկի մոտ (Փավստոսի մոտ՝ Մանեսան), որն իրեն թեև Արշակունիների տոհմից էր, և նրան ու իր քանակին քաղաքեց Ավետարանը: Երբ, սակայն, նա նրանց կտուամբնեց իրենց կողողաչանմուղությունը համար և նրանց հանձնարարեց խաղաղորեն ապրել, նրանք ասային նրան. «Դա Հայոց թագավորի կողմավոր խորամանկությունն է՝ մեզ Հայոց երկիրը կողողաչեցես ևս պահելու համար: Ոչնչ՞ պետք է մենք ապրենք, եթե չկողողաչենք»: Գրանից հետո Գրիգորիսին կասեցին մի միտ պղծի և քայք պալո՞ւ սպանեցին: Սրբի դիակը նրա քնկերները տարան Հարանից զավառի Ամարաս գյուղը և այնտեղ ամփոփեցին Էրա պատյի կողմից կառուցված եկեղեցում: Մովսեսի այս ամբողջ Հաղորդումն ուղղակի կամ անուղղակի կերպով փոխառված է Փավստոսից:

Արշուրների քաղաքացու Վրթանեսի հետևորդով Աղվանքի եկեղեցու՝ IV դարի երկրորդ կեսի պատմությունը մեզ ամբողջովին անհայտ է: Այդ դարի վերջին մենք Փավստոսի մոտ հանդիպում

¹ Մովսես Կաղանկատվացի, Ա, դր. մտ. էջ 14-22:

¹ Թագավորների ցանկը Մովսեսի մոտ սկսված անհետ է, որ կարելի էր համարակալվել այդ վաղին երկրորդից այնտեղ եղած համանուն եղևաններից մեկի հետ:

ներ Ազգանից Ռունայր Թագավորին (Բ, գ, դ), որը Հայոց Պապ Թագավորի ժամանակ Ճապոհ Հ II-ի Հետ դաշնակցած՝ կոչում է Հայերի զին: Արդյոք նրա ժամանակ Ազգանիում Պարսկաստանի քաղաքական ազդեցությունը Հետ միասին նաև կրոնականը չէ՞ր Հաղթել:

Ազգանական եկեղեցու Համար մի նոր զարաչքման է բացում Հայկական, վրացական և ազգանական այբուբեններ ստեղծող Մետրոպ Մեծը (ճահաջած՝ 439 թվականին)՝ Հայ ամենահանձնարելի Հոգեբաններից մեկը: Ազգանական այբուբենի ստեղծումով նա, ինչպես ոչ որևէ մեկ ուրիշը, նպաստեց այդ երկրի Հոգևոր զարգացմանը: Երկրի Թագավոր Եսփաղեթը (Արսիպազ, Արսիպազ, Էսփաղեթ) և սուրբ Եսփաղեպոս Երեմիան Հրաման տվեցին Հավաքել պատանիների և նրանց սովորեցնել կարգադրու և զբեկու արվեստը: Կորյունի վստահելի տեղեկություն վատարթյան Համաձայն այբուբենի ստեղծումից Հետո շուտով Սուրբ Գրքերը Թարգմանվեց ազգաներեն, «որի միջոցով» սուսում է Կորյունը,– Ազգաների բիրտ, ծույլ և զապանարարո ընակչելները ծանոթացան մարգարեներին, առաքյալներին և Ավետարանի ժառանգորդներին, և այլևս անտեղյակ չէին աստվածային բոլոր ազգանդյվներին: Այդ նույն ժամանակ ճատատնայակիր և դիւանոյ ազգին» Ազգաների աստվածավան աբրայի կողմից իստապուն Հրաման է արգում Հնազանդվել Բրիտտուսի աննաւհետ լծին (Հմտա, Կորյուն, Վնեւտիկ, 1894, էջ 31): Մայրենի լեզվով դասավանդող դպրոցներ է հիմնարարած և Թարգմանական գործունեությունը բրիտտունություն Ազգաներում արդեն կարող էր Հասնել տեսական ծաղկման ու ներքին ամբարկման, եթե նրա Հաջողությունները չխոչընդոտվեին պարսիկ Թագավոր Հազկերտ II-ի (438–457) կրոնական անհանդուրժողականությունը: Գնո նրա նախորդ Վուսմ V-ի օրոք Հայաստանում Թագավորությունը վերացվել էր, և երկիրը վերածվել էր պարսկական մի մարզի (429 թվականին), ինչը Հռոմեացիները Հայաստանի իրենց մասի Հետ արգեն վաղուց արել էին: Ազգանքը նույնպես, որի Թագավորները պարսից Թագավորների Հետ ազգակցական կապ ունեին, զբաղված էր պարսկական զերիլյանություն ներքո: Այդ երկու Հարևան երկրների քաղաքական Թուլությունը Հազկերտ II Թագավորին Հնարավորություն բնուծեց վճարականորեն Հանդես գալ բրիտտունություն զին: Երկու երկրներին Հրամայվեց մազդեզականությունը Հռչակել պաշտո-

նական կրոն: Պարսկական զորքերը, որոնք զրանից կարճ ժամանակ առաջ Հոների երկրում պատերազմ էին մղել, այժմ մոզերի բազմությունների Հետ շարժվեցին դեպի Ազգանը: Մոզեսու Պարսկականացու (Բ, գ, բ)՝ Նիդիլից վերջված տեսնկոթյան Համաձայն¹, աղյանները մի պատվիրակություն ուղարկեցին Հայերի մոտ նրանցից օգնություն խնդրելու Համար: «Պարսից զորքը,– սուսում են նրանք,– որը Հոների երկրում էր, վերադարձավ ու եկավ–մտավ մեր երկիրը. նաև մեծ քանակությամբ այդ այբուբենի եկավ (պարսից) արքունիքից: Բացի այս երկուսից, երկը Հայրուր կրոնասույցներ էլ են լինել իրենց Հետ ու պատակտում են երկիրը՝ ոճանց իրենց կողմն են բաշկ ու կամենում են եկեղեցին մեզ գցել: Աբրայի Հրամանով բոլորի վրա մեղում են գործադրում ասելով. «Եթե կամավոր կերպով ընդունեք մեր կրոնը, պարզների ու պատիվների կարծանանար արքայի կողմից, և պետական Հարկը մեզ կդիվի: Իսկ եթե կամավոր կերպով չանեք այդ բանը, Հրաման ունենք գյուղերում, կայվածքներում ատրուչաններ Հիմնելու, վտանական կրակը ներսը զնելու և մոզք ու մոզպետներ նշանակելու իբրև այս երկրի օրենսդրուներ: Իսկ եթե մեկնումներ չենվարկվի, մահվան կդատապարտվի, և այդպիսիների կինն ու որդիները կտարազրվան երկրից»: Հայերն իրենց զորքի մի մասը Վարզան Մանիկոյանի ղեկավարությամբ ուղարկեցին աղյաններին օգնության: Ըստ Նիդիլի և Մոզեսուի, նրանք Սաղաթա քաղաքի մոտ պարսկական զերակչու ուժերին զենք պետք է վաղուց Հաղթանակ տարած լինեն (450–451): Պարսկական բանակը նրանց կողմից ետ մղվեց, մոզքը սպանվեցին, իսկ նրանց ատրուչաններն ավերվեցին: Բրիտտունյաների Հաջողությունները, սակայն միայն ժամանակավոր էին: Անմովկը Հերոսականությունը, որով նրանք պայքարում էին իրենց կրոնի Համար, բավարար չէր պարսիկներին տեսական դիմադրություն ցույց տալու Համար: 451 թվականին Հայոց աստամբությունը մեղվեց: Այն երկպառակություն ժամանակ, որը Հազկերտ II-ի մահից Հետո (457) բունվեց նրա որդիներ ընդկող III-ի և Պերոզի միջև, բունության մազդեզականությունը բնուծեց Ազգանից մշակ Թագավորը՝ մոր կողմից նշված երկու պարսիկ իշխանների ազգական, աստատանքը պարսիկների զեն,

¹ Եղիշե վարդապետի վանա Վարդանյան և Հայոց պատերազմին, Վնեւտիկ, 1828, Գ:

նկու Համար, և քաջի այդ պարունակում է Հայոց եկեղեցու Հավատո Հանգանակը և Երզրորդայնոր Գովինի եկեղեցական ժողովոյ (Հայոց Ներսես Բ Բարգրաւթնոր Գովինի եկեղեցական ժողովոյ) (Հայոց Ներսես Բ Բարգրաւթն, զի կաթողիկոսի ժամանակ) կցոված Հետեւոյ քառերի Հետ, «Թու խաչիկ ևս մեզ Համար»: Տեր-Աբար նամակը ստանալուց Հետ պետք է ուղղահավասար-թյունից Հետացած վանականներ Քոնստին, Նիշապին, Քոնտին և Բրայնի երկրից վտարած լինի: Ազգական պատրիարքների ամբողջ Հայոց ժամանակագրութեան սկզբում (552 թվականին) խազար-ների ներխուժման պատճառով Չոզից տեղափոխվեց Պարտավ:

Ժամանակակից աղբյուրների սակավութեան և Հետագա Հայ պատմագիրների ու ժամանակագիրների՝ միջանցից տարրերովոց տեղեկութիւնների Հետեանքով շատ դժվար է պարզորոշ ուր-վազեմէլ ազգանական եկեղեցու՝ VI դարի երկրորդ կեսի և VII դարի սկզբի պատկերը: Երբ Հայոց Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակ Հոռոմեական Հայաստանում նշանակվեց մի տեղական կաթողիկոս՝ Հովհաննէսը, ըստ Մովսես Կաղան-կատպացու, ազգանական եկեղեցին բաժանվեց Հայկականից, և ազգանից կաթողիկոսները Գրիգոր Լուսավորչի Հաջորդների կողմից իրենց մտնադրումն ստանալու փոխարեն մտնադրվում էին տեղական եպիսկոպոսների կողմից: Բաժանված երկու եկեղեցիները Հայոց Արքահամ կաթողիկոսի ժամանակ պետք է կրկին միավորված լինեն (Ք, գլ. խբ. էջ 217): Այնուհանդերձ Անանիայի Հաղորդումն ամբողջովին տարրերվում է Մովսեսի Հաղորդումից (Տնտ. «Քրքարաւթ», 1897, մասը, էջ 137): Ըստ նրա Հաղորդման, Մավրիկիոս կայսրի Գրահամի տասնիններորդ տարում, այսինքն՝ Հայոց եկեղեցուց պրապանքի բաժանումից Հետո Հռոմեական Հայաստանի Համար նշանակվել է մի առանձին կաթողիկոս՝ Հովհաննէս Գոգահառցուն: Գրանից Հետո ազգա-նական եկեղեցին կտրիտնի հանդակ ստածած խառնից, որը վրասական եկեղեցին անկախ էր դարձրել, պետք է Հայկականից բաժանված լինի: Այնուհետև, սակայն, Հայոց Կոնստան Ա Ազգանի կաթողիկոսի՝ Արքահամի Հաջորդի երրորդ տարում ազգանների զարգայ ճանաչել են Հայոց կաթողիկոսութեան գերագույն իշխանութիւնը: Մովսես Կաղանկատպացուի Հաղորդմանը Հայոց եկեղեցուն վերաբերող Հասովանի Կոմորնիսի կողմից քնդոր-նակված Հունականը Համապատասխանում է այն Հարցում, որն Մավրիկիոսի կողմից Հատուկ պատրիարք Հովհաննէսի նշանակումը նույնպես վերադրում է Մովսես կաթողիկոսի

ժամանակին և Արքահամին զարգայ միավորել է տայիս Հայոց եկեղեցին: Անանիայի Հաղորդման մեջ անեն զնպրում Հավաստի չէ այն տվյալը, որ Մավրիկիոսն Արքահամի տասնիններորդ տարում է նշանակել Հովհաննէսին, քանի որ Մավրիկիոսն այդ ժամանակ վաղուց այլևս չէր կառավարում: Երկու Հաղորդում-ները, սակայն, միմյանց Համապատասխանում են այն կետում, որ Հայոց կաթողիկոսութեան բաժանումը Հանդեցրել է Ազգաների Հետ պատակաման, քանի որ աղջմանական Հոգեւորականութիւնն այլևս չէր կարող ինձնադ, թէ երկու կաթողիկոսները որն պետք է ճանաչէր որպէս Գրիգոր Լուսավորչի Տնտարտ Հաջորդի:

VII դարի վերջերին՝ Հայոց Մահակ Գ Քրոփորեցի կա-թողիկոսի ժամանակ (677-703), ազգանից եպիսկոպոս Բարսեղի կողմից Հոները դարձի բերվեցին՝ ընդունելով ըրիստոնեութիւն: Այդ կարևոր իրադարձութեան վերաբերյալ Մովսեսի մանրամասն Հաղորդումն արձեքստոր է ինչպես աշխարհագրագետի, այնպես էլ պատմաբանի Համար (Տնտ. Բ, գլ. լթ-խէ, էջ 188-211): Գարձի բերումն սկզբնական ուներ քաղաքական նպատակ: Ազգանական իշխանավորները փորձում էին այդ անհանդիստ ժողովրդին, որը նշտապես Հարձակումներ էր կատարում իրենց երկրի վրա, կրոնական կայրով սանձահարել և Հանգստացնել ու զարմնել խառնող զաշնակից: Ազգանական առարկական պատվիրա-ւթիւնը, որը զվանվորում էր Բարսեղի եպիսկոպոսը, մի մեծ համփորդութեանց Հետ Լիփնրով է ձիղրերի երկրով (Միլլիթն)՝ Հասով Վարաշան՝ Հոների երկրի մայրաքաղաքը, և այնտեղ ողորմամարար ընդունվեց երկրի իշխան Ալփ Բիթիվերի կողմից: Հոները, որոնք այն ժամանակ զեռ Հեմնառներ էին, ըստ Մովսեսի, պաշտում էին կրակը և քուրը, արեգակը և յուսին և այնպիսի արարածների, որոնք նրանց զարձանահարչւ էին թվում: Բացի այդ նրանք պաշտում էին ճանապարհների աստվածու-թյուններին և մի Հակայի, որին անվանում էին Քանդրիթ խան («Քանդրի խան աստուած, զոր Պարսիքը Ասպանդէստ կուէն»), (Ք, գլ. խ, էջ 191): Նա ըստ երևութիւնի եղել է նրանց զլտավոր աստվածը: Կաշիների ասաջ, որոնք նմիրարեկված էին նրան, բրմերը զոհարերում էին միերին: Զոհարեքման ժամանակ նրանք

¹ «Rursus ad Albaniae confinio tota montium fronte gentes Silvarum ferac, et infra Lupeniorum, mox Diduri et Sodia, ubi u Plinius, N. H., VI, 29, Dellefsen.

զահարերվող կենդանու արյունը լցնում էին կաղնու տակ, իսկ մորթին ու գլուխը կախում էին ծառի ճյուղերից: Բարայել կախկուպոսն իշխանի և նրա բանակի առջև մեծ հաջողությամբ քարոզեց քրիստոնեական կրոնի սկզբունքները և նրանց դարձրեց ուղղաճամբա: Նա ավերեց Հեթանոսական տաճարները, արձատարիչ արեց սրբազան ծառերը և անհնազանդ քրմերին կարգադրեց այրել: Գրանից Հետո իշխան Իլիթվիկերի ցանկությամբ Բարայելը նշանակվեց Հոների երկրի կախկուպոս¹:

¹ Այստեղ (ընտրի 31-րդ էջ) ավարտվում է Մովսես Կաղանկատվացու եպիֆան՝ Հ. Մանսեղյանի ուսումնասիրության բուն տեքստը: 32-48-րդ էջերում գեանդված են Կաղանկատվացու 2-րդ գրքի ա. («Պատմություն ի զեպ գրոցս»), ժ. («Յառաջին ութնասան նահանջն սկիզբն պատմության»), ժա. («Վասն զուսարկել Խորալու ընդդէմ արքայն Յունաց և յաղթահարելոյ զնա զանա բաղուն սրով և զերուքնամբ աշխարհն Հոսովայեցոց») և 1-ին գրքի իլ («Յահճանադրութիւն կանոնական Վարդանայ՝ Արուսեից արքայն եղևայ ի ժողովոյն, որ յնկուէնն եղև») գլուխների գերեզմաններն Թարգմանությունը, որոնք զանց են առել - Թարգմ.:

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ – Александр Авижский. Древние арменские историка, как исторические источники. Одесса, 1899, 133 стр.

Աղբրանդը Աննինսկի, Հայոց Հին պատմիչները որպես պատմության աղբյուր, Օդեսա, 1899:

Հայագիտության պատմական-բանասիրական ուսումնասիրությունների բաժինը մի նոր գրքով հարստացավ: Այ. Աննինսկին իր աշխատասիրության մեջ բնութեւ է մեր Հնագույն պատմագիրների երկերը, և Հոսովան կամ բյուզանդական աղբյուրների համեմատությամբ՝ մեր ազգային ավանդության բերի և անվավերական դժերն է ցույց տալիս: Հեղինակի կարծիքով, Հայաստանի Հնագույն պատմությունն ուսումնասիրելու համար, վստահելի աղբյուրներ են՝ սեպագիր արձանագրությունները, Հունաց և Հոսովացեցոց գրվածքները և Հայաստանի Հնագիտական հիշատակարանները: Հայոց անցյալի նախնական շրջանը և Արշակունիների պատմությունը նախ պետք է օտար աղբյուրների օգնութեամբ լուսարանել, և միայն այդ աշխատանքից Հետո՝ պիտի կարողանանք ազգային ավանդության արժանահավատ կետերը որոշել:

Այս կարծիքը բանասերների շրջանում այժմ՝ արդեն զրոյթն ընդհանուր է: Նոր եղանակի աշխատանքները զուցն մտա ապագայում մեր առջև բաց անեն Հին Հայոց քաղաքական կյանքի իսկական պատկերը:

Պարոն Ա. Աննինսկու ուսումնասիրած պատմագիրներն են՝ Մարտ Արաս (կամ Իրաս) Կատրինան, Ագաթանգեղոսը, Ջննոր Գլաբը, Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին:

Ժամանակակից բանասերների մեծ մասն այս երկի մեջ հիշված չեն, պետք է նկատարել, որ նորագույն Հետադադրությունները Հեղինակին անձնանթ են: Այս թերությունը պատճառ է եղել, որ պր. Աննինսկին նորից առաջ է բերում անպիտի խղիղները, որ արդեն արժարժված և մասամբ սպարզված են: Հեղինակը Ագաթանգեղոսին և Փավստոսին ազգով Հույն է կարծում, որ

ավելի բան կասկածելի է (տե՛ս, Հայր Հակ. Տաշյան, Ռուսումա-
սիրութիւն Ազաթանգեղեա զոց, Վիեննա, 1891. H. Gelzer, Die
Anfänge der armenischen Kirche. Ber. d. Sächs. Gesell. d. Wissen hist-
philol. Classe. 195, էջ 109; Ստ. Մայիսյանց, Ռուսում. Փափասոս
Բուզանդի պատմութիւն, Վիեննա, 1896):

Գր. Աննինսկի Ենթագրում է, որ Ազաթանգեղոսի այժմյան
Հայերեն օրինակը Թարգմանութիւն է մի Հին Հունարեն բնագ-
րից, որ Հետո կորավել է (?), իսկ այժմյան Հունարենը Թարգ-
մանոված է Հայերենից (տե՛ս, Հ. Տաշյան, Ազաթանգեղոս):

Ռուսցապետ Գր. Մալախյանցի «Ջեներ Գլաի. Համեմատա-
կան ուսումնասիրութիւն, Վիեննա, 1893» աշխատասիրութիւ-
նը նույնպէս ծանօթ է Հեղինակին: Ասորի Եպիսկոպոսի
«Փատմութիւն Տարօնոյ» գրվածքի զլիսավոր մասը պր.
Աննինսկին փավերական է Համարում, իսկ սկիզբը և նամակները
Հետագա դարերի Հավելված, սակայն պր. Մալախյանցի ուսում-
նասիրութիւնից Հետո՝ բանասերները Համաձայն են, որ այդ եր-
կը պատմական արժեք չունեցող վիպագրութիւն է:

Ետագոյն Հետազոտութիւններից գրեթէ անկախ՝ պր. Ան-
նինսկին Հին պատմագիրների ժամանակը որոշում է այսպէս՝
Մովսես Մորենացի VI դար (սկզբ.), Ազաթանգեղոս IV դ. վր.՝
V դ. սկ., Փափասոս V դ., Ջեներ Գլաի IV դար:

Ռուսցապետ Ա. Կարիերի փաստերը, որոնց վրա Հիմնվելով
բանասերների մի մասը Մովսես Մորենացուն VII-VIII դդ. պատ-
մագիր են ընդունում, պր. Աննինսկին թերի է գտնում և ինքը
Մովսես Մորենացուն VI դարի սկիզբն է գնում, իսկ Մար Աբաս
(Իրաս) Կատինայի պատմութիւնը IV կամ V դ. (Ք. Հ.) գրվածք
է Համարում: Սողոմնոսը (III, 16) Հիշում է Եփրեմ Ասորու
Մարաս, Ավփաս անունով երևելի աշակերտներին և Հեղինակը մի
Հանդուգն ենթադրութիւն է անում, թէ զուցի սրանք Մորենացու
Մար Աբասի Հետ մի որևէ կապ ունեան:

Գր. Աննինսկու աշխատութիւնն այն մասերը, ուր նա փորձում
է պատմագիրների անէր, ժամանակը կամ պատմական արժեքը
ստուգել, շատ քիչ նորութիւն են պարունակում: Մակայն գրքի
այն Հատվածները, որոնց մեջ Հեղինակը, Հոռմեական կամ բյու-
զանդական աղբյուրների օգնութիւնով, աշխատում է մեր
պատմագիրների սխալներն ուղղել և պատմական եղելութիւնը
ճշտել, գիտական արժեք ունեն, և բանասերների ուշադրութիւնն
արժանի են, թնական և Հարուցված խնդիրները գրեթէ բոլորն էլ

փնտելի են: Ըստ Մորենացու Տրդատ III-ը զահ է բարձրանում
287 թ. Ք. Հ., որ Գիսկեախանուսի կայսրութիւնն երրորդ տարին է,
Հեղինակը կարծում է, որ այս տեղեկութիւնը չի Հաստատվում
Աննինսկու, Մամարդինի, Եփեսոսի և Սողոմնոսի վկայու-
թիւններով: Ըստ Աննինսկու Տրդատ III-ի Թագավորութիւնն ժա-
մանակը չորրորդ դարի սկիզբն է, մտաւորապէս՝ 302-344 (?),
իսկ Հայոց դարձը 315 թ. Հետո (?): Պրորոս կայսրը (276-282)
պարսիկների Հետ Հաշտութիւնն դաշինք չէ ունեցել. Մորենացին
Պրորոս կայսրին չփոխել է Սիւրիոս Պրորոսի Հետ, որին Գիսկ-
եախանուս 297 թ.՝ բանակցութիւնն Համար ուղարկել էր պարսից
ներսեւ արքայի մտո: Հեղինակին կարելի է ատարկել, որ բա-
նասերները Պրորոս կայսրի դաշնագրութիւնը ստույգ են Հա-
մարձ՝ Vopiscus-ի վկայութիւնն վրա Հիմնելով (Vopiscus, Probus,
17):

ԳՐԱԽՈՍԻԹՅՈՒՆ — Александр Алексеевич. История армянской церкви (до XIX века). Казань, 1900, XI + 306 + VI стр.

Յուրաքանչյուր պատմական երկ բնեւեյա Հարկավոր է ամենից առաջ ուշադրության արժեկ փաստերի վավերական լինելը և ճշտությունը և ուսումնասիրության եղանակը՝ մեթոդը: XIX դարի գիտական և բնական ոգին պատմական Հետազոտությունների մեջ նրանով արտահայտվեց, որ սկսեցին Հին ազանգական պատմագրական Հում նյութը՝ պատմական աղբյուրները, մանրակրկիտ կերպով բնեւեյ աշխատելով գտել ուղիղը սխալից, զրույցը և առասպելը պատմական իրողությունից և Հին պատմագիրների տղետ, կողմնապահ կամ միտումնավոր դատողությունների անաչտ, առարկայական (objektiv, объективный) վերաբերմունքից ղեկի պատմական անցքերը: Այսպիսով նաև նորագույն Հայագետ մասնագետները՝ նույն բնական ոգուն և ուղղությունը ենթարկվելով՝ իրենց բազմաթիվ ուսումնասիրություններով աշխատել են և աշխատում են ղտել, մարել և ճշտել Հայոց անցյալի ավտեղական աստու նյութը, որպեսզի Հնարավոր լինի՝ ուղիղ փաստերի վրա Հենվելով՝ չունչ տալ անկեղծան պատմագրական փաստերի կուշտերին, և պատմական նորագույն մեթոդների Համաձայն՝ կարելի լինի որոշ գիտական սխալներ մշակված և ճշտված փաստերի և աղբյուրների օգնությունը ամփոփել և նկարագրել Հայ ժողովրդի քաղաքական կամ կեղեկական պատմությունը:

Թե՛ ուսումնասիրության եղանակի և թե՛ պատմագրական նյութի և փաստերի ճշտության տեսակետից՝ պր. Ա. Աննինսկու «Հայոց կեղեկացու պատմություն» ուսումնասիրության մեջ բացակայում է բանասիրական և պատմագիտական նորագույն բնական և արդարամիտ ոգին և ուղղությունը: Այս աշխատությունը մոլեռանդ կեղեկականի միտումնավոր ուղղությունը կազմված և մեծ մասամբ՝ սխալ ու թերի պատմագրական փաս-

տերի վրա Հիմնված մի երկ է, և մի ապացույց է, որ առավելորդ (Հետասերում) գոյություն ունի նաև գիտական գրականության մեջ, որովհետև միջնադարյան նեղսիրտ, անարգար և մոլեռանդ ոգին և կրոնական անհանդուրժողականությունը ցույց են տալիս իրենց բնորոշ Հնարարյան ղեմքը սե տառերի և տողերի միջից. Հիշեցնելով, որ իրենք ղեկ գոյություն ունեն որոշ՝ իբր գիտական երկերում:

Գծրախտությունն այն է, որ բազմաթիվ անտեղյակ ընթերցողներ, որոնք Հայոց կեղեկական պատմության վերաբերյալ նորագույն աշխատություններին և պատմական տուրյոց Հիշատակագրերին անձանով են, կարող են մոլորվել և բնորոշ Աննինսկու ազավաղված միտումնավոր լուսարանություններ իբրև իրական պատկեր Հայաստանյայց կեղեկացու անցյալի: Բարեբախտաբար, Հնարավորություն ունենք ամառանցույց անելու այս գրքի առաջարանի վրա, ուր Հեղինակն ինքն որոշում է յուր պատմական մեթոդը, այնպես որ նույնիակ անփորձ ընթերցող Հեղինակի խոսքերից զազափար կկազմի այս ուսումնասիրության Հական բերության մասին: Գրքի առաջարանում էջ 7, տող 24-29, պր. Ա. Աննինսկին պարզապես շեշտում է, որ «Նրա նպատակն է եղել ըստ կարելիույն Հավաքել Հայկական և ուրիշ աղբյուրներից Հայոց կեղեկական պատմության վերաբերյալ ոչ-Հայի Համար բոլոր մատչելի տեղեկություններ և տալ Հափարած փաստերին յուր կարողության չափ լուսարանություն և մեկնություն, ղեկավարվելով ուղղափառ Հետազոտողի խստով անաչտություններ»: Իր այս սեղորներին Հեղինակը Հավատարիմ է մնացել. և որովհետև ուղղափառ Հետազոտողի աչքում Հայ լուսավորչականները, Բաղեկողնի ժողովից բաժանվելուց Հետո, Հերետիկոսներ և աղանդավորներ են գտնուում՝ այդ պատճառով էլ բոլոր բարձրագույն Հայ Հոգևորականները և բնդհանրապես ամբողջ Հայաստանյայց կեղեկացին վատարանված և սե գույններով է նկարագրված, մանավանդ պատմական այն շրջաններում՝ երբ Հայաստանյայց կեղեկացին Համարձակ կերպով ղեմագրում և Հակառակում է բյուզանդական կեղեկացուն, ունենալով իր սեփական կարծիքը միարեսությունյան և երկարակության խնդիրների մասին: Հայ Հոգևորականների ինքնուրույն անկախ Համոզմունքներն աստվածարանական ղավանական որոշ Հարցերում շարունակ անհանգստացնում և վրդովեցնում են

այս գրքի «անաչառ» պատմարանին, և այր. Աննինսկին դայ-
րացած բացականուցում է. «Հայ ժողովրդի մեծամասնությունը,
աստվածարամության նրբությունը: յո շահականայով՝ կուրորն
պաշտպանում էր յուր պապերի Հովաթար (Էջ 137)»: Իսկ դուք
այր. Աննինսկի, միթե կուր չե՞ք, որ a priori Ձեր դավանական
Հասկացություններն անհերքելի նուր ճշմարտություններ
Համարելով՝ ամեն մի ձեզանից տարրեր կերպ մտածող անհատ
Համարում եք «կուր», «գիմանախիտ», «հերետիկոս», «տգետ»,
«ամբարտապան», «քամախաղ», «խախարամիտ» և այլն: Ձեր
աչրում՝ Հովհան Մանուկյան փանախիտն է, որ «մտածում է հերե-
տիկոսի նման», «Մտեցանոս Մյունսեղին, ինպես Հայոց եկեղե-
ցում Համարվում է սուրբ, սակայն ծայրահեղ միարեակ է», իսկ
Գրիգոր Նարեկացին՝ որովհետև ձեր կարծիքով Հույների կողմ-
ակից էր (?), ուստի և նրա սրբությունն անհայտն է: Իսկ երև
վաղը ձեզ ապացուցանեն, որ Գրիգոր Նարեկացին ևս Հավատա-
րիմ է եղել Հայաստանյայց եկեղեցու զավանական սկզբույն-
ներին՝ իհարկե դուք նրան ևս կտեղափոխեք ձախ կողմը՝ Հա-
մարելով նրան «կուր», «գիմանախիտ», «հերետիկոս», «եկեղ-
ժավոր» և այլն: Եթե այր. Աննինսկին Հայ Հոգևորականների և
Հայաստանյայց եկեղեցու թերություններ և պակասություն-
ները մատնանել անեն՝ պատմագրական վավերական և ստույգ
փաստերի վրա հենվելով և Հարգելով մեր զգային եկեղեցու
զավանական ինքնուրույն Հասկացողությունները, ինչպես այդ
վայել է մի իսկպես անաչառ պատմարանի՝ իհարկե նրա
արդարամիտ Հարձակումներ կրողներին և կհամաձայնեցնեք
նրա հետ, սակայն խզջի ազատության և ուրիշի Հատկությունները
Հարգելու նուր զազափարաններ օտար լինելով այս հեղինակին՝
նա Հայ Հոգևորականներին մեծ մասամբ վատարանում է մի-
միայն այն պատճառով, որ նորա աստվածարանական խնդր-
ների մի մասը չեն Հասկանում և ըմբռնում այնպես, ինչպես ինքը:

Գրքի առաջարանում հիշված աղբյուրներից երևում է, որ այս
հեղինակը միանգամայն անմանթի է Հայոց եկեղեցու պատմու-
թյան վերաբերյալ բազմաթիվ մասնագիտական հետազոտու-
թյուններին, որոնք զբաղվում են Հայերեն կամ գերմաներեն: Այդ
վեղուները այր. Աննինսկին երևի չգիտե, ուստի և Գուռչմիլի,
Փետուերի, Գեյցերի, Տաշյանի և ուրիշ Հայ կամ գերմանացի
մասնագետների նորագույն աշխատություններից չի կարողացել

օգտվել: Պր. Աննինսկու գլխավոր աղբյուրներն են երկու կամ կես
գար առաջ գրված Կրեմնե Գալանտի և Հայր Մ. Չամչյանի
Հայտնի աշխատությունները, Ֆրանսերենի կամ ռուսերենի
թարգմանված Հայ մասունագիրները և բյուզանդական պատ-
մագիրների և ժամանակագիրների մի քանի տեղեկությունները
Հայաստանյայց եկեղեցու մասին:

Յուրաքանչյուր պատմարանից կարելի է և պետք է պա-
հանել, որ նա բանասիրական նախապատրաստական աշխա-
տություններից օգտված լինի: Հայագիտության և Հայոց եկեղե-
ցական պատմության վերաբերյալ ամեն մի մասնագիտական
ուսումնասիրություն մի քար է՝ պատմական ամփոփման մեծ
չևերի Համար պատրաստված: Պր. Աննինսկին չի օգտվել եղած
նախապատրաստական աշխատություններից և այդ պատճա-
ռով՝ նրա զբաղմբում սովորական են սխալ լուսարանություններ
ևս կեղեցու պատմական այնպիսի երևույթների, որոնք այս
կամ այն մասնագիտական երկում կամ Հոգվածում ստուգված և
ճշգրտված են: Այս աշխատության բոլոր պատմագրական սխալ-
ները կամ հեղինակի անարդար, կամայական լուսարանություն-
ները մատնանել անկուր և չենելու Համար՝ Հարկավոր կլինեք մի
սուրող՞ դիրք գրել: Մեր Համառոտ մատնամատնակումս կրա-
վականանանք միմիայն առաջին էջերի ընտելությունով: Ամեն մի
մասնագետ այր. Աննինսկու գրքին ծանոթանալով՝ անձամբ կկա-
րողանա ստուգել, որ գրքի շարունակության մեջ Համարյա ամեն
մի էջում նույն թերությունները կրկնվում են:

Յուր աշխատասիրության հենց առաջին էջում այր. Ա. Ան-
նինսկին Հայոց պատմության ընդհանրացումների ընդհան-
րացումն է անում, Հայ ազգի պատմական դերը և նշա-
նակությունը որոշելով: «Անկախ գրեթե բոլոր Հին և Նոր Հին
ժողովուրդը են: Մակայն դատելով այն քանի հիման վրա, որ ոչ մի
նկատելի հետք չի մնացել, որը ցույց տար Հին Հայոց քա-
ղաքական գործությունը կամ նրանց կուրուրական նշանա-
կությունը՝ պետք է կարծել, որ Հայերը չեն ունեցել ոչ այն և ոչ
մյուսը: Ըստ երևույթին Հայ ազգը եղել է միշտ մի կիսափայրնի
ցեղ»: Արդյոք Հարգելի հեղինակը տրամադիր չէ՞ Հայ ազգը Հա-
մանատու հոտեմատներ կամ բուրգերի հետ: Ինչով որ Հա-
յաստանը մի մեծ քաղաքական ուժ չի եղել, սակայն ո՞ր բա-
րեխիզն և արդարամիտ մասնագետն ընդունակ կլինի ուրանալու

այն ակնհայտ իրողությունը, որ մեր նախնիներն իրենց ժամանակվա բրիտանական կուլտուրան թե՛ յուրացրել և թե՛ տարածել են հյուսիսային ցեղերի և շնչհանրապես Հայաստանի սահմանակից մանր ազգությունների շրջաններում: Այն գաղտնիությունը, թե հայ ազգը կիսափայրների մի ցեղ է, եղել՝ չափազանց տարօրինակ է մանավանդ այնպիսի մի պատմարանի ընթացքում, որը Հին Հայոց Հարուստ մատենագրության ընկերների և փշրանքների պրոհեկտիվով՝ Հայաստանյայց կեղեցիցու պատմությունն է գրում: ՁԷ՞ որ այդ գրականությունը բրիտանական արդյ կրթության և կուլտուրայի արգասիք է: Փհարուն՝ Աննիմալու բանասիրական անբարեխղճությունը և կամայականությունն այնքան մեծ է, որ վերոհիշյալ անարդար դատողությունից մի քանի տոն ներքև անզիտակցաբար ինքն իր սասածը ֆրում է՝ Հայերի ամենահնագույն պատմության մասին մի խիստ նպաստավոր, բայց սխալ կարծիք հայտնելով:

«Ասորեստանի բեռնագիր արձանագրություններում, — ասում է պր. Աննիմալի, — Սալմանասար III-ի ժամանակից սկսյալ Հայերը Հայտիկ են ուրարտի (URARTU) անունով»: Այստեղ Հմուտ պատմաբանը շփոթում է նախ այն, որ Ուրարտուն երկրի անուն է ոչ թե ազգի, իսկ նրկորդ՝ կեն Նեղինակը Հայերին Ուրարտու երկրի ազգն է Համարում՝ ապա ուրեմն Հայերն իրենց պատմության ամենահին շրջանում՝ Ասորեստանի և Բաբելոնի նման, նշանավոր Հին քաղաքակրթություն են ունեցել և պետական հզոր կազմակերպություն:

Նույն ստաջին էջում Հին Հայոց Հեթանոսական կրոնը նկարագրելու Համար՝ պր. Աննիմալին հիշում է իրեն ազդյուր միմիայն Մովսես Ոորենացուն: Այն ինչ Հայոց Հեթանոսական կրոնի ուսումնասիրության Համար գլխավոր աղբյուրն է Ագաթանգեղոսը. կարևոր են նաև մի քանի տեղեկություններ Անանիա Շիրակացու երկերում: H. Gelzer-ի «Zur armenischen Götterlehre» (Berichte des König. Siechs. Gesellschaft der Wissenschaften, 1895) և Հայր Ղ. Ափշինի «Հին Հայաստր կամ Հեթանոսական կրոնը Հայոց» (Վենետիկ, 1895) ընդարձակ աշխատությունները նույնպես Հեղինակին անձանոթի կամ ան-

ժառելի են եղել: Սակայն պր. Աննիմալին ամենայն Համարձակությամբ՝ միմիայն Մովսես Ոորենացու և Մարթանի վրա Հիմնվելով, թեևրի կամ սխալ տեղեկություններ է Հաղորդում Հայոց Հեթանոսական կրոնի մասին՝ ընդամենը մի քանի տասնյակ տող և գիտական անընթեակայելի հեթանոսությամբ եղբակցանում է, որ Հեթանոսական շրջանում Հայերն անտարբեր են եղել զեպի իրենց կրոնը: «Ժողովուրդը», նրա ասելով, «այդ շրջանում քիչ էր Հետաքրքրվում Հին և նոր աստվածներով, այլ յուր անտախպաշտությունների և նախապաշարունների մեջ էր ապրում»: Մարդ ուղղակի զարմանում է այն տաղանդի և սրամտության վրա, որոնց օգնությամբ այս պատմաբանը, Հայոց Հեթանոսական կրոնի մասին միմիայն մի քանի կիսատ տեղեկությունների ծանոթ լինելով՝ կարողանում է իրենց 16 գար առաջ ապրող Հեթանոս Հայ ժողովրդի կրոնական զգացմունքի աստիճանը որոշել:

Այս ամենազետ պատմաբանը, որ բանասիրական և պատմական ամեն մի մութ է կնճռոտ խնդրի Համար պատրաստի երեսկայական պատասխաններ ունի՝ Հայոց Հեթանոսական շրջանի կրոնի մասին մի ուրիշ նոր տեղեկություն էլ է Հաղորդում, իբրև թե Հայերն այդ շրջանում իրենց կրոնական Հավաքիչների շարքում ոչ մի ինքնուրույն բան չեն ունեցել և չեն ստեղծել: Այս տեսակ կամայական և անբարեխղճ ընդհանրացումների թեթրությունները ցույց տալը նույնիսկ ավելորդ է:

Հայոց Հեթանոսական կրոնը Համառոտ կերպով նկարագրելուց Հետո՝ պր. Աննիմալին խոսում է Քաղեոս, Քաղեոս Ղևրեոս, Բարդուղիմեոս և Քոզմա անաբայաների մասին, որոնք քսոս Հայոց ավանդության Հայաստանում քարոզել և բրիտանություն են տարածել: Հայ պատմագիրների Հակասական և առասպելախառն տեղեկություններն անաբայաների քարոզչության մասին Հայաստանում՝ Հեղինակն անվստահելի է Համարում: Այդ կետում բոլորովին իրավացի է: Սակայն պր. Աննիմալին պարտավոր էր Հաստատուն փաստերով ապացուցել, թե ինչու՞ Հայ պատմագիրների վկայություններն այդ մասին մեծ մասամբ արժանահավատ չեն: Բանասիրության մեջ այդ խնդիրը բավական լուսարանված է մանավանդ A. Carrière-ի, La légende

d'Abgar dans L'histoire d' Arménie de Moise de Khoren (Paris, 1895) և H. Gelzer-ի, Geschichte der armenischen Kirche (տե՛ս Realencyklopidie für protestantische Theologie und Kirche, 3 Aufl., 1896, Bd. II) գրվածքներում: Մակայն, ինչպես ասացինք, պր. Աննինակին նորագույն բանասիրական աշխատություններից Համարյա ամենևին չի տգտվի: Առաջին զարկում՝ քրիստոնեության մուտք գործելը Հայաստանում Հեղինակը խիստ Համարյա նական է Համարում, թեպետ III դարում Հայտնի Մեհրուհան Հայ եպիսկոպոսին ամենևին չի Հիշում: Բայց մի քանի տող Հետո (ճրպիսի բանասիրական սրատեսություն) նույն այս պատմարանը անկասկած է Համարում, որ IV դարում ամբողջ Հայաստանում ո՛չ մի քրիստոնեական Համայնք է ոչ մի եպիսկոպոս չեն եղել (էջ 5):

Պարոն Աննինակու այս աշխատության մասին ընթերցողներին մի որոշ գաղափար տալու Համար՝ մեր մատենախոսականում միմիայն մատենաիչ արինք առաջին պատահած մի քանի խոչոր սխալներն սկզբի մի քանի էջերում: Պատմագրական երկրորդական անճշտություններ, պատմական անցքերի երևակայական թվականներ, Հայ անունների սխալ տառադարձություններ անթիվ անՀամար են սույն երկում: Մյուս կողմից՝ Հեղինակի պատմական ուսումնասիրության եղանակը՝ մեթոդը՝ ո՛չ գիտական է, ո՛չ էլ անաշտա: Որովհետև Հայաստանյայց եկեղեցին բաժանվել է Բյուզանդականից և դե՛մ է Քաղկեդոնի ժողովին և երկարնակության՝ ուրեմն և այդ եկեղեցին իր պատմական անցյալում եղել է «Ներսիկոս», «Փանատիկոս» «տղետ», «ամբարտավան» և այլն: Ահա այս է պր. Աննինակու պատմական անաշտությունը: Պր. Աննինակու անարգար անբաստանությունները և Հայհոյանքները մեր եկեղեցու դե՛մ՝ ո՛չ մի վրդովմունք և անհանգստություն չեն կարող պատճառել Հայաստանյայց եկեղեցու բազմառանձ Համայնքին, որովհետև գիտական արգարամությունը և ճշմարտասիրությունը, խղճի ազատության և կրոնական Հանգուրժողականության լուսավորչայն սկզբունքները Հաղթել են և կՀաղթեն պր. Աննինակինների պն խավար սկզբունքները և Հասկացողությունները, որոնք խոչընդոտ են անաշտության և գիտական արգարամության: C'est une grande folie de vouloir être sage tout seul – մեծ աննություն է, երբ մարդ կարծում է, թե միայն ինքն է իմաստուն:

ԳԱՂԻԹ ԱՆՃԱԳԻԹ ԽՆԳԻՐԸ ՆՈՐ ԱՌԻՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԸՈՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՎԻԹ ՀԱՐՔԱՑԻ
ՓԻԼՍՈՓԱՏԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԽՄԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ

§ 1. Գավթի մասին նախկին Հետազոտությունները

Պորփյուրի ներածության և Արիստոսելի "Օրգանոն-ի թարգմանություններն ու մեկնություններն, ինչպես և Սաճանք Թմաստսիրուի համարից զրգածքը" Հայոց մատենագրական աստվածությունը վերագրում է Գավթի Հարթաղի փիլիսոփային: Մինչև այժմ Հայ բանասերներից ոչ ոք չի զբաղվել այդ երկերի մանրամասն ուսումնասիրության խնդրով: Իսկ օտարազգի Հայագետ բանասերների աշխատություններից ինձ Հայտնի են մինչևյն C. F. Neumann-ի և F. C. Conybeare-ի Հետևյալ Հետազոտությունները՝ 1. C. F. Neumann, *Mémoire sur la vie et les ouvrages de Davide, philosophe arménien ...* «Journ. Asiat.», III, Paris, 1829, p. 46-86, 97-153. 2. C. F. Conybeare, *Anecdota Oxoniensis, A collation with ancient Armenian Versions of the greek text of Aristotle's Categories etc.* Oxford, 1892, 4^o, pp. XXXVIII + 182. Սույն աշխատության Առաջարանը Հ[այր] Ղ. Տաշանի թարգմանությանը՝ «Քննությունը Գրոց Գավթի Անյաղթի», Վիեննա, 1893, 8^o, էջք 92:

§ 2. Ֆ. Կոնիբերի կարծիքը

Ուսուցչապետ Ֆ. Կոնիբեր «Ստորագրությունը» և «Յարգազ մեկնության» գրոց Հայերեն մեկնությունները Համարում է թարգմանություն Հունարենից¹, բայց տարրեր Հունարեն և՛ քառհիսն ձևեր մեկնություններից²: Մեծարգո Ֆ. Կոնիբերի կարծիքով՝ այդ մեկնությունները շարադրված են եղել Հատկապես Հայ անձանց կրթության Համար որևէ Հայի մեղքով, որը կարող էր

¹ Տե՛ս *Anecd. Oxon.*, § 14, էջ XVIII-XIX:

² Տե՛ս նույնը, § 20, էջ XXII:

այդ մեկնությունները Հունարեն գրած լինել և ապա Հայերեն թարգմանած¹, և այդ Հեղինակն ու թարգմանը Հափանորեն Պրոհերեստոս Հայտնի Հայ Հեռուորն է եղել²: Այս վերջինն են- թաղությունը բողոքովին անըզուսելի է նախ այն պատճառով, որ Պրոհերեստոսի ժամանակ IV դարում Հայերեն գիր և դպրու- թյուն գեղես գրություն չուներ:

Սահմանը Իմաստասիրութեան գրքածրք³ և Պորփյուրի Նե- րածութեան մեկնությունը մեծապատիվ Ֆ. Կոնիրերը վերագրում է Դավիթ փիլիսոփային և Հասարւում է թարգմանություն Հու- նարենից: Արիստոտելի Վերլուծականի Հայերեն մեկնության 14-րդ գլուխ-Հատվածը այր. Ֆ. Կոնիրեր ընդարձակ քննության չի ենթարկում, այլ Հիշելով այդ երկը, առանց որոշ պատճա- արանությունների, ավելացնում է յուր կողմից միայն այդտեղ, որ «այդ թարգմանությունը կատարված է Հունարեն մի մեկ- նության ընդգրկի, որն ըստ երևույթին գրված է եղել նույն Դավիթից IV կամ V դարում»⁴:

Երբ էլ սուրբ Դավիթ փիլիսոփան, ո՞վ է Հունարենից թարգ- մանել վերոհիշյալ երկերը՝ այդ մասին Հարգելի ուսուցչապետը միայն ենթադրություններ է անում, բայց որևէ Հաստատուն եզրակացության չի գալիս:

§ 3. Բանասիրական ուսումնասիրության ո՞ր եղանակով կարելի է Հաստատուն եզրակացություններ ստանալ

Ինչպես Ֆ. Կոնիրեր, նույնպես և ուրիշ Հայագետ բանա- սերներ՝ աշխատել են պարզել Դավիթի և նրան վերագրած եր- կերի վերաբերյալ Հարցերը, քննելով գլխավորապես Հին մա- տենադիրների տված վկայությունները, պատճառական պահան- ղությունը, էական գրքի Հայտնի Հիշատակարանը, երկերի ոճը և այլն, և ոչ որ չի փորձել Հարցերի լուծմամբ ընդհանուր ճանա- պարհով գտնելու, այն է՝ Դավիթին վերագրած երկերի բովանդա- կության մանրագնին քննության միջոցով: Իսկ բանասիրական

ուսումնասիրության այդ սպառնալից ճանապարհով ամենայն դու- րսիցանք յուժվում են մի բանի մոլթ խնդիրներ, և այնպիսի Հետևություններ են ստացվում, որոնք շատ կետերում միա- կանաչ են տարրեր են տիրող ենթադրություններից: Դժբախ- տաբար՝ մեզի տակ չունենք Հունարեն ձեռն փոփոխ ձևերի մեկնությունները և Προλεγομενα-ն, որոնց քննությունն ու Հա- մեմատությունը թերևս ավելի պարզեր Դավիթի ստեղծվածը:

§ 4. Սահմանը Իմաստասիրութեան, Պորփյուրի Ներածութեան մեկնությունը և Արիստոտելի Վերլուծականի մեկնության Հատվածը միևնույն Հեղինակի՞ Դավիթ փիլիսոփայի գրած են, իսկ Արիստոտելի «Տաղապա մեկնութեան» և «Ստորոգութեանց» Հայերեն մեկնությունները Դավիթից չեն

Մեծապատիվ ուսուցչապետ Ֆ. Կոնիրերը յուր վերոհիշյալ աշխատասիրության մեջ արդեն ցույց է տվել, որ Տաղապա մեկնությունը և Ստորոգությունը Հայերեն մեկնությունները տարրեր են Հունարեն ձեռն փոփոխ ձևերից: Համապատասխան մեկնություններից, մինչդեռ Պորփյուրի Ներածութեան մեկնու- թյունը նույնն է Հունարեն ձեռն փոփոխ ձևերից: Համապատասխան մեկնության Հետ: Այդ մասին կարևոր ենք Համարում մեջ բերել մի բանի փաստեր են, որոնք ստացվում են այդ երկերի մանրամասն քննությունից: Ինչպես Հայտնի է, Սահմանը Իմաս- տասիրութեան երկը և Պորփյուրի Ներածութեան ու Արիստո- տելի Վերլուծականի մեկնությունները բաժանված են մե- նագրերում պրակների և ամեն մի գլուխ սովորաբար սկսվում է զորից այստեղի Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը (կամ տեսութիւն)» բառերով: Ուշադրության արժանի է այն, որ Պորփյուրի Ներածութեան մեկնությունը սկսվում է Հետևյալ բա- նալով՝ «Հանդերձեալք Հանդերձ Աստուծով սկիզբի առնել ստաջիկայ շարադրութեան» և նույն մեկնության մեջ այր. Ը, էջ 271 (Վենետիկ, 1833) կրկնվում է նույն ոճը՝ «Կատարելապես Հանդերձ Աստուծով ի Բնարանութիւն Արիստոտելի ուսուցից: Հանդերձ Աստուծով» այդ դարձվածքը Դավիթի ոճի ստանձնա- Հատկություն է, և որովհետև բացի վերնագրերից Հանդիպում է նաև ընդգրկում, ուստի և Հիշյալ վերնագրերն անպայման Հեղի- նակին են: Իսկ դրանից Հետևում է, որ Սահմանը Իմաստա- սիրութեան երկը և Պորփյուրի Ներածութեան և Արիստոտելի

¹ Տե՛ս Anecd. Oxon., § 16 և 17, էջ XX-XXI:

² Տե՛ս նույնը, § 18, էջ XXI-XXII:

³ Հունարենի վերնագրերն է՝ Τά προλεγομενα τής φιλοσοφίας από φωνής Δαβίδ του Θεοφιλοτάτου και Θεοφορού φιλοσόφου.

⁴ Տե՛ս Anecd. Oxon., § 9, էջ VIII, § 30 և 31, էջ XXXVI, XXXVII:

Վերլուծականքի մեկնությունները, որոնք ամեն մի գլուխ վերահիշյալ առանձնահատուկ վերնագիրն ունեն՝ ամենայն հավանությունը մեկնույն Հեղինակի գործ են: Սակայն Արխատուկի «Ստորգույթի վայր» և «Ցաղագս մեկնութեան» գրվածքների վերաբերյալ Հայերեն մեկնությունները պրակների այդ վերնագրերը չունեն և չեն կազմում մի անընդհատ ամբողջություն, այլ մաս մաս մեջ է բերված Արխատուկի բնագրից մի պրակ և բնագրի ամեն մի պրակին Հետևում է նույն պրակի մեկնությունը: Այդ արտաբին հանգամանքը ես մի նշան է, որ Ստորգույթի և Ցաղագս Մեկնութեան երկի Հայերեն մեկնությունները Գավթինը չեն:

Նույն եղանակությունն ստացվում է նաև Գավթին վերագրած այդ երկերի ներքին բովանդակության ուսումնասիրությունից: Մինչդեռ Գավթի՞ փոխադրայի՞ Մահմադ Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնությունները նորպատանական մեկնիչի գրվածք են, որ աշխատում էր Հայտնեյնե պատանական և արխատուկյան փոխադրական գաղափարներն՝ ընդհակառակ Ստորգույթի և Ցաղագս Մեկնութեան գրվածքի Հայերեն մեկնություններն արխատուկյան մեկնիչի գրություններ են, որոնք Պղատուկին և պղատանականներին հիշում են միայն Հազվադեպ դեպքերում և հակառակում ու Հերքում են նրանց կարծիքները: Այսպես օրինակ՝ Արխատուկի «Ցաղագս մեկնութեան» երկի Անտուն մեկնիչը, էջ 507 (Վեներտի, 1833) ասում է՝ «Աս Պղատուկի ինձ թո՛ւի ի տեղո՞ն կոյս բայց ստու ասացնալ»¹: Այդ տեսակետից խիստ Հետաքրքրական են այն Հատվածները, որոնք փոխադրական մեկնույն խոցիրների մտքին լինելով, հիմնովին զանազանվում են իրարից Գավթի և Անտուն մեկնիչի գրվածքներում: Օրինակ՝ Գավթի փոխադրան միակ և երկակ իջիրն ընդունում է ոչ իրեն ինի, այլ իրեն թվեր սկզբը՝, իսկ Ստորգույթի և Ցաղագս Անտուն մեկնիչը մյուսնգամայն հակառակ է պղատանականների այդ կարծիքին և այդ մտքին գրում է Հետևյալը՝ «Իսկ ո՞նանք ի պղատանականաց կամին ասել, եթև փասը մի Հարկ է ընդունել դրանակն յամ. գոյացույթին ոչ ըստ չափոյ միայն՝ իր ին մեծ կամ փոքր, այլ յաւէտ ըստ իւրոյ՝ զի կամ մի է կամ բազում: Աս որս ասանք, եթէ մեզ իսկ հակահասույթին կազմէք, քանզի ըստ

Պիթակորականացն մնացել ասէք ինձ մինն ո՛չ է ինի, այլ յաւէտ սկիզբն իւրոյ»²: Եվ ընդհանրապես՝ Գավթի և Անտուն մեկնիչի փոխադրական գաղափարները ո՛չ միայն համայն նման չեն, այլ և նրանց կարծիքների արտահայտման եղանակը տարբեր է, և մեկնույն Գավթի շարունակ Հմուտից փայտից վայրից վայրից է բերում Պղատուկից, Արխատուկից և զանազան մեկնիչներից և մանրամասն քննդատում է իմաստասիրական այս կամ այն գրչորցի կարծիքները՝ Անտուն Հեղինակի մեկնություններն արդար են այգլխի փայտից վայրից վայրից ու տեղեկություններով, և Արխատուկի Ստորգույթի և Ցաղագս Մեկնութեան երկի Հայերեն մեկնություններում մեկնիչներից Հիշվում են միայն մի օճն Դեմոս³, Աղեքանազրու Ափրուդիսեցի⁴ և Աղեքանազրու, որ ամենայն հավանությամբ II դարի վերջում և III դարի սկզբում սպրոզ նայն Ափրուդիսեցին է⁵:

Հատկապես Ստորգույթի և Ցաղագս մեկնության վերաբերմամբ կարելի է մեջ բերել նաև մի ուրիշ ակնհայտի սպացույց, որ այդ մեկնությունը Գավթինը չէ: Պորփյուրի Ներածութեան մեկնության զանազան մասերում Գավթինը խոստանում է մի քանի Հարեանցի մատնանիչ արված իմաստասիրական խոցիրներ մանրամասն քննելու յուր Ստորգույթի և Ցաղագս մեկնության մեջ: Այսպես, էջ 263 (Վեներտի, 1833), «Իսկ բանականն եթև մասն է իմաստասիրութեան, և եթև գործի ի Ստորգույթի և Ցաղագս Արխատուկի ուսցութ» - էջ 269, «Բայց եթև զի ակործեցին ատնել զանհասատութիւն, կատարելապէս ի Ստորգույթի և Ցաղագս Արխատուկի ուսանելոց ենք» - էջ 300, «Ես արդ զի ո՛չ սեռ է և ո՛չ Հոմանուն ձայն [Վահն], կատարելաբար ի Ստորգույթի և Ցաղագս Արխատուկի ուսցութ»: Այդ Ստորգույթի և Ցաղագս մեկնության մեջ ո՛չ միայն վերահիշյալ իմաստասիրական խոցիրներ

¹ Ցաղագս Բանակի, պրակ Ա, էջ 514-515, Մատեն. ձեռ. թիվ 1810, Վեներտի և Հրատարակության մեջ Ստորգույթի և Ցաղագս մեկնության սկիզբը պակաս է:

² Տե՛ս Մեկնութեան Պերիարս. գրոցն, էջ 514, Վեներտի, 1833:

³ Զևուպիթ թիվ 1810, Մեկնություն Ստորգույթի և Ցաղագս Ստորգույթի և Ցաղագս մեկնության, էջ 88:

⁴ Տե՛ս Զեռ. թիվ 1810, Մեկնութ. Ստորգույթ. էջ 106a = Ցաղագս գլուխեան, պր. ԺԳ, էջ 119a = Ցաղագս Բանակի, պրակ Ժ, էջ 126a = Ցաղագս. Արևելք, պր. ե: Վեներտի սպացույցն մեջ այդ մասերը պակաս են: Աղեքանազրու Հիշվում է նաև Պերիարս. գրոց մեկնության մեջ, էջ 514, Վեներտի, 1833:

¹ Տե՛ս՝ Մահմադ Իմաստասիրութեան, էջ 187-188, Վեներտի, 1833:

մանրամասն պարզարանությունները չկան, այլ նույնիսկ Անտոն մեկնիչի արամարանական Հատկացողությունները գանազան ուրիշ կետերում միանգամայն տարբեր են Գավթի կարծիքներից: Այն, ինչ որ Գավթի խոստանում է «կատարելապես ի Ստորագությունն Արխատակի» բացատրելու՝ պետք է որոնել Հունարեն **ἀπό φωνῆς Δαβίδ** Ստորագրվեանց մեկնությունն մեջ, և ո՛չ թե Անտոն մեկնիչի գրվածքն:

Մեր կարծիքով, վերոհիշյալ պատճառարանությունների հիման վրա կարելի է վերջնականապես ապացուցված Համարել, որ Արխատոնի Ստորագրվեանց և Յազգա Մեկնության Երկի Հայերեն մեկնությունները Գավթիինը չեն, այլ մի անՀայտ մեկնիչի գրվածքներ են, ուստի և այդ երկերի ներքին բովանդակության ուսումնասիրության Հետևությունները, ինչպես Վարդանի Հիշատակությունը և Հայ Հորինողի կամ Թարգմանչի ներքին նշանները¹, ամենևին առնչություն չունեն Գավթի և նրա երկերի խնդրի Հետ: Վիճնայի Մխիթարյանց թիով 112 ձեռագրում Ստորագրվեանց և Յազգա Մեկնության Երկի մեկնիչները Համարվում են Անիպախույս և Անտոնիոս էրմիա², որոնց մասին զեռ մանրամասն խոսելու ենք Գավթի և նրա երկերի խնդրին բառ կարելուցն պարզելուց Հետո:

§ 5. Գավթի իմաստասիրական երկերը

Բացի Սահմանք Իմաստասիրության գրվածքից և Պարզուրի ներածության մեկնությունից, որոնց Հունարենը Հայտնի է **ἀπό φωνῆς Δαβίδ** վերնադրով և որոնք Հայերեն Հետ նույնն են³, անպայման Գավթինն է նաև Արխատոնի Վերլուծականքի մեկնության 14-րդ գլուխ Հասվածքը: Բացի պրակների «ընդ

այստիկ Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակք» վերնադրերից, որոնք այդ մեկնության Գավթից Հորինված լինելու նշաններ են⁴, ուշադրության արժանի է և այն, որ ո՛չ միայն արամարանական Հատկացողությունները և զրանց մեկնության ու բացատրության եղանակն այդ գրվածքում նույնն են, ինչ որ ներածության մեկնության և Սահմանք Իմաստասիրության Գավթի երկերում՝ այլև մի քանի Հատվածներ այդ երկը գրվածքում գրեթե բառացի նման են: Բերենք մի քանի օրինակներ.

Սահմանք Իմաստասիրության,
էջ 214 (Անեեթիկ, 1833)

Մեկնություն ի Վերլուծականք,
էջ 559 (Անեեթիկ, 1833)

«Արդ զգիտնական զորութիւնն զարդարել ի ձեռն տեսականին, իսկ կենդանականն ի ձեռն գործականին որպէս զի մի զուտ զիտութիւն ի կարծեաց ընկալուցուք, և մի շար ինչ գործեսցուք»:

«Իսկ ապացուցական Հասարանս պիտանացու զոչ յամենայն իմաստասիրութեան ի տեսականն և ի գործականն ... որպէս զի մի զուտ զիտութիւն ընկալուցուք և մի շար ինչ գործեսցուք»:

Սահմանք Իմաստասիրության,
էջ 191

Մեկնություն ի Վերլուծականք,
էջ 566

«Քանզի տեսականին ամենայն զոչը կենականին առ ի զիտել, իսկ գործականին մարդկային միայն Հոգիք ... իսան զի կատարումս տեսականին նիսիք ունի զմարդկային Հոգիս, իսկ կատարումս զարբին»:

«Արդ տեսականն նիսիք ունի զամենայն զոյստ առ ի զիտել, իսկ կատարումս զճշմարտուն, իսկ գործականն նիսիք ունի զմարդկային Հոգիս, իսկ կատարումս զարբին»:

¹ Տե՛ս Anecd. Oxon., § 7, էջ VI և § 16, էջ XIX-XX;

² Տե՛ս Հայր Չ. Տաշյան, Տուցակ ..., էջ 389-396: Իմ կարծիքով, Անտոնիոս կարող է Աննոնիոս անվան ազնատուն Համարվիլ, երկաթագիր ՄԲ անուշադրութեամբ կարգապիկ է ՆՏ: Իսկ էրմիա ո՛չ թե Հունարեն **ἐρμηνεύς** բառն է, այլ Հաստիկ անուն **Երմիչ, Երմեւա, Երմեւա:** եթե այս կենդանությունը ճշովի՝ Ստորագրվեանց մեկնության մեծագույն մասը Վերմիտսի որդի Աննոնիոսի Հասարատական մեկնության Հայերեն թարգմանությունն է:

³ Տե՛ս Anecd. Oxon., § 9, էջ VII և § 31, էջ XXXVI;

⁴ Տե՛ս Anecd. Oxon., § 4:

§ 6. Զանազան կարծիքներ Գավթի անձի մասին և դրա քննությունը

Գավթի անձնագրությունը մի անզոգված է եղել թե՛ բյուզանդականների և թե՛ Հնդագետ քանասերների Համար: Հայոց մատենագրության դեռ Հնագույն շրջանում Հայերի և Հույների մեջ տարաձայնություններ են եղել Գավթի անձի մասին: Էջմիածնի մատենագրարանի զանազան ձևադրերում գտնվում է «Պատճառ Սահմանաց գրոց» մի Հատված, ուր ի միջի այլոց ասված է. «Առնել զայս դիրք և ցուցանել թէ այսպիսի կարողություն ունին Հայք և դուք բոլը՝ ր զայս անտես արարեալ էր և զՀայս ամբաստանէր: Ռճանք ասն թէ ի տեղն (... ի՛.՝ Աթլեւոր)՝ գրեաց և զգրինակն ի Հնեստ երեր և կէսք թէ յերկիրս գրեաց և ստարեաց որպէս Ստեփանոս զլոր թուղթն: **Բայց Յոյք ասն Ե դիրք ունել զԳավթի և իրենաց ազգէն:** Այլ յայտնի աշակերտ է Մովսիսի Քերեմոզի և ազգականն և ի Հարք գտառել ի Հերեթն զեղջէ և առ մեզ են Ե դիրք սորա՛. և. Բարձրացուցէրն. ր. Սահմանացս. գ. Պէտրն. գ. Մեկնութիւն Քերականին, և. Մեկնիչն Արիստոտէլի...»¹: Բանասիրական պիճնայի ենթադրությունների այդ Համեմատարար Հին Հատվածը մեզ Համար Հնաարքերական է միայն այն տեսակետից, որ Հույները Գավթին իրանց ազգից են ընդունել:

Բյուզանդական մատենագրության մեջ այս Գավթին շփոթել են IX դարի Niketas David Paphlagon-ի Հետ² († մտա. 890 թվին): Այս կարծիքը միանշանակաբար սխալ պետք է Համարել, որովհետև Գավթի երկերի բովանդակությունից շատ Հավանական է ենթադրել, որ նա ուսած պետք է լինի Հին իտալաստաիրական զգրոցներից մեկում, երբ այդ զգրոցները Հուստինիանոս I կայսեր կարգադրությունը դեռևս չէին փակվել, և րացի այդ՝ արդեն Հայտնի է, որ IX դարից առաջ Հայ մատենագիրներն օգտվել են Գավթի աշխատություններից³: Ինչպես «Պատճառ Սահմանաց գրոց» Հատվածի Հեղինակը, նույնպես և զբոլթն բոլոր նորագույն

Հայ քանասերները Գավթին Համարում են Հայ՝ Հարք զավտից և Հերեթն գյուղից: Գավթի Հարքացի Հայ փիլիսոփայի մի որոշ Հիշատակություն գտնվում է Ասողկան «Պատմություն տիեզերական» երկում, էջ 80. «Տեսյամ ժամանակի Մամբրէ, եղբայր Մովսիսի, զորն՝ ասնն երբորդ զտեալ ի փիլիսոփայս զտեսայր ի Հայս և **Գավթի աշակերտ Մովսիսի ի Հարք զավտէ ի Հերեթն զեղջէ** (Ս. Պետրերոյ, 1885): Ասողիքը Գավթի Հարքացուն Համարում է ժամանակակից Գյուտ կամեթոլիսուն և Հովհան Մանդակունուն: Բարձրագույն մեր նշանք Ս. Էջմիածնի մատենագրարանի ձևադրերում Սահմանաց գրոց և մեկնությունների վերնագրերը միակերպ չեն և այդ վերնագրերում Գավթին անվանվում է կամ «Անյաղթ փիլիսոփայ» կամ «Ներբղինացի» և կամ միայն «փիլիսոփայ»: Հայր Գարեգին Զարգանապան այդ Ներբղինացի մակդիրը բացատրում է այսպես. «Մովսիսի Խորենացույն թեոթոլի էր Գավթի, Տարնոն մտա Հարք զավտէն Հերեթ կամ Հերցյան գյուղին, և կամ ըստ այլոց՝ **Ներբղյուն ալանն, ուստի և Ներբղինացի կոչված**»: Այլ կերպ մեկնում է Հայր Գալուստ Տեր-Մկրտչյան. «Գավթի Հարքացին, որ կոչվում է նաև Հերտանացի կամ Հերեթնացի՝ գյուղի անունով, այլ և **Ներբղյուն կամ Ներբղինացի՝ Ներբղնալարի անունով, ուր թաղված է ըստ ազնվությունիցն**»: Մի փոքր տարբերակ է, որ մեկնույն Գավթիքը երբ տեղերի անունով է կոչվում, սակայն այդ խնդրի լուծումը մեր նպատակից դուրս է, որովհետև մեր կարծիքով Սահմանք Իմաստասիրության երկի և Ներածությունների վերլուծականի մեկնությունների Հեղինակը Գավթի Հարքացին չէ: Հայոց մատենագրության մեջ նորագյուտական մեկնելի Գավթիքը շփոթված է Գավթի Հարքացու Հետ, ինչպես և բյուզանդական մատենագրությունից շրջանում Niketas David Paphlagon-ի Հետ: Ս. Էջմիածնի մատենագրարանի թիվ 102 ձևադրում⁴ գտնվում է Գավթի Հարքացուց մի մնացորդ. «Գավթի Հարքացույ և փիլիսոփայի որ իմաստասիրական և իմաստասիրելի Հարցուած», որը Հրատարակեց Հայր Գալուստ Տեր-Մկրտչյան: Գավթի Հարքացու այդ մնացորդը ո՛չ մի Հինք չկա

¹ Տե՛ս Զեռ. թիվ 1887-Պարն. թ. 1845, թերթեր 247 և 248;
² Karl Krumbacher, Gesch. der byz. Litter., Zw. Aufl., München, 1897, § 183, էջ 432.
³ Գալուստ Տեր-Մկրտչյան, Պետրոս Արևելաց Եպիսկոպոս, «Արարատ», 1902, Հուլիսի և փետրվարի նույն Հեղինակի, Անաթոլիա Երբակացի, «Արարատ», 1896, փետրվար և ապրիլ:
⁴ Տե՛ս Զեռ. թիվ 1887-Պարն. թ. 1845, թերթեր 247 և 248;

¹ «Հայկական Հին դպր. պատմ.», Վենետիկ, 1886, էջ 295;
² Տե՛ս «Գավթի Հարքացի», Արարատ, 1902, սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 937;
³ Գերբղյան ցուցակ, երկնախորդ, զովան Հայոց Նե և Ն. թվին:
⁴ Տե՛ս «Գավթի Հարքացի», Արարատ, 1902, սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 939-963:

անվազերական Համարելու, մանավանդ որ այդ բնդարձակ իմաստասիրական գրվածքը պահպանված է պատկառելի Հետիոտն ունեցող 971-981 թվականների ձեռագրում: Արդ Հարքացու այդ մտադրող թե՛ ոճով, թե՛ բովանդակությանը և թե՛ փոխափայական ուղղությանը միանգամայն տարրեր է նորպաշտոնական Գավիթ մեկնիչի երկերից: Վերջիններ Հարքացու Հարցուպատասխանների Հնեց սկիզբը. «Հարցումն. Ձի՞նչ է մարդ: — Պատասխանի. Հոգի ի մարմնի կապակայ միջնորդաւ շնչոյ և ի նոյն երկուքն միատրեւր, սա մարդ առի և Աստուծոյ պատկեր: Ենթադատնական Գավիթ մեկնիչը նույնը կաահմաններ օր սեռէ և ի բաղկացուցիչ գանազանութեանց» և կպատասխանէ՝ «մարդ է՝ կենդանի քանուօր մահկանացու մտաց և Հանճարոյ ընդունակ»: Այսպէս և բոլոր Հարցերն ու պատասխանները միանգամայն խորթ է անՀամապատասխան են Գավիթ մեկնիչի իմաստասիրական Հասկացողություններին: Հարքացու իմաստասիրական Հարցվածների գրեթէ ամեն մի էջում նկատելի են Փիլոնի ազդեցության Հետքեր, ինչպես այդ ճիշտ նկատել է Հայր] Գալուստ Տեր-Մկրտչյանը, իսկ նորպաշտոնական Գավիթ մեկնիչի գրվածքներում Փիլոնի ազդեցության և ոչ մի նշան չկա: Գավիթ Հարքացու գրեթէ ամեն մի Հարց և պատասխանից երևում է նրա քրիստոնայ լինելը. «միջնորդ նորպաշտոնական Գավիթ փոխտոփայի գրվածքների միայն մանրախոյոյ և երկար քննությունից Հետո Հաջողվեց մեզ նրա քրիստոնայ լինելու մի փոքր Հետք գտնել: Գավիթ Հարքացի Հայ վավերական Հեղինակը և նորպաշտոնական Գավիթ փոխտոփայն տարրեր անձնավորություններ են: Այս քաջասակն եզրակացություններ մեկնիչ Գավիթ անձնավորության վերաբերյալ առեղծվածի յուժնուն ալեկի զգվարանում է, որովհետև՝ ինչպես ցույց տվինք՝ սա ո՛չ Նիկեոսոս Գավիթ Պափագոնն է, ո՛չ էլ Գավիթ Հարքացին: Արովհետև թե՛ Հայոց և թե՛ Հունաց մատենագրական ծանոթ պաճանդությունները մեկնիչ Գավիթ անձնավորության որդման Համար անստույգ և խառնաշփոթ ենթադրություններ են, ուստի և այդ խնդրի որդման Համար մե՞ջ բերենք մի քանի ակնարկներ և տեղեկություններ Հնեց նույն Գավիթի գրվածքներից:

§ 7. Մահճանց իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնություններ թարգմանված են Հունարենից

Հայոց մատենագրական ավանդության Հետևություններ՝ նորպացույ Հայ քանասերներից շատերը ևս չփոխել են նորպատնական Գավիթ մեկնիչին Գավիթ Հարքացու Հետ և, բնդունելով Գավիթ մեկնիչին իբրև Հայ Հեղինակ՝ կարծել են, որ Գավիթ վերահիշյալ իմաստասիրական երկերը թարգմանությունն չեն, այլ գրված են եղել Հայերեն: Արդ՝ այդ կարծիքը միանգամայն սխալ է: Մեծարդք ուսուցչապետ Ֆ. Կոնիքերը Համնատել է ներածութեան մեկնության Հայերեն և Հունարեն ընթացքեր և եկել է այն եզրակացության, որ Հայերենը «քառ առ քառ տասացի թարգմանություն է Հունարենից»¹: Ներածութեան մեկնության Հունարեն ընթացքը, որ տպագրված է Արիստոտելի Քեղոնի Հրատարակության 4-րդ Հատորում² ավելի բնդարձակ է, քան Հայերեն թարգմանությունը: Կոնիքերի կարծիքով՝ Հայերեն մի ամփոփ ամբողջություն է կազմում, իսկ Ա. Բրանդիսի Հրատարակած Հունարեն ընթացքի բնդարձակ մասերն ստացել են բաղվածքներից և Հավելումներից, որոնք բնդարձակ ենրճուծված են որիչ գանազան մեկնիչների գրվածքներից³: Ներքի տակ չունենալով՝ զմբախտարար անկարող ենք որոշ կարծիք Հայտնել այր. Ֆ. Կոնիքերի այս վերջին ենթադրության մասին:

Արդ՝ բնդունելով, որ Ներածություն մեկնությունը թարգմանված է Հունարենից, այն էլ գրեթէ տասացի կերպով՝ ամնայն Հավանություն կարելի է նսե եզրակացուել, որ Արիստոտելի Վերլուծականքի ԺԴ դրոսն — մեկնությունը և Մահճանց իմաստասիրութեան երկը, իբրև միևնույն Հեղինակի՝ Գավիթ մեկնիչի՝ գրվածքներ, նույնպես թարգմանված են Հունարենից: ԱնՀավաստի կլինեք կարծել, որ Գավիթ մեկնիչը յուր երկերից Ներածութեան մեկնությունը գրել է Հունարեն, իսկ Մահճանց իմաստասիրութեան երկը և Վերլուծականքի մեկնությունը՝ Հա-

¹ Anecd. Oxon., § 31, էջ XXXVII.

² Bd. IV, Scholia in Aristotelem, collegit Christ. Aug. Brandis, Berol., 1836.

³ Anecd. Oxon., § 31, էջ XXXVII.

յրեն: Այդպիսի մի ենթադրություն անհիմն կլիներ նախ այն պատճառով, որ Գավիթ մեկնիչի բոլոր երկերն էլ Հայերենում նույն խրթին և Հարազատ ոճն ունեն՝ ընդգրկվան նման առանձնահատուկություններով, որոնք Հուռարենից թարգմանված լինելու պերճախոս և ակնհայտի նշաններ են:

Ոչադրա՞վ է սակայն այն Հանգամանքը, որ Մահճանաց և մեկնությունների թարգմանությունը տարբեր է Պոքիտուրի ենթադրվեան և Արիստոտելի՝ *Օրգանոն*-ի ընդգրի թարգմանությունից: Մինչդեռ մեկնիչը բուն ընկալող փոխադրված է Հուռարենից ո՛չ միայն բառացի, այլ փակ և ա փակ և ստացի նմանությամբ՝ Մահճանք Բնաստասիրութեան երկը և մեկնություններն ըստ երևույթին թարգմանված են փոքր-ինչ ազատ, ո՛չ այնքան ծայրահեղ փոփոխվան նույնությամբ: Փոխադրության վերաբերյալ այս ենթադրություն անհրաժեշտ է ստուգել. Համեմատելով Մահճանք Բնաստասիրութեան երկը *Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας* ընդգրի հետ, որով թարգմանության խնդիրը հաստատուն և վերջնական յուծում կտանա:

Շատ կփափագվեր, որ *Τὰ προλεγόμενα* Հուռարեն ընդգրին առնեն ունեցող որևէ բանասեր Հանձնառու լիներ այդ ուսումնասիրության: Համեմատության ժամանակ խիստ կարևոր կլիներ որոշել, թե արդյոք Պոյեղոսնեայի Հուռարեն ընդգրում կա՞ն ստորև ստաջ ընդած այն Հատվածները, որոնք Գավիթ մեկնիչի արևելյի և նույնիակ Հայ լինելու նշաններ են: Եթե այդ Հատվածները ներմուծված չեն Հայերեն ընդգրում թարգմանից՝ թերևս Տեսարվոր Հանարիի ընդունել, որ Գավիթ մեկնիչը Հուռարեն զրոյ մի Հայ փոխադրա է, որին սակայն սխալ կլինի նույնացնել Գավիթ Հարաբաց հետ:

Մահճանք Բնաստասիրութեան, էջ 198 (Վենետիկ, 1833) Հայերեն ընդգրում Հիշվում է ուն Տիգրան, Հափանդուն Տիգրան Մեծն:

«Եվ շարունակ քանակն ոչ կարճ անշփոխաբար տեսակս ընդունել զանազանս, փասն զի մտ որ է շարունակ քանակս **Եթէ որ ստեղծանիցէ զնա ըստ Տիգրանակ կերպարանին, ոչ կարճ այլ կերպարան ընդունել՝ Եթէ, ոչ յառաջագոյն ի բաց կղանի, ապա Եթէ, ոչ՝ չփոխեման լինի**»²:

Տիգրանի Հիշատակությունը եթե Հուռարենում ես գտնվի՞ մի որոշ փաստ կլինի Գավիթ մեկնիչի արևելյի և Հափանաբար նաև Հայ ծագման:

Միտո Հետաքրքրական է նաև մի այլ Հատված՝ Մահճանք Բնաստասիրութեան, էջ 163 (Վենետիկ, 1833):

«Վասն որոյ **մարմին կոչի, այս ինքն ընդարձ** փասն զի ընդարձացուցան, զհոգին և ընդարձանայի ի գերեզմանիս»:

Միայն Հայերեն զրոյ մի Հեղինակ կարող էր «մարմին» բառը բացատրել իրեն «ընդարձ», որովհետև այդ մեկնությունը մի տեսակ առնական ստեղծարանություն է, «մարմին» բառի Հնչման վրա հիմնված: Կարծում եմ, որ Հուռարենի հետ բազալատությունը ցույց կտա, որ այդ կասկածելի կտորը ներմուծված է թարգմանության ժամանակ կամ յուսանցքի ստորական նկատություններից: Այդ ենթադրությունը հիշալի անխուսափելի է, քանի որ շատ զորեղ են այն հիմերը, որոնք նպաստավոր են Մահճանք Բնաստասիրութեան երկի Հուռարեն լեզվով Հորինման:

Ինձ թվում է, որ Հայոց ժառանգությունը հին չրջանում Համարյա թե անհնարին էր Հորինել իմաստասիրական անթիվ նոր դարձվածքներով և բառերով այնպիսի Հայերեն զրգածքներ, ինչպես Գավիթ մեկնիչի Մահճանքը և մեկնությունները: Ոչադրությունն պետք է ստեղծ, որ այդ չրջանում շկային նման իմաստասիրական նախնադույն աշխատություններ և ո՛չ էլ իմաստասիրական մտքեր և գաղափարներ արտասույտով փոքր ի շատե ճկուն և Հարուստ լեզու: Նույնիակ խիստ զգվար պետք է լիներ իմաստասիրական երկերը գեղեցիկ և Հասկանալի ոճով Հուռարենից փոխադրելը, մասամբ Հնց այդ պատճառով էլ ստաջացավ ստաացի և զրեթե փակ ա փակ թարգմանելու եղանակը՝ արվեստական և խորթ բառակազմությունով և Հուռարեն դարձվածքներով:

ընդգր, որինակ՝ սույն Հատվածում թիվ 1810 մեռագրին ունի լավագույն ընթերցված՝ «Եթե ոչ յառաջագոյն ի բաց կղանիցի: ապա Եթ ոչ չփոխեթեան լինի»: Եվ ընդհանրապես՝ Գավիթ մեկնիչի իմաստասիրական երկերի փնտրիկան հրատարակությունը անբավարար պետք է Համարել: Հայերեն լավագույն մեռագրերի և Հուռարենի բազալատությունը շատ զղայի կերպով փոփոխված և սրբազրված մի նոր ընդգր կարելի է ստանալ:

¹ Anecd. Oxon., § 6.

² Էջմիածնի թիվ 1810 մեռագրի («Վարկե, ցույց, թ. 1767) ունի Համայն այնպիսի ընթերցվածներ, որոնք տեղ-տեղ ուղղում են Վենետիկում ստաղծված

§ 8. Նորպատանական Դավիթ մեկնիչը Աղեքսանդրիայում
ուսած VI դարի մատենագիր է

Հայոց մատենագրական ուսումնասիրություններից անկասկածաբար փոքրիկը **Քրոմբախ** Հուսարեն ընդգրկելով վկայությունների վրա հիմնվելով՝ բյուզանդականները Դավիթ մեկնիչի վերաբերմամբ եկել են այն կարծիքին, որ նա Կրտսեր Օլիմպիոզորոս փիլիսոփայի աշակերտն է եղել: Իսկ Կրտսեր Օլիմպիոզորոս փիլիսոփայի մասին հայտնի է, որ նա Հերմիասի որդի Անտիոսի աշակերտներից է և VI դարի սկզբում Հուստինիանոս I կայսեր ժամանակ դասախոսել է Աղեքսանդրիայում, ինչպես և նրա ուսուցիչ Հերմիասի որդի Անտոնիոսը:

Դավիթ մեկնիչի մասին Հուսարեն ընդգրկել տեղեկություններից Հետևյալն այլ եզրակացության ամփոփումը գտնում ենք Կարլ Կրտսերայների «Պատմություն բյուզանդական գրականության» երկում, «Olympiodoros muss als Verfasser des verlorenen Kommentars (zur Jsagoge) angesehen werden, aus welchem die beiden uns erhaltenen Schriften seiner Schüler Elias (Helias) und David geflossen sind. Die Blütezeit des Elias, der, als er sein Werk abfasste, noch nicht dem christlichen Glauben angehörte, fällt in die Mitte des 6. Jahrhunderts. Bedeutend ferner steht seiner Quelle das unter dem Namen des David, auch Niketas David, erhaltene Werk. Wahrscheinlich ist diese griechische Schrift nur eine breitere Ausführung des von dem armenischen Philosophen David verfassten Kommentars und wohl aus Lehrvorträgen desselben hervorgegangen»¹:

Բյուզանդացիների այս ուշադրավ տեղեկությունը Համեմատարար նորագույն ուսումնասիրությունների արդյունք է և Լեբի Հայտնի չի եղել մեծարգո ուսուցչական Ֆ. Կոնիբերիին, որը յուր ընդարձակ ուսումնասիրության մեջ խիստ բունազրույն է Հակասական Հետևությունները է անում Դավիթ մեկնիչի ժամանակի մասին²: Բոլորովին ավելորդ է անօգուտ կլիներ բնութիցյան ենթարկելու նորպատանական Դավիթի վերաբերյալ մատենագրական և բանասիրական անհիմն և անապացույց ենթադր-

ություններն, ուստի և մեր ուսումնասիրության մեջ, ինդունվով անտես այդ կարծիքները՝ բնութիցյան կառույցներ միմյանց Դավիթի երկերի ներքին բովանդակության Հետազոտությունից ստացված զրական և Հաստատուն այն վկայությունները, որոնք Դավիթի առեղծվածը յուսարանելու և պարզելու Համար կական նշանակություն ունեն:

Սահմանք Իմաստասիրության զրվածքում երկու անգամ Հիշվում է Օլիմպիոզորոս փիլիսոփան, և առաջ են բերվում նրա իմաստասիրական բնույթը բացատրությունները՝ սահմանի բանական արտաբեր կազմության մասին և թե՛ ինչպես պետք է Հասկանալ Փեղոնի տրամաբանության մեջ Պրատունի տված այն որոշումը, թե իմաստասիրություն է խոսկումն մահուս: Օլիմպիոզորոսին վերադրված կարծիքները Հարկավ պետք է որոնել նրա մեկնական զրվածքներում: Բացի այդ, ընդունելով, որ Դավիթ մեկնիչը կրտսեր Օլիմպիոզորոսի աշակերտն է՝ արդեն a priori խիստ Հավանական կլինեք կարծել, որ նրա իմաստասիրական դատողություններն ու մեկնությունները մեծ մասամբ նման և Համեմատյն պետք է լինեն, ուստի և, այդ ևս աչքի ստաջ ունենալով՝ Հարկավոր է Համեմատել և քննել նոցա երկերի ներքին բովանդակությունը:

Օլիմպիոզորոսի Հիացական խոսքերը սահմանի արտաբեր Հորինվածության մասին գտնվում է Սահմանք Իմաստասիրության երկում, էջ 143, բայց որպեսզի Համարնայի լինեն այդ խոսքերը՝ Հարկավոր է առաջ բերել նաև նախորդ տողերը.

Սահմանք Իմաստասիրության, 142-143 (Վենետիկ, 1833).
«Եւ պարտ է գիտել, զի ի սահմանն Հակակիրք միմեանց լինին բառք և իրք: Քանի չորժամ սահմանն ստաւելու բառիք, նուազեն իրք, որզոն, մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և Հանձնարոյ ընդունակ, բերնող: Քանզի չերթնողն յաւելումն Երկալ ի սահմանի՝ նուազեցոյց զիրն, վասն զի զբերնողն միայն սահմանեաց և ոչ զամենայն մարդ, բանզի ոչ ամենայն մարդ բերնող, ահա ստաւելաւ ի բառալ և նուազովնն Եղև իրացոյ: Իսկ չորժամ նուազեն բառալ՝ ստաւելուն իրքը, որզոն, մարդ կենդանի բանակալ, ահա նուազեցինն բառք՝ և յաւելուն իրքը: Վասն զի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ և Հընչուակք և զկեր, և որպէս աւէր Ոլումպիոզորոս փիլիսոփոս՝ եթև, Արանչելի իմն Հնարս եկիտ բնութիւնս.

¹ K. Krumphacher, Gesch. der byz. Litter., zw. Aufl., München, 1897, էջ 432.

² St'u. Anecd. Oxoniens., §§ 7, 9, 12 և 18.

նաազուրիւն Հարստացալ՝ և Հարստութիւն կեզճաւորեալ զնաազուրիւնացն»:

Շատ նուրբ և խորինաստ կերպով բացատրում է մեկնիչ Գափիթ Պղատունի՝ իմաստասիրութիւնը և լոսկումն մաշու, որչու՞մք և կարծում է, որ «մաշ պարտ է աստուտոր իմանալ ոչ դրանաւորական մաշն՝ այլ զայտորճականն, որով զճնտելութիւն զորձ և աստից»։ Յօր այդ մեկնութիւնը Հաստատելու Համար ի միջի այլոց Հիշում է Սիմանիզորտի Հետեալ խոսքերը.

Մահճարք Իմաստասիրութեան, էջ 164 (Վենետիկ, 1833)
«Առ այտարիկ ասաց Ռոզմաիզորտս փիլիսոփոս, եթէ ոչ սրգատեմական գիրն զիմն նաՀանքըր զարճակումն, այն ինչ աՀա տաճանարար լուճանիկ զյորեմախտանճ կապ կենցաղոյս»:

Սիմանիզորտից վկայութիւններ պարունակող վերոհիշյալ Հատճանքում ուշադրութեան արժանի մի կետ կա: Գափիթ երկերին մտա ճանտմանայոց Հետո կարելի է նկատել, որ նա ուրիշ փիլիսոփաների վերաբերմամբ երբեք չի գրում «ասէր» և «ասաց», այլ միշտ զորձ է ամուսն նույն կամ այլ րայերի ներկա ժամանակը, օրինակ՝ «ասէ Արիստոտէլը», «չիչէ Պղատուն», «Պղատուն կարծէ», «չայտ ասնէ Պղատուն ասելովն» և այլն: «Ասէր» և «ասաց» ձևերի զորճածութեան եզակի և բացատիկ սույն զեպարիք թողնում են մեզ վրա այն տպաւորութիւնը, որ Գափիթը մեկնիչն ինքը լսել է կրտսեր Սիմանիզորտս փիլիսոփայի դասախոսութիւնները: Այսպատճ՝ թերևս կարելի լինի ենթադրել, որ բյուզանդագետների անկախ Հետեւութիւնը Գափիթը մեկնիչի կրտսեր Սիմանիզորտի մտա աշակերտած լինելու մասին մասամբ ճշտում է նաև Հայերեն քննարի օգնութեամբ:

§ 27. Գավիթ Անհաղթին վերագրվող Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան զրոց Հեղինակի «Ամելյախոս» անունը աղճատումն է Հունական Ἰαμβλιχος անվան — Վերոհիշյալ դիտողությունները, ինչպես և այն պատճառարանութիւնները, որոնք առաջ էի ընկնել «Գավիթ Անհաղթի խնդիրը նոր յուսարանութեամբ» աշխատութեան մեջ, պարզ ու որոշ ցույց են տալիս, որ Արխատուկի «Յաղագս մեկնութեան» ու «Ստորոգութեանց» մեկնությունները, որոնք նորագույն մտազրկում վերագրվել են սխալ կեմիադրութեամբ Գավիթ Ենդգիւնացուն, Ամելյախոս և Անտոնիոս Էրմիս մեկնիչների աշխատութիւնն են:

Մտում է այժմ պարզել, թե ո՞վքեր են այդ մեկնիչները, որոնք Հիշատակված են Վիեննայի թիվ 112 մտազրում:

Ամելյախոս անունը Հանդիպում է Հայ մատենագրութեան մեջ նաև «Լուծումնք Գրողի Դիագոլոսոսի անուանեցելոյ աստուածարանութեանց» երկում, որ 1248 թվին փրացրելից թարգմանել է Հայերենի Միսնուն կրոնագրքը: Այդ Լուծումնքը վրացական ավանդությունը համարում է Հովհաննես Պետրիցանեցու գործ, իսկ Հայ մտազրերի վերնազրի Համաձայն նույն Լուծումնքը վերագրվում է ոմն «Ամելյախոս» իմաստասիրին: Սույն Լուծումնքի և Ստորոգութեանց ու Պերիարանեխոս գրոց մեկնիչները, ինչպես կտեսնենք տարրեր անձնավորություններ են, բայց Հետաքրքիր է ու ուշադրութեան արժանի, որ այդ Հեղինակների անունը միակերպ է աղճատված երկու դեպքումն էլ: Գրողի Լուծումնքի մտազրկումն «Ամելյախոս» անվան Համար կան և ուրիշ ընթերցմանը՝ «Հոմելյախոս, Յոնիլյախոս, Ոմիլյախոս, Ամելյախոս, Յոմելյախոս և Յամելյախոս»¹:

Ինչպես Վիեննայի թիվ 112 մտազրի «Ամելյախոս» կամ «Ամելյախոս» ընթերցմամբ, նույնպես և բոլոր առաջ ընկնած ըն-

¹ Տե՛ս Հայր[ի] շ. Տաշյան, Գրողի Դիագոլոսոսի յաղկուպ աստուածարանակար, էջ 33-34 և Н. Мадор, Иоанн Петрицкий, էջ 14 և 32:

վերցվածները, պարզապես աղճատում են ինչ որ անվան, որն անստոր և անձանթի է եղել Հայ գրիչների Համար:

Հայր) Հ. Տաշյանը կարծում է, որ վերոհիշյալ բնիվերցվածները պետք է ենթադրել Հունական 'Ιαμβλικός կամ 'Αμφιλοχος անվան աղճատումներ: Ինձ թվում է՝ սակայն, որ այդ բնիվերցվածները աղճատում են, Հավանաբար, 'Ιαμβλικος և ոչ 'Αμφιλοχος անվան, որովհետև բնիվերցվածներից շատերն ունեն սկզբում Ց տառը և «Յոմելյախոս», «Յոմիլյախոս», «Յոմկախոս» և «Յոմելյախոս» բնիվերցվածներն անհավանական է ենթադրել 'Αμφιλοχος անվան, աղճատումներ:

Բացի այդ՝ Արիստոտելի մեկնիչների շարքում 'Αμφιλοχος անունով մեկնիչ ոչ մի տեղ չկա Հիլատակված, իսկ Յամբրիլոս իմաստասերի մասին կտեսնենք, կան վիպյություններ, որ նա Հիլավի գրել է Պլատոնի ու Արիստոտելի երկերի մեկնություններ:

§ 28. Յամբրիլոսի Հիլատակությունը Գավթի ու Էլիասի մեկնություններում: – Գավթի ու Էլիասի մեկնություններում ի թիվս այլ մեկնիչների Հիլավում է նաև Յամբրիլոսը, որպես Արիստոտելի Ստորագութեանց մեկնիչ:

Էլիասին բնծայված Ստորագութեանց մեկնությունից գիտենք, որ Յամբրիլոսը՝ Հակասակ Աղերսանդրոս, Պորփյուրիտ և Հերմիտոս մեկնիչների տեսությանց՝ պնդել է, որ Արիստոտելի «Ստորագութիւնը» երկը վերաբերում է թե՛ Հայնից, թե՛ մտածությունների և թե՛ իրողությունաց բնութեանը:՝ Նույն վերայ նա քաջատրամ էր Հունանուն, փառանուն և Հարանուն իմաստասիրական գաղափարների նշանակությունը, ինչպես երևում է Էլիասի Հետևյալ Հատվածից²:

«Յետ Հունանոցն և փառանունցն և յարանունցն, որոց իւրաբանչիւր որ յայտ ասեր զՅամպրիբեան զիտուորութիւնն յաղագս ձայնից զոյ պարզից՝ նշանակազոց զպարզ իրողութիւնսն ընդ մէջ պարզից մտածութեանց՝ զայ Արիստոտէլ և ի նոյն ինքն ի Ստորագութիւնանս»:

Նորպաղատնական Գավթի ներածությունն մեկնությունը ևս

¹ Տե՛ս Elias, Ստորագութեանց մեկնության Հունարեն բնագիրը, էջ 129-130 և 136, 29-33, նաև Էլիասի Հայերեն Թարգմանությունը, էջ 43, 27-44, 10:

² Էլիաս, Մեկնութիւն Ստորագութեանց, էջ 67, 4-8, Հունարեն բնագիրը, էջ 144, 31 – 145, 3:

Յամբրիլոսի մասին ունի Հետևյալ վկայությունը՝

«Տեսապք յաղագս Պորփյուրի թիւ ուստի՞, ուստի Յամբրիլոս, յաղագս որոյ սասց Պիթիա, թիւ սասուածային ստորին և բազմուսումն փինելիկցին: Բազմուսումն փինելիկցիցի զՊորփյուրիտս անելով, և սասուածային ստորի գնմիլիլոս, վասն զի սասուածարանութեան միշտ պարապէր»¹:

Իսկ Արիստոտելի վերլուծականքի մեկնությունյան Հայերեն թարգմանությունը վկայում է, որ Հուլիանոս կայսեր ժամանակակից Մարսիմոս Ռուհայեթին աշակերտ էր «Անիլորտի»²:

Ինձ թվում է, որ Էլիասի Ստորագութեանց մեկնության մեջ Հիլաված Յամբրիլոսը նույն Հուլիավոր Յամբրիլոս ստորի փիլիսոփան է, որին Գավթին անվանում է ասասուածային, իսկ վերլուծականքի մեկնությունը Համարում է Մարսիմոս Ռուհայեցու ուսուցիչ:

Արիստոտելի Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց մեկնությունների Հեղինակ «Ամնկախոյսը», որի անունը, ինչպես սասցինք, աղճատումն է «Յամբրիլոս» անվան, կարծում են, որ նույնպես Հուլիավոր այդ Յամբրիլոսն է, որն ըստ վերոհիշյալ վկայությունների, Հայտնի է եղել, որպես ականավոր մեկնիչ Արիստոտելի երկերի: Էլիասը մասնանիչ է անում նույնիսկ նրա մեկնական ուղղության Հիմնական թերությունը և պատվիրում իր աշակերտներին՝ «ոչ կրակից իննչ Հերմուածոյ ունէր, որպէս Յամբրիլոսն եղև. քակից սա կրակից եղևալ Պլատոնի՞ շնորհ Արիստոտէլի ոչ ընդդէմ ասել Պլատոնի վասն տեսակացն, այլ մանուտանը ձայնակցել»³:

§ 29. Ար «Ամնկախոյսը» և Էլիասի Հիլատակած «Յամբրիլոսը» միևնույն անձն են, այդ երևում է նաև Ստորագութեանց և Տաղապա մեկնութեան զրոց մեկնությունների բովանդակությունից: – վերոհիշյալ մեր ենթադրությունը, որ Էլիասի Հիլատակած Յամբրիլոս մեկնիչը և Գավթի Անհաղթին վերաբրված Ստորագութեանց ու Պերիարմենիաս զրոց մեկնությունների Հեղինակ «Ամնկախոսը» միևնույն անմատչորությունն են, Հաստատվում է «Ամնկախոսի» մեկնությունների բովանդակության բնութեամբ:

Յամբրիլոսը չէր բնդունում, ինչպես սասցինք, Աղերսանդրոս

¹ Գավթի, վերլուծութիւն Պորփյուրի, էջ 262:

² Մեկն. ի վերլուծ., էջ 586:

³ Մեկն. Ստոր., էջ 28:

Ափրոդիսեցու, Պորփյուրիոս և Հերմիոս մեկնիչների կարծիքը Արիստոսելի Ստորագութեանց «գիտաւորութեան» մասին: Աղերսանդորս Ստորագութեանց «գիտաւորութիւնը» բացատրում էր, իբր «ձայնից» միայն ընկոմիտն, Պորփյուրիոսը՝ «մտածութեանց», իսկ Հերմիոսը՝ «իրողութեանց»: Յամբդիքորս, Հակասակ սրանց, կարծում էր, որ Ստորագութեանց «գիտաւորութիւնն» է և «ձայնից» և «մտածութեանց» և «իրողութեանց» բնութիւնը¹:

Արդ՝ «Ամեկախոյս» Ստորագութեանց Լուծմունքը սկզբից մինչև վերջը Հափառարիմ է մտւո՞մ Յամբդիքորսի այդ սկզբունքին և «Ամեկախոյսը» մեկնում է Արիստոսելի Երկը, Ելակես ունեւարդ Հենց նույն այդ տեսակետը:

Դափթի ու Էլիասի երկերում բազմաթիվ վկայութիւններ կան թե՛ Հին, և թե՛ Իրենց ժամանակակից մեկնիչների երկերից, սակայն «Ամեկախոյսի» Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց մեկնութիւններում Հիշվում են միայն մի ոմն Դեմոս, որը Համանարար Սուիդասի Հիշատակած քերական Եվդեմոսն է (Երրորդ դարի Հեղինակ Ք. Հ.) և Հռչակավոր Աղերսանդորոս Ափրոդիսեցին, որն ապրել է Երկրորդ դարի վերջում և Երրորդ դարի սկզբում Քրիստոսից Հետո: «Ամեկախոյսի» մեկնութիւններում չեն Հանդիպում բազմաքանակի ու վկայութիւնների Աղերսանդրոսի զարգրի նորագուն մեկնիչների երկերից: Այս Հանեղամանքը կարող է անշուշտ նշան Համարվել այդ մեկնութիւնների Հետեւի: Եթե «Ամեկախոյսը» Պորփյուրիոսի աշակերտ Յամբդիքոսն է, այդ դեպքում ինքնբարոյիչեան Հասկանայի է, թե ինչու Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց մեկնութիւններում, որտեղ զրգած պիտի լինին չորրորդ դարի սկզբներում, չէին կարող Հիշվել Հինգերորդ դարի մեկնիչներ:

Նշանավոր Յամբդիքոս ասորին, որ Պորփյուրիոսի աշակերտն էր Հոմոսում, շատ Հափանական է, որ գրած լինել արխատոսեցեան երկերի մեկնութիւններ, ինչպես Լեմբարում է Վ. Վինդելբանդը

իր «Հին փիլիսոփայութեան պատմութեան» մէջ²:

Urbinas 35 Հունական մեռագրում, որի մեջ Հափարված կան բազմաքանակ զանազան մեկնիչների երկերից, գտնվում է մի Հառված Յամբդիքոսից, որ Հիշում է Ա. Բուսան Էլիասի Հունական Հրատարակութեան առաջարկում (ԼՋ 21): «Maximam autem admirationem mihi movit, — ասում է Բուսան, — Jamblichi nomen expositioni quae est de substantia praepositum (f. 28^v): *ἐκ τῶν ἰαμβλίχου, ἀπορρήσειεν ἐν τῷ πῶς οὐχὶ καὶ ἄλλοις πλεῖστον ὑπάρχει τοῦτο τὸ ἴδιον* κτλ. Sed accuratius quaerenti mihi persuasum est illam notam omni fide carere. Nam quae sequitur interpretatio ex Simplicii commentario videtur excerpta esse eodemque ex fonte Jamblichi nomen haustum»:

Ա. Բուսան այդ Հառվածը վերագրում է Սյունպիցիոսին, որովհետև, նրան անՀայտ է Էղել, նոր այս Լեմբարութիւնը, որ Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց մեկնութիւններ կարող էր գրած լինել նաև Յամբդիքոսը: Սակայն «Ամեկախոյս»-Յամբդիքոսի մասին վերՀիշյալ մեր գառողութիւնները, որոնք Հիմնված են իմաստասիրական Հայ մեռագրերի վկայութիւնների վրա, կարող են նոր յուժում տալ Արիստոսելի մեկնիչների վերաբերյալ որոշ խնդիրների, ուստի անՀրաժեշտ է ըննութեան ասել նորից Հունական մեռագրերը, որոնք թերևս Հնարագորութիւն տան վերջնականապես պարզելու մեր Հարցած խնդիրը:

Եթե Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց մեկնիչը Յամբդիքոս ասորին է, պարզ է, որ նրան չի կարելի նույնացնել Պրոկղի Դիադոսոսի յուժմունքի Հեղինակ «Ամեկախոյս»-ի Հետ, որովհետև ինքը Պրոկղը Հինգերորդ դարի Հեղինակն է:

§ 30. Մի քանի դիադոսութիւններ «Ամեկախոյս»-Յամբդիքոսի մեկնութիւնների բովանդակութեան մասին: — «Ամեկախոյս»-Յամբդիքոսի Ստորագութեանց և Պերիարմենիաս զրոց Լուծմունքները գրի առնված դասախոսութիւններ են, ինչպես և նորպատանական Դափթի ու Էլիասի մեկնութիւնները: Այդ պարզ Երևում է նույն յուժմունքների ներքին բովանդակութիւնից և գրի առնողի Հաճախ կրկնվող խոսքերից, ինչպես՝ «ասացաւ մեզ

¹ Փոխանակ «ձայնից, մտածութեան և իրողութեանց» տեղմնների Ամեկախոյսի թարգմանք զրոց է ամում «ձայն, ինչպես և իր»: Անգլի այդ տարբերութեան խնդիրը Հասուկ ըննութեան վրա անկողն տայն աշխատութեան Հարցող մասում:

² S^h W. Windelband, Geschichte der alten Philosophie, Zweite Auflage, München, 1894, էջ 223.

առաջագործ» (Մեկն. Ստոր., էջ 422), «չաղագա որդ նայլս ճանկի է» (էջ 431), «ճատևցի յիւրում տեղոջ» (էջ 433), «ճատևցու մեզ» (Մեկն. Պերիար., էջ 487), «որպէս ունիմք ուսանել» (էջ 500), «այսպէս զորոն ասացան մեզ պատճառք» (էջ 505), «որպէս ուսար» (էջ 521) և այլն:

Լուծմունքների հեղինակը Հիշում է Արիստոտելի մյուս երկերից՝ «Քնական յաւորութիւն» (Փոստիճ. ἀποροσσις), «Յնտ բնականացն» (Μετὰ τὰ φυσικά), «Յաղագա անկին» (Περὶ φυσικῆς), «Քնական տեսութիւն» (Հասկանարար՝ Τὰ φυσικά), Տրամարանականաց զիրք (Τὰ διαλογικά) և Ըստեղական իրողութիւնք (*):

Ուշադրութեան արժանի է, որ «Անկախոյս» - Յամբղիբոսը Հակաճատում է երբեմն պղատեսական մեկնիչներին և Պլատոնին, ինչպես այդ երեսուն է Հետևյալ Հատվածներէից:

Ստոր. Մեկն., Հաղագա քանակի, պր. ա¹

Իսկ ոմանք ի Պլատոնականացն կամին ասել, եթէ վասն զի՝ Հարկ է յամենայն պոչացութիւն բնորոնել զբանակն ոչ բոս չափոյ միայն, երբ թէ մեծ կամ փոքր, այլ յսակես բոս թուոյ, զի կամ մի է կամ բազում: Առ որս ասանք, եթէ մեզ իսկ Հակաճատութիւնս կարգէր, քանզի բոս Պրիթագորականացն մեայցեալք ասէր թէ մինն ոչ է թիւ, այլ յսակտ սկիզբն թուոյ. իսկ զոր ոչ թիւ ասացիր՝ այժմ քանակ ասէր եւ թիվ նշանակակն, որպէս թէ բոս մերում բանախուսութեանց եղիցի միակն միանգամայն թիւ ե՛ ո՛չ թիւ որ է անհար:

Մեկն. Պերիար., էջ 507 (Վենետիկ, 1833)

Առ Պլատոնի ինձ թուի ի տեղոջն կօխ, քանզի որպէս նա կամի՝ բնութեամբ բան ի մեզ է, վասն զի զործի է բանական գործութեան, որպէս է ակն՝ տեսութեան գործի. եւ այլ ինչ զգայարան՝ իւրաբանելիւրոցն, քայց սոստ ասացեալն. քանզի անուս ներգործութեամբ եւ գործութեամբ՝ իբրև զնոյն:

Այս Հատվածները, որոնց մեջ արտահայտված են «Ամեյախոյսի» ուրույն Հայացքները, կարտո են Հատուկ քննութեան Հունաց իմաստասիրական մատենագրութեան աղբյուրների օգնութեամբ:

§ 31. Վիննայի թիվ 112 ձեռագրում Հիշված «Անտոնիոս Էրմիար», կարելի է նմադրել, որ Յամբղիբոսի ուսուցիչ Անատոլիոսն է: Վիննայի Միլիթարացեան թիվ 112 ձեռագրում, ինչպես վերը հիշեցինք, Ստորագրութեանց մեկնութեան մեծագույն մասը, ստորին մեկնութեանից սկսած մինչև վերջը, Համարվում է «Անտոնիոս Էրմիար» այնատոմարուն: Այդ մեռագրում «Յաղագա ստրեչի» մեկնութեանն ունի վերնազիր՝ «Անտոնիոս Էրմիար և ասացեալ զմարգմանս», «Յաղագա որակի եւ որակութեան» մեկնութեան վերնագրում նույնպես Հիշվում է, որ «Անտոնիոս Էրմիար թարգմանէ»:

«Քարգման» և «Քարգմանել» պետք է Հասկանալ բոս երեսուցին «մեկնիչ» և «մեկնել» իմաստով:

Արդ՝ Լեֆե Ստորագրութեանց մեկնութեան վերոհիշյալ մասերի մեկնիչն «Անտոնիոս Էրմիար» է, Հարց է ծագում, թե արդեօք չի՞ կարելի պարզել նրա անձնագործությունը, ի նկատի ունենալով, որ նա եւս պետք է լինի «Ամեյախոյս»-Յամբղիբոսի ժամանակեց մեկնիչներից:

Որքան ինձ Հայտնի է, Անտոնիոս անունով մեկնիչ իմաստասիրական մատենագրութեանց մեջ ծանոթ էլ ոչ Յամբղիբոսի ժամանակ, ոչ էլ Հնոս: Աչրի ասաջ՝ ունենալով, որ Յամբղիբոս անունն աղճատվել է Հայերենում և ստացել «Անկախոյս» աղճատ անունը, նույնը թերևս կարելի լինի նմադրել և Անտոնիոս անվան նկատմամբ:

Այդ զեպքում, թույլ ենք տալիս մեզ նմադրելու, որ Անտոնիոս կարող է Հայերենում աղճատումն լինել Անատոլիոս անվան, իսկ Անատոլիոսը, ինչպես Հայտնի է, Յամբղիբոս ասորու ուսուցիչն էր:

Այս նմադրությունը կարող է թվալ Համարձակ և կարտո զբանակն ապացույցների:

Այդպիսի ապացույցներ մենք չունենք: Սակայն Լեֆե ուղիղ Համարվի մեր նմադրությունը, որ «Ամեյախոյս» Յամբղիբոս ասորին է, այդ զեպքում՝ ստանց այլ ապացույցների եւ ընտելույի պիտի լինի և մեր այս նմադրությունը, որ Յամբղիբոսի ժամանակակից, միևնույն զպրոցի ու խմբի մեկնիչ, «Անտոնիոս Էրմիար» աննայն Հավանութեամբ կարող է լինել Հենց նրա ուսուցիչ Անատոլիոսը, որի անունն աղճատված է Հայ մատգրերում:

Որևէ ուրիշ վկայություն կամ ակնարկ այս խնդրի լուսաբանութեան Համար պետք է որոնել եկրոպական գրագրարև-

¹ Տե՛ս Էջմիածնի մատենադարանի մեռագր. թիվ 1889 կամ 1943:

ներում գտնվող Հունական փիլիսոփայության վերաբերյալ մե-
ուսաբերում: Եվ էթն գտնվի այդպիսի մի վկայություն ու
Հաստատվեն վերահիշյալ մեր ենթադրություններն, այդ դեպքում
լուծված կլինի Արիստոտելի մեկնիչների նկատմամբ կարևոր մի
խնդիր և Դավիթ ԱնՇաղթին վերագրված Մտորդությունն և
Պերիարմենիաս գրքը մեկնությունները, որ թարգմանված են
Հունարենից. կկազմեն Անատոլոյոս-Յամրդիքյան մեկնություն-
ների Հատուկ ու նոր մի խումբ՝ որված չորրորդ դարում Ք. Հ.:

Գրանց Հայերեն թարգմանությունը, ինչպես տեսնում ենք
միանգամայն տարբեր է Դավիթի ու Էլիասի թարգմանություն-
ներից և արտասովորություն է Հունարան տարրեր ու առանձնա-
Հատուկ զարդից:

§ 32. Նյութի զասավորությունը և մեկնության ձևն ու կարգն
Ամելյախոյոս-Յամրդիքոսի մեկնություններում: — Ամելյախոյոս-
Յամրդիքոսի մեկնություններում նյութի զասավորությունը և
մեկնության ձևն ու կարգը բոլորովին այլ են, քան Էլիասի ու
Դավիթի մեկնություններում:

Օլիմպիոդորոս-Էլիասի խմբի մեկնություններում Պորփյուրի
ու Արիստոտելի բնագիրը մեկնվում է «պարաֆրազների» ձևով,
այսինքն՝ բնագրից առաջ են բերվում առանձին նախադասու-
թյուններ, որոնք կարող են Հայաստրիքյան, և մեկնվում: Այս
կարգի մեկնություններում շատ անաչարի զմպար է լինում որչե-
լի, թե՛ որտեղ է վերջնաձև Արիստոտելի բնագիրը և որտեղ սկսում
բնագիրը: Այս ձևով կազմված են Ալֆարաբի միջնադարյան
մեկնությունները:

«Ամելյախոյոս»-Յամրդիքոսի լուծումներնը բոլորովին այլ
ձևով են կազմված: Արիստոտելի բնագիրն այստեղ բաժանված է
պրահների և ամեն մի պրահ առանձին առաջ է բերվում in exten-
սո «բան» վերնադրի տակ. իսկ յուրաքանչյուր պրահի Համա-
պատասխան քննությունը, բաժանված Արիստոտելի բնագրից,
առաջ է բերվում «ձեկնություն» վերնագրի տակ:

Մեկնական այս ձևը միջնադարյան մեկնիչներից գործ է անել
Իրն-Ռոչար (Ավետոս):

Հունստ Ռենանի կրթիթյու¹, մեկնական այս վերջին ձևը գոր-
ծածական է Ղուրանի մեկնիչների մոտ և իրր թե սրանցից է փոխ

առել այդ ձևը Իրն-Ռոչար: Ինձ իմում է, որ է. Ռենանի այս
ենթադրությունը Հիմնավոր չէ: Մեկնական այդ ձևի գործածու-
թյունը «Ամելյախոս»-Յամրդիքոսի լուծումներնում պարզ մի
ապացույց է, որ մեկնական այդ ձևը, Հավանաբար, իրենք Ղու-
րանի մեկնիչները փոխ են առել Արիստոտելի Հազույն մեկ-
նություններից:

Համենայն դեպս՝ Դավիթի ու Էլիասի և «Ամելյախոյոս»-Յամր-
դիքոսի մեկնությունների արտասին ձևն ու նշանակը, որ իրարից
Հիմնովին տարբեր են, պարզ մի նշան են դարձել, որ այդ մեկ-
նություններն իմաստասիրական տարբեր զարդյունների ու Հավա-
նաբար տարբեր ժամանակների գործ են:

9. ՀՈՒՆԱԲԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՆԵՐԸ

§ 33. Իմաստասիրական Հնագույն մեկնությունները Թարգ-
մանված են Հունարենից: — Հայոց մասնագրական ավանդու-
թյունը, ինչպես տեսանք, իմաստասիրական գրեթե բոլոր
մեկնությունները Համարել է Դավիթ ԱնՇաղթ Հայ փիլիսոփայի
աշխատություն: Մասնագրական այդ ավանդությունը Հետե-
լով, Հայագետ բանասերները ևս ընդունում էին, որ այդ երկերը
Հինգերորդ դարում Հայերեն գրված աշխատություններ են և ո՛չ
թե թարգմանություն Հունարենից:

Այդ սխալ ու շփոթ ենթադրությունը եղել է զլխավոր պատ-
ճառը, որ իմաստասիրական մեկնությունների Հայերեն թարգմա-
նության խնդիրը ո՛չ միայն չի ուսումնասիրվել, այլ նույն ինքն
այդ խնդիրը երկար ժամանակ կապակցածելի ու վիճելի Համարվել
ավանդապահ բանասերների կողմից:

Որ իմաստասիրական Հնագույն Հայ մեկնությունները բոլորն
էլ թարգմանված են Հունարենից, այդ այնպե վիճելի մի ենթադ-
րություն չէ:

Դավիթ ԱնՇաղթին վերաբերյալ առասպելյալ ավանդու-
թյունը գրական փաստերով մերժվելուց Հետո, այդ խնդիրը կա-
րելի է Համարել վերջնականապես ապացուցված ու լուծված:

Իմաստասիրական Հնագույն մեկնությունները, ինչպես տե-
սանք, գտնական Հեղինակների Հունարեն գրված դասախոսու-
թյուններ են: Այդ Հեղինակներն են՝ Օլիմպիոդորոս-Էլիասը, եր-
րպատունական Դավիթը, Յամրդիքոսը և Հավանաբար նաև
Անատոլոյոսը:

Չունենալով զրական և ճշգրիտ տեղեկություններ գրանց մեկ-

¹ St. «Жизни и произведениях Аверроэса», т. 43-44 «Собрание сочинениях
Э. Ренана. Том VIII, Киев, 1902».

նությունների Հայ Թարգմանիչների մասին, Հայ բանասիրության անկարող է գտնվել որոշելու ո՛չ միայն այդ երկերի Թարգմանեան ճիշտ տարևիվը, այլ անգամ դարաշրջանը:

Այսպեսք միայն պարզ է, որ Գալիթի ու Ոլիմպիոզորոս-էլիասի խմբի մեկնությունները չեն կարող Հորինված, ուրեմն և Թարգմանված լինել Հինգերորդ դարում, ինչպես այդ վկայում է մեր մատենագրական ավանդությունը: Այդ պարզ ու անվիճելի է, որովհետև այդ մեկնությունները վեցերորդ դարի մեկնիչների աշխատությունն են:

§ 34. Ռուսոմասիրության ԽՆԷ կղանակով Հնարավոր պիտի լինի Հետզհետե որոշել Հունարան Հնագույն Թարգմանությունների ժամանակը: — Հայ Հնագույն մատենագրության Հաջորդական դարգացման և ժամանակագրության Հիմնական խնդիրը մինչև այժմ մնում է մոլթ ու անորոշ: Մինչև այժմ չի Հաջողվել նաև որոշել Հունարան Հնագույն Թարգմանությունների ժամանակը:

— Հայկական ավանդությունը Հետևող բանասերներն այդ Թարգմանությունների ժամանակը Համարում են Հինգերորդ դարի վերջը, շատերը նույն Թարգմանությունների ժամանակը տանում են մինչև ութերորդ, իսկ անոնք՝ վեցերորդ կամ յոթերորդ դարը:

Մեծ մասամբ այդ ենթադրություններն ավելի անձնական տրամադրության ու քննաճանաչի վրա են Հիմնված, քան յուրժ ու դրական Հիմքերի: Հայ մատենագրական ավանդությունը, որ քննության էի առել Գալիթի Անհաղթի խնդրին նվիրված աշխատության մեջ, քայի Հետևադարյան ստասպելայաթան Հերյուրուսյանքերից, չունի Հունարան մատենագրության մասին դրական ու Հաստատուն քուցումներ:

Հայ մատենագրության Հիմնական այս խնդիրը լուսարանելու Համար անհրաժեշտ էր գտնել ուսումնասիրության ուրիշ ուղիներ:

Ոչպիսի կտեսներ, այցպիսի Հնարագորություններ կան, քայց պահանջում են Հունարան Թարգմանությունների բովանդակության, լեզվի և քերականության մանրագրին քննություն և վարժ հնոտություն: «Արտաքին գրոց» զանազան երկերի քննությունը լեզվական ու քերականական տեսակետից պետք է կատարվի ո՛չ միայն ամեն մեկ երկ առանձին, այլև Համեմատությամբ մեկը մյուսի հետ: Ռուսոմասիրության այդ կղանակով ստացվում են մի չարք կարևոր ու Հետաքրքիր Հետևություններ, և եթե այդ

ուղղությունը լինեն նոր և նոր աշխատողներ, կարծում եմ, որ Հունարան զպրոցի զագտնիքը վերջնականապես կզարգվի:

Հունարան Հնագույն Թարգմանությունների ժամանակը որոշելու Համար սույն աշխատության մեջ քննության են առել լեզվական ու քերականական տեսակետից ո՛չ միայն Արիստոտելի երկերի ու Պորփյուրի Ներածությունների մեկնությունները, այլև Փլյոնը, Պիտոլից զիրքը, Դիոնիսիոս Թրակացու Փերակալությունները, Նաննոսը, Իրենետը, «Գիրք թղթոց»-ի Հնագույն մասի Հունարան թղթերը և Տիմոթևոս Կուդի Հակաճառությունը:

Հարեանցի կերպով բնեկ են նաև Ռոստովիկ Թարգմանչի և Անանիա Երրակացու երկասիրություններն ապացուցանելու Համար, որ խնաստասիրական երկերի, եթե ո՛չ բոլորը, գոնե մեծագույն մասը՝ Թարգմանված են նրանցից առաջ:

§ 35. Ռուսոմասիրական Թարգմանությունների Հնարքը Ռոստովիկ Թարգմանչի կրոնա-գաղափարական գրվածքներում: — Ութերորդ դարի Հայ մատենագիրներից Ռոստովիկ Թարգմանչի կրոնա-գաղափարական գրվածքները մեծ չափով կրում են Հեղինակի Հելլենական կրթության և Արիստոտելյան խնաստասիրության ազդեցության Հետքեր: Այդ ազդեցությունն այնքան ակնհայտ ու անվիճելի է, որ ավելորդ է երկար կանգ առնել այդ խնդրի վրա: Բավական է առաջ բերել բազմաթիվ վկայություններից միայն մի քանիսը.

Ռոստովիկ, էջ 39-40¹

«Ճի բնութեան Հաւարումն ի Հասարակին քստ գորութեան եւեթ է, անուանք միայն նշանակեալ, իսկ յառանձանկանումն ոչ քստ գորութեան, այլ քստ ներգործութեան և արգեամբք երեսնայ: Վասն որոյ և առաջին և իսկա-

Ստորոգ Աբիսա, էջ 363²

«Գոյացութիւն է, որ իսկակոյն, և նախնին, և մտաւանք աւտ, որ ոչ զենթակայէ զուանջ աւտ, և ոչ եննթակայո՞ջ յուանք է »:

¹ «Ռոստովիկ Թարգմանիչ և երկասիրությունը նորին», աշխատասիրությունը Գարեգին զարգացանի Հովանիակի, Վարդաշապուտ, 1903:

² Ռոստովիկանց բնագիրը, Վենետիկ, 1833:

գոյն եւ ճանաւանդ դաս անուանցին զդպրացութիւնս զՆազդայրն, եւ յորք մերքն ընկալանս գրասկանութեանն վարժողութիւն, զի ի սմա գտին եւ ծանեան որպէս գատուն Հասարակին, նոյնպէս եւ զԲաննս:

Պարտովիկ, էջ 115-116

«Ձի ամենայն իրի սահման յերջա յայցանէ կատարի, ի մտածութենէ գոյին, եւ ի նոյն ինքն ի գոյին, եւ ի տեսութենէ եւ ի բառէն, որ սահմանէ զիրն, որպէս որ կամիրի գասհման մարդրէ բացայայտի, նայսկին յարձակի մտօքն տեսանել զմարզն, եւ գոյն մտացն տես եւ աչացն ստաջի զնէ, եւ սպա բակի զոյն սահմանէ ասելով՝ մարզ-կենդանի, մահկանացու, մտաց եւ Հանճարոյ ընդունակ»²:

Վերոհիշյալ Համեմատութիւնները շարժող է Հասկանալ այն մտքով, որ Պարտովիկն օգտվել է Համեմատութեան անվանումը երկերից: Արիստոտելյան իմաստասիրութեան այն մտքերը, որոնց Հանդիպում ենք Պարտովիկի երկերում, այնքան ընդհանուր ու սովորական են եւ այնքան Հաճախ կրկնված Արիստոտելյան իմարզմանութիւններում, որ սխալ կլինէր այս կամ այն զրկածը կամ Հատվածը Համարել նրանց աղբյուր առանց որևէ լուրջ հիմքերի:

Վերոհիշյալ Համեմատութիւններին կարելի է ընդհանուր կերպով միայն կորակացնել, որ Արիստոտելյան Հնագոյն Հայ իմարզմանութիւնները Պարտովիկի ժամանակ ութերորդ դարի

Ստորոգ, մեկն, (Ամեկախ)¹

«Յիրտի ուրեմն գտնՀաս գոջացութիւնն իսկապէս եւ նախկին եւ մտաւանդ սասց զոյ»:

Էլիսա, մեկն, Ստոր, էջ 83

«Ձիսրդ ոչ է ստաջին եւ իսկակոյն եւ մտաւանդ զդպրութիւնս»:

Սահմ, իմաստ, էջ 121

«Ծիպ զինչէն կամ անուամբ մանաչի մեզ՝ եւ կամ սահմանաւ: եւ անուամբ յորժամ տեսանելով ինչ անանք զի՞նչ է, անանք քնմարզ է: Իսկ սահմանա՝ յորժամ անանք, կենդանի բանաւոր մահկանացու՝ մտաց եւ Հանճարոյ ընդունակ»:

սկզբում գոյութեան են ունեցել եւ ծանոթ են եղել նրան:

§ 36. Անանիա Երիզակացին օգտվել է Արիստոտելյան իմաստասիրութեան Հնագոյն Հայ իմարզմանութիւններից: - Յոթներորդ դարում եւ արիստոտելյան Հնագոյն Հայ իմարզմանութիւններից օգտվել է Անանիա Երիզակացին:

Ինչպես մտաւանդույց էր արել Գալուստ Տեր-Մկրտչյանը¹, Անանիա Երիզակացին իր «Ճաղագո շրջապատեան երկնից» աշխատութեան Համար ունեցել է որպէս աղբյուր Արիստոտելի «Ճաղագո աշխարհի» երկը, որի Հետևութեամբ նա կազմել է իր գրութեան ծրագիրը եւ որից բաղել է բազմաթիվ բացատրութիւններ ու զազափարներ, տեղ-տեղ գրկին բառացի՝ Համաձայն Արիստոտելի երկի Հայերեն իմարզմանութեան: Անանիա Երիզակացու Հիշյալ զրկածը ծայրեծայր բաղդակով «Ճաղագո աշխարհի» գրութեան Հայ իմարզմանութեան Հետ, Գալուստ Տեր-Մկրտչյանը կերակացնում է, որ Արիստոտելի այս աշխատութեան Հայ իմարզմանութիւնը կատարված է Անանիա Երիզակացուց առաջ, ուրեմն՝ ոչ ավելի ուշ, քան յոթներորդ դարը:

Որ Անանիա Երիզակացին ապրել է «արտաքին գրոց» Հունարան Հնագոյն իմարզմանութիւններից Հետո՝ այդ երևում է նաև նրա Հունարան ինքնից եւ «արտաքին գրոց» նյութական իմարզմանութիւններին Հատուկ Հունարան բառերից, որ զործ է անում իր երկերում Երիզակացին, ինչպես՝ առկայացնալ (էջ 14), վերադիր (էջ 21), տրամապիծ (էջ 36, 38), պարտուակր (էջ 43), տարրերութիւն (էջ 63), շարահիտակ (էջ 65), ներքաժմութիւն (էջ 67), արտագրութիւն (էջ 67), բացբարձութիւն (էջ 67), առնկապակ (էջ 68), տրամադրութիւն (էջ 70), շարառցելով (էջ 72), բաղկացնալ (էջ 72) և այլն²:

Պարտովիկ իմարզմանչի եւ Անանիա Երիզակացու երկերի բովանդակութեան ու ինքնի վերաբերյալ վերոհիշյալ դիտողութիւնները ցույց են տալիս, որ Հունարան Հնագոյն իմարզմանութիւնների ժամանակը պետք է ընդունել յոթներորդ դարի երկրորդ կեսից առաջ եւ ո՛չ թէ ութերորդ դարում, ինչպես ենթադրել են Հայագետ բանասերներից շատերը:

¹ Անանիա Երիզակացի, Վաղարշապատ, 1896, էջ 35 (արտատպութիւն, 1896 թվի «Արարատ» ամսագրի փետրվար եւ ապրիլ Համարներից):

² Տե՛ս Անանիա Երիզակացու մասին գրքի «Ի յոյս էսծ Գ. Ս. Պետեր», 1877:

¹ Անանիկի Հրատարակութեան մեջ Ստոր, մեկնութեան սկիզբը պակաս է: Այս Հատվածը սակայն կը Էջմառնի թիվ 1810 մտադրից:

² Հմտ, նաև ներքո, Պարտովիկ, էջ 242, 3-5:

§ 37. «Գիրք թղթոց»-ի Հնագույն մասում Պետրոսի և Գրիգոր բերթողի թղթերը գրված են Հունասան լեզվով: — Եթև Հունարան զպրոցի ծագումը որոշելու լինենք՝ ինչ հայ մատենագրական երկերի լեզվական առանձնահատկություններով, այդ դեպքում՝ նրա ծագումը և Հնագույն Հունարան թարգմանությունների ժամանակը պետք է դնենք և յոթներորդ դարից առաջ: «Գիրք թղթոց»-ում Հնագույն մասում, բացի Մովսես ՔերթոզաՀոր և Հովհաննես Կախկապուսակոսի թղթերից, որոնց մասին խոսելու ենք առանձին, կա և ուրիշ երկու թուղթ՝ «Հաւատարմագունի և իմաստնագունի և աստուածամարբագունի երբար» ողբմկիս Պետրոս տերտմբ խնդր» («Գիրք թղթոց», էջ 99-107) և «Արքայտիր տեանն Արքահամու Հայոց կաթողիկոսի ի Գրիգորի Եռաստեղ քերպող» («Գիրք թղթոց», էջ 153-160), որոնք գրված են Հունարան լեզվով: Այս երկու գրություններն իրենց ոճով ու լեզվով տարբեր են նույն մասի մյուս թղթերից և պատկանում են, անտարակույս, Հունարան զպրոցի գրվածքների խմբին: Հունարան բառերը, որ գործ են ավելում այդ թղթերում, կազմված պիտի լինեն Հավանարար, «արտաքին զրոց» նյութական թարգմանությունների ժամանակ: Այսպես՝ Պետրոսի թղթում Հունարան բառեր են՝ Հարակայությունացի («Գիրք թղթոց», էջ 100), ներգործությունես (էջ 102), շարամանակեպոց (էջ 102), վերագրեցի (էջ 103), արտադրեցին (էջ 103), շաղկապես (էջ 106), և այլն, իսկ Գրիգոր բերթողի թղթում՝ ապարանություն (էջ 153), առաջկեպ (էջ 154), շարայարտություն (էջ 154), բացակայի (էջ 155), յարակցեց (156), առանկ (էջ 157), վերուսեակ (էջ 158), ներպարագամեց (էջ 158) և այլն:

Գրիգոր բերթողի թուղթը, որ ուղղված է Արքահամ կաթողիկոսին, գրված պիտի լինի 607-610/611 թվականների ժամանակամիջում: Ինչ վերաբերում է Պետրոսի թղթին՝ նրա Հեղինակի խնդիրը դեռևս պարզված չէ: Եթևնպղում են նույնիսկ, որ այդ թուղթը կարող է թարգմանված լինել Հունարանից¹: Եթևն անզամ այդ թուղթը Համարներ Հունարանից թարգմանված՝ նրա թարգմանության ժամանակը դարձյալ պետք է նեխարենք

¹ Հայր և Անկիանը այդ թուղթը վերագրել էր Պետրոս Կախկապուսին, որը չի առավելված է Ռիտտեման մոտ («Հանդես անտոլոգյա», 1904, էջ 110-111): Ասկան նորայր Բյուզանդային նույն թղթի Հեղինակ Համարում է Անտիոքի պատրիարք Պետրոս Թափղիսն («Հանդես անտոլոգյա», 1908, էջ 155-156): Հայր!

յոթներորդ դարից առաջ: Իսկ այդ մի Հանգամանք է, որ իրավունք է տալիս մեզ ի նկատի ունենալով Պետրոսի և Գրիգոր բերթողի թղթերի ոճն ու լեզուն, երբակացնել որ Հունարան զպրոցի Հնագույն թարգմանությունների ժամանակը պետք է ընդունել յոթներորդ դարից առաջ:

§ 38. Տիմոթեոս Կուզի Հակահատութիւնը թարգմանված է Հայերենի 562-564 թվականների ժամանակամիջոցում: — Հունարան Հնագույն թարգմանությունների ժամանակը որոշելու խնդրում ամենամեծ խոչընդոտն այն է եղել, որ ո՛չ մի ստույգ վկայություն չէր Հաջողվում գտնել «արտաքին զրոց» երկերի և ո՛չ մեկի թարգմանության ժամանակի մասին: Մինչդեռ եթև ունենայինք այդ երկերից որևէ մեկի թարգմանության մասին տեղեկություն, այդ տեղեկությունը կզման կարող էր լինել որոշելու, զեթ մտաւոր կերպով, թև մյուս երկերի թարգմանության ժամանակը և թև՝ Հունարան զպրոցի ծագման դարաշրջանը:

Այգպիսի մի կովման, քարեթախարար, այժմ գտնված է: Տիմոթեոս Կուզի Հակահատութիւնը, որը Հրատարակվեց էջմիածնում 1908 թվին² և որի թարգմանության ժամանակի մասին կան որոշ վկայություններ, Հնարավորություն է տալիս, ինչպես կտեսնենք, պարզելու Հունարան զպրոցի վերաբերյալ մի շարք կարևոր Հարցեր, որոնք ՀեռողՆտն բաց պիտի անեն վեցերորդ դարի Հայ մատենագրության բացառադրայան զաղտնիքը:

Տիմոթեոս Կուզի Հակահատութիւնը, թևն կրոնա-գաղմանարանական գրվածք է, բայց նրա Հայերեն թարգմանությունը կատարված է Հունարանից բա՛ն առ բա՛ն, ճիշտ այնպիսի եղանակով, որ Հատուկ է ընդհանրապես «արտաքին զրոց» Հնագույն թարգմանություններին²:

Վրաց բաժանման շրջանում, վեցերորդ դարի վերջին և յոթնե-

և. Անկիանը «Կուզի և Կաթողիկոս վրաց» Հետազոտ իր աշխատության մեջ, Հրամարվելով իր նախկին կարծիքից, միանում է Ն. Բյուզանդային և նախորդին («Հանդես անտոլոգյա», 1909, էջ 332):

¹ Տիմոթեոս Կախկապուսակոսի Աղեղանաղբիս, Հակահատութիւն առ սահմանեպես ի ժողովսն Քաղկեդոնիս, ի յույս բնւ, աշխատութեամբ Կարտաղոն Մ. վարդապետի և երվակ վարդապետի, էջմիածին, 1908:

² Տե՛ս Հրատարակիչի առաջաբանը, էջ 23 և Հայր և Անկիանի «Տիմոթեոս Կուզ Հայ մատենագրության մեջ» աշխատությունը («Հանդես անտոլոգյա», 1908, էջ 296-298):

բորքի սկզբին, Հակնատոսիան Հայերն թարգմանութիւնը, ինչպես ջրջ ևն տվել Հրատարակիչները, արդեն իսկ ծանոթ է եղել ու գործածական¹:

Հրատարակիչները, Հիմնվելով Փոս պատրիարքի Հայոց Զարարյա կաթողիկոսին գրած թղթի պարզ որոշ մի վկայութիան վրա² Հակնատոսիան թարգմանված են Համարում Հայերնի ներսես Բ Կաթողիկոսի ժամանակ: Հ [այր] Ն. Ակիկյանը Փոսի այդ վկայութիան արդյուր ենթադրում է De rebus Armeniae գրվածքի հետևյալ Հատվածը³. «Ներսես Արտարակեցու օրով» ի Գվին ժողով մը գումարկեցավ, երբ նաև Քաղկեդոնի ժողովն իբրև Նևստորական, նզովեցին ըստ բանից Արդիշոյն, վասն զի նույն ժամանակ թարգմանեցին (ἐρμηνεύσαν) Արդիշոյն բերված գրութիւններն, այն գրութիւններն, որոնք Հիւնցինք վերբ. և որոնք Տինթիոս և Փիլղոսներոս (παρὰ Φιλίππου) ասորիներն գրված էին Քաղկեդոնի ժողովոյն և Քրիստոսի երկու բնութիանց դեմ»:

Որքան դրական և որոշ է այս վկայությունը, այնուամենայնիվ՝ փորձ եղավ Հակնատոսիան Հայերն թարգմանութիան ժամանակը դնելու, Հակնոսի այս վկայութիան, Հինգերորդ դարի վերջերում: Գալուստ Տեր-Մկրտչյան իր Հողվածների մեջ, սակաված «Եռդակաթ»-ում և «Երարատ» ամսագրում⁴, մասնաւոր է և անում Հակնատոսիան մեջ Հիւստակված Գիտակորոսի մահվան ամսաթիվը և, Հիմնվելով տոմարագիտական Հայիվների վրա, Հակնատոսիան թարգմանված է Համարում Հայերնի՝ 480-484 թվականների ժամանակամիջոցում: Գիտակորոսի մահվան վերաբերյալ կարևոր Հատվածն առաջ ենք բերում ամբողջութեամբ, դեմ առ դեմ դնելով նաև «Նիկի Հաւատոյ» ժողովածուի Համապատասխան վկայութիւնը, որ ուղղում է այդ

Հատվածի բնագրի աղծառումները.

Տինթիոս, էջ 336¹

«Երանելոյն Հարն մերդ Գիտակորոսի նախկարասապետն Աղերսանաղոս ևն զրեցելոյ թղթոյն ի Գանգրա յԱսորիս, ուր զԵրանկերտան կատարեաց ի Քրիստոս, թուղթ Ե. երդ. սեպտեմբերի Բ. Հոսի վեցերորդն, սա միայնկեացսն ի Հեմատոս զրեցեալ թղթոյն:

Նիկի Հաւատոյ, էջ 337

«Երանելոյն Գիտակորոսի նախկարասապետի Աղերսանաղոս, ի զրեցելոյ սա Սեկեդոնան թղթոյն Գանգրայ յարարեցն, ուր զԵրանկերտան կատարեալ ի Քրիստոս, թուղթ Ե. սեպտեմբերի Բ. Հոսի 22:

Այս Համեմատությունից պարզ երևում է, ինչպես այդ ուղիղ նկատել է Գալուստ Տեր-Մկրտչյանը, որ սույն Հատվածներում նշանակված է Գիտակորոսի մահվան ամսաթիվն աղերսանդրյան թուղթ (= thoth) ամսով, այլ ոչ թե տարեթիվը, ինչպես ենթադրել էր Հայրը՝ Ն. Ակիկյանը, ուղղելով Տինթիոսի բնագրում «թուղթ և իմեկերորդ» բառերը «ինդիկատինի և իմեկերորդ»²:

Մի ինչ որ անհայտ աղբյուրից օգտվելով Օ. Bardenhever-ը Գիտակորոսի մահվան ամսաթիվը դնում է 454 թվի սեպտեմբերի 4-ին³, որ Համապատասխան է աղերսանդրյան թուղթ 7-ին: Տինթիոսի Հակնատոսիանը և «Նիկի Հաւատոյ» ժողովածուն, ինչպես տեսանք, Գիտակորոսի մահվան օրը նշանակում են ոչ թե սեպտեմբեր 4-ին, այլ «սեպտեմբեր Բ»: Բայց սեպտեմբեր Բ-ի դիմաց նրանք ունեն թե թուղթ Է. և թե՛ թուղթ Ե. ամսաթիվը = Գալուստ Տեր-Մկրտչյանը ենթադրում է, որ սկզբնական բնագրի թուղթ է-ն կարդացվելով թուղթ Ե. կարող էր սեպտեմբեր Բ-ն զրվել այս վերջինիս դիմաց, իբրև նրան Համապատասխանող ամսաթիվ:

Եթե այս ենթադրությունը Հավանական ընդունենք, պետք է

¹ Տե՛ս նաև Հայրը Ն. Ակիկյանի Հիշող սոխատոսիւնը:

² Православный Палестинский сборник, том XI, вып. I, СПб., 1892, էջ 180-181:

³ Թարգմանությունը Հայրը Ն. Ակիկյանին է. տե՛ս «Հանդես ամառայան», 1908, էջ 295, նաև De rebus Armeniae, Migne, P. gr. 132, 1244, 1245:

⁴ Գ. Տեր-Մկրտչյան, Տինթիոս Կուղի Հակնատոսիան Հայ թարգմանութիան ժամանակը և Ս. Գրքի երրորդ կամ երրորդ Հայ թարգմանությունը, «Երարատ», 1908, էջ 564-589, նաև նույն Հեղինակի «Հայ մատենագրության Հաղույն թվականները», տե՛ս «Եռդակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 154-163:

¹ Հեմո, նաև Տինթիոսի Հակնատոսիան, էջ 277. «Երանելոյ Հար մերդ Գիտակորոսի նախկարասապետի Աղերսանաղոս ևն իտուղվածուի» ի զրեցելոյ սա Սեկեդոնիան թղթոյ ի Գանգրայ յարարեաց, ուր զԵրանկերտան կատարեալ ի Քրիստոս: Թուղթ Ե. իմեկերորդ. սեպտեմբերի երկրորդ. Հոսի վեցերորդ»: Տե՛ս նույնը՝ «Նիկի Հաւատոյ», էջ 112:

² «Հանդես ամառայան», էջ 296:

³ Patrologie, p. 350.

ընտրենք երկու Հնարավորություններից մեկը. Տիմոթեոսի Հայերեն թարգմանության սկզբնական ընագրի ուղիղ ընթերցվածք պետք է լինի՝ կամ թոժթ է., սեպտեմբեր Գ. և կամ թոժթ Ե., սեպտեմբեր Բ.:

Բայց ամենակարևոր Հանդամանքն այն է, որ այդ ամսաթվի զինայ Տիմոթեոսի Հայերեն թարգմանության ընագրում սրված է նաև Հայկական «Հոտի Զ» ամսաթիվը:

Այդ՝ Հայկական տոմարը լինելով շարժական, թոժթ 5 = սեպտեմբեր 2 = Հոտի 6 զուգավորությունը Հնարավոր է, ինչպես շատ ուղիղ նկատել է Գալուստ Տեր-Մկրտչյանը, 480-484 քառամսակում, և «Հոտի» Հավելումը կարող էր զրվել միայն այդ ժամանակ: Ռեբան և Տիմոթեոսի թարգմանությունը կատարված պիտի լինի նույն այս թվականներին:

Որքան և ուղիղ է տոմարական այս Հաշիվը, սակայն թարգմանության այդ թվականը թվում է, կասկածելի ու անհավանական զանազան տեսակետներով¹.

ա. Այդ եզրակացությունը Հակասում է Փոտի և Անանունի գրական ու որոշ վկայություններին.

բ. Հիմնովին Հեղաշրջում է Հայ եկեղեցու կրոնա-դավանաբանական պատմության վերաբերյալ ժամանակագրությունը, որ արդյունք է բանասիրական նորագույն ուսումնասիրությունների.

գ. այդ թարգմանության և ոչ մի Հետք չի հաջողվում գտնել կրոնա-դավանաբանական Հայ զբվածքներում յոթներորդ դարի երկրորդ կեսից առաջ:

Ինձ թվում է, որ բոլոր այս Հակասություններն ու առարկությունները Հեշտություններ վերանում են Գիտնական մահվան Հայ ամսաթվի մի շատ պարզ ու ընդունելի սրբագրությանը: Տիմոթեոսի Հայերեն թարգմանության ընագրում, որ աղտառ չէ սղջատումներից, կարծում եմ, որ «Հոտի Զ» ամսաթիվն աղճատված է սկզբնական «Հոտի ԹՋ» ընթերցվածից:

Այդ զեպում՝ թոժթ է = սեպտեմբեր Գ = Հոտի ԹՋ զուգավորության Հանդեպ կունենանք 552-556 թվականները, իսկ թոժթ Ե = սեպտեմբեր Բ = Հոտի ԹՋ զուգավորության Հանդեպ. 480-484 քառամյակի փոխարեն, կունենանք 560-564 թվականները:

Ռեբան՝ առաջարկած սրբագրությունը Տիմոթեոսի Հակասա-

նություն Հայերեն թարգմանության ժամանակը որոշվում է 552-564 թվականների ժամանակամիջոցում՝ միանգամայն Համապատասխան Փոտ պատրիարքի և Անանունի վերահիշյալ վկայություններին:

Տիմոթեոսի Հակասությունն առայժմ միակ երկն է Հունարան Հնագույն թարգմանություններից, որի թարգմանության ժամանակը ճշտվում է: Մտացվում է ժամանակագրական Հաստատուն մի թիվ, որի վրա Հեմիլով կարելի է լուստարանել Հունարան զարոցի վերաբերյալ մի շարք ուրիշ խնդիրներ, և որոշել ժողովրդապես մի խումբ Հնագույն երկերի թարգմանության ժամանակը:

§ 39. «Արտաքին գրոց» Հնագույն երկերը թարգմանված են Հայերենի զանազան թարգմանների աշխատությանը և տարբեր ժամանակաշրջաններում: — Հայոց մատենագրական ավանդությունը «արտաքին գրոց» քերականական, ճարտասանական և իմաստասիրական Հնագույն երկերը վերագրելով Գալիթ Ան-Հաթի Հայ փիլիսոփային և նրա ընկերակիցներին, առիթ է տվել մի խոշոր թյուրիմացության: Այդ առասպելական ավանդության վրա Հեմիլովները կարծել են, որ «արտաքին գրոց» երկերը ժամանակակից և ընկերակից Հեղինակների աշխատություն են, և Հորինված են զրեթև միաժամանակ՝ Հիդեբորդ զարի վերջերում:

Այդ՝ ավանդական այդ ենթադրությունը միանգամայն սխալ է: «Արտաքին գրոց» Հնագույն երկերը, թարգմանված են Հայերենի ոչ միայն զանազան թարգմանների աշխատությամբ, այլև տարբեր ժամանակաշրջաններում: Այդ թարգմանությունների լեզվի, ոճի և քերականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք լեզվական իրենց առանձնահատկություններով բաժանված են զանազան խմբերի: Հունարան լեզուն, որ գտնել է Հին և նոր Հայերենի կենդանի ու անանձատ մի մասը, ունեցել է իր կերպարանավորման և զարգացման Հատուկ ընթացքը, որի ուսումնասիրությունը Հեթմական ու կարևոր մի խնդիր է ոչ միայն Հայ լեզվի ու քերականության պատմության, այլ նաև Հունարան թարգմանությունների ժամանակագրության որոշման Համար: Թարգմանությունների լեզվի ու քերականության մանրագնի ջննդությամբ՝ Հնարավոր կլինի բաժանել նրանց խմբերի, ու լուստարանել մատենագրական մի շարք խնդիրներ.

¹ Տե՛ս նաև Հայր] Ե. Ավիզյան, «Հանդես ամսօրյա», 1908, էջ 296:

որոնք մինչև այժմ մնացել են մուժ ու անքնին:

Յուզ տալու Հանար, թե որքան իրարից տարբեր են Հու-
նարան թարգմանություններն իրենց բառամթերքով ու բն-
բավականական առանձնահատկություններով, բերնեք մի քանի
պարզ ու ակնբայտ օրինակներ: Էլիասի ու Յամբրիբոսի Ստոր-
գլուխնայն մեկնություններում կան Համապատասխան Հատ-
վածներ Հետևյալ թարգմանություններում:

Էլիաս, Մեկն. Ստոր., էջ 60

«Յետ բաժանանա ապիցեղոց
գայ ի բաժանումն գոյիցն: Եւ եր-
կուս առեռ Հակադրութիւն, զգին՝
յապիցեղոցն եւ զգին՝ ի գոյիցն,
յապացեղոցն՝ զընդՀանուրն եւ
զմասնականն, իսկ ի գոյիցն՝ զգո-
յացութիւնն եւ զպատահումն: Եւ
չորս առե՛ն շարձանութիւնն՝
զընդՀանուր գոյացութիւնն եւ
զընդՀանուր պատահումն, զմա-
նական գոյացութիւնն եւ զմասնա-
կան պատահումն»:

Էլիաս, Մեկն. Ստոր., էջ 64, 65

«Բայց եւ մտասանո նշանա-
կութիւնը յունենին. կամ ի ժա-
մանակում ...կամ ի տեղում? ...եւ
կամ յամանում... եւ կամ բոլոր ի
մասունս ... կամ որպէս մասուտք ի
բոլորում ... եւ կամ որպէս սեռ ի
տեսանում ... եւ կամ որպէս տե-
սակ ի սեռում ... եւ կամ որպէս
յաբար ի նիթում ... եւ կամ որպէս
յարարչականում ... կամ իշխա-
նակում ... կամ որպէս յարարու-
թանում ... եւ կամ որպէս նեն-
թակում»:

Յամբրիբոս, Մեկն. Ստոր.¹

«Իսկ այժմ յերկուս միայն բա-
ժանել գամնայն Հակա՝ ի գոյացու-
թիւնն եւ ի պատահումն՝ կատարե-
լացոյցն եւ բճրոն իմաստութեանը
առնելով զայս տրամատոյթիւն:
Այլ վասն զի Հարկ է զիւրա-
նաչեիք որ սոցա կամ Հասարա-
կական գոյ կամ մասնաւոր, յորք
ստատեօր լինի շարձանութիւն
Հասարակական գոյացութիւն, Հա-
սարակական պատահումն, մա-
սնաւոր գոյացութիւն, մասնաւոր
պատահումն»:

Յամբրիբոս, Մեկն. Ստոր.²

«Ելլ կասն զի նիմուր բազ-
մայեղանակի ասի՝ որպէս սեռ բն
տեսակի կամ տեսակ բն սեռի կամ
գործնայ իրր մասն բն բոլորի կամ
բոլոր բն մասունս... կամ բն տեղ-
ում? կամ յամանակի... եւ եւ որ-
պէս եւ կատարանն... իրր նամա-
նի եւ եւ իրր թէ տեսակ ի նիթ ...
եւ որպէս իշխանականք բն իշխա-
նի տպակս եւ իշխանն բն իշխա-
նականն»:

Էլիասի եւ Յամբրիբոսի Համապատասխան այս Հատվածնե-
րում գործ են անված իմաստասիրական տարբեր, իսկ բերական-
նական զարգացումները, թեև երկու թարգմանություններն էլ Հու-
նարան են, սակայն Հիմնովին տարբեր են իրարից: Հունարեն
καθόλου բառը էլիասի Հատվածում թարգմանված է «բոլորա-
նոր», իսկ Յամբրիբոսի Հատվածում՝ «Հասարակական», Հուն.
μερικόξ՝ էլ. «մասնական», եւ Յամբր. «մասնաւոր», ԵՆ ΤΕΛΙΚΩΣ՝ էլ.
«ստարտականում», Յամբր. «բն կատարանն»: Աշարզավ է
նաև, որ «տրամատուր, տրամատական, տրամատութիւն» Հու-
նարան ստորական բառերը, որ շատ Հաճախ Հանդիպում են
Յամբրիբոսի մեկնություններում, էլիասի մեկնության մեջ չեն
գործածված եւ ո՛չ մի անգամ: Հունարեն ԵՆ ΤΙΝ, էլիասի Հատ-
վածում թարգմանված է «չունեն», իսկ Յամբրիբոսի Հատվա-
ծում «նիմուր», նմանապես եւ Հունարեն ԵՆ ΤΟΨΩ, ԵՆ ΧΡΟΝΩ, ԵՆ
ΔΥΣΕΨ եւ «չունենի» Համբր նշանակությունները էլիասի Հատ-
վածում թարգմանված են «ի տեղում, ի ժամանակում, յամանում
եւ այլն», իսկ Յամբրիբոսի Հատվածում՝ «մասնականի բն տեղում,
նամանի եւ այլն»: Այս տարբերությունները, որ ո՛չ մի դեպքում
չեն կարող Համարվել պատահական, պայացուցանում են, որ այդ
թարգմանությունները ո՛չ միայն միևնույն թարգմանչի գործ չեն,
այլև վերագրվելու են, Հավանաբար, թարգմանչական Հունարան
տարբեր դպրոցներին:

§ 40. Թրակացու բերականության, Փիլոնի եւ Պրոտյոց գրքի
թարգմանությունները կազմում են Հունարան թարգմանություննե-
րի Հնագույն շերտը: «Արտաքին գրոց» թարգմանություննե-
րի Հունարան լեզվի ուսումնասիրության Հաջողվել է ինձ
ստանալ լեզվական մի շարք սպացույցներ, որ Գլոսիմիտոս Թրա-
կացու բերականությունը, Փիլոնի եւ Պրոտյոց գրքեր կազմում են
Հունարան թարգմանությունների Հնագույն շերտը:

Արդևն Հայկազյան լեզվի նոր բառգրքի աշխատակիցները Փի-
լոնի թարգմանությունները շատ ճիշտ բնորոշել են, իրր «Հէլ-
լեւարան բոլորովին բան կազմութեան, այլ սրանչեի Հայկարան
բառ ճոխութեանն բառից» (Հատոր Ա, էջ 20): Հայտնի է նաև, որ
այդ թարգմանություններից օգտվել են ո՛չ միայն Մամբրեն ու
Մովսէս Սորենացին, այլև Եղիշեն: Ըստ այդմ, Փիլոնի թարգ-
մանության ժամանակը պետք է ենթադրել ո՛չ ուշ, քան VI դարը:

¹ Տե՛ս Էջմիածնի մասնակարգակի մնացր. Թիվ 1889, էջ 181-275 եւ Թիվ
1943, ևս-139ր:

² Նույն տեղում, մնացր. Թիվ 1886 եւ 1943:

¹ Տե՛ս Հայր Մկրտիչ Ավերբյանցի վկայությունները Փիլոն երկրորդի 1822 եւ
1826 Թվերի Հրատարակության ծանոթություններում:

Պետոյից գրքի թարգմանութեան նկատմամբ առայժմ այս-
րանէն է միայն Հայտնի, որ այդ թարգմանութեանը, Հազմարար,
ձանոթն են եղել Սերետս պատմագիրը և Դավիթ Հարբաջին¹: Թե՛
Փիլոսի և թե՛ Պետոյից գրքի թարգմանութիւններէից օգտուել է,
անտարակույս, նաև Մովսէս Մորենացին, սակայն այս Հանգը-
մանը չի պարզում սրանց թարգմանութեան ժամանակը, որով-
հետև անորոշ ու սխիւթի է նաև Մորենացու ժամանակը:

Մատենադարանի որևէ աղեկութիւն չունենք և Գիտնիստե
Թրակացու բերականութեան թարգմանութեան մասին:

Վերոհիշյալ բոլոր թարգմանութիւններէի ժամանակը, ինչպես
տեսնում ենք դեռևս Հաստատուն կերպով որոշված չէ: Մատե-
նադարանի դրական ցուցումներէի բացակայութեան պատճառով,
բանասիրութիւնը, ընականաբար, զուրկ էր Հարաւորութիւններէ
յուզել այս մտիթ խնդրէ: Այս Հանգմանը ստիպել ինձ զինել
թուզական ուսումնասիրութեան: Ուսումնասիրութեան այդ եղա-
նակով ստացած իմ հետեւութիւնները Համարձակութիւն են
տալիս ինձ պնդելու, որ վերոհիշյալ թարգմանութիւնները, իրենց
բառամթերքով ու լեզվական առանձնահատկութիւններով,
կազմում են Հունարան թարգմանութիւններէի Հատուկ մի խումբ,
և նրանց ժամանակը պետք է զննել Տիոնիսոս Կուղի Հակաճա-
ռութեան թարգմանութիւնից առաջ, ուրեմն՝ ո՛չ ուշ, քան VI
դարի առաջին կեսը: Այս եղականութեան Հանգելու Հիմք են ծա-
ռայել ինձ լեզվական հետեւյալ Համեմատութիւններն ու նկա-
տաւորումները, որ թիվում են ինձ ուշադրով ու կարևոր.

1. Թրակացու բերականութեան և, մասնաւոր, Փիլոսի ու Պե-
տոյից գրքի թարգմանութիւններն, իրենց ինքնուրույն բառա-
մթերքով, այնքան են իրար նման ու Հարակից, և տարբեր Հու-
նարան մյուս թարգմանութիւններէից, որ սրանք, որպէս Հատուկ
ու անանջատ մի խումբ, պետք է Համարվեն միեւնոյն դա-
րաշրջանի գործ: Այդ բառերը Համախ գործ են ամբողջ բացատա-
պես այս երկերում:

Այսպիսի առանձնահատուկ բառեր են². 1. աղատանամ Թր.
11, աղատ Գիլ. Լիւս. 138 և Պիտ., 2. աղք Թր. 10, Փիլ. լին. և ք.,

¹ St. A. Baumgartner, Ober das Buch «Die Chrie», Leipzig, 1886 և Գ. Լով-
սեփյան, Դավիթ Հարբաջին և Պետոյից գրքը («Արարատ», անասիր. 1908,
փետրվար, էջ 203-216):

² Համեմատած բառերը տե՛ս հետևյալ Հրատարակութիւններում: Ն. Ազեց,
Արևատ Գիտնական բերականի, Պետրոպոլ, 1916: «Մովսէսի երկնաբայ մատե-

Պիտ. 504, 3. աւարական Թր. 33, աւաղ, աւաղուն Գիլ. լին.,
Պիտ., 4. Բաղայց Թր. 36, Փիլ. լին. 52, Պիտ., 5. բաղդաստիլին
Թր. 12, 30, Փիլ. նախ. և ժ բան, 6. Հաւանայ, Հաւացեայ Թր. 10,
11, 12, շարահա Փիլ. լին. 31, սկզբնահա կամ Հաւանիզբն Փիլ.
լին. 100, Պիտ. Հաւակ 394, Հաւեմ Պիտ. 398, 7. վրգով Թր. 21,
վրգովեմ, վրգովում Փիլ. իմաս. և բազն., վրգովակեր Պիտ. 425,
8. փատտական, փատտարանական Թր. 17, 35, 36, Փիլ. լին. 262,
փատտարանեմ Փիլ. նախ., փատտակեր Փիլ. լին. փատտարա-
նութիւն Պիտ. 407, 9. սարքնի Թր. 4, սարք Փիլ. Լիւս., 10. բաղ-
մաւորական Թր. 9, 45, 435, 11. կուլուանեմ Թր. 5, Պիտ., 12.
բղջխտ Հ Թր. 18, բղջխտնութիւն Պիտ. 354, 13. մեծասաղ Թր.
19, Պիտ., 14. սզն Թր. 4, Պիտ. 397, 15. սերկ Թր. 31, սերկեան
Պիտ., 16. նայ Թր. 8, 11, Պիտ. 564, 569, 17. կենցաղօգուտ Պիտ.
344, Փիլ. նախ. 107, Փիլ. ժ բան., 18. ջին Փիլ. նախ. 19, ջնն Պիտ.
343, 19. զերեւանամ Պիտ. 344, Փիլ. տեսակ., Փիլ. ժ բան, 20. նա-
զարանութիւն Պիտ. 431, Փիլ. Սամփա. 554, 21. երկասիրութիւն
Պիտ. 348, Փիլ. լին. և այլն, 22. անբառ, անբատանամ և այլն
Պիտ. 358, Փիլ. լին., Լիւս., ք., ժր. տեսակ., 23. արձանակեմ Պիտ.
359, Փիլ. իմաստ. և ք. և, 24. վրիժակն Պիտ. 384, Փիլ. Լիւս. 159,
Փիլ. ք. ժր. վրիժակեմ Պիտ. 409, Փիլ. լին. 400, վրիժակաղն Փիլ.
այլար., 25. կնատ, կնատաղոյն Պիտ. 385, 447, Փիլ. Սամփա. 26,
ճակճան Պիտ. 389, ճակճանութիւն Փիլ. լին. 432, 27.
բեղնաւոր և այլն Պիտ. 487, Փիլ. նախ. 45, լին., այլար., ժ բան, 28.
սզու Պիտ. 397, Փիլ. Սամփա. 549 և լին., 29. փաշուլեր Պիտ. 397,
Փիլ. լին. 432, 30. առնեանընդել Պիտ. 400, Փիլ. նախ., 58, 31.
ձմրմ Պիտ. 410, Փիլ. իմաստ., 32. բառացի Պիտ. 419, Փիլ.
տեսակ., բառացութիւն Պիտ. 492, 33. դժոխսրբերաղոյն Պիտ.
422, Փիլ. տեսակ., 34. զնզնկացանեմ Պիտ. 430, զնզնեմ Փիլ. լին.,
35. Հարատակող Պիտ. 430, Փիլ. այլար. և լին., 36. տունուտ 432,
Փիլ. ել. և ժ բան 37. գործակ Պիտ. 436, Փիլ. ել., այլար., ժ բան,
38. անբամացեայ Պիտ. 437, Փիլ. լին., 39. գազ Պիտ. 446, Փիլ.

նագրութիւնք», Վնենտիկ. 1843 (Յաղագս պետոյից. էջ 341-581) և Փիլոսի եր-
բայեցու Տալիմ. Աղկերտեանի 1822 և 1826 թիվեր Հրատարակութիւններ: 1892
թիվն Վնենտիկում լույս տեսած Փիլոսի նստերի Հրատարակութիւնը չեմ կար-
գելից ձեռք բերել Անդրկովկասում, ուստի այդ նստերի բառամթերքի
ձանոթացիւն եմ օգտուելով Հակոբյան բառագրից:

Սամփա. 549, 40, պողոզ Պիտ. 448, Փիլ. լին. 6, 41, սանձակոճմ Պիտ. 453, Փիլ. այլար. 42, բոլապահ Պիտ. 453, Փիլ. Լիս. 154, լին. 297, 43, ձեռնըզկ Պիտ. 454, Փիլ. Լիս. 150, լին. և ժ բան, 44, սուլումն Պիտ. 458, Փիլ. Լիս. 151 և իմաստ., 45, արկած Պիտ. 459, Փիլ. Լիս., նախ., լին. 84, 46, սղոթա Պիտ. 460, Փիլ. տեսակ., 47, բաժակն Պիտ. 466, Փիլ. լին. 12, Յոֆն. 48, ուղէշ Պիտ. 466, բաճուղէշ Փիլ. լին. 6, 49, անասձ Պիտ. 472, Փիլ. նախ. 46, 50, անբոլթ Պիտ. 484, Փիլ. իմաստ., 51, կենդակ Պիտ. 489, Փիլ. Լյ. և ԲՇ., 52, արուեստակն Պիտ. 489, Փիլ. նախ. 4, Սամփա. 520, ժ բան, 53, անկեղակարծ, անկեղակարծիկ Պիտ. 506, Փիլ. Լյ. կեղակարծիկ Փիլ. նախ. 64 և ժ բան, 54, ղեռաղև Պիտ. 495, Փիլ. տեսակ., 55, կենդանասերութիւն Պիտ. 502, Փիլ. լին. 362, 56, բարտնութիւն Պիտ. 510, Փիլ. Լյ. 525, 57, նախակրթակ Պիտ. 516, Փիլ. լին. 41, 58, տեսլակ Պիտ. 568, Փիլ. լին., տեսլարան Փիլ. Լիս 135, տեսլակն Փիլ. ժ բան, և այլն և այլն:

Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանություններում այս յուրատեսակ բառապաշարը, որ Հայկազյան բառգրքի աշխատակիցներն անվանել են *արանչելի ճոխութիւն* Հայկարան բառոցից, անշտի շատ է¹: Վերոհիշյալ օրինակները կազմում են այդ Հարուստ բառապաշարի միայն մի փոքր մասը: Այդ երկերի լեզվի ու ոճի միությունն այնքան է ակնհայտ, որ սրանք պետք է Համարվեն մենուցից դարաշրջանի և մենուցից թարգմանչական զգայրցի աշխատություն: Իսկ Թրակացու բերականությունը, որ թվում է ինձ նույնպես նույն շրջանի թարգմանություն, թեև որոշ ազդով տարբերվում է նրանցից, սակայն այդ տարբերության գլխավոր պատճառն այն է, որ Թրակացու երկը բերականական տեսություն է և նրա թարգմանությունը, Պիտոյից գրքի տեսությունների նման, խիստ նյութական է ու բառացի, մինչդեռ Փիլոնը և Պիտոյից գրքի Հնագույն նախակրթությունները թարգմանված են ավելի ազատ ու ավելի Համապատասխան Հին Հայերենի բերականության ու լեզվի կանոններին:

¹ Այլագրութեան արժանի են ետև Հետևյալ նմանությունները. Պիտ. 448՝ «զի գոր և ալիբատ մուրիմանը դրաժուղէ և զպղոսղ զճովարան բոցակէզ Հրոհ՛ն տուրբը անդատան»: Փիլ. լին. 6՝ «զի երկու են ծառոց առաքիտութիւնը՝ բաժուղէ գոլ և պաղոզ», Պիտ. 446՝ «զի՞ գո՞ղոսխետ աղու և զպրակնի վարեր»: Փիլ. Սամփա՝ «ելոյ՞ զնա պատրի՞ աղու և զպրակնի»: 180

բ. Ուշաբն Հայտնի է, Հունարան Հայերենի Հիմնական առանձնահատկությունն էր Հունարան Հասուկ բառակազմությունը, գլխավորապես, նախդիրների միջոցով, որ անհարապատ էր ուկեղարյան կոչված Հայերենի Համար: Այդ խորթ բառակազմությունը, թվում է ինձ, որ վերոհիշյալ երկերում եղել է իր կերպավորման ու զարգացման առաջին շրջանում: Օտարոտի բարդված բառերում Հունական *անտ-*, *ձա-* և *մետա-* նախդիրները, որ Հունարան Հաջորդ շրջանների երկերում թարգմանված են Համարան Հակ-, տար- և փոխ-, այս թարգմանություններում նույն այս ձևով գրեթե չեն Հանդիպում: Այս նախդիրներով բարդված բառերից զոր են ավելի միայն՝ Հակասած Փիլ. լին. 106, Հակամիտն *անտրոթոս* Պիտ. 451, Հակամէտ *անտրոթոս* Փիլ. այլար., փոխադրեն Պիտ. 353, 420, փոխադրութիւն Փիլ. ժ բան և փոխահատոց Պիտ. 468:

«Հակ» նախդիրի փոխարեն Փիլոնը և Պիտոյից գրքը զոր են ավել «Հակառակ», որից «Հակ» նախդիրը, բոտ երևույթին, ծագել է Հետագայում կրճատման միջոցով: Այսպես՝ Հակառակի *անտրոթոս* (= Հակակիր) ունի Փիլ. Լիս., Հակառակածարտ *անտրոթոս* (= Հակածարտ) Փիլ. լին. 115, Փիլ. Սամփա, 565 և Պիտ. Հակառակայ *անտրոթոս* (= Հակալեմոս) (= Հակակայ) Փիլ. Լիս., Հակառակամտ *անտրոթոս* (= Հակամէտ) Փիլ. Հոֆն., Հակառակադրութիւն *անտրոթոս* (= Հակակիր) Փիլ. լին. 210 և նախ. բ, Հակառակադիր *անտրոթոս* (= Հակակիր) Փիլ. լին. 363, Հակառակասեր Փիլ. լին. 197, Պիտ. և այլն: «Տար» նախդիրը զոր է ավելի կամ Հունարեն *տարա-* նախդիր փոխարեն, ինչպես՝ տարբարտ *տարաստատիոս* Թր. 35 և 36, տարացոց Փիլ. լին. 81, 161, 304, Սամփա, 563, Պիտ. 383, կամ ուկեղարյան գրարարի Հետևողությունը, ինչպես տարակիր, տարագրեն Փիլ. նախ. 16, Պիտ. 352, տարակարծ Փիլ. Լյ. 448, Հոֆն. 593, Պիտ., տարածություն Փիլ. նախ. 75, տարազարդ Փիլ. Լիս. 171 Պիտ. 396 և այլն:

Պիտո ուշագրավ է, որ այս երկերում Հունարեն *ձա-* նախդրությունը և ո՛չ մի անգամ չի թարգմանվել «տար» նախդրով, ինչպես այդ սովորական էր Հետագա շրջանների Հունարան թարգմանություններում: Թրակացու բերականության թարգմանը Հունարեն *ձաճեւտիոս* բառը թարգմանել է անձատական (ԼՂ 35), *ձաճեւտ* արամականի Թր. 37, *ձաճեւտ* անբերով Թր. 28, *ձաճտիա* բացատ Թր. 3, բացատութիւն Փիլ. Լյ.

διαπολή ιεροζουβίην **Թ. 2, ԾΙՏՈՒՄ** խորհեմ **Թ. 36**, մինչև լևտապ թարգմանություններում նույն բառերը թարգմանված են՝ **ձաշեւտիւոճ տարալուծական և տարալուծական Դալ. Պորփ. 343 և Վերլուծ. 581, ԴԱՃԷՄԱ** տարալուծական էլ. **Ստ. 138, ԴԱՏՈՒՄ** տարալուծական ԴՄՀՃ. 196, էլ. **Ստ. 74, ԾՈՒՏՈՒՄ, ԾԻՏՈՒՅ** տարալուծակա Տրոնթ. Հակած. 114, Յամրդ. **Ստ. 377, Պերկար. 541, էլ. Ստ. 137, կամ նաև տրամալուծական Դալ. Պորփ. 272, Յամրդ. Ստ. 386 և էլ. Ստ. 156, ԴԱՔՐՈՒՄ** տարաբուն էլ. **Ստ. 125, Դալ. Պորփ. 263, Յամրդ. Պեր. 513, Վերլ. 574, կամ նաև տրամբուն էլ. Ստ. 68; Ամենագրաբար սպառնուցն է այս երկրի Հոսիան շուարն **ԴԱՔՐՈՒ, ԴԱՔՐՈՒ, ԴԱՔՐՈՒ** բառերը թարգմանությունը: **Թարալուծակա թարգմանը ԴԱՔՐՈՒ և առանձնանամ (ՎՋ 3), ԴԱՔՐՈՒ, Կարծալանություն Թ. 16 և զանազանակ Թ. 23, ԴԱՔՐՈՒ** զանազան **Թ. 19**, մինչև Տրոնթևտ Կուրից սկսած այդ բառերը սովորաբար թարգմանվել են «տարրերն, տարրերություն և տարրեր»: Փիլոնի և Պատրից զբրի թարգմանություններում «տարրերն, տարրերություն և տարրեր» բառերը նույնպես ընտել չեն պատահում, ուստի կարելի է թերևս եզրակացնել, որ այս բառերը կազմված ու գործածված պիտի լինեն Հուսարան լեզվի զարգացման Հետագա շրջաններում¹:**

դ. Հուսարան նոքայեմոս և սյմբեթոճ = նեթակա և պատահում, որ իմաստաբերական աննապարծանական բառերն են, այս թարգմանություններում զեղևս չեն Հատաստվել, որպես կայուն ու սովորական եզրեր: Թեև նեթակա բառն ունի Փիլ. նախ. 26, լինել. 66, ժ բան և Պիտ. 510, պատահում ունեն Պիտ. 424 և Փիլ., սակայն նույն բառերը թարգմանված են նաև պատահ **Թ. 19, Պիտ. 368, Փիլ. նախ. և իմաստ., ներրոկայ Պիտ. 341 և ստորակա Փիլ. լին. 26, Սամփա. 558, Պիտ. 357, 365 և 490:**

Հուսարան **ՓՍՈՒՆՈՒՄ, ՓՍՈՒՆՈՒՄ** և **ՓՍՈՒՆՈՒՄ** բառերն Արխատուցյան երկերում թարգմանված են ընթանություն,

¹ Եթե լեզվական այս իմ գիտությունն ուղիղ Համարվի, այդ զնայում պետք է նաև նեթակայի, որ Կուրիոի Աղբյուրաբարցիո «Գանակց զբրք», ինչպես և աստվածաբանական այն երկերը, որոնք Հայաստանի բարձրի վկայություններն են անկ նույն առ «տարրերն» և այլն բառերը, Համարաբար թարգմանված պիտի լինեն VI դարի առաջին կեսի Հետո:

ընթանական ԴՄՀՃ. 127, ԴՊորփ. 271, էլ. **Ստ. 24, նոննոս 39, իսկ այս թարգմանություններում ընթանություն և ընթանու Փիլ. նախ. 75, լին. 69, այլաբ. և Պիտ. 342; Փիլոնի և Պատրից զբրք տունն ձալագություն և ձալագություն (= Հուս, էՍՏՈՒՄ և էՍՏՈՒՄՈՒՄ)** բառերը, որոնք առաջին անգամ գործ են անված Տրոնթևտ Կուրի Հակահատուցման մեջ, նմանապես և Հուսարան **ԷՆՏՈՒՄ** բառը, որ Տրոնթևտ Կուրից սկսած Հետագա երկերում թարգմանված է ստույցի «ներհակ», Հնագույն այս երկերը թարգմանում են «երկղիմակ»: **Ներ-Հակ = ԷՆ-ՏՈՒՄ** չէր կարող կազմվել թարգմանական այս շրջանում, որովհետև «Հակ» նախդիրը, ինչպես տեսանք, զեղևս գործածական չէր:

Լեզվական այս բոլոր գիտությունները, լեզվում է ինձ որոշ Հինք են ստացի նեթակայի, որ վերահայտ թարգմանությունները կազմում են Հուսարան թարգմանությունների Հատուկ մի խումբ և թարգմանված են Տրոնթևտ Կուրի Հակահատուցյանից առաջ:

Ֆ 41. Փիլոնի և Պատրից զբրք թարգմանված են Թարալուծակա թարգմանությունից Հետո – Փիլոնի և Պատրից զբրի Հնագույն մասեր¹, որոնց խմբակից ու ժամանակակից լինելն ինձ Համար կասկածից զուրկ է, լեզվում է ինձ, որ թարգմանված պիտի լինեն Թարալուծակա թարգմանությունից Հետո: Այս նեթակայից թարգմանությունները նշանակություն ունի Հուսարան թարգմանությունների ժամանակագրության Համար, ավելի բան Հակահական եմ Համարում, Հնամեկուր լեզվական Հետևյալ նկատառումների վրա:

6. Գալիթի-Սիմնիտորոսի խմբի թարգմանություններում, որ կազմում են Հունարան թարգմանությունների երրորդ շերտը, քննականարար, չարտեսակել են ճշակել ու Հարստացնել Հունարան առանձնահատուկ լեզուն ու բառամթերքը: Այս թարգմանություններում կան մի խումբ Հունարան բառեր, որոնք չեն Հանդիպում նախկին թարգմանություններում և թվում են կազմված Հունարան լեզվի զարգացման այս շրջանում: Եթե ճիշտ Համարվի իմ տեսակետը, որ Հունարան լեզուն մեր Հնագույն մատենագրություն մեջ ունեցել է իր զարգացման երեք առանձնահատուկ շրջանները, այդ դեպքում՝ պետք է Հունարան լեզվի ուսումնասիրություն ավելի ևս խորացնել և, եթե Հնարավոր է, փորձել ամեն անգամ որոշելու Հունարան գունգուն խումբ բառերի ծագման ժամանակը: Ազդական ուսումնասիրությունն այս ուղղությամբ կարող է որոշ նշանակություն ունենալ Հայոց լեզվի պատմական քերականության Համար, նաև կարող է կույմն ծառայել որոշելու Հունարան այնչալ ստովածարանական թարգմանությունների մոտավոր ժամանակաշրջանը: Որքան էլ Հունարան բառերը Համարվեն անհարա-

գատ ու խորթ, Հաննանյն ղեկա, Հայոց լեզվի պատմական բերականությունը չի կարող անտես անել այդ բառապաշարը, որովհետև այս վերջինը, որպես գիտական նորերի բառամեթոդ, գործերի բնթարգրում ապացուցել է իր կենսականությունը, կազմել է Հայոց լեզվի անբաժանելի մասը և այժմ էլ մուտք է գործել աշխարհաբար լեզվի մեջ ու դասել նրա գիտական բառապաշարի պատկանելի Հինը:

Գավիթ-Ոլիմպիոդորոս խմբի Թարգմանություններն ունեն, ինչպես ասացի, բարգմանիչ Հունարան բառեր, որոնք չեն Հաննանյանի նախորդ Թարգմանություններում: Թվում է, ինչ, որ այս բառերի մեծագույն մասն առաջին անգամ կազմված ու գործածված պիտի լինեն Հնոց այս Թարգմանությունների ժամանակաշրջանում: Այդպիսի ասանաձևատիկ բառեր են, որիմա՞ք՝ 1. **Քուրանի փստիլոցին** էլ. 24, 31 (նաև Կոննոս 36), **քուրանական փստիլոցիկոս** ՄՀճ, 127 (նաև Կոննոս 39), **քուրանական** 94 փստիլոցիկոս էլ. 24, **ի քուրանությունսն են փստիկոս լոցուս** Գ Պորփ. 271, D.Porph. 109, 31, **քուրանությունսն փստիլոցի** էլ. 24¹. (Հունարան Թարգմանությունների առաջին շրջանում փստիլոց, փստիլոցիկոս Թարգմանված են՝ **քուրանու, քուրանությունսն** Փիլ. ին. 96, Փիլ. նախ. 75, Փիլ. աշխար., Պիտ. 342). 2 **տեսակարարն էիծոքու** Ներ. Պորփ. 236, Գ Պորփ. 320, ՄաՀճ. 178, Վերլ. 571, էլ. 56, **տեսակարարու էիծոքուս** Ներ. Պորփ. 237, էլ. 68, **տեսակարար էիծոքուս** Ներ. Պորփ. 233 (նախկին Թարգմանություններում էիծոքու Թարգմանված է՝ **տեսակարարն** Յ Պեր. 518, Փիլ. նախ. 4, Տիմ. Հակոճ. 195, 20), 3. **արարարն քարածուխու** ՄՀճ, 135 են, էլ. են, 4. **կենդանարարս չօփոնտ** ՄՀճ. 206, Գ Պորփ. 296, 5. **երեւակարթին**² **փանտասիա** ՄՀճ. 181, 185, Վերլ. 559, **երեւակարթն փանտասիա** 193, 6. **եղակարթին**³ **սյմպերասա** 185,

Գ Պորփ. 267, Վերլ. 559 (նաև բաղնիկներում, բաղնիկներին Վերլ. 562, 583), **եղակարթին, եղակարթին** էլ. 27, 28, 7. կորնթ-**թարգ ՄաՀճ. 144, կորնթի քորտոս** էլ. 127, 8. **Համալարան օքրոստրիոն** ՄՀճ. 128 (նաև Կոննոս 35, 10), 9. **ուղղորդակաց օրծոքուպատիկոս** ՄՀճ. 137, Առ. Հինգ 217, Գ Պորփ. 291, 10. **այնեղանին, քլատունոսոս** ՄՀճ. 137, Առ. Հինգ 217, Գ Պորփ. 291, 11. **մակամոսոսին** էպնոսիա ՄՀճ. 193, Գ Պորփ. 270, 12. **քալիլին** օքոցուոսու Ներ. Պորփ. 239, Գ Պորփ. 341, էլ. 95, 13. **քալարոն** օքրոցուոսու ՄՀճ. 160, Ար. Ալլի. 615, Գ Պորփ., 14. **Հանոր քաժոլոս** ՄՀճ. 126, Գ Պորփ. 255, Վերլ. 572, **Հանրական քաժոլոս** ՄՀճ. 159, **Հանրականք տա քաժոլոս** էլ. 31 (ունին նաև ընդհանուր, ընդհանրական, ընկանրական), 15. **արարարն քարածուխու** էլ. 115, **անծեկա** Գ Պորփ. 264, 16. **արարան քարածուխու** էլ. 23, Առ. Հինգ 218, 17. **նիթարանայ սոք օսեղոն** էլ. 61, Գ Պորփ. 265, 18. **անՀանուի օքոսոն** Ներ. Պորփ. 240, Գ Պորփ. 279, 322 են, 19. **նոսոնիք տրոքուս** էլ. 4, **նոսոնայք Անանոսն՝ Հանուսն** ինչ Ստոր. մեկնությունսն 140, **նոսոնի Կոննոս 10** և այլն., 20. **միայնակարթ մոնոբիբլոս** էլ. 33, **միայնակարթ** Վերլ. 587, 21. **գրանոց** **բիբլոսոնի** էլ. 40, Վերլ. 563, 22. **աներկարար օքոսոստրոս** ՄՀճ. 128, էլ. 21:

§ 45. Գավիթ-Ոլիմպիոդորոս խմբի Հայերեն մեկնությունները չեն կարող բոլորն էլ միասին Համարվել միևնույն Թարգմանիչ աշխատություն: - Գավիթ-Ոլիմպիոդորոս խմբի Երկերն են, ինչպես վերը հիշեցի՝ 1. ՄաՀճանք իմաստասիրության: 2. Վերլուծությունսն Ներածությունսն Պորփուրի: 3. Առածք Հինգ և վասն բաժանան: 4. Մեկնությունսն չորեքասան գլխոց Արխատուլի ի Վերլուծական: 5. Մեկնությունսն Ստորագրության Արխատուլի ընծայակ իմաստասիրի: 6. Հաստատված ինչ մեկնությունսն Ստորագրության Արխատուլի:

1. Արդ՝ վերոհիշյալ Երկերից կարող են միևնույն Թարգմանիչ աշխատություն Համարվել առաջին Երկուսը, որովհետև ցրանց Հունարան բառապաշարը գրեթե միևնույնն է, նաև նման Հաստ-

¹ Բայց էլ. 31 ունի ի քուրանությունսն = Հուն. են տոս փստիկոս El. 124, 12, նաև քուրանական էլ. 38 = տօ փստիկոս El. 128, 26:

² Փանտասիան քարածուխու (El. 172, 20) էլիպսի Ստորագրության մեկնության մեջ Թարգմանված է՝ օքրոստրոս ինչ և կարթու ասան», էլ. 93:

³ Եղակարթին = **սյմպերասա** թվում է ինչ ազնուական, Օսպոյն մե-
տաղերում է թերևս գտնվի այս բառի ուղիղ բնթարգմանք, որ պիտի լինի եղա-
կարթին:

¹ Սույն Երկերի մանրամասն վերնագրերը տե՛ս այս աշխատության մեջ՝ § 8:

վածներն այս երկերում թարգմանված են Հուներենից միակերպ: Այսպես՝

Մահձ, իմաստ, էջ 133

«Ես պարտ է դիտել եթէ գաս՝
ման եւ գրածանուն ինչէ Պրա-
տոն: Ջասձման առ ի Փեղոսի՝
տրամարանութեանն՝ սակոյժ, թէ
Ոյ մանուկ դու, մի է սկիզբն
գեղեցկարար խորհելոյն, գիտել
յաղագս ո՛ր է մտածութիւնն,
ապա թէ ոչ՝ Հարկ է յամենայնէ
վրկպել:»

Մահձ, իմաստ, 133

«Եսկ գրածանուն ինչ է Սո-
փետեայ տրամարանութեանն ա-
սկոյժ, թէ Ըստ բաժանական
Շարս ոչինչ պանծացի փախ-
չել:»

2. Վերլուծականքի մեկնութեան թարգմանութիւնը եւ Հու-
նարան իր բառապաշարով շատ մոտ է վերոհիշյալ այս թարգ-
մանութիւններին, սակայն կան եւ լեզվական որոշ տարբերու-
թիւններ, ուստի զփոխը է անվերապահորեն այս թարգմանու-
թիւնը նույնպէս վերագրել նորադաստական մեկնիչ Դավթի
երկերի թարգմանչին: Ներքևում ղեճ առ ղեճ դրված են այս
թարգմանութիւններին մէջ Հանդիպող նման Հատվածները,
որտեղ լեզվական տեսակետից կամ կատարկապէս իրար
Համապատասխանում են կամ երբեմն տարբերում:

Մահձ, իմաստ, 186

«Բանդի պարտ է դիտել գՀինգ
գիտական գորութիւնս, զգգայու-
թիւն, զերեսկայութիւն, զկար-
ծիս, զտրամարտութիւն, զմտոս:»

ԳՊորփ, էջ 264

«Ես ափ գիտութիւն յարա-
բարչել զմեզ առ ինքն, վասն զի
բառ Պրատոնի ի մի է սկիզբն
ճշմարտ խորհելոյ՝ գիտել յաղագս
ո՛ր է մտածութիւնն, ապա թէ ոչ՝
Հարկ է յամենայնէ վրկպել:»

ԳՊորփ, 302

«Ես գի սխործելի է Պրատոնի
նճոյ գիտել գրածանուն, ինքն
իսկ յայտ արար սակոյժ: Ջի բառ
բաժանականն, առ Հնարս ոչինչ
պանծացի փախչել:»

Վերլ. մեկն. 559

«Բանդի Հինգ են աններեան,
որով նստայնք ինչ եւ գիտեմք,
զգայութիւն, երեսկայութիւն,
կարծիք, տրամարտութիւն, մտոս:»

Մահձ, իմաստ, 186

«Յիրգոն՝ Հոդի ինքնաշարժ, ինք-
նաշարժն մշտաշարժ, մշտաշարժն
անմահ է:»

Մահձ, իմաստ, 214

«Յիրգէս գի մի գտուտ գի-
տութիւն ի կարծեաց ընկալացուք,
եւ մի չար ինչ գործեացուք:»

Դաս. Պորփ., 258

«Եսկ Հաստայն ետակի գոյ,
կամ ի Հանրականաց զմտու-
կանն ցուցանել եւ Հաստար-
մացուցանել, կամ ի մասնա-
կանաց զՀանրականն, կամ ի
գուզէն զղոյզն:»

Դաս. Պորփ., 268

«Յիրգ յորժամ ի Հանրականն
զմասնականն ցուցանել եւ Հաս-
տարմացուցանել, իսկպպէս ապա-
ցուցական կոչի:»

Դաս. Պորփ., 269

«Ես յորժամ մասնականան գրե-
թանտուն Հաստարմացուցանեմք,
այնպիսին մակածական կոչի, որ-
պէս յորժամ կամեով գոր Հա-
ստարմացուցանել թէ աննայն կն-
գակի գներքին կպան չարժէ, ի
մասնականան ցուցուցի ցուցա-
նեմ սակոյժ՝ թէ վասն զի մարդ
եւ մի գներքին կպան չարժեն,
այսպ ուրեմն աննայն կնգանի
գներքին կպան չարժէ:

Ո՛չ է նշմարիտ. բանդի կոկորդի-
լոս գուզան եւ փրկելին Հու ոչ
չարժեն գներքին կպան, այլ զվե-
րինս:»

Վերլ. մեկն., 686

«Յիրգոն՝ անմի ինքնաշարժ, ինք-
նաշարժն մշտաշարժ, մշտաշարժն
անմահ ապա ուրեմն անմե ան-
մահ:»

Վերլ. մեկն. 659

«Յիրգէս գի մի գտուտ
գիտութիւն ընկալացուք, եւ մի չար
ինչ գործեացուք:»

Վերլ. մեկն. 684

«Բանդի աննայն Հաստոս՝ կամ
ի Հանգիտէն զՀանգէտն յարգարէ,
կամ ի նուզէն զմեծն, եւ կամ ի
մեծէն գեուզան:»

Վերլ. մեկն. 684

«Եսկ որք ի մեծէն գեուզան Հա-
ստարմացուցանեն, այնորիկ բազ-
Հասարուն սարն:»

Վերլ. մեկն. 684

«Եսկ որ ի նուզէն զմեծն յար-
գարէ, մակածութիւնն ափ,
որդոն՝ վասն զի մարդ եւ մի գներ-
քին կպան չարժեն, որ ոչ է Հար-
կաւոր փրկելիպթեմի եւ կոկորդի-
լոսի եւ զուճոդի Խորչէ ընթեր-
ցուած՝ գոճայմի՛, որք գներքին
կպան չարժեն:»

¹ Սխալ է Հուներեն ընտրի Համաձան պետք է լինի ի Փետրոսի:

«Բաւ յորժամ Հաւասարան զՀաւասարն ցուցանենք, յաշծմամ յարացոց կոչի. որպէս յորժամ որ կասկեղձ ոչ տայ Գիտելիս մարմնապահւո՞ւ ասելով. Արք աթենաւոցիք. ոչ տացուք Գիտելիս թիկնապահւո, քանզի զի ե Պիսիտարոտոս անկայ բռնեցաւ:

Ոչ է ճշմարտ, քանզի ոչ էթի յորժամ Պիսիտարոտոս բռնեցաւ, եւ Գիտելիտոս բռնեցաւ»:

3. Էլիսաիբն ընծայված Ստորոգութեանց մեկնութիան մեջ եւ նրա Հուներան բառամթերքը պատկանում է, մեծ մասամբ, Գալիթ մեկնիչի երկերի Հայ թարգմանութեանց լեզվախմբին: Մական նրա մեջ կան և որոշ նշաններ, որոնք Հիւք կարող են ծառայել նեկեղարելու, որ այս մեկնությունը կարող է ե շիմել միևնույն թարգմանչի աշխատություն: Անձնատշաղրայ նշանն այդ տեսակետից այն է, որ նրա Հայերեն թարգմանություն մեջ մի քանի տեղ Հուներեն ընտարիք փոփոխված է. և Սոկրատ փիլիսոփան փոխարինված է օրինակներում Գալիթ փիլիսոփայով: Այսպես՝

El. in Categ., էջ 169, 7-8

‘Αντί του εἰπεῖν ‘κάλεσον τὸν Σωκράτην’ λέγω ‘κάλεσον τὸν φίλοσοφον..

El. in Cat., էջ 170, 4-5

‘Ὅσπερ Σωκράτης καὶ ‘Αργος ὁ κίων καὶ Σάνθος ὁ Ἴππος

El. in Cat., էջ 187, 27-30

Կալ ὁ λόγος δὲ διατριμένος ἐστίν, εἶγε πάντως μεταδὶ δύο συλλαβῶν ἐστί σιωπή, ἐν γὰρ τῷ φίλος τῆς φι συλλαβῆς ἡ ἐκφώνησις ἄλλη ἐστί παρὰ τὴν λος ἐκφώνησιν τῆς συλλαβῆς

«Արդ որ ի Հուներան զՀանգէտն յարգար, ասի յարացոց, որքով՝ ոչ տացուք Գիտելիտոսն թիկնապահ՝ մարմնոց, քանզի ե Պիսիտարոտոս անկայ բռնեցաւ: Քանզի ոչ Հարկասը է՝ թէ Պիսիտարոտոս բռնեցաւ, եւ Գիտելիտոս բռնեցաւ»:

Էլ. Սո. մեկն., 88, 14-15

«Փոխանակ ասելոյն ‘կոչևս’ զԳալիթ՝ ասենք ‘կոչևս’ զփիլիսոփոսն»:

Էլ. Սո. մեկն., 89, 18

‘Որպէս է Գալիթ եւ Արգոս շուն եւ Ելիսաիբն պիսակ մի»:

Էլ. Սո. մեկն., 119, 9-12

«Բայց եր քան տարբարեցնայ է, քանզի զի ընդ մէջ աննայն երկուց փառատութեանց յուրիս է, որպէս ե Գալիթ անունն, քանզի ի ‘գաւ... փառատութեանն այդ արտասանութիւնն է եւ ի ‘իթ’ փառատութեանն այդ արտասանութիւնն»:

Այս փոփոխությունները, որ բառ երևույթին, թարգմանչին են և, ոչ Հետագա ժամանակների ներմուծումներ, մի ակնարկ են, որ Էլիսաիբ Ստորոգութեանց մեկնությունը կարող է թարգմանված լինել Գալիթի երկերի թարգմանություններից Հետո, երբ նորագոյտոսական Գալիթ մեկնիչն արդեն Հռչակ էր ստացել Հայ իմաստասիրական մասնագետության մեջ: Հավանորեն, Գալիթ փիլիսոփայի երկերը թարգմանելուց Հետո միայն կարելու է Համարվել թարգմանել նաև նրա ուսուցիչ Էլիսա-Սիմոնիդոսի Ստորոգութեանց մեկնությունը:

Նույն այդ մեկնությունը կարծես թե Հաստատվում է նաև այդ թարգմանությունների Հուներան բառապաշարի մանրագիծն ընդունելով: Թեև նրանց մեջ, մեծ մասամբ, միևնույն Հուներան բառերն են գործածված, սակայն կան երբեմն և որոշ ուշագրավ տարբերություններ: Այսպես՝

1. ἀντιπαράστασις Հակադրակացութիւն էլ. 133 12, 111 29, 112 26, 113 7, նաև Հակադրաստութիւն էլ. 135 2, իսկ ընդհանրակալայութիւն¹ ՍՀճ, 124;
2. ἐνστασις ներկացութիւն, ներակացութիւն, էլ. 111 28, 133 13, նաև ընդդիմակացութիւն էլ. 116 15, ներաստութիւն² էլ. 134 2, իսկ ընդդիմակացութիւն ՍաՀճ, 124.
3. βάνασοι τεχνάει ἀλκίμαρ-Հետականք էլ. 20, Առականք արՀետք ՍՀճ, 184.
4. ἀναλογία վերաբանութիւն էլ. 49, 50, 87. Նախկին թարգմանություններում՝ Հանձնատութիւն.
5. ἐν ροπή καὶ ἀποροπή ἢ Հոսման եւ ի ծորման ՍաՀճ, 125 32, 126 11, ի ներհոսման եւ ի բացահոսման էլ. 102 11: Բացի վերոհիշյալ նկատատուներից՝ ուշագրավ է նաև այն, որ Հուներեն միևնույն Հատվածները թարգմանված են Գալիթ ու Էլիսաիբ թարգմանություններում՝ երբեմն բառացի իրար նման, երբեմն էլ տարբեր: Եթե այդ թարգմանությունները, վերաբերելու լինենը

¹ թվում են ազնազավ պետք է լինի՝ ընդդիմադրակացութիւն, ընդդիմակալութիւն:

² «ներաստութիւն» և «հակադրաստութիւն» սխալ թարգմանություն են: Ըստ երևույթին, թարգմանիչը Հուներեն ընտարում «ἀντιπαράστασις-ի ու «ἐνστασις-ի փոխարեն ունեցել է ազնազավ բառեր՝ «ἀντιπαράστασις և «ἐνστασις. Հեծու, ստակութիւն = ἐπίστασις ներ. Պորփ. 236, ստակութիւն և ճակատութիւն = ἐπίστασις Թ. 15 և 34:

զանազան թարգմանիչների, Համարելով էլիասի մեկնությունը Հետևազույն թարգմանություն, այդ զեպրում՝ պետք է նաև ընտելներ, որ էլիասի թարգմանության մեջ նման Հատվածները քաղված պիտի լինեն Գավթի երկերի թարգմանությունից: Եման ու Համապատասխան այդ Հատվածները Հետևյալներն են.

էլիաս, 36, 2-8

Սահճ., 133, 19-23

«Վասն զի ամենայն ինչ առ ի գիտաստութիւն Հայի, որպէս եւ Պատոս աւե. ձկով մանուկ դու, մի է սկիզբն զեղեցիկարարն խորհելոյ. գիտեց յազգա՛ս ո՛րք է մտածութիւնն, ապա եթէ ոչ՝ Հարկ է յամենայնէն վրիպելք»:

էլիաս, 5, 2-8

«Զոր առանձինն յանդիմանէ Պատոս զերկարանշխարս՝ եթէ Որպէս Հասեալք սակբ ոչ զոյ Հաստուն, եթէ որպէս ոչ Հասեայք: եթէ որպէս Հասեայք՝ ահա՛ է Հաստուն, ապա եթէ որպէս ոչ Հասեայք՝ ոչ Հասեայք մեզ ոչ Հասեայք. եթէ է անՀաստութիւն»:

էլիաս, 19, 3-4

«Քանզի .. անտարբի ի մարտն Հպել ոչ իրաւ՝ ըստ Պատոսի»: :

էլիաս, 53, 12-14

«Քանզի ըստ բաժանական Հարս ոչինչ պանծացի փախչել»:

էլիաս, 46, 11-12

«Քանզի անուն յունցի սահճաին, բանզի անուն է սահճան ամփոփեայ, իսկ սահճան է անուն տարածեայ»:

«Եւ պարտ է գիտել, եթէ զասհճանն եւ զբաժանումն յիշ Պատոս, զասհճանն ի Փետրոսի տրամաբանութիւնն անելով թէ . ձկ մանուկ դու, մի է սկիզբն զեղեցիկարար խորհելոյն, գիտել յազգա՛ս ո՛րք է մտածութիւնն, ապա թէ ոչ՝ Հարկ է յամենայնէն վրիպել՝ »:

Սահճ., 132, 10-17

«Առ որս Հանդիպի Պատոս անտացել առ ասացեալս նոցա ոչ զոյ Հաստուն, անելով՝ եթէ զիս՞որք սակբ ոչ զոյ Հաստուն, որպէս Հասեալք, եթէ որպէս ոչ Հասեայք: եւ եթէ որպէս Հասեայք, յայտ է թէ Հասեք, եւ է Հաստուն: Իսկ եթէ որպէս ոչ Հասեայք, ո՞րք Հասեացել մեզ յասելոյ զայդ, ոչ յասելոյց եւ ոչ գիտաւորեցն»:

Սահճ., 161, 8-9

«Վասն զի ըստ Պատոսի՞՝ անտարբի ի սուրբ Հպիլ ո՛չ բարբոր եւ իրա»:

Սահճ., 133, 34

«Ըստ բաժանական Հարս ոչինչ պանծացի փախչել»:

Սահճ., 136, 30, 32

«Քանզի ասեն, թէ անուն է սահճան կարծառոս, իսկ սահճան է անուն ծաւաբայ»:

էլիաս, 17, 14-17

«Քանզի Հինդ են տեսակբ շարարանութիւն, այսինքն ապացուցի՞՝ ապացուցականն, տրամաբանականն, ճարտասանականն, իմաստականն, բերթողականն, որ եւ արտապիւսխանունմ»:

էլիաս, 21, 12-18

«Զորոյ զարութիւնն եւ ինքն եցոյց երբեմն անելով ի Սովիտոսն տրամարանութեան այսպէս, կրթեա՛ր զրեզ ինքն կոչեցելովքն առ ի յորունց թախանձութեանը, տակալին եւս նոր գոյով Հանրակ, ապա եթէ ոչ՝ փախիլք է ի բնէ հմարտան, թախանձութիւն կոչեաց զՀեռակացութիւն իրացն՝ այսինքն գրամանակն»:

Վերլ., 558, 16-19

«Եւ պարտ է գիտել եթէ Հինդ են տեսակբ Հաւարանց՞՝ ապացուցական, տրամարանական, ճարտասանական, իմաստական, բերթողական, որ եւ արտապիւսխանունմ»:

Վերլ., 567, 38, 568, 5

«Գարձեայ յայտ արար յիւրում շարադրութեանն, յորում անելով, եթէ կրթեա՛ր զրեզ յինքնան կոչեցելովս առ ի բացմայ թախանձութիւն, մինչ տակալին եւս նորագործ եւ, ապա թէ ոչ՝ փախցիլք է բնէ: Հմարտաթախանձութիւն կոչեցեայ զբացարկութիւն իրացն, իսկ կրթութիւնն զգիտութիւնն գոչիցն»:

4. Գավթի-Սիմապիտորոսի իմաստասիրական զպրոցի երկերի խմբի պատկանում է, անտարբարոս, նաև «Հատուած ինչ մեկնությունն Ստորոգությունն Արիստոտելի», որ տպագրված է էլիասի Ստորոգության մեկնությունն վերջում (ԼԶ 140-149): Ինչպես վերոհիշյալ թարգմանությունները, նույնպես և այս Հատվածի թարգմանությունը, ընդհանուր առմամբ, ունին Հուճարան ըստապաշարի ու յեզգվական ասանձաՀատկությունների նմանություններ, որովՀետև Հուճարան զպրոցի զարգացման միևնույն երրորդ չերտի արտագրություններ են: Սակայն ուշադիր բնությունը ցույց է տալիս, որ Անանուի մեկնիչի Հատվածի թարգմանությունը Հաջով թե կարելի լինի վերադրել Գավթի Սահճաների կամ էլիասի Ստորոգության մեկնության թարգմանիչներին: Այս եկեղծությունները Հիմք են ծառայում, ամենից ատա՞ջ, Հուճարան նման Հատվածների տարբեր թարգմանությունները Հիշյալ երկերում: Արպես՝

1 Մանձոց թարգմանված է Վ.-ում արտապիւսխանում, իսկ էլ.-ում՝ արտապիւտ, էլ. 17, 20:

«Երբ են Իզդոնիկեցիք՝ Արխալպուտս եւ Կելեոմորստուս, որոյ ընկերացեալ զՊղատտական գիրոն, որ վասն խոկման մաշուն, եւ ոչ իմացեալ զասացեալսն՝ ընկեց զհրեն ի պարսպէն: Կանս որոյ ասացեալն է ի Պասիէլ, **Քերկրես-Ջիր**, Կելեոմորստուս Անթրոպացի փառեայ ի բարձր պարսպէն ի գետին, արժանի ոչինչ զորոնաց մաշուն, այլ զՊղատտոսի, որ վասն Հոգոյ զըրբ՝ ընտրեալս:»

Անան, մեկն., էջ 147, 5-17

«Ենթէ ոչ վասն Բջնամոթեան Պղատտի շինեաց Արխատուէլէս զԼիկիոնն, Աթենացիք դարձեալ կոչէին զնա՝ սասց, եթէ Քառ լցի ինձ դայ յայն բաղար, ուր նախանձ ի նախանձու վերայ ծերանայ եւ զզպարտութիւնն ի զբաբարտութեան վերայ: Այտուիկ յայտնեաց զբազմութիւն զբաբարտոյացն, զբաբարտոյս զնոսս կոչեաց վասն Անկրատայ, զի նոսն նմա ի բառկն զկոնիոնն:»

Հմտտ, նաեւ Հետեյայ նման Հատմամբերը՝ Անան, մեկն., 144 30-145 2, էջ. 5 3-6 եւ Սահճ, 132 10-17, Անան, մեկն., 148 6-7, էջ. 53 13-14 եւ Սահճ, 133 34:

Ուշադրութեան արժանի են նաեւ Անանուն մեկնելի ու Հիլասի Ստորոգութեանց մեկնությունների մեջ լեզվական Հետեյայ տարբերությունները.

1. Հունական իմաստասիրական զգրոցների անուններն

¹ Հիլասի Հունարեն ընդգրկն ունի՝ «ՃՅՄԷ ԷՄ՝ ՃՅՄԷ ԿԴՃՏԿԵ, ՕՃՕՈՆ ԾՆՆՆ ՕՃՕՍ:»

«Եւ պարտ է գիտել, եթէ ուն Կելեոմորստուս Անթրոպացի կարճեւոյ, եթէ Պղատտն գրեանորական մաշունն Հրամայէ խոկայ իմաստասիրին, ընկեցեալ զհրեն ի պարսպէն վախճանեացաւ. վասն որոյ այս Կալիմարոս, **Ռարխալպուր** ու՛րկ արեգական, Կելեոմորստուս Անթրոպացի փառեայ ի բարձրաբերձ պարսպոյ ի գծիսն, արժանի ինչ ոչ ոստեալ մաշուն, այլ շար զՊղատտի գլաղազս Հոգոյ զիրն ընտրեալս:»

Հիլաս, 30, 11-17

«Քանզի յետ մաշուն Սոկրատայ, երեւյ յԱթենից՝ տամիր ի Քաղաքիցում, եւ վերասին կոչելով որ յԱթենն եւ ոչ Հաւանեայ՝ գրեաց այսպէս, Ոչ Հաւանեցուցից զԱթենացիս երկիցս մեղանչիլ զիմաստասիրութիւն, առ որս իտպասանձ ի վերայ խոզատանձ ծերանայ եւ թուզ ի վերայ թիղոյ: Թուզ ի վերայ թիղոյ, գրելով՝ զզբաբարտոյս նշանակեաց:»

Հիլասի ինքնանունը միշտ հայացնում է, իսկ Անանուն մեկնելի ինքնանունը գործ է ածում նրանց Հունական անունները: Այսպես՝ ա. **Ἐφεσικός** Արքիպական էջ. 5 24, 6 12, 11 3, Եփեսոսիկեան Անան, 140, 142, 144, 145, 147, ք. **Ἡδονικός** Հելլոսական էջ. 8, 11, Իզոնիկեան Անան, 141, 142, 143, գ. **Κονικός** Ճնական էջ. 4, 6, 11, Կոնիկեցի Անան, 141, «Կոնիկեցիք, այսինքն՝ Ճնականք» Անան, 147, գ. **Περιπατητικός** Ճնական էջ. 1, 9, 10 են, Պերիպատիկանք Անան, 145, 146, 147, «Արխատուկականք, այսինքն՝ Ճնականք» Անան, 142:»

2. Թեև Անանուն մեկնելի Ստորոգութեանց մեկնութեան Հատմամբն ընտարեն ընդգրկը գտնված չէ, բայց ինչում է ինձ, որ ներքն առաջ ընթրված օրինակներն եւ պարտ է յիննն Հունարեն միևնույն բառերի ու նախադասությունների տարբեր ինքնանունները: Այսպես՝

ա. **αἰρεσιάρχη** Հերձուածապետ էջ. 3, սկզբնաւոր Հերձուածին Անան, 141, նաեւ Հերձուածապետ Անան, 147, ք. **ἀπό τῆς πατρίδος** (Մ. 108 36, 113 12) ի Հայրենեաց էջ. 3, 10, ի գաւառն Անան, 141, 147, գ. **ἀπό τοῦ τῆσποῦ τῆς ζωῆς** (Մ. 111 2) ի յեղանակ վարոցն էջ. 6, ի յեղանակ կենացն Անան, 141, 147, գ. **ἀπό τινος συμβεβηκότος** (Մ. 112 18) յումմմմ, պատահածում էջ. 9, յինքը պատահման էջ. Անան, 142, և. **διττῆ γὰμ ἡ ἀνείδεια ἡ μὲν χειρὼν τῆς αἰδοῦς ἡ δὲ χρεῖται** (Մ. 111 14) «քանզի երկակի է անպատկառութիւն՝ մին յոտկոյնն բան զամառի եւ մին է յուտոյնն» էջ. 7 11-13, իսկ Անան, 141 11-12՝ **καὶ ἀναμάρτησίτην** կրկին է՝ կամ ի վեհադոյնն կամ ի վատթարագոյնն, գ. **δι εὐγνωμοσύνην μαθητῶν** (Մ. 128 1) յաղազս բարեմտութեան աշակերտաց էջ. 37 12-13, վասն բարեբարութեան աշակերտացն Անան, 148 22-23, և. **ποιητῆς** բարտ, որ Թրակացու քերականությունից սկսած Հունարան բոլոր չեւտերի երկերում ինքնանված է «բերդող», Անանուի Ստորոգութեանց մեկնությունն Հատմամբն մեջ ինքնանված է «արարիչ»՝ էջ 144 6՝ «իրոյ թիլ յարարչէն իսկ ասացեալ՝ միշտ յարարարխանայ յաղազս Հիրուց եւ բարեկամաց կամտից:»

5. Սույն աշխատութեան առաջին մասում ցույց տրվել արդեն, որ Արխատուկի իմաստասիրութեան վերաբերյալ Հազարուն Հա-

¹ Գալլի-Սիմպոլոգորտի խմբի մոտ երկերում նույն բառերը ինքնանված են՝ Ծնականք Սահճ. 166, ԳՊ. 272, Ճնականք Սահճ. 167, ԳՊԳԳ. 280, 307, 325, 326, «եփեսոսացի փիլիսոփայից» Վեր. մեկն., 579:

յերևն երկերը, որոնք վերագրված են եղի, մեծ մասամբ, Գալիթ ԱնՇաղթի փիլիսոփային, թարգմանված են Հունարենից և գահական Հեղինակների աշխատություն են: Իսկ այժմ՝ Գալիթ-Սիմանիզորոսի խմբին պատկանող Հայերեն թարգմանությունների մանրագիծն քննությունը լուսարանիում է, և մի այլ կարևոր խնդիր, - որ Հունարան երրորդ շերտի այս թարգմանությունները ոչ միայն տարրեր են Հունարան առաջին և երկրորդ շերտերի թարգմանություններից, այն իրեն իսկ, լինելով վերջական տեսակետից խմբակից, չեն կարող համարվել միևնույն թարգմանչի աշխատություն: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, կատարելապես սխալ է զրգում իմաստասիրական երկերի թարգմանության վերաբերյալ խնդիրը, երբ քանակապես այս կամ այն աշխատության մեջ խոսք է լինում շարունակ արխատույթան երկերի ու մեկնությունների Հայ թարգմանչի մասին:

§ 46. Հունարեն Համանման Հատվածների թարգմանությունը Հունարան զանազան շրջանների թարգմանություններում: - Հունարան հնագույն թարգմանությունները ծագել են, ինչպես տեսանք, ոչ թե միասնաբար ու միաժամանակ վեցերորդ, օրինակ-երորդ կամ ութերորդ դարում, այլ զանազան ժամանակաշրջաններում, և բաժանվում են երեք տարրեր շերտերի: Արդ՝ այս հիմնական եզրակացությունը Հանգեղուց Հետո, կարծում են, որ զգվար չէ բացատրել նրանց մեջ հանդիպող համանման Հատվածների թարգմանության այն կապն ու առնչությունը, որ կատարված են մասամբ բանասիրական նորագույն աշխատություններում: Համանման այդ Հատվածներն են.

1. Մահձ., 165, 16-29

Պրոտ., 360, 20-21

«Քրիզն և թռչողիս յարտ առնէ
ցոմն Սիլիոնոս առնելով՝ թէ պարտ
է յարատս թննէ փայտել և ի
միմակակեզն անկանել ծովն, և ի
վիմաց, Սիլիոնէ, Հոսի յարկակ-
ակրիս»¹:

«Արժանի է յարատուրննէ
է փայտել, և ի մեծն անկանել՝ ծով
և կամ թ փնաց Հոսի ի բարակաց:

¹ Սույն Հատվածի Հունարեն թևագիրը տե՛ս Dav, Prolegoin., էջ 32 19-23՝

«Չէ και ὁ Θεογιος τοῦτο ἐπιλοῖ πρὸς Κόζρον τινα ὅτιω λέγων.

Χρη πενήν φεθόντα και ἐξ μεγαλίτα πόντον

Ῥίττειν και περῶν, Κόζρον, κατ' ἡλιβέτων...

եթե չեն սխալվում Հունարեն Համանման այս Հատվածների տարրեր թարգմանությունը մատնանք և Աղ. Բաունգարտերի «Über das Buch „Die Chre.“» ուսումնասիրության մեջ¹: Գծրախոսարար, այդ աշխատությունը չունեն այժմ մեղքիս տակ: Ամենուսի շարափն է այս Հատվածներում Հունարեն ἡλιβατος բառի տարրեր թարգմանությունը՝ արևգահակերիս և բարձր: Ալիβատոս այս բարդ, ինչպես Հայտնի է, հասկացվել է Հունարենում երկու տարրեր իմաստով՝ կամ իրեն ἡλιό-βατος = «անմատչելի, խիստ բարձր» և կամ իրեն ἡλιό-βατος = «արեգակնանուն, արեգակնա-կոյն»²: Արդ՝ «Յաղագս Պրոսոյց» երկի թարգմանն այդ բարդ հասկացել է առաջին իմաստով, իսկ Մահձանքի թարգմանը՝ երկրորդ իմաստով: Ավելի քան պարզ է, որ այդ թարգմանները պետք է լինեն տարրեր անմատչություններ: Արդ՝ քանի որ սույն իմ աշխատության մեջ ցույց է տրված արդեն, որ «Յաղագս Պրոսոյց» զրգվածը Հունարան առաջին շերտի թարգմանություն է, իսկ Մահձանքը՝ երրորդ շերտի, և որ այդ թարգմանությունները ծագել են տարրեր ժամանակաշրջաններում, չստ սարք ու Հակահայտի է այժմ՝ թե այդ թարգմանությունների և թե զրանց թարգմանիչների իրարից տարրեր լինելու, և այդ խնդիրը պետք է Համարել ըստ իս վերջնականապես լուսարանված ու լուծված:

2. Մի որիչ նույնպես Հետաքրքրաշարժ Հատված մատնացույց է արել ն. Աղոյնի իր «Արունես Գիովիսակ ջերականի» աշխատության մեջ.

Մահձ., էջ 182, 9-11

Թրակ., էջ 42, 15-18

«Արճեստ է՝ բաղկացուրիս ի
Հասողութիւնէ ներճատութեամբ
նախարքիսայ առ ի պիտուսացու
իչ կատարեմն, որ ի կենցա-
ղոմս»³:

«Արճեստ է՝ բաղկացուրիս ի
թողմանէ նախարքիսայ առ ի պի-
տուսացու ինչ իրս, որ ի կեն-
ցաղոմս»:

¹ St'w Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, 1886, էջ 457-515;

² St'w Dr. W. Papes Griechisch-Deutsches Handwörterbuch, Bd. I, 1888, էջ 1161:

³ Հունարեն թևագիրը տե՛ս Dav, Proleg., էջ 144 5-6. «πέχην ἐστὶ ὁσότητα ἐκ καταλήθεον ἕμπειραιῶ συγγεγομασμένη πρὸς τι τέλος εὐχρηστον τῶν ἐν τῷ βίῳ».

Իսկապես՝ այս Հատվածը ո՛չ թե Թրակացու բերականության Հայերեն քննարկի մեջ է գտնվում, այլ Գալիի փիլիսոփայի Քերականի մեկնությունից մեջ¹, սակայն նեխ. Աղոնցը կարծում է, որ նույն Հատվածը եղած պիտի լինի Թրակացու բերականության Հավելվածում, որտեղից է, Հավանաբար, քաղել է Գալիի փիլիսոփան: Արդ՝ այս Հատվածում ուշադրություն արժանի է, ամենից առաջ, ինչպես շատ ուղիղ գիտել է նեխ. Աղոնցը, **κατάληψις** Հունարեն բառի տարրեր թարգմանությունը՝ Հաստատություն և թողում: Մասնաների թարգմանք **κατάληψις** բառը Հասկացել է **καταλαμβάνειν** = Հավանալ, Հաստ լինել բայից, իսկ մյուս թարգմանք՝ **κατάλεπειν** = թողուլ բայից: Միանգամայն պարզ է, ինչպես և ճիշտ եզրակացնում է նեխ. Աղոնցը, որ այս Հատվածների թարգմանները պետք է լինեն տարրեր անձնափոխելիքներ: Սակայն նեխ. Աղոնցը ենթադրում է միևնույն ժամանակ, որ այդ թարգմանությունները մնացած մյուս մասերում այնքան են իրար Համապատասխան, որ կարող են լինել միևնույն զրական զգրոցի արտադրություն: Այս ենթադրությունն ըստ իս պետք է Համարել այժմ անընդունելի, քանի որ գիտենք արդեն, որ Մասնաները և Թրակացու բերականությունը տարրեր ժամանակի ու Հունարան տարրեր զգրոցների թարգմանություններ են:

3. Էլիասը ևս իր Ստորոգյութեանց մեկնությունից մեջ ունի երկու Հատված, որոնք գտնվում են նաև Թրակացու բերականության մեջ:

Էլիաս, 66, 2-6

«Եւ ոչ գրեթորոս պարտ է քնդունել, որք Հակորոչն զարանունն անուանակրանս և բայականաց: Քանզի է Փափկանէսի փափկութիւնն և Աստուածանէս յաստուոյց, իսկ բայականք՝ ի սիրելոյ սիրեմ և իմանալոյ իմաստուն, զոր պարտ է զամենայն յարանուս կրչել, իսկ նորա գոմանս անուանականս կրչեն և զոմանս բայականս:»

Քրակ., 16, 23-16, 6

«Տարանուն է որ յար յանուն ինչ բերդոցնայ է, որպիսի Տիրիճան, իրախճան: Բայածական է որ ի բայէ անանցոցնայ է, Հիրար սիրուն, իմաստուն, մարթնուն:»

¹ Նեխ. Աղոնց, Արուստ Գլխովնայ բերականի, էջ 80:

Էլիաս, 61, 21-24

«Եւ կամ քառ իրաց Հաղորդին և քառ անուան զանապանին, և լինին թարգմանութիւն՝ որպէս խաղ, զպայպը, մարտացոս, փղզպկաոր, սուտեր, նրանս:»

Քրակ., 19, 9-12

«Փաղաճուն է որ ի զանապան անուան զոնց ցուցանէ, որոն՝ խաղ, զպայպը, մարտացոս, փղզպկաոր, սուտեր նրանս:»

Նեխ. Աղոնցը, որ վերահիշյալ իր աշխատության մեջ քննություն է անել այս Հատվածները (էջ CLXX-CLXXII), մասնավոր է անում, որ Հունարեն **Θέων** և **Τρύφων** անուններն Էլիասի մեկնությունից մեջ թարգմանված են՝ Աստուածանէս և Փափկանէս, իսկ Թրակացու բերականության մեջ՝ Տիրիճան և իրախճան: Բայց Հունարեն **Ξίφος, μάχαιρα, σπάθη, δόρυ** և **φάσγανον** բառերը թարգմանված են ին՝ Էլիասի և ին՝ Թրակացու նույն երկերում միաստուակ՝ զպայպը, մարտացոս, սուտեր, խաղ և նրան: Նեխ. Աղոնցի կարծիքով, երկրորդ Հատվածում քառացի այդ նմանությունը կարելի է բացատրել երկու կերպ՝ կամ թարգմանությունները միևնույն անձի աշխատությունն են և կամ Էլիասի թարգմանք օգտված պիտի լինի Թրակացու բերականության Հայերեն թարգմանությունից: Ինչ վերաբերվում է **Θέων** և **Τρύφων** անունների տարրեր թարգմանության, նեխ. Աղոնցը Հնարավոր է Համարում, որ միևնույն թարգմանք նույն անունները կարող էր թարգմանել մի զեպարտ՝ Տիրիճան ու իրախճան, կամենալով Հայացնել Հունական այդ անունները, իսկ մի այլ զեպարտ՝ Աստուածանէս և Փափկանէս, աշխատելով պահել նույն անուններն անփոփոխ՝ Համապատասխան Հունարեն քննարկին: Կարելի այս խնդրի վերջնական լուծումը նա թողնում է անորոշ, մինչև որ երևան կզան նոր փաստեր ու տվյալներ, որոնք ցույց կտան Էլիասի թարգմանչի կախումը Թրակացու բերականության թարգմանությունից:

Քանի որ սույն իմ աշխատության մեջ ցույց տրվեց արդեն, որ Թրակացու բերականությունը Հունարան առաջին չերտի թարգմանություններից ամենահինն է, մինչդեռ Էլիասի Ստորոգյութեանց մեկնությունը որոշվեց, որպես Հունարան զգրոցի երրորդ չերտի աշխատություն, թարգմանված շատ ափսիս ու՝ մի այլ ժամանակաշրջանում, ուստի խոսք անգամ չի կարող լինել, որ

¹ Տե՛ս նաև Էլիաս, 66, 1:

Քրակացու քերականության ու էլիպսի Ստորագութեանց մեկնության թարգմանները լինեն միևնույն անձր:

Ըստ երևույթին, թարգմանուն կամ փաղաքանուն զաղափարի սահմանան հանար ընդհանուր բնութեամբ թացատրութիւն է համարվել, Քրակացու քերականության աղբյուրէն, «խաղ, զայլար, մարտացու, փաղափար, սուսեր, նրան» վերոհիշյալ օրինակը: Եւ այդ օրինակը ծանոթ է եղել նաև *Սերլ Երմիշեաց օրինակէն*: Եւ այդ օրինակը թարգմանչին, որը խոսելով թարգմանութեան մասին, ասում է՝ «Իսկ ի բացմաղանովննէ, որպէս և **սուսերն և նրան** միևնույն երկ՝ դասազան գասանէ ստորագին անուսեր» (ՎՋ 498, 9-11): Այս ընդհանուր օրինակը ցույց է տալիս միայն, որ Հունարան երկրորդ և երրորդ շրջանների թարգմանիչները ծանոթ են եղել Քրակացու քերականության Հնագույն թարգմանության, և նրանք, ինչպես տեսանք, գործ են անել Հաճախ նրա քերականական հատուկ եզրերը:

Կարևորը սակայն էլիպսի մեկնութեան մեջ ո՛չ թե այդ նմանութիւններն են, այլ նրա Հունարան լեզվի ու քերականութեան վերը նշված այն կական առանձնահատկութիւնները, որոնք ստորերում են նրան Քրակացու քերականութեան և մյուս Հնագույն թարգմանութիւններից: Այդ ակներև տարբերութիւնները նկատելի են նույնիսկ վերոհիշյալ Հատվածներում: Այսպէս՝ *βηματιχός* եզրը թարգմանված է էլիպսի մեկնութեան մեջ՝ բաշանական, իսկ Քրակացու քերականութեան մեջ՝ բաշանական, նմանապէս՝ *Հակ նախադրութիւնը* Հակորոշյալ բաշի մեջ (էլ. 55, 2) Հատուկ է, ինչպես գիտենք, Հունարան երկրորդ և երրորդ շրջանների թարգմանութիւններին, իսկ Քրակացու քերականութեան մեջ, ինչպես և Հունարան առաջին շրջանի թարգմանութիւններում, այդ նախադրութիւնը զուտ գործածական չէր: Ինձ թիում է, որ Քրակացու և էլիպսի թարգմանութեան խնդիրը ևս վերջնականապէս լուծված պիտի Համարներ այն իմաստով, որ այդ թարգմանութիւնները տարբեր ժամանակաշրջանների ու տարբեր թարգմանիչների աշխատութիւն են:

4. էլիպսի Ստորագութեանց մեկնութեան մեջ, ինչպես տեսանք (§ 44, 3), Արիստոտելի Ստորագութեանց Հայերեն թարգմանութեան բնագիրն ամբողջովին բազմած էր Յամբոլիքյան խմբի Հնագույն թարգմանութիւնից: Եւ այդ մեկնութեան Հայերեն բնագիրը բնութիւնը ցույց է տալիս, որ էլիպսի թարգմանը ծանոթ է եղել նաև յամբոլիքյան խմբի Արիստոտելի՝ «Յաղագս մեկնութեան»

գրոց Հայերեն թարգմանութեան, որից նա բազմ է Հետեւյալ Հատվածը.

էլիպս, 126, 8-11

Յաղ. մեկն., 464, 16-17

«Իսկ ներում Յաղագս մեկնութեան բան տունը զշարադրելոցն և զնշանականն. բանիցի սահմանելով ստէ, եթէ բան է **ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանակ է գասո:**»

«Բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանական է գասո:»

Արիստոտելի Վերլուծականի մեկնութեան թարգմանը ևս ունի Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» գրուածիցի Հատվածներ, սակայն այդ Հատվածները Համապատասխան չեն յամբոլիքյան խմբի թարգմանութեան:

Վերլ. մեկն., 574, 21-24

Յաղ. մեկն., 476, 29-31

«Բանիցի Յաղագս մեկնութեան ստէ, թէ Այտրիկ՝ որպէս ի վերլուծականն գոն ասացեալ, նոյնպէս դասացին:»

«Արդ այտրիկ՝ որպէս ի վերլուծականն ստի, այտպէս դասուալ է»

Վերլ. մեկն., 574, 21-24

Յաղ. մեկն., 476, 29-31

«Իսկ Յաղագս մեկնութեան այսպէս սահմանէ զնա ստելով, տրամարանական է՝ Հարցուն պատասխանույ միոյ նախադասութեան, կամ միոյ մասական Հակասութեան:»

«Արդ եթէ Հարցուն տրամարանական ըն պատասխանատուութեան է խնդրի, կամ ասարկելոյն, և կամ միոյ մասին Հակասութեան:»

Ուշադրութեան արժանի են այս Հատվածներում, զլիցադրապէս, «նախադասութեան» և «ստարկելոյն» բառերը, որոնք Հունարեն միևնույն *πρόθεσις* բառի թարգմանութիւնն են: Աստրկութիւն բառը նախադասութեան իմաստով գործ է անվել նաև *Սերլ Երմիշեաց* գրոց մեկնութեան թարգմանութեան մեջ, տե՛ս 486, 19-20՝ «ստանց նախադասութեանց կամ ասարկութեանց»:

§ 47. Պորփյուրի Ներածութեան բնագրի Հայերեն թարգմանութիւնը թիւում է թե ավելի չին է, քան Գալիթ-Սիմափողոզոսի խմբի թարգմանութիւնները: – Հունարան թարգմանութիւնների ու նրանց թարգմանիչների խնդիրը, ինչպես տեսնում ենք, շատ

ավելի բարդ ու խրթին է, քան ենթադրել է մեր մատենագրական ավանդությունը: Այդ տեսակետից, ստանձին ուշադրության է արժանի Պորփյուրի Ներածութեան թարգմանությունը, որն այդ բարդ Հարցերից ինչում է ինձ ամենազմայր:

Առաջին Հայացքից կարող է թվալ, որ այդ թարգմանությունը վերադրվելու է նույն անձին, որը թարգմանել է Գավիթ մեկնիչի նույն այդ Ներածութեան Վերլուծությունը: Վերլուծութեան թարգմանը Ներածութեան ընազրի բոլոր մեկնիչի Հատվածները բառացի ու գրեթե անփոփոխ բաղել է Հենց այդ թարգմանությունից, և այն վերջինների Հունարան բառապաշարը, ընկալաբար, ազդել է և Վերլուծութեան լեզվի վրա: Հնագույն մեծագրերում այս երկու թարգմանությունները գտնվում են իրար կից՝ նախ՝ Ներածութեան ընազիրը և ապա՝ Գավիթ մեկնիչի Վերլուծությունը: Այս բոլոր նշանները, միասին առնված, տպավորություն են ստեղծում, իբր նրանք միևնույն թարգմանչի գործ են: Մականջ այս շատ ու դյուրին ենթադրության զին մեզ գալու է նե մի շարք ծանրակշիռ կասկածներ, երբ դիմում ենք նրանց Հունարան լեզվի ու քերականության մանրախույզ ու մանրամասն բնութեան: Ուսումնասիրության ընթացքում երևան են գալիս սրանց Հունարան բառամեթոքի ու քերականական առանձնահատկությունների մեջ լեզվա-քերականական բնորոշ խտորաններ և ստրանայություններ, որոնք Հաղիվ թե որևէ այլ կերպ բացատրվեն, քան նրանց թարգմանման ժամանակի ու թարգմանների տարբերությամբ: Ներքև առաջ եմ բերում լեզվա-քերականական այդ լեզուներից մի շարք օրինակներ, որոնք Հատուկ են Պորփյուրի Ներածութեան թարգմանությանը:

1. Ուշադրության արժանի են, ամենից առաջ, Պորփյուրի Ներածութեան թարգմանության մեջ Հունարան այն առանձնահատուկ բառերը, որոնք, տարբերվելով Գավիթ-Ոլիմպիոզոսի խմբի միևնույն նշանակություն ունեցող բառերից, Համապատասխանում են, մեծ մասամբ, նախկին Հնագույն թարգմանությունների ուրույն բառապաշարին: Այդ կարգի բառերիցն են. *ա. օթթեթիածոս յեոս* վերանշյալ սեռ Ներ. 231, 4, 232, 14, իսկ գերազանցյալ սեռ ԳՊորփ. 284, 26 և այլն, 289, (= DPorph. 131, 13 և այլն, 137 9), վերանշյալ *ուեի* Տիմ. Հակ. 86 21; *բ. օթթեթիածոս* բեոս վարանշյալ տեսակ Ներ. 231, 6, իսկ ի ներքոյ տեսակ ԳՊորփ. 295, 19, 296, 7 (= DPorph. 147, 10, 148, 6), Տիմ. Հակ. *ուեի* եզի վա-

րանցանյ ի ստորադոյն մասուն երկրի ինքն է և վերանցանյ զեր զամենայն երկին» 176, 28-30, վարանցություն 177, 34¹, *գ. օթթեոս* կայուն Ներ. 228, 7, բաղազանութիւն ԳՊորփ. 273, 36, 295, 26 և (= DPorph. 111, 31, 32, 147, 15 են), Սահմ. 196, 11, 197, 12, (= DProl. 60, 27, 61, 20), *սակայն* կայուն ԳՊորփ. 331, 18, կայթ Թր. 32, 7, *օթթեոս* բառ կայուն էր. 84, 17, 18, 101, 25, 28 (= El. 167, 3, 6, 177, 16, 18), *գ. քերիպտիկոն* բաղաձայական Ներ. 233, 17, բակձայական Թր. 18, 4, բակձայելով Իրեն, Ընդ. Հերմ. 168, 6, և, *տձ օնո*, *տձ քձո* վերին, վարին Ներ. 233, 22, 35, *բայց* վերին, ներքին էր. 135, 8 են (= էր. 197, 15), *քոձ տձ օնո*, *քոձ տձ քձո* առ վերադոյն, առ ստորնադոյն ԳՊորփ. 295, 28, 30, 296, 1 (= DPorph. 147, 16, 17, 18), *գ. անաչաիոս* Հարկաւոր Ներ. 227, 3, *իսկ* կարևոր ԳՊորփ. 267, *օնոս անաչաիոս* կոյո Հարկաւորի Ներ. 227, 3, գոյով կարևոր ԳՊորփ. 267, 7², *և. քարձոստոս* յաղկանանակացութիւն Ներ. 250, 23, *իսկ քարձոստի* յարկացոյցն ԳՊորփ. 309, 16, էր. 39, 2, *նաև* Թր. 22, 14, *բ. քարձոստ* բնձնութիւն Ներ. 227, 9, գործ է ածված, զիսպօրապեա, առաջին և երկրորդ շրջանի Հունարան թարգմանություններում՝ Փիլ. Լին. Լը 412, Փիլ. էր. 444, Իրեն, Ընդդեմ Հերմ. 37, բնձնեմ Պիտ. 341, Աբ. Սա. 364, ՅՍա. 411, ՅՊեր. 522, Տիմ. Հակ. 236, 237, *իսկ քարձոստ* յարատրեմ Սահմ. 135, 23 (= DProl. 11, 5), էր. 71, 3 (= El. 153, 10), *սակայն*, *սակայնություն* էր. 103, 120 (= El. 178, 188), *բ. դիմոս* իշակել Ներ. 246, 20, 23, *իսկ* կիսիշ Սահմ. 140, 36 (= Prol. 14, 36), *ժ. տեմո*,

¹ Ըստ նախադրության գործածություն սովորական է Տիմոֆեոսի Հակաստութեան թարգմանության մեջ օրինակ՝ վայրարեսալ 143, 17, վայրարեկոյ 176, 15, վայրիկեալ 213, 17, վայրիբիկեալ 311, 21, վայրատուեալ 304, 12, վայրարեմ 198, 27, վայրիկութիւն 9, 20, 132, 33 և այլն. մյուս թարգմանություններում վաթ նախադրության գործածությունը Հազվադեպ է, տե՛ս՝ վայրարեութիւն Պիտ. 424, 9, վայրարեկոյ Պիտ. 517, 20, վայրիբիկութիւն Մկր. ի վերջ. 588, 15, պիտրիկե կամ վայրակե՛ս ՅՊեր. 513, 30:

² Ներածութեան մեջ ակոյր Հարկաւորիս թարգմանութեան, բառ երեսոյցին, խոթել է թվացել Գավիթ Վերլուծութեան թարգմանչին, «Հարկաւոր» բառի փոխարեն նա չերազանել է գործածել «բարևոր» բառը, իսկ «եյ» բառի փոխարեն՝ «զոյ» ԳՊորփ. 267: Ուշադրության արժանի է նաև Հուսեպ զարձկանքը՝ «Կարևորութեալ» որ ընդ մէջ կորի՛ վախճանի, այսինքն Հարկաւորապէս՝ ԳՊորփ. 267, 27-28:

διατρέω, τομή, τμήμα, διατρέσις Ներ. կոտորեմ 231, 20, 236, 35, 241, 22, կոտորում 233, 20, διατρέθειαι կոտորիլ Քր. 21, 14, իսկ Հատանեմ, Հատամ, Հատում, բաժանումն և այլն Գալիթ-Օլիմպիողորտոսի խմբի երկերում, ժա. *είξ, μία. Έν մο* Ներ. 233, 15, գործ է ածված Հունարան առաջին և երկրորդ շերտերի թարգմանություններում՝ Քր. 8, 15, 21, 29, Փյղ. Լին. 332, Պետ. 398, 501, 503, 527, Տիմ. Հակոմ. 65, 68, 176, 201 և այլն Հանախ, Ար. Պեր. 464, 468, մուս 468, 17, մոյր 476, 32 և այլն, ՅՊեր. 533, 547 և այլն, իսկ Գալիթ-Օլիմպիողորտոսի խմբի երկերում այլևս չի Հանդիպում:

2. Լեզվական այս նկատառումներից անկախ ավելի ևս մեծ կարևորություն ունեն ներածություններից թարգմանության քերականական առանձնահատկությունները, որոնք ունեն Հույթյան պարզ նշաններ, բնորոշ են, մասամբ, միայն այս թարգմանության Հանար և գործածական չեն այլևս Գալիթի Վերլուծության մեջ, ինչպես և Գալիթ-Օլիմպիողորտոսի խմբի մյուս թարգմանություններում:

ա. Այդ տեսակետից ուշադրության արժանի է, ամենից առաջ, սեռական Հոլովի վերջավորության բ տառը, որ գործ է ածված միայն ներածության բնագրում. օրինակ՝ կոյր ԼՋ 227, կոչեցկոյր, սեռոյր, ասացկոյր 228, Սոկրատոյր, Պլատոնոյր, մարդոյր, միայնոյր, մարդկոյր 229, և նույն վերջավորությունները կրկնվում են չարունակ ամբողջ երկում: Գալիթի Վերլուծության թարգմանության մեջ այդ վերջավորությունները Հանդիպում են միայն տեղ-տեղ՝ ներածության բնագրից բացված Հատվածներում, բայց ո՛չ բուն մեկնության մեջ, չկան նրանք և Գալիթ-Օլիմպիողորտոսի խմբի մյուս թարգմանություններում: Թեև Հունարան երկերի Հրատարակությունները դեռևս գիտական րեույթ չունեն և Համեմատության չեն առնված ձևապահական բոլոր տարրեր ընթերցվածները, բայց որքան ևս ծանոթ եմ Հազարյն ձևապահական նրանց մեջ ևս սեռականի արտասովոր այդ վերջավորությունները գտնվում են միմիայն ներածության բնագրում: Դժվար է ենթադրել, որ դրանք խնդրագրված ու փոփոխված լինեն Հնագույն ժամանակներում Հատկապես Գալիթ-Օլիմպիողորտոսի խմբի երկերում, ուստի Հավանական է թվում ինձ, որ վերոհիշյալ թարգմանությունները Համարվելու են տարրեր թարգմանիչների աշխատությունը:

բ. ներածության թարգմանությանը Հատուկ է նաև Հետևյալ

տառացի դարձվածքը՝ *έν τῷ τῆ ἔστι* թարգմանված է «ի ներում գինչև» և *έν τῷ ὁποῖον τῆ ἔστι* «ի ներում որպիսինչև» Ներ. 229, 230, 244 են: Գալիթի Վերլուծության թարգմանք, բաղադրված օտարառի այդ Հունարանությունները ներածության բնագրից, ինքը երբևից փոփոխում է այդ խթնարանությունները և նույն եզրերը թարգմանում՝ «ի ներ դինչևում» և «ի ներ որպիսինչևում» ԴՊորփ. 256, 288 և այլն, իսկ Սահմանաչ թարգմանն ավելի ևս Հայացված ձևով ունի «ի գինչևում» Սահմ. 122, նաև ԴՊորփ. 356: «ներում» և «ի ներում» Հունարանությունները մյուս թարգմանություններից և ո՛չ մեկում գործածական չեն, մի անգամ միայն Արիստոտելի «Յազագու մեկնություն» բնագրում պատահում է «ներում բարոյն» ասացուածքը, որ թվում է աղճատված կամ կասեպանի (տե՛ս Fr. C. Conybeare, *Anecdota Oxoniensia*, ԼՋ 50):

գ. Ռնչպես վերև հիշեցի (§ 44, 3), ներածության թարգմանք Հունարեն *έν* նախդրի դիմաց երկու անգամ միայն գործ է ածել նաև *ևն*՝ նախդիրը, որ սովորական էր Հունարան առաջին և երկրորդ շերտերի թարգմանություններում: Թվում է, որ ներածության բնագիրը, ունենալով քերականական յուրահատուկ կերպումներ, դերծ չէ եղել Հազարյն թարգմանությունների անմիջական ազդեցությունից՝ ո՛չ միայն իր քառապատարի (§ 47, 1), այլև քերականությունների մեջ: Դրանց փոխադարձ առնչությունը Հատկանիշներ կարող են Համարվել նաև արվեստական Հունարանությունների ու քերականական անՀարապատ մեկերի Հետևյալ օրինակները. 1. *οἱ κατὰ μέρος* քառասունեայր Ներ. 233, 12, 233, 14, 245, 29, դրստամակցն Ներ. 240, 13, 14, ի մասնէքն Իրեն. Ընդ. Հերշ. 31, միքստիտջց Ներ. 244, 30, Փյղ. Լին. 74, քստ միտջկն Տիմ. Հակ. 182, 5, քստ միտջկն Տիմ. 6, 3, քստ բոյորկն Ար. Պեր. 466, 24, դայանց Ար. Պեր. 463, 18, 22 ևն. 2. *οἱ καὶ ἕκαστον* քստ խրաբանչիւրն Ներ. 233, 13, Ար. Ստոր. 394, իսկ խրաբանչիւրն ԴՊորփ. 290, 11, 12 (= DPorph. 138, 28, 27). 3. *τὰ ἀπάλληλα* ընդմիմանարն Ներ. 232, 18, 22, 234, 3, 4, ԴՊորփ. 294, 37, 297, 27, էլ. 77, 26, 79, Ար. Ստ. 361, 7, 4. *καθ' αὐτό* քստ բաղբարևան Ներ. 235, 35, 36, գրստերանն Տիմ. Հակ. 114, 1, էլ. 81, 5, մասինցն, առաջինցն Ներ. 234, 19, 262, 37, «երկուայնց և աստուածայնց»՝ Փյղ. Լին. ԼՋ 416, անմինցն Ար. Պեր. 461 և այլն:

3. ներածության Հայերեն բնագրի լեզվա-քերականական Հե-

տագոտությունն անհրաժեշտ է ավելի ևս խորացնել, Համեմատելով Հայերենը Հունարեն բնագրի հետ¹: Բայց, կարծում եմ, որ վերոհիշյալ դիտողություններն անզամ հիմք են տալիս նեխոսոցությանը, որ այս զրգամբը թարգմանված պիտի լինի Գավիթ-Օլիմպիոսի խմբի երկերից առաջ, Հավանաբար, Հունարան երկրորդ շերտի թարգմանությունների ժամանակաշրջանում: Գավիթի վերլուծութեան թարգմանում ո՛չ թե ինքն է թարգմանել այդ բնագրերը, այլ, ըստ երևույթին, օգտվել է արդեն գոյություն ունեցող նախնադրյալ թարգմանությունից: Ես չմտնեմ, որ ունեցել է Քրակաս Քերականուխյան հետ, որի թարգմանությունը Հունարան առաջին շրջանի աշխատությունն է, մինչդեռ Գավիթը քերականի մեկնությունը, ինչպես տեսանք, ավելի ուշ ժամանակի է Հունարան այլ շերտի արտադրություն է:

§ 48. Արիստոտելի «Գաստոփիան յաղագս աշխարհի» զրգամբի Հայերեն թարգմանության ժամանակաշրջանը: — Արիստոտելյան վերագրված *Περὶ κόσμου* և *Περὶ ἀερώων* զրգամբների թարգմանությունները Հայերենում ունեն մի փոքր տարբեր վերնագրեր՝ «Արիստոտելի իմաստասիրի թուղթի առ Աղերսանդրոս թագաւոր՝ պատմութիան յաղագս աշխարհի» և «Արիստոտելի յաղագս առաքինութեանց առ Աղերսանդրոս թագաւոր»:

Այս թարգմանությունները տպագրված են վենետիկում Գավիթ Անհաղթի մատենադրության շարքում (Վենետիկ, 1833, էջ 603-628 և 629-635), սակայն առանց որևէ բավարար բացատրության, ըստ երևույթին, թյուրիմացաբար: Քրքան իմ Հայտնի է, դրանց թարգմանելի մասին չկա և ո՛չ մի վկայություն Հայոց մատենագրական ավանդության մեջ, ո՛չ էլ որևէ ակնարկ Չազույն մեծագրերի վերնագրերի մեջ: Հրատարակիչների այս պատանդն ունեցել է անսպասելի հետևանքներ: Համակերպվելով Հրատարակիչներին, Գավիթ Անհաղթի խնդրով զրազոց քանատները ևս Համարել են այդ թարգմանությունները, Արիստոտելի երկերի մյուս թարգմանությունների ու մեկնությունների հետ միասին, միևնույն Հեղինակի ու միևնույն մեկնիչի աշխատություն²: Սա-

¹ Հունարեն Հրատարակությունն իրելիս հետ թարգմանից Բազմի ավերածությունների ժամանակ, է այժմ, դրախտաբար, չունի մեղջիս խնդրի վերջնական լուսարձանության համար:

² Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վարդապետ, 1896, էջ 35:

կայն Հարեանցի իսկ ծանոթությունն այս թարգմանությունների հետ պետք է Համոզեր բանասերներին, որ սրանք, թեև Հունարան, բայց ընթերցանության մասշնչի թարգմանություններ են, ազատ լեզվական ու քերականական այն բոլոր խոզոտություններից, որ Հատուկ են, գլխավորապես, Արիստոտելի մյուս բնագրերի թարգմանություններին: Լեզվական այդ տարբերությունները նկատած են եղել Հայկադյան քաղաքի աշխատակիցները, որոնք նույն թարգմանությունների լեզուն Համարել են՝ զրա քաականին Հայկարան և քնտիր, իսկ Ստորագրություններ, Պերիարմենիան և որ ի սոցին սակի, են անպետ և անշուք Հեյնեարտնութիան նիթիական (Հատոր առաջին, էջ 10): Գրոփ. Ֆ. Կոնիերը, որ Համեմատել է Հայերեն թարգմանություններն Արիստոտելի Հունարեն բնագրերի հետ, ուշադրություն անելով սրանց ուրույն ոճը, բաժանում է այս զրգամբները Գավիթ Անհաղթի վերագրված երկերի խմբից և նրանց թարգմանման ժամանակը հետ տանում մինչև ութերորդ կամ իններորդ դար (*Anecd. Oxon.*, էջ XXXII): Վերև մենք տեսանք, որ մատենագրական Հայ ավանդությունը մեծ շփոթումներ տեղի է տվել, վերագրելով Հունարան Չազույն երկերի մեծագույն մասը Գավիթ Անհաղթի Հայ փիլիսոփային, մինչդեռ այդ զրգամբները տարբեր թարգմանիչների աշխատություն են և թարգմանված են զանազան ժամանակաշրջաններում, սկսած, Հայկանաբար, հինգերորդ դարի վերջերից և կամ վեցերորդ դարի սկզբներից: Այս երբակացության հանդույց հետո՝ պետք է այսուհետև անտես անել առասպելյալ ավանդությունը Գավիթ Անհաղթի մասին, և Հունարան ամեն մի զրգամբի թարգմանչի ու թարգմանման ժամանակաշրջանի խնդիրը որոշել Համաձայն այդ նոր եզրակացության, հիմնվելով լեզվական ու մատենագրական տարբեր կարգի փաստերի վրա: Այդ տեսակետից, «Ցազույն աշխարհի» թարգմանությունը, որպես լինելով Հունարան մյուս թարգմանությունների լեզվա-քերականական խրթին անհարթություններից, թեև Համեմատաբար քիչ նյութ է տալիս բաղադատությունների Համար, սակայն, այնուամենայնիվ, թվում է ինձ, որ նրա թարգմանման ժամանակը մոտավորապես որոշվում է: Ինչպես արդեն գիտնեք, Գալուստ Տեր-Մկրտչյանը վերոհիշյալ «Անանիա Շիրակացի» ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ այս թարգմանությունը մասնակ է Շիրակացուն, որպես գլխավոր աղբյուր

«Յաղագս չըմպայտիվեան երկնից» աշխատության Հանար (տև՛ս վերև § 36): Պարզ է որևե՛ն՝ որ այս զրգածը թարգմանված պիտի լինի յոթերորդ կամ վեցերորդ դարում, քայց ո՛չ ավելի ուչ: Թարգմանությունը չի կարող լինել Երբակացուհի, անՀափանա- կան է նաև, որ լինի նրան ժամանակակից, որովհետև, ինչպես Տիշտ գիտել է Գարուստ Տեր-Միհրոչյանը, Անանիա Երբակացին անհրաժեշտ է Հանարին փոփոխել կամ ըստ թողնել նրա Հուսարանի զփարհիսն բառերը և աշխատել է պատմել բազմաձևերը Հայերեն ավելի ևս ժողովրդի լեզվով: Որևե՛ն՝ շատ Հափանական է, որ այդ թարգմանությունը պետք է լիներ նախնադուրյն ժամանակաշրջանի աշխատություն: Ճիշտ այդ եղբակացությունը ստացվում է նաև նրա թարգմանած առանձնահատկությունների բնութագրով: Առաջ ե՛մ բերում լեզվական իմ գիտողություններից ամենակարևորները:

1. «Յաղագս աշխարհի» թարգմանությունն ունի զործածած Թրակացու քերականության Հատուկ բառերը, ինչպես՝ *ա. նոստոճ* ներկայ Ար. Աշխ. 628, 14, Թր. 22, 23, ք. *պարելիսնոճ* անցնայ Ար. Աշխ. 628, 13, Թր. 23, 26, գ. *մեճլան* ապանի Ար. Աշխ. 628, 14, Թր. 23, 26, 24, 5 են, գ. *սոնճոսոս* շաղկայ Թր. 12, 16, 35, Ար. Աշխ. 622, 6, շաղկայումն Ար. Աշխ. 624, 27, շաղկայած Ար. Աշխ. 624, 31, և, *քոիդիք* բերդող Թր. 1, 5, 2, 29, Ար. Աշխ. բերթող 619, 25, 627, 2, 17, գ. *յրաբաուտիք* քերականության Ար. Աշխ. 617, 1, Թր. 1, է, *նմեճոճ* ներդաշնակապիս Ար. Աշխ. 622, 35, 626, 34, Թր. 2, 26: Որևե՛ն՝ նրա թարգմանությունն ժամանակը պետք է ղեկն Թրակացու թարգմանությունից:

2. Նույն թարգմանությունն ունեն այն բառերն ու նախադրու- թյունները, որոնք, ինչպես տեսանք, գրծո են ավելի առաջին անգամ երկրորդ չերտի Հունարան թարգմանություններում (տև՛ս § 40 ք. 42 գ): Այդ կարգի բառերից են, *ա. տարբերությունն ծափործ* Ար. Աշխ. 613, 36, ԱՄտ. 361, 8, ՏՊտ. 496, 16, Տիճ. Հակ. 262, 31, ք. *մակացու էպոստիմոս* Ար. Աշխ. 604, 13, ՏՊտ. 422, 12, *մակացու- թիսն* Ար. Մտ. 379, 4, ՏՄտ. 418, 7, Տիճ. Հակ. 105, 27, գ. *ներՀակ նոնտոս* Ար. Աշխ. 611, 38, 616, 13, 19, 25, 617, 9, 17, Ար. Մտ. 369, 21, ՏՄտ. 413, 18, Ար. Պեր. 475, 22, ՏՊեր. 528, Տիճ. Հակ. 160, 6, գ. *Հակակայիք անուքիստի* Ար. Աշխ. 619, 1, Ար. Մտ. 396, 4, ՏՄտ. 425, 13, Ար. Պեր. 474, 12 են, *Հակակայություն* Ար. Աշխ. 617, 22, և, *արտոնությունն էջօժի* Ար. Աշխ. 621, 10, *արտունող* Ար. Մտ. 373, 20 և այլն:

Այս բառերի զործածությունը «Յաղագս աշխարհի» թարգմանության մեջ պարզ մի նշան է, քան իս, որ սրա թարգմանման ժամանակը չի կարելի ինքնին ցած Հունարան թարգմանու- թյունների առաջին շրջանը:

3. Ռշադրությունն արժանի են նաև Հետեյայ սակավազուտ բառերը, *ա. դերՀիսիական անտարկտիկոս* Ար. Աշխ. 605, 17, *անտի նախադրությունն այս թարգմանությունն առանձնահատուկ է Հնագույն թարգմանություններին Հետեյայ բառերում՝ անտոնյաճ* դերանուն Թր. 12, 15, 30, 1, դերանունություն Թր. 27, 28, 1, Փիլ. լին. 70 (Թրակացու քերականության ազդեցությունը նաև Ար. Պեր. 489, 11), *անտափոտիկոն* Թր. 18, 4, 20, 18, *անտիքրիստոս* դերա- քրիստոս Տիճ. Հակ. 37, 40, 41 են, ք. *Հոճիտ* կենդանաանակ Ար. Աշխ. 605, 27, նաև Երբ., Մամբ. ՍաՀ. կթ, արձու... կենդանակերպ Երբ., Տիճ., *իսկ կենդանակ Փիլ. կ. 521, կենդակ Փիլ. կ. 520, Պտ. 489, 16, Փիլ. քՀ., գ. քաճիտոճ, քաճիտիկոն* Ար. Աշխ. կրական 606, 31, Ար. Մտ. 388, 6, ՏՄտ. 410, 11, կրտարական Թր. 47 և այլն:

Վերահիշյալ բոլոր գիտողություններն ի մե բերելով, կարծում եմ, որ «Յաղագս աշխարհի» թարգմանության ժամանակը պետք է ղեկն վեցերորդ դարի երկրորդ կեսում կամ յոթերորդ դարի սկզբներում՝ Տիմոթեոսի Հակահատուվեան և յամբողջյան խմբի թարգմանությունների ժամանակաշրջանից պիտո մինչև Անա- նիա Երբակացու ժամանակը: Այս կրականությունը Հիշյալ թարգմանության ժամանակի վերաբերմամբ ստացվում են որոշ ու Հաստատուն սահմաններ, մինչդեռ առաջ այդ սահմանները ճուտ է կին այնքան անորոշ, որ պրոֆ. Ֆ. Կոնիբերը Հնարավոր էր Համարել Հետ տանել այդ թարգմանությունը մինչև ութերորդ կամ անգամ իններորդ դար:

§ 49. Գալիթ-Սիմախոդոսի խմբի մեկուկուսուկուսի թարգ- մանության մոտավոր ժամանակաշրջանը: Գալիթ-Սիմախոդո- ռոսի խմբի թարգմանությունները, ինչև որոշ շափոփ ենան են իրար Հունարան իրենց բառապաշարով, սակայն, ինչպես գի- տանք, չեն կարող բոլորն էլ միասին լինել միևնույն թարգմանչի աշխատություն: Որևե՛ն՝ նրանց թարգմանման ժամանակը որոշելիս՝ պետք է աչքի առաջ ունենայ, որ կարող են նրանք ևս թարգմանված լինել տարբեր ժամանակներում: Մինչ այժմ՝ արված գիտողություններից արժեք թարգմանման ժամանակի նկատմամբ պարզված միայն Հետեյայր՝ որ մեկուկուսուկուսի այս

ամբողջ խումբը, առանց բացառության, թարգմանված պիտի լինի Հունարան երկրորդ շերտի թարգմանություններից Հետո, ուրեմն՝ ո՛չ ավելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերքը: Բայց մինչև ո՛ր ժամանակը կամ զարաչքման պետք է տանել առանձին թարգմանությունները, այդ խնդիրը մտնում է մտքի ու անորոշ: Հայ բանասերներից ոմանք աշխատել են պարզաբանել այս Հարցը, որնելով սույն թարգմանություններից առնված բազմամյանք կամ որչե՛ Հնարքը յոթներորդ կամ ութներորդ դարերի մատենագրական երկերում: Սակայն ստացված արդյունքները զեռես զհատուցելի չեն:

Գալուստ Տեր-Մկրտչյանը, իր «Պետրոս Սյունյաց կախկուպոս» աշխատության մեջ (Վաղարշապատ, 1902), մատնացույց էր արել, որ «Հարցմունք յաղագս ճարմաստորութեանն Տեսոն զանգալանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի քստ Պորփյուրի Միւնեաց կախկուպոսի և իմաստասիրի» գրվածքը ծայրեծայր ներշնչված է արխատուկյան փիլիսոփայությունը: Բազդատություններից պարզ երևում է, որ այս գրվածքի Հեղինակին ծանոթ են եղել Հատկապես Գավթի Սահմանաց գիրքը և Պորփյուրի Վերլուծությունը: Սակայն Վաչագանի Հարցումները, ինչպես երևում է Գալուստ Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությունից ո՛չ մի զեպարում չեն կարող վերագրվել Պետրոս Սյունյաց կախկուպոսին, այլ, Հավանաբար, ծագած պիտի լինեն Հայ և աղվան կրոնական վեճերի ժամանակ VIII-X դարերում: Սահմանաց և Պորփյուրի Վերլուծության ակնբեր Հետքերը Հարցումներում՝ նրանց թարգմանման ժամանակաշրջանի վերաբերմամբ՝ շատ բիշ քան են ավելացնում մեր գիտցածին: Արդևն իսկ Հայտնի էր, որ Գրիգոր Մաղխարոսի «սա վարդապետն Սաղիս» գրված թղթում Հիշված կան և Գավթի փիլիսոփան և Սիմպղոզոսի գրվածքը, որի թարգմանությունը նա վերագրել է «թարգմանչացն»¹:

Էջմիածնայ մատենադարանի թիվ 596 ձեռագրում (« Մալք ցուցակ, թիվ 582) Անանիա Նիրակացու «Յաղագս Հարցման և լուծման» գրվածքը, ինչպես նկատել է դարձյալ Գալուստ Տեր-Մկրտչյանը², ունի Հետևյալ ստաջարանը, որ գրեթե բառացի չաղված է Պորփյուրի ներածութեան բնագրից.

Ներած. Պորփ., 227

«Ձեռնեայնն[ն] սացա իմաստունն[ն] թէպէտես սակաւ ի բացմաց, եթէ զինչ ընդունելութիւնն, զինչ թաղմագատիկ և ընդորովին յաղագս բամանեանց և ապացոցից՝ պիտանացու էրդ սոցայն տեսութեանց: Համաստա չեղ ընծոտիթիւն ստնելով՝ փորձեցայ ի ձեռն սակաուց՝ իր ներածութեան յեղանակի՝ զստ ծերունեացն սեցանելով բանի, ի խորագոլեկն ի բաց կայ ի խնդրոց և պարզագունեկն չափաւորապէս Հանդիպելով: Արդ ստեղն իսկ փաղագակի յաղագս Հարցման և լուծման...»:

Ձեռ. թիվ 596, էջ 185ա

«Ենչոր Հարխարի, Քրիստաորի, և յասն Արխատուկի ստորոգութեանցն վարդապետութիւն, գիտել՝ զինչ սեռ և զինչ ստորութիւն և զինչ տեսակ, զինչ ատուկ և զինչ պատահումն ի նահմանացն քաջատրութիւն և ընդորովին յաղագս բամանեան և ապացոցի պիտանացոյի կոչ սոցայն տեսութիւն, Համաստա չեղ ընծոտիթիւն ստնելով՝ փորձեցայ ի ձեռն սակաուց իր ներածութեան յեղանակի զստ ծերունեացն սեցանել բանի, ի խորագոլեկն ի բաց կայ ի խնդրոց՝ և պարզագունեկն չափաւորապէս Հանդիպելով: Արդ ստեղն իսկ փաղագակի յաղագս սեռի և տեսակի...»:

Այս ամբողջ Հատվածը չունի սակայն էջմիածնի մատենադարանի Գեորգյան ցուցակի թիվ 267 ձեռագրի, որը սկսվում է ուղղակի Հարցումներից: Գալուստ Տեր-Մկրտչյանը վավերական է համարում այս վերջին ձեռագրի սկզբնափորձությունը և ենթադրում, որ ո՛չ ինքը Անանիա Նիրակացին, այլ մի ուրիշը՝ Պորփյուրի ներածության վերոհիշյալ Հատվածը կամեցել է Հարգանքնեկ Հարցումներին, իրեն ստաջարան: Լինելով Հետագա ժամանակների Հավելված, այս թաղվածքը չի կարող, ուրեմն, ներածութեան թարգմանման ժամանակի համար ունենալ որևէ նշանակություն:

Պորփյուրի ներածութեան նույն Հատվածից, թվում է ինձ, որ օգտված պիտի լինի Գավթի Հարբաջին դավանաբանական փորթի իր գրություններից մեկում, որը Հրատարակել էր «Արարատ» ամսագրում Գարեգին վրդ. Հովսեփյանը (1906, մարտ, էջ 261-272):

Այս գրությունը, ինչպես երևում է նրա վերնագրից, գրված է Անաստաս կաթողիկոսի (661-666) Հրամանով և ունի սկզբում

¹ Տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մաղխարոսի թղթերը, Անքնատեղապատ, 1910, էջ 66:

² Անանիա Նիրակացի, Վաղարշապատ, 1896, էջ 11-12:

Հետևյալ Հատվածը՝ «**Քայց նախ արդէն իսկ Համառօտ ընծառութիւն անկեղծ**, զի ոչինչ իմ նախ: քան զմիշտ Լակն իմացնայ» և այլն (Լ, ք 269): Ներածական բնորոշ այս դարձվածքը Հիշեցնում է Պորփյուրի Ներածութեան Հատուկ առաջարկներ և կարծում եմ, որ նմանությունը կարող է պատահական չլինել, այլ վերաբարձելու է Ներածութեան ընտրող ազդեցությունը: Ե՞նէ այս ենթադրությունն ընդունելի Համարովի, այդ ղեկավար՝ Պորփյուրի Ներածութեան ընտրող ծագման ամենավերջին սահմանը դրվելու է յոթներորդ դարի վաթսուհակն թվականներին:

Պորփյուրի Ներածութիւնը կարող է լինել, ինչպես տեսանք, Հունարան Չազույն չբժանի թարգմանություն: Հետևաբար՝ նրա թարգմանման ժամանակի որոշումը չի պարզում նույն խնդիրը նաև Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունների նկատմամբ: Եվ այս վերջին խնդիրը մնում է նորից ուսումնասիրության ու լուսարանության կարոտ:

Պորփյուրի թարգմանչի երկասիրությունները ևս, ինչպես գիտենք (տե՛ս վերև § 35), ունեն արխատոսկյան երկերի ազդեցության բազմաթիվ Հետքեր: Այդ ազդեցությունը լուսարանող վերահիշյալ օրինակներին կարելի է ավելացնել նաև Հետևյալ ընդարձակ Հատվածը, որ, ըստ երևույթին, Պորփյուրը բաղել է Պորփյուրի Ներածութեան Հայերեն ընտրիցը.

Պորփյուրի Լ, ք 19

«Զի բնութիւն պարունակող է պարունակելոյն ի նմանն և ոչ ի նոցանէ պարունակեալ, զի թէ ի բաց բարձրն զատուի, Հանուրն ոչ լինի բաց բարձրայ, իսկ Հանուրն շարաբառակալով, բառնակի բնչ նմին ևս ոմն»: և այլն:

Պորփյուրի ին այս և ին մյուս Հատվածներում պարզ նկատելի են, զլուսավորապես, Պորփյուրի Ներածութեան ու յամբողջրան խմբի թարգմանությունների ազդեցության Հետքերը, իսկ ինչ վերաբերում է Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնություններին,

Ներած. Պորփ., 242¹

«Մակ տեսակնն պարունակին և ոչ պարունակնն զսեռն. քանզի յո՛րով սեռն քան գտեսակն է... և յառաջադոյր բնութեամբք սեռնն է շարաբառան, այլ ոչ շարաբառնին»: և այլն:

նրանց Հետքերը Պորփյուրի երկասիրություններում շատ անորոշ են ու վիճելի:

Ինչպես տեսնում ենք, Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունների Համար ղեռնա չի Հաջողվել գտնել Հաստատուն մի կտման, որով կարելի լիներ որոշել նրանց ծագման ճշգրիտ ժամանակաշրջանը: Առայժմ պարզ է մնացն այսօրին, որ դրանք թարգմանված են ո՛չ ավելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերում, բայց, անկասկած, Վաչագանի Հարցումներից առաջ, որևէ, Գաւրուտ Տեր-Մկրտչայի կարծիքով, Հորինված պիտի լինեն VIII-X դարում: Այս սահմանները շատ են ընդարձակ ու անորոշ: Մակայն մի խիստ կարևոր Հանգամանք, որ սերտ առնչություն ունի մեկնությունների այս խմբի ծագման Հետ, թվում է ինձ, որ մտավոր կերպով որոշում է նրանց թարգմանման ժամանակաշրջանը:

§ 50. Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունները թարգմանված են, ըստ երևույթին, երկարակա Հայերի միջավայրում և, ամենայն Հավանականութեամբ, ութերորդ դարից առաջ: – Վերև թնուցիկ կերպով նշարկված էր խիստ կարևոր մի խնդիր (տե՛ս § 42 և), որ յամբողջրան խմբի իմաստասիրական երկերը թարգմանված պիտի լինեն Տիմոթեոս Կուղի Հակահատութեան թարգմանման ժամանակաշրջանում, Հավանաբար, միաբնակ կուսակցության միջավայրում: Իսկ Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունները, լինելով իմաստասիրական մի այլ դպրոցի և ուրիշ Հեղինակների գրգռածների, կարող են թարգմանված լինել երկարակա կուսակցության միջավայրում: Այս խնդրի վրա արժև մի փոքր երկար կանգ առնել, որովհետև, ե՞նէ այս ենթադրությունը Հաստատովի, մատնազրական մի շարք Հարցերի Համար կացա՛վեն բոլորովին նոր Հեռանկարներ: Կորոշվի մտավոր կերպով Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունների զարաշրջանը, Գավիթ ԱնՀաղթի մասին Հորինված առասպելական պատմությունը կուսանա բոլորովին նոր լուսարանություն, վերջապես՝ այս նոր ենթադրությունը կարող է որևէ կերպ առնչություն ունենայ և Ռորենացու խնդրի հետ:

Աղբ՝ կա՞ արդյոք Գավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում որևէ մի նշան, որով Հաստատվեր նրանց ծագումը երկարակա Հայերի միջավայրում: Ինձ թվում է, որ այդպիսի մի նշան կարող է Համարվել Գավիթին վերաբարձված «Առածք Հինգ» գրությունը (տե՛ս Գաւթի Անչաղթի մատնազրույթներ, Վենետիկ, 1833, Լ, ք

¹ Հմմտ. նաև Ներած. 243, 24-28, 241, 25-32, 246, 11-12, ԳՊորփ., 299, 2-19:

217-222); Այս գրութիւնը, թե՛ իմաստասիրական գաղափարներն իր սահմանումներով և թե՛ Հուսարան ամբողջ իր բառապաշարով, այնքան մտտ և ու շանապատասխան Գալիլի Սահմանաբան իմաստասիրութեան և Վերդուծութիւն Պորփյուրի թարգմանութիւններին, որ ո՛չ մի կապած չի կարող լինել, որ նա խմբակից է այս վերջին թարգմանութիւններին: Կարող է միայն Հարց լինել, թե արդո՞ք սրա Հեղինակը նորպատանական Գալիլի մեկնիչն է, թե մի այլ Հեղինակ: Բայց այդ Հարցը որևէ նշանակութիւն չունի այն խնդրի նկատմամբ, որ այժմ բնվարել է:

Վերոհիշյալ գրութիւնը նպատակ ունի բառ իւր բացատրելու արխատուելյան իմաստասիրութեան տեսակետից՝ «քրտութեանց» այն շարաբատիկ խնդիրը, որ մոլորանդ թշնամութեան և բրիտանական եկեղեցու պատակման գլխավոր պատճառը դառաւ: Առաջին երեք առանձները, բառ երևույթին, նախապատրաստական տեսութիւններ են, որպէսզի Հասկանալի լինեն վերջին գլուխները, որոնց վերնագրերից իսկ պարզ երևում է գրութեան բուն նպատակը: Այս վերջին, չորրորդ ու Հինգերորդ գլուխների վերնագրերն են. «Ջիւն՝ մի իցէ գոյացութեան և բնութեանն, և Ե՞՞ք այնորիկ, որք միոյ ասին գոյացութեան և բնութեանն» (ԼԶ 207-221) և «Թէ կարող գո՞՞յ իւրաքանչիւր որ յանՀատիցն մի բնութիւն գոյ և սակի» (ԼԶ 222):

Չորրորդ գլխում՝ մի բնութիւն է վերագրվում բնդհանուր բնագորական սահմանին, թե այն զեպրում՝ երբ այս վերջինը պարզ իրի սահման է, և թե այն՝ երբ նա գորութեամբ շարագրական է: Այս բացատրութիւնը, որ Հատուկ է արխատուելյան իմաստասիրութեան, «քրտութեանց» դալանարանական վեճերի տեսակետից անքան էլ կարեւոր չէ: Սակայն եռույն գրութեան վերջին գլուխը վերաբերում է ամբողջովին «քրտութեանց» կրեան-գրականական բուն Հարցին: Այդ շարժական նշանավոր Հատվածը, որ ուշագրութեան չի առնվել Հայ բանասերների կողմից, անՀաժեշտ եմ Համարում առաջ բերել առանց կրճատումների.

«Թէ կարող գո՞՞յ իւրաքանչիւր որ յանՀատիցն մի բնութիւն գոյ և սակի».

Արդ անՀատիցն բառ նմանութեան միարանութեան, ոմանք պարզակաւք բնութեանց գոյ, և ոմանք շարագրականք: Արդ պարզականացն անՀատից յապաղումս կալցի բանս, զի ոչ է առաջիկայիս գիտաբարութեան, իսկ վասն շարագրականացն ասացուք, և թե ոչ արարողք գոն մի բնութիւն սակի և գոյ: Նախ

զի մի բնութիւն ասացար զբնդհանուր բնութեան սահման, իսկ անՀատն՝ ոչ բնդհանուր, այլ մասնական:

Երկրորդ՝ ո՞չ ապաքնէն ցուցար յառաջագոյն զանՀատն միոյ սակի բնութեան Հանդերձ այլովք անՀատիւք, նոյն և մի գոյ սակի բնութիւն: Իսկ երրորդ գայն ասացուք զամենայն շարագրական մի բնութիւն, նոյն արարող գոյ բնութիւն: Իսկ զանՀատն ոչ նոյն արարող, այլ նոյն եղևալ Հանդերձ այլովք անՀատիւք, արդ զիա՞րդ սակի գոյ մի բնութիւն: Չորրորդ՝ առ այսորիւք ամենայն շարագրական մի բնութիւն գորութեան ունել բնութեանց գա՛նադանութիւնս տեսակաց, իսկ անՀատն արդևամբ, որպէ՛ս Պահոս անՀատ գոյով գ՛ողին և գ՛մարմին: Հինգերորդ՝ ամենայն մի բնութիւն տեսակ բնութեանց գոյ, և բառ յոյովից բերիլ թուով զանագանցելոց, իսկ անՀատն զիա՞րդ արդեօք լինիցի տեսակ, և բառ յոյովից բերիցի: Արդ ոչ գոյ կարող մի բնութիւն սակի և գոյ, զի ասացաւ իսկ վաղ ուրեմն, թէ որք միանգամ ոչ ունին գոյի սահման, այնպիսին և ոչ նոյնք սայն գոյ երբէք ուրբեք՝ (ԼԶ 222):

Բովանդակութիւնուն այս Հատվածի, կարծում եմ, որ շատ պարզ է: Մի բնութիւն կարելի է սակ բնդհանուր գաղափարների վերաբերմամբ՝ սեփ, տեսակի, նաև բնագորական սահմանի, երբ նա շարագրական է գորութեամբ, ինչպես ծարղ բնդհանուր գաղափարը, բայց անՀատների նկատմամբ՝ Պոզոս, Պետրոս և այլն, մի բնութիւն չի կարելի սակ:

Նույն այս խնդիրը բնութեան է առնված ութերորդ գարում Հակաբաղկեզնական Հայ իմաստասերների գրվածքներում, սակայն եզրակացութիւնն այնտեղ ուրիշ է: Օրինակ՝ Ստեփանոս Սյունեցին «Առ Տէր Գերմանոս» գրած իր թղթում նույն Հարցի առթիվ ասում է՝. «Ջի թէ զթիւ բնութեանց սոցնս ի վերայ Բրիտանոսի, Հարկաբարապէս միջք յայտոսիկ, կամ երկուս սակի բնութիւն, կամ ի ներքոյ անկանել յառաջասացելոց աստուածամարտից, և կամ գոմոխսելի սակի, սպա թէ ոչ Հուսանել պարտք ձերոց ճարտարաց, զի ի կենդանույն զայլութեամբ զանագանալանարն տարբերապէս՝ սեռս և տեսակս անտանելցին, և գտնու Հասարակ մի բնութիւն, և անՀատն թուով ի բազումս կոտորեալ: Իսկ ոմն յերկուց անձնաւորեալ, մի ասացաւ բնութիւն, որ-

³ Տե՛ս նաև «Ստեփանիկ Թարգմանի և երկասիրութեանք տրիվն», ԼԶ 38-40 և «Գիրք թիցոց», Սահակայ Հայոց կաթողիկոսի բնդգն երկարանկալ նետարականաց, ԼԶ 434:

պէս մեկնել Յիւրիպոլիէս Ամենայնի, զպարզան անուանն զսր-
մանեալսն յԱրիստոտէլէ, առացեալ Էղջերուաբաղս ի Սոորո-
զութիւնսն, ո՛չ միայն ի վերայ պարզիցն առ, այլ և զշաղա-
շարարար կապակցեալսն մի առկի բնութիւն» և այլն («Գիրք
Յիցնոց», Քիֆիլիս, 1901, էջ 383-384):

Այս Հատվածում, «Առածք Տոբի» Հակառակ, «դո՞ւն յերկուց
անձնաորեալ», այսինքն՝ ռոմ ժողովի կամ անձանքեր, Պոզոս,
Պետրոս ևն, որ այդմամբ շարդարական ևն, Համարում են մի
բնութիւնն ունեցող: «Առածք Տոբի» Հեղինակը և Ստեփանոս
Մելիսեցին, ինչպես տեսնում ենք, «քննութեան» միևնույն խնդիրը
մեկտեղում են բոլորովին այլ կերպ. առաջինը՝ Համապատասխան
բաղկերկրանական երկարնակ զավանուիթյան, իսկ երկրորդը՝
Հակաբաղկերկրանական միարնակ ուսման Համաձայն:

«Առածք Հիւզ» գրութեան այդ բնույթն արեւան պարզ է, որ
կարտու չէ երկար լուսարանութեան. պետք է միայն զարմանալ, որ
նա Հետագա դարերում վրիպել է Հակաբաղկերկրանական Հայ եկե-
ղեցականների ուշադրութիւնից և պաշտպանվել, զրեմե անա-
դարտ, Դավիթ Անճաղթի բազմաթիվ ձեռագրերում: Ըստ երեսու-
թին, Հայ եկեղեցականները չեն Հասկացել նրա բուն իմաստը,
որովհետև զրգմանք արտաբնուստ փիլիսոփայական է և ո՛չ զա-
վանարանական:

«Արտաբնույթն նոր լուսարանութիւնն արժանի է ամենայտը՝
ուշադրութեան, որովհետև, ինչպես տեսանք, նոր այս փաստի
Հետ սերտ կապով են մատնեալգրական մի շարք ուրիշ Հարցեր:

Ի նկատի առնելով այս նոր բացատրութիւնը, թվում է ինձ,
կարելի է նեմադրել, որ «չինչ առածք», ինչպես և նրան
խմբակից Դավիթ-Սիմանիողորսի մեկնութիւնները, թարգման-
ված կարող են լինել VI-VII դարերում, կրոնա-դավանական մեծ
կոթմաների ու պատակաբանների ժամանակ, վեցերորդ դարի վեր-
ջերից ո՛չ առաջ և, ամենայն Հավանականութեամբ, մինչև յոթմե-
րորդ դարի վերջերը:

Շնչզգծված այդ ժամանակաշրջանում նրանք թարգմանված
պիտի լինեն, ինչպես տեսանք, տարբեր ժամանակ և վերաբրվելու
են տարբեր թարգմանիչներին: Հունարան թարգմանութիւնների
այս երրորդ շերտի մեջ Շապուշն ևն, բառ երևութիւն, Դավիթի
Մահմադը և Ներսանութեան Աբղուծութիւնը, իսկ նորագույն՝
Էլիսաբէր Ստորգրութեանց մեկնութիւնները: Ուրեմն՝ մտաովոր
կերպով որոշվում է և այս խմբի թարգմանման ժամանա-

կաշրջանը, թեև ո՛չ արեւան Հաստատ, որքան մյուս խմբերինը,
բայց անհամեմատ ավելի Հիմնավորված, քան մինչև այժմ: Բացի
թարգմանման զարաշրջանի մտաովոր այս որոշման, կարծում են,
որ պարզվում է այժմ, թե ինչո՞ւ սրանց ծագման ու Հեղինակի մա-
սին ստեղծվել են Հետոհետև մտացածին զանազան ավանդու-
թեանքներ, որոնք Հավաքված ու ամփոփված են «Սրբաց վարդա-
պետացն Հայոց Մովսէս և Դաւիթի Հարցմունք ընդ երկարնակ
շարափոսուն» Հայտնի զրգմածում: Մագա՞ծ լինելով երկարնակ
Հայերի միջավայրում, շատ ինքան է, որ նրանք չէին կարող
ընդունելի ու Հանդուրձելի լինել Հակաբաղկերկրանական Հայերի
չրբաններում: Հարկավոր էր անհաճո այդ փաստը մտացութեան
տայ, և Հետագայում, գիտակցարար կամ թերևս անգիտակցա-
բար, Շուարփում է Հերիախանման մի նոր ավանդութիւնն, որը բո-
լոր այդ երկերը վերադրում է Մահակ-Մաշտոցի աշակերտ՝
Դավիթ Անճաղթի Հայ փիլիսոփային: Կրոնական տեսակետից այդ
թարգմանութիւնները չէին կարող այլևս անհանդուրձելի
Համարվել, որովհետև վերահիշյալ Հարցմունքներում Դավիթ
Անճաղթը և նրա ընկերակից Մովսես Քերեթողաճայրը, լինելով
պաշտպան ու ջատագով Հակաբաղկերկրանական զավանութեան,
բանակերիվ են մղում Հեղինակավոր երկարնակ եկեղեցականների
Հետ և նրանց բոլոր առածները Հանդուրձեցանք Հերբում:
Շեշտելով առանձին Դավիթ Անճաղթի ուղղափառ ու Հակա-
բաղկերկրանական լինելը, Հարցմունքները կարծես թե Հատուկ
նպատակ ունեն խապառ ժխտելու թարգմանութիւնների ծագման
իրական փաստը:

Առասպելական պատմութիւնը Դավիթ Անճաղթի մասին,
ինչպես տեսնում ենք, ստանում է ուշադրավ մի նոր բացատ-
րութիւն և լուծվում Հայոց մատնեալգրութեան բազմադարյան
զաղտնիքներից մեկը, որի Հետ սերտ կապված է և Մովսես Քեր-
եթողաճը լինելը: Ըստ ունեմ, որ այս ուղղութեամբ կլինեն նոր
ուսումնասիրութիւններ, որոնք, թվում է ինձ, վերջնականապես
պիտի Հաստատեն կարևոր այս կերակացութիւնը:

§ 51. Թրակացու ընրականութեան Դավիթ ու Անանունի մեկ-
նութիւնները, նրանց Հեղինակները և ծագման զարաշրջանը: —
Թրակացու ընրականութեան Հնագույն մեկնութիւններն են
Դավիթ ու Անանունի երկերը, որոնք գիտական ամենամեծ
խնամքով ու ճշտութեամբ ուսումնասիրել և ճշտարակել էր
Երկ. Արդնցն իր «Արուեստ Գիտմանայ ընրականի և Հայ մեկ-

տաճարներն» աշխատության մեջ: Այս մեկնություններն ուսումնասիրելիս՝ Ե. Աղոնցը հարց էր հարուցել, թե արդո՞ւր այս զրգածչներից Գալիթի մեկնությունը թարգմանված չէ՞ Հուսարևնից, ինչպես արհատուցանյա մեկնությունները: Իր զիտողությունների ամփոփման մեջ նա տրամադիր է ենթադրելու¹, որ սրա Հեղինակը, Հափանարար, հայ է եղել, որը մեծ շափոփ օգտիկ է Թրակացու քերականության Հունական մեկնություններից: Այդ ենթադրությունը թվում է ինձ Հիմնադր: Բացի ն. Աղոնցի նկատած նշաններից կան ուրիշ ևս ուշագրավ տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Գալիթի մեկնությունը հայ Հեղինակի զրգածք է և ո՛չ թարգմանություն: Թրակացու քերականության Հունարեն բնագիրը, ինչպես Հայտնի է, Հայերենի մեջ մի բանի տեղ սխալ է թարգմանված, այսպես՝ **κατάληψις**, որ նշանակում է «Հատողություն», թարգմանված է «բնորում» (Թր., էջ 42, 16), **ποσότης** «որակություն» թարգմանված է «բերդություն» (Թր., էջ 31, 22): Արդ՝ այս սխալները տեղ են գտել Գալիթի քերականության մեջ և առիթ գտել նաև Հետևյալ սխալ մեկնությունների. Գալ. փիլ. մեկն. քերականին, էջ 81, 3-5՝ «Բակ է թողմանը նախակրթնայն՝ որպիսի ինչ. զի զոր ինչ եզիտ որ կրթելով, և յալմն ևս մաացելով, զինի իւր կեղծ ապագային»։ Գալ. մեկն. քերականին, էջ 119, 21 – 120, 3՝ «Երբերդությունան, որպիսի մուրցածի, ծղացի, արացիդ՝ յայտնի է. իսկ ողբուգարելնդ և տարմարար՝ զոր քերդեալ ի խտուժննէ՛ պատերազմիկ գարունը երթալոց, իրր թէ տարմարար երթային և ողբուգարէն»։ Եթե՛ն Գալիթի փիլիսոփայի քերականության մեկնությունը թարգմանված լիներ Հուսարևնից, պարզ է, որ Թրակացու բնագրի թարգմանության սխալները չէին կարող կրկնված լինել այդ մեկնության մեջ:

Ընդունելով այս զրգածրը հայ Հեղինակի աշխատություն, կարող ենք ներակայանել, որ Գալիթի փիլիսոփան, որը զրկ է քերականի այդ մեկնությունը, ամենայն հավանականությամբ, հայ Հեղինակ է: Ռեան՝ որդշվում է Հունարան զպրոցի հայ մատենագիրներից գուն մեկը, որն բառ կրեությունի, այդ զպրոցի Հայտնի զներբերից է, մտազբերում էլ անվանվում է հաճախ «տառանձն Գալիթի փիլիսոփայ» (տե՛ս «Արուեստ Գիտնիսեայ», էջ 79, ծանոթ. 2):

Անանուն Հեղինակի մեկնությունը ևս, ինչպես երևում է նրա րոպանդակությունից, Հայերեն զրգած աշխատություն է և ո՛չ

¹ Տե՛ս Ե. Աղոնց, Արուեստ Գիտնիսեայ, էջ CLXXXIII.

թարգմանություն Հունարևնից: Ե. Աղոնցը տրամադիր է կարծելու, որ այս մեկնությունը կարելի է վերադրել Մամբրե վերածնողին, որին մատենադարական ավանդությունը հիշում է, որպես ընկերակից Գալիթի ու Մովսեսի (տե՛ս «Արուեստ Գիտնիսեայ», էջ CXIII–CXIV): Մակայն առաջալցյալ ավանդությունն մեջ Գալիթի ու Մովսեսի ընկերակից են Համարվել քաջի Մամբրեից նաև «Նետորն Արբա՛հան և սոցին նմանակիցն Պոզոս»¹, որևն՝ Անանունի մեկնությունը հնարավոր է վերադրել նաև սրանց: Այս խնդիրը, ինչպես տեսնում ենք, մտած է անորոշ և չի կարող, իհարկե, լուծվել առանց որևէ զրգանք վկայության:

Աղբյուրի մի վկայություն, ապին ճիշտ մի ակնարկ կարծես թե կա Համան Արևելցու քերականի մեկնության Հետևյալ Հատվածում. «Ճամպոխր ծննդագործը քան և զծննդոցն չափան ներստնու և իբրնաղիր առածութեամբ զարդարեալ ունի զկամաւոցն խոսից: Այսորիկ եզիցի ի մեզ առողման գործի և քննութեանց զէն և քերդողութեանց զգեւես և նախակրթութեանցն սեղան և խոսիացն բաժակ և կարողացն ճոխութիւն և ճնանկանացն իմացական ասնք և ստուգականացն Հետևումն ազիւ և կենդեցականաց վանդ իբարդոր սեղանականաբ և աստուածարականացն մեկնոց փոքր և Համարակացն վայելուչ զարդ և մեզ ստորապայծառ պատմունակք անզին ի Գալիթ և ի Պաղոսէ հրաւցացան և որ ի տերութեան ի պատի ի Քրիստոս, ունիք զկեցան յանձնաղոց» («Արուեստ Գիտնիսեայ», էջ 270): Համան Արևելցին յուրահատուկ մեծով քաջատրում է այս Հատվածում նախադրությունների կարևորությունը: Հատվածի վերջում նախադրությունները նա անվանում է «ստորապայծառ պատմունակք անզին», որ «ի Գալիթ և ի Պաղոսէ հրաւցացան»: Արդ՝ ո՞ւմ է վերաբերում Համան Արևելցու այս ակնարկը, Գալիթի մարդարին ու Պոզոս առաջալի՞ւն, թե քերականության հնագույն մեկնիչներին: Երկրորդ ենթադրությունը կարծես թե ավելի մոտ է Հատվածի իմաստին, որովհետև զի՞մար է Հասկեալ, թե ի՞նչ կապ կարող են ունենալ նախադրությունների հետ Գալիթի մարդարեն և Պոզոս առաջալից: Այս նոր յուրաքանչյուրություն՝ վերը հիշատակված Գալիթից, բառ կրեությունի, քերականի մեկնության Հեղինակ Անանունը Գալիթի փիլիսոփան է, իսկ Պոզոսը, ամենայն հավանականությամբ, Հեղինակ է մյուս հնա-

¹ Տե՛ս Գ. Սրվանդեանց, Չոց և նորոց, էջ 45:

գույն մեկնություն: եթե այս ենթադրությունն ուղիղ Համարվի, Անանյի մեկնությունը Հավանական կլինի վերադրել ո՛չ թե Մամբր վերձանողին, այլ Պոզոս մեկնիչին, որը Մովսեսի ու Դավիթի Հարցմունքներում Հիշում է, իբրև «մանասկեց» Դավիթ փոխադասի, Մովսես Քերթնողահոր, Արքահամ Հետտրի և Մամբրե իմաստասերի:

Ն, Աղոնցն իր ուսումնասիրության մեջ աշխատել է որոշել այս մեկնությունների ծագման ժամանակը և իր եզրակացությունների բնոչհանրոք ամփոփման մեջ կարծում է, որ Դավիթ ու Անանյունքի մեկնությունները, լինելով ավելի հին, քան Մտեփանոս Մյունսցու և Մովսես Քերթնողի Համապատասխան մեկնությունները, զբված պիտի լինեն, քան երևույթին, յոթներորդ դարում (տե՛ս «Արևուստ Գիտնական», էջ CXCIII): Հունարան գաղտնի զարգացման ընթացքը և Հունարան երկերի երեք տարբեր շերտեր պարզելուց Հետո, թվում է ինձ, որ Դավիթ փոխադասի ու Անանյունքի ժամանակը Հարավոր է այժմ որոշել ավելի հիմնավոր ու Հաստատուն կերպով, քան այդ արված էր բանասիրական նախորդ ուսումնասիրություններում:

Դավիթ փոխադասի բերականի մեկնության մեջ կան Հետևյալ Հատվածները, որոնք բազմաձև են յամբողջյան խմբի երկերից.

Դավիթ փոյ, էջ 102, 8-10

Վեակ Արիստոտելս գտորասութիւն եւ զրացատիբիւն եւ զրացերևութիւն ընդ անուան եւ ընդ բաշխ սասց Հինգ զոյ:

Դավիթ փոյ, էջ 109, 11-15

Վե Հունանուն լինի քստ պատահանս եւ քստ մտածութեան, պատահանամք՝ յորժամ երկուց իրաց նոյն զիպեսի անուն տիրական եւ անասական, արժուի, թոչուն եւ արժուի՝ լինումս փայտից, իսկ մտածութեանք՝ քստ պատուոյ, քստ յուսոյ, քստ աղտից եւ այլոցն եսս):

Արիստ. Պերիարժ, էջ 461

Վե սա արժան է զեկ, զի՛նչ է անուն, եւ զի՛նչ է քայ. սպա զի՛նչ է քացատիբիւն, եւ ստորասութիւն, եւ քացերևութիւն, եւ քանս):

Յամել, Ստոր, 1

«Հունանունութիւն լինի քստ երկուս յեղանակս՝ քստ պատահանս կամ մտածութեան քստ պատուոյ, քստ յիշատակի, քստ աղտիցն, քստ կերպարանի քստ նմանութեան»:

Դավիթ փոյ, 80, 10-12

«Բայց ի Հարցման ուրուք զասանս արուստի, զոր արինակ կեկտ սայեկ որ, զինչ է մարդ լիով պատասխանեալ ասէ, «Եկեղականի բանար մահկանացու»):

ՏՍտոր., 2և, Թիվ 1894

«Իրր թէ սայեկ որ զմարդ կեկտականի բանար մահկանացու» (զգ. զ. **Նանս յաջ. զղայց. Ժ.** «մարդ զոյացութիւն իմն նշանակէ ոչ փայտազար, այլ զոյացութիւն կեկտականի բանար մահկանացու»):

Համարելով այս Հատվածներից առաջինը բազմաձև Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» թարգմանությունից, Ն. Աղոնցը կարծում է, որ Դավիթ փոխադասի մեկնության մեջ այդ Հատվածը կարող է լինել բնօրինակություն²: Սակայն, ինչպես տեսնում ենք, կան և ուրիշ Հատվածներ, որոնք կապ ունեն Յամբողջութի Ստորգութեանց մեկնության Հետ: Ռատի՛ անհավանական է ինձ թվում, որ վերոհիշյալ Հատվածը Դավիթ մեկնության մեջ լինի բնօրինակություն, այլ պետք է ենթադրել, որ Դավիթ փոխադասի, ծանոթ լինելով յամբողջյան խմբի թարգմանություններին, օգտվել է նրանցից իր մեկնության այն մասերում, որոնք որոշ անշուրթյուն են ունեցել արիստոտելյան իմաստասիրության Հետ:

Այս ենթադրությունը խիստ կարևոր է Դավիթ փոխադասի ժամանակի որոշման Համար: Յամբողջյան խմբի երկերը, ինչպես փոստեր, Հունարան երկերոց շերտի թարգմանություններ են և թարգմանված են 576 թվին: Եթե ընդունենք, որ բերականի մեկնիչ Դավիթ փոխադասի օգտվել է այդ թարգմանություններից, կարող ենք վստահորեն եզրակացնել, որ նրա մեկնության ժամանակը պետք է զեկ Հունարան երկերոց շերտի թարգմանություններից է այդ թվից Հետո: Թրակացու բերականությունը, ինչպես տեսանք, պատկանում է Հունարան թարգմանությունների առաջին խմբին և թարգմանված պիտի լինի Պլուտինից զբրից ու Փիլոնի երկերից առաջ, ուրեմն՝ աննաանչք փեցերոց զարի առաջին կեսում: Դավիթ փոխադասի մեկնությունը և Թրակացու բերականության թարգմանությունը, ինչպես տեսնում ենք, ծագել են Հունարան գաղտնի զարգացման տարբեր շրջան-

¹ Տե՛ս էջմ. մատեն., մտ. Թիվ 1894 = Մայր ցուցակ, Թիվ 1852.

¹ Դավիթ-Սյունիտորոսի խմբի երկերում մարզու տահանումս ավելի մանրամասն է՝ «Եկեղականի բանար մահկանացու մտաց եւ Հանձնարոյ ընդունակ» (Մահ. իմ., էջ 136, Առաջ Ընդ, էջ 217 և այլն):

² Տե՛ս Ն. Աղոնց, Արևուստ Գիտնական, էջ CLXIII:

ներում: Իսկ այս փաստից բխում է ինքնին, որ քերականի մեկնիչ Գավիթի փիլիսոփան չի կարող լինել Քրակացու քերականության թարգմանը: Ե. Աղոնցի ուսումնասիրությունից ես կրեւում է, որ այս կերակացությունը Հաստատում է նաև Գավիթի մեկնության բովանդակության բնութեյամբ (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», CLVIII, CLXVIII, CLXXVI): Այսպես՝ Քրակացու քերականության մեջ փանջ է փաղտոթիւն բառերը, որ միևնույն **συνάλλαξι** բառի թարգմանությունն են, Գավիթը Հասկացչ է, որպես քերականական տարրեր կրեր, դրաւտու բառը, որ Հունարեն **ἀντωνυμία** բառի թարգմանությունն է, Գավիթը Տարափոր է Համարչ մեկնել, որպես թերանուն: Այս օրինակներից իսկ կրեւում է, որ նա Քրակացու թարգմանը չէ: Ընդունելով Քրակացու քերականությունը Հունարան զարոցի Տարափոր թարգմանություններից մեկը, Հափանական կիսին նաև ենթարդել, որ այդ թարգմանության Հետ միասին կարող էին լինել և քերականի Չազույն մեկնությունները: ԱնՀնարին չէ, որ Գավիթի փիլիսոփան և Անանուն կամ Գողոս մեկնիչը օգտվել են ո՛չ այնքան քերականության Հունարան մեկնություններից, որքան այդ Հայերեն մեկնություններից, որոնք գոյություն են ունեցել նրանց ժամանակ, սակայն մեր ձևերը չեն Հասել:

Ե. Աղոնցի իր ուսումնասիրության մեջ կանոչ է ամենում նաև մի ուրիշ կարևոր Հարցի վրա, թե արդյոք կարո՞ղ է քերականի մեկնիչ Գավիթի փիլիսոփան լինել Մահճանք իմաստասիրության երկի Հեղինակը կամ թարգմանը: Գավիթի մեկնության ու Մահճանքի առնչությունը պարզելու Համար նա մատնացույց է անում այդ երկերում ճարտասանության բաժանմանը վերաբերյալ Հետևյալ Հատվածը.

Գա. չեր. մեկն., 84, 14-17

Մահճ., 207, 1-3

«Քանզի տեսալի Հարտասանականի երկի պաշարի կաստրին եւ վարին՝ առեւտարանս եւ քաղախականս եւ կարգալականս, զօգաւհասար Հասեալք ի սեռէ»:

«Գարձեալ ընդդէմ դնելով առեւ, թէ ահա ճարտասանականս սեռ զօլով՝ չերիս բաժանի ի տեսակս յառեւականն, ի բաղխականն, ի կարգականն»:

Մահճանքի մեջ ճարտասանության այս բաժանումը Համարում է «ո՛չ բարւոք», մինչդեռ Գավիթի քերականը կողմնակից է այդ բաժանման: Գարձիկների սկզբունքային այս տարբերու-

թյունը Գավիթի մեկնությունում Մահճանքի մեջ Ե. Աղոնցը Համարում է պարզ մի նշան, որ Գավիթը չի կարող լինել Մահճանքի Հեղինակը (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CXXXII, CLXXXIII¹): Ե. Աղոնցի այս դիտողությունը պետք է ավելացնել նաև այն, որ Գավիթի քերականի թե՛ ամբողջ մեկնությունն բառ իր բովանդակության, և թե՛ իմաստասիրական առանձին զատողությունները չունեն այն ճնտուրջան ու դիտության օրակարգները, որոնք առանձնահատուկ են Մահճանքի Հեղինակ Գավիթի մեկնիչին: Եթե Գավիթի քերականը լիներ Սիմնափողոցոսի զարոցի նորագատնական Գավիթի փիլիսոփան, պարզ է, որ նրա իմաստասիրական զատողությունները պետք է Համապատասխանեին այս զարոցում մշակված տեսություններին, մինչդեռ նրա մեկնության մեջ արխոտոսյացան իմաստասիրության մուտքացածը և աղբաղի զազափարները բազմապես են ինչպես տեսանք, յամբողջյան խճի Հայերեն թարգմանություններից:

Եթե Գավիթի քերականը Մահճանքի Հեղինակը չէ, Հարց է ծագում, թե արդյոք չի՞ կարելի նրան վերադրել Մահճանքի թարգմանությունը: Այս խնդրի նկատմամբ Ե. Աղոնցը մատնացույց է անում, որ արվեստի սահմանման մեջ (տե՛ս վերև § 41, 2) Մահճանքի թարգմանքը **κατάληψις** բառը թարգմանել է «Հաստգրվելու», մինչդեռ Գավիթի քերականն իր մեկնության մեջ **κατάληψις** բառի այդ ուղիղ իմաստը չգիտե և ենթադրում է նրա իմաստը «Թողումս» **καταλεπω** բայից: Ե. Աղոնցն անՀնարին է Համարում, որ միևնույն անձը կարողացույն այդ կերպ Մահճանքի մեջ թարգմանած լինի ուղիղ, իսկ քերականի մեկնության մեջ մեկնած լինի բոլորովին սխալ, ուստի և կերակացնում է, որ Մահճանքի թարգմանքը և Գավիթի քերականը պետք է լինեն տարբեր անձնագործություններ (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CLXXXVIII): Կան և ուրիշ դեպքեր, երբ ամենաստիղբական երբևէ իսկ չեն Համապատասխանում իրար Գավիթի քերականի ու Գավիթ-Սիմնափողոցոսի խճի երկերում: Այդ տեսակետից ուշաբրտության է արժանի Գավիթի մեկնության մեջ Հետևյալ Հատվածը, էջ 81, 8-11՝ «Աղբ Հարկաւորարար բանականս արուես-

¹ Ե. Աղոնցյանը Հիմնավոր չի բերում Ե. Աղոնցի այս դիտողությունը և ենթադրում է, որ Գավիթը ժամանակի ընթացքում կարող էր իր կարծիքը փոխել, տե՛ս «Գիտողություններ Ե. Աղոնցի նոր գրքի վրա», «Արարատ», 1919, Հունվար-դեկտեմբեր, էջ 68:

տիս առաջարկութիւն Նզիցս այսորիւք կատարի, զիտաւորութեանը, Հարազատութեանը, վերադարձն, վարդապետականանան և ըստ մասին բաժանմանը, յորում և աւագականը»։ Այս Հատվածում «վերադարձ» և «աւագական» Համապատասխանում են Հունարեն *η επίστασις* և *το χριστιανον* եզրերին, իսկ Գաւլիթ-Սիմոնիդորոսի խմբի երկերում նույն եզրերը քնարգանաված են «մակագրութիւն» և «պիտանացո» (ԳՊօրհ., էջ 250, Մեկն. ի Վերջ., էջ 560, 562, էլ. Սո., էջ 36, 40)։ Սահմանքի քնարգանելութեանը, ինչպես երևում է լեզվական այս զիտողութուններէրը, զո՞վոր է վերադարձ Գաւլիթի քերականին։ Հակառակն ապացուցելու Համար անհրաժեշտ են դրական ու որոշ փաստեր։ Պետք է ասել, որ ժամանակագրական տեսակետից միանգամայն Հարավոր է Սահմանքի քնարգանելութեանը վերադարձ քերականի մեկնիչ ճեռամենն Գաւլիթի փիլիսոփային», որովհետև նրանց երկուսի ժամանակն էլ զրգկելու է, ինչպես տեսանք, Հունարան երկրորդ շերտի քնարգանելութուններէրը Հետո։

Անանունի մեկնութեանը, որ վերք մենք վերադրեցինք Պողոս մեկնիչին, զրգված պիտի լինի, ինչպես երևում է նրա բովանդակութուններէրը, Գաւլիթի մեկնութուններց Հետո յոթներորդ դարում։ Այդ մեկնութեան մեջ Հիշվում է Գաւլիթի անունով մի Հայ մատենագիր Հետեւյալ Հատվածներում՝ 1. «Քան թաջողորակի տաղ ստի զաւթեան քերթութիւն (և) որ յաղագս Տիգրանայ», տե՛ս «Արեւստ Դիտերանայ», էջ 128, 21 – 129, 1, 2. «Քան թան շարաղորթիւն է թափ, յորմամ շարաղր, որ զԳաւիթին զշարաղրեացն և զպատերազմն և զմարացն և զՀայոցն և ասիցն յարապն ևթի Գաւիթ շարաղրեաց զպատերազմն մարաց և Հայոց, որ է թան», տե՛ս նույնը, էջ 138, 4-8¹։ Արդ՝ Հարց է ծագում, թե ո՞վ է Հռչակավոր այս Գաւիթիք, որը շարունակ Հիշվում է Անանունի մեկնութեան մեջ։ Որովհետև Անանունի ժամանակը զրգկելու է, Համարարար, անմիջապես Գաւլիթից Հետո և նա կարող է լինել այս վերջինի աշակերտը, ո՞չ միայն Հարավոր, այլև Հալանական է լինում, որ Անանունի Հիշատակած Գաւլիթի քերթողը լինի քերականի մեկնութեան Հեղինակ Գաւլիթի փիլիսոփան։ Այս Հարցի լուծումն առանձին կարեւորութեան ունի, որովհետև Ոտրեանցին Տիգրան Մեծի պատմութեան Համար

ունեցել է որպես աղբյուր, բանաստեղծական մի զրգվածք, որը նա պարզ Հիշատակում է և անվանում «Ձորս Հագնեբզութիւնը, զարգաստորին ի թան և զինաստոյն իսկ և ի մէջ իմաստոց իմաստնագունին»²։ Անանունի Հիշած «Գաւիթեան քերթութիւնը որ յաղագս Տիգրանայ» և Գաւլիթի շարաղորթիւնը Հայոց ու մարաց պատերազմի մասին թերես կապ ունենան «Ձորս Հագնեբզութեանց» Հետ, որի «արգաստոր» և «թ մէջ իմաստոց իմաստնագոյն» Հեղինակը ևս զուցե անչլութեան ունենա վերահիշյալ Գաւլիթների Հետ։ Ունչպես տեսնում ենք, յոթներորդ դարի Հայոց մատենագրութեան պատմութիւնը պետք է ստացին Հերթին յուժի մի շարք Գաւլիթի անունով Հեղինակների խնդիրը, որոնցից Հայտնի են արղեն՝ Գաւլիթի Հարբացին, Գաւլիթի Տարոնացին, Գաւլիթի Բագրեանդցին, քերականի մեկնիչ Գաւլիթի փիլիսոփան և, ըստ երևույթին, նաև Անանունի Հիշած Հռչակավոր Գաւլիթի քերթողը։ Մյուսնցից մի քանիսը կարող են միևնույն Հեղինակը լինել, բայց այդ խնդիրը մնում է զեռ անորոշ ու կարտո Հատուկ լուսարարութեան։

Վերոհիշյալ մեր զիտողութիւնները Թրակացու քերականութեան ու նրա Հնագույն մեկնիչների մասին, ինչպես և նրանց ծագման ժամանակաշրջանների որոշումը, կարծում են, որ բավական նպաստելու են այս խնդիրների պարզարանման, և բանասերների Հավարական ջանքերով Հունարան շրջանի մեր մատենագրութեան Համար ստեղծվելու են Հնագիտական ամուր և Հաստատուն Հիմքեր։

§ 52. Հունարան զարդի զարգացման Հարատև ընթացքը Հաստատվում է Հայոց մատենագրութեան մի շարք կողմնակի վկայութիւններով – Հունարան զարդի իմաստասիրական, մարտասանական ու քերականական երկերը բաժանվում են, ինչպես տեսանք, երեք տարբեր խմբերի, որոնք զանազան ժամանակաշրջանների աշխատութիւններ են և ծաղկ են Տարջորարար, մտ երկու Հարցուր ստարվա ընթացում, սկսած վեցերորդ դարի սկզբներէրց կամ Հինգերորդ դարի վերջերէրց, ուրմե, զվստարպապես, վեցերորդ և յոթներորդ դարերում։ Եթե անտես անենք Գաւլիթի Անհարթի ու նրա ընկերակիցների մասին

¹ Գաւլիթի անունը Համայն Հիշատակվում է նաև օրինակների մեջ, էջ 127, 137, 145:

² Տե՛ս Մովսէսի Ոտրեանցու Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 66, նաև Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վարդաշապատ, 1901, էջ 413 և այլն:

Հետին դարերում Հերյուրված առասպելանման ավանդույթներ, որք դարերի ընթացքում խճճել ու մեծապես զմլուխացրել էր այս լեռնդիրների յուժուժը, Հայոց մատենագրության մեջ կան նաև որոշ կողմնակի վկայություններ ու ակնարկներ, որոնք կատարելապես Հաստատում են Հունարան դպրոցի այն երկարատև զարգացման ընթացքը, որ սույն ուսումնասիրությունից մեջ մանրադետիլ կերպով քննված ու յուսարանված է:

Հայոց մատենագրության մեջ, ինչպես Հայտնի է, Հունարան դպրոցի ականավոր ներկայացուցիչները, մեծ մասամբ, անվանվում են փիլիսոփա կամ ինստաստեր, ճարտասան և քերթող: Արդ՝ Հինգերորդ դարի վերջերից սկսած Հայոց մատենագրության մեջ Հիշատակված կան մի շարք Հայ մատենագիրներ, որոնք կրում են վերոհիշյալ այս մականունները: Ընդգույնը սրանից Գաղար Փարպեցու Թղթի մեջ Հիշված «Մովսէս փիլիսոփան» է, որն ապրած պիտի լինի Հինգերորդ դարի վերջերում: Մյ այս Մովսէսը Հունարան դպրոցի Հեղինակ է, այդ կարևոր է նեխադրել նրա գրվածքների մասին Փարպեցու ծանոթ վկայությունից, նաև նրա «փիլիսոփոս» մականվան Հունական վերջավորությունից: Ասողիկ վկայությամբ, վեցերորդ դարի առաջին կեսում Հաջորդել է Մահակ կաթողիկոսին «Տէր Քրիստափոր փիլիսոփան ի գաւառէն Բագրևանդայ և զեղջևն Տիրատնայ» (Ս. Պետրբուրգ, 1885, էջ 81): Նույն պատմիչի ստեղծ, դարձյալ վեցերորդ դարի առաջին կեսում «Յերաս Անեղարի, աշակերտ ճարտասանին Մովսիսի Եպիսկոպոսի Բագրևանդ գաւառի՝ զգասս ճարտասանիցն րազմացուցանէր» (էջ 82): «Քերթող» և «ինաստասեր» է անվանվում 554 թվին Գլխի Բ ժողովին մասնակցող Պետրոս Սյունյաց Եպիսկոպոսը¹: Մովսէս Կաղանկատացին ևս վեցերորդ դարի Երկրորդ կեսում Հիշում է Կարնո Եպիսկոպոս Թեոդորոսին, որին կոչում էին «փիլիսոփայական»։ «Րոշ երկուսնայն Հայրապետութեան Հայոց»- ասում է Կաղանկատացին, - էր մեծ մարտ ընդ Մովսէս և ընդ Թէոդորոս Կարնոյ Եպիսկոպոս, զոր փիլիսոփայական կոչէին, և ուղղափառքն ապարդիկ զՀռոմոց դամնակն կրօնսն» (տե՛ս Բ, գլուխ ԽԶ): Վեցերորդ դարի վերջերում և յոթներորդ դարի սկզբում եկ-

ղեցական եղանակով գործիչ էր և Հոչակավոր մատենագիր Վերթնական վարդապետը, որի մականունն էր դարձյալ «քերթող»: Նույն այս շրջանում Հունարան դպրոցի մատենագիրներից էր Գրիգոր քերթողը, որի Արքաճամ կաթողիկոսին գրված թուղթը ստացում է «Գիրք թիղթոցում» (էջ 99-107, տե՛ս նաև վերև սույն ուսումնասիրության § 37-ը): Արևոտի վկայությամբ, Կոստանդ կայսրը Հայերի Հետ կրոնական միություն Հաստատելու Համար Հայաստան էր ուղարկել «այր մի ի Բագրևան զեղջև՝ որ էր ուսակ զարուեստ փիլիսոփայութեան, և անուն նորա Գալիթ» (գլուխ ԼԳ): Այս Գալիթը 648-649 թվին ներկա է եղել Ներսես կաթողիկոսի գումարած Գլխի ժողովում: Ստեփանոս Ասողիկը Հաղորդում է նույնպես, որ նա «ի Բագրևանդ գաւառէ ի Բագրևան զեղջև» էր և «էր ուսակ զարուեստ փիլիսոփայութեան» (Ս. Պետրբուրգ, 1885, էջ 91): Վերև մեք տեսանք, որ Գալիթ-Սյունյացից որտե՞ր մեկուրդները վերաբրվելու են երկարակ Հայերի միջնավայրին: Միանմանայն Հնարավոր է, որնուն, նույնիսկ Հավանական, որ Հենց այս Գալիթը, իբրև ականավոր պարպուցու երկարակ Հայերի, կարող էր որոշ կապ ունենալ Գալիթ-Սյունյացիորդայն ինաստասիրական դպրոցի Հետ:

Մի այլ Գալիթը, որ թարգմանել է Բարսեղ Կեսարացու «ի ծնունդն Փրկչին» ճառը, անվանվում է նույն ճառի Հիշատակարանում «Գալիթ թարգման Տարսուանցի»: Գարեգին եպ. Հովհաննան այս Գալիթին նույնացնում է Գալիթ Հարթրայի Հոչակավոր փիլիսոփայի Հետ, որը ժամանակակից էր Անաստաս կաթողիկոսին (661-665) և Աշուտ պատրիկին (685-690)²: VII դարում կան և ուրիշ Հայտնի մատենագիրներ, որոնք անվանվում են «փիլիսոփայ» կամ «քերթող»:

Ինչպես տեսնում ենք, VI-VII դարերում Հայտնի են մի շարք Հեղինակներ Հայոց մատենագրության մեջ, որոնք անվանվում են «փիլիսոփայ», «ինաստասեր», «քերթող», «ճարտասան», «թարգման» և բոլորն էլ, ամենայն Հավանականությամբ, պատկանում են Հունարան դպրոցի մատենագիրների խմբին:

Մատենագրական վերոհիշյալ վկայությունները բոլորովին նման չեն առասպելական ավանդության Հետազարդյան Հերյուրաներին, ստույգ ու փավրական են, և պարզ ցույց են տալիս, որ Հունարան դպրոցն ունեցել է Հաջորդական ու Հարատև դար-

¹ Տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեղերական, Ս. Պետրբուրգ, 1885, էջ 83, նաև Գաղառ Տեր-Մկրտչյան, Պետրոս Սյունյաց Եպիսկոպոս, Վարդապետ, 1902:

² Տե՛ս «ԱՋարատ», 1907, Հունվար և մարտ:

գացում, սկսած Հինգերորդ դարի վերջերից: Ուրեմն՝ իմ կարգացությունները, որ մտարագիհն բնութիցանք լուսարանված են այս աշխատության մեջ, ո՛չ միայն չեն Հակասում, այլ կատարելապես Համապատասխանում են մատենագրական այդ ստույգ ու Հավասար ցուցումներին:

Ուշագրության է արժանի, որ բացի Պետրոս Սյունեցուց բոլոր վերահիշյալ «փոխադաս», «բերթող» և «ճարտասան» Հեղինակները, որոնց ծննդավայրը կամ գործունեության տեղը Հիշատակված են, մնալ են Բագրևանդում կամ Տարնում, իսկ երկուսը Բագրևանդի ու Կարնո նայտնույտներն են:

Ե. Աղբալյանը «Իրադուրություններ» և Աղբոնի նոր գրքի վրա՝ Հողգածում¹ փորձ էր արել որոշելու Թրակացու բերականության թարգմանության տեղը: Նրա կարծիքով, բերականության թարգմանիչը Հույն բնագրի օրինակների փոխարեն բերում է Համարժեք օրինակներ, առնված իր անմիջական միջավայրից: Ի նկատի առնելով այդ օրինակները՝ Ե. Աղբալյանը գուշակում է, որ Թրակացու թարգմանիչն ապրել է մի երկրում, ուր կա ձյան Հյուս, որթի, բնկուղենիներ, այգիներ: Սրինակների մեջ Հլղվում են նաև Տարնոն ու Ցրոները, Մամիկոնյան տան անունները: Այս ամենը Հինք է ծառայում նրան նեմադրելու, որ Թրակացու բերականությունը թարգմանված պիտի լինի Տարնում: Այս արամիտ նեմադրությունը, որ թվում է ինձ բավականաչափ Հիմնավորված, կարևոր ու Հետաքրքիր է այն տեսակետից, որ թարգմանության տեղի որոշմամբ որոշվում է նաև թարգմանության բարբառախոսական բնույթ կրող լեզվական առանձնահատկությունների միջավայրը: Ի նկատի ունենալով, որ վերահիշյալ վկայությունները ևս Հունարան Հնագույն Հեղինակների ծննդավայրը կամ գործունեության միջավայրը որոշում են Բագրևանդում, Տարնում և Կարնում, կարելի է թերևս նեմադրել, որ Հունարան դարբնի գլխավոր կենդրոնները եղել են, Հավանաբար, Հայաստանի արևմտյան կողմերում, որտեղ գտնվել են Հունական մշակույթի անմիջական ազդեցության տակ: Ըստ Երևույթին, արևմտահայեր պետք է լինեն նաև այն բաղկցողականները, որոնց չբնանում թարգմանված պիտի լինեն, ինչպես նեմադրեցիներ, Դավիթ-Սիմյակողորսույ խմբի երկերը:

¹ «Աղբալյան», 1919, Հունգար-դեկտեմբեր, էջ 70-71:

§ 53. Իրենեոսի «Ցույցը առաքիական շարդութանան» և «Աղղզն Հերձուածոց» երկերը թարգմանված են Հունարան թարգմանությունների առաջին շրջանում: – Իրենեոսի «Աղղզն Հերձուածոց» գրուածքի Հրատարակութեան առաջարանում Կարպետ Տեր-Մկրտչանու ու Երվանդ Տեր-Մինասյանը նեմադրում են, որ Իրենեոսի այս գրվածքն ու Ցույցը թարգմանված են Հայերենի 650-750 իվականների միջև¹: Ցր. Կոնիթերը, «Յուշարձանում» տպված Հողգածում, Հրատարակիչների այդ կարծիքը Համարում է բացարձակապես սխալ և Իրենեոսի թարգմանությունները դնում է Հինգերորդ դարի առաջին կեսում²: Համեմատելով Իրենեոսի և Փիլոնի թարգմանությունների լեզուն, պրոֆ. Կոնիթերը մատնացույց է անում լեզվական բազմաթիվ նմանություններ և եզրակացնում, որ այդ թարգմանությունները պետք է Համարվեն միևնույն թարգմանիչի իշխատություն: Թարգմանության ժամանակի վերահիշյալ որոշումը նա Հիմնում է Հենց թարգմանիչների այդ նույնության վրա: Առդունելով, որ Փիլոնի երկերը թարգմանված են Հինգերորդ դարի առաջին կեսում, նա նույն կարակացություն է անում նաև Իրենեոսի թարգմանությունների նկատմամբ:

Պրոֆ. Կոնիթերի այս վերջին նեմադրությունը, որի մնակ Հիմքը նրա Հայտնի կարակացություններն են Խորենացու ժամանակի վերաբերմամբ, ավելի քան անՀավանական է ու կասկածելի: Սակայն նրա դիտողությունը Փիլոնի ու Իրենեոսի թարգմանիչների նույնության մասին, որ նա փաստարանում է լեզվական մանրագիհն ու կարևոր Համեմատություններով, միակզածայն Հիմնավոր է ու Համոզիչ:

Նույն այս խնդրի առթիվ վերջերս լույս տեսավ «Հանգես Ամսօրյա» ուսումնասիրման Հայր Արխատակես Վարդանյանի ուշագրավ մի Հողգածք՝ «Լեզվական նմանություններ Փիլոնի և Իրենեոսի Հայ թարգմանություններու մեջ» (1921 թ., սեպտ.-Հոկտ., էջ 450-458): Ա. Վարդանյանը, բնութիցան առնելով այդ թարգմանությունների լեզվական առանձնահատկությունները,

¹ Sh's Irenaeus, Gegen die Häretiker, Leipzig, 1916, էջ IV-V, նաև Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der Apostolischen Verkündigung, Leipzig, 1907, էջ IV-V:

² The age of the old Armenian Version of Irenaeus, «Յուշարձան», գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 193-202:

Հաստատում է նոր օրինակներով նրանց բառամթերքի նույնությունը, ցույց է տալիս այդ թարգմանությունների մեջ ստորական բառերի այլմաստ կիրառման նմանություններ, մատնանշում է Ա. Գրոց թարգմանության Համանան մի չարք Հատվածներ և, հիմնվելով լեզվական այս դիտողությունների վրա, Ֆր. Կոնիբերի ենթադրությունը գտնում է հիմնավոր և Փիլոնի ու Իրենեոսի թարգմանիչների նույնությունը Համարում է վերջնականապես ապացուցված:

Պրոֆ. Կոնիբերից ու Հայր) Ա. Վարդանյանից առաջ Իրենեոսի թարգմանության խնդիրը փորձել էր լուսարանել Հայր) Ն. Ակինյանը (տե՛ս «Ա. Իրենեոս Հայ մատնադատության մեջ», «Հանդես անտորյա», 1910, Հուլիս, էջ 200-208):

Հայր) Ակինյանը իր Հոդվածում ցույց է տվել, որ Իրենեոսի Հայերեն թարգմանությունները կառարկված են ո՛չ թե ստորերեն կամ լատիներեն, այլ Հունարեն ընազրից: Գաղով թարգմանության ժամանակին, նա ենթադրել էր, որ Իրենեոսի զբվածները թարգմանված են Հայերենի 604 թվից առաջ, որովհետև թարգմանության Հետքերը պարզ նկատելի են Վրթանես քերթողի թղթերից մեկում, որ վերջինս գրել է Սուրմեն ստրատուկառին: Նույն Հոդվածում Հայր) Ակինյանը մատնացույց էր արել, որ բացի Վրթանես քերթողից «Ընդդէմ Հերձաժոց» Հայերեն թարգմանությունից օգտվել է նաև վեցերորդ դարի Հեղինակ «Յո՛հան Կարոյ թողարացին»: Հայր) Ակինյանի վերոհիշյալ եզրակացությունները հիմնավորված են փաստական ապացույցներով և խիստ կարևոր էին այն տեսակետից, որ Իրենեոսի թարգմանության ժամանակն իջնեցնում էին վեցերորդ դար: Սակայն անհավանական էր Հայր) Ակինյանի մի ուրիշ ենթադրությունը, իբր թե Իրենեոսի թարգմանիչն է Վրթանես քերթողը և որ թարգմանությունը կառարկված է վեցերորդ դարի վերջին տասնամյակին: Այս ենթադրությունը, ավելի ճիշտ գուշակությունը, որ հիմնավորված չէ բավարար ու զոհացուցիչ ապացույցներով, կարելի է այժմ անտես անել, որովհետև Իրենեոսի թարգմանության ժամանակը, ինչպես և կտեսնենք, զբվելու է վեցերորդ դարի երկրորդ կեսից առաջ:

Վերոհիշյալ Հոդվածներում Իրենեոսի թարգմանության խնդիրը թվում է ինձ մեծ չափով պարզված: Ֆր. Կոնիբերի ու Հայր) Վարդանյանի լեզվական յուրջ ու հիմնավոր դիտողություններից հետո՝ պետք է վերջնականապես ապացուցված Հա-

մարել, որ Իրենեոսի Հայերեն թարգմանությունները ժամանակակից են Փիլոնի թարգմանություններին: Իրենեոսի «Ընդդէմ Հերձաժոց» թարգմանությունից օգտվել են, ինչպես ցույց է տվել Հայր) Ն. Ակինյանը, Վրթանես քերթողը և Յո՛հան Կարոյ թողարացին: Կարևոր այս վկայությունը դարձյալ աներկրայելի մի նոր ապացույց է, որ Իրենեոսի թարգմանությունները շատ ավելի հին են, քան կարծել էին Հրատարակիչներն իրենց տաաջարանում:

Աչրի առաջ ունենալով այս ակներև եզրակացությունները, նաև Հունարան դպրոցի Հնադրական գարգածան այն ընթացքը, որ լուսարանված է առյն իմ ուսումնասիրության մեջ, կարծում եմ, որ Իրենեոսի թարգմանությունների ժամանակը հարափոր է որոշել ավելի ճշգրիտ կերպով, քան այդ արված է վերոհիշյալ Հոդվածներում:

Փիլոնի երկերը, ինչպես պարզել էինք վերև, կազմում են Թրակացու քերականության ու Պտոլոմից գրքի Հևս միասին Հունարան թարգմանությունների Հնագույն շերտը և թարգմանված պիտի լինեն Տիմոթևոս Կուզի Հակածասիրանից առաջ, ուրեմն՝ ո՛չ ուշ, քան վեցերորդ դարի առաջին կեսը: Իրենեոսի երկերի Հայերեն թարգմանությունները, ժամանակակից լինելով Փիլոնի թարգմանություններին, պարզ է, որ Հևս են տարվելու նույն ժամանակաշրջանը, ուստի նրանց թարգմանման terminus post quem non կամ վերջին կզր պետք է ընդունել ո՛չ թե 604 թվից, ինչպես կարծել էր Հայր) Ակինյանը, այլ 552-564 տարեթվերը, երբ թարգմանված էր Տիմոթևոս Կուզի Հակածաստութիւնը: Իրենեոսի և Փիլոնի թարգմանիչների նույնացումը կամ ժամանակակցությունը մատնադրական այնքան կարևոր մի փաստ է, որ ավելորդ չեմ Համարում Ֆր. Կոնիբերի և Հայր) Վարդանյանի լեզվական վերոհիշյալ Համեմատություններին ավելացնել նաև լեզվական իմ դիտողությունները, որ ունեն բոլորովին տարբեր բնույթի և լուսարանում են Հունարան լեզվի գարգացման Հնադրական ընթացքը:

Վերև խոսելով Փիլոնի, Պտոլոմից գրքի և Թրակացու քերականության լեզվական ասանմանատկությունների մասին (տե՛ս § 40ր), ես մատնացույց էի արել, որ այս Հնագույն թարգմանությունները գրելին չեն գործածել Հակ-, տար- և փոխ- նախադրությունները, որպես թարգմանություն Հունական αὐ- τῆ-, δια-, և μετα- նախադրությունների: Արդ՝ իմ այդ դիտո-

դուքյունը կատարելագույն Հաստատում են այժմ և Իրենեոսի Թարգմանությունները: Այդ Թարգմանությունները ևս չունեն ամենևին **փոխ-** նախադրությունը, **տար-** նախադրությունը նրանց մեջ և ո՛չ մի անգամ չի Համապատասխանում Հունարեն **ծեռ-** նախադրության, այդ գործ է անվամ Ռոկնդարյան գրաբարի Հետևությունը, ինչպես տարայտեն, տարակարծ, տարածամ և այլն, իսկ **Հակ-** նախդրի փոխարեն գործ է անվամ Հակառակ¹, ինչպես այդ առանձնահաստիկ էր նաև Փիլոնի ու Պատրից գրքի Թարգմանություններին:

Վերև մենք տեսանք (§ 42, Գ 2), որ մի շարք Հունարան բառեր, ինչպես «տարբեր, տարբերեն, տարբերություն, ներհակ, ներհակություն, մակացու, մակացություն», առաջին անգամ գործ են անվել Հունարան Թարգմանությունների երկրորդ խմբում: Լեզվական կարևոր այդ դիտողությունները Հաստատում է այժմ և Իրենեոսի բառապաշարի քննությունը: Ինչպես Փիլոնի, Պատրից գրքի և Թրակացու քերականությունը մեջ, նույնպես և Իրենեոսի Թարգմանություններում, Հունարան այդ բառերից ո՛չ մեկը գործածված չէ:

Ինչպես Հայանի է, Հունարան Թարգմանություններից մի բանտում փորձ է արված ստեղծելու իրական սեռի զերանտեսական Հաստիկ մեներ՝ **Ա** և **Ն**, որոնք գործ են անվամ Հետևյալ Թարգմանություններում: Փղ. Ալլար. 156, Փղ. Ղևս. 6, Պրտ. 375, 377, 380, 381, 383, 384, Ներս Պրտ. 377, Ալ Տրմ. Հակ. 33, 42, գտ Տրմ. 26, 236, զն Տրմ. 35, 219, Ներս, Ներսայ Տրմ. 222, 226, 283, 292, Արայ 194, Նեմա, Նեմա, Նեմա, Նեմա, Նեմա Տրմ. 15, 31, 95, 195, 196, 222, 292, Ներում 105 և այլն: Թրակացու քերականությունը չունի իրական սեռի այդ Հաստիկ մեներ, որով Հետև իրական սեռի այդ զերանտեսները չկան նաև Հունարեն քննարկում: Սակայն Իրենեոսի երկերում այդ զերանտեսները Հանդիպում են մի քանի անգամ «Նոդղն Հերնուածոց» Թարգմանության մեջ՝ **Ն** և **Իր. Ղերմ. 91 և Ա** և **Իր. Ղերմ. 140, 85:**

Ն. Արոնցն իր «Արուեստ Գիտնիսայ» աշխատության մեջ ենթադրում է, որ Հրչայ երկերը, որոնք գործ են անում **Ա** ու **Ն**

¹ Հակառակացման Իր. Ղերմ. 37, Հակառակացում թիւն Իր. Ղերմ. 137, Հակառակարանություն Իր. Ղերմ. 151, Հակառանություն Իր. Ղերմ. 234, թայց Հակառանություն Իր. Ղերմ. 151 և անհաստատություն Իր. Ղերմ. 23: Նախնական մեուպիլիքը Բլոն է ինձ, որ ունեցել է՝ «Հակառակահաստիկ» և անհակառակահաստ:

իզական զերանտեսները, զույն ավելի ուշ ժամանակի Թարգմանություններն լինեն, բան այն Թարգմանությունները, որոնց մեջ այդ զերանտեսները գործածված չեն (էջ CLXXVI-CLXXVII): Այս խնդիրը ստանում է այժմ բողոքովին Հակառակ լուծում: **Ա** և **Ն** իրական զերանտեսները գործ են անվամ, ինչպես տեսնում ենք, Հունարան առաջին շերտի Թարգմանություններում, նաև Տրմոթենու Կուդի Հակաճառությունների մեջ, որ Հունարան երկրորդ շերտի Հնարոյն Թարգմանությունն է: Իսկ Հետագա Թարգմանիչները խորթ ու անտուր այդ մեները, քան երևույթին, անբողոքելի են Համարել և այլևս չեն գործածել: Այն Հանդամանքը, որ այդ զերանտեսները, թայց Հնարոյն չըմանի որոշ Թարգմանություններից, խիստ Համար ու բազմազան մեներով գործ են անվամ նաև Տրմոթենու Կուդի Հակաճառությունների մեջ, կարող է թերևս մի նշան Համարվել, որ այս վերջին Թարգմանության ժամանակը բավական մտ եղած պիտի լինեք Հնարոյն Թարգմանությունների ժամանակաշրջանին: Եթե Հետագայում Հնարավոր լինի իմ այս դիտողությանն ավելացնել և ուրիշ նման փաստեր, այդ դեպքում՝ Փիլոնի խմբի Թարգմանությունները զգուշ պիտի լինի Հետ ասանկ Հիմներով դար, այդ նրանց ժամանակը որոշվելու է վեցերորդ դարի առաջին կեսի սահմաններում:

Ինչ վերաբերում է Իրենեոսի Թարգմանություններին, նրանց Հետությունը կարծում են, որ կարելի է Համարել վերջնականապես ապացուցված: Եթե անգամ Փիլոնի ու Իրենեոսի Թարգմանությունների նույնացման դեմ լինեն որևէ առարկություններ, Համանայն դեպք՝ այդ Թարգմանությունների խմբակցությունն ու ժամանակակցությունն աշխարհ պարզ է ու անվիճելի, որ այլևս ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ Իրենեոսի Թարգմանությունների ժամանակը պետք է զնկ Տրմոթենու Կուդի Հակաճառությունից առաջ, Հակաճառար, վեցերորդ դարի առաջին կեսում:

§ 54. Նունեոսի մեկնությունների Հայերեն Թարգմանության ժամանակաշրջանը: — Նունեոսին վերագրված մեկնությունների նկատմամբ նախ կարևոր են Համարում պատեղ Հիշատակել, որ 1904 թվին, Նունեոսի Հայերեն թնագիրը Հրատարակույց Հետո¹, ինձ Հաղողվել էր էջմիածնի մասնադպարանում գտնել մեկնությունների մի նոր թնագիր օրինակ, որ մինչև այժմ մնացած է ան-

¹ H. Manandian, Nonnos. Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg, 1903.

Հայտ: Այդ նոր ձևադրի այժմյան Համարն է թիվ 579 (= Մայր ցուցակի թիվ 565): 2. Գարննյանցի ցուցակում այդ ձևադիրը ձանձրամասն նկարագրված չէ, այլ նշանակված է միայն, որ ձևադիրը ժողովածու է «ուրիշապա քաղաքի ր Մտեփան վարդապետի ր թուրին Հայոց ՌԾԲ, ունի Հիշատակարան»: Մականի այս Համատու տեղեկությունն անզամ սխալ է՝ ՌԾԲ թուականի փոխարին պետք է լինի ՉՄԲ (1303 թ.): Ինչպես տեսնում ենք, նոր ձևադիրը բավական պատկառելի է իր Հնությանը և, որքան Հիշում են, ունի մեծ թիվով բնօրի ու նոր բնթերցվածներ:

Նոննոսի մեկնությունների Հայերեն թարգմանության ժամանակը մինչև այժմ մտած է զեռ անորոշ: Հայկազյան Բազորի աշխատակիցները Համարում են նրա լեզուն «Հին ևս բնօրի»: Այնու Հետև, թե՛ այս և թե՛ Հունարան գլխորդի մյուս երկերը վերագրվել են, սովորաբար Հինգերորդ դարի Կրտսեր թարգմանչաց խմբին¹: Որոնեացու խնդրի Հևս միայն ավանդական այս տեսակետը, բնականաբար, խիստ բնադատության ենթարկվել: 1904 թվին «Հանդես ամսօրյա» ուսումնասիրելում յույս տեսավ Հայր Ն. Ակինյանի բնագրական լեզու, որի մեջ Հնդիակը, նորից բննկրվ այս խնդիրը, ենթադրում է, որ մեկնությունները թարգմանված պիտի լինեն 490 թվից Հևսո և յոթներորդ դարից առաջ²: Մեկնությունաց լեզուն, - ասում է Հայր Ակինյանը, - շատ կրճատի Փիլոսի, Կալիսթենես գրոց թարգմանությանց լեզվին և ոչին, և այս կերպը զմեզ բնուրենելու թե կամ նույն անք, որ գանձը Հնգած է ր Հայ - և որ զժվարին է - և կամ անք բնկերակիցներեն մին թարգմանած է մինեունյ ատեն»³: Ն. Ակինյանի դիտողությունն ուղիղ է, միայն այն չափով, որ Նոննոսի թարգմանության մեջ Հանդիպում են Համայն Փիլոսյան խմբի Հատուկ բառեր, սակայն այս բնդՀանտը նմանությունները չեն կարող Հիմք ծառայել Փիլոսի ու Նոննոսի թարգմանիչների նույնացման կամ բնկերակցման: Նույն կարգի լեզվական նմանություններ նկատելի են, ինչպես տեսանք, Հունարան նաև մյուս

¹ P. Sukias Somal, Quadro delle opere di vari autori, Venezia, 1825, էջ 18, Հայր Գ. Զարգանյանյան, Գատաղարան Հայկական թարգմանության նախնաց, Վնտովի, 1889, էջ ԽԵ, և այլն:

² Նոննոսի մեկնություն Գրիգոր Աստվածաբանի Հինգ ճառից: «Հանդես ամսօրյա», 1904, ճախ, էջ 139-146 և Հուլիս, էջ 165-173:

³ Նույնը, էջ 166:

թարգմանություններում (տե՛ս §§ 42, 44) և քացաղբում են նրանով, որ Հունարան թարգմանությունների երկրորդ ու երրորդ շերտեր ենթարկվել են մեծ կամ փոքր չափով Հնագույն թարգմանությունների ազդեցությանը: Հունարան թարգմանությունների խմբավորումները որոշելու Համար կարևոր են ո՛չ պետք նրանց Հատուկ քառապարբի մասնակի նմանությունները, այլ նրանց լեզվական ու թերականական ստանձնահատկությունների այն բնորոշ ու ուշադրավ տարբերությունները, որ մասնացույց են արված սույն ուսումնասիրության մեջ⁴:

Մտնեալով խնդրին այս տեսակետից, կարծում են, որ զժվար չէ ապացուցել, որ Նոննոսի մեկնությունները թարգմանված պիտի լինեն կամ Հունարան երկրորդ շերտի թարգմանությունների ժամանակ կամ նրանցից Հևսո, ուրեմն նրա թարգմանման terminus ante quem non կլինի ո՛չ թե 490 թիվը, ինչպես կարծել է Հայր Ակինյանը, այլ վեցերորդ դարի երկրորդ կեսը:

Այս եզրակացությունը Հիմնավորելու Համար ինձ կարևոր են թվում լեզվական Հետևյալ դիտողությունները:

1. Նոննոսի թարգմանության մեջ զործ են ավժած Հունարան բոլոր այն բառերը և նախադրությունները, որոնք Հանդիպում են միայն Հունարան երկրորդ ու երրորդ շերտի թարգմանություններում, ինչպես օրինակ՝ մակացու Նոնն. 11, 7, ներՀակ 63, 4, ապրերություն 24, 18, արտունակեալք 49, 7, փոխակարծիմ 43, 23, փոխարկեմ 74, 10, 80, 6, փոխարերություն 12, 21, 35, 18, Հակատոժող 26, 23, 78, 15, Հակադարձիմ 46, 15, Հակակայլիմ 69, 5 և այլն:

Վերը մենք մասնացույց կլինք արել, որ այս բառերը կազմված պիտի լինեն Հունարան թարգմանությունների երկրորդ շրջանում (տե՛ս վերև § 42 Գ, 2): Թրակացու թերականության, Փիլոսի ու Պիտոլից զրբի թարգմանությունների ժամանակ, բառ երեսույթին, զրանք զեռես գլուխություն չեն ունեցել (տե՛ս վերև § 40ր և գ):

⁴ Իրենտի ու Փիլոսի թարգմանություններում ո՛չ միայն ավելի բազմաթիվ էին ու պարզապես քառապարբի նմանությունները, այլև նմանություններ նկատելի էին նաև նրանց ո՛ր, զարձվածքների, բառերի ալիքմաստ գործածության, Ս. Գրքից ստեղծված Հաովածների և թերականական ձևերի մեջ: Բացի այն նրանց մեջ նաև նկատելի լեզվական ու թերականական այն Հատուկ տարբերությունները, որ խնդրն աչքի են ընկնում, երբ Համեմատության են առնվում Հունարան թարգմանությունների տարբեր խմբերը:

Լեզվական այս դիտողությունը կատարելապես ճշտվեց նաև Իրևնեսոսի թարգմանությունների փնտնիչանք, որոնք, ինչպես տեսանք, ժամանակակից են Փիլոնի թարգմանություններին (տե՛ս վերև § 53): Եթե՛ն նոնեսոսի թարգմանությունը ևս լիներ խմբակից Հազգույն թարգմանություններին, պարզ է, որ նրա մեջ չէին կարող գործածված լինել վերոհիշյալ նոր բառերն ու նախադրությունները: Իսկ բանի որ այդ բառերը Հանդիպում են նոնեսոսի թարգմանության մեջ, կարծում են, որ կարող ենք եզրակացնել, որ այս մեկնությունները ժամանակակից չեն Հազգույն թարգմանություններին և թարգմանված են, ամենայն Հավանականությամբ, ավելի ուշ:

2. Այս ենթադրությունն անկողն Հետո այնուհետև Հավանական է զառնում, որ նոնեսոսի թարգմանիչը ևս, ինչպես և Հունարան զարդի Երկրորդ ու Երրորդ շրջանի թարգմանիչները, բառ երևույթին, ծանոթ է Լոկի Թրակացու քերականության ու Պիտոյից զբրի, և քերականական և ճարտասանական Հատուկ բառերը մեկնությունների մեջ ծագում են, Հավանաբար, Հազգույն այս թարգմանություններից:

Այս տեսակետից Հետաքրքիր է նոնեսոսի թարգմանության մեջ արձանականի վերաբերյալ մեկնությունը, որը գրեթե Համապատասխանում է Պիտոյից զբրի «Ճաղագս պարսախ» տեսութանը:

Նոնեսոս, էջ 24, 14-17

«Արձանականն բան պարսա և Յուլիանոսի գործոցն. այ գառնականի և արձանականն, բանգի է պարսան ի ձևն ներքոգիկոս զիտոցն, որպան՝ յազգե, ի վարժոցն, ի գործոցն, ի բազդատութենէ: Այլ արձանականն ի ձևն գործոցն միայն է, եւ թէ պատա է՝ ի բազդատութենէ»:

Թրակացու քերականության ու Պիտոյից զբրի ազդեցության Հետքեր կարող են Համարվել նաև՝ քերականական և ճարտասանական Հետևյալ բառերը.

Պիտո, էջ 445, 10-14¹

«Փարս եւ արժան է ի պարսպեյն նախաշաղի առնել, որպէս ի ներքոցնանս: Ի վերայ անկն, զազգե: Նմանապէս եւ զստեղծ՝ զգովութեանց Հաւասար: Եւ սարս գործոցն ղնել: Եւ զբազդատութիւնն: Եւ զի վերայ րահին՝ պատճառն ձայնակցեալոց»:

«... ἐνεστὼς ներկայ նոն, 10, 16, Թր. 23, 24, 45 և այլն, բ. παρεληθὼς անցեալ նոն, 10, 16, Թր. 23 են, գ. μέλλον ապրանի նոն, 10, 16, Թր. 23, 24, 46 և այլն, գ. ἔτυμολογια ստուգարանություն Թր. 1, ստուգարանն նոն, 51, 8, և, ἐπώνυμον մականուն Թր. 17, 19, ἑπωνυμία մականունություն նոն, 32, 18, 41, 3, պ. παράγομαι անանցիմ Թր. 16, 29, նոն, 51, 9 սպված է՝ աստուած անցեալ է, պետք է լինի՝ աստանցեալ է, և, զոխասանություն նոն, 16, 9, զոխասանական Պիտ. 580, 17, բ. ἐκφωσένω արտասեն նոն, 23, 6, Պիտ. 529, 15 և այլն, Թ. ἱαμβός մեծավերջ նոն, 36, 20, Թր. 43, 17, մեծավերջական Պիտ. 369, 14: Ըստ Հայր Արհիմանի նոնեսոսի «ազգակերջ» բառը (էջ 4, 3) թարգմանություն է Հունարան քրիստոսի բառի (տե՛ս «Հանդես անտրյա», 1904, էջ 171): Ուշադրութեան արժանի է, որ Հունարան նույն բառը Թրակացու քերականության մեջ թարգմանված է «անգապտ» և ո՛չ «աղավերջ»:

3. Ե. Աղոնցն իր «Արևուտ Դիոնիսայ» աշխատության մեջ նկատել էր, որ Թրակացու քերականության թարգմանը Հունարան ծօփոնից բառը Հասկացել է իբրև «տարրենի» (էջ 4, 8), իսկ նոնեսոսի մեկնությունների մեջ նույն ծօփոնից բառը թարգմանված է «սուրտ» (էջ 71, 10): Ե. Աղոնցի կարծիքով, այս բառի տարրեր թարգմանությունը ուշադրով մի պարզույց է, որ Թրակացու ու նոնեսոսի թարգմանիչները չեն կարող լինել միևնույն անձը: Այս նկատողությունը, որ միանգամայն ճիշտ է, Հաստատվում է նաև իմ վերոհիշյալ լեզվական դիտողություններով: Նոնեսոս և Թրակացու քերականությունը, ինչպես տեսանք, թարգմանված են Հիբրայի տարրեր ժամանակաշրջաններում և, քանակաբար, չեն կարող Համարվել միևնույն թարգմանիչ աշխատությունը:

4. Նոնեսոսի թարգմանությունը լեզվական իր առանձնահատկություններով թվում է ինձ ամենից մոտ ո՛չ թե Փիլոնի, այլ Արիստոտելի «Ճաղագս աշխարհի» թարգմանության: Այս երկու թարգմանություններն էլ գրված են Հունարան ծառայել ու Հասկանալի լեզվով: Մրանք երկուսն էլ գործ են ածում Համախ օտար բառեր, մինչդեռ Հունարան մյուս թարգմանությունները Հունարան բառեր, սովորաբար, աշխատել են փոխադրել Հայերենի: Միևնույն՝ ա. αἰθρη եթեր նոն, 39, 23, Ար. Ալյս. 606, 10, 625, 19, Եֆեսրայնի Ար. Ալյս. 606, 22, բայց արփի Փիլ. Եսախ, 11, Պիտ. արվալյնի Փիլ. լին. Լոկի և այլն, բ. ἀμπίως անպիտ նոն, 46, 6, 8, 12, 69, 4, 9, Ար. Ալյս. 616, 5, գ. -δέατρον βέλտարն նոն, 74, 1,

¹ Տե՛ս Մովսեսի Խորենացու ժամանագրությունը, Վննտիկ, 1843:

բայց տեղաբան Փիլ. Լիս. 136, Տիմ. Հակ. 315, 10, գ. ծիցար Հետոք նոն, 14, 4, 19, 22, **բայց** Հարտասան Փիլ. տև., Պիտ. 356, 26, ՅՈւ. 422, 13, ԴՄՀճ. 177, 27, ԴՊորփ. 254, 26, Վեր. 581, 26, և, և, **σοφιστής** սոփիստոս նոն, 14, 4, **բայց** իմաստակ Փիլ. Նախ. 1, 9, ին. 205, Պիտ. 347, 26, Իրեն. Ընդդ. Հերմ. 11, 201, **σοφιστικός** իմաստական Վեր. 561, 21, ՀիՍտ. 32, 10, գ. **ἱπποκένταυρος** Իպպոկենտավրոս նոն, 18, 8, **բայց** միացուլ Փիլ. Ժրան և այլն, է. **ἀνδριάς** անդրի, անդրիանդ նոն, 24, 9, 70, 16, 18, 71, 5, 6, **բայց** առնաստակեր Փիլ. Նախ. 1, 9, 24, պրամնո ներ. Պորփ. 238, 3, **εὐμαρμένη** իսարմինև Ար. Աշխ. 628, 10, և **ուրիչ նման բառեր**:

Աշաղբուժան ևն արժանի այս թարգմանությունների մեջ նաև մի շարք Համանման բառեր, որոնք Հունարան մյուս թարգմանություններում կամ բոլորովին չեն գործածված կամ խիստ Հազվագյուտ են. **ορφιάς**¹ ա. **ἀνταρχτικός** գերհիսթապիս նոն, 19, 18, գերհիսթական Ար. Աշխ. 605, 17, **ρ. ἀνάδοσις** վերատրություն Ար. Աշխ. 612, 29, **ἀναδιδοίαι** վերատրում նոն, 44, 2, 7, գ. **μασχαΐσου** նոն, 72, 11, 15, Ար. Աշխ. 603, 26, գ. **πυροειδής** Հրատեսակ նոն, 44, 7, Ար. Աշխ. 606, 24, և, Դիսթանակ նոն, 70, 11, Ար. Աշխ. 614, 33, գ. **χρησμοφδία** Հրամանատրություն նոն, 64, 2, 3 և այլն, Ար. Աշխ. 614, 35, է. **κοιλωμα** փորոն նոն, 69, 8, Ար. Աշխ. 615, 5, **ρ. գովասանություն** նոն, 16, 5, Ար. Աշխ. 617, 30, **β. κεραινώδ** անպահարություն նոն, 56, 5 ևն, Ար. Աշխ. 618, 10, **β. ἔξοχη** արտօնություն Ար. Աշխ. 621, 10, արտոնանկեպք նոն, 49, 5, 7, արտոնություն **ὑπεροχη** ԴՄՀճ. 154, 6, արտոնող ԱՍտ. 373, 20 ևն, **ժա. յապարտություն** նոն, 48, 25, Ար. Աշխ. 616, 37, 617, 9, 622, 35, **ժր. դիրափոփոխ** նոն, 69, 12, Ար. Աշխ. 625, 24, **ժգ. գետորհ** նոն, 44, 6, 10, Ար. Աշխ. 614, 26, **տե'ս նաև** գլխորհն Ար. Աշխ. 610, 11, գծորհն Ար. Աշխ. 613, 21:

Վերև նմանք, որ թե՛ նոնտի մեկնությունները և թե՛ Արիստոտելի «Յաղագս աշխարհի» գրվածքը չեն կարող թարգմանված լինել Հունարան երկրորդ շրտի թարգմանություններից առաջ և Երանց թարգմանման terminus ante quem non պետք է ընդունել վեցերորդ դարի երկրորդ կեսը: Ժամանակագրական կարևոր այս եղբակաթմայնք, ինչպես և նույն թարգմանությունների վերջ մասունչված լեզվական նմանությունների կարծում են, որ ուշագրավ ու Հավանական նշաններ են, որ նոնտի մեկնությունները խմբակից ու ժամանակակից են ո՛չ թե Փլյոնի, այլ «Յաղագս աշխարհի» թարգմանությանը:

Նոնտի թարգմանության terminus post quem non սահմանը որոշելու Համար Հայր² և Ակնիցյան Գավիթ փիլիսոփայի քերական մեկնության մեջ մատնացույց էր արել³ Հետևյալ Հատվածը, «Ծակ ողբերգություն նոխաղբերգություն ասի քառ յուսականին առ ի պաշտան ասեպ Դիոնիսեայ ումեմն սուուդի որթոյ, որ է պատմություն յայտին»⁴: Հայր² Ակնիցյան կարծիքով, «որ է պատմություն յայտին» խոսքերով Գավիթ փիլիսոփան, քառ երևույթին, ակնարկում է նոնտի մեկնությունների Գ ճառի կազմից (1, 9):

Ինձ թվում է, որ անկախ նույնիսկ Գավիթ փիլիսոփայի վերոհիշյալ վկայությունից, որ կարող է վիճելի Համարվել, նոնտի մեկնությունները և Արիստոտելի «Յաղագս աշխարհի» գրվածքը թարգմանված պիտի լինեն, Հավանաբար, վեցերորդ դարի երկրորդ կեսում կամ ամենաուշը՝ յոթներորդ դարի սկզբներում:

§ 55. Մովսես Քերթնազուր Թուղթը և Հովհաննու եպիսկոպոսական Ապացույց գրված են Հունարան երկրորդ շրտի թարգմանություններից Հետո: – «Գիրք թղթնոցում» տպված են կրոնապատմարանական երկու թուղթ⁵՝ «Երանելի մեծի ՔերդոպաՀարն Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի»⁶ (1, 9 22-28) և «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի, Ապացոյց յերկուց ընտնեաց ասել զՓրկիչն ևս կամ մի ընտնիսն» (1, 9 29-40): Այս թղթերի Հեղինակներն ու ժամանակի խնդիրը, թեև Հանս ընտնիցյան նյութ է, եղել քանակաբանական նորագույն աշխատություններում, բայց մինչև այժմ զեռ որոշված ու պարզված չէ:

Հայր² և Ակնիցյան «Տիմոթեոս Կուգ Հայ մատնագրություն մեջ» իր Հողվածում այս երկու թուղթեր Համարում է տարբեր դարաշրջանների և իրարից անկախ գրություններ (տե՛ս «Հանուն ամսօրյա», 1908, տեղատեղեր, 1, 9 261 և Հոկտեմբեր, 1, 9 302): Հովհաննու եպիսկոպոսապետի Ապացոյցը նա եկեղեցում է Հունարանից թարգմանված վեցերորդ դարի առաջին քառորդին, իսկ Մովսես Քերթնազուր գրությունը, որը Տիմոթեոս Կուգի թարգմանությունից ունի երեքթեոսի Հատվածը, նա Համարում է ինք-

¹ «Հանդես ամսօրյա», 1904, 1, 9 167:

² Տե՛ս և Արթուր, Արուստ Գիտնական, 1, 9 89:

³ Տե՛ս նաև Ա. Տեր-Միլեթյան, Ամսուկի քահանայի Անեղի Հասարակ, Վազարապատ, 1893, էջ 255-261: Նույն գրության վերաբերել է այսուհետ՝ «Երանելոյն մեծի Քերթնազուրն Մովսէսի եպիսկոպոսի» (1, 9 255):

նւրոյն Հայերն աշխատութիւն, զրիս՝ Տիմոթէոս Կուրի թարգմանութեանց Հետ, ուստի և այս գրութեան terminus ante quem non նա ընդունում է վերջորդ դարի երկրորդ կեսը:

Ենթադրելով Հովհաննես եպիսկոպոսականի Ապացոյցը Հուսարենից թարգմանված, Հայր) Ակիմյանը, ըստ երևույթին, այդ գրութիւնը չի Համարում Հայոց եպիսկոպոսականի աշխատութիւն: «Պատճառը Գ ժողովոյն երկարակացն» զրիսձորն, որ նա վերագրում է Վրթանէս քերթողին, կա նույնպէս Հովհաննէս եպիսկոպոսականի ինչ-որ մի թղթի Հիշատակութիւն և Ապացոյցը, նրա կարծիքով, նույնացվելու է Հենց այս թղթին Հետ: Կարևոր այդ Հիշատակութիւնը գտնվում է Պատճառի Հետևյալ Հատվածում՝ «Եւ որ յանդիմանն և նդովն զժողովն ևս գտումարն՝ թուղթն Զննոյն ուղղագիտ թագաւորի, որ կոչի Հնաստիկոն և թուղթն երանելոց Անաստասայ թագաւորի, և զիբր Տիմոթէոսի Աղեքանհորացոյ, և **Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսականի**, և թուղթն Պետրոսի Անտիոքացոյ, և պատճառն իւր, և այլ թաղան թուղթք ուղղագիտաց» (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 126):

Հայր) Ակիմյանը կարող էր իր կարծիքն ավելի ևս հիմնավորել, եթէ մատնացոյց աներ Անաստասոս կայսեր թղթում Հետևյալ Հատվածը՝ «Զայս սահման ընկալան և սուրբ Հարրն ԾԾ-ըն որ ի Կոստանդինուպոլսիս ժողովեացն վասն Սրբոց Հոգւոյն: Ըստ նմին և երանելի ժողովն որ յեկեղան ժողովեացն և նդովեցին զհնաստորինս Հերձուածոց և գամենայն որ ըստ նմա խորհին և Հաստատ, որպէս և թուղթն որ կոչի Հնաստիկոն Զննոյն ուղղագիտ թագաւորի, նոյնպէս և **Թուղթն երանելոց Յովհաննէս եպիսկոպոսականի Աղեքանհորի**»¹ որ ցուցանեն այսպէս, յորում նդով է գտումարն Լեւոսի և զժողովն Քաղկեդոնի, որ անցին ընդ նոյն սահման, և երկուս ընտրիւնս զկին միաւորութեանն սահմանեցին վասն Քրիստոսի»² (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 277): Անաստասի այս թղթում Հովհաննէս եպիսկոպոսականը, թվում է ինձ, որ նույն անձն է, որ Հիշված է վերև Վրթանէս քերթողի Պատճառում: Բայց այս վերջին վկայութիւնը խիստ կարևոր է

այն տեսակետից, որ Հովհաննէս անվանված է այստեղ «եպիսկոպոսական Աղեքանհորի»: Եթէ Ապացոյցը վերագրվի «Յովհաննէս եպիսկոպոսականի Աղեքանհորի», պարզ է, որ այդ գրութիւնը չի կարող լինել Հովհաննէս Հայոց եպիսկոպոսականի աշխատութիւն, այլ պետք է Համարվի թարգմանութիւն, ինչպէս ենթադրել է Հայր) Ն. Ակիմյանը: Սակայն Հովհաննէս եպիսկոպոսականի խնդիրը շատ ավելի բարդ է, քան կարելի էր ենթադրել: Հայր) Ակիմյանի վերահիշյալ եզրակացութիւնների դեմ եղան մի շարք աւարկութիւններ:

1913 թվին «Ճողափայթ» Հայագիտական ժողովածուի մեջ լույս տեսավ Գ. Տեր-Մկրտչյանի Հոդվածը՝ «Հայ մատենագրութեան Շագույն թվականները» (տե՛ս «Ճողափայթ», Վաղարշապատ, 1913, էջ 154-163): Այս Հոդվածում Գ. Տեր-Մկրտչյանը մատնացոյց է անում, որ «Կեիք Հաստոյ» ժողովածուի մեջ մի մեծ Հատված է ընդված Հովհաննէս եպիսկոպոսականի Ապացոյցից այսպիսի վերնագրով՝ «Երանելոյն Յովհաննէս Մանդակունոյ Հայոց Կաթողիկոսի» ի Հակահաստութիւնն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց» («Կեիք Հաւ.», էջ 130, Հմտ. «Գիրք թղթոց», էջ 33): Հնեվկոյով այս վերջին վկայութեան վրա և ընդունելով Տիմոթէոս Կուրի Հակահաստութիւնը թարգմանված 480-484 թառամյակին, Գ. Տեր-Մկրտչյանը եզրակացնում է, որ Մովսէս Քերթողաշարքը պետի լինի Փարպեցոյ Հայոսի Մովսէս փիլիսոփայը, իսկ Ապացոյցի Հեղինակ Հովհաննէս Հայոց եպիսկոպոսականը պետի Համարվի Քարին Կաթողիկոսի նախորդը՝ Հովհան Մանդակունոյն: «Կեիք Հաստոյ» Հրատարակութեան իր առաջարանում Կարապետ եպիսկոպոսը Համաստիսյանը պաշտպանում է Գ. Տեր-Մկրտչյանի այս տեսակետը և ավելացնում նաև իր կողմից, «որ Յովհաննէս եպիսկոպոսականի գրութիւնը գրած է անում Տիմոթէոսի Հակահաստութեան միայն Հատուկ բառեր ու զարժաններ (այս անց զՅիսուսն զրդով արտակրեի, և այլ զՔրիստոսն՝ անախտ և անշարշարկի, զուզանապարհուիւն, ակապկիր, աստուածովայնչարար, անբաժ, տեսնուիլին և այլն) և զազգաւարներով էլ պատվում է նորա զավանարանական ըմբռնմանց շքանակի մեջ» (էջ LIX):

¹ «Կեիք Հաստոյ» ժողովածուի առաջարանում Կարապետ եպիսկոպոսը նմանապէս է, որ այս վկայութեան մեջ անարկված է երկի Հովհաննէս Բ-ի Սեվերոսի գրած թուղթը (513-515), էջ LXVII:

² «Կեիք Հաստոյ» ժողովածուի մեջ նույն այս Հատվածն առաջ է ընդված աւարկը խմբագրութեանը՝ «Երկուս և թուղթն, որ կոչի Հնաստիկոն՝ Զննոյն ուղղա-

փառ թագաւորի, նոյնպէս և **Թուղթն Յովհաննէս եպիսկոպոսականի Աղեքանհորի**» այն, որ ցուցանէ այսպէս, յորում նդով է գտումարն Լեւոսի և ոչ անցին ըստ նոյն սահման և երկուս ընտրիւնս զկին միաւորութեանն սահմանեցին ի վերայ միայն Քրիստոսի», էջմմանի, 1914, էջ 128:

Հայր) Գ. Տեր-Մկրտչյանի և Կարապետ Լախակոպոսի վերո-
հիշյալ եղբայրացույթյունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է,
գլխավորապես, Տիմոֆեևս Կուզի թարգմանությունից թվականի
կրտս: Երանց ապացույցները երկարյի են այն տեսակետից, որ,
Կուզի թվականի փոփոխմամբ, այդ ապացույցներն իսկույն պետի
դատան իրենց դեմ, որովհետև երկուսն էլ ընդունում են ու
պնդում, որ Մովսես Քերթնողաճոր օգտվել է Հովանատուֆեանս
Հայերեն թարգմանությունից, իսկ Կարապետ Լախակոպոսը
մտանցույց է արել Տիմոֆեևսի թարգմանությունից Հատուկ բա-
նոնը նաև Ապացույցի մեջ: Արդ՝ աչքի առաջ՝ ունենալով վե-
րոհիշյալ մեր ընդգրկված և այդ դատողությունները, կարծում են, որ
Տիմոֆեևսի թարգմանությունից ժամանակը կարելի է Համարել
վերջնականապես պարզված (տե՛ս վերև §§ 38, 42 և այլն): Տիմո-
ֆեևսի Հակաճատութիւնը թարգմանված է ո՛չ թե 480-484
բառայակին, այլ 552-564 թվականների ժամանակամիջոցում:
Գարզ է ուրեմն՝ որ Հայր) Գ. Տեր-Մկրտչյանի ու Կարապետ
Լախակոպոսի վերոհիշյալ պնդումները պետք է Համարվեն սխալ:
Մովսես Քերթնողաճոր և Հովհաննու Լախակոպոսապետի թղթերը,
եթև նրանք օգտվել են Հակաճատութեան թարգմանությունից,
չեն կարող Հետ առաջինը գրք, ո՛չ էլ անգամ վեցե-
րորդ դարի առաջին կեսը: Միայն է նույնպես Հայր) Ն. Ակիմյանի
կարծիքը. իբր թե կրոնա-դավանական այս թղթերը զանազան
ժամանակաշրջանների գրվածքներ են: Հայր) Գալուստ Տեր-
Մկրտչյանի վերոհիշյալ իր Հողվածում ցույց է տվել, որ այդ
գրությունները գովար է բաժանել միմյանցից: Մովսես Քեր-
թնողաճոր թուղթը ուղղված է, նրա կարծիքով, Հովհաննես Լախ-
ակոսապետին, և այս վերջինս յուր Ապացույցը գրելիս աչքի
առաջ է ունեցել Քերթնողաճոր գրությունը: Գալուստ Տեր-
Մկրտչյանի այս եղբայրացույթյունը, որ հիմնված է փաստական մի
չափք դիտողությունների վրա (տե՛ս «Շողակաթ»), էջ 159),
Հաստատվում է ըստ իս այդ գրությունների զավանաբարական
ընդհանուր բովանդակությունից, Հատուկ մտքերի, նաև լեզվի ու
ոճի ակներև մերձակցությանը: Շատ ճիշտ է ուրեմն Գ. Տեր-
Մկրտչյանի առարկությունը, որ չի կարելի Հովհաննու Լախակո-
պոսապետի գրությունը թարգմանված Համարել վեցերորդ դարի
սկզբներին, իսկ Քերթնողաճոր թղթի ժամանակը Հետ տանել վե-
ցերորդ դարի երկրորդ կեսը կամ յոթներորդ դար: Այս թղթերը,
ինչպես տեսնում ենք, ժամանակակից երկեր են, բայց ո՛չ Մովսես

փիլիսոփայության և Հովհանն Մանդակունու գրվածքներ, ինչպես
ենթադրել է Գ. Տեր-Մկրտչյանը:

Որ այդ երկերը չեն կարող լինել հինգերորդ դարի գրվածքներ,
այդ երևում է ըստ իս նաև նրանց բովանդակությունից ու նրանց
Հոնարան լեզվի առանձնահատկություններից: Ուշադրության
արժանի է ամենից առաջ, որ Մովսես Քերթնողաճոր վերաբրված
թուղթը զավանաբարական իր մեկնությունները հիմնավորում է
Համայն արխատույնյան իմաստության զգալարարներով: Եույն
թղթի մեջ հիշվում է նույնիսկ Վիլիստոփայական Ստորագո-
թիւնը՝ ինչ-որ երկ Հետևյալ Հատվածում. «Ե՛հասն որոյ ի դէպ ևս
յոյժ ճաշողագոյն թուի խտտուականացայ մի բնութիւն սակելով. գի
և յաջմն նստեալ Համեմատութեանը մի Տէր բարոյի: Ապեթ
Հակառակ ինչ վարկանցիցն ոմանք զպատասխանեալց անկա-
րելի Համարելով, որպէս թե երկուս բնութիւնս պատշաճեց ասել՝
գիտասցեն զի զնոյն զանճարութիւն ևս ի մարդուն գոյ նկա-
տելով ճանաչի՝ ո՛չ միայն ի փիլիսոփայական ստորագոթիւնան,
այլևս սուրբ գիրք սատուածաշունչը» (Վիլքեր թղթից, էջ 23-24):
«Փիլիսոփայական Ստորագոթիւնը» երկը և «Ստորագոթիւնը»
Հոնարան Հատուկ բարք, որ հիշատակված է այս Հատվածում, մի
նշան է, որ Քերթնողաճորը վերագրված թղթի ծագումը պետք է
զնկ Արխատույնի Ստորագոթիւնաց թարգմանությունից Հետո,
ուրեմն՝ վեցերորդ դարի վերջին բառորդին կամ ավելի ուշ: Ենա-
նպես և «Ապացույցի» Հեղինակը, թվում է ինձ, որ ծանոթ է
Արխատույնի իմաստասիրության և Լազայ բննության մասին
ուժի Հետևյալ ուշաբրաժ ակնարկությունը. «Բայց նախ ճանաչել պարտ
է շատև անցանկ ըսելն յազգաս ճարի բնութեանցն, զոր ոմանք
չարաչար ի կիր տեսալ վարեցան, զամբաստանութիւնսն ի վա-
նիշտակս ճատարն կամելով թափել: Բայց նախ ճանաչել պարտ
է, զի ոչ յիշատակեցաւ բնութեանեցո անուն՝ ի զէմս՝ Բրիս-
տոսասէր ուղղափառաց, այլ չարաչարն պատառմամբ խտտո-
վանդաց. զորս անվրէպ գոյ ասել, քան զնստս անարթնագոյնս
և տարագրեալ յուխով անտեսացն, որք ըստ գոյացութեանց ինն
բնախասելով, զէական բննել առնին ի կիր, զերկրիս խորհելով
ընդ նոյն շարեայք, ի խրթնին կուրտիւնան Հարսս» (Վիլքեր
թղթից, էջ 3):

Այս Հատվածում «որք ըստ գոյացութեանց ինն բնախասելով,
զէական բննել առնին ի կիր» խոսքերով ակնարկվում են ըստ իս
Արխատույնի իմաստասիրական-տրամաբանական երկերը, որով-

¹ Մամուկ Անեցի, էջ 257, ուժի՝ «ես ի մարդուն գոյ Շար նկատելով ճանաչելն»:

Հևտն այդ երկերն էին քննում Հակաց խնդիրը քրտ գոյացու-
թեանց ընթացակարգով: Հատկապես շոմանդակությունից երևում
է, որ կրոնա-գաղափարական վեճերը Քրիստոսի բնությանց մասին
սերտ կապված են եղել արիստոտելյան իմաստասիրության Հևտ
և այդ վեճերը հարուցված են եղել Հակաց քննությունից ազդե-
ցություն: Ինչպես վերև տեսանք, «Հակաց» և «գոյացութեանց»
խնդիրը քննված է, զլիսափորապես, Արիստոտելի Ստորագու-
թեանց երկում:

Արդ՝ եթե «Ապացույցը» Համարիի հայ Հեղինակի աշխատու-
թյուն, իվում է ինձ, անհավանական չի լինի ենթադրել, որ նրա
ժամանակը, զրվելու է արիստոտելյան հնագույն թարգմանու-
թյուններից Հևտ և նրա երկը ևս, ինչպես և Քերթնողահոր
վերագրված թուղթը, Հորինված պիտի լինի Արիստոտելի Ստոր-
ագութեանց թարգմանությունից Հևտ:

Եթե վերոհիշյալ ինքիները թարգմանված Համարվեն Հունարե-
նից, նրանց թարգմանման ժամանակը զարձայ զրվելու է
Հունարան երկրորդ շերտի թարգմանություններից Հևտ, ուրեմն՝
վեցերորդ դարի վերջերին կամ ավելի ուշ: «Ստորագութեանը»
Հունարան բառը, որ հանդիպում է Քերթնողահոր ինքնում, չեմ
կարծում, որ գոյություն ունենար Արիստոտելի Ստորագութեանց
թարգմանությունից՝ 576 թվից առաջ: Բացի այդ՝ նույն թիղթերում
գործ են ածված վերոհիշյալ այն բառերը, նախադրությունները,
որոնք, ինչպես տեսանք (§ 40ր և Գ, § 42 Գ, 2, § 53 և այլն),
կազմված պիտի լինեն Հունարան թարգմանությունների երկրորդ
չբձանում, ինչպես օրինակ՝ աններհական, էջ 23, 3, տարբերու-
թիւն 24, 6, 30, 33, 35, 21, փոխարին 38, 6: Եթե լեզվական այս
զիտադրություններին ավելացնենք նաև այն, որ այս թիղթերում,
ինչպես վերև ասվեց, հանդիպում են Համախ Տիմոթեոսի Հա-
կանատությունից Հատուկ բառեր և զարձկածներ, կարծում եմ,
զժվար չի լինի հանոզվել, որ այս թիղթերի Հորինման կամ թարգ-
մանման terminus ante quem non որոշվելու է վեցերորդ դարի
վերջին բառորդը: Թեև չունենք որոշ վկայություններ կամ տվյալ-
ներ նաև սրանց terminus post quem non-ը որոշվելու համար,
բայց նրանց բովանդակությունը և Հունարան լեզվի հետիման մի
բանի նշանները Հիմք են տալիս ինձ ենթադրելու, որ այս թիղթերի
ժամանակը զժվար թե կարելի լինի տանել մինչև ութերորդ դարը,
այլ նրանց մուտավոր ժամանակը հավանական է ընդունել կամ
վեցերորդ կամ ամենաուշը՝ յոթներորդ դարի սկզբներում:

ՆՈՐԻՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ա. «Աշխարհացոյց»-ը և Մովսես Սորենացին
Բ. Սորենացու առեղծվածի լուծումը

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ձեռնամուխ լինելով սույն ուսումնասիրության (1932 թվի մայիս ամսին)՝ մեզ զրադեցնող խնդիրն է եղել ո՛չ թե Մովսես Պորենացու Պատմությունը, այլ «Ալշխարհացոյց»-ի Համառոտ ու րնդարձակ խմբագրությունների Համեմատական քննությունը: Ալշխատանքի առաջին շրջանում իմ մտքով անցած չէր անցնում, որ «Ալշխարհացոյց»-ի ուսումնասիրության ընթացքում ստացվելու են Հեոդհևտե կարևոր ու ծանրակշիռ Հետաուխյուններ, որոնք ուղեցույց են լինելու Պորենացու առեղծվածի լուծման: Այդ Հետաուխյունները, չափազանց զորավոր և ազաղակող, իրենք էին այնու Հետևե թեկազրում մեր ուսումնասիրության նորակերպ ծրագիրը: Եվ Հենց այս Հանգամանքն է Հիմնական պատճառը ուսումնասիրված նյութի այն Հատուկ դասավորության, որ կարող է թվալ խառնակ ու անՀարգար:

Ինձ Համար միանգամայն պարզ էր ու անվիճելի, որ «Ալշխարհացոյց»-ը Պորենացու աշխատությունն է և զբված է իններորդ դարում: ԱնՀրաժեշտ էր, ուրեմն, Հետազոտել ու յուսարանել Պորենացու ամբողջ խնդիրն այս նոր Հայեցակետով: Ինքնուտիւրյան Հասկանալի էր մեզ ուշադրությամբ կանց ստնել ո՛չ միայն Պորենացու Պատմության, այլև այն Հակասող փաստերի վրա, որոնք կարող էին Հին ժառաղել տարակուսանքների ու առարկությունների: Նման Հակասող փաստ էր, օրինակ, Պորենացու Պատմության կապն Աղերսանդրի վնպի և «Պիտոյից զբրի» Հետ, որոնք վերագրվել են Պորենացուն և Համարվել մասնագրական հնազույն շրջանի երկեր:

Այս վերջին խնդիրները, ինչպես կտեսնե ընթերցողը, չեն կարող ընավ խոչընդոտ լինել Պատմության ժամանակի մեր առաջադրած որոշման: ԸնդՀակատակը՝ վերոՀիշյալ երկերի նոր ուսումնասիրությունը Համոզեց մեզ, որ Աղերսանդրի վարքը, ինչպես և «Պիտոյից զբրի» վերջարանը, իրենք ևս զբված են իններորդ դարում և կարող են, Հետևարար, վերագրվել Պատ-

մութիան Հեղինակին: Թորենացու մութ ու խրթին առեղծվածը լուծվում էր սրապիտոյ ո՛չ միայն «Աշխարհացոյց»-ի, այլև Աղեր-սանդրի վեպի ու «Պիտոյից գրքի» վերջարարևի քննութիան մէջ:

Իբրև առարկութիան իմ եղբակացութիան զեմ կարող էր մեծ-բերվել, անշուշտ, «Ողբ»-ի բովանդակութիւնը: Սակայն այդ Հարցը եւ քննութիան է առնված սույն ուսումնասիրութիան մեջ և մանրամասն կերպով ցույց է տրված, որ Թորենացու «Ողբ»-ի որոշ ակնարկները Հասկանալի եւ Բուզայի արշավանքից Հետո և վերաբերվում են, գլխավորապես, քաղաքական ու եկեղեցական այն անցքերին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում Հենց նույն իններորդ դարում: Հատկապես Բուզայի արշավանքից Հետո բնական ու Հասկանալի է զարմայ Թորենացու Հունասեր ուղ-դութիւնը, որ առանձնապես շեշտվել է Թորենացու քննադատ-ների կողմից:

Մեր ուսումնասիրութիան մեջ Հատուկ Հափելվածում մանրա-մասն քննված է նույնպես Թորենացու Պատմութիան լեզուն: Պատմութիան քառասպաշարի մեջ մենք մատնանշել ենք քաղ-մաքիվ բառեր ո՛չ միայն Հունարան թարգմանութիւնների, այլև անգամ միջին Հայերենի:

Թորենացու ժամանակի որոշման Համար, ինչպես տեսնում ենք, ապացույցները բազմաթիվ են ու Համոզիչ: Հաստատվում է ուրեմն, որ Թորենացու Պատմութիւնը, ինչպես այդ ճիշտ գիտել է ու մատնանշել Յո. Մարկիարտը, Հորինված է եղել իշխանաց իշխան Աշոտի ժամանակ, «Իբրև Հայելի» Հայկական նոր թագա-վորութիան, որ ստեղծվելու էր իններորդ դարում:

Թորենացու պատմութիան քաղաքական այդ ընույթը մենք պարզելու ենք մի նոր Հողվածում, որի մեջ ի նկատի ենք առնելու Պատմութիան այն փաստական տվյալները, որոնք պարզ ու որոշ ապացուցում են Թորենացու Հատուկ միտումները:

Ն. Մ.

Մանթ. — Գրոֆ. Ն. Մանանդյանի իր այս ուսումնասիրութիւնը գե-կուցել է Կուլտուրայի պատմութիան ինստիտուտի պատմութիան սեկտորում 1933 թվին: Զեկուցումից Հետո տեղի ունեցավ մտքերի փո-խանակութիւն:

Հրատարակելով պրոֆ. Ն. Մանանդյանի այս շահեկան ուսումնասի-րութիւնը, ինստիտուտն առաջիկայում կանդաղադանա Մոսկես Թորե-նացու «Հայոց պատմութիան» խնդրին, յույս բնծայելով առանձին գրքով նիստերին տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնը:

ՀԱՅԿ Կուլտուրայի պատմութիան ինստիտուտ

1. «Աշխարհացոյց»-ի հրատարակութունները և դրանց թիւրօթիւնները: Մովսէս Խորենացուն վերագրված «Աշխարհացոյց»-ը, որ կարող է օգտագործվել իրրև աղբյուր Հին Հայաստանի և Առաջավոր Ասիայի ներքին ու տնտեսական կյանքի ուսումնասիրության, թեև լույս է տեսել մի քանի հրատարակութիւններ, սակայն այդ հրատարակութիւնները, ինչպես կտեսնենք, չեն կարող բավարար համարվել, ուստի և անհրաժեշտ է ձեռնարկել կարևոր այդ երկի քննական հրատարակության ներքև մատենաշիջած նոր հիմունքներով, որոնք անտես են առնված եղած հրատարակութիւններում:

Որքան ինձ հայտնի է, «Աշխարհացոյց»-ն ունեցել է մինչև այժմ տասը հրատարակութիւն:

Առաջին տպագրութիւնը լույս է տեսել «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսազիրք» ժողովածուի մեջ «Յամաթէլլաւամում», 1668 թվականին:

Երկրորդ տպագրութիւնը լույս է տեսել «Աղուէսազիրք» Մարտիկայի արտատպութիւն մեջ 1683 թվականին¹:

Երրորդ հրատարակութիւնը եղել է զարձայ «Աղուէսազիրք» նոր արտատպութիւն մեջ 1698 թվականին: Ք. Փատկանյանը և Կ. Կրումբախերը երրորդ այս հրատարակութիւն տեղը ենթադրում են էջմիածնում², որ անշուշտ, սխալ է: Իսկ Զարպէսնայանի ասելով՝ «Թեպետ տպագրութիւն քաղաքը չնշանակվիր, սակայն հավանականաբար կամ ի Լիվոնոն եղած է»³ և կամ

¹ «Աղուէսազիրք»-ը, քոտ երևույթին, հրատարակված է Մարտիկայում նաև 1776 թվին, տե՛ս **Н. Марр**, Сборники притч Вардана, I, СПб., 1899, էջ 99:

² Տե՛ս **К. Паткалов**, Из нового списка географии, приписываемой Моисею Хоренскому, ЖМНП, СПб., 1883, том, 226, էջ 21, նաև **К. Крumbacher**, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897, էջ 411:

³ Հրատարակված է, իրոք, Լիվոնոնում, տե՛ս **Н. Марр**, Сборники притч Вардана, I, СПб., 1899, էջ 101:

ի Կոստանդնուպոլիս» (տե՛ս «Հայկական մատենագրություն», Վենետիկ, 1883, էջ 273):

Չորրորդ տպագրությունը լույս է տեսել Պորենացու պատմության հետ միասին 1736 թվականին Վիստոն եղբայրների ձեռով, որոնք «Ալշխարհացոյց»-ի Հայերեն ընագրին կից տպել են նաև նրա լատիներեն թարգմանությունը: Լոնդոնի այս հրատարակության մեջ արժեքավոր են առանձնապես Վիստոն եղբայրների ծանոթությունները և ընագրի մի քանի մոթ Հաստիաների յուսարանումները Հուչն աշխարհագիրների երկերի օգնությամբ: Չորրորդ այս հրատարակությունն անփոփոխ արտատպված է վերահիշյալ Մարտիկայի տպագրից:

Հինգերորդ հրատարակությունը տպագրված է նույնպես Պորենացու Պատմության հետ միասին 1752 թվականին Վենետիկում: Առաջարանի մեջ ասված է՝ «Կառնեցար ի միասին տպել և զհամառոտ Ալշարհացոյց»՝ արարեալ... Մոսկոսի Պորենացոյ... եւ յազգաջ չունելոյ մեր ասո զձեռագիր զազգափար, միայն ի Յանսոնյոզամ տպագրեցեցոյն օրինակեցար»:

Վեցերորդ տպագրությունը հրատարակելը, ֆրանսիացի Հայտնի Հայագետ Ա. Սեն-Մարտենը, Հայտնում է նույնպես, որ Մարտիկայի և Լոնդոնի տպագրություններից հետո ուրիշ ձեռագիր չի ունեցել, ուստի Հարկազրկված է եղել արտատպել նույն այդ ընագիրը, ուղղելով ակնթան վրիպակները: Սեն-Մարտենի այս հրատարակությունը Հայերեն ընագրի հետ զույգ ունի ֆրանսերեն թարգմանություն, բազմաթիվ կարերո ծանոթություններով (տե՛ս «Mémoires historiques et géographiques sur l'Arménie», II, Paris, 1819, էջ 301-394):

Վերահիշյալ վեց տպագրությունները, ինչպես տեսնում ենք, արտատպված են մեկը մյուսից և ծագում են, անտարակույս, սխալաշատ մի ձեռագրից, որն ունեցել է արտագրողների կողմից ներմուծված հազվույթներ և ընդմիջարկություններ:

Ի նկատի ունենալով հասցույն այս հրատարակությունների թերությունները Վենետիկի Միսիթարյաններն անհրաժեշտ էին Համարել տալ «Ալշխարհացոյց»-ի ուղղված ընագիրը մի քանի ձեռագրերի Համեմատությամբ:

Այս Համեմատությունն վեցից զրեզգիր օրինակացս, — ասված է այս յոթներորդ հրատարակության շարժարանում, — ընտրեալ զհարգաատ ընթերցուածան ուր բազումք միարանէին և կամ ընտիրքն և Հինք, զայս ի կարևորաց խնամով ի ստորև անփո-

վեցանք» (էջ 8): Սակայն այդ վեց անթիվական ձեռագիրներին Համարները, զժրխատարար, չեն նշանակված և տարբեր ընթերցվածները զրված են ծանոթություններում անորոշ ձևով՝ «մի օրինակ, երկու օրինակ» և այլն: «Ալշխարհացոյց»-ի հշտված ընագրի այս կարևոր հրատարակությունը լույս է տեսել Վենետիկում 1843 թվականին «Մոսկոս Պորենացոյ մատենագրութիւն» ընդհանուր վերնագրի տակ, որի մեջ բացի Պորենացու պատմությունից մտնում են նաև նրան վերաբարված մյուս երկերը:

Ութերորդ տպագրությունը եղել է զարչյալ Վենետիկում 1866 թվականին: Այս հրատարակությունն անփոփոխ արտատպված է «Մատենագրութիւն» նախորդ տպագրից:

Վենետիկի 1843 թվականի տպագրությունը Հինք է ծառայել Բ. Պատկանյանի իններորդ հրատարակության (տե՛ս АРМЯНСКАЯ ГЕОГРАФИЯ VII века, СПб., 1877): Պատկանյանը մի քանի տեղ հաջող կերպով ուղղագրել է ընագիրը և զրել ներքևում կարևոր ծանոթագրությունները: Ուշագրավ են և առանձնապես արժեքավոր Պատկանյանի բացատրական այն ծանոթագրությունները, որ զետեղված են «Ալշխարհացոյց»-ի ոտուերեն նրա թարգմանության ներքևում:

«Ալշխարհացոյց»-ի առաջին Հինք հրատարակությունները, նաև յոթներորդն ու ութերորդը, ունեն ձեռագրերի Համաձայն հետևյալ վերնագիրը՝ «Ալշխարհացոյց Մոսկոսի Պորենացոյ»: Սակայն Սեն-Մարտենը և Պատկանյանը, նեխողելով Պորենացուն Հինգերորդ զարի մատենագիր և Համարելով «Ալշխարհացոյց»-ը հետագա զարերի աշխատություն, իրենց հրատարակությունների մեջ փոխել են այդ վերնագիրը և զրել նոր վերնագիրը՝ Սեն-Մարտենի հրատարակության մեջ «Ալշխարհացոյց»-ի վերնագիրն է՝ «Ալշխարհացոյց ստոյ Մոսկոսի Պորենացոյ», իսկ Պատկանյանի հրատարակության մեջ «Ալշխարհացոյց է զարու»: Շատ պարզ է, որ նրանք «Ալշխարհացոյց»-ի ավանդական վերնագիրը նեխարկել են կամայական փոփոխության իրենց նեխողական կոաշումների Համեմատ: Նախնական ընագրի քնահամ ու լույսայն այս փոփոխությունը, որ կարող է մոլորեցնել ընթերցողին և առիթ ձևապես թյուրիմացությունների, անտղի է, անշուշտ, և միանգամայն անթույլատրելի: Ներքև մենք կտեսնենք, որ Հավանական են և ընդունելի ո՛չ թե փոփոխված այս վերնագրերը, այլ ձեռագրերի մերժված հենց Հին վերնագիրը, որը Հատատվում է բառ իս նոր

ավայներով, որ մանրամասն բնության ներ առնելու սույն ուսումնասիրության մեջ:

«Աշխարհացոյց»-ի տասերորդ տպագրութիւնը լույս է տեսել Վենետիկում 1881 թվականին Ա. Մուրրյանի ձեռով: Հայերեն ընդգրի Հետ միասին Մուրրյանը տպել է նաև նրա ֆրանսերեն թարգմանութիւնը: Հրատարակութիւնը կատարված է բոլորովին նոր ձևազրկից, որ մեծ տարբերություններ ունի նախկին տպագրութիւններից: Նոր այ ձևազրկում «Աշխարհացոյց»-ի ընդգրի շատ ավելի ընդարձակ է, քան ստաֆին ինքն Հրատարակութիւններում, որ կազմում են նախնական ընդգրի Համառոտ խմբագրութիւնը: Ընդարձակ այս խմբագրութիւնն անհրաժեշտ էր, անշուշտ, Համեմատել Համառոտի Հետ, ուղղել երկուսի վերականգնման և աղճատված բնթերցվածները, նաև բննել «Աշխարհացոյց»-ի այն սկզբնական ընդգրի կամ ընդգրիկի հարցը, որոնցից ծագել են այժմյան խմբագրութիւնները: Այդ ախտաուրիւնը, որ կարևոր նշանակութիւն ունի «Աշխարհացոյց»-ի ընդգրի վերականգնման Համար, մինչ այժմ դեռ չի կատարված: Իսկ առանց այդ ախտաուրիւն՝ «Աշխարհացոյց»-ի այժմյան Հրատարակութիւնները, որ փոխազարմար իրար ուղղում և լրացնում են, չեն կարող, բնականաբար, Համարվել բավարար և զոհացուցիչ:

2. «Աշխարհացոյց»-ի նախնական ընդգրի, որից ծագել են վերոհիշյալ խմբագրութիւնները: - Պրոֆ. Յո. Մարկվարտի իր «Einschalt» աշխատության մեջ (Berlin, 1901, էջ 4) նկնթագրում է, որ Մուրրյանի Հրատարակութիւնն «Աշխարհացոյց»-ի սկզբնական ընդգրի է, իսկ նախկին տպագրութիւնները, որ ծանոթ էին առաջ, նույն այդ ընդգրի աղբատիկ ու վատ Համառոտութիւնն են: Այս եզրակացութիւնն նա Հանդել է, բազայնտեղով իրար Հետ ընդարձակ ու Համառոտ խմբագրութիւնների Իրանի վերաբերյալ Հատվածները: «Der Abschnitt über Iran würde allein zu dem Beweise genügen, - warum ich hier, - dass die vollständigere Rezension (A) den ursprünglichen Text des Werkchens enthält, ... wogegen die abgekürzte Rezension (B) ein dürftiger und schlechter Auszug daraus ist (էջ 4)»: Յո. Մարկվարտի կարծիքն րոտ իս ճիշտ չէ¹: Նա բոլորովին այլ եզրակացութիւն կհանդեր,

¹ Առաջադ իր աշխատութիւններում Յո. Մարկվարտը Հրատարակել է վերոհիշյալ իր ներազդութիւնից և Հանդել է ճիշտ եզրակացութիւն, որ «Աշխարհացոյց»-ի այժմյան խմբագրութիւնները Համառոտված են իրարից անկախ նախ-

նքն Համեմատել իրար Հետ ո՛չ թե Իրանի վերաբերյալ Համառոտաբան Հատվածները, որոնց մեջ նկատելի են Հետազարում կատարված փոփոխութիւններ, այլ «Աշխարհացոյց»-ի այն մասերը, որոնք չեն ներթափվել նման փոփոխութիւն:

Ա. Մուրրյանի Հրատարակած ընդգրի Համեմատութիւնը Համառոտի Հետ պարզ ցույց է տալիս, որ տպագրված երկու Հրատարակութիւնն էլ Համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական ընդարձակ ընդգրից, որոնք ծագում են Հագույն մայր ընդգրից: Ավելի քան Հավանական է, որնեմ, որ «Աշխարհացոյց»-ի սկզբնական ընդգրի, որ մեր ձեռքը չի Հասել, շատ ավելի ընդարձակ եղած պիտի լիներ, քան այժմյան տպագրութիւնները: Այդ եզրակացութիւնն Հանդելու Հիմք են ծառայել ինձ Հետևյալ նկատառումներ, որոնք թիւում են ինձ ուշադրով և կարևոր:

ա. Վենետիկում տպագրված «Աշխարհացոյց»-ի Համառոտ խմբագրութիւնը (Համաձայն Յո. Մարկվարտի Համառոտագրութիւնն անվանելու ներ V) ունի Հատվածներ և լրացումներ, որոնք չեն կարող ընդգիջարկութիւններ լինել, բաղված են, անստարակույս, նախնական ընդգրից և պակասում են Մուրրյանի Հրատարակած ընդգրում (Համաձայն Մարկվարտի Համառոտագրութիւնն անվանելու ներ S): Այդպիսի Հավելումներ և լրացումներ են, օրինակ. V-ի մեջ Հետևյալ Հատվածները.

1. V 587,15 - 588,5. «Ռբալս Պողոմնս կղաղնս շախեայ սասարիզօր... այլ րոտ յարարարք լիբանց տևտիխանց».

2. V 594, 3-8. «Գրում (Իրենիայում) գետք Հօրք վեշտասան և ազգք բազումք: Իսկ անուն արեւելեան կղզույն (Իրոտանացոյցն) Ալուիոն, որ է մեծ քան զնա, և է տրքանած բազմաճիւղ. յորում գետք Հօրք քասաննի, և յոյժ մեծածառ անտառս, և շորջ զկղզեան մանուր կղզիք քառասուններկու, և Թուլիս մեծ կղզի»¹.

S 14 20-22. «Գետք Հօրք վեշտասան և ազգք յոյլ:

Նախնական ընդգրից, տե՛ս K. Mlakar, Zur Geschichte des Ps. Moses Chorenatsi, Armeniaca, II, 1927, էջ 122, Հճում Jo. Markwart, Hsb. Рус. Арх. Инст. a Konst., 15 (1911), էջ 15, ծան. 2:

¹ Ընդարձակ S խմբագրութիւնը չունի V-ի ցրիվ տպված կարևոր Հատվածները, որ բաղված են նախնական ընդգրից:

Անուն միևնույն կրողոյն Աբիսն: Եւ ի մէջ երկուց կրղեացն փորոնք կզգիր չորսս:

3. V 594, 11-16. «Եւ բաժանի Գաղղիա յաշխարհս երիս, յորում յերինք մեծամեծք երկուս և զետք Հօրքք քսանեկին, և կրղիր շուրջ զիրուս — երեքտասան: Ունի քաղաքս և ազգս բազումս և Հօրօք, և զազգն Փռանգաց: Լինի ի նման զոմէջ սպիտակ և սպանող»:

S 14, 36-16, 2. «Եւ ի ի Գայիտս յերինք մեծամեծք և զետք քսանեկին, զուի ի Յունաց ծովն արձակի և զքսան- և մի յովկիսնոս, լինի ի նմա սպիտակ և սպանող զոմէջ: Եւ ունի, զՀօրք ազգն Փռանկակ, որոց Հասարակն ի Գայիտս և Հասարակն ի Գերմանիա բնակեն»:

4. V 594, 19-22. «Ունի (Գերմանիա) ազգս և իմն, յորոց մին Գուդք: Ունի յերինս անտանիս երիս և զետս Հօրս մետասան, և կրղիս ինն, և անտառս մեծածառս յոյժ, և յերկաթակտարութիւնս»:

S 15, 5-8. «Բայց ունի յերինս անտանիս երիս և զետս Հօրս մետասան, զերկուսն ի Գանոթ արձակի, ունի և անտառս չորս, յոյժ մեծածառք, ունի և զՍտարաբլն զաշտն և զԻլիմացոց անապատն, ունի և մի վայրի»:

V-ի մեջ նման Հավելումները, որ քաղված են, մեծ մասամբ, նախնական բնագրից, խիստ շատ են: Սակայն մեջբերված այս քաղգատություններն իսկ ցույց են տալիս, որ V խմբագրությունը, ինչպես և S բնագրական խմբագրությունը, Համառոտություններ են նախնական մեղ անՀայտ բնագրի: Հավելվածներն մի մասը կարող են, իհարկե, ներածված լինել V և S Համառոտությունների մեջ խմբագրողների կամ բնօրինակողների կողմից, սակայն այդպիսի բնօրինակությունները, ինչ լիզում է, Համեմատաբար շատ չեն, և Հավելվածների մեծագույն մասը ծագում են, Հավանորեն, «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրական բնագրից:

բ. «Աշխարհացոյց»-ի Ախայի վերաբերյալ մասում S բնագրական խմբագրության մեջ պակասում են մի շարք երկրների մասին ամբողջ Հատվածներ, մինչդեռ այդ Հատվածները պահպանվել են V Համառոտ խմբագրության մեջ: Հավանական է, որ V-ի խմբագրողն այդ Հատվածներն են քաղել է սկզբնական բնագրական բնագրից:

S բնագրական խմբագրության մեջ չկան, ինչպես Հայտնի է, V

Համառոտ խմբագրության Հետևյալ գլուխները.

- 1) Զ. Ռորիա — Լջ 601, 8-13.
- 2) Ժ. Պատմիկոյիա — Լջ 601, 27-602, 3.
- 3) ԺԳ. Կապադովկիս երկրորդ — Լջ 602, 14-17.
- 4) Ի. Առաջին Հայք — Լջ 603, 19-22.
- 5) ԻԱ. Երրորդ Հայք — Լջ 603, 23-26.
- 6) ԻԲ. Պոնտոս Կապադովկիս — Լջ 603, 27-604, 2.
- 7) ԻԸ. Փայտակարան և Ուտի — Լջ 609, 20-610, 9.
- 8) ԼԳ. Անապատ Արարիա — Լջ 612, 9-12.
- 9) ԼԶ. Արտաստան — Լջ 613, 7-9:

գ. Որ «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը շատ ավելի բնագրական է եղել, քան այժմյան նրա V և S Համառոտությունները, այդ կետում է բացի վերահիշյալ նկատառումներից նաև V և S խմբագրությունների Հետևյալ ուշագրավ ակնարկներից: Սպանիայի վերաբերյալ գլխում V և S խմբագրությունների մեջ կան Հետևյալ Հատվածները, որոնք քաղված են որոշ փոփոխումներով նախնական բնագրական բնագրից.

V 593, 27-31. «Եւ ոչ միայն զգաւտս և զքաղաքս, այլ և խորհեցար միայն զրել զերինս անտանիս և զգետս Հօրս և զքաղաքս Հոյակապս, և ևի՛ն այլ ինչ նշանաոր իցէ, թողլով ի բաց զթիս և զշափս և զմանրամասնաբար պատմութիւնս»:

S 14, 13-15. «Այց զրեմք զգետս միայն անտանիս և զքաղաքս Հոյակապս, զանց արարեալ զանշնաօրնս»:

Ուշագրավ է սակայն, որ Հակոտակ այս վկայությունների V խմբագրության մեջ Սպանիայի քաղաքներից և գետերից և ո'չ մեկը չի հիշատակված, իսկ S խմբագրության մեջ հիշատակված չեն Սպանիայի քաղաքները: Հավանական է թվում ինձ, որ Սպանիայի քաղաքներն և գետերն մասին նախնական բնագրական բնագրում կարող էին Հաղորդված լինել որոշ սղեկություններ, որ քան են թողնված V և S Համառոտ խմբագրություններում:

գ. Ներքև մեկը կտեսնենք, որ Ռորեւացոյ պատմության կարևոր աղբյուրներից մեկը եղել է «Աշխարհացոյց»-ը և որ Հենց ինքը Ռորեւացին Համարվելու է, Հավանորեն, «Աշխարհացոյց»-ի Հեղինակը: Արդ՝ ինչպես Հայտնի է, Ռորեւացին իր Պատմության մեջ ունի Հետևյալ Հատվածը, որի աղբյուրը, անտարակույս, «Աշխարհացոյց»-ն է՝

I, 30, Տիգրիս, 1913, էջ 83-84, «եղբ պատմեն՝ որք բազմաշրթուքներ շրամանա Պողոսնայ ապարիսօք գրեալութիւնս մարդկան չափելին, այլ և մասն ինչ գծով և գանբնակս յԱյրեցածն մինչև զԲիմիսոսն»:

Հմտ. V 589, 19-20. «Բայց Պողոսնու, որոյ արք բազմաշրթուքներ զամենայն չափելին» (տե՛ս նաև S 7, 28-29):

V 587, 15-22. «Քրպն Պողոսնու Կղաղնու չափեալ ապարիսօք զամենայն բնակութիւն մարդկան երկայնութեամբ՝ յարեմոսից սկիզբն արարեալ, որ է ծով անմանօթ Ովկիանոս ... և յայնութեան սկիզբն արարեալ յԱյրեալ գոտոյն» (տե՛ս նաև «Այրեցած» V 585, 20 և S 5, 14):

Պորենացու վկայութեան մեջ ապավ է, որ Պողոսնոսի Հրամանով չափել են «գրեանկութիւն մարդկան» «Այրեցածն մինչև ԳԲիմիսոսն», մինչդէռ V և S խմբագրութիւններին մեջ «Բիմիսոսն»-ի մասին չկա և ո՛չ մի Հիշատակութիւն. Պորենացու Հատվածում կարևոր այս չեղուն «Ալլախարհացոյց»-ի այժմյան բնագրերից բացարձակ է, իմ կարծիքով, նրանով, որ Պորենացին օգտով է «Ալլախարհացոյց»-ի ո՛չ թէ այժմյան, այլ նախնական բնագրական բնագրից, որի մեջ Լեզլ է, Հափանորեն, նաև «Բիմիսոսն»-ի վերաբերյալ Համապատասխան մի վկայութիւն:

Մեր այս գիտողութիւններից երևում է, որ «Ալլախարհացոյց»-ի սկզբնական բնագրին իր բովանդակութեամբ եղել է ապիբ բնագրական, քան անգամ այժմյան S բնագրական բնագիրը, որը՝ Համառոտված ինելով նախնական բնագրականից, ունի կարևոր կրճատումներ, որոնք Հայտնի են մեզ այժմյան V խմբագրութիւնից: Հարեանցի իսկ բնութիւնը ցույց է տալիս, որ V Համառոտ բնագրի այդ «Անվկանները քաղված են, մեծ մասամբ, նախնական բնագրից և չեն կարող ինել Հետագա բնագիրները»:

Նոր այս եզրակացութիւնից ինքնին արդեն Հետևում է, որ միանշանայն անհարին է վերականգնել «Ալլախարհացոյց»-ի սկզբնական բնագիրը նախկին իր լրիվ ծալալով: Մակայն V և S

¹ V խմբագրութեան սույն Հատվածները մասնակցել է իբրև Պորենացու Պատմութեան աղբյուր Գր. Սարգիսյանը, տե՛ս «Армянские эпосы», Москва, 1896, I, էջ 191-192 և II, էջ 49:

² Տե՛ս նաև, I:

խմբագրութիւնների մանրամասն բազմաառիթմային կարելի է, անշուշտ, տալ «Ալլախարհացոյց»-ի Համեմատական մի նոր բնագրական բնագիր, որն ապիբ ժող կլինի նախնական բնագրին, քան նրա այժմյան V և S Համառոտութիւնները:

3. «Ալլախարհացոյց»-ի նախնական բնագիրը կազմված է եղել քաղվածորեն զանազան աղբյուրներից: — «Ալլախարհացոյց»-ի նախնական բնագիրը ինչպես երևում է այժմյան V և S խմբագրութիւնների բովանդակութեան բնութիւնից, կազմված է Լեզլ զանազան աղբյուրներից, որոնք, մեծ մասամբ, Հիշատակված են V և S Համառոտութիւններում: Հայերեն «Ալլախարհացոյց»-ի Հննց սկզբում Հնդկաները պարզ առում է, որ «Հնտոսածաշունչ զիրս ոչ գտանի կատարեալ գիտութիւն ալլախարհաց», ուստի Հարկադրված է ինքը «Ճնոնարկի յարտաբնին» (տե՛ս S 5 2-4, Հմտ. նաև V 585, 3-7): V և S խմբագրութիւններում մի քանի անգամ որոշակի Հիշատակված է նաև «Ալլախարհացոյց»-ի Հննց ծառայած գլխավոր «արտաբնին» աղբյուրը Հնտոսյալ Հատվածներում.

ա. V 587, 29— 588, 3. «Յորոյ (Պողոսնոսի) ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանցն ստեալ Պապայ Աղերսանդրացոյ Համառոտարար երկրագրութեամբ, յորմ մեր ծայրաքաղ արարեալ զընցար զմեծամեծն և զհշանաւորն միայն»:

S բնագրական խմբագրութեան մեջ այս Հատվածը պակասում է:

բ. V 590, 26-28. «Որ սկսուց բոս Պապայ Աղերսանդրացոյ երկրագրութեանն որ բոս ինքնագիր բոլորակին Կղաղեալ Պողոսնի տիեզերագրութեանցն չափուց»:

Նույնն ունի նաև S էջ 9, 19-21:

գ. V 593, 14-18. «Եւ արդ որովհետև բովանդակեցար զՀասարակախոսութիւնն, այտուհետ սկսուց պատմել ալլախարհ ալլախարհ առանձին բոս զիցն տեղագրութեանց Պապայ Աղերսանդրացոյ, սկիզբն արարեալ յարեմոսեալ յՈվկիանոսն ի ծայրէն Սպանիոյ ալլախարհին»:

Հմտ. նաև S 13, 30-14, 4:

Պապպոս Աղերսանդրացին, որ վերոհիշյալ վկայութիւններում մասնակցված է իբրև «Ալլախարհացոյց»-ի Հմնական աղբյուր, ապրել է, ինչպես վկայում է Suidas-ը, IV դարի վերջում՝

Թևոզս Մեծի (379-395) ժամանակ և գրել է ընդհանուր աշխարհագրությունը՝ **Χωρογραφία οχθυομενική**: Հիմնվելով սակայն մի քանի նոր ցուցումների և վկայությունների վրա՝ Հավանական են Համարում այժմ, որ Պապյոսի ժամանակը պետք է ենթադրել որ՝ ին Թևոզս Մեծի, այլ Գրիգորիանոսի կայսրության ժամանակ (284-305)¹:

Ա. Մեն-Մարտենի կարծիքով («Mémoires», II, էջ 304-305)՝ «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը, թեև Հիշատակում է Հաճախ Պողոսնոսին, սակայն Պողոսնոսի Աշխարհագրության Հատվածներն նա քաղել է որ՝ ին աննիշակաև սրա երկից, այլ Պապյոսի **Χωρογραφία**-ից, որն «Աշխարհացոյց»-ի մեջ ևս անկասկած է «Երկրագրություն»։ Նույնպես և Բ. Պատկանյանը, որ մանրամասն Համեմատել է «Աշխարհացոյց»-ի Համապատասխան Հատվածները Պողոսնոսի վկայությունների Հետ, ընդունում է Մեն-Մարտենի այս կարծիքը և ենթադրում, որ Հայ Հեղինակը թե իր ներածություն մեջ և թե մի քանի այլ մասերում («Աշխարհ Երուսալեմ», «Աշխարհ Լիբանոս», մասամբ և «Աշխարհը ընդհանուր Ասիոյ») Համառոտել է Պապյոսի երկրագրությունը, որն իր Հերթին Համառոտություն է Պողոսնոսի Աշխարհագրության (տե՛ս «Армянская география», էջ 4-5): Իսկ որ Պապյոսի երկրագրությունը Համառոտված է եղել Պողոսնոսի երկից՝ այդ պարզ երևում է Հայ Հեղինակի վերոհիշյալ վկայությունից, որի մեջ ապավ է՝ «ցորոյ (Պողոսնոսի) ինքնաշիր ըտլորակին տեղեկագրութեանցն անուպ Պապայ Աղերսանդրացոյ Համառոտաբար երկրագրութեանը» (V 587, 29-588, 2):

Ա. Մեն-Մարտենի և Բ. Պատկանյանի եզրակացությունները Հիմնավոր լինելով՝ սխալ է, անշուշտ, Սուբբյանի Հակառակ ենթադրությունը, որ իբրև թե «Աշխարհացոյց»-ը Համառոտված է ու՛ ճիշտ Պապյոսի, այլ և Պողոսնոսի աշխարհագրական երկերից (տե՛ս Սուբբյանի Փրանսերեն թարգմանության առաջաբանը՝ էջ 3-5): Այս թարգմանության մեջ անընդունելի են նույնպես փակագծերի մեջ գրված «d'après Ptolémée» վերնադրերը («Géographie de Moïse Coréne d'après Ptolémée», Venise, 1881, էջ 1, 16, 18, 23, 29 և 57), որոնք կարող են ստիճ դառնալ որոշ թյուրիմացությունների:

«Աշխարհացոյց»-ի երկրորդ Հիմնական աղբյուրն է Կոնս-

¹ Տե՛ս Christ, Geschichte der griechischen Literatur II, էջ 906 (München, 1906):

տանդին Աստիորացու «Քրիստոնեական տեղագրութիւն»-ը, որը Հիշատակված է V և S խմբագրությունների Հետևյալ Հատվածներում՝

1. V 589, 16-18, «գոր և Կոստանդինոս Աստիորացի ի Քրիստոնեական տեղագրութեան ասէ» և այլն.

Տե՛ս նույնը նաև S 7, 26-27.

2. S 8, 9-10, «Տիրոս և Կոստանդին Աստիորացի Հանդիպի վիճել ընդ ընկերս իւր...»

V խմբագրության մեջ այս Հատվածը պակասում է:

Կոստանդին Աստիորացին, ինչպես պարզել է Բ. Պատկանյանը («Армянская география», էջ X-XII), Կոստանդիպոլիսի աշխարհագրագետն է, որն ապրել է վեցերորդ դարում: Ըստ Գ. Կրոմբոխերի՝ նրա «Քրիստոնեական տեղագրութիւն» աշխարհագրական երկը գրված է Հուստինիանոս I կայսեր ժամանակ՝ մոտավորապես 547-549 թվականներին (տե՛ս «Geschichte der byzant. Lit.», II Հրատ., էջ 412):

Բացի աշխարհագրական այս երկերից «Աշխարհացոյց»-ի Հեղինակն օգտվել է, ինչպես այդ նկատել են Մեն-Մարտենը, Պատկանյանը և Մարկվարտը, նաև ինչ որ անհայտ աղբյուրներից Ասիայի վերաբերյալ մասում, զիստավորապես այն Հատվածներում, որոնք վերաբերվում են Սորմատիային, վրաստանին, Աբրահային և Պարսկաստանին: Այս Հատվածներում Հանդիպում են Հաճախ ոչ չազրավ տեղեկություններ, որոնք արժեքավոր են ու խիստ կարևոր պատմական-աշխարհագրական տեսակետից: «Աշխարհացոյց»-ի Պարսկաստանի մասը Հիմք է ծառայել, ինչպես Հայտնի է, Մարկվարտի մեծահասար «E. A. Schahr» աշխատության:

Բացի այդ՝ «Աշխարհացոյց»-ի Հեղինակին միջանկյալ կերպով իբրև աղբյուր են ծառայել «Արիթմնայ» վկայությունը, «Աղեքսանդրի գիրք»-ը (տե՛ս Սուբբ, Հրատ., էջ 45), Հովհաննես Մալալայի ժամանակագրությունը (տե՛ս Պատկանյանի «Армянская география», էջ 29, ծան. 105, էջ 30, ծան. 113 և էջ 32, ծան. 124), Kagnamak-ը (տե՛ս «E. A. Schahr», էջ 5) և, Հավանորեն, նաև Նոննոսի վերագրված աստապկարանական մեկնությունը (տե՛ս S 17, 34 և 36, 38 և Nonnos, Marburg, 1903, էջ 39՝ «այսպէս Արիստոտելի և Երվադոսի» և էջ 10՝ «այսպէս Կատարեան ըմպելոյն»):

«Արիթմետիկ» վկայությունը (տե՛ս S, էջ 38, 16-24) բաղված է ըստ իս եղանակիս Կեսարացու ժամանակագրությանը Հայերեն թարգմանությունից, իսկ «Աղերսանդրի գիրք»-ը Կեղծ-Վարխանեանի Հայտնի վկայի Հայերեն թարգմանությունն է, որի ստորական վերնագիրն է՝ «Պատմություն մեծի աշխարհակալին Աղերսանդրի Մակրոդոնացու»:

«Աշխարհացոյց»-ի կարևորագույն մասերից մեկն է Հայաստանի աշխարհագրական նկարագրությունը: Պատկանյանի կարծիքով, Հայաստանի բաժանումը 15 աշխարհների և 189 գավառների Հայ Հեղինակը բաղվել է, Հավանորեն, պաշտոնական Հին աղբյուրից («Армянская география», էջ 42, ժան. 150): «Յին ապ 204 անունների մեծագույն մասը, — ասում է Պատկանյանը, — Հանդիպում են զանազան Հայ Հեղինակների մոտ, սակայն ո՛չ բոլորը, ուստի և Հեղինակը չէր կարող բաղել Հարկական գրական աղբյուրներից Հայաստանի վարչական լիակատար այդ բաժանումն այն սահմաններում, որ նա ունեցել է Արշակունիների Հարստության ժողովման շրջանում»: Պատկանյանի այս նկարագրությունը դժվար է բնութայնել, որովհետև Հայ Հեղինակը պարզ վկայում է, որ Հայաստանի վերաբերյալ մասը կազմել է ինքը, աշխատելով «ի գիր և ի բարտև», «Արդ կամիմ, — ասում է նա, — զգոսա [զգվորը աշխարհ Հեղևտասանն] մանրամասնաբար պատմել, թև և սակա ինչ աշխատեցիմ ի գիր և ի բարտև» (տե՛ս V, 607, 8-10): Շատ պարզ է, որևէ մաս, որ Հայաստանի աշխարհագրական նկարագրությունը պատկանում է, անտարակույս, «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակին:

«Աշխարհացոյց»-ի այս մասի գիտական մեծ արժեքը չնշտել է Յո. Մարկվարտն իր «Südarmenien und die Tigrisquellen» (Wien, 1930, էջ 56*-57*) աշխատության մեջ, նեթագրելով որ «Աշխարհացոյց»-ի Հեղինակն է Անանիա Շիրակացին՝ Յո. Մարկվարտն այս վերջինին Համարում է իսկական գիտնական, որը Հայաստանի բաժանումից 300 տարի հետո ապշեցուցիչ հչուտությանը տվել է Հայաստանի աշխարհագրությունը բաժանումից առաջ: Որքան մեծ կլինե՞ր Հանդուցյալ Յո. Մարկվարտի գործերը, կե՞ն ևս ծանոթ լինե՞ր մեր այս ուսումնասիրությանը տր տվյալների հետ, որոնցից հետևում է ըստ իս, որ «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը կամ խմբագրողը, իրապես, ո՛չ թե Անանիա Շիրակացին է, այլ Մովսես Ռորենացին, որին նա այնքան արհամարհում էր:

«Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը, ինչպես տեսնում ենք, բաղվածորեն օգտվել է բազմաթիվ աղբյուրներից, իսկ Հայաստանի մասը կազմել է ինքը լուրջ ու Հնուտայից ընտելությամբ:

4. Յո. Սևնտ-Կրուալի և Ա. Սևն-Մարտենի կարծիքով «Աշխարհացոյց»-ի Հեղինակը Մովսես Ռորենացին չէ: — «Աշխարհացոյց»-ի առաջին Հինգ Հրատարակությունները լույս կին տեսել, ինչպես վերև ասացինք, XVII և XVIII դարերում և Համառոտ ավանդական վերնագրի Համարվում էին, բնականաբար, Մովսես Ռորենացու աշխատությունը:

Այս կարծիքը երկար ժամանակ միակ տիրապետողն էր: Սակայն XVIII դարի վերջերից սկսած գրականության մեջ կասած ծագեց և հետզհետև մտավ մի նոր Հայացք, որ այս աշխատությունն անկարելի է վերագրել Հինգերորդ դարի մասնագիր Մովսես Ռորենացու:

1789 թվականին ֆրանսիացի գիտնական Baron J. de Sainte-Croix Համառոտ մի նկատողություն էր տալի «Journal des Savants» Հանդեսի ապրիլի Համարում («Sur la Géographie de Moïse de Choréne», Paris, 1789, էջ 217), որի մեջ նա մատնանշել էր, որ «Աշխարհացոյց»-ի մեջ Հիշատակված Բարսա քաղաքը հնմոված է Օմար խալիֆի Հրամանով Հիջրայի 14-րդ թվին, այսինքն՝ 635 թվականին Բրիտանացի Հնուտ: «Աշխարհացոյց»-ի մեջ ասված է, որ «է Պարսա ամենալից վաճառօք, և եկը նապա ի Զոզկաց և յամենայն կողմանց արևելից» (տե՛ս V 612, 6, 8¹): «Հետևաբար, — ասում է Սևնտ-Կրուան, — աշխարհագրական այս Համառոտության Հեղինակը ո՛չ մի զեպրում չի կարող լինել, ինչպես մինչև այժմ բնութայն են, Մովսես Ռորենացին, որն ապրել է Հինգերորդ դարում: Այս գրությունը կարող է կազմված լինել միայն VII դարի սկզբում, երբ Բարսան զանվում էր ժողոված վիճակում»:

Նույն այս խնդրն ավելի մանրամասն բննել է Սևն-Մարտենը, որն «Աշխարհացոյց»-ի իր Հրատարակության և ֆրանսերեն թարգմանության սկզբում զետեղել էր ընդարձակ մի առաջարկ՝ «Mémoire sur l'époque de la composition de la Géographie, attribuée à Moïse de Khoren» (տե՛ս «Mémoires», II, էջ 301-317), որի մեջ «Աշխարհացոյց»-ի Հորինման ժամանակը նա նեթագրե-

¹ Բարսան աշխարհամասի ինաստով Հիշատակված է նաև ընդարձակ խմբագրության մեջ՝ S 41, 5-7 «Աշխարհ Առիս ելինացոյցի է, որ է Ռուժատան, որում Յոկե Եսաշտիկ կոչին, յաղապ Եոյան քաղաքի, և Տաճիկը՝ Թնրա»:

րում է IX դարի վերջերում կամ X դարի կեսում (մտավորապես 950 թվականին):

Յուրջ տարու Համար, որ այս երկը Պորենացուներ չէ՝ Սեն-Մարտենը մատնացուց է արել Հայ Հեղինակի այն Հավելումները, որոնք չէին կարող գրված լինել V դարում: Ջանջ անելով այն պարզ ընդմիջարկությունները՝ ինչպես «Յօզու Ռուպը», «Յիրմը», «Եադայա», որ Սեն-Մարտենի սխալաշատ ընթացում ենթադրված են արտասրտողների կողմից՝ մենք մեջ ենք բերում միայն այն Հավելումները, որոնք Հանդիպում են նաև V և S Հրատարակություններում:

1. Իբրև Գաղղիայի բնակիչներ Հիշատակված են «Աշխարհացոյց»-ի մեջ Փրանկները, որոնք անվանված են «Հոօր ազգ» (տե՛ս «Mémoires», II, էջ 336, V, էջ 594 և S, էջ 14-15): Սեն-Մարտենի կարծիքով՝ V դարում Փրանկները դեռևս Հոօր ազգ չէին և նրանց անունը զո՞վար թե՛ Հայտնի լինել Պորենացուն: Բացի այդ՝ Փրանկների բնակությունն տեղն այդ ժամանակ, գլխավորապես, Գերմանիայում էր և ո՞չ Գաղղիայում:

2. «Աշխարհացոյց»-ի բոլոր Հրատարակություններն էլ վկայում են, որ «Քևոսն ցամար կղզին» պատկանել է քրիստոնեյաներին (տե՛ս «Mémoires», II, էջ 338, V, էջ 596 և S, էջ 16): Հիմնվելով այս վկայության վրա՝ Սեն-Մարտենը Հարավոր է Համարում եզրակացնել, որ «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակն ապրել է X դարում, երբ ուսանելն ընդունել էին քրիստոնեություն:

Ա. Սեն-Մարտենի այս ենթադրությունը, անշուշտ, մշտն չէ: Քևոսներ, ինչպես Հայտնի է, քրիստոնեական խոչոր կենտրոն էր արդեն IV և V դարերում, և Հատկապես Քևոսն քաղաքում գտնված են եկեղեցիների ավերակներ, որոնցից Հնագույնը կառուցված է եղել դեռևս IV դարում:

3. Պոսելով Մարմատիայի բնակչության մասին՝ «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը Կովկասյան լեռներում Հիշում է, ի միջի սպոյց, «Երուանք» անունով մի ազգ (տե՛ս «Mémoires», II, էջ 356, «Երուանք», V էջ 604, «Երուանք», S էջ 27, «Երան ազգ»): Արդ՝ Սեն-Մարտենի անելով, արևելյան բոլոր մատենագիրները և մատնավորապես, Մատուղիի՝ վկայում են, որ Schirwan անունն առաջին անգամ զործ է անվել Պոսրով Նուշիրվանի թագավորության ժամանակ՝ VI դարի կեսում: «Երուանք» քաղը չէր կարող, ուրևն, Հայտնի լինել Մոզես Պորենացուն, որ V դարի մատենագիր է:

4. «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը վկայում է, որ Ապատան Արարիան «ունի փոքր աշխարհս երկու՝ զՏանկաստան և զՓանիսխս ուր զՏունն Արրահամու բաճազն լինել» (տե՛ս V, էջ 611, Հմտ. «Mémoires», II, էջ 368): Սեն-Մարտենը կարծում է, որ այս վկայության մեջ «տունն Արրահամու» պետք է լինի Մերքան և որ այս ավանդությունը կարող էր Հայտնի լինել Հայաստանում մաշնեղականությունը տարածվելուց Հետո՝ արարական աշխարհակալության ժամանակ: Որ Սեն-Մարտենի այս ենթադրությունը Հավանական է, այդ երևում է S Հրատարակության ընդարձակ ընթացից, որի մեջ վերհիշյալ վկայությունը մեջ է բերված Հետևյալ արարագրության՝ «ես զՓասսակիտե՛լ յորում Փասան ասան, զոր կարծես ի Տանկաց Մարա կոչել» (S էջ 37):

5. Ա. Սեն-Մարտենի կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի մեջ Հիշատակված Կողա աշխարհը (տե՛ս «Mémoires», II, էջ 368 և V էջ 612 «Ակողա») արարական Koufah-ն է, որն ասորիներն անվանում էին Akoula: Արդ՝ Հայտնի է, որ Koufah քաղաքը Հիմնված էր Հիջրայի 17 թվականին, այսինքն՝ 638 թվականին Ք. Հ.: Պարզ է, ուրևն, որ այդ քաղաքի անունը չէր կարող Հայտնի լինել V դարի մատենագիր Մովսես Պորենացուն: Սեն-Մարտենի այս դիտողությունը ևս Հաստատվում է «Աշխարհացոյց»-ի S խմբագրության Հետևյալ վկայությամբ՝ «ես միան ասի Քուշիր, որք յիրևարս կեկալ անցանն լիլից Ակողադի բնակեալ բանակի Տանկաց» (S էջ 38): Հմտ. նաև «Պատմություն Դևոնդեայ» (Ս. Պետերբուրգ, 1887), Ի է, էջ 126՝ «և զամենայն զորս զոր միանգամ առաքել Մրուան ընդդէմ նոցա՝ խորտակեալ ջախջախէին, և ցմե՛ն բանակատեղն Տանկաց Ակողա զամենասան Հնազանդիին»:

Ա. Սեն-Մարտենի թե՛ առանձին դիտողությունները և թե՛ ընդհանուր եզրակացությունն աննախադր քննադատության ենթարկվեցին Վեստֆիլի Միլիթարյանների կողմից, որոնք Հարունակում էին սրելով, որ «Աշխարհացոյց»-ը Պորենացու աշխատությունն է և զրված է V դարում: Հակամատելով Սեն-Մարտենին՝ Դ. Բոնինյանը փորձել իր «Հնախօսութեան» մեջ (Վենետիկ, 1836, III, էջ 304-314) սպացուցել, որ Սեն-Մարտենի մատենածած օտարալի խորթությունները, մեծ մասամբ, Պորենացու գրածը չեն և չկան «Աշխարհացոյց»-ի բնույթ մուսագրերում, իսկ մի քանիսը սխալ են մեկնված Սեն-Մարտենի առա-

ջարանում: Այս վեճն ունեցավ այն զրական արդուները, որ վեճետիկի Միխիլարյանները, ի նկատի ունենալով Սեն-Մարտենի Հրատարակած բնագրի բնովիճարկություններն ու աղճատումները, վեց ձևագրի բազդատությունը տվին «Աշխարհացոյց»-ի քննական մի նոր Հրատարակություն, որը Ռորենացուն վերազրված մյուս երկրի Հետ միասին տպագրված է վեճետիկում 1843 թվականին: Քննական այս Հրատարակությունից երևաց սակայն, որ Սեն-Մարտենի ժամանակած աշխարհագրական մի քանի առումները Հանդիպում են Համառոտ այս խմբագրության ցույց ձևագրերում: Երանք գտնվում են, ինչպես վերև տեսանք, նաև Մուրցայի Հրատարակած «Աշխարհացոյց»-ի բնագրական խմբագրության մեջ: Ետտ պարզ է, որնեմ, որ Սեն-Մարտենի Հիմնական եզրակացությունը՝ թե «Աշխարհացոյց»-ը գրված պետք է լինի ո՛չ թե V դարում, այլ շատ ավելի ուշ՝ միանգամայն Հավանական է ու իրավացի:

Չնայած Սենտ-Վրուայի և Սեն-Մարտենի վերոհիշյալ ցուցմունքներին, Ա. Գուտշմյոլը Ռորենացու մասին զրամ առաջին իր Հոդվածում («Kleine Schriften», III, Լջ 278, ծան. 1), նաև աշխարհագիր Հ. Վիպերսը Հատուկ իր գեկուցման մեջ («Ueber die Zeit der Abfassung des dem Moses von Chorni zugeschriebenen geogr. Compendiums», տե՛ս «Monatsberichte der Königl. Preuss. Akademie der Wissenschaften zu Berlin», 1873, Լջ 593 և Հտ.), ենթադրում էին «Աշխարհացոյց»-ը գրածայլ Ռորենացու աշխատությունն է գրված V դարում: Կիպերսի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը կարելի է վերագրել Ռորենացուն, բացառությամբ որոշ Հատվածների և մի քանի եկամուտ աննշան Հավելվածների:

5. Բ. Պատկանյանը Ռորենացուն վերազրված «Աշխարհացոյց»-ը Համարում է Անախա Երրակացու աշխատություն: - Ինչպես վերև տեսանք, 1877 թվականին «Աշխարհացոյց»-ը նորից Հրատարակել էր Բ. Պատկանյանը ուսուրեն թարգմանությունն Հետ միասին և մանրամասն ծանոթություններով ու բնագրական առաջարկով:

Բ. Պատկանյանը, բնույնելով Սեն-Մարտենի Հիմնական եզրակացությունը, որ «Աշխարհացոյց»-ը չի կարող լինել Ռորենացու աշխատություն, Համաձայն չի սակայն նրա այն կարծիքին, որ իբր թե «Աշխարհացոյց»-ը գրված է IX դարի վերջում կամ X դարի կեսում: Իբրև նոր ապացույց, որ «Աշխարհացոյց»-ը Ռորենացու Հեղինակությունն չէ՝ Պատկանյանը բն-

րում է նաև իր նոր դիտողությունները VI դարի ժամանակից կատանդին-Կոստան Հեղկաչուի մասին, որից բազմաժանր է արել «Աշխարհացոյց»-ի Հայ Հեղինակը: Պատկանյանի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը լեզվի կողմից ևս չունի և ո՛չ մի անանություն Ռորենացու:

Համարելով «Աշխարհացոյց»-ը ավելի նոր ժամանակի գործ, Պատկանյանն իբրև է գալիս այն եզրակացություն, որ «Աշխարհացոյց»-ի գրությունն ժամանակը դրվելու է VII դարի առաջին կեսում, և կարծում է, որ Հենց այս դարաչափանում բնական են ու Հավանալի այն կասկած Հարուցանող փաստերը, որոնք Հիշված են Սեն-Մարտենի մոտ և մի առ մի քննությունն են նեխարկված նաև ուսուրեն իր առաջարկում:

Միաժամանակ նա ենթադրում է, որ VII դարում գրված այս «Աշխարհացոյց»-ը, որի թարգմանունն ու Հորինման Համար ենՏրանկուտ էր ո՛չ միայն իմանալ Հունարեն, այլև ունենալ որոշ պատրաստություն, Հատկապես, մաթեմատիկական գիտություններում, Հափտական է վերագրել Անախա Երրակացուն, որն սպրկ է Հենց VII դարում, և որը Հունարան ժամանակից է ու Հայտնի մաթեմատիկոս:

«Աշխարհացոյց»-ի ժամանակի ու Հեղինակի մասին այս ենթադրությունը, ինչպես տեսնում ենք, սուղ մի կասում է, որը ո՛չ միայն Հիմնավորված չէ բավարար ու գոհացուցիչ ապացույցներով, այլև Հակասում է Սենտ-Վրուայի և Սեն-Մարտենի վերոհիշյալ դիտողություններին, մասնագիտապես, «Պատրաս» և «Արդա» քաղաքների մասին, որոնք Հիշատակված են «Աշխարհացոյց»-ի և՛ Համառոտ, և՛ բնագրական խմբագրություններում: Բ. Պատկանյանի առարկությունը, որ Բասարև և Կուֆան կարող էին իբրև խոշոր առևտրական կենտրոններ զոյություն ունեցած լինել արարներից առաջ և կարող էին, Հետևապես, Հիշատակված լինել «Աշխարհացոյց»-ում՝ VII դարի կեսերին, բնագրողի է, անշուշտ, և ավելի քան անՀավանական: Ինձ թվում է, շատ ճիշտ է նկատել Սենտ-Վրուան, որ «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ տեղեկությունը Բասարայի մասին չէր կարող գրված լինել VIII դարից կամ VII դարի վերջերից առաջ:

«Աշխարհացոյց»-ի գրվելու ժամանակը ենթադրում է VII դարում նաև Գուտշմյոլը: Ռորենացու մասին «Բրիտանական Հանրագիտական բառարանում» գետեղված իր երկրորդ Հոդվածում նա փորձել է ցույց տալ, որ Ռորենացու Պատմությունը

գրված է 634-642 թիվականների մեջ («Kleine Schriften», III, էջ 332-338); ենթադրելով Պորենացուն VII դարի Հեղինակ, նա հիմնվում է, ի միջի այտոց, նաև «Ալշուր-Շացոյց»-ի վրա, որը Համարում է մինևույն Հեղինակի աշխատություն, գրված նույն VII դարում:

Ք. Պատկանյանից և Ա. Գուտշմիդից Հեռո Ալշար-Շացոյց»-ի մասին, ինչպես Հայտնի է, կարծիք են Հայտնակ ստեղծողի կամ մանրամասն ուսումնասիրությունների մեջ նաև ուրիշ գիտնականներ: Բոլոր այս կարծիքների մեջ միակ տիրապետողն է սակայն Ք. Պատկանյանի ենթադրությունը, ուստի և «Ալշար-Շացոյց»-ի Հեղինակ Համարվել է սովորաբար Անանիա Շիրակացին (տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ Հայերեն ձևադրաց մատենագրարանի Մյուխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895; Գր. Халатъязц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, էջ 18; Jo. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 56*, 14, 39, 58 և այլն):

Այերևում մեքեր կտեսներ, որ այս կարծիքը, որը Հեղուհեան ընդհանրացել է ու Համարվել ընդունելի, ո՛չ միայն անհիմն է, այլ և բացարձակապես սխալ:

6. «Ալշար-Շացոյց»-ի և Պորենացու Պատմության կարևոր նմանությունները, որ ցույց են տրված Գր. Պալաթյանցի և Ցո. Մարկվարտի աշխատություններում — «Ալշար-Շացոյց»-ի և Պորենացու Պատմության մեջ որոշ ակերբայն նմանություններ նկատած են եղել, ինչպես Հայտնի է, «Ալշար-Շացոյց»-ի Հրատարակիչները: Սակայն այս խնդիրը Հանդամանորեն քննության են առել Գր. Պալաթյանցը և Ցո. Մարկվարտը: Մասնը մատնացույց են արել նաև նոր կարևոր Հատվածներ, որոնք նույն երկու գրվածքում կամ կատարելապես նման են և կամ Համարելու են ու Համապատասխան իրենց ըզմանդակությանը:

Կարևոր այդ Հատվածները մեջ ենք բերում, զննելով միմյանց Հետևիչ Պորենացու Պատմության և «Ալշար-Շացոյց»-ի բնագրերը:

ա. Պորենացի I, 14, էջ 46-47 (Տիգրիս, 1913)*

«Բայց Հրաման տայ [Արամ] ընկալաց աշխարհին՝ ուսանել զխօսս և դիպրուս Հայկական, վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյքը զկղիմայն զայն Պատրիս

Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զգաստակերտս, որ շինեաց յանուն իւր Մշակ կողմնաստեան Արամայ փորքազանիք պարտեպն ործովք, անուանին Հինք աշխարհին՝ Մամար, որպես ոչ կարելով ուղղախօսել. մինչև լետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տերևանց այնտեղն մինչև ցրուն իւր սահմանս, զրազում աներակ երկիր ելից բնակչօք, որք երկրորդ և երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և Նշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարմենեան մեր կողմն Առաջին և երկրորդ, այլ և երրորդ և Չորրորդ Հայք»:

V, էջ 603, 19-22.

«Առաջին Հայք յելից կաղով առաջին Կապադովկիոյ առ երկ երկրորդ Հայոց, և սահմանի յելից Եփրատայ. և լեւան ունի զԱռպևս, և զես երեսուն՝ զԱյլս և այլ ճանունս»:

Գեոեա Ք. Պատկանյանը ուսուրեն թարգմանություն իր ծանոթություններում ուղղություն էր դարձրել (տե՛ս էջ 33-35, ծան. 132 և էջ 43-44, ծան. 152), որ «Առաջին, երկրորդ, երրորդ և Չորրորդ Հայք» կոչումները Հանդիպում են թե՛ Պորենացու Պատմության և թե՛ «Ալշար-Շացոյց»-ի մեջ և որ «Առաջին Հայք» կոչվում է նրանց մեջ Կապադովկիայի այն մասը, որի մեջ գտնվում էին Առպևս լեռը և Կեսարիա բաղաբը: Այս նմանությունը Ք. Պատկանյանն ուղղություն արժանի էր Համարել, որովհետև Հռոմեական և Հունական աղբյուրները Կապադովկիայի այդ շրջանը չեն անվանել Առաջին Հայք կամ Հայք:

Ք. Պատկանյանի մատնանշած այս փաստից կարելի է նուսուխություններ արել ևս Գուտշմիդը և «Ալշար-Շացոյց»-ը Համարում էր մինևույն Հեղինակի և VII դարի գործ, Հիմնվել է ի միջի այտոց նաև այս նմանության վրա (տե՛ս «Kleine Schriften», III, էջ 335, 336): Իսկ Գր. Պալաթյանցը, որը Համաձայն չէր Գուտշմիդի այս կարծիքին, ենթադրում է, որ Անանիա Շիրակացու «Ալշար-Շացոյց»-ը աղբյուր է ծառայել Պորենացու Պատմության (տե՛ս «Армянский эпос», էջ 18 և 133):

բ. Պորենացի I, 30, էջ 83-84 (Տիգրիս, 1913)*

«Բայց զնախասացեալ կինն Անուշ բնակեցուցանել [Տիգրան] որդուք իւրովք յանդորրութեան սպասուածի

փառօն մեծի լերինն: (Զորմ լեալ սանն յաճաղին իմն շարժանն, զոր պատմեն՝ որբ բազմաշրջութեամբ հրամանա Պողոսն սասարիսոր զրեակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ գծով և զանրեակս յայրեցածէն մինչև ց՛իմբոտոս):

V, էջ 587, 15-16.

«Քրպէս Պողոսն Կղտղէոս չափեալ սասարիզոր զամենայն բնակութիւնս մարդկան» և այլն.

V, էջ 589, 19-20.

«Բայց Պողոսնու, որոյ արբ բազմաշրջութեամբ զամենայն չափեցին».

Հմտ. նաև S, էջ 7, 28-29, «Ալբեցած», տե՛ս V, էջ 585, 20 և S, էջ 5, 14:

«Աշխարհացոյց»-ի այս Հատվածները, որ զրեմե բառացի կերպով պատահում են և Նորնապոս մտ, մատնացոյց է արել Գր. Սարգիսյանց իր "АРМЯНСКИЙ ЭПОС", ուսումնասիրության մեջ (տե՛ս I, էջ 191-192 և II, էջ 49-50):

գ. Նորնացի II, 12, էջ 123 (Տփղիս 1913):

«Բայց Արտաշիս նուանեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զվկիկանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեմուտս: Քանզի մեծ յոյզք խտովութեանց եղեալ ի Հոսով՝ ոչ որ ընդզմանայ նմա Հորթապէ: Այլ ոչ զխեռ սակ յուրպիտ ազգմանէ, աճաղին իմն աղմուկ լեալ չփոթից և բազմութեան զորացն զմմանսն կտտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս սանն՝ յիւրոց զորացն, թաղաւորեալ ամս բասն և Հինգ».

Նորնացի II, 13, էջ 124.

«Եւ յառաջ բան յԱտալ Հասանեն՝ յԱտտովէ զղեկին բարոզեցաւ».

S, էջ 17, 29-34.

«Եւրիտ մեծ կզգի, և Ատալանդ փորրիկ կզգեակ ի մէջն, զոր սանն զտեալ զորացն Արտաշէսի Հայոց արբայի, զի մի՛ նտր ռոճկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զզղեակն Զարժանայի, զի ջուրք յանպատճառս այսր անըր Հոսլին, և սանն անդ մեռեալ Արտաշէսի, և Արխտուռէ անդ եղև խորատոյգ. Եւտպոս է անուն նորա»:

Այս Հատվածները, բայց երևույթին, արձագանք են ժողովրդական խառնաշփոխ ու ազատ Հիշողությունների և վերաբերվում են, Հավանորեն, պատմական այն մեծ անցքերին, որ տեղի էին ունեցել 88-86 թվականներին (Ք. ա.) Միհրդատ Պոնտացու և Սուլլայի ժամանակ (Հմտ. Th. Reinach, Mithridate Eurpator, էջ 154 և Հտ.): Ուշադրով է սակայն, որ Նորնացու Պատմության, ինչպես և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ, Միհրդատ Պոնտացու արեմոյան մեծ արշավանքը վերագրված է Հայոց Արտաշէս թագավորին:

Այդ նմանությունն առաջին անգամ մատնացոյց է արել Ա. Սուրբյանը (տե՛ս «Géographie de Moïse de Corènc», էջ VI և 22): Յո. Մարկիվարտն իր «E. Anschaher» աշխատության մեջ (Berlin, 1901, էջ 4-6), թե՛ այս և թե՛ իր նկատած մյուս նմանությունները բացատրում է, ինչպես և Սուրբյանը, Նորնացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի Հեղինակների նույնությամբ: Նա ենթադրում է սակայն, որ այդ Հեղինակն ապրել է ո՛չ թե V դարում, այլ ամենականխար VII դարի վերջում: Ընտապս իր ուսումնասիրություններում Մարկիվարտը Հարել էր, ինչպես վերը տեսանք, Պատկանյանի տեսակետին և «Աշխարհացոյց»-ը վերագրել Հայտնապես Անանիա Շիրակացուն:

Վերահիշյալ Հատվածները բնութային են առնված նաև Գր. Սարգիսյանի "АРМЯНСКИЕ АРШАКІДЫ", աշխատության մեջ (Москва, 1903, էջ 46, 48, 50), որն «Աշխարհացոյց»-ի նման վկայությունները Համարում է աղբյուր Նորնացու Պատմության:

գ. Նորնացի II, 6, էջ 109 (Տփղիս, 1913):

«Եւ ինքն [Վաղարշակ] արձակեալ զարեմտեալ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Նարայի, զոր Հինքն Անփայտ և վերին Բասենն կոչէին. իսկ յետոյ վասն Ստուռածի Վլքրիդուր Բուլղարայ Վեղայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ, և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանալ կոչին մինչև ցայժմ».

S, էջ 25, 21-26.

«Քր բառ Հլուխոյց են ազգ Թուրբաց և Բուլղարաց. բայտ անուանց զետոցզ կոչեցեալ՝ Կուփի Բուլղար, Գուշի Բուլղար, Ողխտնոր Բլկար Եկն, Զգար Բուլղար. ստար այժմ

ի Պտղոմէականն են այս անուանք: Եւ ի Զիական յետնն է վախճաւ որդին Սուգրազոյց...»:

Հմտ. նաև S, էջ 17, 4-7 և Նորենացի II, 9, էջ 119:

Որ Նորենացու Հատվածի «Վզրկուր Բուզար»-ը Համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի քնդարձակ խմբագրութեան «Ողկտնոտր Բվար»-ին՝ այդ նկատել է առաջին անգամ դարձյալ Սուրբյանը (տե՛ս «Géographie de Moïse de Coréne», էջ VI: Պատկանյանն ուշադրութիւն է դարձրել, որ «Աշխարհացոյց»-ի մէջ ստված է՝ «Ողկտնոտր Բվար Եկն», ուստի և կարծում է, որ բուզարների գաղթի մասին Նորենացու վկայութիւնը Հայտնի է եղել «Աշխարհացոյց»-ի Հեղինակին (տե՛ս «Из нового списка Географии, приписываемой Моисею Хоренскому», ЖМНПР, 1883, 226, էջ 24): Նույն այս խնդիրն ավելի մանրամասն քննված է Սարգիսյանցի և Մարկիպարտի աշխատութիւններում (տե՛ս «Армянские Арпакиды», էջ 29-33 և «Streifzüge», էջ 57 և այլն.):

և. Նորենացի II, 52, էջ 182 (Տփղիս, 1913)՝

«Զի յետ այնչափ արտօթեանց՝ օգնական եղորն Սաթինկան յաշխարհն Արանաց Հանդերձ գորտ երինաց (Սմբատ) Հրամանաւ Արտաշիտի Փանդի մեռաւ Հայր Սաթինկան, և այլ ոմն բունացեալ Թագաւորեաց աշխարհին Արանաց, և Հալաձէր զեղբայրն Սաթինկան, զոր վաննայ Հերբ Սմբատ, և տիրացոցանն էի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, և զերկիր Հակոտակորդացն աւերէ, զամենայն միահամուռ անձ զերի սաստիկ յԱրտաշատ: Եւ Հրամայեալ Արտաշիտի քնակեցուցանել զնոսա ի Հարաւոյ յարեկից կուսէ Մասանց, որ կոչէր Ճուարչական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի զերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի»:

Նորենացի II, 58, էջ 187 (Տփղիս, 1913)՝

«Թ սորա (Արտաշեսի) աուորս և Առուեղեաներդ, յազգէ Արանաց, մերձաւորք Սաթինկան, զհետ նորա Եկեալք՝ կարգեցան յազգ և ի նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս Հարագատար Թագուհոյն մեծի. և ի ժամանակս Սարգիսու Հորն Տրգատայ յնամոցեալ ընդ ումեմն քաջի Բազոյցն Եկեալ Հատուածի»:

Հմտ. նաև Նորենացի II, 53, էջ 183.

S, էջ 26, 24-31.

«Եւ են ի Սարնատոյ Համարեալ, այսպէս, սկսեալ ի մտից յիս կոյս, նախ ազգ Արուանաց, Աշտիգոր որ քառ Հարաւոյ. Համարնակ նոցա Ներուրք և Քութնաք և Արգուել և Մարոյոյ, և Փակուր, և Ալանք են յետ Գիրորին, յԱրզոյ աշխարհի Կուկասին յերանցն, ուստի Հոտի գետն Արմնայ, և զնայով ընդ Հիւսիսի՝ ընդ զաշտ անրասու, խառնի յԱթի: Եւ ի նոյն յերինն՝ յետ Արդոզեան ազգին քնակեն են»:

Բ. Պատկանյանն առաջինն է նկատել, որ «Աշխարհացոյց»-ի «Արդոզ աշխարհ»-ը, որը գտնվում էր Կովկասյան լեռներում, Հիւնցեում է Նորենացու վերահիշյալ վկայութիւնն Արտազ գաղթի մասին (տե՛ս «Из нового списка Географии», էջ 30, մաս. 1): Յս. Մարկիպարտի կարծիքով, Վաստրալանի Արտազ գաղթի անունը շատ Հին է և Հիշատակված է, Հալամտորն, Սուրբարնի մոտ («Αρχατα կամ Αρξατα»: Իսկ Նորենացու քաջատրութիւնը նրա սովորական ստուգարանական մեկնութիւններից մեկն է, որ Հիմնված է արաբական «Աշխարհացոյց»-ի Արդոզ և Հայկական Արտազ անունների նմանութեան վրա (տե՛ս «Ertinschahr», էջ 4, «Streifzüge», էջ 171 և «Genealogie der Bagratiden», Caucasica, 1930, Fasc. 6, 2 Teil, էջ 24-30): Մարկիպարտ Եկեալորն է նույնպէս, որ Նորենացին՝ Հիմնվելով դարձյալ «Աշխարհացոյց»-ի «Արգուել» անվան վրա, «Առուեղեան»-ներին կամ «Առուեղեան»-ներին Համարել է «յազգէ պարանց» և «մերձաւորք Սաթինկան» (տե՛ս «Ertinschahr», էջ 5 և «Streifzüge», էջ 171):

գ. Նորենացի II, 65, էջ 200 (Տփղիս, 1913)՝

«Վանս զի ի սորա (Վաղարշի) աուորս միարանեալ ամբոխութեան Հիսիսականաց, զՊազրաց սանն և զԲալայաց, արտաքս քան զգոուն ճորայ Երանեն, առաջնորդ և Թագաւոր ունկով ինքեանց զՎասանկ ոմն Սուրճազ, որք անցեալ վտարին այսր զԿուր գետով»:

Հմտ. նաև Նորենացի II, 58, էջ 187 և II, 85, էջ 230.

S, 26, 14-19.

«Յորոյ (Աթի գետի) մէջն է կղզի, յոր մտեալ ամբանայ Բալայաց ազգն, ի Հոբր ազգէն Պաղրաց և Բուշխաց, ճարակելոց յեկից և ի մտից, Եկելոց անդ ի ձմերոց, և կոչեն Սև կղզի. զի յաղագս քաղցմութեանն ազգին Բալայաց՝ մարդոյ և անասնոյ անդ մտկոցն՝ սև երեկ, զոր Պտղոմէոս

Գոսա կզզի կոչւն».

V, 605, 6-8.

«և թագաւորն Հրախոյ է Սարանն՝ որ է տէր Սագրաց, և գշտոյն թագուհի կին Սագրացայ ի Բագրաց ազգէն»:

Սագրաների և բասիլների Հիշատակությունը Վազարչի ու Տրգատ Մեծի ժամանակ Սագրայանցն իրափացի կերպով Համարում է ակներև մի ժամանակավրիպում (անաхронизм), որը ցույց է տալիս՝ որ Սորենացու Պատմությունը գրված պիտի լինի ազկի ուշ ժամանակում (տե՛ս «Армянские Аршакиды», էջ 33-34, 110 և 149): Յո. Մարկվարտը, որ իր «Streifzüge», աշխատության մեջ մանրամասն ասուծաստիքը է յազարներին ու բասիլներին վերաբերվող մատենագրական Հին տեղեկությունները, ենթադրում է, որ «Աղծ Մովսեսին», որը Պատմության և «Աշխարհացոյց»-ի Հեղինակն է, բասիլները, ինչպես և մյուս Հյուսիսային ցեղերը, կարող էին Հայտնի լինել, գլխավորապես, VI դարի աղբյուրներից (տե՛ս «Streifzüge», էջ 57, 58 և այլն, նաև «Ermischaher», էջ 4):

է. Սորենացի II, 81, էջ 223 (Տգիլիս, 1913):՝

«Սրանչիլի է և աշխարհ (ձենաց) աստուծոթեանը ամենայն պողոց, և գեղեցիկ բուստի գաղաղբայնայ, բրբանուտ և սիրամարգաշատ և բազմամուտքս, անբաւութիւն, յամուրաց և Հրեչից, և որ էշայծենուց անուտանեն, ուր Հասարակաց կերտուր ասնն զառ մեղ պատուական և սակաւուց ճարակելիս՝ զգոտան և զպոր, և այլք այգպիսիք».

S. 46, 6-11:

«Եւ լինի անդ ի ձենաց աշխարհին՝ զարիճենիկ և կասիմոն, ի Կասիա լեռնէ, և սկլիթիկոն՝ որ է ատրազոյն ինքնեղ, և ունի Հրէշ, և մուշկ, և շիրամարգ շատ, և այլ Հասս պիտանիս, և բրբուն անբաս, մինչ զի Հենեալ որ ի սպիտակ գերզակ ձիով, սպիտակ բազլիս երթեալ յորս՝ զառնայ գեղեցնեայ ամենեկին: Լինի ապրիլում շատ և ազնիս ժան զամենայն երկիր»:

Հմտո. նաև V, 616, 12-18:

Նմանությունն այս Հատվածների մատնացույց է արել Պատմության և «Աշխարհացոյց»-ի Հայերեն իր Հրատարակության ծանոթություններից մեկում (էջ 25, ծան. 2): Գր. Սայաթ-Յանցը, բնութիւյան առնկով այս նմանությունը, ենթադրում է զարմայ,

որ Սորենացին ձենաստանի մասին իր տեղեկությունները բաղկ է գլխավորապես «Աշխարհացոյց»-ից (տե՛ս «Армянские Аршакиды», I, էջ 152 և II, էջ 54):

Վերև մեջբերված նմանությունները, եթե անզամ նրանցից որևէ մեկը Հավանություն չգտնի, այնուամենայնիվ իրենց ամբողջությամբ ցույց են տալիս, որ Սորենացու Պատմության աշխարհագրական վերոհիշյալ վկայություններն անհրաժեշտ կապ ունեն «Աշխարհացոյց»-ի Հետ: Այս կապը, ինչպես տեսնում ենք, բնորոշում են բոլոր բանասերները: Սակայն նրանք տալիս են այդ կապի մասին տարրեր բացատրություններ:

ա. Վենետիկի Մխիթարյանները՝ Ինճինյան, Սուրբյան և ուրիշները՝ այդ Համեմատությունը բնական ու Հասկանալի են գտնում, որովհետև Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը նրանք իրագրում են V դարի մատենագիր Մովսես Սորենացու:

բ. Պատկանյանը, ինչև մատանելում է այդ կապը, սակայն խուսափում է բացատրություններ տալուց: Որովհետև Սորենացու V դարի Հեղինակ լինելը Համարվում էր նրա ժամանակ անկասկածելի մի փաստ, ուստի և նա չէր կարող պնդել, որ Սորենացու Պատմության Համապատասխան վկայությունները բաղված են «Աշխարհացոյց»-ից, որը նա վերագրում էր Անանիա Շիրակացու:

գ. Գուտչմիզը բացատրում է Սորենացու նմանությունները նրանով, որ Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը միևնույն Հեղինակի՝ Կեղծ-Մովսեսի աշխատություններն են՝ գրված VII դարի կեսերին:

դ. Նույն կարծիքին էր Մարկվարտն իր Հնագույն Ermischaher ուսումնասիրության մեջ՝ այն տարբերություններ միայն, որ «Աշխարհացոյց»-ի գրույթի ժամանակը նա ենթադրում է ամենականուխը VII դարի վերջերսում:

և. Հիշյալ կարծիքներից տարբեր է Սագրայանցի տեսակետը: Այս բանասերը, որ մանրամասն քննել ու մատնացույց է արել Սորենացու Պատմության աղբյուրները, ենթադրում է, որ Պատմության Հեղինակն օգտվել է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից, որը գրված է եղել Պատմությունից առաջ:

Ինչպես Հայտնի է, այս կարծիքներից և ո՛չ մեկը վերջնական

կերպով ընդունված չէ և «Աշխարհացոյց»-ի խնդիրը ո՛չ միայն մտացկ է մինչ այժմ առկայ, այլև Պատմագրական անհիմն կերպով ընդհանրացնել է Պատմականների վերոհիշյալ սխալ կարծիքը, որ իբր թե այդ երկը պատկանում է Անանիա Շիրակացուն: Ենթեք մենք նոր ու ուշագրավ փաստերով ցույց կտանք, որ Պորենացու Պատմությունը, ինչպես և «Աշխարհացոյց»-ը, միևնույն Հեղինակի՝ «Մովսես Քերեթոյ»-ի աշխատություններն են, որն ապրել է IX դարում: «Աշխարհացոյց»-ի խնդիր լուծումը, ինչպես կտեսնենք, Նարայնուցու է տային վերջնականապես պարզելու նաև Պորենացու շարաքառտիկ առեղծվածը, որի մասին անթիվ բնագրատվություններ են լույս տեսել ու թեր և դեմ կարծիքներ արծարծվել գաղափարն ընդունելով:

7. «Աշխարհացոյց»-ի և Պորենացու Պատմության աննմանությունները, որոնք ցույց են տրված Հ. Հյուբշմանի մոտ, խիստ բռնաձիգ են ու միանգամայն անհավանական: – «Աշխարհացոյց»-ի և Պորենացու Պատմության Համեմատական խնդիրը բնութեան է առկա նաև Հյուբշմանը «Հին Հայոց տեղագրականությունները» իր աշխատության մեջ (տե՛ս թարգմանությունը Հայր. Բ. Պիլեղիկյանի, էջ 262-267, «Հավելված Բ. Մ. Պորենացու և Հայկական աշխարհագրությունը»: Այս խնդիր բնեկեյա՝ Հյուբշմանն ի նկատի է ունեցել «Աշխարհացոյց»-ի այն մասը, որ վերաբերվում է Հայաստանի աշխարհագրության:

«Եթե ապացուցվի, – առում է Հյուբշմանը, – որ այս մասը Պատմության Հեղինակն է, այն ատեն մնացյալ մասն այ՛ որ յուր մեջը կը բովանդակե Սուրբյանի և Մարկիարտի (Երանշ., էջ 4) դիտած աղբյուրներն Պատմության Հետ, նու՛յն Հեղինակն պիտի ըլլայ, և այս պարագային երկուքն այ՛ Պատմությունն ու Աշխարհագրությունն՝ ընծայվելու են կա՛մ Սուրբյանի Հետ՝ Ե՛ դարումս (որ անկարելի է), կա՛մ Մարկիարտի Հետ՝ է՛-ը դարում: Իսկ եթե ցուցվի, որ Հայաստանի աշխարհագրության վրա խոսող Հատվածը՝ Պատմության Հեղինակն տարբեր Հեղինակ մ՛ունի, այն ժամանակ ստիպված ենք ընդունելու որ կա՛մ Պատմության Հեղինակն օտար անգլագ աշխարհագրությունը գրած է և Հետագույն անձ մը նույն աշխարհագրության մեջ՝ Հայաստանի Հատվածն ավելցուցած մուծած է, որ Հավանական չէ, կա՛մ այս երկու երկերն՝ որչափ այ ինչ-ինչ

կետերու մեջ իրարու Հետ աղերս այ ունենան – այս կետերը Հասարակաց արդյունք մը բխած պիտի ըլլան – տարբեր Հեղինակներն են, այնպես որ Պատմության Հորինման ժամանակը կրնա վճռվի՝ առանց աշխարհագրությունը նկատողության առնելու» (տե՛ս էջ 263-264):

Համեմատելով այս տեսակետից վերոհիշյալ երկերի աշխարհագրական տեղեկությունները՝ Հյուբշմանը նրանց մեջ մասնացուցչ է անում որոշ աննմանություններ և կարակացություն է Հանում, որ Պորենացու վերաբերյալ Պատմությունն «աշխարհագրական տեսություններով ու անուններով» ավելի Փափատուին է մոտ, քան «Աշխարհացոյց»-ին: Այս կարակացությունը, իմ կարծիքով, ճիշտ չէ: Ենթեք մենք կտեսնենք, որ Հարգելի Խոսեցյալների դիտողությունները կա՛մ ոչինչ չեն ապացուցանում և կա՛մ ակներև թյուրմացություններ են:

Մատենադարան աննմանությունները, որ կետ առ կետ մեջ ենք բերում, Հետևյալներն են:

1) Հյուբշմանի կարծիքով՝ Պորենացու Պատմությունը, Փափատուի նման, Բարձր Հայք, Տուրքերան, Կորճեք, Պարսկահայք, Փայտակարան, Ռոտի և Այրարատ նահանգները չգիտեն որպես նահանգ, սակայն, «Աշխարհացոյց»-ի նման, գիտեն որպես նահանգ՝ Զորորդ Հայքը և Վասպուրականը, որոնք գոյություն չունենին տակալին Փափատուի ժամանակ:

Այս դիտողությունն ըստ իս ավելի քան միանջի է: Եթե Պորենացու մոտ վերոհիշյալ երկրները չեն Հիշատակված որպես նահանգ՝ այդ բացատրվում է, Հավանորեն, նրանով, որ Պատմության մեջ կարիք չի եղել Հիշելու Հայաստանի բոլոր չրճանները: Ետտ պարզ է, որ պատմական նման Համեմատություններից Հնարավոր չէ կարակացնել, որ իբր թե վերոհիշյալ չրճանները (իբրեյ պղպիտի) Հայտնի չեն եղել Պորենացուն:

2) Իբրև ուշագրության արժանի աննմանություններ՝ Հյուբշմանի մոտ նշանակված են աշխարհագրական անունների և անգլագ նրանց ուղղագրության Հետևյալ տարբերությունները՝ ա. Պոր., III, 15, էջ 274 – Անձիտ, իսկ V, 607, 21 – Հանձիթ, Տ. 30, 14 – Անձիթ, Բ. Պոր., II, 8 – 4որ.

Ջոր, Մոր, իսկ V, 610, 11 - Կողբոփոր, Ջորփփոր, Մորփփոր, դ. Նոր., I, 12, էջ 39 - «Նաև Արագածոյ», իսկ V, 610, 24 - Արագածոտն և S. 34, 9 - Արագածոտն, դ. Նոր., III, 23, էջ 283 և III, 37, էջ 305 - Կողայոփա, իսկ V, 610, 25 և S. 32, 24, 29 - Կողփա;

Իրերստինքյան Հասկանայի է, որ այս մի երկու անձնանու-
թյուններն առանձին կարևորություն չունեն, որովհետև ավելի
աչքի ընկնող ու ավելի շատ տարբերություններ ստացվում են
«Աշխարհացոյց»-ի Համատառ ու ընդարձակ խմբագրություն-
ների Համեմատությունից, որոնք, ինչպես տեսանք, ծագում են
նախնական միևնույն բնագրից:

3) Հյուրըմանն անձնանություններ է Համարում նաև այն,
որ Գեղիք և Գորեք զավատների անունները պակասում են
Փավստոսի և Նորենացու մոտ, բայց Հիշատակված են
Գեորգիոս Կիւրացու մոտ (տե՛ս *Georgii Cyprii, Descriptio
orbis Romani, Lipsiae, 1890, էջ 49 - Κλίμα Διγρησινης և
κλίμα Γαρινης*) ու նաև «Աշխարհացոյց»-ում (V, 607, 21
Գեղիք, Գորեք և S. 30, 15, 17 Գեղիկ, Գարեկ): Մրան Հա-
կտակ՝ Հին Անգղոտուն զավատը, որը ծանոթ էր Փավս-
տոսից սկսած մինչև Նորենացու Պատմությունը (տե՛ս I,
23, էջ 71 և II, 8, էջ 114) անհետացած էր թե՛ Գեորգիոս
Կիւրացու և թե՛ «Աշխարհացոյց»-ի ժամանակ:

Սխալ են, անշուշտ, և անըզուունի նաև այս դիտողություն-
ները: Ինչպես Հայտնի է, Նորենացու մոտ նույնպես չեն Հիշված
Մրեմուր, Արամունիք, Մարաղաի, Մարկոտն և ուրիշ զավատներ:
Կարելի՞ է միմեկ դրանից երթալացնել, որ այդ զավատները
Հայտնի չէին Նորենացուն: Իսկ Անգղոտունը, որը մեջ է ընդգր-
ված Նորենացու քով իբրև «Տօրք Անգղոնայ» տոհմի անուն (II, 8, էջ
114)⁴ չէր կարող, բնականաբար Հիշված լինել «Աշխարհացոյց»-ի
մեջ, որովհետև VI զարում, ինչպես վկայում է Հենց ինքը՝ Հյուրը-
մանը (տե՛ս «Հին Հայոց ստեղծյ անունները», էջ 157), այդ
զավատը ձուլված է եղել ուրիշ զավատի Հետ:

4) Հյուրըմանի անելով՝ Նորենացին Մեծ Մոփք զավատի
անունը (= Sophanece) գիտն իբրև Մոփք, մինչդեռ այդ զա-
վատը, որ 591 թվականին տրվել էր Բյուզանդիային և
միացվել Աղձնիքի Հետ, սովանակ է այնուհետև Նփրկերտ

բազարի անունով Նփրկերտ զավատ: Բացի այդ՝ Նորենա-
ցին, ըստ երևույթին, տեղեկություն չունի Մեծ Մոփքի
Աղձնիքին միացվելու մասին, որովհետև Աղձնիք ասելով
(II, 8, էջ 116) նա Հասկանում է՝ «գեղեմ և որ շուրջ
գետմա, և գեղան Տաբոս, որ և Միմ, և գեղեսուրն ան-
նայն»՝ այսինքն՝ Արևն երկիրը, Միմ լեռը և Բաղշի կիրճը,
ստանց Մոփք զավատի: Հակասակ Նորենացուն՝ «Աշխար-
հացոյց»-ը գիտն Նփրկերտ զավատը և Արևն ու Նփրկերտը
Համարում է Աղձնիքի զավատներ (տե՛ս V, 607, 25-26 և S.
30, 26-27):

Հյուրըմանի այս դիտողությունը ևս ըստ իս թյուրմացություն
է: Նորենացին իր Պատմությունը գրելիս՝ օգտվել է Հազոյն
աղբյուրներից և միանգամայն իրավացի կերպով Հին Sophanece
զավատն անվանում է Մոփք և Համարում Չորրորդ Հայքի մաս
(II, 8, էջ 115): Ար նա չի իմացել այդ զավատի Հետագա անունը
և միացումն Աղձնիքի Հետ՝ այդ անշուշտ, ավելի քան միեկնի մի
եզրակացություն է, որ չի բղխում ընտել նրա վերահիշյալ վկա-
յություններից:

5) «Փավստոսի մոտ, - ասում է Հյուրըմանը, - Տնօրիք եր-
կիրը զանապակում է Կորգուրից և Կորդիբից (Կողբիք,
Կորդրիք), բայց «Աշխարհացոյց»-ում այլևս սրանց Հետ չի
Հիշվում, Նորենացին Հիշում է զևտ, բայց նույնացնում է մի
տեղ Տնօրիք Կորդիբի Հետ և Տնօրիքը Համարում է սխալ-
մամբ Կորդիբի Հազոյն անունը:

Հյուրըմանի այս դիտողությունը ո՛չ միայն ուշիւ չի ապա-
ցուցում, այլև, ընդհակառակը, ցույց է տալիս, որ Նորենացին,
ինչպես և «Աշխարհացոյց»-ը, Տնօրիքը չեն Համարել առանձին
զավատ: Նորենացին Տնօրիքի մասին ունի Հետևյալ վկայույթու-
նը՝ «Հրամանա Արտաշիսի բնակի (ՄՅրատ) ի Տնօրիս, որ այժմ
կոչի Կորդիբ, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերոյն» (II, 53,
էջ 183): Հասկանալի է, ուրեմն, թե ինչու «Աշխարհացոյց»-ի մեջ
Տնօրիքի փոխարեն Հիշատակված է միայն Կորդիբը (տե՛ս V, 608,
12-13 - «գԿորդիս վերին, գԿորդիս Միջին, գԿորդիս Ներքին»,
S. 32, 10-11 - «գԿորդիս վերի, գԿորդիս Միջի, գԿորդիս Ներքի»):
Տնօրիքի այս նույնացման մասին Կորդիբի Հետ տե՛ս J. Marquart,
Südarmenien und die Tigrisquellen, էջ 352-354:

6) «Աշխարհացոյց»-ն,- առում է Հյուրըմանը,- Աչոցք զախարք, որը զանկում էր Գուգարքի և Այրարատի սահմանի վրա, զնում է Այրարատում, իսկ Սորենացին նույն զախարք զնում է Գուգարքում Զորոյ և Տաշիրի միջն»:

Այս աննմանությունը կարող էր, անշուշտ, որոշ նշանակություն ունենայ, եթե նա ճիշտ լիներ: Սորենացու վկայությունը ռեկերցիոնը Համոզում է սակայն, որ այս աննմանությունն արդյունք է Սորենացու Համապատասխան վկայության սխալ լուսարանման: Սորենացու մտա «Աչոցոյ տէրութիւն»-ը Հիշատակված է Հետևյալ Հատվածում (II, 8, էջ 113-114)¹

«Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի, ժառանգեաց զԼեւոն Միջին, որ է Կանգարք, և զԷկս ծափնն Զաւախաց, զԿողք, զԾոր, զՋոր, մինչև ցամուրն Զարակերտ: Բայց զտէրութիւնն Աչոցայ՝ և սեպհականությունն Տաշրաց կարգի Վաղարշակի զաւակացն Գուշարայ Զայկազնոյ: Իսկ ընդդէմ ընդինն Պառկասայ կողմակալ Հրախոյ կարգի զմեծ և զ՛գօր սղզն, և նահապետութեանն անուն կարդայ բղեւշին Գուգարացոց, որ էր լեալ ի զաւակի Միհրդատայ, Գարեհի նախարարի»:

Այս Հատվածից զժժվար ու անհավանական է, անշուշտ, Հետևյալն, որ Սորենացու մտա Աչոցքը Հիշատակված է Գուգարաց զախարքների մեջ: Պարզ է ուրեմն, որ Հյուրըմանի վերոհիշյալ դիտողությունը դարձյալ ակններն մի թյուրիմացություն է և ուրիշ չի ապացուցում:

7) «Ըստ Սորենացու,- առում է Հյուրըմանը,- Արտաշատը զանկում էր այն տեղում, ուր Երասխա ու Մեծամոր իրար Հետ կը խառնվին, իսկ ըստ «Աշխարհացոյց»-ի - Վար յառաջին ժամանակն խառնուրդք Մեծամարի, իսկ այժմն փոխեալ զզնացան Մեծամարայ՝ խառնի ի մտից կուտէ»:

Սորենացու և «Աշխարհացոյց»-ի կարևոր այս Հատվածները, որոնք Արտաշատի Հին տեղը ցույց են տալիս Արաքսի ու Մեծամոր, իսկ նոր տեղը՝ Արաքսի ու Աղստ գետի՝ միացման կետերի մոտ՝, մեջ ենք բերում առանց կրճատումների:

¹ Արտաշատի տեղը որոշելու համար այս վկայությունները կարող են, անշուշտ, կրվան ծառայել դիտմանն արշավախմբերին:

Սորենացի, II, 49, էջ 176 (Տիգրիս, 1913)¹

«Երթեալ Արտաշատի ի տեղին, ուր խառնին Երասխա և Մեծամոր, և Հանեալ ընդ ըլուրն՝ շինե թաղք չիւր անուն անուանեալ Արտաշատ».

Տ, 34, 16-22²

«Նս ապա յեկից նորա (Մեծամորի) զևոն Աղստ, և արգարև ազատ. որոյ սկունքն բխեն ի Գեօղ լեւոնե, ի Սախտրակ ստեղծ, որ իջանելով ընդ Գուին, արբուցանել զամենայն Սուսանն Զայց, և անցնալ ընդ Հարա անկախի յԵրասխ, յորոց ի մեջ շինեալ է Արտաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակն խառնուրդք Մեծամորի, իսկ այժմն փոխեալ զզնացան Մեծամորայ՝ խառնի ի մտից կուտէ»:

Հյուրըմանի կարծիքով՝ այս վկայությունները վերագրվելու են տարբեր Հեղինակներին: Իսկ իրապես՝ վերոհիշյալ վկայությունները ո՛չ միայն իրար Հակասող աննմանություններ չեն, այլև միմյանց Հետ կառարկապիս Համերալիս են: Նույն վկայությունները, թվում է ինձ, կարող են անզամ բացատրվել Հեղինակի նույնությունը, որովհետև «Աշխարհացոյց»-ի Հեղինակին ևս Հայտնի է Արտաշատի Հին տեղը, որ մատենանշված է Պատմության մեջ:

Հյուրըմանը, վերոհիշյալ իր դիտողությունների վրա Հիմնվելով, եկել է Հետևյալ եզրակացությունից՝

«Թերևս Սորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի խտրերուն մեջ անեմված այս տարբերություններն և ո՛չ մին ինքյան այնչափ զորավոր է, որուն վրա յեցնալ վճովի Աշխարհագրության արհեստ՝ նկատմամբ Պատմության, քայց այս տարբերությանց ամբողջությունը կարծես թե - եթե նույն իսկ այս տարբերություններն բանի մը Հատը մեկնությունը մ'այ վերցվի - կ'ապացուցանեն որ աշխարհագրության Հայաստանով զբազոլ մասն և ըստ ուրմ ամբողջ գրությունը պատմության Հեղինակն չէ» (տե՛ս Թարգմ. Պիլնգիկյանի, էջ 266):

Հակառակ այս եզրակացության՝ մեր բնությունից պարզ երևում է սակայն, որ մեկնությունը վերանում են ո՛չ միայն մի քանիսր վերոհիշյալ տարբերություններին, այլև բոլոր տարբերություններն առանց բացառության: Պարզ է ուրեմն, որ այդ եզրակացությունը կարող ենք կտրականապես մերժել:

8. Ընդհանրացված այն կարծիքը, որ «Ալշխարհացոյց»-ի Հեղինակ Անանիա Երրակացին է՝ ճիշտ չէ: — Վերը մենք տեսանք, որ բանասերներից շատերը, հիմնվելով Ք. Պատկանյանի եզրակացութեան վրա, «Ալշխարհացոյց»-ի Հեղինակ Համարում են Անանիա Երրակացուն: Ասկայն այդ եզրակացութիւնները գոյրկ է, ինչպէս ստացինք, փաստական հիմնավորումներ:

Որ այս կարծիքը բոլորովին անընդունելի է, այդ երևում է բառի «Ալշխարհացոյց»-ի և Անանիա Երրակացու երկերի բովանդակութեան Համեմատութիւններից: Երրակացու աշխարհագրական որոշ տերմինները, ինչպէս և նրա աշխարհագրական Հատուկ Հայացքները, այնքան տարբեր են «Ալշխարհացոյց»-ի Համապատասխան տերմիններից ու Հայացքներից, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ «Ալշխարհացոյց»-ը Երրակացուն վերագրելը միանգամայն անհաշոյղ մի կուսուում է:

Յողնելով մի բանի մասը անձնանուիչունները, որոնք կարող են վիճելի Համարվել, մե՛ջ ենք բերում միայն այն խոշոր տարբերութիւնները, որոնք անհերքելի կերպով ստացուցում են նոր այս եզրակացութիւնը:

1) «Ալշխարհացոյց»-ի ռուսերեն թարգմանութեան ծանոթութիւններից մեկում (տե՛ս էջ 9, ծան. 17) Հենց ինքը Ք. Պատկանյանը շատ ճիշտ նկատու է, որ «Ալշխարհացոյց»-ի Հեղինակը «միջօրեական զիծ» է անվանում ո՛չ միայն միջօրեականը, այլև Հասարակածը: Ք. Պատկանյանը սակայն անուշադիր է թողել, որ Անանիա Երրակացին, որին նա վերագրում է «Ալշխարհացոյց»-ը, գիտե «Հասարակած» և «Հասարակօրեայ» տերմինները (տե՛ս «Անանիա Երրակացուց մնացորդ բանից», հրատ. Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1877, էջ 57, 59, 68), որոնք ծանոթ չեն «Ալշխարհացոյց»-ի Հեղինակին:

2) Անանիա Երրակացին ճշտով տարբերում է իրարից «ծով» և «ծովակ» աշխարհագրական գաղափարները և «ծովակ» է անվանում «Աս փաղէս»-ը՝ «որ մտա յաշխարհն Հրէաստանի է»՝ և Հայաստանում «Բզնունեաց ծով»-ը, իսկ «Ալշխարհացոյց»-ի մե՛ջ թե՛ «ծովերը և թե՛ այդ ծովակները կոչվում են, մեծ մասամբ, անխտիր ծով: Կարևոր այդ տարբերութիւնները պարզ երևում է Երրակացու և «Ալշխարհացոյց»-ի Հետևյալ վկայութիւններից.

Անանիա Երրակացի, Մնացորդ բանից, «Ելողազս ծովու», էջ 41՝

«Ասկայն ոչ է պարտ զծովական ծովս կոչել. ոչ զԱսփաղէս ծովակ որ մտա յաշխարհն Հրէաստանի է, և ոչ զԱնրբերիցիս ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ ի միջի, և զայ Հասանէ յաշխարհն Արարացոց: Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչենք Բզնունեաց, և ոչ այլք որ յարևելս են որ կոչին Կոնստանդնուպոլս, զի սորա զոր ասացար՝ ծովակը են և ոչ ծովք»:

Տ. 36, 26 և 31, 23՝

«և զԱսփաղէսիս ուր է Մուկայ ծովս»:

«և ծովն Բզնունեաց յերկայնն Հարիւր մղոն է, և լայնն փախումս»:

V. 608, 1-2՝

«Ունի [Տուրուբերան] և ծով զԲզնունեացն»:

3) Անանիա Երրակացին իրարից տարբեր է Համարում թիւորիմացարկ «Հիւրկանիա» և «Ասպիս» («բառ երևույթին՝ **Κεσπίς**) ծովերը, իսկ «Ալշխարհացոյց»-ի Հեղինակը գիտե, որ այդ երկու անունն էլ վերաբերվում են Կասպից ծովին:

Երրակացի, Մնացորդ բանից, «Ելողազս ծովու», էջ 41՝

«Թէ՛ւզէս և ասեն սմանք զծովն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկերը որ կոչի Ասպիս, և թէ՛ զանոյս մեկնեալ են ի բուն ծովն, այլ որ փոյթ յանձնի կայան զաշխարհ ամենայն ի զիր ստնուլ, որպէ՛ս յասաջն ասացի, ասեն թէ՛ ծակը են ի միմեանս ծովքն, և Երթան կցին ի միմեանս ներքոյ երկրի»:

Տ. 8, 4-6 և Տ. 11, 29՝

«և զերից ծովուցն՝ զՀողկացն և զՅունացն և զԿասպիցն որ է Վրկանի, բնակութիւն մարդկան ստէ լինել շուրջ զնորք»:

«Երբորդ ծով՝ Վրկանի է՝ որ կոչի Կասպից»:

Հմտա. նաև V. 589, 26-30 և 592, 11:

Ուշագրավ է, այս Հատվածներում նաև այն, որ Կասպից ծովն անվանված է Երրակացու մտա «Հիւրկանիա», իսկ «Ալշխարհացոյց»-ի մե՛ջ՝ «Վրկան»:

4) Երրակացին և «Ալշխարհացոյց»-ի Հեղինակը միանգամայն տարբեր Հասկացողութիւններ ունեն երկրի ձևի մասին: «Ալշխարհացոյց»-ի Հեղինակը, Համաձայն Պտղոմեոսի

տետոթյան՝ երկիր Համարում է գնդաձև, իսկ Անանիա Երթակացին, որ կանգնած է բրիտանական մեկնիչների սեպակետի վրա՝ ենթադրում է երկիր «չորեկուսի»։ Տարաձայն լինելով այս հիմնական խնդրում՝ շատ բնական է, որոնք նրանք տարբեր կերպ են բացատրում «բնդ-դեմբերի» ու Հակոբյանների աշխարհադավան Հարցը։ Անանիա Երթակացի, Մուսցորդը բանից, «Յազագու երկրի», էջ 37՝

«Եւ քանզի երկիր չորեկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թող տայ սմա երկին խրով երագոթեմանքն ի ներքին կիսագունան խոնարհել».

Նույնը, «Յազագու արեգական», էջ 60՝

«Եւ արեգակն միայն միով անձամբ յորժամ երկնից զաննայն սահմանս աշխարհի յուսուտը՛ն».

Նույնը, «Յազագու երկրի», էջ 39՝

«Աստն արտաքինն քրեակոթիկն կենդանեաց աստի և անտի, եթէ զոն ի ներքոյ երկրի մարդիկ, և այլ կենդանիք որք ընդդիմոտունք են մեզ, որպէս ճանճք դիմեճորով պատեալ, նոյնպէս մարդիկ զերկրաւ, և յամառեալ պնդին՝ ասելով. Եթէ ոչ էին ընդդիմոտունք, ո՞ւ՞մ արդեօք արեգակն տայ յոյս զկէս օրն, յորժամ տոտերան զճնդ զիչերոցանէ։ Չի անօգուտ արեգական զընթացս իր ծախել անհնար է։ Այս են անմտութիւնք մեծ, և աւելի թուին ինձ ի սոցանէ ասացելայն, թողում ասկ զյանդիմանութիւնն որ յատուածային քրոջ».

Տ, 6, 18-21՝

«Յորս նախ աննելի է զտիեզերաց ստորագրութիւն նմանութեամբ գնդակաճաց պատկերին. և ապա ձեւել ըստ նորին նմանութեանն, երկրորդ գնդաւն աստղապանաւ, զճնծ կէս շրջանակին, ունելով Հարիւր ութսուն բնակութիւն մարդկան».

Տ, 7, 19-23՝

«Եւ աստի անտի նորա Ովկիանոս ընդմիջելով զնա ի բնակութենէս և ի Հարաւային կիսագնդէն, զոր ընդդէմ-երկիր կոչեցին բնակեցելոյ երկրիս մեծութեամբ ոչ ըստ սմա՝ այլ ըստ Հյուսիսային կիսագնդին, զոր կոչեն զօսացեալ. քանզի նմա ասնն փորքազոյն զծագրիլ, վասն անձուկ գոյոյ բոլորակին».

Հմտ, նաև V, 587, 6-11 և 589, 7-13:

5) «Աշխարհացոյց»-ի Հեղինակը և Անանիա Երթակացին տարբեր կարծիքի են նաև արեգակի մեծութեան մասին, ինչպես այդ պարզ երևում է Հետևյալ Հատվածներին.

Երթակացի, Մուսցորդը բանից, «Երթակաց արեգական», էջ 60՝

«Եւ յայն ամենայն յայտ է թէ մեծ է արեգակն, ըստ աստուածային զրոջ վկայութեան, որում և արտաբնոցն բարեաց ի Տահ պատահեն վկայութիւնք: Քանզի ասնն թէ մեծութիւն յուսնոյ է ըստ չափոյ երկրի, և արեգականն ստաւել է քան զնա՝ ըստ աստուածային զրոջ».

Տ, 7, 15-18՝

«Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր, քանզի վախճուն և վեց մասն ասնն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովանդակութիւն արեգական, այսինքն՝ օթեանն քառասուն».

V, 589, 1-5՝

«Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան զերկիրս զայս լինել. քանզի վեցերորդ վախճանորոջ լինել չափ արեգական, զերկուս նահանգան ասելով բովանդակութիւն արեգական, այսինքն է օթեմական քառասուն»:

Չանց ենք առնում մեջ բերել նաև ուրիշ վկայութիւններ, որոնք միայնաց անեման են ո՛չ միայն աշխարհագրական անուններով կամ տերմիններով, այլև աշխարհագրական հիմնական բացատրութիւններով: Ինձ թվում է՝ վերը բերված Համեմատութիւններն էլ բավական են Համոզելու, որ «Աշխարհացոյց»-ի Հեղինակի մասին տիրող ու ընդհանրացած կարծիքը պարզ մի թյուրիմացութիւն է և որ այդ երկը չի կարող Համարվել Անանիա Երթակացու աշխատութիւն:

9. Աշխարհագրական տեղեկութիւններին նմանութիւնները, որ նկատվում են Ռորենացու Պատմութեան և «Աշխարհացոյց»-ի մեջ: - Վերև մենք տեսանք, որ Հյուսիսային մասնասկզբ անմանութիւնները և շուգումները Ռորենացու Պատմութեան ու «Աշխարհացոյց»-ի մեջ գուրկ են կարեւորութիւնից և վերանում են ուշադիր քննութեամբ: Ինձ թվում է՝ իրավացի են, ընդհակառակը, Վենետիկի Միխիմարյանները և վերոհիշյալ մյուս բանասերները, որոնք նույն այս երկերի մեջ մատնացույց են արել որոշ Համեմատութիւնները աշխարհագրական Հայացքների և տեղեկութիւնների:

Բացի վերև հիշված դիտողություններից՝ Առաջին Հայրի տեղադրության, Վանանդ զավառի անվան ծագման, «Արդող»-ի ու «Արտաղի», «Արզուլ»-ի ու «Առաւելեան»-ների մասին՝ նախորդ ուսումնասիրություններում ցույց են տրված նաև Հետևյալ նմանությունները.

ա. Նորենացու Պատմության (II, 2, էջ 102), ինչպես և «Աշխարհացոյց»-ի մեջ (Տ. էջ 41), Քուշանաց երկրի մայրաքաղաքն անվանված է «Բաշէ Առուտօրին» (= Bahli-batik, տե՛ս *Jo. Marquart, Einrichahr*, էջ 87, 147 և *Գր. Խալատչյան, Արմենիական Արշակունիք*, էջ 14 և 16), որ էմիրը Նորենացու Պատմության ուսուրեն իր Թարգմանության ծանոթություններին մեկուսւմ մեկուսւմ է «Բաշէ Արեւլյան» (տե՛ս «*История Армении Моисея Хоренского*», Москва, 1893, էջ 240-241, ծան. 124): «Աշխարհացոյց»-ի և Պատմության այդ վկայությունները նման են իրար նաև այն տեսակետից, որ «Պաշչա» և «Պարթև» անունների ծագումը ակնարկված է նրանց մեջ Բաշէ արքայանիստ քաղաքի ու Համանուն զավառի անունից:

Նորենացի II, 68, էջ 204 (Տփղիս, 1913)՝

«Եւ ինքն [Արշակ Մեծ] չուեայ ի Բաշէ՝ Հաստատեաց զԹագաւորութիւնն իւր ամս յիսուն և յերես. վասն որոյ զարմը նորա Պաշչաք անուանեցան, որպէս և եղբորն Վաղարշակայ ի նախնոցն անուն՝ Արշակունիք».

Նույնը, II, 74, էջ 211՝

«Պատաստեայ [Արտաշէր] գրուն տունն զարձուցանել ի նոսա, որ Պաշչան կոչըր զարքայանիստ քաղաքն Բաշէ, և զամենայն աշխարհն Քուշանաց».

V. 614, 3-8՝

«Եւ աշխարհք ևն Արեանց այսորիկ... Բաշէ որ ևն Պարթևք».

S. 41, 29-31՝

«որոյ ի Հիսիսոս Պարթևաց աշխարհն, սակ Պողոսնոս՝ ընդ մեջ ցուրտ կրճանայ և Վրկանի, բայց Պարսիկը կոչն այժմ յաղագս Բաշէ քաղաքի զնա Բաշչի-րամիկը, որ է Բաշչ-առուտօրին».

բ. Գր. Պաղտիսյանցի ասելով՝ ինչպես Պատմության (I, 8, 9, էջ 28 և 30) նույնպես և «Աշխարհացոյց»-ի մեջ (V. 613,

9 և S. 38, 1), Հիշատակված է «Նինուլ» քաղաքը, որը՝ Համաձայն Սերնոսի վկայությունների՝ Սասանյան վերջին Թագավորների ժամանակ դատու էր նորից կենտրոնական խոչոր քաղաք («*Армянские Аршакиды*», էջ 25, 26 և 376):

գ. Նույն բանասերի ասելով՝ թե՛ Պատմության և թե՛ «Աշխարհացոյց»-ի մեջ ձանիր զավառը (Մարգարի ժամանակագրության մեջ՝ *ՄԱՐԳԱՐԻ*) նույնացված է Պաղտիսի Հետ («*Армянские Аршакиды*», էջ 129):

Նորենացի II, 76, էջ 215 (Տփղիս, 1913)՝

«Իսկ Արտաշէր Հանայի ի Տակիտոս»-ի փախուստ դարձուցանել, որ և սպանու ի յերոցն ի ձանիրս Պոնտացոց, որ ևն Պաղտիք».

V. 605, 11-13՝

«Եւ ունի եղեր փորը աշխարհս չորս ... զձանեթ որք ևն Պաղտիք».

S. 27, 27-28՝

«Եւ ի ձանիրս որ ևն Պաղտիք»:

Պաղաղություն արժանի է այս վկայություններում, որ Պատմության և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ զավառն անվանված է «ձանիրս»:

Այս նմանությունների վրա ավելացնելու է նաև մեր նկատած Հետևյալ կարևոր նմանությունները.

ա. «Աշխարհացոյց»-ի մեջ Պարսից աշխարհը բաժանված է չորս երկրամասերի՝ Մարք, Սուժաստան, Պարսք և Արիք: Այս ստորաբաժանումն ուրույն է ու անտոյր այն տեսակետից, որ Պարսկաստանի արևելյան շրջանը՝ Պորասանը՝ անվանված է Արիք (տե՛ս V. 614, 1 և S. 40, 13 և 41, 25): Արդ՝ առանձնապես ուշագրավ է, որ Նորենացու Պատմության վկայություններից մեկում (II, 57, էջ 187) աշխարհազարգան Արիք անունը Հիշատակված է նույն այս նեղ ու առանձնաշատուկ նշանակության, որը ծանոթ չէ Հին Հայոց մատենագրության մյուս աղբյուրներին:

բ. Ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության՝ Արիք-Պորասանում է գտնվել ԱՀմադան զավառը (տե՛ս S. 40, 14): Ինչ թվում է՝ ԱՀմադանի տեղադրության մասին նույն օտարախոս ու արտասովոր տեղեկությունը կրկնված է

նաև Նորենացու Պատմության Հետևյալ Հատվածում.

Նորենացի II, 57, էջ 187 (Տիրիս, 1913)՝

«Տաւուրս սորա [Արտաշէսի] սանն կեկայ զազգն Ամատունաց ի կողմանցն արեւելից Արեաց աշխարհին... Տարեայք են նորս ի յԱրշակայ տաաջին ի Պարթևաց թագաւորեցելոյն. և յառաջադիմութեանը անդէն յԱրեաց աշխարհին ի պատիւ Հասակոյ ի կողմանց Ամատունի: Բայց թէ յինչ պատճառաց զպուտս նոցա այր՝ ոչ գիտնմ, այլ պատուին յԱրտաշէսէ զեղիս ք և դաստակերտօք, և անուանին Ամատունիք, որպէս թէ եկք»:

Եթէ ճիշտ է իմ այս մեկնութիւնը՝ այդ զեկպում սխալ պետք է Համարել Ն. Աղոնցի կարծիքն Ամատունիների ծագման մասին, որոնց սկզբընական Հայրենիքը նա ենթադրում է Ասորգառականի սահմաններում (տե՛ս «АРМЕНИЯ В ЭПОХУ ЮСТИНИАНА», СТО, 1908, էջ 321):

զ. «Աշխարհացոյց»-ի մեջ Հայաստանին սահմանակից Հարավարևմտյան շրջանը, որի մեջ գտնվում էին Ռուհան և Մծրինը, անվանված է Միջագետք, իսկ Հարավարևելյան շրջանը, որի մեջ էր «Ենիուէ»-ն՝ «Արուաստան, որ կոչի Ասորեստան» (տե՛ս V, էջ 611 և 613): «Աշխարհացոյց»-ի այս տեղեկութիւնը հիմնովին տարբեր է Ագաթանգեղոսի, Փավստոսի և Սերետի վկայութիւններից, որոնց մեջ «Արուաստան» է կոչված Մծրնի շուրջը և արևմտակողմը գտնվող Երկիրը: Ուշագրութեան արժանի է ըստ իս, որ Նորենացու Պատմության մեջ՝ Համապատասխան «Աշխարհացոյց»-ի տեղեկութեան՝ Միջագետք են անվանվում Մծրնի և Ռուհայի շրջանները, իսկ Ասորեստան՝ վերահիշյալ «Արուաստան-Ասորեստան»-ը:

դ. Նորենացին Փոքր Ասիան անվանում է Միջերկրայք (I, 8, էջ 28, II, 14, էջ 127 և այլն): Նույն անունը գործ է ածված և «Աշխարհացոյց»-ի մեջ (տե՛ս S, 21, 29 և V, 600, 6):

ե. Ուշագրութեան է արժանի նաև այն, որ թե՛ Պատմության և թե՛ «Աշխարհացոյց»-ի մեջ աշխարհագրական անունները գրված են Հաճախ նման ու անսովոր ուղղագրութեամբ:

1. Ալիս կամ Ալիս = Halys՝ Նորեն, II, 13, էջ 124 և 125, Ալիս - S, 24, 14, 25, 6 և V, 603, 2, 22,

2. Գալիկեայ, ծան, Գալիլիայ = Galilaea, Galilaea՝ Նոր, II,

21, էջ 136. Գալիլիա = S, 36, 24 և V, 611, 17.

3. Գաղղրուս, ծան, Գալլիուս՝ Նոր, II, 88, էջ 237. Գաղղրուս V, 694, 9. Գալլուս S, 14, 23, 25, նաև Գաղղրա V, 694, 12.

4. Գուլք - Նոր, II, 79, էջ 218. Գուլք - V, 691, 28, 694, 20, 696, 11, S, 11, 2, 16, 30.

5. Ելլադա, ծանոթ. Եղզադա՝ Նոր, II, 12, էջ 123, II, 13, էջ 126, III, 62, էջ 346. Ելլադա - V, 696, 20, S, 17, 18.

6. Վերիս - Նորեն, II, 8, էջ 114. «Վերիս, այս ինքն է Վիրք» - V, 605, 16:

Այս բազմաթիվ Համերաշխութիւնները մի կողմից Նորենացու Պատմության և մյուս կողմից «Աշխարհացոյց»-ի մեջ չեն կարող ըստ իս պատահական զուգադիպութիւն լինել: Մույն ուսումնասիրութեան շարունակութեան մեջ մենք պարզորոշ կտեսնենք, որ բոլոր այդ նմանութիւնները բացատրվում են նրանց Հեղինակի նույնութեամբ: Հենվելով ուրիշ՝ ավելի Հաստատուն փաստերի վրա, մենք ցույց կտանք, որ «Աշխարհացոյց»-ի Հեղինակը նույն ինքն Նորենացին է, որ մեծ չափով օգտվել է այս աշխատութիւնից իր Պատմության աշխարհագրական մասերում:

10. Որ «Աշխարհացոյց»-ն անպայման Նորենացուն է՝ այդ երևում է նրա ոճից, բազմաթիվ դարձվածքներից ու մատենագրելու բնորոշ ձևից, որ Հասուն է նման Նորենացուն: Վերև հիշեցնեք, որ Բ. Պատականյանը «Աշխարհացոյց»-ի լեզուն բողոքովին տարբեր է Համարում Նորենացու Պատմության լեզվից: Նրա կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի Հեղինակն ոչ լեզուն, ոչ մատենագրելու մեք, ոչ էլ Հունարեն լեզվի Հնտութեան աստիճանը ընդ թույլ չեն տալիս վերագրելու այդ Երկը Նորենացուն: Վենետիկի Միսիխարյանները և, մասնավորապես, Մուրրյանը՝ պիտում էին, ընդհակառակը, որ «Աշխարհացոյց»-ի լեզուն միանգամայն նման է Նորենացու լեզվին, ուստի և այդ աշխատութիւնը ենթադրում էին Նորենացու գործ: Հակասական և անհասկանալի այս կարծիքները ցույց են տալիս, թե ո՞րքան զգժար է եղբակացութիւններ անել Հին մատենագիրների լեզվի ու ոճի ասանձմաստակոթիւններից:

Բանասիրական նորագոյն ուսումնասիրութիւններում մատենագրական Հին երկերի փոխադարձ կապը և առնչութիւնը, ինչպես և այդ երկերի Հեղինակների նույնութեան Հարցը,

վճույժում են Հաճախ բառամիկրերի ու առանձնահատուկ բառերի Համեմատությունը: «Աշխարհացոյց»-ի և Նորնկարացու Պատմութեան մեջ ևս մատնացոյց են արված Հազվագոյտու ու նման բառեր, որոնք շատ քիչ են Հանդիպում կամ ընտալ չկան ուրիշ երկրում, օրինակ՝ «տառաբարկիթ» — Նոր. II, 8, էջ 114 և V, 615, 6, «Հալք ճարակաուորք» — Նոր. III, 59, էջ 338 և S. 30, 4, «Երազմաչքոթիթիս» — Նոր. I, 30, էջ 83 և V. 589, 20, S. 7, 29, «Ալբեցած» — Նոր. I, 30, էջ 84 և V. 585, 20, S. 5, 14, «Հրէչ» — Նոր. II, 81, էջ 223 և V. 616, 14, S. 46, 7, և ուրիշ նման բառեր: Այդ բառերի վրա մենք երկար կանց չենք անում, որովհետև զգուշանում ենք լուրջ Հետեւեցումներ անել առանձին բառերի նմանություններից, որ պատահական են Հաճախ և ավելի քան վիճելի:

Բառարենական Համեմատություններից մենք շատ ավելի կարևոր ենք Համարում «Աշխարհացոյց»-ի և Պատմութեան մեջ յեզվական մի այլ երևույթի, որ նկատված չի եղել և քննութեան չի ենթարկվել նախորդ ուսումնասիրություններում:

Նորնկարացի իրրե պատմագիր ունի ինչպես Հայտնի է, Հետարբերի առանձնահատուկություններ, որոնցից զուրկ են մյուս Հայ պատմագիրները: Նորնկարացի Հիշում ու քննադատում են սոցիոարար, իր գործածած աղբյուրները: Պատմական անցքեր նկարագրելիս նա անտարբեր արձանագրող չէ, այլ նաև այդ անցքերը լուսարանող ու զնահատող: Նրա այս առանձնահատուկություններին Համապատասխանում են, ընտանաբար, նրա մատենագրելու ձևը և ոճը:

Նորնկարացու պատմութեան մեջ սոցիոարական են ընտրոջ զարձակմանը, ինչպես՝ — «գիտնմ», «ոչ գիտնմ», «կարծնմ», «ինձ թուի», «Հաւանեալ նմ», «ոչ Հաւատամ», «ճշմարիտ է», «մեղ անՀաւատայի է»՝ — որոնք գրեթե չեն Հանդիպում մյուս մատենագիրների մոտ: Հետարբերի է արդ և ուշագրավ, որ նույն այս զարձակմանը Հանդիպում են շարունակ և «Աշխարհացոյց»-ի մեջ:

Կարևոր այս փաստը զորովոր մի ապացոյց է, անշուշտ, «Աշխարհացոյց»-ի և Պատմութեան Հեղինակի նույնություն, ուստի և ներքև մեջ ենք բերում մեր Համեմատություններն ամբողջութեամբ ու առանց կրճատումների.

«Գիտնմ». Նոր. II, 7, էջ 111 — «Գիտնմ և զԳնունիսդ գինի ունիս». I, 19, էջ 57 — «այսպէս Հաւատանալ գիտացուր գկարց բանից». II, 7, էջ 112 — «ոչ գիտնմ թէ վասն սպա-

նկոյն ազգին տաջնոյ»:

= S. 31 — «Ասն թէ նհանց կայ յկրճանի, որպէս յեփրատ, զոր Հաւատար գիտնմ, կենդանի բարբաշամ զուգեալ...» S. 37 — «ունի (Միջպեղեղ) յերիս երկու, ասկ Պագոմնս, զմինն կոչէ Սեպատոս, զոր ոչ գիտնմ ո՛վ է».

S. 37 — «զայս երկու գետս գիտնմ Միջպեղեղաց Ասորաց». S. 42 — «զի այժմ այլազգ ոչ գիտնմ»:

«Կարծնմ». Նոր. I, 6, էջ 22 — «որում ոչ զոր բնդիմանայ կարծնմ ի մյուս ունողանց». I, 3, էջ 12 — «ասակայն և ի նոցանէ՛, զոր ինչ Հաճախին կարծնմ, անուլ»:

= S. 12 — «առ մուտս Տառայ գետոյ, զոր կարծնմ ենաթ էլ». S. 19 — «որ կոչի Ռաւանիտնիս, զոր կարծնմ զՄարեայ ինձ լինել». S. 37 — «զմիտն կոչէ Բարատոն, զոր կարծնմ Նարոր լինել». S. 8 — «ընդ որով թագեալ կարծնմ զարեգակն», Հմմտ. նաև S. 20, 38, 45.

«Ինձ թուի». Նոր. I, 3, էջ 11 — «Ալլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ Հիսնն Հայաստանեայցս լեալ անարկելութիսն իմաստութեան և երգարանաց բանաորաց». I, 4, էջ 16 — «ինձ թուի՝ Հանդուցանելն զաղբերցանել է», I, 18, էջ 56 — «այլ Հաւատար մեղ թուեցաւ». I, 6, էջ 12 — «որ ինձ թուին Սնմ, Բամ և Յարեթ»:

= S. 13 — «ինձ թուի Սնմայ, Բամայ և Յարեթի». S. 12 — «ինձ թուի՝ Մր և Մրվոտ», S. 41 — «ևս աստուածային գիրն զամենայն Արեւաց աշխարհն Պարթեթ կոչէ. ինձ թուի վասն թագաորութեան ի նոցանէ լինելոյ», Հմմտ. նաև S. 42, 51:

«Հաւանեալ նմ», «ոչ Հաւատամ». Նոր. I, 6, էջ 24 — «բայց որպէս և Հաւանեալ նմ, բաղում ինչ ճշմարիտ է», I, 13, էջ 43 — «Հաւանեցար անցանել սակաուրք և բնդ կարց բանից պատերազմացն որ ի Հայկական Արամայ», I, 15, էջ 48 — «որպէս Հաւանեալ նմ», II, 67, էջ 203 — «բայց ևս Հաւանեալ նմ մեղ և յերկար տանել զպատմութիսն ժամանակիս այսորիկ». II, 88, էջ 238 — «բայց այս մեղ անՀաւատայի է»:

= V. 590 — «Ալլ Հաւանեալ նմ Պագոմնայ պատմութեանն», V. 592 — «բայց ևս ոչ Հաւատամ», S. 13 — «բայց ոչ Հաճախնմ», S. 11 — «ևս որ զնմանի գրոյցք, անՀաւատար», S. 39 — «որում ոչ Հաւատացար»:

«Ճշմարիտ է». Նոր. I, 5, էջ 20 – «և է ճշմարիտ, եւ մի՛ որ յերկուսացի, բանգի պատմն մեզ զայսոսիկ է յոյժով իրս Հաստարիմն Արիզկնուս»:

= V. 589 – «և երկիբ բնակութիւն մարդկան առ շուրջ իննկ զնորք. և է ճշմարիտ»։ S. 8 – «բնակութիւն մարդկան առ լինել շուրջ զնորք. և է ճշմարիտ է»:

«Անեմ», «ասացար», «ասացար». Նոր. II, 7, էջ 111 – «Անեմ և զՍպանդուհիւզ ի վերայ գննարանաց»։ I, 19, էջ 57 – «և ասեմ լինել արգարարանի ի պատմութեանս յայսմնիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան»։ I, 12, էջ 42 – «որպէս ասացար»։ II, 68, էջ 204 – «Սորա լինին որդիք երեք և դուստր մի, որպէս յառաջագոյն ասացի»։ II, 67, էջ 202 – «որպէս ասացար, ի վաղարչայ առնու զճազատութիւնն Ռոսրով որդի նորին»։ I, 21, էջ 64 – «ասասցուք որ ինչ Հարկատրն է»։ II, 69, էջ 205 – «բայց մեր ասացուք ի մատնեմն»։ Հմտ. նաև II, 8, էջ 114, II, 49, էջ 176, են:

= S. 39 – «բայց ասեմ թէ ըստ դիպուածոյ անցանէ անդ պատուէ Հոս»։ S. 40 – «այսինքն զոր ասեմ»։ S. 9 – «և յաղագս ուրիշանոսի՝ որպէս յառաջագոյն ասացի, է զդողմամբ Զեկիլոս Հոզմոյ»։ S. 10 – «արդ որպէս ասացար ցվախտուն մասն ուրիշանոս եկելայ զարարէ»։ S. 12 – «զոր նախն ասացար»։ S. 29 – «բայց մեր ասացուք զրուն աշխարհն Ազուանից»:

«Գրեմ», «գրեմք». Նոր. II, էջ 101 – «գրեմ բեզ այժմ և որ ինչ առանձին մերոյ աշխարհի գործք»։ II, 1, էջ 101 – «բայց գրեմ կարճ ի կարճոյ»։ I, 5, էջ 21 – «տկար գրել»:

= V. 690 – «մեր որպէս անՀաս եղևայ մեծութեան լուծք և գրեմք զայս միայն»։ V. 588 – «չորսմ մեր ծայրաբաղ արարեալ գրեցար զմեծամեծն և զնախաորսն միայն»։ S. 14 – «բայց գրեմք զգետս միայն սնունտիս»:

«Սկայաց», «սկացուք». Նոր. I, 3, էջ 12 – «բայց սակայն սկայաց, թէպէտ և ջանի»։ I, 3, էջ 12 – «և սկայաց յորոց և այլին»։ I, 7, էջ 28 – «այլ սկեակ ցուցից բեզ գմերն, թէ ոստի՛ և որպէս»:

= V. 590 – «արդ սկացուք ըստ Պապայ Աղերսանդրացոյ երկրագրութեանն»։ V. 593 – «այսուՀետև սկացուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն»... S. 13 – «սկսանիմք

պատմել զառանձնութիւն նոցա ըստ զրից Պապայ Աղերսանդրացոյ»:

Նշանակելու է, մանավանդ, նաև Հետևյալ դարձվածքները, որոնք Հատուկ են Նորենացուն՝

Նորեն. II, 88, էջ 238 – «Բայց այս մեզ անՀաստայի է, այլոց՝ որպէս կամք իցնն».

Նորեն. I, 14, էջ 47 – «Բակ որ այլ ի յունանց ասի ի յունական կողմանս՝ մեզ ոչ է Հանոյ. այլոց որչափ կամք իցնն».

Նորեն. I, 6, էջ 24 – «Արդ՝ զայսոսիկ այլ որ թէպէտ ասասպէս, թէպէտ ճշմարտութիւն Հաշուեայ Համարեացի՝ բայց որպէս ևս Հասանեայ ևմ, բազում ինչ ճշմարիտ է»:

= S. 46, 23-24 – «Ինձ անՀաստայիք, այլոց որպէս կամք իցնն».

S. 23, 9 – «Եթէ ասասպէս է և ևթէ ճշմարիտ ոչ գիտեմ»:

Գրելու միևնույն սովորութիւնը, միևնույն դարձվածքները, որ գործ են անված վերոհիշյալ Համեմատութիւններում, անկարելի է, իհարկե, Համարել պատահական: Պարզ է, որ մատենագրելու այս Հատուկ մեք բացատրվում է այդ երկերի Հեղինակների նույնութեամբ:

Ի նկատի ունենալով Նորենացոյ յնդրի բացարկի կարևորութիւնը՝ ավերորդ չեմ գտնում մեջ բերել մի նոր փաստ ևս, որով Հաստատվում է դարձյալ միևնույն եզրակացութիւնը:

Ինչպէս Հայտնի է, Նորենացոյ առանձնաստիկութիւններից մեկն էլ այն է, որ նա ժողովրդական Հին առասպելները Համարում էր այլարանութիւն և կարծում, որ նրանք «զճշմարտութիւն իրաց այլարանարար լինընան ունին թարուցեալ» (տե՛ս I, «Հավելված Ա», էջ 90): Այդ առասպելներին Պատմութեան մեջ նա աշխատել է տայ ընական որևէ բացատրութիւն: Պատահական չէ, անչուտ, որ առասպելների մասին միևնույն Հայացքը մեք գտնում ենք նաև «Աշխարհացոյց»-ի մեջ:

Այդ տեսակետը ոչայլարեման ևն արժանի Պատմութեան ու «Աշխարհացոյց»-ի Հետևյալ վկայութիւնները.

Նոր. I, 7, էջ 27՝

«և րնդէ՞ր սա գտակ Հրոյ, և կամ Պրոմէթէոս զողացեալ առ ի յաստատածն զՀուր և շնորհեալ մարդկան,» որ է

այլարանութիւն,- ոչ բերել ասել կարգ բանիս».

Նոյնք, I, 30, էջ 84*

«չորս չարին բանք երգոցն զկրտաշխէ և զորդոց նորս, յիշելով այլարանաբար և զզարմոցն Ածգահակայ, վիշապազոնս զոտա կոչելով. զի Ածգահակգ՝ ի մեր լեզուս և վիշապ».

Նոյնք, II, 49, էջ 176*

«Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են բնոյ յերգս վիպասանացն, բայց յիշատակեցուք և մեր կարճատօսիք, և զայլարանութիւնն ճշմարտեացուք».

S. 20, 13-15*

«զոր ասն թի զնաց Ջոսիմոս միայնակեացն, բայց կարծնս թի զրոյցն այլարանութիւնն է, զոր պատմնն զնմանէ».

S. 45, 22-29*

«Թև ի Հարաւ կոյս զաշտք են փոյցոց ճարակք. և ասն թի մին ազգն էզք են բնակիչք աշխարհին, և ի փոյց կուս ժամանակ ինչ ի տարոյն շուք անցանին, և խառնակին ընդ կանայսն, և յգացնայ ծանինն երկուորիս, զմիսն կորին և զմիսն աղջիկ. և կորինք անցաննն ընդ գետն առ Հարան. և աղջկացն մնալով առ մարսն, բայց և այլարանութիւն կարծնս, որպէս վասն Անագոնացն պատմի լիզկերտազորի գիրսն, զոր Թարապազ ազգ են այլարանեալ»:

Ինչպիս տեսնում ենք, «Աշխարհացոյց»-ի և Պատմութիւնյան մեջ նման են ու Համբարաշխ ո՛չ միայն աշխարհագրական վերահիշույ տեղեկութիւնները, այլև մատենագրելու այն հատուկ մեք և անդամ որոշ հայացքները, որոնք հայոց մատենագրութիւնյան մեջ առանձնահատուկ են եղել բացառապէս Ռորենացուն:

Արդ՝ նոր այս զիտողութիւններն այնքան կարևոր են ու ծանրակշիւ, որ կարող ենք, ինձ թիվում է, «Աշխարհացոյց»-ի Հեղինակի խնդիրը համարել վերջնականապէս պարզված: «Աշխարհացոյց»-ի Հեղինակն է, անտարակոյս, Մովսէս Ռորենացին, և Վենետիկի Մխիթարյաններն այդ կետում կատարելապէս իրավացի են: Միանգամայն ճիշտ է, որեմն, և ձևադրիւթներ յավանդական վերնագիրը, որի մեջ Մովսէս Ռորենացին պարզ ու որոշ հիշված է՝ իբրև «Աշխարհացոյց»-ի Հեղինակ:

Իսկ եթէ այդ այդպէս է, որեմն, մեր այս ուսումնասիրութիւնյան մեջ, որի հիմնական նպատակն է լուծել Ռորենացու անողծ-

վածք, մեզ կարող է կուսն ծառայել ո՛չ միայն Ռորենացու Պատմութիւնը, այլև նրա «Աշխարհացոյց»-ը:

11. Ռորենացու Պատմութիւն և «Աշխարհացոյց»-ի վերնագրերը: - Որ «Աշխարհացոյց»-ը և Ռորենացու Պատմութիւնը միևնույն Հեղինակի գործ են՝ այդ երևում է նաև ուրիշ ցուցումներէր, որ վրիպել են բանասերների ուշադրութիւններէր:

Հետաքրքիր է նախ, որ օտարազգի աղբյուրներ, որոնցից միջանկյալ կերպով օգտվել է «Աշխարհացոյց»-ի Հեղինակը, Հենց նույն այն Հայտնի մատենագիրներն են, որոնք աղբյուր են ծառայել նաև Ռորենացու Պատմութիւն: Այսպիսի ընդհանուր աղբյուրներ են՝ 4եղծ-Վայոթիքենեան Աղբյուրագրի վեպը (տե՛ս վերև § 3 և 2. Տաշյան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Վայոթիքենեայ՝), Եվսերիոս Կեսարացու ժամանակագրութիւնը (տե՛ս վերև § 3), Հովհաննէս Մալաթիի ժամանակագրութիւնը (տե՛ս վերև § 3 և Ա. Կարինք, Նորայտիս աղբերք Մովսիսի Ռորենացոյց՝), Հակոբավաճ, էջ 7-31, և ի՞նչ կարծիրով, նաև Նոննոսին վերագրված անասպկարանական մեկտիթիւնները (տե՛ս վերև § 3 և Գր. Խաւատչեան, ԱՐՄՈՒՏՈՒՄԱՆ ԱՐՄԱՅՈՒՄ):

Այլևի Հետաքրքիր են ու ուշադրավ Ռորենացու Պատմութիւն և «Աշխարհացոյց»-ի նման ու արտասովոր վերնագրերը:

Ռորենացու Պատմութիւն վերնագրին է բառ Մ. Արեղյանի և Ս. Հարութիւնչեանի բնական հրատարակութիւն՝ «Հայոց պատմութիւն յերիս հասուածս ասացեալ Մովսիսի Ռորենացոյց ի ինչորոց Մահակայ Բագատունոյց»: Ապա գալիս են պատմութիւն երկ մասերի Հետևյալ վերնագրերը՝ «Գիրք սառչին» և «Գիրք երկրորդ» և «Հատած երրորդ»: Հիշույ խորագրի մեջ սկզբնական ընդգրում եղած պիտի լինի բառ իս ո՛չ թէ ճերմ հասուածս», այլ ճերմ հասուածս», ինչպէս ունենե՞ց ձևագիրները (տե՛ս Բնական հրատարակութիւն, Տփղիս, 1913, էջ 1), նաև Եվսերիոսը և Հունարան զպրոցի բերի՞ողները: Իսկ Պատմութիւնյան սառչին և երկրորդ մասերում,- այնտեղ՝ ուր գտնվում են այժմ «Գիրք սառչին» և «Գիրք երկրորդ» վերնագրերը,- բուն ձևագիրն ունեցած պիտի լինի, Համանարար, «Հատած սառչին» և «Հատած երկրորդ»:

Պատմութիւնյան բաժանումը «Հատած»-ների մատնանշված է 2. Կարենյանցի ունեցած երկրորդ ձևագրի ոտանավոր հիշատակարանի Հետևյալ տողերում (տե՛ս «Բաղդաստութիւն Պատմութիւն Մովսիսի Ռորենացոյց տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց

ձևագրաց», Թիֆլիս, 1858)՝

«Երբեակ Հատածը սոյն մատենի վկայագրութեան և Մովսիս Խորենացոյ գերայրական»:

Որովհետև «Հատած»-ը խորթ և անտո՛ր բառ էր՝ Թովմա Արծրունու մտո Խորենացոյ Պատմութեան մասերն անվանված են «Հատուածք» («վերադարձութեան ի վերայ երկեցունց զրուսակցու Հատուածին», տե՛ս «Քրճմայի վարդ. Արծրունոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետկերորդ, 1887, էջ 76), իսկ Բաղեշու Անրրոյոյ վանքի Խորենացոյ ձևագրի Հիշատակարանում՝ «Հատոր» («տորահայ ի Հատորս երկս», տե՛ս **Միքան, Խորենացոյ Պատմութեան ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 42**):

Միանգամայն պարզ է, թե՛ ընդհանուր այս վկայություններից, որ Պատմութեան բաժանու՛մը «Հատած»-ների անպայման Խորենացուն է:

Արգ՝ ուշադրով է առանձնապես, որ խորթ ու արտասովոր նույն «Հատած» վերնագրերը, որ չեն Հանդիպում մատենագրական մյուս Հին երկերում, ունի նաև «Աշխարհացոյց»-ը՝ V, 590 – «Աշխարհացիք. Հատած երկրորդ», Տ. 18 – «Լիբիա, երկրորդ Հատած աշխարհս», Տ. 21 – «Բապտարեցաւ երկրորդ Հատածն»:

Այս նմանությունը ես, անշուշտ, պատահական չէ: Բանի որ վերև ցույց էր տրված արդեն, որ Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը միևնույն Հեղինակի աշխատություններ են՝ ինքնբերայնապես Հատակադի են այժմ, թե՛ նրանց վերնագրերի այս նմանությունը և թե՛ վերոհիշյալ նրանց աղբյուրների նույնությունը:

12. Ե՛րբ է գրված Խորենացոյ «Աշխարհացոյց»-ը: – «Աշխարհացոյց»-ի Հորինման ժամանակը գիտականները, ինչպես վերև տեսանք, ենթադրում են զանազան զարաչրջաններում: Ղ. Ինճիճյանը և Ա. Սուրբյանը՝ նրա գրվելու ժամանակը գնում էին V դարում, Յո. Սենտ-Կրտան՝ VII դարի վերջերում կամ VIII դարի սկզբում, Բ. Սեն-Մարտենը՝ IX դարի վերջերում կամ X դարի կեսում, Բ. Պատկանյանը՝ VII դարում, Ա. Գուտչմիզը՝ VII դարի կեսերին, և Յո. Մարկվարտը՝ աննկատելիս VII դարի վերջերս:

Վենետիկի Մխիթարյանների Հին կարծիքի վրա ավելորդ է

այժմ կանց առնել, որովհետև Խորենացին, ինչպես վերջ հիշեցինք, թե՛ իր Պատմութեան և թե՛ «Աշխարհացոյց»-ի մեջ օգտվել է ավելի ուշ ժամանակի աղբյուրներից և քաջ է նրանցից ավելի նոր ժամանակի աշխարհագրական տեղեկություններ: Կարող ենք անտես առնել նույնպես այն գիտնականների կարծիքները, որոնք «Աշխարհացոյց»-ը կնշարհմացարար Համարել են Անանիա Շիրակացոյ աշխատություն և նրա ժամանակը ենթադրել բառ այժմ VII դարում:

Ժամանակի խնդիրը պետք է, ուրեմն, նորից քննել, մի կողմ զինով նախատյայ այդ կարծիքները, և կանց առնել բանասերների փաստական միայն դիտողությունների վրա, որ վերաբերվում են այս խնդրին:

Իբրև սպացույց, որ «Աշխարհացոյց»-ը գրված է VII դարի առաջին կեսում, Պատկանյանը բերում է Հետևյալ իր գիտողությունները. նախ, որ այդ գրվածքում չեն նկատվում այն փոփոխություններն Առաջավոր Արիայի վիճակում, որ առաջացած պետի լինելի արարների ժամանակ, ուստի և, նրա կարծիքով, «Աշխարհացոյց»-ի գրուիցան ժամանակը կարելի է ճշտով որոշել մինչև արարների մուտքը Հայաստան՝ պարսից Խուրով II-ի ու նրա Հաջորդների և Հերակ կայսր ժամանակաշրջանում: Երկրորդ, որ «Աշխարհացոյց»-ում մատնանշված են նրեք Աբարիա, որոնք ունեցել են արարական բնակչություն. իսկ այդ չէր կարող անել «Աշխարհացոյց»-ի Հեղինակը, եթե նա արքան լիներ արաբական նվաճումների ժամանակ: Երրորդ, որ Իրանի գաճախան շրջանի աշխարհագրական անուններում չի նկատվում արաբական արտաստությունների ազդեցությունը և, քայի այդ, չկան նրանց մեջ զուտ արաբական անուններ, որոնք արագ կերպով տարածվել ու սովորական էին դառել Պարսկաստանում (տե՛ս «АРМЯСКАЯ ГЕОГРАФІЯ», էջ XIII):

Ըստ իս այս դիտողություններից և ո՛չ մեկը Համոզիչ չէ: Առաջին դիտողությունը պարզապես սխալ է, որովհետև «Աշխարհացոյց»-ի մեջ կան ակներև նշաններ այն փոփոխությունների, որոնք առաջ էին եկել արաբական տիրապետության ժամանակ. օրինակ՝ «Աշխարհացոյց»-ում Հիշատակված է Բասոր քաղաքն «ամենալից վաճառք» (V, 612, 7), Կուֆա կամ Ակղոա քաղաքը՝ իր «բնակչալ բանակ Տաճկաց» (Տ. 38, 16), «Արուստան, որ կոչի Անորեստան՝ այսինքն Մոճզ» («Մտույ, տե՛ս V, 613, 8) և այլն: Երկրորդ դիտողությունը ճիշտ չէ և

անգամ անհասկանալի է, որովհետև երեք Աբարիան՝ «Ազատամ, Անապատ և Երջանիկ»՝ գոյություն են ունեցել, անշուշտ, և արարական աշխարհակազմության ժամանակ և բնիկ ցեղերն էին պետեղ դարձյալ արարները: Երրորդ դիտողությունը ևս Հիմնավոր չէ, որովհետև Պարսկաստանի աշխարհագրական անուն «Աշխարհացոյց»-ի Հեղինակն օգտվել է ինչպես մասնացույց է արել Յո. Մարկվարտը («Eranšchahr», էջ 5), գլխավորապես, նետտրական եկեղեցական աղբյուրից, սակայն այդ մասում ևս միջանկյալ կերպով Հիշատակված են նույնպես զուտ արարական անուններ, որինակ՝ Արուստան – Ատորեստանի արարական անունը՝ «Մուծղ» կամ Մուսուլ (V, 613, 8), Սուժաստան աշխարհի անունը՝ «Բժրա» կամ Բարա (S, 41, 7) և այլն:

Մեր բերած ապարկությունները ո՛չ միայն Հերբում ևն Ք. Պատկանյանի սխալ ենթադրությունները, այլև ցույց են տալիս, որ «Աշխարհացոյց»-ը գրված է արարական շրջանում:

Ք. Պատկանյանի դիտողություններից շատ ավելի կարևոր են Յո. Մարկվարտի փաստական ցուցումները նրա «Eranšchahr» ուսումնասիրություն մեջ (էջ 5-6): Յո. Մարկվարտն ուշադրություն է դարձնում այն Հանգամանքի վրա, որ Պորասանի երկրների ցուցակում նշանակված են «Աշխարհացոյց»-ի մեջ այնպիսի տեղեր, որոնք կամ երբեք չեն Հիշատակված իբրև առանձին շրջաններ, կամ մասամբ են միայն Հիշատակված՝ առաջին անգամ Աղբյուր-իրն Տաշիթի հաղացուցցում (գրված է Հիջրայի 211/212 թվին = 826/7 – 827/8 թ.), և ծագում են մասամբ իրանական էպոսից և Վահրամ Զուրինի վեպից: Մասնավորապես ուշադրավ են Գճակ և Ասան տեղերը (S-ի մեջ 40, 17 «Գճակստան» ուղղելու է րա Մարկվարտի «Գճակ, Ասան»), որոնցից վերջինը չի եղել երբեք առանձին վարչական շրջան: Այդ երկու տեղերը որոշ գեր էին խաղացել և Հիշատակվել թուրք-արարական այն մեծ կովի վերաբերյալ Հաղորագրություններում, որն արևմտաթուրքերի Ռարանի դեմ տեղի էր ունեցել Հիջրայի 119 թվին (= 737 թ. Ք. Հ.) Գողկանում: Յո. Մարկվարտի կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի Հեղինակը ծանոթ էր զուտ պիտի լինել գրավոր այդ Հաղորագրություններին: Բացի այդ՝ Մկուրիան և Մարմատրան նկարագրելիս՝ նա օգտվել է մի աղբյուրից, որն իրազեկ է եղել ո՛չ միայն սյավների բաղկանյան արգավանքներին մինչև Մակեդոնիա, Գաղմաստ ու Արայա, նաև բուլղարների գաղթին Ապարհրուկի առաջնորդությունը

(679 թ.), այլև Հեկիթաղների, ավարների մասին ու Սոգդիանայի անտրի վերաբերյալ մանրամասն տեղեկություններին, որ Հայտնի էին դառել թուրք-բյուզանդական դիվանագիտական Հարաբերությունների ընթացքում Հուստինոս II և Մավրիկիոս կայսրերի ժամանակ:

Ենեկով այս փաստերից՝ Մարկվարտն «Աշխարհացոյց»-ի գրություն terminus a quo որոշում է ամենավաղ VII դարի վերջերում: Սակայն ի նկատի առնելով Պորասանի նկարագրությունները, ինչպես և «Աշխարհացոյց»-ի Հեղինակի իրազեկ լինելը 737 թվականի թուրք-արարական կռիվներին՝ նա Հնարավոր է Համարում, որ «Աշխարհացոյց»-ը կարող է նաև գրված լինել այդ թվականից Հետո՝ ամենավաղն առաջին Աբրայայանների ժամանակ:

Նորագույն իր աշխատություններում Մարկվարտը, ինչպես Հիլեցինը, փոխել էր իր այս կարծիքը և «Աշխարհացոյց»-ը վերագրել Համաձայն Պատկանյանի սխալ ենթադրության՝ Անանիա Ծիրակացուն:

Ա. Անն-Մարտները, ինչպես վերև տեսանք, «Աշխարհացոյց»-ի Հորինման ժամանակը ենթադրում է IX դարի վերջերում կամ ավելի ուշ՝ X դարի կեսում: Այս ենթադրության փաստական միակ Հիմքն է նրա Հրատարակած բնագրի վկայությունը Գանուր գետի մասին՝ «Վմինչև» Գանուր գետ, որ է Յոզու ռուսաց» (տե՛ս «Mémoires», II, էջ 336): Փաստական այս Հիմնավորումը միանգամայն կարևորությունից զուրկ է, որովհետև «որ է Յոզու ռուսաց» բացատրությունը չունեն «Աշխարհացոյց»-ի V, և S. Հրատարակությունները: Պարզ է, որ այս բացատրությունն ակնբերել մի ընդմիջարկություն է:

Մտնում են, ուրեմն, անխախտ միայն Յո. Մարկվարտի կարևոր դիտողությունները, որոնցից կարելի է Հետեցնել, որ «Աշխարհացոյց»-ը գրված է VII դարից Հետո:

«Աշխարհացոյց»-ի Հորինման terminus post quem non կամ վերջին եզրը որոշված է Հյուրճանի «Հին Հայոց տեղույ անունները» աշխատության մեջ (Թարգմ. Պրեղիկճյանի, էջ 267): «Աշխարհացոյց»-ի մեջ Նախիջևնի Համարում է Վասպուրականի գաղա, իսկ Հայտնի է Թովմա Արծրունու պատմությունից (Մ. Պետերբուրգ, 1887, էջ 240, 247, 252), որ 902 թվականին նա բաժանվել էր Վասպուրականից և միացվել Արևելքի Հետո: Հիմնվելով այս կարևոր փաստի վրա՝ Հյուրճանն «Աշխարհա-

ցոյց»-ի գրութիան վերջին սահմանն իրավացի կերպով ընդունել է 902 թվականը: Որ «Աշխարհացոյց»-ը չէր կարող գրված լինել IX դարից հետո՝ այդ ավելի բան պարզ էրևում է նաև անհերքելի այն փաստից, որ նա Հիշատակված է Ռոմմա Արծրունու Պատմութիան մեջ և ծառայել է Արծրունուն իրեն սպրչուր (տե՛ս «Պատմութիան տանն Արծրունեաց», 1887, էջ 27):

Այսպիսով «Աշխարհացոյց»-ի գրութիան ժամանակը որոշվում է կամ VIII և կամ IX դարում: Պարզվում է նաև այն, որ նա հեղինակն ապրել է անպայման արարական շրջանում: Իսկ այս եզրակացություններից ինքնին արդեն հետևում է, որ արարական այն բաները, որոնք Հանդիպում են «Աշխարհացոյց»-ի Համառոտ խմբագրութիան բոլոր ձևադրերում, իսկ հաճախ նաև ընդարձակ խմբագրութիան մեջ՝ պատկանում են, հավանորեն, նրա բուն ու իսկական հեղինակին և չեն կարող Համարվել օտարաժողով ընդմիջարկություններ: Այսպիսի արարական բաներ են, օրինակ՝ աղխունա V. 612, 26 (= արար. axhuna, տե՛ս Լր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան), դհունաղՀունար V. 612, 26, և ՀունաղՀունար S. 39, 30 (= արար. dshn-ulhinnā, տե՛ս H. Hübschmann, Armenische Grammatik, էջ 269-270), մաղապ V. 612, 26, S. 39, 29 (= արար. malib, տե՛ս «Arm. Gram.», էջ 270), քալասան V. 612, 27 (= արար. balasān, տե՛ս «Arm. Gram.», էջ 263) և այլն:

Ուշագրութիան է արժանի նաև, որ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութիան մեջ Քաղիբի՛ի գևտի մասին ասված է, ինչ արարները նրան կոչում են Շիթիթիմա.

S. 37, 27 - 38, 1՝ «Նախ Քաղիբի, որ րդխ է ի լերանց Սալնայ և Սանանդո... և կոչի այժմ Շիթիթիմա, որ է արիմարբու»:

S. 30, 28-29՝ «գևտն Քաղիբի, զոր Շիթիմա կոչեն Տանկեր, այսինքն՝ արիմարբու»:

Քաղիբի՛ գևտի անվան այս փոփոխությունը, ինչ թվում է, կարող էր տեղի ունեցած լինել VIII դարի վերջերսում կամ IX դարում, երբ Հայաստանի Հարավային մասերում Հաստատվել էին արարական գաղութները և Հիմնվել էին այստեղ արարական առանձին ամիրայություններ:

Կարելի է նույնպես հավանական Համարել, որ նույն այս ժամանակներում ենթադրելու է նաև Փրանկ «Հօր աղ»-ի Հիշատակությունն «Աշխարհացոյց»-ում: Ֆրանկները, ինչպես

Հայտնի է, արարների դեմ Հաղթական կոիվներ էին մղել Սպանիայում Կարոս Մեծի ժամանակ (768-814): Նույն այս Կարոս Մեծը շարիքի հետո Հարարերություններ է ունեցել Հարուն ալ-Ռաշիդի հետ: Հավանական է բառ այս, որ «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի Հնեց այս ժամանակաշրջանից հետո, այսինքն՝ IX դարում:

Արդ՝ է՛նն «Աշխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Պորենացին է, իսկ այդ, ինչպես տեսանք, ավիլհնի է ու ստարականության՝ շատ պարզ է, որ Պորենացու ժամանակն ինքզինու է IX դար: Այս եզրակացությունից Պորենացու ժամանակի համար ստացվում է որոշ ու հաստատուն մի կոման, որի օգնությամբ Պորենացու անդձվածի լուծումը, ինչ թվում է, հաջողվելու է մեզ տալ սույն ստույգամարտության երկրորդ մասում:

13. «Մղոնաչափք»-ի գրութիան ժամանակը: - Պորենացու և նրա «Աշխարհացոյց»-ի հետ կարող է որոշ կապ ունեցած լինել «Մղոնաչափք»-ը, որը ստացրված է «Աղուհազրք»-ի հրատարակություններում՝ Ամստերդամում 1668 թվականին և Մարտիկայում 1676 և 1683 թվականներին: Այդ գրվածքի Փրանսերեն թարգմանությունը լույս է տեսել Ա. Սեն-Մարտենի «Mémoires historiques et géographiques sur l'Arménie» աշխատության մեջ (T. II, Paris, 1819, էջ 395-397), իսկ ռուսերեն թարգմանությունը՝ «О торговле и городах Армении» իմ գրքում (Эривань, 1930, էջ 171-173):

«Մղոնաչափք»-ը՝ որ ստանձնապես կարևոր է անտարական Հին ճանապարհների որոշման և անտարի պատմության համար, գրված է, անտարակույս, արարական շրջանում՝ X դարից ոչ ուշ: Այդ միակգամայն պարզ է, որովհետև «Մղոնաչափք»-ի ընթացիկ ունի Պետական կենտրոնական մտազբառատան թիվ 2679 Հռչակագիր Հին ձևազիբբ (= Վերդյան ցուցակ, թ. 102), որ գրված է 671-981 թվականներին: Հնագույն այդ ընդգիրը չէորհակալություն ստացել և՛ նորերս Սենսերիմ Տեր-Հակոբյանից, որը բարեհաճել էր իր արտագրությունը ուղարկել ինչ ամբողջ Հատվածը, ուղղելով նրա ընթերցվածներից մեկը թիվ 1737 ձևազիբբի Համեմատությունում:

«Մղոնաչափք»-ի Հին ընդգիրը, որ դեռևս հրատարակված չէ, ավելորդ չե՛ս Համարում մե՛ջ ընդլի ամբողջությունը՝ դեռևի գևտի նաև «Աղուհազրք»-ի 1683 թվականի հրատարակության ընդգիրը:

Ձև. 2679, թերթ 206a (Նշտվ. 208a)՝

«Վանան գիտութեան մզնաշա-
փայ»:

Ասպարէզն ճՂ քայլ է. քայլն 2
ունն է. ոսն ժՁ մասն է, մզնն է
ասպարէզ է. քստ Պարտից ասպար-
էզն ճնԳ քայլ է, մզնն Ռ քայլ է.
Հրասա՛ն Գ մզնն:

Ի Դունն ի Կարին Մ մզնն.

ի Կարնա ի Փոսաղուրս ճ.

անտի ի Կոզովա Ղ.

անտի ի Նիկիա ճ.

անտի յԱմասիա 2.

անտի ի Գանդրա ճն.

անտի յԱնգերա 2.

անտի ի Կոստանսպուղիս ճԹ.

անտի ի Հոռվ՝ Ղ:

Ի Դունն ի Յլաթ՝ ճՂ.

անտի ի Քղիմար 2.

անտի յՆու՛ա ճՁ.

անտի յԵփրատ գետ Ս.

**«Արուէազիդք», Մարտիկոս,
1683, էջ 61-64՝**

«ԱՆա կամի՛մ զշտի աշխարհիս
Համառօտն մզննախազց ոսնա-
շափութեամբ ուղղեկարար, աս-
պարիդաճնճ զրութեամբ»:

Ի Դունայ մզնն 200 ի Կարնայ
քողար:

անտի մզնն 120 ի փոս աշխարհն
Հայոց և Յունաց.

անտի մզնն 90 ի Կողոնիոյ բերդն.

անտի մզնն Հարիւր ի Նիկիաւր.

անտի մզնն 80 յԱմասիայ.

անտի մզնն 130 ի Գանդրայ¹.

անտի մզնն 80² յԱնկիւրիայ.

անտի մզնն 320³ ի Կոստանդ.

անտի մզնն 6000⁴ ի Հոռն:

Ի Դունայ մզնն 170 ի Յլաթ.

անտի մզնն 80 ի Քղիմար.

անտի մզնն 180⁵ ի յՆու՛ա.

անտի մզնն 40 յԵփրատ գետ.

անտի մզնն 150 յԱմասիայ⁶

(= Hecmesa).

անտի ի Դանանկոս ճԹ.

անտի ի Թափոր յունն Ղ.

անտի յԵրուսաղէմ ճ:

Ի Դունն ի Բերդկունս Կ.

անտի ի Պարտուս ճԿ.

անտի ի ծովն Կասպից Ղ:

Ի Դունն ի Նախճանս Ղ.

անտի ի Գանճակ Շահաստան
ճԹ.

անտի ի Տիւրոն 52.

անտի յԱկոզա Ղ.

անտի ի Բարս ճն.

անտի ի ծովն Պարսահանան³ Ի:

Ի Գանճակէ ի Նիմուէ ճԹ.

անտի ի Մճրին ճԹ.

անտի յՆու՛ա ճՄ:

Ի Նախճանակ յԱրտնաս Մ.

անտի ի Վարդանանկերտ Ղ.

անտի ի Փայտակարան Կ:

անտի ի ծովն Կասպից Կ:

Ի Դունն ի Կողր Մ.

անտի մզնն 100 ի Դանանկոս.

անտի մզնն 90 ի Թարօր.

անտի մզնն 100 ի քաղ. յԵրուսա-
ղէմ:

Ի Դունայ մզնն 60 ի Բերթ-
կունս.

անտի մզնն 160¹ ի Պարտուս.

անտի մզնն 90² ի ծովն Կասպից:

Ի Դունայ մզնն 70 ի Նախճունս.

անտի մզնն 120 ի Գանճակ
Շահաստան.

անտի մզնն 370 ի Տապոն.

անտի մզնն 70 ի Յակոզոն.

անտի մզնն 140 ի Պարտայ.

անտի մզնն 20 ի ծովն Պարս-
կային:

Դարձնայ ի Գանճակայ մզնն 100
ի Նիմուէ.

անտի մզնն 150 Յուռնայ:

Ի Դունայ մզնն 50 ի Կողր.

¹ Ա. Սեն-Մարտներ, որ քաջի «Արուէազրից» օգտվել է նաև մի այլ ձե-
նագրից՝ լուծի տարածությունը Ամասիացի Գանդրա:

² Ա. Սեն-Մարտներ՝ «108 milles»:

³ Նույնը՝ «300 milles»:

⁴ Նույնը՝ «3000 milles»:

⁵ Նույնը՝ «160 milles»:

⁶ Ա. Մարտենն ուղղվել է՝ «Hecmesa»:

¹ Ա. Սեն-Մարտներ՝ «140 milles»:

² Նույնը՝ «20 milles»:

³ Թիվ 1737 ձեռագիրն ունի Պարսկային (72 b):

անտի ի Կոտազեզն ձԹ.
անտի ի Տփղիզ ձԹ.
անտի ի Հունարակերտ ձ.

անտի ի Պարտառ ձ:
Յերուազէմէ յԱղեկանոց բա-
ղար Ծ.
անտի ի Պենապուլիս Բ.

անտի ի Տուպազիս ՅԳ.
անտի յԱլբրիկ ԲԾ.
անտի ի Տեփաէ Ը.
անտի յԱվկիանոս Ա:

Կատարեցաւ մզոնաշարին:

Հայաստանի աստուրի ու բաղարների մասին ուսուերն իմ աշխատության մեջ («О торговле и городах Армении», էջ 171) այս գրությունն ժամանակը ևս ենթադրել էի արարական շրջանի վերջին դարերում, բայց հարավոր էի համարել, որ նա կարող է Հորինված լինել և ավելի առաջ: Դ. Աբիշանն «Ալբարատ»-ում (էջ 412-413) «Մզոնաշար»-ի ժամանակի մասին Հայտնել է հետևյալ կարծիքը՝

«Հեղինակն թվի Անանիա Շիրակացին, եթե շիջև հնագույն բան գնա ոք, զի գրի է ընդ գործս սորա և ընդ Աշխարհագրության Սորենացիո, և ընծայի ի Հեղինակն առ երկախորդ ոմն ի գործս Պապպոս Աղերսանդրացիո և Պորփյուրի և նմանյաց. ինքն միայն զչափ մզոնից եղեալ է. Հետո Սարգիս ոմն հավելյալ է և գասպարեզն, որ է 1/5 մզոնի և զենտամպոն որ է 1/50 ասպարիդի. իսկ մզոն համարյալ է 1000 բալի, բայլն 6 ոտն, ոտն՝ 6 մատն և այլն»:

Այլշանի այս նկատողության մեջ Հետաքրքիր է այն, որ նա իր ձեռքի տակ ունեցել է մատենական վկայություններ, որոնց

անտի մզոն 105 ի Կոտ գեղ.
անտի մզոն 140 ի Տպիխա.
անտի՛ մզոն 70 ի Հունարակերտ.

անտի մզոն 100 ի Պարտառ:
Դարձնալ յերուազէմ, մզոն
500 յԱղեկանոցդիտյ.
անտի մզոն 1000 ի Պենապու-
լիս.

անտի մզոն 300 ի Տրապուլիս.
անտի մզոն 1030 յԱլբրիկյ.
անտի մզոն 900 ի Սեպտե.
անտի մզոն 1000 յԱվկիանոս
ծոզն անձանթն:

մեջ մատնանշված է եղել «Մզոնաշար»-ի կապը Սորենացու Աշխարհագրության և Պապպոս Աղերսանդրացու գրությունների հետ: Այդ ցուցումներն բառից առ ուշագրության արժանի են: Ավելի բան հավանական է, որ Սորենացու «Աշխարհացոյց»-ը և այս «Մզոնաշար»-ը ժամանակակից երկեր են և որ երկուսն էլ միասին չեն կարող վերագրվել Անանիա Շիրակացուն:

«Մզոնաշար»-ի աշխարհագրական տեղեկությունները ոչ միայն չեն հակասում «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին, այլև զրեթև միշտ նման են ու Համերաշխ միմյանց: Երկու դրվածքի մեջ էլ Հիշատակված են «Ակրոզ» և «Բարսա» բազարներ, որոնք աստորական խաչքո կենտրոններ էին դառնել VII դարից հետո, արարական Մտառյն անվանված է նրանց մեջ «Նեփուլ», արարական Մտառյնը երկուսն էլ շարունակում են անվանել «Տրսպոն»: Իսկ ամենից կարևորն այն է, որ «Մզոնաշար»-ի մեջ բացի «Պենապուլիս»-ից, «Տրապուլիս»-ից և «Ալբրիկ»-ից հիշված են նաև «Սեպտե»-ն և «Ավկիանոս ծոզն անձանթն», որոնք Հայոց Հին մատենագրության մեջ հանդիպում են միմյանց «Աշխարհացոյց»-ում և Հայաստանում կարող էին Հայտնի եղած լինել, հավանորեն, Պապպոս Աղերսանդրացու «Երկրագրություն»-ից:

Եթե մեր այս դիտությունները հավանություն գտնեն՝ այդ զեպտուն կարելի է ենթադրել, որ «Մզոնաշար»-ը գրված պիտի լինի «Աշխարհացոյց»-ից հետո կամ «Աշխարհացոյց»-ի հետ միասին ոչ թե Շիրակացու, այլ Սորենացու ժամանակաշրջանում: Անհարին չէ, իհարկե, որ Սորենացին «Աշխարհացոյց»-ի հետ միասին կարող էր գրած լինել նաև «Մզոնաշար»-ը, որն ընծայվել է, ինչպիսի տեսանք, զառ երկախորդ ոմն ի գործս Պապպոս Աղերսանդրացուց»։ սակայն այս վերջին ենթադրությունը կարտո է զեռ զրական ու ավելի պարզ սպացույցների:

14. «Աշխարհացոյց»-ը և Կեղծ-Կալիսիննաի Աղեբանդրի վարքը: — Բանասերները նկատած կլինեն, որ «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջաններն» իմ ուսումնասիրության մեջ քննության չի առնված Աղերսանդրի վկայք. քննության չի առնված ոչ նրա խմբակցությունը՝ Հունարան Բարգմանությունների հետ և ոչ էլ նրա Բարգմանման ժամանակը: Դրա պատճառն այն է, որ այս Բարգմանությունը, թևե իր բառապաշարով հարում է Հանախ Փղոնյան խմբին, սակայն, ընդհան-

¹ Ա. Սեն-Մարտենը՝ «de Tavın à Hounragerd»:

բապեա, ազատ է Հունարան Հին Յարգանտօթյունների լեզվա-բնականական խրթին անհարթօթյուններից և ունի յուրահատուկ ոճ և լեզու, որ միանգամայն տարրեր են Հունարան Լրեր խմբի լեզվից:

Աղերսանդրի վարրի Հայերեն Յարգանտօթյունը, ինչպես Հայտնի է, մանրակրկիտ կերպով ու գիտական ամենամեծ Հնտօթյանը ուսումնասիրել է Հայր) Հ. Տաշյանը իր «Ռուստօնախրտօթիներ Ստոյն-Վայխթիենեայ վարտց Աղերսանդրի» աշխատօթյան մեջ (Վիեննա, 1892): Հ. Տաշյանը, ինչպես և Երանից ստաց բոլոր գրեթե Հայ և օտարազգի գիտնականները, Համարել է Կեղծ-Վայխթիենեայ Ռորենացու Յարգանտօթյունի, գրված V դարուն: Իր ուսումնասիրտօթյան մեջ նա Հանգամանորեն ցույց է տվել նաև այդ Յարգանտօթյան կարգ Ռորենացու «Աշխարհացոյց»-ի Հետ:

Որ «Աշխարհացոյց»-ի մեջ Ռորենացին օգտվել է իր Յարգանտօթ Կեղծ-Վայխթիենեայ» այդ Լրետուն է, նրա ստեղծ, Հետնայլ Համեմատտօթյուններից.

1. Ռորենացին, — գրուն է Տաշյանը, — «Վիտակ գիրք [«Աշխարհացոյց»-ը] աա գիտողտօթյանը. «Բայց անտի յանձանտօթ Լրկիրն որ ինչ պատտի» անՀավատայի է. գաղանք անձանտօթ մարդակերպը կիսանձնայար Լրկրիտից վեցձեռնիք փոկտտունք փշապատտունք կիսահավք կիսանդամք անգլտիար» (տե՛ս V, էջ 616, 21-25): Ռնդիք չկա՝ որ այստեղ Ռորենացի կանկնարկն Վայխթիենեայ ՄԹ, ՄԻԳ, և ՄԾԼ. Հատվածները, որ Վայխթիենեայ Աղերսանդրոս կը չըջեցրեն զննելու «անձանտօթ Լրկրին» աահանները, և անՀեթիեթ ստասպել ու Լրեակայտօթյան ցնորք չի մնար՝ որ չկուտե այս կտորներուն մեջ: Ռորենացու այս ակնարկտօթյան մեջ գործածած բառերն ոմանք (այսպես օգեցձեռնիք, փոկտտունք, անգլտիար») Վայխթիենեայ մեջ գործածված բնիկ բառերն են: Մնացյալ ակնարկտօթյուն են Վայխթիենեայ ստասպելայց... (տե՛ս «Ռուստօնախրտօթիներ Ստոյն-Վայխթիենեայ», էջ 80):

2. «Ննդկայց վրայ գրածներուն մեջ [«Աշխարհացոյց»-ուն] կա աա յտարը. «Ռմանք ի նոցանք մարդկերք են, և այլք վայրենակերք, ոմանք ագեւոր են, և այլք կարծահասակք, սափարիթիք, յայներեար, սպիտակք, և ոմանք մերկիմատտակք (Լրկու որ. «մերկիմատտար») որք գործս անիրաւս ոչ գործեն, և զմարմնս կենդանեաց ոչ ուտեն» (տե՛ս V. 615, 3-8): Այստեղ

ակնարկված են Վայխթիենեայ ՄԻԱ-ՄԻԳ Հատվածները, որ կը պատմուի Աղերսանդրի արշավին յիկախղարկան և «ՄԼրկիմատտակք (γυμνοσφοισται) Բրարմանաց» Հետ յստակցելն և այն: Այս մերկիմատտակ կամ մերկիմատտակք բառը Ռորենացի նոսր գործածած է, որչափ գիտներ, և ինքը կերտած է նույնն բոտ Հույն բնագրին: Ճիշտ նոյն բառն կրգործածե նաև Փլյոնի վարք իմաստանոց գրոց Յարգանտօթյան մեջ. «Ննդկայց մերկիմատտակցն՝ վասն ձերտիման յարոյկ կուտե»՝ գիերենաա այրել» (տե՛ս «Ռուստօնախրտօթիներ», էջ 82-83):

Ըստ իս Ռորենացին այդ բառը ինքը չի կերտել, այլ առել է Փլյոնից, որի Հայերեն Հին Յարգանտօթյունները մեծ ազդեցտօթյուն են ունեցել Ռորենացու լեզվի վրա:

3. «Թ վերջն կը՛հչենք, — սասուն է Տաշյանը, — օրինակ մ՛այ՝ որ անշուշտ կըցուցրեն միանգամայն՝ թե Աշխարհացոյտօթյան Հեղինակն և Վայխթիենեայ Յարգանտօթը մի և նույն անձն է: Հույնք պատմելն Ետը անդույս մարդկան և այլ նմանայց զկայրեր և անոնց ծովն ձուկ բունկ ծախելն Աղերսանդրի գորաց՝ կըՀափուտ աա յտարը (B միայն, C չունի). «Ալքը (բաղկին) Լրկրն փշատունկ, որ ուներ յտերս քսան և Հինգ» Այս ὄδιον յատիներեն նույնպես hydnum կը կոչվի, և գաղղիերեն՝ hydne, որուն ուրիշ մեկ տեսակը urchin, rignache (hydnum repandum), և Լրկրոյդ տեսակ մը՝ erinace (hydnum erinaceum) և գերմաներեն Stachelpilz (սակն սայալ է «փշատունկ»): Արդ այս բառը բոլորովին նոր բառով մը Յարգանտօթ է Վայխթիենեայ Հայ Յարգանտօթին, այսինքն՝ «գերերից». բառ մ՛որ առաջին անգամ Հու կը գործածի: Բայց ոչ միայն իրեն Հատուկ է այս Յարգանտօթյունն, այլ և Հավելված մ՛այ կցեր է Յարգանտօթը՝ թե այս «գերերին» յոր Հայրենի Լրկրին մեջ կը գտնվի: Այս Երանակալից յտարն է. «Ե նրկիթ (չերկր) գերերի՝ որ սա մեզս յինից, որ ուներ յտերս քսան և Հինգ, քաղեցին և ետուն մեզ» (տե՛ս «Պատմտօթիներ Աղերսանդրի Մակեդոնացոյց», Վենետիկ, 1842, ՄԹ, էջ 127): Թե ինչ տեղ կՀասկնա Հեղինակ-Յարգանտօթը ճառ մեզս» սատօթյամբ, կհնոցեն Հետտ, այսինքն՝ յոր Աշխարհագրտօթյան մեջ գրելով «Միմիք... յինի ի նմա մուրս և գերերն և նուտն, և անտը տեղիք» (V, 609, 12-13):

Հ. Տաշյանի այս գիտողտօթյուններից ստաջից ցույց է տալիս միայն, որ «Աշխարհացոյց»-ի Հեղինակն օգտվել է Վայխթիենեայ Հայերեն Յարգանտօթյունից, սակայն Երրորդը Հափանական մի նշան է, անշուշտ, որ այդ Յարգանտօթյան Հեղինակն է ինքը Ռորենացին:

Ավելորդ չեմ Համարում մեջ բերել նաև իմ նկատած մի բանի կարգեր նմանությունները:

1. Բացի Տաշյանի մասնանշած վեր-հիշյալ բառերից ուշադրություն արժանի են նաև Հետևյալ Հազվագյուտ ու նման բառերը.

ա. «որնգեղջեր» V. 598, 11, «որնգեղջիր» S. 20, 70 և «որնգեղջերս» Կալիսթ. ՄԻԷ, էջ 150 (Վենետիկ, 1842), «որնկեղջեր» ՄԻԳ, էջ 142.

բ. «ժամադիտական, ժամադիտակ» V. 587, 12; S. 6, 22, 28 և «ժամադէտ» Կալիսթ. Ը, էջ 5.

գ. «տեղագործիկն» V. 589, 17, S. 7, 27 և «տեղագրեմ» Կալիսթ. ԶԱ, էջ 38 և ԶԵ, էջ 40.

դ. «Հաւք ճարակաւոր» S. 30, 4 և Կալիսթ. ԻԳ, էջ 12:

2. Յո. Մարկվարտի ասելով՝ «Աշխարհացոյց»-ի Հեղինակը Պոմպոստանի «Շուշանիկ» անունը (S. 41, 6) կերտել է ինքր «Շուշան» բազարի անունից, ի նկատի ունենալով Հունարեն Σουσιανή և Σουσα անունները¹: Հետաքրքիր է, անշուշտ, որ Կալիսթենի Աղերսանդրի փարքում ևս նույն աշխարհաչաբանի Համար գործ է անված «Շուշանաստան» անունը (ՄԶԳ, էջ 180):

3. Հ. Տաշյանը մասնացոյց է արել (տե՛ս «Քսուսմաստիությունը», էջ 189-190 և 224), որ Կալիսթենի թարգմանիչը պահել է երբևէն Հունական Հորդման վերջավորությունները, օրինակի Համար «ԳԹրապիլոնտա», «գԱնտիփոնտա» և այլն (՝ Θρασιλέοντα, Αντιφόντα Հայցական): Նույն սխալները Հանդիպում են երբևէն նաև «Աշխարհացոյց»-ի մեջ, օրինակ՝ «ԳՊղայիդա» (V. 586, 9, Հունար. τήν Πλετάδα, Հայցական):

Այս բոլոր Համեմատությունները, միասին առնված, սպափաբություն են ստեղծում, որ ո՛չ միայն «Աշխարհացոյց»-ը, այլև Աղերսանդրի փարքի թարգմանությունը, Հավանական է վերաբարել միևնույն թարգմանչի:

Կարևոր այս նկատարություն ղեմ Հիմնական առարկությունը կարող է այն լինել, որ «Աշխարհացոյց»-ը վերև մենք Համարեցինք IX դարի գրվածք, իսկ Աղերսանդրի փարքը Համարում է V

դարի երկ՝ թարգմանված Սերևոսից և Փարպեցոց առաջ: Արդ՝ մի՛շտ է արդյոք ընդհանրացած այդ կարծիքն Աղերսանդրի փարքի թարգմանման ժամանակի մասին: Ինձ թվում է, որ միշտ էլ:

Աղերսանդրի փարքի Հայերեն թարգմանություն մեջ Արժանի գեործ մասին կա Հետևյալ տեղեկությունը՝ (ՃԾԸ, էջ 89՝

«և ընդ Արիսիկ, գեղեղեղ (Աղերսանդր՝) եկեղ Հասանկը ի գեոն Արածանի, որ Հոսի Ի Մաղկաւէտ լերանց Անգոյց գաւառին յակունքն Եփրատայ Հանդէպ լերինն Այրարատայ»:

Գերմանացի գիտնական Ա. Բաուսգարտները մասնանշել է, որ Սերևոսը ևս ունի Համապատասխան մի Հատված, որն առնված է, նրա կարծիքով, Կալիսթենի Հայերեն թարգմանությունից (տե՛ս «Ueber das Buch die Chrie», ZDMG, 1886, III, էջ 504).

«Ապա եկն Սենիտած Պոսրով, և զտրն յունաց գումարեղ նստան ի Մաղկոսանն՝ մերձ ի գեղըն՝ որ կոչի Անգոյ, ընդ որ անցանկ գեոն Արածանի (Սերևոս, ԻԲ, էջ 74):

Այս Հատվածները բերված են նաև Հ. Տաշյանի ուսումնասիրությունից մեջ, որը Համայնու է Բաուսգարտներին և կարծում է նույնպես, որ «Սերևոսը կարգացր է այս թարգմանությունը» («Քսուսմաստիությունը», էջ 42-43): Սերևոսի մոտ Տաշյանը մասնացոյց է արել բացի այդ նաև մի ուրիշ նման Հատված: «Նույնպես շատ նման են, — ստում է Տաշյանը, — Սերևոսի Հրո-պարանկի մը մեջ Պոսրովա ըրբան զրձ խտրերը Դարևհի փտաջին նամակին առ Աղերսանդր, այնպես որ կարծես Սերևոս այս վերջույն Համեմատ գումարած է առաջինը» (տե՛ս Սերևոս, ԻԶ, էջ 90-91 և «Պատմ. Աղերս.», ճԳ, էջ 49-50):

Ա. Բաուսգարտներին և Տաշյանի այս դատողությունները, որոնցով նրանք կամենում են ապացուցել, թե Կալիսթենի չարերն թարգմանությունը գրված է եղել Սերևոսից առաջ՝ բնու իս պակի բան կասկածելի են:

Բաուսգարտներին դիտողությունը մի պարզ թյուրիմացություն է, որովհետև Սերևոսի և Աղերսանդրի փարքի «Մաղկոսան» և «Անգոյ»-ի մասին վերահիշյալ տեղեկություններն իրենց բովանդակությամբ իրարից Հիմնովին տարբեր են: Իսկ Տաշյանի

¹ Տե՛ս «EränSchahe», էջ 144:

երկրորդ գիտողությունը, որ նա կարծիքաբար է մեջ բերել, գուրկ է կարևորությունից, որովհետև մասունակված Հաստ-
վածների նմանություններն այնքան աղտո են և աննշան, որ չեն
կարող Հիմք ծառայել եզրակացությունից:

Բանասերների երկրորդ ասարկությունը, անշուշտ, այն է, որ
Աղերսանդրի վարքի թարգմանությունը պարզ ակնարկված է
Ղազար Փարպեցու Պատմության մեջ: Խոսելով վրաց վախճանագ
թագավորի խորամանկության մասին՝ Փարպեցին ասում է
(Տփղիս, 1904, ՀԳ, էջ 132-133):

«Գարձևայ լրտես տայր արձակել արս ի գեղէն Վրաց և
Հայոց, որք իշևայ ի տեղիս ինչ գաշտացն՝ տայր երեւ-
ցուցանել յոյսս կրակաց բազմաց և կոճնդս ծառոց զինեայս
այրանման, քոտ խարէութեան Մակեդոնացոյ Աղէկ-
սանդրի»:

Այս ակնարկված տեղն է Կալիսթենեսի ճՃԳ Հատվածը (էջ 96):

«Քրանդի որք անդ արածանէին Հօտրն՝ կորզեաց և ի բաց
և՛հան արօտականս, և ի ծառոցն ոսոս Հաստե կապեաց ի
վերայ չորրօտանեացն, և զկին զօրակախին գնային Հօտրն,
և ծառն քարէլին ի վերայ երկրին և զՀոցի զամենայն ի
վեր կոյս Հոտեայ յուղէին սաստկութեամբ, և երաներ փռչէն
մինչև ի յետն յիղմիպոս»:

Համառոտ խումբն ունի այստեղ նաև Հետևյալ Հավելվածը (էջ
96, ծան. 1):

«Կերովամիտն Աղերսանդրոս բնորնեայ այժս բազումս և
ջահ վառայ յնդջերսն ի գիշերի ցոյց անէր ի բացեայ՝
կարծելով բազում զումարտակ լրտեսաց, և ի ցերեկի
բնորնեայ զՀօտն որ անդ արածանէին յեփն»:

Ընդարձակ խումբը ևս ունի այս Հատվածը, սակայն ուրիշ
տեղ՝ ՄԹ, էջ 122:

Ն. Տաշյանը Փարպեցու մոտ մատնացույց է արել նաև Հե-
տևյալ Հատվածը, որը, նրա կարծիքով, կարող է քաղված լինել
Աղերսանդրի վարքից՝

«Քրայց եթէ յորժամ ժիր մշակք բաջ սուր մանգաղս և
զերանդեաս զխոտ Հարկանիցեն (ՁԸ, էջ 159):

Նման, Կալիսթենես, ճՃԸ, էջ 105՝

«և գերանդրին յրեքմանայ կառացն Հեձկին զրազմահոճ
պարսիկսն որպէս յարտորայս զՀասակս մշակքն Հեձիցեն»:

Մեջբերված Հատվածների Համեմատությունից երևում է,
իրոք, որ Փարպեցին ծանոթ է եղել կամ Կալիսթենեսի Հունարեն
ընագրին և կամ նրա Հայերեն թարգմանության: Գծվար չէ նաև
կասել, որ Կալիսթենեսի Հնագույն այդ խմբագրությունը տար-
բեր է եղել այժմյան Հայերեն խմբագրությունից:

Առաջին իսկ Հայացրից նկատելի է, որ Փարպեցու վերոհիշյալ
Հատվածները Հայտնաբաց զանազանվում են մեր մեծեր Հասած
Կալիսթենեսի վկայություններից: Փարպեցու մոտ ասված է՝
«տայր երեւցուցանել յոյսս կրակաց բազմաց», իսկ Համառոտ
խմբի ընագրում՝ «ջահ վառայ յնդջերսն ի գիշերի ցոյց անէր ի
բացեայ»: Փարպեցին ունի՝ «կոճնդս ծառոց զինեայս այ-
րանման», իսկ Հայերեն ընդարձակ ընագիրը՝ «և ի ծառոց
ոսոս Հատեայ կապեաց ի վերայ չորրօտանեացն»: Փարպեցին
ունի՝ «ջորժամ ժիր մշակք... զխոտ Հարկանիցեն», իսկ այժմյան
Հայերենը՝ «որպէս յարտորայս զՀասակս մշակքն Հեձիցեն»: Այս
տարբերություններն իսկ մի պարզ ակնարկ են, որ Փարպեցու
Հատվածները կարող են ծագած լինել ինչ որ այլ աղբյուրից:

Միանգամայն Հնարավոր է ու Հավանական քոտ իս, որ Փար-
պեցին կարողացած է եղել Կալիսթենեսի Հունարեն ընագիրը և
վերոհիշյալ նրա վկայությունները քաղված են ո՛չ թե V զարի
Կալիսթենեսի Հայերեն թարգմանությունից, այլ Հունարեն ընագ-
րից: Որ Փարպեցին իր մեղքի տակ ունեցել է Հունարեն երկեր,
որոնցից նա օգտվել է՝ այդ երևում է նրա Թղթի Հետևյալ վկա-
յությունից (տե՛ս «Ղազարայ Փարպեցու, Պատմութիւն Հայոց և
Թուրքի առ Վահան Մամիկոնեան», Հրատ, Գ. Տեր-Մկրտչյանի և
Առ. Մալխասյանցի, Տփղիս, 1904, էջ 169):

«Ձի անգամ և զՀոռոճ գրեանդ ոչ նտուն զկին իմ, որք կան
այդք ընկեցեայ ի կրակուր ցեցոյ, քայց արհօք կար-
դացեայ յուսասորցիլուն ի զոջանէ ընակեալոր ի տեղու՞րդ,
և կամ զայլս լուսաորիցն»:

Հայր] և, Ակիլյանի նմանագրությունը, որ «Հոռոճ գրեանդ»
այս Հատվածում «սասորցի մը կը թվի, որով կհամայնին
մասնակակիցները Հունաստանն ներածված Հայ գրչագիր»-

ներն ու թարգմանությունները» (տե՛ս «Գասական Հայերենը և Վիեննական Միֆիմարյան դպրոցը», Վիեննա, 1932, էջ 63), մի թյուրիմացություն է, առնչաւ, որ Հակասում է Փարսեցու պարզ ու որոշ վկայութեան:

Որ Կեղծ-Կալիֆենեւսի Աղերանդղի վարքի մեր մեռըը Հասած թարգմանությունը չի կարող և ո՛չ մի ղեպարտ զրված լինել V դարում, ինչպես այդ ենթադրել են Տաշյանը և Ակիմյանը՝ այդ պարզ երևում է նրա լեզվի մանրազնին բնույթովից: Լեզվական իմ դիտորոշություններն անհրաժեշտ են Համարում մեջբերել ընդարձակ կերպով, որովհետև նոր այս եզրակացությունը Հիմնովին խախտում է ընդհանրացած Հին կարծիքն Աղերանդղի վարքի թարգմանման ժամանակի մասին և խիստ կարևոր է Հայոց լեզվի ու մատենագրության պատմության Համար:

Լեզվական իմ նկատառումները Հետևյալներն են.

ա. Աղերանդղի վարքի թարգմանը, ծանոթ լինելով Հուսարան դպրոցի Հնագույն երկրերին, գլխավորապես, Պիտոլից-Փիլոնյան խմբի թարգմանություններին, մեծ շահով օգտվել է այդ թարգմանությունների Հատուկ բառապաշարից: Այդ բառապաշարը, որ չի Հանդիպում V դարի մատենագրական երկերում, այնքան շատ է Աղերանդղի վարքի թարգմանության մեջ, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ այդ թարգմանությունը զրված է վերահիշյալ թարգմանություններից Հետո: Այդպիսի առանձնահատուկ բառեր են (տե՛ս «Պատմություն Աղերանդղի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842).

1. Վաւաշ, վաւաշանդ 4. Նխ, ծն. և Նոր. Ա. 15, 17, էջ 48 և 55, վաւաշոտ, վաւաշոտական Պիտ. 566, Փիլ. իմաստն. Նոննոս 81, վաւաշոտութիւն Պիտ. 449, 467, վաւաշանալ Փիլ. իմաստն. Նոր. Բ. 63, էջ 195 և այլն.

2. վրդովն 13, 134. Փիլ. իմաստն. Նոր. Գ. 50 և 68. Զբր. կաթ. և այլն. վրդովում, վրդովութիւն, Պիտ. 357. Փիլ. բազն. և իմաստն. Նոր.՝ Հոբիփսն. վրդովասէր Պիտ. 425, վրդով Թր. 21.

3. ամենազան 40. Պիտ. 343, 387. Փիլ. Նոր. Գ. 62, էջ 344.

4. շիշք 17. Փիլ. լին. Բ. 24, էջ 106.

5. տինա 33. Պիտ. 342. Փիլ. Նխ. Բ. էջ 110. Փիլ. Լիւս. էջ 162. Իրեն. Հերձ., էջ 207, Ներ. Պորփ., էջ 234 և այլն.

6. շարահւայած 43. Փիլ. լին. Գ. 10, էջ 182.

7. պոռոտայստ 57, 132. պոռոտո 132. պոռոտ. Փիլ. Նխ. Բ. 77, պոռոտարան Գիրք. Թղթ. 39. պոռոտարան Արծր. II. Գ. էջ 87.

8. տաղ 45, 66, Թր. 2. Պիտ. 359. Փիլ. լին. Գ. 2, էջ 245. Փիլ. տեսակ. ԳՊորփ. 253. Նոննոս 57 և այլն.

9. խենեղ 77. Փիլ. լին. Գ. 183. Պիտ. 350. խենեղութիւն Պիտ. 343. Ար. Առար. 633. խենեղանալ Փիլ. լին. Գ. 52, էջ 287 և այլն.

10. արդարակ 122. Փիլ. Ել. Ա. 1. Պիտ.

11. ճղփին 126, ճղփում Փիլ. Լիւս., ճողփում Փիլ. Յովն., ճողփին Արծր.

12. խղզալլութիւն 151. Փիլ. Ել. Բ. 51. Փիլ. իմաստն., բազն և ժ բան.

13. վրիժակ 115. Պիտ. 384. Փիլ. Լիւս., էջ 159. Փիլ. ԲՀ. Ժր.

14. մերկիմաստակը 135, 161. մերկիմաստակը Փիլ. իմաստն. Նոր. Աշխ. (Վենետիկ, 1843), էջ 615. մերկիմաստակը՝ Նոր. Աշխ. (Հրատ. Սուրբյանի), էջ 43.

15. նախահայր 42, 66. Պիտ. 401, 415. Տիմոթ. 194. Փիլոն.

16. ամենապատիկ 45. Պիտ. 423. Փիլ. Ած. աղբ. Նոր. Բ. 88, էջ 238.

17. բաջորէն 48. Փիլ. իմաստն. Նոր. Գ. 26, էջ 287.

18. բաջալաւութիւն 106. Պիտ. 357. Փիլ., բաջալաւազոյն Ած. աղբ. և այլն.

19. բաջալատնութիւն 44. Փիլ. իմաստն.

20. բարերախոտիկ, բարերաստիկ 50, 137, 160, 167. Պիտ. 349. Փիլ. Նոր. Գ. 48, էջ 319.

21. ինքին 160. Փիլ. իմաստն.

22. ճնմարան 68. Փիլ. լին. Գ. 16, էջ 188. Սահճ. 194. ԳՊորփ. 280. Նոր. Գ. 61, էջ 343. Առ որս և այլն.

23. յանձնկալութիւն 83. Փիլ. լին.

24. օձուտ 89. Փիլ. այլար.

25. կարութիւն 96. Տիմոթ. 78. ՅՊր. 533. ԳՊորփ., անկարութիւն Պիտ. 401. Փիլ. լին. Գ. 2, էջ 168. Փիլ. այլար. Ար. Ստ. 366. Վերլ. 575 և այլն.

26. պարսնճ «ստտույ» 102. Փիլ. Յովն.

27. աւաղ 105. Նոր. Բ. 13, էջ 124. 125. Գ. 68. Պիտ. աւաղական Թր. 33. աւաղում Փիլ. լին. և այլն.

28. պատկայ 150. Փիլ. Լիւս. 128.

29. ստակատիկ 149. Փիլ. Նխ., էջ 34. Նոր. Բ. 12, էջ 122. բայց անզրի, անզրիանդ Նոն. 24, 70, 71. այրան Ներ. Պորփ. 238.

30. արդկաւորութիւն 183. Փիլոն ստակ.

31. ետեղէն 169. ուղէն Պիտ. 466. Փիլ. բաջուղէն Փիլ. լին. Ա. 9. Պիտ. 448.

32. այրասպան 1, Պիտ. 403, Փիլ. նիս. և լին. այրասպանել, այրասպանություն Փիլ. ժ քան և լին.
33. բազաբազաբազություն 48, 81, Պիտ. 357, Փիլ. լին. Գ. 135, ԼՂ 347, Փիլ. նիս., ԼՂ 80, Մաճմ. 172, Իր. Հերձ. 30, Տիմ. 248, Եռն. 18, Ար. Աշխ. 624 և այլն.
34. զեղեցկավայելուչ 11, Փիլ. լին. Գ. 15, Պիտ. և այլն.
35. կրածչտականություն 15, 71, Փիլ. լին. Գ. 3, ԼՂ 173, Փիլ. նիս. և այլար. Պիտ. ՊԼք. 545 և այլն.
36. մտտիմ փխ, ժպտիմ, 25, Փիլ. իմաստն.
37. ժամամուռ 47, ժամածուել ՅՇ. իմ, Պար., անձամածուռ Փիլ. իմաստն.
38. վարկանեն 49, 51, Ոոր. ստեպ. Պիտ. 342, Փիլ. Գիրք Թղթ. 22, 33, Մաճմ. 121, Եռն. 37, Առ որս և այլն.
39. խոխոց 22, բառ Նոր Հայկազյան բառարանի Համապատասխանում է «կոկոզ» բառին, տե՛ս «կոկոզավիզ» Դավիթ Հչ. իմ., «կոկոզական կոկոզիկ» Փիլ. լին., տե՛ս և Լիս., «կոկոզանել» Արժր.
40. աստուածագն 41, աստուածագան Տիմոթ. 63, 83 և այլն, Փիլ. Պիտ. Զքր. Կաթ. և այլն.
41. ամենժողով 162, ամենժողով Փիլ. ժ. քան և այլար.
42. դարանասպետ 69, Փիլ. ստեպ.
43. արդևան 94, Պիտ. Փիլ. ժ. քան և էլ. Ոոր. Գ. 48, ԼՂ 319.
44. յղկիլ 99, Փիլ. ստեպ. Առ որս և այլն.
45. նուազուոր 65, Փիլ. Պիտ. և այլն, նուազուորագոյն Փիլ. տե՛սակ.
46. նուագերգություն 71, Պիտ. 369, Առ որս, նուագերգեն Պիտ. 537.
47. նախինացություն 18, Փիլ. նիս. 12 և ստեպ. նախինացական Փիլ. նիս. 12.
48. ծնեղարան 5, ծնեղարանեն Փիլ. լին. Ա. 82, Եռն. 11, Ոոր. Ա. 1, ԼՂ 7, ծնեղարանություն Աժ. յայտ. Շիր. և այլն.
49. մանկավարժ 15, Պիտ. 343, Փիլ. Լիս. 151.
50. որակություն 105, Պիտ. 464, Իր. Հերձ. 171, Տիմոթ. 324, Մաճմ. 168, Եեր. Պորփ. 235, Ար. Ստ. 386, Յամբ. Ստ. 410, ԴՊորփ. 324 և այլն:

Աղերսանդրի վարքի Թարգմանություն մե՛ջ այս Հիտուն բարդ, որ լին Հանդիպում V դարի երկերում և Փարպեցու մտտ, կազմում են Պիտոյից - Փիլոնյան խմբի բառապաշարի միայն մի մասը: Լեզ-

վական մեր դիտողությունները, եթե անգամ նրանցից որևէ մեկն առարկելի համարվի, այնուամենայնիվ իրենց ամբողջությամբ բավարար կներպոլդ լուծու՞մ են Աղերսանդրի վարքի Թարգմանության ժամանակագրական մոտիվ խելիքը և ապացուցում, որ այդ Թարգմանության ժամանակը չի կարելի եկեղեցու Փարպեցուց առաջ V դարում:

Բ. Հունարան դպրոցի խորթ նախորդները և նորակերտ բարդությունները, ինչպես նկատել է այդ և Տաշյանը («Ռուսումնասիրությունը Ստոյն-Վայնսթենայ», ԼՂ 204), պատահում են նաև այս Թարգմանության մե՛ջ: Այդպիսի բարդություններ են՝

1. շաղկապեն *συνδέω* 7, Թր. քերակ. 35, ՊԼք. 508, Ար. Աշխ. 624, շաղկապ *σύνδεσμος* Փիլ. նիս. Բ, ԼՂ 83, Իրեն. Հերձ. 158, ՊԼք. 489, ԴՊորփ. Վերլ. և այլն.
2. շաղապատեն 36, Փիլ. լին. Գ. 19, ԼՂ 259, Փիլ. Մամփս., ԼՂ 567, 568, Իրեն. Հերձ. 67, 165 և այլն.
3. բացակաոր *ἀπόκοπος* «կուրս» 14, տե՛ս 2, Տաշյան, Ռուսումնաս., ԼՂ 200, 159, 1.
4. Հոմիլյան *ὄμοκράτωρ* 19, Ոոր. Գ. 66, ԼՂ 353.
5. վերագրություն 36, վերագրեն Պիտ. 545, Փիլ. իմաստն, Իրեն. Հերձ. 37, Տիմոթ. 3, 299, Եռնեսո 24, Ոոր. Ա. 16, ԼՂ 54, Գ. 51, ԼՂ 323.
6. Հակառակամարտ 72, 103, 134, Պիտ. 351, Փիլ. լին. Բ. 36, ԼՂ 115, Մամփս., ԼՂ 565, Լիլիսո Ստ. 35.
7. անդրադարձություն 93, 116, Էլ. Ստ. 91, անդրադարձիկ Թր. քր. 19, Պիտ. Մաճմ. 144, ԴՊորփ. 266.
8. արտահանեն 59, Մաճմ. 161, 165 և այլն.
9. զերազանցեն 167, Պիտ. 347, Տիմ. 97, Յամբլ. Ստ. 417, Ոոր. Գ. 67, ԼՂ 356, զերազանցություն Փիլ. Էլ. Ա. 5, ԼՂ 451 և այլն.
10. գերախանել 174, Փիլ. լին. Գ. 25, ԼՂ 196, Փիլ. ժ. քան.
11. ներհակ 185, Տիմ. 160, ՊԼք. 475, Յամբլ. Ստոր. 413, 417, Եռնեսո 64, Ար. Աշխ. 611, Ար. առ. 629, Էլ. Ստ. 103.
12. տարապատական 37, Գիրք. Թղթ. 22:

Աղերսանդրի վարքի Թարգմանությունն ունի նաև Հետևյալ բաղադրված բառերը, որոնք ինձ չեն Հանդիպել ո՛չ միայն Հունարան դպրոցի Թարգմանություններում, այլև մատենագրական մյուս երկերում.

13. շրջադրեն, ԼՂ 40.
14. ներքնազիր, ԼՂ 42.

15. վերագայտում, էջ 92.
16. բնդկանդենմ, էջ 100, 106.
17. չըբաշափոթիւն, չըբաշափումն, էջ 162, 168.
18. յարայիչելի, էջ 163:

Վերոհիշյալ Հունարան նորակերտ բազադրոթյունները մի պարզ ապացույց են, անշուշտ, որ Աղեքսանդրի վարքը չէր կարող թարգմանված լինել ո՛չ միայն V դարում, այլև VI դարի առաջին կեսում՝ Պտոլոմեոս - Փիլոնյան խմբի թարգմանութիւնների ժամանակաշրջանում: «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» իմ ուսումնասիրութեան մեջ (էջ 115) ես արդեն մատնացույց էի արել, որ «Յերձակ» բառը կազմվել ու առաջին անգամ գործածվել է Պտոլոմեոս - Փիլոնյան խմբի թարգմանութիւններից հետո:

գ. Հ. Տաշյանի կարծիքով. Աղեքսանդրի վարքի թարգմանութեան մեջ մի շարք բառեր, որոնք գտնվում են միայն «Հետևոց բով» և կարող են թերեւ կարծվել նորագույն բառեր - ինչպես «զիպուած բաստի» (էջ 25), «թրառու» (էջ 20), «բնդկողմնակ» (էջ 101) և այլն - Կալիսթենեսի վկայութեամբ ստանում են մեծ հնուիշխում (տե՛ս «Աւսումնասիրութիւնք», էջ 202): Ինչ թվում է, որ այս ենթադրութիւններ հավանական չէ: Կալիսթենեսի թարգմանութեան մեջ թե՛ այդ և թե՛ նման բառերը, որոնք զործ են անփոփոխ, զվտավորապես, VII-IX դարերի մատենագրական երկերում, բոտ իտ, հազմանորեն, նոր են, ինչպես և ինքն այդ թարգմանութիւններ: Ազգայնի կասկածնի բառը են՝

1. բուշտրնդեր 72. բուշտրններ Վրդ. առ. 291. բուշտակիր Տաթև. տե՛ս Հր. Աճառյան, Արմատ. բառ.
2. սատակ 116. Սոկր. Ա. 36, էջ 103. Բ. 39, էջ 147 (= Հուն. **φιλός**). Ուլ. Հովհ. Բ. 39. Թղթ. դաշ. և այլն.
3. ուժաւոր 97. Ռոր. Ա. 10, էջ 33. ուժաւորութիւն Ծիր.
4. աշտանակի «ցասարկ և նաղիչ ձիու վրա» 16. Ռոր. Բ. 79, էջ 217 և Բ. 82, էջ 225, նաև Հովհ. Կաթ. առաջանակել» վերոհիշյալ իմաստով չի հանդիպում IX դարից առաջ.
5. հանդիսել 25, գրամարտակել 104 (ուճի և Հովհ. Կաթ.) կարող են լինել նոր բառեր.
6. պապաջնմ 125. Ռոր. 116. Նիս. կազմ. տե՛ս Հր. Աճ., Արմ. բառ.:
7. խախանջնմ 125. չունի նձԲ., տե՛ս «Արմ. բառ.».

8. աշխոյժութիւն 25, աշխոյժ, 3Հ. իմ, պալ. Ռոր. Գ, 8, էջ 265. ուճի նաև Պիտ. «Երազդատութիւն մշակութեան և զինուորութեան» հատվածում (էջ 485), որը, հավանորեն, հնագույն մասի վարժութիւններից չէ.

9. սրաւորակ 110. մատենագրական Հին երկերում չի հանդիպում անգամ «սրաւոր» բառը.

10. Հարուստ «Հետևոց», առուեալ անոց անոյց առն Հարստի ոսկիանակ կերիս և Հեճկոյ ոսկիանակ հինգ» 109. Հճտ. Թովմա Արծր. Գ. 9, էջ 174՝ «տեղեղով ընդ ինքեան գունդ Հարուստ»: «Հարուստ» բառը «Հետևակ» նշանակութեամբ, որ ուղիղ լուսարանն էլ Տաշյանը («Աւսումն», 192), չի հանդիպում հնագույն երկերում.

11. կիսախոյտոյց 28, 105. Ռոր. Գ. 32, էջ 296. Ասոյ. Գ. 7, էջ 172.

12. բազմախոյտոյց 65. Ռոր. Գ. 28, էջ 290. Հովհ. Կաթ.

13. կոճ «վզգ», առայով նրան ճակագրական և կոճա, որով մակեղոնացուց մանկուրեն խաղան» 54, «կոճ» բառի իմաստը հնագույն երկերում առբեր է.

14. ժամաղէտ 5, ուճի նաև Ծիր. ժամաղիտական, ժամաղիտակ Ռոր. Ալիս. (1843), էջ 587. Սուրբ. Հրատ., էջ 6. նույն իմաստով զործ է անփոփոխ հնում «ժամարալալ» բառը, տե՛ս Վեցոր. գ.

15. խաժակն 15. ԳՊրփ. 311. խաժակնութիւն ԳՊրփ. 309, իսկ «խաժ» Թրակացու բերականութեան մեջ նշանակում է «Հաստ, ստփոխ, թվալ».

16. տեղագրեմ 38, 39, 40. Ասոյ. Բ. 1, էջ 72, տեղագրութիւն Ռոր. Ալիս. (1843), էջ 589. Սուրբ. Հրատ., էջ 7.

17. պեւկէ 102. պեկիս «Ղեւոյ 14, էջ 90.

18. նախկին 75, 157. Ար. Սո. 363. Յամբգ. Սո. 447. Պեր. 495. Ներ. Պրփ. 242. Ռոր. Սոկր. Հովհ. իմաստ. և այլն: Այս բառն ինչ չի հանդիպել Հունարան երկրորդ շրջանի թարգմանութիւններից առաջ.

19. եռուտանի 63. Նոննոս, էջ 10, իսկ «երկբուտենակ» Սոկր. Ա. 16, էջ 44. «եռ» Հունարան դպրոցի անանջ և կ զործ է անփոփոխ հաճախ ավելի ուշ չըբանի երկերում.

20. փրփրածին 67. ուճի նաև Նոննոս, էջ 7.

21. խորձակ 90, թվում է ուշ շրջանի բառ. Հր. Աճառյանը սխալմամբ կարծում է, որ այս բառը գտնվում է միայն արդի գրականի մեջ, տե՛ս «Արմ. բառ.».

22. ջախնմ 91. Ղեւոյ. Հովհ. Կաթ. «Ջախումն» Ռոր. Բ. 46, էջ

173. V դարի երկերն ունեն կրկնությանը «Ճամփախել».

23. ցոփարանութիւն 93. ցոփարան Շիր, Համամ առակ.

24. յոգնատարած 98. Անան, եկ. Եսար, մծր. «ջոզն» առաջադիրը գրեթէ չի հանդիպում V դարի երկերում.

25. զեղայարմար 108. ունի նաև Մագ. «զեղ» առաջիրը Հանդիպում է, գլխավորապես, Հունարան և աղկի հաճախ Հետագա երկերում.

26. ճախր. առնուլ — զգոր տտեսի... զորացն Աղերսանդրի, ճախր առնայ ճեմէին» 134. «քանի Հարեայ նիղակաւ՝ ճախր առնայ ի ներքուստ ի վեր առնողը կանճարն», Սոր., Գ, 9, էջ 267. «ճախր ի յնստն Վարազ» Թովմա Արծր., Գ, 20, էջ 254. «Հեմեայ ի ջորուջ խրում՝ ճախր առնայ ճեմէր» Հովհ., Կաթ.: Մատենագրական Հնագույն երկերն ունեն «ճախրէն».

27. յանձապան — գտնապանօր և բարձրապանօր մորթիցիւնք, և յանձապանօր զմարմինս իրեանց պատէին» 140. յանձապահ Թովմա Արծր., Ա, 5, էջ 39. Հովհ., Կաթ. յանձապանակ Հովհ., Կաթ.: Հնագույն երկերում «յանձապան» և «բարձապան» բառերը չեն հանդիպում.

28. բարձրապան 145. տե՛ս նախորդ «յանձապան» բառը.

29. դազանուտ 145. ունի նաև Սոր. Աշխ., (1843), էջ 597.

30. տանձարայգարք 27. ունի Անան, եկեղ. այլն:

Եթէ անգամ ապացուցվի, որ այն բառերից մի քանիսը գործ են անձկն Հնագույն երկերում, թիում է ինձ, որ սրանց մեծագույն մասը Համարվելու են մատենագրական Հետին շրջանի բառեր, գլխավորապես, VII-IX դարերի:

դ. Աղերսանդրի վարքի թարգմանության մեջ կան, ինչպես մատնացույց է արել Հ. Տաշյանը («Ստումաօսիր.», էջ 205-206), բաղձաթիվ «ասմիկ ձևեր», որ նա Համարում է Հին և սովորական V դարի դրաբարում: Ընդունելով սակայն, որ Աղերսանդրի վարքն ու ժամանակվա թարգմանությունն է և զրգամ է արարական շրջանում՝ կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ սահկարանությունները ո՛չ թե Հին են, այլ արդուր են, Հավանորեն, յեզվի Հետագա զարգացման:

Ե. Որ Աղերսանդրի վարքը թարգմանված է արարական շրջանում և ո՛չ V դարում՝ այդ երեսում է բառ ի բառ, բացի վերոհիշյալ նկատառումներից, նաև այդ թարգմանության մի քանի Հաստատվածներից, որոնց մեջ Հանդիպում են արարական բառեր: Այդ Հաստատվածները՝ որ ուշագործիան չեն առնվել՝ Հետնյալերն են.

1. ճՂԸ, էջ 113՝ «Թակ Աղերսանդրի բախտակից եղեայ և ի գուրթ զորովոյ շարմեայ յայդ դասնապես, և Հրամայեաց թափտով չորս օրինակ՝ թարուտով կամ թափուտով՝ բառնայ զմարմինն և թաղել զնա որպս պարտ էր զթագաւոր թաղել պարսկական օրինօք».

2. ՄՄԸ, էջ 167՝ «և ոչ Հուստուցեայ թէ իցեն սեղօք կուածոյք (արձանքն Հերակլեայ), կամ եղև ինձ զո՛հս մատուցանել Հերակլե և ծակել զմի յարձանացն, և երևցաւ ինձ Համակ սուկի, կամ եղև ինձ զարձայ լույս զծակն, և զտաւ ծակուածն զի տարաւ սուկս Հագար և Հինգ Հարիսը մտղայ (երկու օր, միխալ. երկու այլ մտղայ կամ մխալ) որ է զրամ մի»:

Առաջին Հատվածի մեջ գործ է անձված «թափուտ» բառը, որը Տաշյանը Համարում է «Հին աղաւաղութիւն» Հետեայ իր բացատրության մեջ.

«Ստումաօսիրութիւնք», էջ 247՝ «Այս բառն է ռամկորեն (ճշդիվ ևս՝ արարական) «թափուտ», որ զագաղ կը նշանակէ: Բառական Հին աղաւաղութիւնն մըն է այս, այնպես որ նաև քիչ մ'նտրը (113,23) ուր Թ. 424 «զին» կ'ըսէ, չորս օրինակը կը կրկնեն «թապուր» բառը»:

Հր. Աճառյանն իր «Աքրմատական բառարանում» մատնացույց է անում, որ Սեն-Մարտենը («Mémoires», II, էջ 292) և Պատկանյանը («Mater», I, 9) «թափուտ» բառը կեննել են իբրև փոխառություն արաբերենից: Իբր, սակայն կարծում է, որ այդ «կարելի չէ, որովհետև Հայ բառի զործածությունը Հին է», ուստի և նույն բառը նա Համարում է փոխառություն ո՛չ թե արաբերենից, այլ պարսկերենից (= պար. tábūt, արաբ. tábūt «զագաղ»):

Տ. Տաշյանի ու Հր. Աճառյանի վերոհիշյալ բացատրությունների գլխավոր ու միակ Հիմքը, անշուշտ, այն է, որ նրանք Աղերսանդրի վարքը ենթադրել են Հին թարգմանություն: Ընդունելով այդ երկը նախարարական շրջանի թարգմանություն՝ նրանք «թափուտ»-ը Համարելու էին, ընականաբար, կամ ընդմիջարկություն և կամ փոխառություն պարսկերենից:

Այս երկու կարծիքն էլ բառ իս ընդունելի չեն: Քանի որ լեզվական վերոհիշյալ մեր դիտողությունները վկայում են, որ

Աղերքանդրի վարքը թարգմանված պիտի լինի արարական շրջանում՝ միանգամայն Հասկանալի է նրա մեջ արարքերն «Թափուտ» բառի գործածությունը: Այս բառը, որ պարսկերենում Հանդիպում է նաև Ֆիրդուսու մոտ (I, 514, 1352, 1354, տե՛ս **H. Hübschmann**, *Armenische Grammatik*, էջ 153), թե՛ Հայերենում և թե՛ պարսկերենում փոխառություն է, անշուշտ, արարքերինն, ինչպես այդ ճիշտ ենթադրել են Սեն-Մարտենը և Պատկանյանը:

Աղերքանդրի վարքից վերև մեջ բերված երկրորդ Հատվածն ունի, ինչպես տեսանք, «մտղայ» բառը, որ փոխառություն է դարձնող արարքերինն և չի հանդիպում ո՛չ միայն մատենադրական Հնագույն երկերում, այլև Անանիա Նիրակացու «Տաղապս կռոց և շափուց» գրվածքում: Ավգրչյանի վկայությամբ՝ Վենետիկի մտադիրներից Թ օրինակի Հավիվածում միայն Հիշվում է «մտղայ»-ը Հետևյալ Հատվածում՝ «միխայն որ է դահեկան մի... միխայն իո կուտ է» (տե՛ս «Բացատրություն շափուց և կռոց»), Վենետիկ, 1831, էջ 27 և 71): Այս Հատվածը, անտարափույս, Նիրակացույն չէ, այլ ուշ ժամանակի Հավիլումն և ուրիշ գրչի: Որ «մտղայ»-ը կամ «միխայ»-ը (= արար. მიძგა), տե՛ս **Hübschmann**, *Arm. Gramm.*, էջ 271) արարական բառ է՝ այդ անվիճելի է: Ըստ Անադյանի (տե՛ս «Արմատական Բառարան»)՝ «միխայ»-ը ծագում է արար. ծզլ «ծանրություն» արմատից: Ուրեմն՝ այս բառի գործածությունը ևս Աղերքանդրի վարքի թարգմանության մեջ Հավանական մի նոր ապացույց է, որ այդ թարգմանությունը գրված է արարական շրջանում:

Ուշադրության արժանի է նույն այս թարգմանության մեջ նաև Հետևյալ Հատվածը.

Լե, էջ 18՝ «Ջարանք են զնախմայցութեան փորձ առնուլ զնեկտաներայ. զի այր Եղիպտացի ի Մակեդոնիա եկեալ Ելլաղական օրինոք պատանաց և թաղամար թաղեցաւ, և Աղերքանդրոս որ մակեդոնացին էր, յեղիպտոս եկեալ մարական թաղամար աստուածօրէն լինէր»:

2. Տաշյանը նկատել է, որ «մարական թաղամար» խոսքերը չէին կարող գրված լինել V դարում: Նրա կարծիքով՝ «մարական թաղամար» փխ. «ելիպտական» ևսամուտ ռամկականություն է» («Ուսումնասիր.», էջ 216): Տաշյանի այս ենթադրությունն ևս ինձ թվում է վիճելի ու անհավանական: Ինչպես վերև ասա-

նանչված «Թափուտ» և «մտղայ» արարական բառերը, նույնպես և «մարական» բառը, ո՛չ թե Հետամուտ ընդմիջարկություններ են, այլ Հավանական նշանակող, որ Աղերքանդրի վարքը, ինչպես և Նորենացու «Աշխարհացույց»-ը, ուշ ժամանակի թարգմանություններ են:

Լեզվական վերահիշյալ դիտողություններից անկախ Հիշատակության արժանի է և այն, որ Աղերքանդրի վարքը, ինչպես և Նորենացու «Աշխարհացույց»-ը և Պատմությունը, առաջին անգամ Հիշվում են Թովմա Արծրունու Պատմության մեջ, որը Հորինված է X դարի առաջին կեսում: Հակասակ բանասերների ենթադրության՝ ո՛չ Չազար Փարպեցին և ո՛չ էլ Սերետար չէին կարող օգտված լինել Աղերքանդրի Հայերեն այժմյան վարքից, որովհետև այդ երկը, ինչպես տեսանք, ավելի ուշ շրջանի թարգմանություն է: Իսկ ի՞նչ այդ պղպղակ է, ուրեմն, Հիմնվելով Նորենացու «Աշխարհացույցի» և Աղերքանդրի վարքի վերև մատնանչված նմանությունների վրա, նաև ուշադրության առնելով այն սերտ կապը, որ ունի Կեղծ-Կալիսթենեսը Նորենացու Պատմության Հետ՝ կարող ենք միանգամայն Հնարավոր ու անգամ Հավանական Համարել, որ Կալիսթենեսի մեր մեզքը Հասած Հայերեն թարգմանությունը պատկանում է «Աշխարհացույց»-ի Հեղինակ Մովսես Նորենացուն, որի Պատմությունը ևս գրված է, ինչպես կտեսնենք, IX դարում:

15. Նորնացու Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը զբված են IX դարում՝ Հայ վաճառականության զարգացման ու Հայաստանի տարանջիկ առևտրի վերակենդանացման շրջանում: – Հայաստանի առևտրի ու բաղաբերքի մասին ուսուերն իմ աշխատության մեջ մատնացոյց է արված (տե՛ս «Օ торговле и городах Армении», էջ 133-140), որ արարական տիրապետությունը Հայաստանում, մինչև IX դարը, նպաստավոր չի եղել միջազգային տարանջիկ առևտրի զարգացման համար Հայաստանի վրայով: Սմանյանների և առաջին Աբրաքայանների ժամանակ միջազգային առևտրական Հարաբերությունները զարգանում էին մեծ չափերով բոլորովին այլ ուղղությամբ՝ ո՛չ թե Բյուզանդական կայսրության հետ Ասորիի, Փոքր Ասիայի կամ Հայաստանի վրայով, այլ, գլխավորապես, Չինաստանի, Հնդկաստանի, Սպանիայի և Հարավային Եվրոպայի հետ:

Արարական խալիֆայության ծաղկման ու բարգավաճման առաջին շրջանը, ինչպես ուղիղ դիտել է Վ. Գուրկո-Վրյաժնիկը (տե՛ս **В. Гурко-Кржижко**, Пролог и настоящее Советской Армении, “Новый Восток”, գիրք 16-17, էջ 206), համառ ու անվերջ կոիմների մի շրջան էր խալիֆայության արևմտյան՝ բյուզանդական ասճաններում:

Այդ անդադար կոիմները և մշտական թշնամությունն անհարին էին զարմնում Արևելքի առևտուրը Բյուզանդիայի հետ:

Հայաստանի տնտեսական բարեկեցությունը և տնտեսական զարգացման վրա միջազգային առևտրի այդ ընդհատումն ունեւայու էր, անշուշտ, բացասական ազդեցությունը, և հետաքրքիր է, որ արարական տիրապետության սկզբնական շրջանում՝ Հայաստանի տնտեսական կյանքում նկատելի է որոշ անշարժություն և անզամ հետաշրջում:

Այս դրությունը սկսել էր փոխվել, ինչպես ցոյց ենք տվել վերահիշյալ մեր աշխատության մեջ, IX դարում:

774-775 թվկեր նախարարական մեծ ապստամբությունից հետո, որ աղետալի հետևանքներ ունեցավ նախարարական Հա-

յաստանի համար, Բագրատունիներն հարկադրված էին թողնել իրենց հայրենի կալվածները Կողովրդում և հետևապ Հայաստանի ընտանյին արևմտյան շրջանները: Այստեղ նրանք, գտնվելով Բյուզանդիայի հովանավորության տակ, նորից գործազան, և IX դարի սկզբներում կարողացան հետզհետե տեղ գտնել բնդարձակ կալվածների ու նոր երկրների Հայաստանի ու Վրաստանի նաև դաշտային մասերում:

Բագրատունիների այս զորեղացմանը մեծապես նպաստում էին գահակալական կոիմները Հարուն աբ-Մաշլիի մահից հետո, մահմեդական ամիրայությունների և աղանդավորների ապստամբությունները Հայաստանում և, մասնավոր, Բարեկի մեծ ապստամբությունը 817-837 թվականներին: Ոսպիֆայությունը, թուլացման և երկպառակությունների խտուխուլուց հենց այս շրջանում, ինչպես վկայում է Վարդան պատմիցը, «հանգչւր երկիրս Հայոց, և սկսան զորանայ իշխանք մեր յերաբանչիւր տեղիս» (տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 77):

Նույն այս IX դարը միջազգային առևտրի զարգացման մի նոր շրջան էր Հայաստանում, որ սկիզբ էր դնում Բագրատունյաց Հայաստանի տնտեսական ու կուլտուրական բուռն և առաջ կերակնեղանացման:

Բագրատունիները, մնալով Հավատարմի արարական խալիֆայության, ունեին միաժամանակ սերտ բարեկամական Հարաբերություններ նաև Բյուզանդական կայսրության հետ: Նրանց երկիրը, որ Բարեկիի ու Արտանունի վրայով Հաղորդակցություն ուներ բյուզանդական վաճառականական նավահանգիստների հետ, ո՛չ միայն խոշոր նշանակություն էր ստանում իրեն համաշխարհային առևտրի տարանջիկ ճանապարհ, այլև դառնում էր չեզոք մի կենտրոնավայր, տնտեսական մի բուֆեր, ուր խոշոր չափերով սկսում էր զարգանալ այդ առևտուրը:

Միջազգային այս առևտուրը խոշոր մի երևույթ էր, անշուշտ, որ չէր կարող շանդրադատեալ նախարարական Հայաստանի սոցիալական կազմակերպության, ինչպես և նրա կուլտուրական ու անզամ մտավոր կյանքի վրա: Ուշադրավ է այդ տեսակետից, որ հենց IX դարից սկսած կարելի է ենթադրել բնիկ հայ վաճառականության զորեղացումը, որն օտարազգիների հետ միասին ղեկավարող դեր էր կատարում թե՛ տեղական և թե՛ համաշխարհային առևտրում:

Տնտեսական ու սոցիալական այս Հեղաշրջումը կարևոր մի ազգակն էր ըստ իս, որ խիման էր Հանդիսանումս աշխարհաչեղոզության ընդլայնման և քաղաքական նոր ձգտումների ու նոր գաղափարախոսության առաջնացման:

Ինձ թվում է, որ մասնակցություն մեջ նոր այդ ձգտումները և գաղափարները բավական որոշ նկատելի են Մովսես Պորենացու երկերում, որը տաղանդավոր արտահայտիչն է նաև Բագրատունյաց տոհմի իդեոլոգիայի մասնալուծման:

Պորենացու «Աշխարհացոյց»-ը և վերոհիշյալ «Միջոնաշար»-ը, որոնց մեջ Հետաքրքիր տեղեկություններ են Հաղորդված առևտրական ճանապարհների, նշանավոր վաճառատեղիների, գանազան երկրների բնական Հարստությունների, արտահանվող ապրանքների ու անզան նրանց գներն մասին՝ իրենց բովանդակությամբ իսկ կապ ունեն միջազգային առևտրի Հետ, որ Հայաստանում նորից սկսել էր զարգանալ IX դարում: «Աշխարհացոյց»-ի մեջ առաջին անգամ Հիշատակված է նույնպես ընդհանուր Հայ վաճառականությունը, որի մասին զվան Հիշատակություններ նախորդ դարերի երկերում:

«Աշխարհացոյց»-ի այդ տեղեկություններից պվկորդ չեմ Համարում մեջբերել Հայ վաճառականության և նշանավոր վաճառատեղիների մասին Հետևյալ Հատվածները.

ա. V. էջ 590, 4-6 - «Քանզի գյուեականան և դկարիականան մերոց իսկ արանց պատահեսաց շուրջ անցեալ յորս վարկանիմ և Հեղկանոյն նոյնպէս լինել» (Հմտ. նաև S. 8, 6-8).

բ. S. 22, 12-14 - «Ձևնի [Բիխմանիա] և մայրաքաղաքս երկուս գՔաղկեզուն և դնիկոմոլիա, որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորքերտասան, և ևնպոտոնս քաղունս, այսինքն քաղաքս ծովկերայոս, վաճառատեղիս» (Հմտ. V. 600, 10-12).

գ. S. 27, 29 - 28, 2 - «Ձևնի [Կորբիս, որ է Եզր] Հինգ քաղաքս՝ Իանի, Կոտա, Ռոդիպոլիս, Աթինա, Ռիզոն. և այլ քաղուն ևնպոտոնս, այսինքն զեղաքաղաքս ծովկերայոս, յորոց է Տրապիզոն (Հմտ. V. 605).

դ. S. 42, 28-31 - «Ձևնի [Միկոմիա] աշխարհս Հինգ զՄոզգիանի՝ որ է Սագաստան, և գՄակէ. ընդ երկուսին ևն ազգ ևնգետասան, Հարուստք արուեստուորք վաճառականք՝ որ բնակեն ի մէջ Քուրքեստանի և Արեւաց (տը

եմաուն լերանն (Հմտ. V. 614, 23-25)»,
և. V. 612, 6-8 - «Եւ է Պարսա ամենայնց գաճառոր, և եկը նաւաց ի Հեղկաց և յամենայն կողմանց արեւելից».

Հմտ. նաև V. 612, 17-19. V. 616, 15-16. S. 46, 10-12 և այլն:

«Աշխարհացոյց»-ի թև՝ այս և թև՝ ուրիշ նման տեղեկությունները վերաբերվում են ըստ իս բյուզանդա-արաբական առևտրին, որ սկսել էր զարգանալ IX դարում:

Թե ինչպիսի բարձր դիրք են ունեցել «Աշխարհացոյց»-ում Հիշված Հայ վաճառատեղիները, նաև քաղաքացիները, Հայաստանի վերակենդանացման այս շրջանում՝ այդ երևում է Պորենացու Պատմության Հետևյալ Հատվածից, որը կարևոր մի վկայություն է քաղաքացիների գրություն մասին ո՛չ թե Վաղարշակ թագավորի, այլ, Հավանորեն, իր՝ Պորենացու ժամանակ.

«Հրաման տայ [Վաղարշակ], - վկայում է Պորենացին, - և քաղաքացեալ մարտան արգոյ և պատիւ լինել առուել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս գիշխանս. և քաղաքացեաց մի՛ կարի առ զգեղջկարս պերճանալ, այլ երջարարքս վարիլ. վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք» (Ո՛, Ը, էջ 117-118):

Ինչպես Հայտնի է, Պորենացին իբրև պատմաբան իր Հմտությունը շատ ավելի բարձր է կանգնած, քան Հնագիտի Հայ պատմիչները: Նա բնագաղափարներ վերաբերում էր ունի զնպի Հինք, պարսազում է Հայոց նախկին թագավորների անխմատությունը, անվանում է նրանց «աւրան, թուլամիտ, վայրենի».

նույնիսկ անհավ-Մեսրոպյան շրջանի թարգմանչական արվեստը նա Համարում է թերի ու անկատար: Պորենացու Պատմության բնագաղափարն այս ուղղությունը, որ ունի քաղմատական արտահայտություններ, արդյունք է, Հավանորեն, սոցիալական ու կուլտուրական այն Հեղաշրջման, որ տեղի էր ունեցել IX դարում:

Իրենցով փառաբանող ու Հերոսացնող Բագրատունի իշխանների՝ Պորենացին, ինչպես այդ պարզ երևում է նրա պատմության բովանդակությունից, ունի անտարակույս, Հատուկ մի նպատակ՝ տրամադրություն տեսողելու ի նպաստ նախարարական Հայաստանի միություն և Բագրատունյաց թագավորության Հաստատման: Քաղաքական նրա այս ձգտումն ու իղձը,

որ Հակոբակ էին նախարարական կենտրոնախույս շրջանների Հակոմների, Համագատասխանում են ըստ իս Բագրատունիների Հովանավորության տակ զարգացող մեծ առևտրի շահերին: Այդ բազմաներերը Հասկանայի են, քնականարար, վերահեղանացման IX դարում և միանգամայն անհավանական են Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հետաշրջման VII կամ VIII դարերում:

Նորենացու ուրույն աշխարհայացքը և նրա զարգացրած խոստովության կարգ IX դարի վերածնության հետ այնքան կարևոր ու հետաքրքիր խեղդեր են, որ կարող են նյութ ծառայել Հաստիկ ընդարձակ մեկնաբանության: Մենք բավական ենք Համարում այստեղ վերոհիշյալ մի քանի նկատողություններ, որոնք ուշագրավ կոմաններ են Նորենացու ժամանակի որոշման:

Ընդհանուր այս դիտողությունները, որոնք կարող են թվալ վիճելի կոահոմներ, ինչպես կոստներ, Հաստատվում են կարևոր նոր փաստերով, որոնք ուշագրություն չեն առնվել նախորդ ուսումնասիրություններում:

16. Նորենացու Պատմության IX դարի գրքը լինելը նեթադրվել է նաև նախորդ հետազոտություններում: — Որ Նորենացու պատմությունը կարող է լինել IX դարի գրք՝ այդ նեթադրել են ինձանից առաջ ֆրանսական գիտնական Մ. Վ. Լա-Կրոզը, Գր. Նալաբյանցը, Ն. Ադոնցը, Ն. Մարը, իսկ վերջերս նաև Ն. Ակինյանը և Յո. Մարկվարտը:

Գեոս XVIII դարի առաջին կեսում Լա-Կրոզը միանգամայն ճիշտ կոահել էր, որ Նորենացու Պատմությունն ուշ ժամանակի գրք է: 1730 թվականի ապրիլի 24-ին Գուլիյմոս Վիտտերի գրած իր նամակում Նորենացու ժամանակի մասին նա Հայտնել է հետևյալ կարծիքը՝

«Նորենացու ժամանակի իմ կարծիքս կ'ընկնուես ի ծանոթությունս վրայաստանական քերթնվածի կայացելու ներսխի: Միայն քանի մը խոսք ավելցնեմ: Ար Համարիմ թե այդ Պատմությունը շարագրողը ապրած ըլլա ի միջոցի IX և X դարուց, Հավերս Բագրատունի իշխանաց, որ մեծ ազդեցություն ունեն հայն ժամանակի, և իշխանք էին բովանդակ Հայաստան աշխարհի» (տե՛ս Գ. Զարգանացյան, Ռուսաստանի վրայի հայ լեզվի և մատենագրության Արևմտս), Վենետիկ, 1893, էջ 52, Հմմտ. «The saurus epistolici Lacrosiani», 1742-1746, Հատ. III, էջ 281):

Մ. Լա-Կրոզի այս կարծիքը չէր կարող հավանություն գտնել, որովհետև մինչև անցած դարի ութսուական թվականներն ընդհանուր տարածված համոզմունք էր, որ Նորենացին ապրել ու գրել է V դարում:

Ա. Գուաչմիդի և Ա. Կարիերի մերկացուցիչ բնույթ կրող նոր ուսումնասիրություններից հետո՝ Նորենացուն հնարավոր էր Համարել ինչնեկ IX դար նաև պրոֆ. Գր. Նալաբյանցը: Ռուսերն լեզվով գրած իր ընդարձակ հետազոտության մեջ («Армянский эпос в истории Армении Моисея Хоренского», Москва, 1896, էջ 344) նա Նորենացու աղբյուր էր Համարել Ղևոնդ Երեցի Պատմությունը և Նորենացու ժամանակը նեթադրել Ղևոնդից հետո՝ VIII դարի վերջերս կամ IX դարի սկզբում: Պետք է ասել, որ Նորենացու «քանազոդություն»-ները Ղևոնդից հինված են նրա մոտ մի քանի սովորական բաների կամ անունների ու զարմավորների նմանության վրա, ուստի և Նալաբյանցի թե՛ րոնանից Համեմատությունները և թե՛ նրա ընդհանուր կերակրությունը վիճելի էին և կասկածելի:

Նորենացուն շատ ուշ ժամանակի մատենագիր էր նեթադրել նույնպես և պրոֆ. Ն. Ադոնցը Հետաքրքիր իր մի հոդվածում, որ լույս էր տեսել 1901 թվականին (տե՛ս «Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского», «Визант. Времен.», 1901, Հատ. VIII, № № 1 և 2, էջ 41-42): Ադոնցի կարծիքով՝ Նորենացու Պատմությունը գրված է Բագրատունիների դրերդացման ժամանակ և Բագրատունյաց թագավորության Հատաստումից առաջ: Այդ Պատմությունը, որ վերադնեցապես բազմաբան է և նկարագրում է Հայկական և Արշակունիների թագավորության անցյալը, Ադոնցի սակավ, արդյունք է բարձր տրամադրության և բազմաբան մոտալուստ ազատության ակնկալման: Հինվելով իր այս դիտողությունների վրա՝ Ադոնցը Նորենացու Պատմության ժամանակը նեթադրում է VII դարից հետո և Բագրատունյաց թագավորության Հատաստումից առաջ¹:

Մովսես Նորենացու Պատմությունն IX դարի գրք է Համարվում նաև վերջերս լույս տեսած Ակինյանի և Մարկվարտի ըն-

¹ Նույն կարծիք է Հայտնել նաև ավագ Ն. Ման իր «Кавказский культурный мир и Армения» աշխատության մեջ (Петроград, 1915) «взгляд Моисея Хоренского характеризует не реальность эпохи арменского царства,

գարակ ուսումնասիրություններում (տե՛ս Ն. Ակինյան, Մատենագրական Հետազոտություններ, Հատոր Գ., Վիեննա, 1930 և Jo. Markwart, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Xorenathi, Caucasia, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930):

Ն. Ակինյանը վերահիշյալ իր ուսումնասիրության երկրորդ մասը (էջ 127-291), ինչպես Հայտնի է, նվիրել է Պորենացու և Ղևոնդ Երեցի նույնության հարցին: Այդ հարցի մանրագրին քննությունը նա Հանգել է Հետևյալ եզրակացությունների (տե՛ս էջ 286):

1. «Մովսես Պորենացի և Ղևոնդ մի և նույն անձնավորություններն են, ինչպես մի և նույն են Մովսես և Մար Աբաս Կատինա»:

2. Պորենացու «ուսումնասիր» և «քարձրագունից արձանուր զօգուրթևանց» մեկնեան այն Մահակ Բագրատունին է, որն «Ամենացայց երկրին, այսինքն՝ Կորճայր նահանգին ընդարձակված սահմաններուն տերն էր 806-816 շրջանին»:

3. «Մովսես ի զուրի Հանձն յուր Պատմությունը Մահակ Բագրատունիու արքունիքը Հավանորեն ի Կանգուար»:

4. «Հայոց Պատմությունը Հորինված է 806-են ետքը, ոչ շատ ոչ քան 820, ուստի 810-ին մերձավորապես»:

Ակինյանի այս ենթադրություններից և ո՛չ մեկը չի կարող ըստ իս Համարվել Հավանական և ընդունելի, որովհետև այդ ենթադրությունները չեն Համապատասխանում այն կարևոր նոր մեր դիտողություններին, որ ներքև քննության են առնվելու: Ակինյանի ուսումնասիրության մեջ ուշադրավ է միայն այն, որ նա ևս Պորենացու Պատմությունը Համարում է շատ ոչ ժամանակի գործ:

Մարկվարտի ուսումնասիրության մեջ, որ նվիրված է, զլիսավորապես, Բագրատունիների ճյուղազրույթյան, շոշափված է նաև Մար Աբասի և Պորենացու ժամանակի խնդիրը և նրանց ժամանակը որոշված է նույնպես IX դարում:

а современность историка, дающего идеализованное представление о первом армянском царе согласно национальным идеалам его времени, приблизительно VIII-IX-го века по Р. Хр.» (էջ 33).

Մարկվարտի դիտողություններն այս Հատուկ խնդրի մասին, զժրվատարար, քաղաքարաչափ Հիմնավորված չեն, որովհետև Հանգուցյալ Հայագետը մտադիր է եղել վերադառնալ նույն խնդրին իր Հաջորդ աշխատություններում (տե՛ս «Die Genealogie der Bagratiden», էջ 66 և 67):

Քննության ենթարկելով Մար Աբասի և Պորենացու վկայությունները Բագրատունիների ճյուղազրույթյան մասին՝ նա մատուցույց է արել այդ Հեղինակների ժամանակը և մեջ է բերել Հետևյալ իր եզրակացությունները:

1. Մար Աբասի Պատմությունը գրված է Հակոբ Եղևացուց և Ղևոնդից Հետո Տարնում, «իշխանաց իշխան» Բագրատի արքունիքում, IX դարի ստաջին կեսում (տե՛ս էջ 16 և 56):

2. Մար Աբասը՝ Փառնավազյան Բագրատունի նկարագրելիս՝ ի նկատի է ունեցել իբրև կազապար «իշխանաց իշխան» այս Բագրատունի:

3. Մար Աբասի վկայությունը, որ Աբասի արքան Փառնավազյան Բագրատունի նշանակել էր «իշխան և Հրամանատար ամենայն ինչաւորութեանն», Համարում է միայն Տարնի «իշխանաց իշխան» Բագրատունի, որը Հովհաննես Կաթողիկոսի Պատմության մեջ ևս անվանված է «Հրամանատար և իշխան իշխանացս Հայոց» (էջ 49):

4. Եթև Պորենացին, Մար Աբասի վկայության Հակատակ, Բագրատունիների նախահայր է Համարում Եսմիրատ-Սմիրատին՝ «զկոչեցեալն Բագրատ»՝ դրա պատճառն այն է, որ նա Համարում է Սմիրատ Ռոստոմանդին և ատուն Տարնի Հավատուրաց Բագրատունի (էջ 67):

5. Պորենացու այս Եսմիրատ-Բագրատուր նախատեղն է, ուրևն, Սմիրատ սպարապետի, որը 856 թվականին վախճանվել էր Սամառայում «Վանս Քրիստոսի խոստովանությանն» (էջ 65):

6. Պորենացին իր Պատմությունը գրել է այս Սմիրատի որդու՝ «իշխանաց իշխան» Աշոտի արքունիքում՝ որպես մի Հայկի Հայկական պետության, որ նոր ստեղծվելու էր (էջ 67):

Յո. Մարկվարտը, ինչպես տեսնում ենք, Պորենացու ժամանակը որոշել է ճշգրիտ կերպով և իր կարծիքը Հիմնավորել նաև

Ռորենացու Շամբառ-Բազարատի վերաբերյալ ուշադրաբար պահանջներով և կարևոր իր դիտողություններով: Նրա օրամատ այդ եզրակացությունները, որ նոր լույս են սփռում Ռորենացու Հարցի վրա, ինչպես և «Աշխարհացոյց»-ի խնդրի մեր նոր լուսարձանները, կարևորագույն նեղուկներ են ըստ իր Ռորենացու առեղծվածի լուծման:

Ներքև մենք կտեսնենք, որ Մարկիարտի վերոհիշյալ դիտողությունները միանգամայն ճիշտ են և Հաստատվում են այն նոր տվյալներով, որ մանրամասն բնեկու ենք:

17. Ռորենացու Պատմությունը զրված է Բուզայի արշավանքից Հևուտ: - Ե. Ակինյանը վերոհիշյալ իր աշխատության մեջ մի ընդարձակ գլուխ է նվիրել Ռորենացու «Ողբ»-ի բնութիան և իրրև այդ բնութիան արդյունք Հանդիկ է Հետևյալ եզրակացությունների (տե՛ս «Մատենագրական Հետազոտություններ», էջ 180-181).

ա. «Մովսես Ռորենացու «Հայոց Պատմության» վերջը (գլ. 68) գտնված Ողբը յուր բովանդակությամբ անհարկ է տեղգոյն և ժամանակին, այն չի կրնար «Հայոց Պատմության» վերջարանը նկատվի»:

բ. «Բնական երևույթներու, քաղաքական և բարոյական կյանքի հանգամանքներու մասին Հաղորդված տեղեկությունները կ'ակնարկեն Ը գաբու երկրորդ կեսին (750-774) զիպվածները, այնպես ինչպես նկարագրած են գանոնք Մուտն-Գիտնիստ Թեյ-Մահրեցի և Ղևոնդ Երեց: Ողբը զրված է 774-ին»:

գ. «Ողբը սկզբնաբար Հորինված է իրրև վերջարանություն Ղևոնդ Երեցի Պատմության առաջին մասին» (գլ. 1Գ)... «790-ին, երբ Ղևոնդ յուր Պատմության կցեց 774-790 տարիներու զիպվածները, տեղափոխվեցավ Պատմության Բ մասին վերջը, զույցն փոփոխություններով... և ապա «երկրորդ ձևը մը Ղևոնդի Պատմության վերջարանը փոխադրած է «Հայոց պատմության» վերջը: Այս փոխադրության ժամանակ մուծված են մանր փոփոխություններ և Հավելվածներ, որոնք շղտախելի են»:

Ն. Ակինյանի այս նկնադրություններից և ո'չ մեկին մենք Համախոս չենք: Ռորենացու «Ողբ»-ը գտնվում է ըստ իս իր իս-

կական տեղում, և իր լեզվով, ոճով ու բովանդակությամբ միանգամայն անհարազատ է Ղևոնդին և արժանա մասն է, առշուշտ, ո'չ թե Ղևոնդի, այլ Ռորենացու Պատմության:

Ազացուցելու Համար՝ որ «Ողբ»-ը զրված պիտի լինի 774 թվականին՝ Ակինյանը մանրամասն Համեմատել է բնութիան արհավիրքների և քաղաքական, տնտեսական ու բարոյական կյանքի մասին «Ողբ»-ի մեջ Հաղորդված մանրամասնություններն այն նման զիպվածների Հևու, որոնք տեղի էին ունեցել Ասորական Միջագետքում VIII դարի երկրորդ կեսին, Հատկապես 772-773 թվակրին, և նկարագրված են Սուտ-Գիտնիստ Թեյ-Մահրեցու ժամանակագրության մեջ:

Այս Համեմատություններից, ինձ թվում է, առարկելի են, նախ և առաջ, բնութիան արհավիրքների, նաև սուփի և Հիփանդությունների վերաբերյալ նմանությունները: «Ողբ»-ի մեջ Հիշված երաշար, կարկուտ, ծանր ձնոք, անժամանակ անձրևները անշուշտ, սովորական, երևույթներ են, որ պարբերաբար կրկնվել են Հայաստանում ո'չ միայն Հին, այլև նոր ժամանակներում: Ակինյանի նկնադրությունը, որ այդ արհավիրքները Հազվադեպու երևույթներ են և որ զրաբն պետք է միաժամանակ զգացված լինելին Հայաստանում և օտհմանակից Ասորական Միջագետքում՝ ավելի քան վիճելի է և անհավանական:

Համոզիչ չեն նաև քաղաքական պայմաններին վերաբերվող Համեմատությունները: Պատերազմներ ու խռովություններ, թագավորների խառուություններ, կեղեքումներ ու Հայաժանյներ, որ ակնարկված են «Ողբ»-ի մեջ, դարձյալ սովորական երևույթներ են և չեն կարող վերագրվել միայն այս ժամանակաշրջանին:

Շատ պարզ է, որ նման Համեմատությունները չեն կարող նշանակություն ունենալ և ծառայել իրրև կական «Ողբ»-ի ժամանակի որոշման:

Ն. Ակինյանի ուշադրությունից, զմբխտաբար, փրիպել են «Ողբ»-ի այն մանրամասնությունները, որոնք միանգամայն հակասակ են իր եզրակացության և պարզ ակնարկներ են, որ Ռորենացու «Ողբ»-ը զրված է ո'չ թե 774 թվակր, այլ 852-855 թթ. Բուզայի արշավանքից Հևուտ:

Ուշադրություն արժանի են այդ տեսակետից «Ողբ»-ի Հևուտյալ ակնարկները.

1. Ռորենացի III, 68, էջ 360, տող 10-16 (Տփղիս, 1913)՝

«Թ զերուծիւն վարեաց Սեղեկիայ, և Զօրաբարել ո'չ ուրեք

է, որ նորոգէ գլխաւորներն: Անտորոս բռնադատէ թողու գորէնս Հայրենիս, և Մատաբէնայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեջ պաշարէ, եւ Մակարէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտարուստ. արհաւիրք ի Հեթանոսաց և մարտք ի Հրեանստոցոց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմս:

2. Նույնը, III, 68, էջ 365, սող 9-366, սող 2՝

«Ձի թագաւորք տիրեալք խիստք և շարաշարք, բռնին բռնաւորով ծանունն և զժողովրդակիրս, Հրամանս տալով անտանելիս. վերակացուք անհարթարարք, անողորմք, սիրելիք դաւաճանեալք, և իշնամիր գորացեալք. Հաւատ վաճառեալ ընդ սնտոի կենցաղոյս: Ընչք եկեալ անհատք և յողովից կողմանց, զերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց. կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց. յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց. ատուն բաղարաց և բանդումն ամբողջաց. ատումն աւանաց և Հրեանսումն շինուածոց. սովք անբաւք և Հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. աստուածպաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն գեհնեիք»:

3. Նույնը, III, էջ 365, սող 5-6՝

«Երկրի անբերութիւնք պտոցոց և անահելութիւնք կենդանեաց, այլ և սասանմունք և զղղճմունք»:

Ոտրնացու ստաջին և երկրորդ վկայութիւններէից երեւում է, որ «Ողբ»-ը գրված է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ «Անտորոս»-ը բռնադատում էր «Թողու գորէնս Հայրենիս» և «Մատաբէն»-ն չէր ղիմադրում, երբ Հափաբը վաճառում էին «Երեզ սնտոի կենցաղոյս» և «աստուածպաշտութիւն»-ը մոռացված էր: Պատմաբանք այս տեղաբերները, ինչպես տեսնում ենք, բռնի կրոնափոխութեան բացառիկ դեպքերի մասին չեն, այլ կրոնական յայն Հայաժանրների մասին: Ուշագրավ է նաև, որ այդ Հայաժանրների ժամանակ «Անտորոս»-ը Հարկադրում էր թողնել Հայրենի կրօնը, իսկ «Մատաբէն»-ն չէր ղիմադրում:

Կրոնական այս Հայաժանրների և բարոյաբանք, որ բողոքովին անհասկանալի են VIII դարի երկրորդ կեսում, իմաստ են ստանում, երբ ի նկատի ենք առնում այն անցքերը, որ տեղի էին

ունեցել Բուզայի արշավանքների ընթացքում և նրանից Հետո:

Արարական խալիֆայութիւնը, ինչպես Հայտնի է, կրոնական մոլեռանդ բաղարականութիւնը էր վարում Մուսափակիկի ամիրապետի ժամանակ (847-861), որին Հայկական աղբյուրների անվանում են նաև Ջափր: Ընեց այս Ջափրն է բառ իս այն «Անտորոս»-ը, որը տեսիլ էր Հայերին ուրանալ իրենց Հափաբը:

Հայտնի է նույնպես, որ «Իշխանաց Իշխան» Բաղարատը մյուս իշխանների Հետ միասին ո՛չ միայն չէին «Երեզդիմակայել», այլ գրեթե բոլորն ընդունել էին մահճակալանութիւնը իրենց կյանքը փրկելու համար: Հասկանալի է, որեւէ, ինչ ինչու «Ողբ»-ի Հեղինակն աւանմապես լիշտել է Հափաբի վաճառումն «Երեզ սնտոի կենցաղոյս» և «ակնկալութիւն»-ը «գեհնեիք»:

Արարական տիրակալութեան միայն այս շրջանին կարող են վերաբերվել նաև «Ողբ»-ի Հետևյալ ակնարկները՝ «Ընչք եկեալ անհատք և յողովից կողմանց, զերփումն տանց... կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց»:

Բուզայի արշավանքի ժամանակ, ինչպես գիտենք, ավերածութեան էին մատնվել նախարարական Հայաստանի գրեթե բոլոր շրջանները. կայանավորվել ու Սամառա էին ուղարկվել Հայաստանի զգլխաւորները՝ «Անտորոս»-ներն իրենց բնտաններով և բանտարկվել էին նաև «Իշխանաց Իշխան» Բաղարատը և Սմբատ սպարապետը:

Որ «Ողբ»-ի Հեղինակն ի նկատի է ունեցել այս «զերփում»-ները, «կապում»-ները և բանտարկութիւնները՝ այդ ավելի բան Հափառական է, որովհետև նախարարների բանտարկութիւններն արարական տիրակալութեան նախորդ շրջաններում ունեցել են եզակի ու բացառիկ բնույթ:

«Ողբ»-ի մեջ Հիշատակված են, ինչպես տեսանք, Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժները՝ «աստանտուր և զղղճմունք»:

Ն. Ակիկյանը կարծում է, որ այս շարժերը տեղի էին ունեցել Հայաստանում VIII դարի երկրորդ կեսում: Բրն պապացոյց՝ նա մատնացուց է արել Սուտ-Գիոնիսիան Թել-Մահրեու Հիշած երկրաշարժը, որ տեղի էր ունեցել 755 թվականին Միջագետքում (տե՛ս «Chronique de Denys de Tell Mahre», publ. par Chabot, Paris, 1895, էջ 63), և Միջայել Ասորի Հիշատակած երկու մեծ երկրաշարժը՝ 764/765 թվականին Ոտրաստանում և 768/769 թվականին (տե՛ս «Chronique de Michel le Syrien», éd. Chabot, II, էջ 524):

ն. Ակինյանի այս Հիմնադրումը, անշուշտ, թույլ է, որովհետև Յորասանում և Միշնգետում տեղի ունեցած երկրաշարժները չեն կարող ապացույց ծառայել, որ նման աղետներ պատահած պիտի լինեին նաև Հայաստանում: Եթե ճիշտ լինեք Ակինյանի կարծիքը, ինձ թվում է, այդ մասին որևէ Հրչատակոթյուն կլիներ Ղևոնդի Պատմության մեջ, որը ժամանակակից էր VIII դարի երկրորդ կեսի անցքերին:

Ահափոր և աղետայի շարժերը Հայաստանում Հիշված են Հայկական աղբյուրների մեջ ո՛չ թե այդ ժամանակներում, այլ IX դարի երկրորդ կեսում Բուզայի արշավանքից հետո: «Ողբ»-ի վերոհիշյալ ակնարկը վերաբերում է քառ իս Հենց այս շարժերին, որ մատնանշված են Հենդայ վկայություններում.

ա. «Յովհաննու Կաթողիկոսի Գրասխանակերտացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 133՝

«Բայց զայսու ժամանակաւ ահազին իմն շարժմանց եղևոց ի Դվին քաղաքի, բազում սասանութիւնս և փուղմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դրրդումն առնոյր քաղաքն, այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր, և սղակս ահազին իմն լինէր փտանդ տաղնապին՝ մինչև ոչ որ մնայ բնդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս եղևոյ հաշևոյ հառաչէին: Իսկ ցրտանունչ ստոնամանիք ձմեռայնոյն ատանկ ըրէրէր դրացոյնս հեծութեան, զի յողմք մեարք և ծայրատեսչք լինէին: Իսկ սուրբ Հայրապետն Ջաբարիս ուժգին աղօթիլսր և պազատանօք մշտնօնեամտունչ և աղերասալի աղօթիս առ բարեգութիւն Աստուած մատուցանէր եւս»:

Հմտ. նաև Թովմա Արժրունի, III, ԻԲ, էջ 231՝ «եղև յամ Ջաբարիայ Հայոց Կաթողիկոսի, յետ է ամի զերութեանն Հայոց»:

բ. «Առեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Մ. Պետերբուրգ, 1885, II, 2, էջ 110՝

«Ժ սորա աւուրս (Աշտի որդւոյ Սմբատայ), յՅԺԲ Թուականին ի քառասներորդ պահչոց ի փորձիկ շարաթիւնս եղև շարժումն ահազին և զբազումս կոտորեաց և զղեղեցիկ շինուածս տապալեաց. և տեսաց մինչև ի ժամանակա կրից ամսոց»:

Հմտ. «Մամուլի քահանայի Անեցոյ Հաւարձուք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 95:

գ. «Մովսէսի Կաղանկատուացո Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, III, 21, էջ 267՝

«Եւ ի յերեք հարիս ութ և տասն թուականին Հայոց (ամ տեսան 869) եղև անհարին և հրացուցանող շարժն Գունայ, որ զամ մի ողջնոց զողսցևայ խորատագևաց յանդուղոց անձինս իրբև երկուտասան ըրի մարդկան»:

Հմտ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 55:

Այս վկայություններից մեք տեսնում ենք, որ IX դարի երրորդ քառորդը եղև է քացատիկ մի ժամանակաշրջան ահափոր ու աղետալի շարժերի, որոնք ակնարկված են Յորնեացու «Ողբ»-ի մեջ:

Որ մեք զխոտողությունները և «Ողբ»-ի վերոհիշյալ հատվածների նոր մեկնությունն արժանի են ուշադրության՝ այդ կտեսները ներքև նաև ուրիշ՝ ավելի պարզ ու համոզիչ ապացույցներից, որոնք հաստատում են նույնպես, որ Յորնեացու Պատմությունը գրված է Բուզայի արշավանքից հետո:

18. «Ողբ»-ի մեջ Հիշված «Հովիվ»-ը, հավանորեն, Ովայեցի Հովհաննես Ե կաթողիկոսն է: «Ողբ»-ի բնղարձակագրչն մասը նվիրված է, ինչպես հայտնի է, եկեղեցու «Հովուի» ու քահանայապետի մահվան, որի «Հայրենի վերակացությունն է» զրկվել էր որբերգուն: Եկեղեցու զրության և քահանայապետի մահվան մասին «Ողբ»-ի սկզբում հետտորական ռճով տրված են հետևյալ տեղեկությունները.

Յորնեացի III, 68, էջ 359 (Տփղիս, 1913)՝

«Երանի առաջնո և երկրորդի փոփոխմանն, զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսայիին, և հարսնոց համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց: Գարձալ մինչ երբեմն ոմն սեղիմարար յանդրնեայ յարձակեացա յանարատ առաջատուսոց՝ և հարսնոց ոչ աղտեղացար. Թէպէտ և բռնութիւնն զփեսայն ի քաց վարեաց, որդւոցն բարձրացելոց անարդևոլով՝ զձնողն, համայն և խորթոցն քառ արժանեացն զօտար Հայրն և զեկամուտ յորայն, սակայն դու

և ոչ չայժմ գրեզ ամայի բոլորիցն ցուցր. զանդրէն բոյոյն յուսալով զարձ Հովուսկացան, ոչ որպէս տայգերր, այլ որպէս նոյնազաւակ զոգաւհարբ, զմանկուեն փայտայեցեր: Իսկ յերրորդ Հնտայան ոչ է, ակնկալութիւն զարձի, յունեալ ի մարմնոյ ընկերան և գործակցան»:

Համարելով Սորենացոյ Պատմութիւնը V դարի աշխատութիւն՝ րամատերները եղել են ստորագրար այն կարծիքին, որ այս Հատվածը վերաբերում է Սահակ-Մաշտոցին և հակաբնո կաթողիկոսներին (տե՛ս **4. Բաժնաջան**, Փնտութիւն Ողբոյն Մովսիսի Սորենացոյ, «Հանդէս Ամսօրյա», 1891 և **Նորայր Բյուզանդագի**, «Քննասէր», Պրակ Բ, 1888):

Մեր տեսանք սակայն, որ «Ողբ»-ի մէջ ակնարկված են, իրապես, IX դարի քաղաքական զեպերը և ընդհանուր բարոյալուծութիւնը Բուզայի արշաւանքից Հնտո: Ուստի և անհամեմատական չի լինի ենթադրել, որ մեջ բերված Հատվածում, որը գրված է իբր Սահակ-Մաշտոցի մահվան առիթով, կարող է նաև ակնարկված լինել Սորենացոյ ժամանակակից Ովայեցի Հովհաննէս Ե Կաթողիկոսը, որը վախճանվել էր 865 թվականին՝ Սմբատ սպարապետի Սամառա ուղարկվելուց առաջ:

Նման ակնարկումները, ինչպես ցույց է տվել Մարկվարտը, Հատուկ ու ստորաբան մի ձև են Սորենացոյ պատմագրական շարագրութեան (տե՛ս «Die Genealogie der Bagratiden», էջ 64, 65, 67):

Որ այս ենթագրութիւնը Հովանական է, այդ երևում է Հովհաննէս Գրասխանակերտցոյ ուշագրավ մի վկայութիւնից, որ ուշագրութեան չի անովել:

«Ողբ»-ի վերոհիշյալ խոսքերը՝ «ոճն սեղիսարս յանդզնեալ յարձակեցաւ յանարատ առաջատող... և րոնութիւնն զփեսայն ի րաց վարեաց»՝ ինչպես երևում է Գրասխանակերտցոյ վկայութիւնից, կարող են իբրև ակնարկ վերաբերել, իրոք, նաև «Իշխանաց իշխան» Բագարտոսին, որի Հատուկ կարգադրութեան ու «քրտութեան» պատճառով Հովհաննէս Ովայեցին Հրաժարվել էր կաթողիկոսական իր պաշտօնից:

Եկեղեցոյ երևոն ու խառնաշփոթ այս վիճակը մանրամասն նկարագրված է Հովհաննէս Գրասխանակերտցոյ Պատմութեան Հետևյալ Հատվածում՝

«Յովհաննո Կաթողիկոսի Գրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 115-117՝

«Իսկ զինի նորա (Գրաթի) յաջորդէ զաթնո նորա Յովհաննէս ի զառառն Կոտայից ի զեղէլ Ովայեց: Բայց յետ սկզբան ձեռնադրութեան նորա իբրև անցին ամբ ութ, բիքր ոմանք շարարան ի նոյն ինքն յնտանեաց տան կաթողիկոսարանին յեղուօք նենգաորօք րանս ապիրատո րամրասանաց ի վերայ յողին սրբոյ Հայրապետին Յովհաննո... Եւ վասն զի, ի ժամանակին Բագարտա Բագարտոսի Հրամանատար և իշխան իշխանաց Հայոց գտանէր առ նմա, ապա զինալ երթնալ չուէին շանարգալորդ նանրալեղոյ Հայհոյիչք առնն Ատոռոճոյ՝ զերկրաւ զեղուօս իրևանց անեալ և զօղանջեալ առաջի նորա: Իսկ նորա ի սատանայական պարթիսպաճափ յեղուօսն Հրապուրեալ՝ և ասորժակս յիւր յսկանս զպիղծ Հայհոյութիւնսն ամբարեալ՝ զրէ Հրօպարտակ առ ամենեանս, ի րաց կալ յրնգունելոյ զՀօտապետն, ի մտի եղեալ այն ևս կացուցանել Հայրապետ իստ իրում ձեռննրիցութեան: Իսկ մեծի առնն Յովհաննո ընտանեաց զյլկանս սատանայականս իշխանին և Շօգևոր Հատողական սրով զնա պաշարմանք կասեալ, ինքն յարտցեալ զնաց ի րանակնող սրբոյն Սահակայ ի վանս այրից զօղեալ և լոկի իմն անդ մշտնջնեալոր աղօթից պարապեալ: Չայն ապա իմացեալ սպարապետին մեծի Սմբատայ և Քրիզորի Միւնեաց տեսանն և այլ նախարարացն Հայոց, և Համազունց ի միասին եկեալք և ժողով կախկոպուսաց արարեալ և ստուգեալ ինտցուածիս իմացեալ զի նանրի իմաթոյն շրթնաց զար Հայհոյացն ստոութիւն՝ Հաստատեն զարձեալ յաթնոս սրբութեան զայնն Ատոռոճոյ: Իսկ ապա այնուհետն եկեղեցիք Քրիստոսի, որ երբեմն իրթիսցեալն էր ի վարատմանէ փեսային՝ գարձեալ ինքն զփեսայն ևս ի վարատմանոր նորոգապէս պայծառանալք: Բայց իշխանն Բագարտա ևս առուել վասն այնորիկ զդրտեալ ինքն, զի առանց կամաց նորա եղև Հայրապետին Հաստատութիւն ևս ուր ոչ ընկալեալ զնա, խնդրէր ժամ զիպող՝ զայլ փոխանակ նորա կացուցանել»:

Ամենից ուշագրագը և կարևորն այս վկայութեան մէջ այն է, որ Հովհաննէս Գրասխանակերտցին, ինչպես երևում է վերև բերված բառերը, «Ողբ»-ի խոսքերով հիշում է «Երթնացեալն ի վարատմանէ փեսային» եկեղեցին և այդ «փեսայի» մասին իր վկայութիւնը վերագրում պարզապես Ովայեցի Հովհաննէս Ե Կաթողիկոսին:

Այս զուգադիպումն բոտ իս պատահական չէ, այլ Հավանական մի ապացույց է, որ Սորենացու «Ողբ»-ի մեջ ակնարկված են ո՛չ միայն քաղաքական, այլև եկեղեցական այն իրական անցքերը, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում IX դարում Սորենացու ժամանակ:

Ավելի քան Հավանական է թվում ինձ, բացի այդ, որ Հովհաննես Դրասխանակերտցին Սորենացու Պատմությունը, նաև «Ողբ»-ը, Համարել է, բոտ երևութի, ո՛չ թե V, այլ IX դարի աշխատություն՝ զրգված Բուդյախի արշավանքից Հևոտ:

Որ նոր այս կոահունը Հիմնավոր է՝ այդ երևում է բոտ իս Դրասխանակերտցու Պատմության այն վկայություններից, որոնք վերաբերվում են Սորենացու Պատմության:

Ինչպես Հայտնի է, X և XI դարերի Հայ պատմագիրները Սորենացուն ենթարկել են Մահակ-Մայառոյի աշակերտ և առանձին պատկառանքով են Հիշել նրա Հոչակավոր Պատմությունը: Երևան երկերում Սորենացին անվանում է՝ «Մեծ Քերթող Մովսէս» (Քովմա Արծրունի, 1887, I, Բ, էջ 24), «տիեզերահոչակեալ վարդապետ և Քերթող» (Քովմա Արծրունի, I, Ժ, էջ 58), «Մեծ վարդապետն Մովսէս տիեզերահոչակեալ Քերթողն» (Քովմա Արծրունի, I, ԺԱ, էջ 75), «Քերթողահայրն Մովսէս» (Մովսես Կաղանկատացի, 1860, I, Ը, էջ 10), «Մեծն Մովսէս, Հանգույն Եստերայ, որ շերթողացն անուանի Հայր» (Ասողիկ, 1855, I, Ա, էջ 7), «Մեծ պատմագիր Մովսէս Տարօնեցի» (Ասողիկ I, Ե, էջ 53), «Մեծ վարդապետն Մովսէս Քերթողահայրն» (Ասողիկ II, Ա, էջ 77) և այլն:

Հետաքրքիր է սակայն և ուշադրություն արժանի, որ Սորենացու Հանգեալ այս պատկառանքն ու ակնածությունը բացակայում են Դրասխանակերտցու մոտ: Այս պատմագիրն իր Պատմության առաջին գլուխներում, որ քաղված են, զիջավորապես, Սորենացու Պատմությունից, կարևոր չէ Համարել անգամ Հիշելու «տիեզերահոչակեալ» Քերթողահոր անունը, այլ անորոշ կերպով ակնարկել է իր աղբյուրը Հետևյալ Հատվածներում.

ա. «Սորա Արամայիկի՝ արիական քաջամասնութեան Հանդերձ բուսական ինչ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմին» (Թիֆլիս, 1912, էջ 16).

բ. «Թևկ ես յայսմ Հևոտ, տակաւուր ինչ զձեազատրեղն Վարդաշակայ ի վերա մեր շարայաբեցից և որք յետ նորա ի նորին սերմանէ փոխանորդեցին զձեազատրութիւն, որք և

Արշակունիք անուանեան, և զսուրբոն՝ որ յայլոց ոմանց եղև պատմեալ ի նոսա Հրաիւրեցից զիտու, թէկ պիտոյ է թեզ» (Թիֆլիս, 1912, էջ 23):

Սորենացու Պատմությունը ծայրն ի ծայր օգտագործելուց Հևոտ՝ Դրասխանակերտցին միայն անցողակի կերպով Հիշում է նրա անունը՝ առանց նրան անվանելու «Քերթողահայր» կամ «Մեծ պատմիչ»:

«Այլ երկոցունց սոցա [Սոսրոյի և Արշակի]» զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատկառմունս՝ թէկ պիտոյ է թեզ, — առում է Դրասխանակերտցին, — րովանդակարար ցուցցէ թեզ Պատմութիւնն Մովսեսի Սորենացույն (Թիֆլիս, 1912, էջ 52-53):

Թե ինչո՞ւ վերահիշյալ պատմիչներից Հովհաննես Կաթողիկոսն են միայն Հայտնի եղել Սորենացու Պատմության նիշտ ժամանակը և նրա «Ողբ»-ի ակնարկները՝ այդ ես Հասկանալի է: Հովհաննես Դրասխանակերտցին ես, ինչպես և Մովսես Սորենացին, Նիրակի Բագրատունիների պատմությունը էր և մոտ շփում էր ունեցել Բագրատունի արքայների Հևոտ: Լինելով ժամանակով Սորենացուն խիստ մոտ՝ նա սովել ու դատարարակվել էր մինևույն միջնակայրում և ասրել IX դարի երկրորդ կեսում, երբ դեռ նոր էր Հրապարակվել Սորենացու Պատմությունը:

Միանգամայն թրական է բոտ իս, որ Սորենացու ժամանակն ավելի շուտ նրան կարող էր Հայտնի լինել քան Քովմա Արծրունում, Մովսես Կաղանկատացուն և Ասողիկին:

Ի՞նչ այս դիտողությունների դե՞ռ կլինեն, անուշա, առարկություններ, սակայն, թվում է ինձ, որ այդ առարկությունները չեն կարողանալու խախտել ընդհանուր ի՞նչ եզրակացությունը, որովհետև, Սորենացու ժամանակի որոշման Համար կան նաև ուրիշ Հենարաններ, որոնք նեցուկ են ծառայելու վերահիշյալ կարևոր ենթադրության:

19. Սորենացու Հունապիտոնը Հասկանալի է արարական տիրապետության այս շրջանում — Մովսես Սորենացին՝ որ իր Պատմությունը գրել է Բուդյախի արշավանքից և Հովհաննես Ավանցու մահվանից Հևոտ, ինչպես կտեսնենք, եղել է այդ շրջանում ականավոր քերթող և Հեղինակավոր Հետևորդ Հունարան գրողից:

Նա Համակրող է Հունական դիտության և քաղաքակրթու-

թյան և նրա Պատմության մեջ առանձնապես շեշտված է նրա Հունասիրությունը: Նա իր Պատմության Հենց սկզբում ասում է, որ օգտվելու է գլխավորապես, հույն պատմագիրներից և անտես է անելու պարսկական ու քաղցնական աղբյուրները (տե՛ս I, 2, էջ 7): Նույն այս գլխում բրոդր իսկ յոյն»-երին նա անվանում է «մայր կամ դայեակ իմաստից» (I, 2, էջ 9): Պարսից առասպելները Բյուրասայ Ամրահակի մասին Համարում է «գիծուև, անտոնի և սուտ»՝ ասնմխր և անՀանձար քանից յարմարանք» (տե՛ս I, Հավելված Ա, էջ 89), իսկ Հուսաց առասպելները՝ «պերճ ևւ պորպ», «հանգերձ պատճառու»՝ «որք զհճարտություն իրաց այլարանարար ինքեանս ունին Բարուցեայ» (էջ 90):

Մորենացու այս Հունասիրությունը ցայտուն կերպով երևում է և նրա ուրիշ վկայություններում: Իսկ այս փաստը, ինչպես շատ միշտ նկատել են քաննասերները, ունի որոշ նշանակություն և կարող է Մորենացու ժամանակի որոշման կուլան ծառայել:

Այդ մասին ունի, օրինակ, ակադեմիկոս Ն. Մառն իր «Арабское извлечение из сирийской хроники Марибаса» ուսումնասիրության մեջ (տե՛ս 3ВО, XIV, 1902, էջ 81) Հետևյալ ուղիղ դիտողությունը:

«Մորենացու ժամանակի որոշման համար, — ասում է նա, — լավագույն Հիմքերն են նախ՝ նրա Պատմության ընդհանուր ոգին, որ պարզ ազգային է, երկրորդ՝ որ Հեղինակը խորապես համակրում է Հունաստեղծությանը, և երրորդ՝ որ նա բնորոշ է ասորական ծագում և ասորական մշակում ունեցող պատմական աղբյուրներ, որոնք մեծ չափով Հիթի են կազմում նրա Պատմության: Այդպիսի երկր, հասկանալի է, չի կարող վերաբերվել V դարին, որ Հայոց բրիտանոնական զբաղակետության առաջին դարն էր, որ վերագրվելու է ավելի ուշ ժամանակի, երբ միակ ասորական ուղղությունը Հին ավաղղության կարգն էր անցել, իսկ նրան փոխարինող կուլտուրական Հելլենասիրությունը կարողացել էր զբաղակետության մեջ առաջ բերել ազգային ուղղությունը»:

Ակադեմիկոս Ն. Մառն ընդհանուր այս դիտողությունը, ինչպես տեսնում ենք, կատարելապես հաստատվում է մեր այս ուսումնասիրությամբ:

Մորենացու Պատմության ին՝ ազգային ոգին և ին՝ նրա

Հունարան ու Հունասեր ուղղությունը միանգամայն բնական են ու հասկանալի Հայաստանի վերակենդանացման Հետագա այս շրջանում:

Մորենացու Հունասիրությունը, որ այնքան փառ կերպով նկատվում է նրա Պատմության մեջ, Հետևանք է քստ իս իշխող դասի ու Բագրատունիների ընդհանուր մտայնության և, հատկապես, այն քաղաքական քյուզակասեր հակումների, որոնք սկսել էին ուժեղանալ 775 թվականի նախարարական ապստամբությունից և, մասնավոր, Բուզայի արշավանքից հետո:

Մայիֆայություն հարձակողական քաղաքականությունը Հայ իշխանությունների հանդեպ և մեծ աղետներն ու ավերածությունները, որոնց ենթարկվել էր Հայաստանը 775 և 852-855 թվականներին, ծայր աստիճան հուզելու և զրգուկու էին, քանկանարար, Հայ նախարարներին ու, մասնավորապես, Բագրատունիներին՝ Արարական խալիֆայության դեմ: Հայածված ու լքված Հայ ազնվականությունը, տեղահանված մասամբ իր երկրից, ապաստան էր գտնում միշտ կամ Հարևան Բյուզանդիայում և կամ կայսրության սահմանամերձ՝ Հայաստանի արևմտյան լեռնային շրջաններում: Բյուզանդական կայսրությունը, որ նորից սկսել էր զորեղանալ IX դարում, քաղաքական նկատառումներով կարևոր էր Համարում նախարարական Հայաստանի պաշտպանությունը և վարում էր նախարարական իշխանությունների հանդեպ քարեհամ ու խնամատար քաղաքականություն:

Չենց այս IX դարում է, որ կայսրությունը սերտ ու քարեկամական հարաբերություններ ուներ Բագրատունիների և Աբրուիների հետ և առատ կերպով բաշխում էր նրանց գանազան քարձր տնտեսներ և անգամ կալվածներ:

Այդ մասին ուշադրավ են, օրինակ, Հայ պատմագիրների Հետևյալ վկայությունները.

1. **Ղևոնդ**, գլ. 42, էջ 168-169 (Ս. Պետերբուրգ, 1887)՝

«Իսկ ապա իբրև այնպես թափուրք ի սասցուածոց մասին, մերկք և բոկք և սովամահք, և ոչ գտանէին ապրուստ անձանց՝ զկէմ եղևալ տարաղէմ զմացին փախտուտայ յաշխարհն Տունաց, զորոց ասն իրևել գթին մարդկանս անելի քան ժԲԲ արանց հանգերձ կանամբք և մակտեսաւ, որոց առաջնորդք Ծապուհ ի տոճէ Ամատունեաց և Համամ որ-

զի նորա և այլք ի նախարարաց Հայոց և նոցին Հեծելոց: ... եւ իբրև անցին ընդ գետն (Աղամար)՝ փաղփաղակի աղղ եղև արքային Յունաց Կոստանդին: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ տայր պատիւ նախարարացն և նոցին Հեծելոցն. և զայլ խառնեհազաննսն ընկանցուցանէր ի բարւոք և յարգաւանդ երկրիս:

2. Առողիկ, II, գլ. 6, էջ 144 (Ս. Պետրբուրգ, 1885)՝

«Թեկ Թէովփիլոս (829-842) ... տուեալ զՀրապատա- ստիճանն պատիւն, այսինքն՝ ապուհրպատա պատրիո- իխն՝ Աշոտոյ որդոյ Շապհւոյ և թողու ի Սպեր գաւառի»:

3. Թովմա Արծրունի, III, գլ. 13, էջ 194 (Ս. Պետրբուրգ, 1887)՝

«Թեկ թագաւորն [Միշապի, 842-867] զրէ առ զօրավարն թերեւս կարասցէ Ատանեցուցանել զԳուրգէն՝ երկնայ ի թագաւորական բաղարն առ կայսր, և մեծաց պարզեւն և պատուի և զաճու յառաջաձգութեամբ ընկալցի պարզև ի թագաւորէն»:

4. Թովմա Արծրունի, III, գլ. 14, էջ 203՝

«Եւ ի Հասանդն նորա (Գուրգենի) ի Թէւդոսի բաղարն ի Կարին գաւառ՝ Եհաս լուր նորա առ կայսր Միշապէլ թա- գաւոր Յունաց. և փութացոյց փասն նորա զի անչապաղ առ նա Հասցէ, և ի մեծ պատիւս Հրապատսիճանն Հասուցէ զնա, և խաչանակն զրոչիւք ճոխացի»:

5. «Հատարումն պատմութեանն Վարդանայ վարդապետի», Վե- նետիկ, 1862, էջ 77՝

«Յայնմ ժամանակի աղմուկալ Բաճայելի ընդ միմեանս, Հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանայ իշխանքն մեր յխրաբանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Բաճայելի Աշո- տի որդոյ Ատրնըսէհի որդոյ Վասակայ, որդոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց, որոյ երթեալ Հնազանդե- ցուցանել իրեակն: և կայսրն Անուս V, 813-820) առաքել նմա պատիւ կիրաւագաւատութեանն»:

Թե՛ այս և թե՛ նման ուրիշ փաստերը ցույց են տալիս, որ IX դարում և, զլիսավորապես, Բուզայի արչալանքից Հետո՝ նախա- րարական Հայաստանի և Բագրատունիների Հարաբերություն-

ները Բյուզանդիայի Հետ մտերմ էին ու բարեկամական: Մեր- ձեցումը կայսրություն Հետ առանձին կարևորություն էր ստա- նում, Հատկապես այս շրջանում, որովհետև Բյուզանդիայի բա- զարակն աջակցությունը նախարարական Հայաստանի ինքնա- պաշտպանությունն ամենազորեղ գործոններից մեկն էր:

Շատ բնական է, որ Հայ ազնվականության բաղարական Հու- նաստի տրամադրություններն ունենայու էին իրենց արտահայ- տությունը նաև Հայոց մատենագրություն մեջ: Ուստի և IX դարի Հնեց երկրորդ կեսում միանգամայն Հատկանայի են Խորենացու Հունասիրությունը և նրա Հարգանքն ու սերը դեպի Հունական կրթությունն ու ուսումը:

Բացի Հունասիրությունից Խորենացու Պատմության մեջ, ինչ- պես մատնացույց են արևև աստուրները, աչքի է ընկնում և այն, որ նրա մեջ ո՛չ մի Հետք և ո՛չ մի անկարկ չկա կրոնական- դավանական այն տարածայնությունների ու վեճերի մասին, որոնք մշտական առիթ էին Հակաբաղկեղոնական Հայերի ու բաղկեղոնական Հույների, մտերմանը ու անհաշտ թշնամության: Կրոնական նման խնդիրների նկատմամբ Խորենացու լուռ ու մունջ լինելը Հասկանալի է զարմալ նույն այս ժամանա- կաշրջանում:

Որ բաղարական Հունասեր այս շրջանում կրոնական Հա- կամարտությունը և ստեղծությունը պետք է բավականաչափ մեղմացան ու զսպված լինեին, այդ ինքնբարտիւնչյան Հասկա- նալի է:

Ուշաքաղվ է առանձնապես, որ Հնեց այս ժամանակները, Բու- զայի արչալանքից Հետո, Հատուկ բանակցություններ էին սկսվել, որոնց նպատակն էր վերականգնել Հունաց և Հայոց մեջ կրոնական նախկին միությունը: Այս բանակցությունները Հայտնի են մեղ ո՛չ միայն բյուզանդական և Հայկական մատե- նագրական աղբյուրներից, այլև Փոտ պատրիարքի և «Իշխանաց իշխան» Աշոտի միջև փոխանակված բարեկամական այն թղթակցությունից, որ պահպանվել է «Գիրք թղթոց»-ում (Թիֆլիս, 1901, էջ 279-282՝ «Պատմելն թղթոյն Հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան», նաև էջ 283-294՝ «Պատասխանի թղթոյն Փոտայ, զրեալ Սահակայ Հայոց վարդապետի Հրամանառ Աշոտայ Հայոց իշխանաց իշ- խանի»): Հայտնի է նույնպես, որ Հնեց այս բանակցությունների ժամանակ՝ IX դարի վաթնուական թվականներին՝ անդի էր

ունեցել Շիրակավանի ժողովը, որը գումարվել էր Աշոտի հրամանով և բնութիցան էր առել բաժանված եկեղեցիների միացման խնդիրը:

Միանգամայն պարզ է հասկանալի է, որևն, թե ինչո՞ւ Ռորենացու Պատմությունը, որ գրված է Բուդայի արշավանքից հետո, չունի որևէ ակնարկ դավանաբանական վեճերի մասին:

20. **Ռորենացու ժամանակ Հայաստանում նշանավոր կենտրոնավոր է եղել «Շիրակաշատ ասան»-ը, իսկ կարևոր ուսումնասցվալ՝ Գեղարքունի գավառը:**— Ռորենացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ հիշում է «Շիրակաշատ ասան»-ը հետևյալ հատվածում (Տ. էջ 34)՝

«յորոց ի Շիրակայ և ի վանանդայ՝ եկեայ զանն Աստուրէն՝ Հանդերձ Մեծագետովն, անցանելով յելից կուտ, Մարիկոպուլսի, արսինքն՝ Շիրակաշատ ասանի և Մերենոյ և երուանդաշատ քաղաքի, իջանէ յերասխս»:

Այս վկայությունն մեջ ուշագրավ է այն, որ «Շիրակաշատ ասան»-ը կոչված է «Մարիկոպուլսի»: Շատ պարզ է, որևն, որ այդ ավանը Ռորենացու ժամանակ եղել է նշանավոր կենտրոնավայր: Իսկ այս կարևոր մի ակնարկ է զարձայ, որ Ռորենացու թե՛ «Աշխարհացոյց»-ը և թե՛ Պատմությունը գրված են Բագրատունիների իշխանության այն շրջանում, երբ «Երազգատորք-Շիրակաւան»-ը գահահատ կենտրոն էր դառել Շիրակի Բագրատունիների:

Ինչպես հայտնի է, 775 թվականի նախարարական ապստամբությունից հետո Աշոտ Մսակերն իր եղբոր Շապուհի հետ կարողացել էին մասամբ զբաժնով և մասամբ զենքով տիրանայ Տաջրի, Արշարունիքի, Շիրակի և Աշոցի:

IX դարի սկզբներին, Աշոտ Մսակերի ժամանակ, նոր գրավված այս երկրում Բագրատունիների այս նյուղի ամրապահակ կենտրոնն էր Բագարանը, իսկ Մմրատ սպարապետի և նրա որդու «իշխանաց իշխան» Աշոտի ժամանակ, գլխավորապես, «Երազգատորք-Շիրակաւան»-ը:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ (Թիֆլիս, 1910, էջ 72)՝ Մմրատ սպարապետը, որին նա անվանում է Աբրապաս, «շինէլ զսուրբ քառարանն մեծապայծառ որդարոյ յերազգատորս, որ արդ՝ Շիրակաւանն կոչի»: Հովհաննես Գրասխանակերտցին հազար-

դում է (Թիֆլիս, 1912, էջ 127), որ այս Մմրատ սպարապետը «հրամայեայ ժողով կախկոպուսաց ինկն ի քաղաքագիւղն երազգատորս՝ մտնաղորս՝ ի Հայրապետութիւն գձաքարիս ի Կոտայս գաւառէ ի գեղջիլ Չազայ»: Նույն այս կենտրոնում, վարդան պատմիչի ասելով (Վենետիկ, 1862, էջ 82), IX դարի վաճառական թվականների սկզբներին, «իշխանաց իշխան» Աշոտի ժամանակ, նորից ժողով էր գումարվել, որը բնակու էր Փոռ պատրիարքի թեղիքը ու հույն և հայ եկեղեցիների կրոնա-գահական միություն խնդիրը:

Ուշագրավ է նաև, որ Հովհաննես Գրասխանակերտցին «Երազգատորք-Շիրակաւանն» անվանում է «քաղաքագիւղն մեծ» (էջ 183), «անպահան կայուած» Բագրատունիների տերության (էջ 144 և 218), և հիշում է «Երազգատորքում» «արքունական սպարանքները» (էջ 197 և 207):

Դժվար է, որևն, կուհել, թե ինչո՞ւ Ռորենացին Արտաշատի ու Երվանդաշատի նմանությունը «Երազգատորք-Շիրակաւանն» անվանում է «Շիրակաշատ ասան» և «Մարիկոպուլսի»:

Ասանմապես հետաքրքիր է Ռորենացու «Աշխարհացոյց»-ի մեջ «Երազգատորք-Շիրակաւան»-ի «Մարիկոպուլսի» անունը, որ ուշագրություն չի առնված բանասիրական ուսումնասիրություններում:

Որ «Շիրակաշատ ասան»-ը կարող էր Մավրիկիոս կայսեր անունով կոչված լինել «Մարիկոպուլսի», այդ միանգամայն հետաքրքիր է և հավանական: «Աշխարհացոյց»-ի վկայությունից, որը դժվար է շինոյի և անհիմն Համարել, կարելի է ըստ իս կուհել, որ այդ ավանը եղել է կենտրոնավայր նաև VI դարի թվերներում և VII դարի սկզբներում Մավրիկիոս կայսեր ժամանակ (582-602):

Ննց այս ժամանակաշրջանում «Շիրակաւան»-ը հիշատակված է Սերնոսի մոտ հետևյալ վկայություններում.

1. «Պատմութիւն Սերնոսի կախկոպուսի ի Հերակլին», Թիֆլիս, 1913, գլ. Բ, էջ 53՝

«Ապա եկն ասպետն մեծ Պարթևն և Պահլան, և արար կռի մի ի Շիրակ ասանին և յաղթեաց».

2. Նույնը, գլ. ԻԲ, էջ 116-117՝

«Եւ եղև ի գայ ամին միւսոյ մինչդեռ արքայ Ռոսրով մարտնչէր ընդ Դարս քաղաքի, դումարեցաւ այլ զար-

Պարսից ի կողմանս Հայոց, և Գատտեան զարագրուս նոցա: Եւ զարև Յունաց գումարեցան ի դաշտն Շիրակ և ի դեզն՝ որ կոչի Շիրակաւանս:

Այս վկայություններին կարևոր է երկրորդը, որից երևում է, որ 604-605 թվականներին «Շիրակաւան»-ը եղել է կայան ու բնակատեղի Հունական զորքերի: Ըստ երևույթին, 591 թվականի Հայաստանի բաժանումից Հետո, «Շիրակաւան»-ը Համարվել է Հունահայաստանի գլխավոր կենտրոնավայրերից մեկը, և Հենց այս ժամանակաշրջանում նա անվանվել է, Հավանորեն, «Մարիկոպալիս»:

Իբրև նշանավոր ուսումնավայր ցույց է տրված Պորենացու Պատմության մեջ Գեղարքունի զավառը Հետևյալ Հատվածում.

Պորենացի II, Ժ, էջ 120 (Տպիկա, 1913)՝

«Եւ վկայ ընդ ի ճօտոց երաշխաւորեսցէ Եկէսիաստոէ գիրք Եւսերի Անարացոց, զոր ետ թարգմանել Երանելի վարդապետն մեր Մաշտոց ի Հայ ընդո: **Պնդիր արացես ի Գեղարքունի, ի գաւառին Միւռնաց, և քոցես յառաջին Հագներգութեանն յերեսասաներորդ թոխն, զի՛ վկայ յեղեմայս գիւանին լինել ամենայն զործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱրգար, և զկնի Արգարու մինչև ցԵրուանդ»:**

Հիմնվելով այս վկայության վրա՝ Ն. Ակինյանը ենթադրում է, որ Պորենացին եմբերհոսի եկեղեցական պատմությունը կարգացել է Գեղարքունիքում, և կարծում է, որ նրա դաստիարակության առաջին շրջանը պետք է ենթադրել այս կողմերը, Հավանորեն, «ի Մարենիս» (տե՛ս «Մասնադրական Հնագրատություններ», Հատ. Գ, էջ 185, ծան. 3):

Ն. Ակինյանի այս ենթադրությունը, որ ինձ ես թվում է Հավանական, խիստ կարևոր է դարձյալ Պորենացու ժամանակի որոշման Համար:

Մարենացոց վանքը, ինչպես Հայտնի է Մովսես Կաղանկատացու վկայությունից, այլված ու ուղեւացված է եղել Բարսիկի արշավանքի ժամանակ 827 թվականին.

«Եւ անտի ի միս տարին,՝ վկայում է Կաղանկատացին,՝ Լանց Բարսն ի գաւառն Գեղարքունի և Լարկ ի սուր դրեակիչնս ոչխա իբրև տասն և Հինգ Հազար, և գնծծ

Մարենացոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն Զրացան և այլ ոչ ինչ, և էր թիւն Հայոց երկու Հարիւր Եօթնասուն և վեց» (III, գլ. Բ, էջ 263, Մտակի, 1860, Հմմտ. նաև **Ստեփ. Օրբեյան, Թիֆլիս, 1911, ԼԳ, էջ 159**):

Մարենինս այնուհետև վերակառուցվել է Գեղարքունի զավառի իշխան Գրիգոր Ա Սուփանի ժամանակ († 852):

«Եւ տեղին անընակ մայր,՝ Հաղորդում է Օրբեյանը,՝ ապա յառաջ Գրիգորի՝ Միւռնաց տեսուն, որ Սուփան կոչեաց, վերստին նորոգեցաւ և շինեցաւ մեծ Եկեղեցին, և պայծառացոց առաւել քան զառաւել» (տե՛ս Ստեփ. Օրբեյան, Թիֆլիս, 1911, ԼԳ, էջ 159):

Հովհաննես Գրասխանկերտցու վկայությունը՝ «ի մեծ ուխտ կրօնաւորական կայանին Մարենացոց» վախճանվել ու թաղվել է Հովհաննես Ովայցիի կամոյղիկուր (833-855):

«Աստուծոյ ապա,՝ վկայում է Գրասխանկերտցին,՝ մեծ Հայրապետն Յովհաննէս, վասն զի շրջիբ ընդ միճակեալ կողմանս գաւառին Գեղարքունոց, լցեալ զկէտ կենաց իրոց՝ վախճանի ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մարենացոց, և ի նմին ուխտի սրբոց ի Հանգիստ զևս փոխէին» (Թիֆլիս, 1912, էջ 126-127):

Որ Մարենացոց այս «կրօնաւորական կայան»-ը եղել է IX դարում նշանավոր ուսումնավայր և ունեցել է, անշուշտ, մեծ գրադարան՝ այդ երևում է Ստեփանոս Օրբեյանի մի այլ վկայությունից, որի մեջ նա Հաղորդում է, որ այս վանքում ստացել էր իր ուսումը Մաշտոց կամոյղիկուր (898-899):

«Յայտ ժամանակի,՝ ասում է Օրբեյանը,՝ պայծառանայր Երանելին Մաշտոց ի Սեան կողին մեծահնդէս առաքնութեանը, որ էր որդի աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիվարդեցի, և եկեալ էր ի Սոթք գաւառ և պանդխտանայր անդ, որ և ետ զՄաշտոց յաշակերտութիւն սուրբ Տօրն Մարենացոց Ստեփաննոսի» (Լէ, էջ 173):

Այս ցուցմունքները, ինչպես տեսնում ենք, Հավանական կոպաններ են, որ Պորենացու վերոհիշյալ վկայության մեջ ակնարկված է Մարենացոց վանքը, որը գտնվում էր Գեղար-

բունի զգառու՛մ և կրօնական նշանավոր կենտրոն էր IX դա-
րում:

Արդ՝ պատահակա՞ն է միթև, որ Խորենացու «Աշխարհա-
ցոյց»-ի ու Պատմության մեջ մատնանշված են իբրև բաղաբա-
կան ու եկեղեցական կարևոր վայելքեր «Մարտիրոսապալա-Շիրա-
կաշատ»-ը և Գեղարքունի զգառու՛մ, Հափանորեն, Մարենխոք,
որոնք կենտրոններ էին, իբրք, Շիրակի Բագրատունիների զորե-
զացման ժամանակ:

Ինձ թվում է, որ այդ ո՛չ միայն պատահական չէ, այլ, ընդ-
հակառակը, ուշագրավ մի նոր ապացույց է, որ Խորենացու ժա-
մանակը զրկվու է Բագրատունիների իշխանության նույն այս
շրջանում:

21. Խորենացին, Հափանորեն, այն «Մովսէս Քերթոզ»-ն է, որը
Զաքարիա կաթողիկոսի Հետ միասին գրել է «Թ փոխումն Աս-
տուածամարն և պատկերի նորին» ճառը: — Երուսաղեմի
մատենադարանի թիվ 413 ձեռագրում գտնվում է «Զարարիայ
կաթողիկոսի և Մովսեսի Քերթոզի ի փոխումն Աստուածամարն
և պատկերի նորին» ճառը (տե՛ս Գ. Զարպհանայան, Հայկական
Հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 503): Այս
«Մովսէս Քերթոզ»-ը, որը Զաքարիա կաթողիկոսի (855-875)
Հետ միասին գրել էր այդ ճառը, Հափանորեն, Հենց Հռչակավոր
«Քերթոզահայր» Մովսես Խորենացին է, որի Պատմությունը Հո-
րիված է, ինչպես վերև տեսանք, նույն այս ժամանակաշրջա-
նում՝ Բուդայի արշավանքից Հևոտ:

Հևոտբերիք է ու Հևոտով ուշադրության արժանի, որ «Ասան
փոխման Աստուածամարն» մի գրվածք Հայտնի է նաև Խորենացու
անունով և տպագրված է Խորենացու վերագրված «Մատե-
նադրություն» մեջ (Վենետիկ, 1843, էջ 283-296) Հետևյալ վեր-
նագրով՝ «Պատասխանի թղթոյն Մահակայ, յորում և բանք
մարգարէականք եւ փասն փոխման Աստուածամարն թէ որպէս
եղև կամ որպէս շնորհեցայ անարատ տղայ պատկերին ի փայտն
և թէ յոյր ձեռն և գինչ եղև պատճառք խնդրոյն կամ թէ յունձ
բերա ի Հայոս»:

Խորենացու նույն այս երկափրության մասին, ինչպես Հաղոր-
դում է Զարպհանայանը («Հայկական Հին դպրության պատմու-
թյուն», էջ 384), տանտունիկերորդ դարի մի գրչագիր տալիս է
Հետևյալ կարևոր տեղեկությունը՝

«Ձայս ցանկայի պատմութիւնս՝ բազում բոճիւ և ցանկայի

յուզմանք գտեալ մեծ Հեռտորն Մովսէս՝ որ կոչի Խորե-
նացի՝ զրեցա բառոզիս Հուսաստեա, և բանցի էր աղօտա-
ցեալ յաւագաց մերոց, և ուր ուրեք գտանէին, մինչև ի ձեռն
կրօնաւորի միջոց գտեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ի գա-
ւառն որ կոչի Զորոյ գետ, ի Համբաւեալ տխառն Մանահին
անուանեալ, պատահումն բարի իմն եղև, և Հրամայեցա
մեծն և րեսուն ի յաս՝ Ատովմ, որդի Սենքարինայ, Հայոց
նահանգի Աստարտական կոչեցեալ, որոյ մասն փրկու-
թեան Հաւատացեալ էր Ատովմայ՝ պատկեր ձօք տեսան ի
բաժին Անձաւացեալ, Հրամայեցա զրկ մեծա յուսով և
խնդութեամբ բազմա, որոյ անուամբ պարսկեալ կոչցի
մեծաշուք իշխանութիւն նոցա, չորից Հարազատ կորարց՝
Դաւթի և Ատովմայ, Կոտտանդոյ և Համազասպայ, զեղեցիկ
և շքեղագարդ Բագրատունեաց»:

Խորենացու վերագրված վերոհիշյալ գրվածքը, իբրև Սահակ
Աբդրուհու թղթի պատասխան, ինչպես ուղիղ նկատել է գեր-
մանական գիտնական Պ. Ֆետտերը, անվավերական է և գրված
է, Հափանորեն, X կամ XI դարում (տե՛ս «Հայկական աշխա-
տասիրությունք Հայագետ Պ. Ֆելթիերի», Բնարգ. Հակ. Տաշյանի,
Վիեննա, 1895, էջ 98-101):

Միանգամայն սակայն Հափանական է, որ այդ թղթում մեջ
ընթաց Աստվածածնի պատկերի մասին տեղեկությունները
բազմած են, իբրք, «Մովսես Քերթոզ»-ի, այսինքն՝ Խորենացու
Համապատասխան գրվածքից, որը նա գրել էր Զաքարիա կա-
թողիկոսի Հետ միասին և որը Հիշատակված է Երուսաղեմի թիվ
413 ձեռագրում:

Այս խնդիրը վերջնականապես պարզելու Համար անհրաժեշտ
է, իհարկե, Համեմատել «Պատասխանի թղթոյն Մահակայ»
գրվածքը «Թ փոխումն Աստուածամարն և պատկերի նորին»
վերոհիշյալ երկի Հետ, որը գտնվում է Երուսաղեմի մատենա-
դարանում:

Խորենացու ժամանակի որոշման Համար նոր այս գիտողու-
թյունները, ինչպես տեսնում ենք, բավականաչափ Հիմնավոր են
ու Համոզիչ:

Եթև Մովսես Խորենացին և «Մովսէս Քերթոզ»-ը ապրել են
մինևնույն ժամանակաշրջանում, երկուսն էլ ակնավոր քեր-
թողներ են, երկուսն էլ Մովսես են, երկուսն էլ ունեն գրվածքներ
Հոգաց փութում գտնվող Աստվածածնի պատկերի մասին՝

ավելի քան Հավանական է ըստ իս, որ նրանք պետք է լինեն միևնույն անձր:

Այսպիսով, մեր քննության բոլոր եզրակացությունները Հաստատում են նաև կարևոր այս նոր դիտողությունը: Թորենացու ստեղծվածը լուծվում է միանգամայն բավարար կերպով: Նրա Պատմության ժամանակը, որ վերև մենք ենթադրել էինք Բուզայի արշավանքից Հևոտ, որովհետև է ըստ այն IX դարի երրորդ քառորդում՝ Զարաթիա կախիղիկի տնայնակ (855-875), Հավանորեն, սրա կախիղիկության սկզբնական տարիներում:

22. Պիտոյից գրքի վերջաբանը Հավանական է վերագրել Մովսես Նորենացուն: Պիտոյից գիրքը, ինչպես Հայտնի է, թե՛ Հայ է թե՛ օտար բանասերները Համարել են Թորենացու աշխատություն: Նրանք Հիմնվել են, գլխավորապես, կիրակոս Գանձակեցու (Թիֆլիս, 1910, էջ 31) և Ասողիկի (Ս. Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 79) վկայությունների, նաև Բաուսդարտների ուսումնասիրության վրա («Ueber das Buch adie Chrie», տե՛ս ZDMG, XL, 1886, էջ 457-515»): Բացի այդ՝ նրանք ի նկատի են ունեցել նաև Պիտոյից գրքի վերջաբանը, որ ունի Հետևյալ վերնագիրը՝ «Մովսէսի Քերդոյի, արարողի պիտոյիցս տտի, իմաստարանութիւն յորդորական ան Քչոդորոս ոսն աշխկետո իր՝ ներակրթիլ քաջուշիմն վարթիւք յիմաստս ճարտասանական արհեստիս» (տե՛ս «Մովսէսի Թորենացոյ ճատենագրութիւնը», Վենետիկ, 1843, էջ 580):

«Հունարան զպրոցը և նրա զարգացման շրջանները» իմ ուսումնասիրության մեջ (Վիեննա, 1928, էջ 105-115) ես մանրամասն քննել էի Պիտոյից գրքի Հունարան լեզուն և Հանգել էի ուշադրավ եզրակացության, որ այդ երկը, որի մեծագույն մասը թարգմանություն է Հունարանից, իր բառամեթոդով ու լեզվական ստանձանատուություններով խմբակից է Փյունի, Իրենոսի և Թրակացու բերականության թարգմանություններին և թարգմանված է VI դարի առաջին կեսում:

Շատ պարզ է ուրևն, որ Պիտոյից գիրքը չի կարող վերագրվել Թորենացուն, որը, ինչպես տեսանք, ապրել է IX դարում և իր պատմությունը գրել Բուզայի արշավանքից Հևոտ:

Անվստիք է սակայն, որ «Հայոց պատմություն»-ը և Պիտոյից գիրքը սերտ կապ ունեն իրար Հևո և Թորենացին մեծ չափով օգտվել է, գլխավորապես, Պիտոյից գրքից: Եվ այդ Հասկանալի է, որովհետև Թորենացին Հևոտից է պատմագրության Հևոտորա-

կան ուղղության և նրա Պատմության մեջ նամակները, ներքոգները, պարտավները գրված են Պիտոյից գրքի կանոններով:

Մ. Արեղյանն իր «Հայ մոլոդոլրական առասպելները» (Վարդապատ, 1901) աշխատության մեջ մատնացույց է արել, օրինակ, որ Թորենացին Տիրան I -ի ներքոց գրել է, Հևոտեով «Հիստուն Պիտոյից» արդյուրի ճարտասանական պահանջներին: Հայտնի է նույնպես, որ Թորենացու Պատմության բառապաշարի մեջ սեղադ շատ են այն հազվագյուտ կան Հևոտարան բառերը, որոնք գործ են անված Պիտոյից գրքի և Փյունի թարգմանություններում:

Որ Պիտոյից գրքին է այն Հևոտորական մեծարկը, որից օգտվել է Թորենացին՝ այդ երևում է Հենց իր Թորենացու Հևոտեյալ վկայություններից.

1. «Եւ վասն սո ի Յունաց դրոցարանն զակնարկութիւն մերո պիտոյիցս անկերո՛ր բառական է այսչափ» (I, Բ, էջ 9).

2. «Եւ այսոցիկ այսպէս կարկիցց, կամ Հասաստի և կամ զոյզն ինչ կասեալ յարգարոյն՝ սկսաց թեղ և ժ ինչ գիւնի այսոցիկ ի Հիսմանս պատմութիւնէ Պիտոյից» (I, ԺԹ, էջ 57):

Պետք է ասել, որ IX դարը և, մասնավորապես, նրա երկրորդ կեսը, որ մե նոր զարգացում էր նախաբարական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վերակենդանացման՝ կարևոր մի շրջան էր նաև Հին Հունարան զպրոցի վերածնության: Պիտոյից գիրքը, ինչպես է նուրբանս զպրոցի իմաստասիրական ու բերականական Հնագույն երկերը, ծառայել են այս շրջանում իբրև զպրոցական զաստվանդման մեծարկներ: Եվ Թորենացու մատնանշած «արուեստ»-ը, որ նա ավելի քարձր էր գնահատում, քան Սահակ-Մկերտայի թարգմանական Հմտությունը (տե՛ս III, ԳԱ, էջ 343), պետք է Հասկանալ այն իմաստով, որ նա իբրև «բերբեռ» մոտ ծանոթ է եղել Հունարան զպրոցի ուսմունքներին:

Պիտոյից գրքի մեջ, որ զարերի ընթացքում գործ էր անվում իբրև զասպիրք, ինչպես Հայտնի է, քայքայ տնտեսություններից և Հնագույն վարժություններից կան նաև Հևոտագույն ավելացված վարժություններ, որ գրել են Գավիթ Լարբաջին, Ռոսրովիկը և ուրիշները:

Ըստ երևույթին, այդ մեծարկը վերադառն խմբագրվել ու որոշ փոփոխություններ է ենթարկվել նաև IX դարում:

Մի նոր Հավելում և նրա մեջ, իմ կարծիքով, այն վերջարանը, որ քանասերները վերաբրում են թուև քարգանձին:

Ուշագրավ է ամենից առաջ, որ ձեռագրերի մի ճասր չունեն այդ վերջարանը, օրինակ՝ էջմիածնի մատենադարանի թիվ 1807 (= Կար. ցուց. թ. 1764), 1810 (= Կար. ցուց. 1767) և 1820 (= Կար. ցուց. 1777) ձեռագրերը: Բացի այդ՝ միանգամայն անհավանական է ըստ իս, որ գրքի սկզբնական վերնագիրը լինի «Պիտոյից ստա», ինչպես այդ ունի Մովսես Քերթնոզի վերջարանը:

Ինչպես Հայտնի է, Պիտոյից գիրքը Հոևոտրական արգիտարի ընդարձակ մի ձևնարկ է, որ պարունակում է իր մեջ տեևոթյուններ և վարժություններ ո՛չ միայն «պիտոյից», այլև Հոևոտրական ուրիշ ձևերի մասին: Քննության առնված մյուս ձևերն են րացի «պտեր»-ից՝ «խրատ», «եղծում», «Հասարակ տեղի», «Ներբողան», «պարաս», «քաղաքատեթխն», «քարանոթիսն», «արասատեթխն» և «եղոթիսն»:

Ավելի քան Հավանական է, որ այս ընդարձակ գրքի նախնական քարգանտոթյունն ունեցել է տարրեր վերնագիր և Հետին դարերում միայն նա անվանվել է «Պեր» կամ Պիտոյից գիրք՝ առաջին գլխի «Յաղագս պիտոյից» վերնագրի Համաձայն: Ահենլի է թվում ինձ նաև Պիտոյից գրքի քարգանձին «քերդոց» մակդիրը:

Այս մակդիրը, որ Հունարեն **πολιτης** բառի քարգանտեթյունն է, թեև գործ է անվել Հունարան առաջին շերտի քարգանտեթյուններում (տե՛ս «Քր. բեր.», Հրատար. Ե, Աղոթի, էջ 1, Միտ., էջ 359, Փիլ. նախ. Բ, էջ 153, Փիլ. տե.), սակայն Հնագույն այս չրջանում նոր կերտված «քերդոց» բառը պետք է լիներ խիստ անստվոր ու օտարառի: Քրակացու թերակնտեթյան մի ուրիշ Հատվածում Հունարեն նույն **πολιτης** բառը քարգանտված է նաև «արարոց» (էջ 27):

Հունարան մատենագրոթյան ավելի ուշ չրջանում միայն խորթ ու շինծու «քերթոց» բառը Հարազատ էր գտել և գործածվում էր ՀեռոզՀետև ո՛չ միայն քանաստեղծի, այլև Հեղինակավոր գիտնականի, թերականի, քարգանձի և, ընդՀանրապես, մատենագրի ինաստով:

Պիտոյից գրքի քարգանձիչը, որ Հունարան առաջին շերտի մատենագիրներից էր, չէր կարող ըստ իս անխանվել «քերդոց» նոր ու անստվոր այս բառի կերտանն չրջանում:

Որ վերոՀիշյալ մեր գիտությունները Հավանական են և որ

Պիտոյից գրքի քարգանտեթյունն անկարելի է վերագրել վերջարանի Հեղինակ «Մովսես Քերդոց»-ին՝ այդ երևում է նաև վերջարանի լեզվից, որը զգալի չափով տարբեր է Հունարան Հնագույն քարգանտեթյունների լեզվից:

Պիտոյից գրքի վերջարանը երկու էջ է, ընդամենը՝ 69 տող:

Արդ՝ լեզվական ուշադիր քննությանը այդ երկու էջի մեջ կարելի է մատնացույց անել բազմաթիվ բառեր, որոնք ընտվ չեն Հեղինակում Պիտոյից-Փիլոնյան խմբի քարգանտեթյուններում և որոնք առաջին անգամ գործ են անվել կամ Հունարան դպրոցի երկրորդ և երրորդ խմբերի և կամ ավելի ուշ չրջանի երկերում:

Նոր այս եզրակացությունը Հիմնավորելու Համար կարևոր են թվում ինձ լեզվական Հետևյալ գիտողությունները:

ա. «Մովսես Քերդոց»-ը չի կարող լինել Պիտոյից գրքի քարգանձիչը, որովՀետև նա, րացի Պիտոյից-Փիլոնյան խմբի բառերից (տես, խրատարանութիւն, ներակրթիկ, զեղապարեն, պարերգակ, ձևնարան, ճարտասանեն, սարաս, երկատիրարար և այլն), ունի նաև Հունարան մյուս երկու խմբերի բառերը: Ուշագրավ է նաև, որ այդ քառապալարի մեծագույն մասը ստվորական էր Ոտրենացու ժամանակ Բագրատունյաց չրջանի մատենագրական երկերում:

Այգլխի բառեր են կամ դարձվածքներ՝

1. «Ի ներ անձինց», «Ներանձինց» 580, 32 և 581, 13, Հմտ. «արց են ներ ձայնոթի ներ անձինցն ասխտիցն նշանակը» ՊԷր. 462, ներանձնական ԴՊորփ., էջ 258, ՏՄԻ., էջ 62, ներանձնաոր Յանրդ, ՊԷր. 514, Վերլ. 568, ՏՄԻ. 31, ԹԼողոր, ի խաչն, էջ 161, ներանձնան ԹԼող. ի կոյսն, էջ 172¹.

2. «Նեթակայ իրի» 580, 27-28, Հմտ. «ասՀման գրտեթխն նեթակայ իրին յայտն» ԴՊորփ. 260, «ասՀման է քան կարճաոտ» յայտնիչ ընտեթխան նեթակայ իրի» սահՀմ. 136.

3. վերաթեևն — «աստուտ ի բարձրագույն վերաթեևնով» 580, 7, «և տեսան է դինքն ոչ երբէր ի յաւազդոյան վերաթեևնայ»

1. «արագարանութիւն» Ա, 32, էջ 87: — 2. «արդարախօսող» Ա, 6, էջ 23: — 3. «աւարտարանութիւն» (վերնագիր), էջ 257: — «բարձրահասակ» Ա, 26, էջ 75: — 5. «բրարար», «բրարեր», Գ, 68, էջ 365: — 6. «բլիաժութիւն» Գ, 57, էջ 333: — 7. «դառնահոտ» Բ, 39, էջ 165: — 8. «դեղակուր» Բ, 87, էջ 235: — 9. «գծուրահար» Ա, 5, էջ 17: — 10. «զիսանաղիբը» Ա, 3, էջ 10: — 11. «երգարան» Ա, 3, էջ 11: — 12. «երկարողի» Գ, 54, էջ 328: — 13. «երկայնահիտ» Ա, 10, էջ 33: — 14. «երթնեկութիւն» Ա, 15, էջ 49: — 15. «էշ» (պատերազմական մեքենա) Գ, 28, էջ 290: — 16. «երզվիլի» Բ, 79, էջ 218 (ույն այս բառի Հնագույն իմաստը տարբեր է): — 17. «բեույարտութիւն» Գ, 9, էջ 266: — 18. «գայրա» Բ, 50, էջ 179: — 19. «գաւական» Գ, 67, էջ 356: — 20. «կականտման» Բ, 83: — էջ 227: — 21. «կծիլք» Գ, 68, էջ 364: — 22. «կծծի» Գ, 68, էջ 364: — 23. «կղզմուպետ» Ա, 14, էջ 46, 17, էջ 55: — 24. «Համաթիս» Բ, 82, էջ 225: — 25. «Համբերողական» Գ, 67, էջ 357: — 26. «Համբաւտենչ» Գ, 62, էջ 344: — 27. «Հայրենասեր» Ա, 13, էջ 43: — 28. «Հարկապահանջ» Ա, 24, էջ 72: — 29. «Հարկեցուցանեն» Գ, 65, էջ 353: — 30. «Հարատի» Բ, 37, էջ 162: — 31. «Հնարաւորութիւն» Ա, 27, էջ 78: — 32. «Հնգապատիկ» Բ, 88, էջ 238: — 33. «Հինակիր» Բ, 7, էջ 111: — 34. «Հնոնտուութիւն» Բ, 7, էջ 110: —

35. «ձնօտարագործ» Բ, 33, էջ 152: — 36. «ճախագլուխ» Բ, 19, էջ 278: — 37. «ձորատի», Ա, 13, էջ 43: — 38. «Համիրեն» Ա, 30, էջ 82: — 39. «Հատակեր» Ա, 12, էջ 39: — 40. «չատահանար» Ա, 20, էջ 63: — 41. «սուլիմ» Բ, 37, էջ 304: — 42. «սուտմասանաց» Բ, 92, էջ 248: — 43. «չարարանեն» Գ, 64, էջ 348: — 44. «սպտուտիմ» Բ, 37, էջ 304: — 45. «պաւորթիս» Գ, 68, էջ 363: — 46. «պատառարազ» Բ, 47, էջ 174: — 47. «պետանամ» Գ, 36, էջ 302: — 48. «ջերմահոտ» («ջերմահովիտ» ?) Բ, 6, էջ 108: — 49. «ջրաւոր» Բ, 7, էջ 264 (Հնագույն իմաստը տարբեր է): — 50. «անազգեստ» Բ, 60, էջ 191: — 51. «սիսգնոն» Բ, 83, էջ 226: — 52. «սպուղէր» Գ, 49, էջ 320: — 53. «սարսուկար» Գ, 36, էջ 302, 48, էջ 317, 57, էջ 335, 58, էջ 337 և այլն: — 54. «սերտիմ» Բ, 91, էջ 244: — 55. «սխտարագլի» Բ, 63, էջ 195: — 56. «տարգալ» Բ, 47, էջ 174: — 57. «տամարիլ» Գ, 68, էջ 364: — 58. «փառատուլ», «փառատուլթիւն» Գ, 63, էջ 347, Բ, 92, էջ 347, Բ, 92, էջ 248: — 59. «քարագագաթին» Բ, 4, էջ 106: — 60. «քարակուր» Բ, 39, էջ 165:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՈՐ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹՅԱՄԻ¹

XX դարի առաջին տասնամյակներին Հայաստանում արված Շնագիտական գյուտերը պատմական գիտությունը Հարսուսցրին բացառիկ նշանակություն ունեցող վավերագրերով: 1911 թվականին Արմավիրի բլրի Հարավային լանջի վրա, Արմավիրից Շահ-Րիսար տանող միջոցառյա ճանապարհի մոտ, գտնվել էր մի մեծ քար երես Հունարեն արձանագրություններով: Ակադեմիկոս Ն. Մատի Հանձնարարությունը, որն այդ ժամանակ աշխատում էր Անիում, այդ արձանագրությունները լուսանկարել էին Ն. Լ. Թևոնսկի և Ն. Պ. Միչևիչը: Նրանք միաժամանակ գծել էին այդ արձանագրությունների նաև ձևագիր պատճենները:

Այնուհետև նոր գտնված այս արձանագրությունների բնթերցմամբ զբաղվել էր երկար ժամանակ ակադեմիկոս Յ. Բ. Մմիրնովը, որը սակայն չէր կարողացել ափսոսել իր աշխատանքը և չէր Հանգել վերջնական եզրակացության: Մմիրնովի աշխատության սեպագրությունները, որոնք Հ. Ա. Օրբելին տվել էր Ա. Բ. Բոլտոնովային նախապատրաստելու տպագրության Համար՝ գործախառնար, մինչև այժմ դեռ Հրատարակված չեն²:

1927 թվականին Միտիենական ակադեմիայի Կովկասյան Պատմա-Հնագիտական ինստիտուտի և Հայաստանի Հնությունների պաշտպանության կոմիտեի Համատեղ գիտարշավի ժամանակ Հայտնաբերվել էր մի ուրիշ մեծ քար՝ չորս Հունարեն ար-

¹ Ձեկուցված է ՀՍՄՀ ԳԱ ընդհանուր ժողովի Հորչանական նիստում, 1945 թվականի նոյեմբերի 22-ին:

² Տե՛ս **А. И. Болтунова**, Греческие надписи Армавира, «Տեղեկագիր» ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, Երևան, 1942, № 1-2 (15-16), էջ 35-37, նաև **С. В. Тер-Аветисян**, Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», ԱրմՖանի «Գիտական ժողովածու», Կովբրակ Հայաստանում խորհրդային իշխանության Հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, էջ 61:

ձանագրություններով: Այս երկրորդ բարբ Գոթական էր առաջին բարբից ոչ հետո՝ մոտ 12 մետր հետափորության վրա դրանից դեպի արևելք:

1932 թվի աշնանը Միտիենական սկալոսիայի Անդրեովկասյան ֆիլիայի Հանձնադրությունները այս նոր գտնված շրջանում հույներն արձանագրությունները հետաքննել էր տեղում Ա. Ի. Բոլտունովյան, որն այնուհետև ուսումնասիրել էր այդ արձանագրությունները, հիմնվելով էրպուլիցիայի ժամանակ իր հանած լուսանկարների և ձևագիր պատճենների վրա:

1935 թվականին Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի Հրատարակած «Ելույթներ Հին Հայաստանի պատմության» ժողովածուի մեջ լույս էր տեսել Մ. Տեր-Հակոբյանի մի փոքր հոդվածը՝ «Արձավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը» վերնագրով: Սրա մեջ առաջին անգամ Հրատարակված էին 1927 թվականին գտնված երկրորդ բարբի լուսանկարը և այդ բարբի վրայի առաջին երկու արձանագրությունների ձևագիր պատճենները (ԼՋ 146 և 149):

Իսկ մոտ ժամանակներում՝ 1942 թվականին, Արձավիրում գտնված Հունարեն բոլոր արձանագրությունների մասին ընդարձակ մի հոդված տպել էր Արժժանի «Տեղեկագրում» Ա. Ի. Բոլտունովյան (№ 1-2, 1942, Երևան):

Իր այս հոդվածում Բոլտունովյան մանրամասն լուսարանում է բոլոր արձանագրությունների բովանդակությունը և առանձնապես մատնանշում է, որ իր Հաղորդումը նախնական է և, որ նա հուշարձանների վերջնական Հրատարակումը հետաձգում է և կտա հետագայում, երբ հնարավոր լինի կունենա նորից գնալու Արձավիր և շարունակելու իր աշխատանքները բուն օրինակների վրա:

Բոլտունովյանի հոդվածի բնագրին կցված են վեց արձանագրությունների զմայրական ընդօրինակումները, իսկ յոթներորդ արձանագրությունը մեջ է ընդգրկված միայն Հունարեն տառադարձությամբ: Պետք է ասել, որ արձանագրությունների մեծագույն մասը վատ է պահպանված, ուստի և Բոլտունովյանի վերականգնած տեքստերը շատ հաճախ վիճելի են կամ անհաճոք: Այնուամենայնիվ, ուշադիր կերպով քննարկելով նրա գծած ձևագիր պատճենները՝ զգուշ չէ եղրակացնել, որ տեքստերի ընթերցանությունը նրա մոտ ընդհանուր առմամբ որոշված է ճիշտ և միայն մասնավոր կետերում որոշ ընթերցումներ կարտոս

են վերաքննության և ուղղման հետագա աշխատություններում:

Երկար ու մանրակրկիտ այս աշխատանքը բուն արձանագրությունների վրա պետք է, իհարկե, շարունակվի հենց անհնամոտ ժամանակներում: Ես կողմնակալի սակայն ներկայացնել արդեն այժմ մասնագետների ուշադրությանը արձանագրությունների բովանդակության նոր իմ լուսարանությունը և կցանկալի մատնանշել, որ իմ առաջարկած նոր մեկնությունը լիովին հաստատվում է Հին Հայկական աղբյուրների գրական վկայություններով¹:

* * *

1911 թվականին գտնված Հունարեն արձանագրություններով բարեն ունի երեք տունձին տեքստ, որ զետեղված են բարբի վերին մասում: Առաջին տեքստը, որի պատճենը մեջ է ընդգրկված Բոլտունովյանի հոդվածում (նկար 1)² պարունակում է ութ տող ոտանավոր հաստված, որի առաջին երկու տողում հիշատակված են «Գործեր և օրեր» խրատական պոեմի Հեղինակի, Հեմիոդոսի, և նրա եղբոր՝ Պերեսի անունները:

Η ΚΙΟ Δ Ο Σ Π Τ Ε Ξ Λ Ε Ι Ν Ο Σ
Ε Π Ε Ι Ρ Ε Ρ Χ Η
Χ Α Ρ Ο Σ Α Β Ω Ι
Τ Α Ρ Α Τ Ρ Ι Α Ι Α
Α Λ Λ Α Δ Ε Τ Ο Ι Ι Α
Ρ Α Ψ Η Ν Ε Κ Ε Ν Ω Σ Ε Ρ Ι Φ Ι Β Ε Κ
W C E Π Ε Ι Ε Ξ Ε Σ Ο Η
Κ Α Ι Τ Α Υ Τ Α Ν Ε Ψ Τ Ε Ι

21* 2

¹ Երբևր ընդամ Հունարեն տեքստերը Ա. Ի. Բոլտունովյանի գծած պատճեններն են:

Ա. Բոլտունովյան կարծում է, որ այս արձանագրության իմաստը խրատական է և որ իբր թև Հողգածի մեջ հակադրում են իրար Հինք և նորը: Ասկայն, իրապես, թևն արձանագրության իմաստը, իսկապես, խրատական է, սակայն բոլորովին այլ է:

Այս արձանագրության իմաստը լուսարանելիս՝ պետք է, ինչպես կարծում եմ ես, ի նկատի ունենալ Հին աղբյուրների հարգրգած կենսագրական տեղեկությունները Հնախոջոսի և նրա եղբոր՝ Պրսեսի մասին: Ինչպես Հայտնի է, Պրսեսը, կաշտակով զատավորներին՝ զրկել էր իր եղբայր Հնախոջոսին նրան հասնող Հայրենական ժառանգության բաժնից: Բայց այնուհետև նա ինքը ընկել էր աղետալի գրուծյան մեջ և հարկադրված էր օգնություն խնդրել եղբորից:

Ինձ թվում է, որ արձանագրության մեջ խտրը Հենց այդ մասին է: «Իրերնիս Հոչակափոր Հնախոջոս», ասված է նրա մեջ, երբ զրկվեց Հողից (Χώρος) և Հայրենական ժառանգությունից (τὰ πατρῶα), նաև ինքը Պրսեսը՝ բաժնյակեց (παρήνεσεν) սրան, ինչպես այդ պատշաճում է կրտսեր եղբայրներին:

Արձանագրությունը գրված է ակներևաբար խրատական նպատակով: Նա զատապարտում է ժառանգական գույքի անարդար բաժանումը և խրատում է ճտարի ազգականներին ապրել խաղաղ ու համերաշխ և աջակցել ու օգնել միմյանց:

Երկրորդ տեսաբար (տե՛ս նկար 2), որ բաղկացած է 12 ստոից և գտնվում է առաջին տեսարի աջ կողմում, ինչպես երևում է նրա վերջին ստոիբրից, գրված է նույնպես կապվածների ու գույքի բաժանման առթիվ: Թևն և այս արձանագրությունը, ինչպես և նախորդը, շատ վառ է պահպանված, սակայն նրա մտավոր իմաստը վերականգնվում է գոհացուցիչ հավանականությամբ: Նա բովանդակում է, հավանորեն, Արտեմիս աստվածուհու դիմումն իր Հոտին: Արտեմիսը պահանջում է, որ գույքի բաժանումը և կապվածների սահմանադրությունը կատարվի արգաբարացի կերպով: Արձանագրության երկրորդ ստոի, ինչպես շատ ճիշտ մտանշան է Բոլտունովյան, կարդալովում է բավական պարզ՝

οὐκ ἔστι δ' οὐδὸν πολὺν πολεμικώτερα θεος, ἠσθηδὸν՝ «չկա որևէ տեղ ալիքի ուղղմանուհի աստվածուհի»:

Այս «առգճատունչ աստվածուհին», ակներևորեն, Հունական Արտեմիսն է, որը Հին Հայաստանում նույնանվան է Անահիտ

աստվածուհու հետ: Արտեմիսը, ինչպես ներքև կտեսնենք, գտնվում էր Հունական տաճար Արտեմիսի և Ազոլոյի:

Ε Τ Ι Δ Η Ω

Ψ Ε Τ Ι Δ Ο Ο Ξ ΑΥ Π Ο Λ Ε Μ Ι Κ Ω Τ Ε Ρ Α Θ Ε Ο Σ
 ΑΥ Τ Η Σ Ι Α Κ Ω Λ Υ Σ Ι ΑΥ Τ Η Δ Ε Ι Μ Α Τ Ο Σ
 Ο ΑΥ Τ Ε Ρ Ο Ξ Ε Ψ Κ Ο Μ Π Ο Ρ Ε Ξ Ο Ι Σ Ω Λ Ο Γ Ω Ν
 ΟΥ Τ Ε Ν Δ Ε Ο Ν Τ Α Τ Η Σ Α Λ Η Ο Ξ Ι Α Κ Ε Γ Ω
 Ξ Ε Π Ε Ι Γ Α Ψ Ε Ψ Ω Λ Ι Γ Λ Ο Υ Σ Κ Ε Η Ν Ψ Μ Α Τ Ω Ν
 ΑΥ Τ Ι Δ Η Μ Ι Κ Ε Δ Η Λ Ο Ν Α Ν Θ Ρ Ω Π Ο Ι Σ Ε Ρ Α Τ Ο Ν
 Γ Ω Ξ Α Φ Α Ψ Κ Α Ϊ Φ Ο Ο Ν Ο Σ Τ Ο Υ Μ Ψ Θ Ο Ο Ν
 Ι Δ Ι Α Ϊ Ψ Μ Η Κ Α Λ Ω Σ Ψ Ϊ Ε Μ Ε Ν Ο Σ
 Υ Τ Ο Ν Κ Α Ο Λ Υ Τ Ο Ν Τ Υ Μ Β Ο Ν < Υ Ν Ε Ι Δ Ο Μ Ο Σ
 Δ Η Π Ο Ω Ν Α Κ Ο Ω Ν Α Λ Λ Α Τ Ο Δ Ε Ξ Ω
 Τ Ε Π Α < Τ Ε Ψ Θ Ρ Λ Ο Ε Η Λ Α Τ Ο Ν

Նկար 2.

Արձանագրության Հետևյալ ստոր ստոիբրի մեջ, ինչպես ճիշտ մտանշան է Բոլտունովյան, աստվածուհին խոսում է ինրն անձամբ: Բոլտունովյանի տված երրորդ, չորրորդ և հինգերորդ ստոիբրի թարգմանությունը մեծ կասկածների տեղիք չէ տալիս: Աստվածուհին ասում է, որ նա ինքն ահ ու սարսափ կատաշթացնե, և որ իր խտրերն ինքնապարծություն չեն, այլ ճիշտ են:

Երրորդ ստոի մեջ անհասկանալի է λυσι բառը: Բոլտունովյանի ենթադրությունը, որ այդ բառը պետք է ուղղվել և կարդալ [Ν]ύσι[α] «նիսիական»՝ համոզիչ չէ:

Անհայտ է, բացի այդ, նրա մեկնությունը երբ մյուս ստոիբրի: Յոթներորդ ստոի մեջ Բոլտունովյան ասաբարկում է առաջին բառը կարդալ [λ]ιθ[ω], ուստի և կարծում է, որ աստվածուհին, ինչպես ինքն է ասում, վերացնում էր «մարդկանց ինչ որ սուս գործատությունը, նաև արտեղարանությունն ու նախանձք»: Դժգուր չէ սակայն նկատել, որ թույլ է և համոզիչ չէ նաև նրա այս մեկնությունը: Կարելի է, րնդհակառակը, ենթադրել, որ վե-

ցերրոյ, յոթներորդ և ութներորդ սողերի բովանդակութիւնը կապ ունի իններորդ և տասներորդ սողերի բովանդակութիւն հետ, որոնց մեջ խոսքը ոչ թե այն ծարղիանց մասին է, որոնք ականադրաբար և վառ սկզբունքներն են Հետևում, ինչպես այդ սխալ ենթադրում է Բոլտուցովան, այլ կալիպաների արդարացի բաժանման մասին է:

Ուներորդ և տասներորդ սողերի կարգացում են բավական պարզ: Այդ սողերը, թեև Բոլտուցովան մտաւորապես ճիշտ է վերականգնել, սակայն թարգմանել է անճշտօք:

ἰὸ μῆ) δικαίως μὴ καλῶς ὠρισμένους
 (αὐτὸν καθ' αὐτὸν τύμβον ἴεσιδῶναι δόμος

Ես առաջարկում եմ թարգմանել այսպես՝ «այն սուներ, որ վառ ու անարդար կերպով է սահմանափակում՝ ինքն իրեն փորում է զերիզման»:

Տասնմեկերորդ և տասներկուերորդ սողերում խոսքն այն մասին է, Հափանորեն, որ տանջանքը և աստծու առաքած զփրայտութիւնը չեն պատահելու միտն նրանց, որոնք լուսն են աստվածուհուն:

Առաջին քարի երկրորդ տերտի իմ նոր այս մեկնութիւնը Հաստաստում է ըստ իս նրանով, որ Ապոլլոնի քուր Արտեմիսն աստվածուհին էր, ինչպես Հայտնի է, գուցէ ու կալիպաների արդարացի բաժանման և սահմանափակում: Բրբե սեփականութիւնն պահպանել նա Հիշատակված է չլուրիական մի արձանագրութիւն մեջ, որ գտնված է Սարդեսում: Հինգտողանի այդ արձանագրութիւնն թարգմանութիւնը մեջ է բերված Պ. Ն. Առաջարկի «Լուսիզայի արձանագրական Հուշարձանները» Հոդվածում¹:

«Սա դանարանն է, — ասված է արձանագրութիւն մեջ, — Տիփղայան Առտայի Տարվիցի, մինչև ուր նա տարածվում է, աջ կողմում Սիփանի մասն է, իսկ ձախ կողմում՝ ՄԼԽներ: Եվ ով որ մարտարն իմ պատկերը կամ իմ կալիպանը բռնութիւնով Հափշտակել՝ նրա սուներ և անրողջ գուցը թող ոչլուցան Արտեմիսը»:

Հունարեն երրորդ արձանագրութիւնը, որ պահպանվել է 1911 թվականին Երևան բերված քարի վրա՝ գտնվում է այդ

¹ Տե՛ս «Востник Древней истории», 1940, № 3-4 (12-13), էջ 53:

քարի Հարթ կողմի աջ մասում և բովանդակում է Հինգ սողից բաղկացած տերտա (տե՛ս նկար 3):

Այս արձանագրութիւնը, ինչպես մասնաշնչել է Բոլտուցովան, ունի նվիրաբերական բնույթ: Նա բոլորովին պարզ կարգացում է և բովանդակում է նվիրված բնձաների թվարկումը՝ չորս միերի և կառքի, որ նվեր էր տվել Եվսիսարմիտեք, և մի փոքր պատկերի, որ նվիրել էր Պելամիդեսը: Չորս միերը և կառքը, ինչպես միանգամայն ճիշտ ենթադրում է Բոլտուցովան, կարող են ասելութիւնն ունենալ Արեւի աստծու առաջածուներին Հետ, որին պաշտում էին իբրև Հունական Ապոլլոնի:

Τ Ε Τ Τ Α Ρ Ε Σ
 Ι Π Π Ο Ι Τ Ο Ι Ε Υ Γ Α Σ
 Ε Υ Θ Υ Χ Α Ρ Μ Ι
 Π Ι Ν Α Κ Ι Ο Ν Ε Ι
 Π Η Α Α Μ Υ Δ Ο

Նկար 3.

Քարի տեղադրութիւնն մասին, որի վրա փորագրված էին վերև մեջ բերված արձանագրութիւնները՝ դեռևս անհայտն է Յ. Թ. Սմիթնովը ենթադրութիւնն էր արել, որ այդ քարը, ինչպես երևում է վերջին արձանագրութիւնից, որի մեջ թվարկված են աստվածութիւնն անձայրերված նվերները՝ գտնվել է ըստ երևույթին, սրբավայրում¹:

Այս ենթադրութիւնը, անշուշտ, ճիշտ է: Սակայն սրբավայրի էությունն մասին, որ Բոլտուցովան և ըստ երևույթին, նաև Սմիթնովը, Համարում են «վեներոնովայր» Հին Հայկական սրբու-

¹ Տե՛ս Ա. Ի. Болтугова, Греческие надписи Армавиры, էջ 53:

Յյունների»՝ նրանց ենթադրությունը, ինչպես կտեսնենք, վիճելի է: Այս սրբալայրը, ինչպես զովար չէ Հետեցնել արձանագրությունների բովանդակությունից, նաև նույն այս տաճարի մասին Հին Հայկական աղբյուրների վկայություններից՝ Հունական տաճար էր Ապոլլոնի և Արտեմիսի:

Պետք է ամենից առաջ, ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ վերև քննության առնված երրորդ արձանագրության մեջ Հիշատակվում են Ապոլլոնին նվիր տվողները՝ Եվտիխար-միդեար և Պելամիդեար, որոնք, սնուչու, ուշ թև ընկել տեղացիներ էին, այլ Հելլենական գաղթականներ: Կարելի է, ամենայն Հավանականությամբ, նաև նախակաճելի Համարել, որ նույնպես և գույշի ու կալվածների բաժանման և սահմանադրման մասին երկու մյուս արձանագրությունները, որոնցից առաջինում Հիշատակված են Հեպտոդոս և նրա եղբայր Պերսեսը՝ պարունակում են դիմումներ, իհարկե, ո՛չ թե տեղական, այլ Հելլենական բնակչությանը, որն այն ժամանակ ապրում էր, քստ երևույթին, Արձամվիրի շրջանում:

Վերև քննված Հունական արձանագրությունները, որ 1911 թվականին գտնված էին Արձամվիրում, ինչպես տեսնում ենք ունեն կուստուրական-պատմական շատ մեծ նշանակություն: Նրանք Հարստացնում են մեր գիտելիքները Հայաստանի III-II դարերի (Ք. ա.) պատմության մասին նոր Հետաքրքրական տվյալներով: Դրանք ցույց են տալիս, որ Սելևկյան ժամանակաշրջանում Հելլենիզմի ազդեցությունը զգալի է եղել ո՛չ միայն Մոփբում, ինչպես այդ նշված էր «Հայաստանի անտառի ու քարեքերի մասին» իմ աշխատության մեջ¹, այլև Մեծ Հայաստանում, որն այն ժամանակ գտնվում էր Յրոնտիդեների, այսինքն՝ Երվանդյանների իշխանության տակ:

Արձահիշյալ արձանագրությունների մեր յուսարանության շնորհիվ մենք հանգում ենք շատ հետաքրքրական եզրակացության, որ Արձամվիրում, Երվանդյանների նստավայրում, գոյություն է ունեցել Հունական տաճար, որի բուրմուրը եղել են, քստ երևույթին, առավելապես Հույներ: Գարելի է, բացի այդ, նույնիսկ ենթադրել, որ Արձամվիրի շրջանում ապրել են, Հավանորեն, նաև Հելլենական գաղթականներ, որոնք այնտեղ ունեցել են Հողատաներ:

Անհրաժեշտ է նշել, որ իմ կարծիքը վերահիշյալ արձանագրությունների թվականների մասին, ինչպես և երկու առաջին արձանագրությունների բովանդակության իմ բացատրությունը, խիստ տարբեր են Յ. Ի. Սմիթնովի և Ա. Ի. Բոլտունովայի եզրակացություններից: Դրանք ենթադրում են, որ երկու ոտանավոր արձանագրությունների Հեղինակը կարող էր լինել Տիգրան Մեծի որդին, Հայոց թագավոր Արտավազդ II-ը (56-34) որը, ինչպես վկայում է Պոտաքրոսը, գրած է եղել Հունարեն լեզվով զանազան երկեր²:

Այս ենթադրությունը, իմ կարծիքով, բացահայտորեն սխալ է: Ընդօրինակել քարի վրա, բոլորովին անմիտ և աննպաստակ կերպով, Հայոց Արտավազդ II թագավորի ոտանավորներից և որբերգություններից մի քանի տող Հատվածներ, իհարկե, չէր կարող ունենալ բանական որևէ իմաստ:

Դժվար է նաև Համաձայնել Սմիթնովի և Բոլտունովայի կարծիքի Հետ այդ արձանագրությունների թվականի մասին, որ նրանք ենթադրում են Արտավազդ II թագավորի ժամանակ, այսինքն՝ առաջին զարի երկրորդ կեսում Ք. թվականությունից առաջ: Իրապես, ինչպես կտեսնենք, թե այդ և թե՛ 1927 թվականին գտնված արձանագրությունների ժամանակը պետք է ենթադրել մինևույն դարաշրջանում, այն է՝ երրորդ զարի վերջերս կամ երկրորդ զարի սկզբներում Ք. թվականությունից առաջ, երբ Արձամվիր Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնն էր:

* * *

Որպես Հետաքրքրական է, որ՝ Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի գոյությունը Արձամվիրում, որ թավաբար ստուգության վկայում են մեր քննած Հունական արձանագրությունները՝ լիովին Հաստատվում է նաև նույն տաճարի մասին Մովսես Խորենացու վկայություններով: Ի՞նչ նոր աշխատություններում են արդեն առիթվ եմ ունեցել բազմիցս նշելու քաջատիկ կարևորությունը Խորենացու պատմական երկի առաջին մասերի, որոնց Հորինման Համար Պատմահայրը օգտվել էր, բացի գրավոր աղբյուրներից, նաև անգիր բանահյուսությունից, զլխավորապես, ժողովրդական Հին վկայից:

¹ Տե՛ս Կ. Ա. МАНУКЯՆ, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930, էջ 53:

² Plat., Crassus, XXXIII.

Որքանացու Համապատասխան վկայությունները, որ կարող են Հատուկ քննությունը՝ մեջ եմ բերում ամբողջությունը:

1. **Մովսես Որբնայի**, Ա. գլ. 20, էջ 63-64 (Տիգրիս, 1913)

«Արայան Արան մեռնում է պատերազմում Ծամիրամի Հետ, թողնելով արու զավակ ամենահզոր և զործով ու խոսքով մեծահասնար՝ Անուշավան Սասանյիբին, որն այդպես էր կոչվում, որովհետև նախկին էր պաշտամունքի շամասայն Արամանուակի ստիճ ծառերին, որ Արամախրումն էին: Մասնց տերերների խշխշոցից, օդի Հանդարտ կամ սաստիկ շարժվելու պատճառով, և կամ շարժման ուղղությունից՝ Հայկազանց մեր աշխարհում սովոր էին գուշակություններ անել և անում էին այդ շատ ժամանակ:

Այս Անուշավանը, բավական ժամանակ արհամարհանք կրելով Ջամնայից՝ տառապում էր արքունի դռանը. Հետո նա բարեկամների օգնությամբ ստացավ մեր աշխարհի մի մասը՝ խնամելու Համար որպես Հարկատու, իսկ ապա նաև ամբողջը»:

(«Արայանն Արայ մեռնելի ընդ Ծամիրամայ ի պատերազմին, թողլով արու զավակ ամենահարուստ և շատահաննար չիր և ի բան՝ զԱնուշավանն Սասանուէր: Քանզի ծծեալ էր բոտ պաշտամանց ի սոսիսն Արամանեակի որ յԱրմաիր. զորոց զսաղարթուցն սոսախն, բոտ Հանդարտ և կամ շամասիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի Հնայս յաշխարհս Հայկազանց, և այս ցրազում ժամանակ»:

Այս Անուշավան բուսական ժամանակա արհամարհումին կրեալ ի Ջամնեակայ՝ սուսայտի ի դրանն արքունի. իսկ օգնեալ ի բարեկամաց՝ շահի դնան ինչ աշխարհիս, Հարկահանութեամբ խնամել, զկնի ապա և զբոլորս»):

2. **Նույնը**, Բ. գլ. 8, էջ 117 (Տիգրիս, 1913)

«Այս բոլորից Հետո Արամախրում նա (Վաղարշակը) մեհյան է շինում և արձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսինն և իր նախնիքներին»:

(«Թեև յետ այսը ամենայնի մեհյան շինեալ յԱրմաիր՝ անդրիս Հատատէ, արեգական և լուսին և իւրոց նախնեացն»):

3. **Նույնը**, Բ. գլ. 12, էջ 122

«Այնուհետև նա (Արտաշեսը) գնում է զնախ արևմուտք և ձերբակալում է Լյուդիացիների Կրեստս թաղապորին: Եվ գտնելով Ասիայում Արտանիսի, Հերակլեսի և Ապոլլոնի պղծմածույլ ոսկեզօծ արձանները՝ բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արամախրում: Քրմապետները, որ վահուտներին

տահնիցն էին՝ առան Ապոլլոնի և Արտանիսի արձանները և կանգնեցրին Արամախրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Ապուլոնի և Կրեստացի Դիալմնոսի գործն էր, Համաբերով իրենց նախնու՝ Վահագնի պատկերը՝ Արտաշեսի մահից Հետո կանգնեցրին Տարսուսում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում»:

(«Եւ յաղայ այնուհետև յարեւուտ, և ձերբակալ անել զԿրեստս թաղապոր Լիւդացոյ»:

Եւ գտեալ յԱսիայ պղծմածույլ ոսկեզօծ պատկերս զԱրտանիզեայ և զՀերակլեայ և զԱպոլլոնի՝ տայ բերել յաշխարհս մեր. զի կանգնեցնեն յԱրմաիր: Զոր ստեալ քրմապետաց, որ էին յաղզէն Վահանեաց՝ զԱղագոնի և զԱրտանիզայ կանգնեցին յԱրմաիր. իսկ զՀերակլեայն զանապատկերն, որ արարեալ էր ի Սիլիզեայ և ի Դիալմնոսի Կրեստացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցնու ի Տարսոս, յիւրեանց սեպհականս զիւզն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»):

4. **Նույնը**, Բ. գլ. 40, էջ 166

«Բայց Երվանդը, շինելով իր քաղաքը՝ Արմավիրից փոխադրեց այնտեղ ամեն ինչ բացի կուրբերից, որոնց նա իր քաղաքը տեղափոխելը օգտակար չհամարեց, որ մի գուցե քաղաքը զգուշութեամբ չպահվի ժողովրդի այնտեղ գալու և զոչ բերելու ժամանակ: Ուստի նրանից Հետո, մոտ քսոստուն ասպարեզ զնախ Հուսիս՝ Ախուրյան գետի վրա շինեց նման իր քաղաքին մի փոքր քաղաք և կոչեց Բաղարան, այսինքն՝ թե քաղաքների կառուցումները նրա մեջ են յինված, և փոխադրեց այնտեղ Արմավիրում եղած բոլոր կուրբերը: Նա շինեց նաև մեհյաններ և իր եղբոր՝ Երվանդին նշանակեց քրմապետ»:

(«Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր դամեալսն ինչ յԱրմաիրայ, ուրոյն ի կողքն, զոր ոչ օգուտ իւր Համաբերայ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի՛ ի գուլ և ի զո՛հել անդ աշխարհի՛ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ Հնոսդոյն ի նմանն իբր քառասուն ասպարթատ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրեանայ, և անուանեաց Բաղարանս, այս իւրն թէ՛ ի նմա զրազմաց յորինեալ է զկազմութիւն, և փոխադրաց անդր զամենայն զիւուսն որ յԱրմաիր: Եւ մեհյանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուանգ քրմապետ կազուցանելը»):

5. **Նույնը**, Բ. գլ. 49, էջ 176-177

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ խառնվում են Երասխար

և Մեծամորը, և, հափանելով բլրին՝ շինում է քաղաք և իր անու-
նով կոչում է Արտաշատ: Նրան օգնում է Երասխն անտառի
փայտով: Ուստի ստանց զժգարտության և սրագ կերպով շինում է
քաղաքը և նրա մեջ մեհան է կառուցում և Բագարանից փո-
խարում է այնտեղ Արտեմիա արձանը և բոլոր Հայրենի կուռ-
քերը: Բայց Ապոլլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից զուրս,
ճանապարհին մտառ:

Թերթեայ Արտաշիսի ու տեղին, ուր խառնին Երասխ և Մե-
ծամոր, և Հանկայ բնոց բյուրն՝ շինե քաղաք յիւր անուն անուա-
նեայ Արտաշատ: Ջոնոնտս լինի նմա և Երասխ փայտիք մայ-
րաց, փանս որոջ անաշխատ և երազ շինեցի՝ կանգնել ի նմա
մեհան, և փոխել ի նա ի Բագարանի զպատկերն Արտեմիոնայ և
զամենայն կուռս Հայրենիս, բայց զԱպոլլոնի պատկերն արտաբոյ
քաղաքին կանգնել Հուպ ի ճանապարհսն»):

Մեջբերված Պորենացու այս վկայություններում, ինչպես
տեսնում ենք, հիշատակված են ոչ միայն Արմավիրը, իբրև Եր-
վանդյանների հին նստավայրը, այլ նաև այնտեղ գտնվող Արևի
ու Լուսին՝ Ապոլլոնի և Արտեմիա տաճարը: Պորենացու այս
վկայությունները ճիշտ ու ճիշտ համապատասխանում են Հու-
նական վերահիշյալ արձանագրությունների մեջ պարունակվող
տվյալներին: Ուստի և բոլորովին պարզ է, որ քրանց փափրա-
կանությունը չի կարող կազմաթի ենթադրվել:

«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» իմ աշխա-
տության մեջ¹ մանրամասն ցույց էր արված, որ՝ Պորենացու
զլխավոր պահպանությունը նրա պատմական սխալ Հեռանկարն է,
և անունների ու ղեկավարի շփոթումները, որ՝ նրա երկում անհա-
ճող ու արհեստական կերպով իրար են հյուսված, Համաձայն՝ մա-
ժանակագրական նրա սխալ սխեմայի: Ուստի միանգամայն Հա-
նանայի է, որ նա, շինանալով որ Հայաստանում գոյություն է ունե-
ցել Երվանդյանների - Յոնոնտոնների թագավորական դինաստիան՝
Արևի և Լուսինի, այսինքն՝ Ապոլլոնի և Արտեմիա տաճարի կառու-
ցումը սխալմամբ վերագրում է Արչախունի Վաղարշա 1-ին, Հայ
Արչախունիների նախահորը (տե՛ս վերև վկայություն 2):

Իսկ, իրական, այդ տաճարի կառուցումը, ինչպես մենք այժմ
տեսնում ենք վերև բննած Հունարեն արձանագրությունների բո-

վանդակությունից՝ պետք է վերագրել ոչ թե Արչախունիների գա-
րաչրթանին, այլ Երվանդյանների, այսինքն՝ III-II դդ. Ք. թվա-
կանությունից առաջ: Պապաթյանցի ենթադրությունը², որ Պո-
րենացու վկայությունները տաճարի և Հունական աստվածների
արձանների մասին Արմավիրում Պատմահոր անձնական Հեր-
յուրանքներն են, ինչպես տեսնում ենք, չի կարող համարվել ճիշտ:

Հաղով թե կարելի լինի միջին Համարել, հակառակ Պապաթ-
յանցի կարծիքին³, նույնպես և Պորենացու Հաղորդած տեղե-
կությունը ստիների մասին Արմավիրում և գուշակությունների
մասին բառ նրանց տերևների խնջուցի և բառ նրանց երեքում
մասին (տե՛ս վերև վկայություն 1): Այդ գուշակությունները, ինչ-
պես Հաղորդում է XI դարի Հայ Հեղինակ Գրիգոր Մաղախտուրը³,
տեղի էին ունենում Ապոլլոնի տաճարում: Եվ, իսկապես, Ապոլ-
լոնի Հույները վերագրում էին մարգարեական շնորհք, և,
ինչպես Հայտնի է, բրձերը գուշակություններ էին անում նրա
տաճարներում: Պորենացու վերևում մեջ բերված Հաղորդագ-
րության կապակցությունը՝ առանձին ուշադրության է արժանի,
հարկավ, սրբազան կազմու պատվումը Գոգոնյանում, ուր բրձերն
բառ նրա տերևների խնջուցի գուշակում է կին աստվածների
կամքը:

Վերահիշյալ երրորդ մեջբերման մեջ (տե՛ս վերև վկայություն
3) կարելի է միանգամայն համարել նաև Պորենացու
Հաղորդագրություն այն մասին, որ «Արտեմիա և Ապոլլոնի
պղնձաժուռ ոսկեղած արձանները» բերված էին Արմավիր՝ Փոքր
Ախուլից: Սակայն նրա սխալ մատնանշումն այն մասին, որ իբր
թե այդ տեղի էր ունեցել կրեոտի և Արտաշես Աշխարհակալի
մասնակ, անշուշտ, անձնական ենթադրությունն է:

Վերև մեջբերված Պորենացու չորրորդ վկայության մեջ
որոշակի ասված է, որ Երվանդ Արմավիրից փոխադրել էր իր
նորակառույց Երվանդյան տաճարադարը ամեն ինչ բացի
Ապոլլոնի և Արտեմիա արձաններից, որոնց համար նա Ախուր-
յանի ափին կառուցել էր Բագարան փոքր քաղաքը: Մենք ներքև

¹ Տե՛ս Գր. Խալաթյուկ, Армянский эпос в истории Армении Моисея Хо-
ренского, Москва, 1896, էջ 280-299.

² Նույնի, էջ 164-197:

³ Տե՛ս «Գրիգոր Մաղախտուրի թղթերը», Հրատ. Կ. Պատանյանցի, Ավե-
սանդրագու, 1910, էջ 219:

¹ Я. А. Манагади, О торговле и городах Армении, էջ 96-97:

կտեմենը սակայն, որ 1927 թվականին Արմավիրում գտնված երկրորդ բարի արձանազորությունները ո՛չ միայն չեն հաստատում, այլ պարզապես ժխտում են Թորենացու այդ վկայությունները: Հունարեն այս արձանազորությունների բովանդակությունները երևում է, որ, Հակոտայ Թորենացու ցուցման, Երվանդյանների մայրաքաղաքն Արմավիրից Երվանդաշատ փոխադրելուց հետո է՝ իրեն Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոն մտնւմ էր գարձայ Արմավիր, և որ Հենց այնտեղ, և ո՛չ թե Բագարանում, թաղված էր Երվանդ Վերջինը, Արտաշես I-ի նախորդը:

Թորենացու Բագարանի մասին այս վկայության առիթով, քստ երևույթին, ուղիղ է Գր. Պապայանցի կարծիքը, որը Թորենացու Պատմության մեջ Արշարունիքում գտնվող Բագարանի Հիշատակությունը համարում է անսխալորենիք¹: Այս խնդրի վրա ես մանրամասն կանդ եմ առնելու իմ մի ուրիշ ուսումնասիրության մեջ, որ նվիրված է լինելու Թորենացու Հայոց պատմության քննությունը:

Պետք է պարզաբանել նաև Թորենացու վերև մեջբերված վերջին վկայությունը (վկայություն 5): Այդ վկայության մեջ Թորենացին հաղորդում է, որ Արտաշես I-ը, որը Հիմնել էր նոր մայրաքաղաք Արտաշատը՝ երա մեջ կառուցել էր տաճար և փոխադրել էր այնտեղ Արտեմիսի արձանը: Իսկ Ապոլլոնի արձանը նա կանգնեցրել էր քաղաքից դուրս՝ մեծ ճանապարհի մոտ:

Ինձ թվում է, որ Թորենացու և այս վկայությունն անուղղակի կերպով Հաստատում են Արմավիրում գտնված Հունարեն արձանազորությունները: Հաստատվում է այդ նույնպես և Ագաթանգեղոսի վկայությանը², որը մատնանշում է, որ շորորդ զարի սկզբին (Ք. թվ. Հ.), Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակ, Արտաշատում էր գտնվում Անահիտ աստվածուհու, այսինքն՝ Արտեմիսի արձանը, իսկ Տիր աստծու, այսինքն՝ Հունական Ապոլլոնի արձանը գտնվում էր Արտաշատից ոչ հեռու, մեծ ճանապարհի մոտ:

Այսպիսով, ինչպես զգվար չէ համոզվել, Մովսես Թորենացու վկայությունների մանրամասն քննությանը ո՛չ միայն հաստատվում է վերև մեջբերված Հունարեն արձանազորությունների բովանդակությունը, այլ նաև զգալի շարժով լրացվում է: Միաժամանակ հարտնարելով մե և պարզաբանվում են ամենայն Հավանականությանը նոր փաստեր, որ կարելի է միաբերել հետևյալ դրույթներին:

1. Արմավիրում, որ Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնն էր, գոյություն է ունեցել Հունական տաճար Արտեմիսի և Ապոլլոնի արձաններով, որոնք բերված էին այնտեղ, քստ երևույթին, Փոքր Ասիայից:

2. Այս տաճարի սպասավորներն ու սպասավորուհիները, Համաձայն, Հելլեններ էին կամ Հելլենացված տեղացիներ, և կարելի է նաև ենթադրել, որ Հունարեն արձանազորությունների Հելլենականեր կարող էին լինել տաճարի բուրմերը:

3. Արմավիրի շրջանում, քաջի այդ քրմերից և տաճարասպասավորներից («հերոզոլոյներից»), հավանորեն, ապրել են նաև Հելլենական այդ գաղթականները:

4. Արմավիրում, ինչպես և Հունական Բոզդոնայում, մեկը գտնում ենք ծառերի պաշտամունքի վերապրուկներ: Այստեղ եղել է տոհմների սրբազան մի ծառաստան, որի տերերները խշխշոցի համեմատ արվում էին գուշակություններ:

5. Երվանդյանների թագավորության անկումից հետո Արտաշես I-ը, որը Հիմնել էր նոր մայրաքաղաք Արտաշատը՝ Արմավիրից տեղափոխել էր այնտեղ Արտեմիսի արձանը, որն Ագաթանգեղոսի մոտ անվանված է Անահիտ: Իսկ Ապոլլոնի արձանը, որին Ագաթանգեղոսն անվանում է Տիր՝ Արտաշատ Արմավիրից փոխադրել էր և կանգնեցրել էր ո՛չ թե Արտաշատում, այլ քաղաքից դուրս՝ մեծ ճանապարհի մոտ:

6. 1911 թվականին Արմավիրում գտնված Հունարեն արձանազորությունների ծագման ժամանակը պետք է ենթադրել երրորդ զարի վերջում կամ երկրորդ զարի սկզբներում Ք. թվականությունից առաջ, այսինքն՝ այն դարաշրջանում, երբ Արմավիրը եղել է Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնը:

* * *

Հին Հայաստանի քաղաքական պատմության Համար քաղաքիկ նշանակություն ունի Արմավիրում 1927 թվականին

¹ Տե՛ս Գր. Халмтыанц, Армянский эпос, էջ 219-221 և «Армянские Аршакуны в Истории Армении Моисея Хоренского», Москва, 1903, էջ 377:

² Տե՛ս «Ագաթանգեղոսի Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 396 (դ. 108, § 778):

գտնված երկրորդ քարը Հունարեն չորս արձանագրություններով:

Այս քարի երեօի առաջին արձանագրությունը, որը տեղագրված է քարի վերևում արհեստականորեն պատրաստված խոռոչի մեջ՝ բաղկացած է 11 ստղից (տե՛ս նկար 4): Արձանագրության առաջին ինը ստղը կարգացուցում է բաժական պարը: Նրա բովանդակությունն է Միֆրաս Թագավորի դիմումը Երվանդ Թագավորին, որին Միֆրասը մագլիսում է առողջությունն և արևատություն:

Բոլորտեղական այս արձանագրության իմաստը թեև քննահանրապես ճիշտ է հասկացել, սակայն նրա հական կետերը մեկնել է անհաջող: Նա սխալմամբ կարծում է, որ դիմումն ուղղված է Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I Թագավորի կողմից ինչ-որ Երվանդի:

O B A K I A E Y C A P
 M A Δ O E I W N
 M I O P A C E P O N T H
 B A K I A E I X A I P E I N
 I E P P W C E Y A N E X O I
 Y G I A I N E I N Δ E K A I T A E T
 Γ O N A A Y T O Y Y G I A I
 N W N T H N B A C I A Δ E I
 A N Δ E A T E A C C E I C .
 T E C I B I O Y
 Δ

Նկար 4.

Պետք է ասել, որ Արտաշես անունն արձանագրության մեջ բնավ չի հիշված: Այս անունը կամայականորեն վերականգնել է ինքը Բոլորտեղական, կարծելով, որ արձանագրության առաջին ստղի վերջում պահպանված երկու տառեր՝ **AP** պետք է լրացնել և կարդալ **Ἀρτάξιας**: Բոլորտեղական առանց որևէ հիմքի են-

թացրում է նաև, որ Արտաշես Ա-ն կրում էր բաղադրյալ բարդ անուն **Ἀρτάξιας Μαδοσίρων Μίθρας**.

Ի հակադրություն այս մեկնության նույն արձանագրությանը ևս տալիս են բոլորովին այլ լուսարանում:

Արձանագրության առաջին չորս ստղերը, ինչպես ևս կարծում են, վերականգնվում են պարզ ու որոշակի հետևյալ բովանդակությամբ՝ **ὁ βασιλεὺς Ἀρμαφοίρων Μίθρας Ἐβρόντη βασιλεὶ χείρειν, αἰσιήειν**՝ «Արմավիրցիների Թագավոր Միֆրասը բարև է ուղարկում Երվանդ Թագավորին»:

Ἀρμαφοίρων բառի մեջ Հիեղբորդը տառը դժվարեթեմաների է: Բոլորտեղական այդ տառը կարդում է **Δ**: Սակայն ուշադիր կերպով ծանոթանալով արձանագրության լուսանկարի հետ՝ դժվար չէ համոզվել, որ այդ տառը **Δ** չէ, այլ **Ξ**: **Ἀρμαφοίρων** հոգնակի սեռական հոլովը պետք է, ըստ երևույթին, թարգմանել ոչ թե «Արմավիրին», այլ «Արմավիրցիներին»: Հին Արմավիրը հիշատակված է նաև Պտղոմեոսի Աշխարհագրության մեջ, որն այդ քաղաքն անվանում է **Ἀρμαουρία** և կամ **Ἀρμαουρία** (տե՛ս 1901 թվականի հրատ., էջ 941):

Արձանագրության մյուս հինգ ստղերում Միֆրաս Թագավորը ցանկություն է հայտնում, որ առողջ լինի ինչպես ինքը՝ Երվանդը, նույնպես և նրա սերունդը, և որ Թագավորն իր Թագավորությունը բոլորն բարեհաջող կերպով:

Մեջբերված արձանագրությունը, ինչպես տեսնում ենք, ոչ մի կապ չունի Արտաշես I-ի հետ: Նա վերաբերում է, ինչպես դժվար չէ որոշել, նախորդ Երվանդյան դինաստիայի ժամանակին, երբ Հայաստանում Թագավորում էր Արտաշես Ա-ին նախորդող Երվանդ Վերջինը, որն իր գահակիստը փոխադրել էր Արմավիրից Երվանդաշատ: Նույն այդ ժամանակ Արմավիրում իշխում էր, ինչպես երևում է արձանագրության և Պորենացու Պատմության վկայություններից՝ գերագույն բուրժ Միֆրասը, ըստ երևույթին, Երվանդ Վերջինի եղբայրը, որը Պորենացու մոտ անվանված է Երվագ:

Հայաստանում տեղի ունեցած զեպուրեր Երվանդյանների Թագավորության այս շրջանում, ինչպես Հայտնի է, մանրամասն նկարագրված են Պորենացու մոտ: Մրա պատմական երկում, ինչպես մենք տեսանք, պահպանվել են Թանկարժեք տեղեկություններ, որ նա քաղել էր Հագագույն աղբյուրներից, որոնք մեր ձեռքը չեն հասել:

Որքանացու Պատմության այդ տեղեկությունները, որոնք լույս են ափսոսման վերևում բերված Հունարեն արձանագրության վրա՝ եւ անհրաժեշտ են Համարում, նկատի առնելով նրանց կարևորությունը՝ մեջ բերել ամբողջությամբ ստանց կրճատումները:

1. Մովսես Որքանացի, Բ, գլ. 39, էջ 165 (Տիգլիս, 1913)¹

«Մրա [Երվանդի] ժամանակ արքունիքը Արմավիր կոչված ըրբի տեղափոխվում է, որովհետև Երասխ գետը հեռացել էր եւ, ձենոր երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում՝ փոսեր ըրորովին առուում էր եւ չէր կարելի քափական ջուր ունենալ թագավորանի տեղի համար: Նեղվելով սրանից, նա ափելի ամուր տեղ փնտրելով, Երվանդը տեղափոխում է արքունիքը դեպի արևմուտք, սպառաժուտ մի ըրբի վրա, որի շուրջը պատում էր Երասխը, իսկ դեմից հոտում էր Ախուրյան գետը: Նա պարսպապատում է ըրտը, իսկ պարսպից ներս շատ տեղերում կորում է թարերը մինչև ըրբի հաստից դետին հավասար, որպեսզի գետի ջրերը հոսն փոքրված տեղերը եւ խմելու ջուր հայտնվեն: Միջնաբերդն անբացում է թարձք պարիսպներով եւ պարիսպների մեջ պղնձե դռներ է շինում եւ երկաթե սանդուխներ ներքևից վեր մինչև գուռը»:

«Ճառուքս սորա [Երուանդայ] փոխին արքունիքն շերտախին անուանեալ ըրտը, քանզի էր հեռացեալ գետն Երասխ, եւ ի յերկարել ձենուայնոյն, եւ ի գառնահոտ փչանմէ, հիսիսոյ պաղաղեալ ձուլլոյ փտակն՝ ոչ ուտաթ արքայցումս բաւական թագաւորականին գտանէր տեղոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա եւ ամբարցունի եւ տեղոյ նկեալ ի խեղիք՝ փոխել զարքունիսն յարևմուտ կոյս, ի քարախուտը մի ըրտը, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրյանն հոսի գետ: Պարսպ զըրտուն, եւ ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ քաղում տեղիս կորեալ զարքինսն մինչև ի յատակս ըրտոյն հավասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորումն, յրմակեալս պատրաստութիւն: Զմիջնաբերդն ամբարցուցանէր թարձք պարսպօք, եւ զբունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, եւ կանելիս երկաթիս ի ներքուտ ի վեր մինչև ցոռունն»:

2. Նույնը, Բ, գլ. 40, էջ 106²

«Բայց Երվանդը, շինելով իր քաղաքը՝ Արմավիրից փոխազրեց այնտեղ ամեն ինչ քաջի կառուցելից, որոնց նա իր քաղաքը տեղափոխելը օգտակար չհամարեց, որ մի գուցե քաղաքը զգուշությամբ չպահպի ժողովրդի այնտեղ գալու եւ զո՛հ բերելու ժա-

մանակ: Ուտի նրանից հետո, մոտ քառասուն ապաքերց դեպի հյուսիս՝ Ախուրյան գետի վրա շինեց նման իր քաղաքին մի փոքր քաղաք եւ կռչեց Բագարան, այսինքն՝ թև քաղիների կառուցումները նրա մեջ են շինված, եւ փոխազրեց այնտեղ Արմավիրում եղած ըրտը կուռքերը: Նա շինեց նաև մեհյաններ եւ իր եղբոր՝ Երվազին նշանակեց բրձնապետ»³:

Որքանացու այս վկայությունների մեջ անհավաստի է, ինչպես վերև ասվեց, նրա հաղորդագրությունը կուռքերի փոխազրեման մասին Արմավիրից Բագարան, որը, քան երեսույթին, Բագարանուհիները վերակառուցել էին VIII դարի վերջում կամ IX դարի սկզբներում, եւ նրան տո՛ւմանակ հանգստարան էր:

Մեր բնեմ արձանագրությունները վկայում են, ընդհանրապես, որ Երվանդ Վերջինի ձեռով գահաձեռնում Արմավիրից սրտ նոր հիմնած Երվանդայառ քաղաքը փոխազրեցուց հետո, Արմավիրում իշխում էր Միթրատը, որն արձանագրության մեջ իրեն անվանում է «Արմավիրցիների թագավոր»: Այս Միթրատը, քան Որքանացու Երվազը, ինչպես զժմար չէ հետևեցնել Մովսես Որքանացու անմիջական ցուցումներից եւ Ստրաբոնի հաղորդած անուղղակի տեղեկություններից իր ժամանակաշրջանի բուրմերն ու բրձնության մասին՝ Երվանդի եղբայրն էր, եւ վերջինին կորմից նշանակված էր քրմակառ Արմավիրում: Նկարագրելով Կապազովկիայի Կոմանա քաղաքը եւ Մա աստվածուհու տաճարը՝ Ստրաբոնը որոշակի վկայում է², որ թագավորից հետո՝ բարձրագույն բուրմն քան իր պատվին երկրորդ անձն էր Կապազովկիայում եւ որ բարձրագույն բուրմերն ու թագավորները միևնույն տոհմից էին լինում: Ստրաբոնի նույն այդ հաղորդագրության մեջ ասված է նաև, որ հանդիսավոր թեմաթորների ժամանակ բարձրագույն բուրմն իր գլխին դնում էր արքայական թագ: Նա, ինչպես երևում է, իրեն համարում էր ո՛չ միայն բուրմ, այլև թագավոր:

Հետաքրքրական է, որ նույնպիսի բարձր զիրք ունեցել են բարձրագույն բրձերը, ինչպես երևում է մեջբերված Հունարեն արձանագրության բովանդակությունները եւ Որքանացու վկայու-

¹ Գրաբար տեքստն ավելորդ են համարում բերել, որովհետև Որքանացու այս վկայությանը հրապարակելու հետ միասին մեջ է բերված նաև վերև:

² Strabo, XII, 2, 3 (535).

Յյուններից՝ նմանապես և Հին Հայաստանում թև՝ Երվանդյանների և թև՝ Արտաշեսյանների ժամանակ: Երկրորդ քարի Հունարեն վերահիշյալ արձանագրությունը, ինչպես տեսնում ենք, որոշակի վկայում է, որ Երվանդյան Հայաստանում թագավոր կամ քահպետ է Համարվել, քայի Երվանդից, նաև նրա Լեդայրը, բարձրագույն քուրմ Միթրասը, որն իշխում էր Արմավիրում:

Կուլտուրական-պատմական նշանակությունը նույն այս արձանագրության, անկասկած, շատ մեծ է: Նա վավերական կերպով Հաստատում է Հունարեն լեզվի գործածությունը Երվանդյան Հայաստանի Հասարակական բարձր խափերում: Այդ պարզ երևում է նրանից, որ իր եղբոր՝ Երվանդին արևշատություն մաղթող Միթրասի գիմուճը գրված է Հունարեն լեզվով:

Ինչպես տեսնում ենք, Հելլենիզմի թագանցումը Մեծ Հայաստանի ներքին շրջանները տեղի էր ունեցել դեռևս Երվանդյանների ժամանակ: Ազգակցություն Հաստատելով ամուսնությունների միջոցով, Հավանորեն, Մելեկյանների Հետ՝ Երվանդյաններն արդեն երրորդ դարի վերջում Ք. թվականությունից առաջ մեծ շահով նեթարկվել էին Հելլենիզմի ազդեցության: Թև արքան մեծ է եղել այստեղ այդ ազդեցությունը՝ այդ ի միջի այլոց, երևում է նրանից, որ՝ բարձրագույն քուրմն Արմավիրի Ազոլոսի և Արտեմիա տաճարի, որի սպասավորները եղել են Հույն քուրմերը և Հիերոգլիկները, Երվանդ թագավորի եղբայր Միթրասն էր:

Մեր վերև բնած արձանագրությունը պարզում է, քայի այդ, որ Հունական արքայալուծների կառուցումը Հին Հայաստանում, և Հունական արձանների փոխադրումն այստեղ, ինչպես և տեղական աստվածների միաձուլումը Հունականների Հետ, պետք է նեթարկել ո՛չ թև Տիգրան Մեծի թագավորության շրջանում (95-56/55 Ք. ա.), ինչպես այդ սովորաբար նեթարկվել է գիտական նախորդ երկիսում, այլ՝ ավելի վաղ՝ Երվանդյանների տիրապետության ժամանակ Մեծ Հայաստանում:

* * *

Երկրորդ Հունարեն արձանագրությունը, որը գտնվում է առաջինից դեպի աջ՝ բաղկացած է 13 տողից (տե՛ս նկար 5): Նրա մեջ իրար են Հաջորդում առորա-մակեդոնական օրացույցի ամիսների անունները՝ Dios, Apellaios, Audynaiois, Peritios, Dystros, Xandikos, Artemisios, Daisios, Panemos, Loos, Gorpiaios, Hyperberetaios.

ΔΙΟΣ
 Λ
 ΑΠΕΛΛΙΟΣ ΑΥΑ
 ΠΕΡΙΤΙΟΣ ΔΝΙ
 ΔΥΚΣΤΙΟΣ ΟC
 ΙΑΝΔΙΚΟΣ
 ΑΙΤΕΜΕΙCΙΟΣ
 ΔΑΙCΙΟΣ
 ΠΑΝΗΜΟΣ
 ΛΩΙΟΣ
 ΓΟΡΠΑΙΟΣ
 ΥΠΕΡΒΕΙΕΤΑΙΟΣ
 ΔΙΝΔΙΚΗΥΓΙΗΝΕΥΑΝΕΧ

Նկար 5.

Տասներեկրորդ տողում Փարնաք քառից Հետո նորից առողջություն է մաղթված մի ինչ-որ անձնավորության:

Բոլտունդայի կարծիքով, այդ տողում Հիշատակված Փառնակի տակ պետք է Հասկանայ պոնտական թագավոր Փառնակին, որն իշխում էր 190 թվականից մինչև 169 թվականը Ք. թվականությունից առաջ: Բոլտունդայի նեթադրում է, որ արձանագրության մեջ ցանկություն է Հայտնված, որ Փառնակն առողջ լինի տարվա 12 ամիսների ընկնացում, այսինքն՝ ամբողջ տարի:

Դժվար չէ սուկայն տեսնել, որ սխալ է և անըզունելի Բոլտունդայի նաև այս նեթադրությունը:

Մեջբերված արձանագրության բովանդակության յուսարանման ժամանակ պետք է նկատի առնել, որ առորա-մակեդոնական օրացույցը բաղկացած էր 12 ամիսից, յուրաքանչյուրը 30-ական օրից, և, քայի այդ, նաև տասներեկրորդ ամիսից, որն ուներ Հինգ կամ վեց «Հավկյալ օրեր» (εραγομεναι)¹: Միանգամայն բնական է քստ այս, որ ամբողջ տարվա Համար արևշատություն

¹ Տե՛ս W. Kubitschek, Grundriss der antiken Zeitrechnung, München, 1927, էջ 148 և 151:

ստուգման կարծում է, որ խոսքը արձանագրության մեջ վերաբերում է Անտիոքոս IV Եպիփանեսի Հաղթական Հայկական արշավանքին ու նաև այն մասին է, որ Անտիոքոս IV-ին, որը նվաճել էր «զեղեցիկ Հայաստան երկիրը»՝ սպանել էին իր զինվորները: Բոլտունովայի ենթադրությունը, արձանագրության մեջ Միգանյի նախկին կառավարիչ Նուսենիտսը դիմում է Անտիոքոս IV-ի կնոջը, Լաոդիկեին, և կակճախ յուր է Հազարգում նրա ամուսնու մահվան մասին:

Բոլտունովայի այլ լուսարանությունը բողոքվին անՀամոզիչ է ու անՀավանական, նախ և ստաջ, այն պատճառով, որ Անտիոքոս IV-ի ողբերգական մահվան կակճախ յուր, որ Հազարգել էր Լաոդիկեին Նուսենիտսը, իմաստ ուներ և նպատակահարմար էր զժազրել տալ քարի վրա ո՛չ թե Արմավիրում, այլ Մելեկյանների որևէ կենտրոնական նստավայրում: Հայտնի է, բացի այդ, որ Անտիոքոս IV Եպիփանեսը չէր սպանվել, այլ ծանր Հիվանդացել էր ու մեռել Էլամում: Միանգամայն պարզ է, ուրեմն, որ այն անձը, որը «զեկներ ձեռքին կռվելով» սպանվել էր իր զինվորներից՝ չի կարող նույնացվել սելևկյան թագավոր Անտիոքոս IV-ի Հետ:

Մեջրերգված արձանագրությունը, որ խիստ Հետաքրքիր ու կարևոր է Երվանդյան Հայաստանի պատմության Համար, ինչպես զժվար չէ Համոզվել, պարունակում է տխուր յուր մահվան մասին ո՛չ թե Անտիոքոս IV Եպիփանեսի, այլ Արտաշես I-ին նախորդող Երվանդ Վերջին թագավորը:

Երվանդի մասին այդ տխուր յուրը Հազարգում է Փիլազելի-փիլաչին (ἡ Φιλαδέλφω), քստ երևույթին, Երվանդի քուր-իմագու Հուն, Նուսենիտսը: Նուսենիտսի Հազարգություն մի քանի Հատվածներ վիճելի են, Հանդիզում է կարդալ, որ Երվանդի մասին տխուր յուրը «չէ պարունակում ոչ մի անվատանակ քան» (οὐδὲν ἔχων ἀκλέες), որ նրան «սպանել են զինվորները» (οἱ στρατιώται ἐπέφονον) և որ նա «չուշը փչել է զներ ձեռին» (ὄπλοφοροῦντα ἔπειν θυμός), քստ որում «նորագահակիստ Հայաստան երկրին տիրապետել են» թշնամիները:

Որ քննարկվող արձանագրության մեր նոր լուսարանությունը չի կարող կասկածանքի ենթարկվել՝ այդ Հաստատում են զարժայ Մովսես Պորենացու Պատմության թանկավորվել վկայությունները, որոնք, ինչպես կատանելը, իրենք ու իրենց բացատրությունն են ստանում Հունարեն արձանագրության վկայությունների օգնությամբ:

Ինչպես վերև ասվեց, Մովսես Պորենացու ընդարձակ Հազարգություններում Երվանդի ու Արտաշեսի մասին (Ք, գլ. 37-62) պահպանվել են արժանահավատ տեղեկություններ III դարի վերջերի և II դարի սկզբների ղեկավարի մասին Ք. ստաջ, որ ինքը Պատմահայրը սխալմամբ ենթադրել է I դարի ղեկավար Ք. Հետո: Պորենացու Հիշատակած Երվանդը, ինչպես երևում է Ատրաբոնի վկայությունից¹, Երվանդյան տոհմի վերջին թագավորն էր, և նրան զահճրեկեց էր արել Արտաշեսյան զինաստիպի Հիմադիր Արտաշես I-ը: Երվանդի զահճրեկեցությունը տեղի էր ունեցել, ինչպես մանրամասն Հազարգում է Պորենացին², ծանր պատերազմից Հետո, որի վերջնական Հետևանքը եղավ Երվանդ Վերջինի պարտությունը Երվանդավանի ճակատամարտում, նրա փախուստը, նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաքի ստաճը, և Երվանդի մահը, որին սպանել էր զինվորներից մեկը:

Հունարեն արձանագրության զաղտնիքը բացվում է այսպիսով ստանց զժվարություն: Նրա մեջ խոսքը Հայտնապես վերաբերում է Երվանդյանների պատահած դառնակակիճ անցքերին, և Երվանդ Վերջինի ողբերգական մահին: Որ Երվանդին, իրական, սպանել էր զինվորներից մեկը՝ այդ, Համապատասխան Հունարեն արձանագրության, մանրամասն վկայում է Պորենացին Հետևյալ Հատվածում.

Մովսես Պորենացի, Ք, գլ. 46, ԼԶ 173 (Տիգրա, 1913)³

«Բայց Ամբատը, որը զիչերով Երվանդի ետեից էր եկել փորքաթիվի վաշտով՝ քաղաքի (Երվանդաշատի) զուտը պահում էր, մինչև որ Արտաշեսը և քուրը զորքերը եկան: Եվ նրա քաջերը սկսեցին անքոցի զեմ մարտելը՝ անքոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի զուտը քացին: Իսկ զինվորներից մեկը ներս մտնելով՝ խփեց վաղորդ Երվանդի գլխին, և ուղեղը ցրվեց ստան Հատակի վրա: Եվ այսպես ջախջախվելով՝ մեռավ Երվանդը քսան տարի թագավորելուց Հետո: Իսկ Արտաշեսը Հիչելով, որ Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ է՝ Հրամայում է նրա մարմինը թաղել և մահարձան զնել»:

«Բայց Ամբատայ զիչերայն զՀետ Երտանդայ եկեալ սակա

¹ Strabo, II, 14, 15;
² Տե՛ս Մովսես Պորենացի, զիրք Ք, գլ. 43-46:

վաշտանա՝ զգուճն քաղաքին պահէր մինչև ի գայն Արտաշխի և զօրացն անննջուն: Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղևն մարդիկ ամրոցին, և քացին զգուճն քաղաքին: Իսկ մի ոսն ի զինուորացն մտնայ նհար վաղերք զգուճն երուանդայ, և ցրուեսց զուղիղն ի յատակս տանն, և այսպիսի ջախճանք վախճանեցաւ, կախայ զվնագաւորութիւնն անս քան: Բայց Արտաշխի յիշևայ, թէ յատուեսն Արձապուհուղ է երուանդ՝ Հրամայէ զգի նորա թաղել մահարձանօք»¹:

Պորենացու Հաղորդած այս տեղեկութիւնները ո՛չ միայն Հաստատում են արձանագրութիւյան մեր յուսարանութիւյան ճշտութիւնը, այլ, միևնույն ժամանակ, ինչպես կարծում են, Երևան են Հանում նաև արձանագրութիւյան ծագման բուն գաղտնիքը:

Սպանված Երվանդ թագաւորի զխակը, ինչպես երևում է Պորենացու Հաղորդագրութիւյան վերջին մասից, Արտաշես I-ը Հրամայել էր թաղել, և սպանված թագաւորի գերեզմանի վրա դնել էր տվել մահարձան: Պորենացու այս Հետաքրքիր վկայութիւնը Հատուկ ուշադրութիւն է արժանի, որովհետև, Երվանդի մահը նկարագրելիս՝ նա ունեցել է իր ձեռքի տակ արձանահավատ ու կարևոր աղբյուրներ: Հիմնվելով նրա վկայութիւյան վրա՝ կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ վերև բերված Հունարեն արձանագրութիւնը, որն ազգարարում է կակճայի յուր Երվանդի ողբերգական մահվան մասին, ըստ երևույթին, տապանագիր է: Կարելի է նաև Հավանական Համարել, որ արձանագրական այդ Հուշարձանը գտնվել է Երվանդի դամբարանի մոտ, որը թագավոր է եղել Արմավիրում արքայական Հանգստաբանում:

Որ Արմավիրի բլրում եղել է, իրօք, մի ինչ-որ դամբարան՝ այդ մասին Հետաքրքիր տեղեկութիւն տալիս է Ս. Տեր-Հակոբյանը «Արմավիրի երկրորդ նորադուտ արձանագրութիւնը» վերահիշյալ իր Հոդվածում²: Այդ Հոդվածի մեջ նա Հաղորդում է, ի միջի այլոց, որ դեռևս մոտ տարիներում Արմավիրի բլրից փոխադրել են Թափա-Դիրի գլուխը դամբարանական մի կոթող:

Եզրափակելով մեր բոլոր ասածներն Արմավիրի երկրորդ քարի չորս արձանագրութիւնների մասին՝ մենք տեսնում ենք, որ այս արձանագրութիւնների յուսարանութիւնը, որ Հաստատվում է Պորենացու Պատմութիւյան Համապատասխան վկայու-

¹ Տե՛ս «Նյութեր Հին Հայաստանի պատմութեան», Երևան, 1935, էջ 150:

թիւնների շնորհիվ՝ Հնարավորութիւն է տալիս անկու մի շարք կարեւոր ու Հետաքրքրական եզրակացութիւններ, որոնք կարելի է Համամարել Հետևյալ կետերով:

1. Երրորդ դարի վերջերում և երկրորդ դարի սկզբներում Ք. թվականութիւնից առաջ Մեծ Հայաստանում իշխում էր Երվանդ վերջին թագաւորը, որի ժամանակ թագաւորական նստավայրը, ինչպես միանգամայն ճիշտ վկայում է Մովսէս Խորենացին, փոխադրվել էր Արմավիրից նորակառուց Երվանդյան շատ մայրաքաղաքը¹:

2. Մայրաքաղաքը Արմավիրից Երվանդյան փոխադրելուց հետո՝ Արմավիրն առաջին պե՛ս Համարվում էր Երվանդյան Հայաստանի կրոնական կենտրոն, և նրա մեջ իշխում էր իբրև գերագույն քուրմ և թագաւոր Երվանդ վերջինի երրայր Միթրաք:

3. Երվանդյան թագաւորութիւյան անկումից առաջ տեղի էր ունեցել պատերազմ Երվանդ վերջինի և Արտաշես I-ի միջև, որի Հետևանքը եղավ պարտութիւնը և ողբերգական մահը Երվանդի, որին սպանել էր Երվանդաշատում գինիորներից մեկը:

4. Երվանդյան Հայաստանը Հունարեն արձանագրութիւյան մեջ անվանված է «նորագահանիստ երկիր», որովհետև թագաւորական նստավայրը Երվանդ վերջինը տեղափոխել էր Արմավիրից նոր մայրաքաղաք Երվանդաշատ:

5. Երվանդ վերջինի զխակը թաղված էր Արմավիրում և նրա գերեզմանի վրա կառուցված էր մահարձան, որի տեղը պետք է ենթադրել Արմավիրի բլրի Հարավային լանջի վրա՝ Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի մոտ:

6. 1927 թվականին Հայտնաբերված Հունարեն արձանագրութիւններով քարը, որի վրա փորագրված է Երվանդ վերջինի ողբերգական մահվան մասին մանրամասն տեղեկութիւնը, ըստ երևույթին, գտնվել է Երվանդի դամբարանի մոտ և, Հավանորեն, եղել է այդ Հուշարձանի քաղաղիչ մասը:

7. Երկրորդ դարի վրա եղած Հունարեն արձանագրութիւնների ծագման ժամանակը պետք է ենթադրել երկրորդ դարի սկզբներում Ք. թվականութիւնից առաջ:

¹ Համեմատել իմ աշխատութիւնը «О торговле и городах Армении», էջ 96-98:

Արձա՛վիրում գտնված Հունարեն արձանագրութիւնները, որ նոր լույս են սփռում Երվանդյան Հայաստանի պատմական անշարժի վրա՝ պատմական քննութեան Համար առաջադրում են մի շարք նոր խնդիրներ, որոնք մինչև այժմ մոլթ են մնացել և անբացատրելի:

Ես այստեղ Համատու կերպով կանգ կառնեմ այդ տեսակ երկու խնդիրների վրա, որոնք զեռես չեն ստացել բավարար բացատրութիւն:

Ռնչպես Հայտնի է, Երվանդի ու Արտաշէսի պատմութիւնը և նրանց ժամանակաշրջանի անցքերը շարադրելիս՝ Պորենացին, ինչպես ինքն է Հայտնում (Ք, գլ. 48), օգտվել է ուրիշ աղբյուրների թվում նաև Հանիի Ուլդուպ կամ Ուլդուպ քուրմի «Մեհենական պատմութիւնից»: Ենթադրում են, որ Պորենացու վկայութեան մեջ Հիշատակված Հանիին Գարանադի զափառի Անի ամբոցն է, որը սրբապաշտ էր գերադուռն Արամազդ աստծու: Գիտականների մեծազույն մասը կարծում են մինչև այժմ, որ ինչպես Հանիի տաճարի քուրմի անձնավորութիւնը, նույնպես և նրան վերաբրված պատմութիւնը, շինծու տեղեկութիւններ են և իր՝ Պորենացու Ներուարանքներն են:

Սակայն, Հակոտակ այս պնդումներին, Արձա՛վիրի Հունարեն արձանագրութիւններին Հայտնաբերմամբ, ինչպես տեսնում ենք, վաղերական կերպով Հաստատվում է, որ Երվանդյան Հայաստանում գոյութիւն են ունեցել ո՛չ միայն Հունական տաճարներ և Հույն քրմեր, այլ նույնիսկ մեհենական Հունարեն արձանագրութիւններ: Հետևապես, միանգամայն ճարտար է, որ Ուլդուպ քուրմի «Մեհենական պատմութիւնը» կարող էր Պորենացուն աղբյուր ծառայած լինել, ինչպես այդ վկայում է ինքը Պատմահայրը: Այս խնդիրը, ինչպես տեսնում ենք, պետք է վերանայալի Արձա՛վիրի Հունարեն արձանագրութիւններին նոր տվյալների կապակցութեամբ:

Մյուս խնդիրը, որն առաջնակարգ նշանակութիւն ունի Հին Հայաստանի նյութական մշակույթին ուսումնասիրող մասնագետների Համար՝ վերաբերում է Հայաստանում Հունական տիպի տաճարների առաջացման ժամանակի պրոբլեմին: Արձա՛վիրի Հունարեն արձանագրութիւնների մեր նոր լուսարանութիւնը մեզ որդաշէկ ցույց է տալիս, որ զեռես III դարի վերջերում Ք. թվականութիւնից առաջ Արձա՛վիրում՝ Երվանդյան Հայաստանի

կրոնական կենտրոնում, գոյութիւն է ունեցել Հեթանոսական տաճար, տեմբլերուն, Հունական տիպի, որի մեջ էին Ապոլլոնի և Արտեմիսի արձանները: Այս փաստն արժանի է Հատուկ ուշադրութեան:

Ռնչպես Հայտնի է, Գառնիի Հեթանոսական տաճարի կառուցման ժամանակի խնդիրը զեռ մինչև այժմ՝ չնայած այդ նյութին վերաբերող մի շարք աշխատութիւնների՝ վերջնականապես որոշված չէ: Անհնարին չէ, որ մեր Հայտնաբերած նոր փաստերը կարող են որևէ շափով կապ ունենայ և այդ խնդրի Հետ: Ծատ գրավիչ կլինէր ենթադրել, որ Գառնիի տաճարի շինութիւնը վերագրվելու է ո՛չ թէ Արշակունյան շրջանին, ինչպես մինչև այժմ կարծվել է, այլ կամ Արտաշէսյան և կամ Երվանդյան շրջանին: Այս նոր խնդիրը, որը գորկ չէ որոշ հիմքից, պետք է լուծեն, Հարկով, մասնագետ արվեստագետներն այդ Հուշարձանի Հետգիտական-ճարտարապետական ուսումնասիրութեան միջոցով:

Այս խնդիրն ուսումնասիրելիս՝ պետք է նկատի ունենայ, որ վերջերս Գառնիում գտնված Հունարեն արձանագրութեան բովանդակութիւնը բնավ չի կարող խոչընդոտ Հանդիսանալ պրոբլեմի նոր լուծման: Նորագոյտ արձանագրութեան մեջ Հիշատակված Տրդատին, ինչպես մանրման ցույց են տալու իմ Հետագա աշխատութիւններից մեկում՝ պետք է վերադրել Գառնիի տաճարի ո՛չ թէ կառուցումը, այլ վերանորոգումը:

Արձա՛վիրի Հունարեն արձանագրութիւնները, ինչպես տեսնում ենք, պետք է զրավեն գիտնականների ուշադրութիւնն իրենց ստանձնապես Հետաքրքիր բովանդակութեամբ և, իհարկե, խիտ ցանկալի են ինչպես զրանց տեքստերի ճշտման Հետագա աշխատանքները, նույնպես և զրանց գիտական պատշաճ Հրատարակումը:

**ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՌՆԻԻ
ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ¹**

Ինչպես օրաթերթերի հոդվածներից արդեն հայտնի է, 1945 թվականի Հուլիս ամսվա կեսերին ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը և գյուղատնտես Ցուլակ Գալթյանը, Գառնիի գերեզմանատանը շրջկլիս² տապանաքարերից մեկի վրա նկատել էին հունական տառերով բնագրձակ մի արձանագրություն: Այդ քարը, ինչպես նրանք հարցուփորձ անելով պարզել էին՝ համեմատաբար ծոտ ժամանակներում տեղափոխված է գերեզմանոց մերձակա ջրաղացից, և զրվել է գյուղի ննջեցյալի գերեզմանի վրա:

Այս կարևոր գյուտից Հեսո³ Գառնի մեկնած Հայկական ՍՍՀ Պատմական Հուշարձանների պահպանության կոմիտեի Հատուկ Հանձնաժողովն ակամատես է եղել Հեսոաբլրի փաստերի:

«Տարիների ընթացքում, — Հաղորդում է այդ կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Հարությունյանը², — Գառնիի բնակիչներն ամրոցից գերեզմանատուն են տեղափոխել մեծ քանակությամբ բազալտե տաշված քարեր, որպես գերեզմանաքարեր: Այդ քարերի մեծ մասը պատկանում են ամրոցի պարիսպին: Կան մի քանի քանդակազարդ քարեր, որոնք պատկանում են տաճարին: Այդպիսի քարեր կան նաև գյուղի մի շարք շենքերի պատերին»:

Նորագյուտ հունարեն արձանագրությունը, ինչպես իրավացի կերպով ենթադրում են այդ հուշարձանը տեսնողները, փոխադրված է եղել ջրաղաց՝ ամրոցի միջից, և պատկանում է ներսում կառուցված շենքին:

¹ Զեկուցված է Վ. Մ. Մուրտովի անվան Նրևանի պետհամալսարանի 25-ամյա Հորկյանական-գիտական սեկցիայի պլենար նիստում, 1946 թվականի ապրիլի 22-ին:

² Տե՛ս «Մովսեսական Հայաստան», օրաթերթ, 1946, 31 օգոստոս, № 181:

Քանակած քարն ունի 1,3 մետր երկարություն, 0,8 մետր լայնություն և 0,6 մետր բարձրություն: Արձանագրությունը փորագրված է ապարաբրի աջ կողմում և բաղկացած է ընդամենն ինը տողից: Ամեն մի տողի երկարությունն է մոտ 1 մետր, իսկ տառերի բարձրությունն է – առաջին տողում՝ 0,05, իսկ վերջին տողում՝ 0,025 մետր:

Քարի աջակողմյան եզրերը, նաև վերևը ու ներքևի աջ կողմի անկյունը, ջարդված են: Սակայն պահպանված մասերի օգնությամբ Հնարավոր է ենթադրարար լրացնել պակաս փանկերը: Սղի և անձրևի աղղեցությունը ջնջվել են և ղժվարությունը են կարդացվում նաև մի քանի տառեր Հինգերորդ, վեցերորդ և ութերորդ տողերում: Այս տառերը ևս ղժվարացնում են արձանագրության ընթերցումը և նրանց վերականգնումը Հնարավոր է նույնպես միմիայն ենթադրորեն:

Պրոֆ. Ստ. Լիսիցյանը «Սովետական Հայաստան»-ում տպած իր հոդվածում¹ մասնանշել է, որ իբր թե Հունարեն տառերի ձևերից կարելի է եզրակացնել, որ արձանագրությունը փորագրել են երկու տարրեր ձևոր: Նրա կարծիքով՝ առաջին ձևորը շատ թերի է խմացել Հունարեն լեզուն, ուստի և երկրորդ ձևորը Հարկադրված է եղել նրա սխալներն ուղղել և իր կողմից ավելացրել է **μετά** **του** **μαρτυριου** բառերը՝ շատ ավելի ուշ ժամանակվա տառերով:

Պրոֆ. Լիսիցյանի այս ենթադրությունը, ինչ թվում է, ճիշտ չէ: Թեև արձանագրության մեջ Հունարեն ք տառը փորագրված է երբևէն **E** և երբևէն **Ε**, սակայն ղժվար չէ Հանդգվել, որ այդ երկու տարրեր գրություն ձևն էլ վերագրվելու են միևնույն փորագրչին, որովհետև նույն տողերի մեջ Հանդգվում են թե **E** և թե՛ **Ε** գրությունները: Իսկ արձանագրության վերջում **του** **μαρτυριου** խոսքերը պարզապես շարունակություն են արձանագրության և չեն կարող Համարվել երկրորդ ձևորի և ուշ ժամանակվա Հավելված:

Արձանագրության բնագրի ընթերցման Համար ևս ունի ձևորիս տակ երեք լուսանկար՝ երկու մեծ և մեկ փոքր:

Համաձայն չլինելով պրոֆ. Լիսիցյանի «Սովետական Հայաստան»

¹ «Քառերի տառերի Հունարեն արձանագրությունը», տե՛ս «Սովետական Հայաստան», 1945, 23 սեպտեմբեր, № 201:

տան» թերթում տպած Հունարեն բնագրի ընթերցման և նրա առաջարկած թարգմանության¹ արձանագրությունը ևս կարգում են ու թարգմանում բոլորովին այլ կերպ:

1. **ΗΑΙΟΣ (ΤΙΡΙΑΘΤΗΣ ΒΑΣΙΛΕΥΣ)**

էլիոս [Տիրիդատես թագավոր]

2. **ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΑΝΑ(ΣΣΩΝ)**

Մեծ Արմենիայի իշխելով

3. **ΩΕ ΔΕΣΠΟΤΗΣ Α(Υ)ΚΤΙΣΕ ΝΑ(ΙΟΝ)**

որպես զերազույն տիր վերստին կառուցել տաճարը

4. **ΒΑΣΙΔΕ(Σ)Α ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣ(ΕΙ)**

արքայազատեր (Համար) անհաղթելին բրոջ

5. **Α(Υ)ΤΟΥ Ε(Ξ) ΑΝΤΗΣ ΤΗΣ ΒΑΣΙΔΕ(Ι)ΑΣ**

իր ի խնդրո թագուհուն

6. **ΜΕ(Ι)ΓΑΛ(Ε)Ι(Α)Σ. ΥΠΟ Ε(Ξ)ΟΥΣ ΙΑ ΣΤΕ(Γ)ΑΝ(ΟΥ)**

մեծաշուք. ներքո Հովանու շների

7. **ΑΙΤΟΥΤΟΥΣ ΤΩ ΜΕΓΑΛΩ Σ(Ε)ΜΝΩ(Υ)**

աղոթողը մեծն սրբին (?)

8. **ΜΕ(Ι)ΑΕ(Ι)Α ΜΑΤΗ(Υ)Ω ΚΑΙ ΕΥΧ(Α)ΡΙΣΤΙΑΝ**

երգեր թող խորհե և գոհույնուն

9. **ΤΟΥ ΜΑΡΤΥΡΙΟΥ.**

ավետարանման (Համար):

Առաջին տողի մեջ պարզ կարդացվում է միայն **ΗΑΙΟΣ** բառը, իսկ Տիրիդատես անունը, որից պահպանվել են տառերի ներքևի ծայրերը, վերականգնվում է ենթադրորեն: **ΗΑΙΟΣ** բառը կարող է նշանակել արև, քայք կարող է նաև Հակազգվել իբրև էլիոս (Aelius) անձնական անուն, որ զործածական էր Հռոմեական ժամանակաշրջանում:

¹ Պրոֆ. Լիսիցյանի թարգմանությունը Հետևյալն է՝ «երև Տիրիդատես, Մեծ Արմենիայի անսթանն պետ կառուցել տուն (տաճար)» թագուհու Համար՝ անպարտելի (Հզոր)՝ Հարազատ երբոր կողմից՝ վեր մեծ թագավորական սպարաբեից, ստովանների Հովանու ներքո, աշխարհիկ (բազալականացող), աղոթք ուղղող մեծ քարայրուն... ղժվարագրուս»:

Ներքև մենք կտեսնենք, որ Հունարեն այս արձանագրությունը վերագրվելու է Տրդատ Մեծին, որին մանուկ Հասակում փախցրել էին Հռոմայեցոց կողմից և որը սնովել ու մեծանվել էր նրանց մոտ: Ուստի և միանգամայն Հնարավոր է, որ իր Aelius մականունը նա կարող էր ստացած լինել Հռոմեական երկրում: Ինչպես Հայտնի է, նաև Հայաստանի Բակուր Թագավորը (Ճափարպակ), որը գահազուրկ էր արվել, Հռոմ էր տարվել և այնտեղ իր եղբորը մահարձան էր կանգնեցրել¹: Հռոմում Հայտնարկված այդ տաղանագրի վրա անվանված է «Ավրիլիոս Բակուրոս Թագավոր Մեծ Հայաստանի»²:

Առաջին տողի վերջում «Տիրիդատոս» անունից Հևտո նկատելի են մի այլ բառի աղտո Հետքերը, որը, նկատի առնելով տարածությունը մինչև տողավերջ, կարող էր լինել ΒΑΣΙΛΕΥΣ: Այդ ավելի քան Հավանական է, որովհետև արձանագրության սկզբում պետք է զգված լինեք Տրդատի պաշտոնական տիտղոսը՝ «Ելիոս Տիրիդատոս Թագավոր Մեծ Արմենիայի»³: Չենց այս տիտղոսը, ինչպես մասնապույց է արել Ռոստոփցեր², կրում են Բակուրը վերոհիշյալ արձանագրության մեջ ու, նաև ինքը Տրդատ Մեծը Ազախանդեղոսի պատմական երկում³:

Երկրորդ տողի վերջում պակաս տառեր կարելի է լրացնել տարրեր կերպով: Ես առաջարկում եմ կարգալ այդ տառերը, ANA[ΣΣQN], այսինքն՝ «իշխելով»: Ուշագրավ է, որ Տրդատ Մեծի պաշտոնական տիտղոսից Հևտո կարելու է Համարվել Հիշատակել, որ նա Գառնիի տաճարը վերադարձնելու համարվել էր երկրում «որպես գերագույն տեր» (δεσπότης): Ինչ թվում է, որ Տրդատ Մեծի սուվերեն իրավասություն այս Հիշատակներ կարող է մի ակնարկ լինել, որ Գառնիի շրջանը նրա ժամանակ չէ եղել արբունի երկրի մաս, այլ գտնվել է նրա վասալներից որևէ մեկի իշխանություն տակ: Գառնիի նկատմամբ, որը նշանավոր բերդ էր, ըստ երևույթի, նա տիրակալության Հասուկ իրավունք է ունեցել, որը չեղաված է արձանագրության մեջ:

Երրորդ տողի մեջ երրորդ և չորրորդ բառերը պետք է կարգալ ոչ թե ΑΙΚΤΙΣΣ⁴, որ անմիաստ է, այլ ΑΥ ΚΤΙΣΣ «վերտտին կառուցեց»²: Ուշադրության արժանի է, որ «ΕΚΤΙΣΣ անորջ անցյալ արձանագրության մեջ զործ է անված առանց Ε Հավելում, ինչպես որ այդ տվորական էր Հռոմեոսի մոտ և բանաստեղծական այլ երկերում: Երրորդ տողի վերջում, ինչպես միշտ որոշել է Լիսիցյանը³, պետք է լրացնել երկու պակաս տառեր՝ ΝΑΙ[ΟΝ] «տաճար»:

Չորրորդ և հինգերորդ տողերում ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α և ΒΑΣΙΛΕΙΑ բառերը, որ նշանակում են «թագուհի, իշխանուհի, արքայադուստր», են թարգմանում եմ տարբեր իմաստով՝ ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α «արքայադուստր» և ΒΑΣΙΛΕΙΑ «թագուհի»: Ընդունելով, որ արձանագրությունը վերագրվելու է, ինչպես այդ միշտ վկայում է Ռոստոփցին, Տրդատ Մեծին՝ նա Հավանական եմ Համարում, որ վերջինս վերակառուցել էր անբոց իր Ռուսոփորոսյան բրդ Համար Ալեխե թագուհու խնդրանքով: Չորրորդ տողի վերջում պակաս է երկու տառ ΚΑΣ[ΕΙ] «բրդ»: Նաև հինգերորդ տողի վերջին տառերը վերականգնվում են առանց զեմարություն՝ ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ]:

Պետք է ստել, որ Սո, Լիսիցյանի իր վերոհիշյալ Հողվածում E[Σ] ANTHE ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ] կարգում է E[Σ]AN THE ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ] և Թարգմանում է «վեր թագավորական ապարանքից»: Այս թարգմանությունը, անտարակուս, սխալ է, որովհետև նշանակում է E[Σ]AN քան զդրություն չունի, իսկ ΒΑΣΙΛΕΙΑ Հուանակում է ոչ թե «ապարանք», այլ «թագուհի, իշխանուհի, արքայադուստր» և կամ «թագավորություն, թագավորական իշխանություն»⁴:

Վեցերորդ տողը, որի մեջ կան ավերված և պակաս տառեր՝ պետք է կարգալ, իմ կարծիքով, այսպես՝

¹ Տե՛ս «Մովսեսական Հայաստան», 1945, 23 սեպտեմբեր, № 201:

² Որ Տրդատ Մեծը, Հավանորեն, վերանորոգող պետի լինի Գառնիի տաճարի՝ այդ ուղիղ ժամանակ է Գ. Ավիանը, տե՛ս «Արարատ», Վենետիկ, 1890, էջ 363:

³ Տե՛ս «Մովսեսական Հայաստան», 1945 թ. № 201:

⁴ Պարզ կերպով սխալ է և անբողոնելի նաև Սո. Լիսիցյանի Թարգմանությունը արձանագրության 6-9 տողերի: Ուստի ներքև տալու եմ միայն իմ յուսաբանությունը:

¹ Տե՛ս Corpus Inscr. Graec. 6559=Dittenberger Or. 382.

² М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тирдата, СПб., 1911, էջ 16.

³ Տե՛ս Paul de Lagarde, Agathangelus, Göttingen, 1887, 14, 30 և այլն:

ME[ΓAA]E(Γ)AΞ. TΠO E[Ξ]OYΣIA ΣTE[Γ]ANOT.

Լիփիցանի ընթերցումը՝ TΠO ΘEOYΣI AΞTEIAN ճիշտ չէ: Տոթևերորդ տողի վերջին բառը եւ ենթադրաբար լրացնում են և կարդում Σ[EMNQ](?) արքին»: Լիփիցանի ընթերցումը Σ[III] «բարայրին, անձալին» թևե հնարավոր է, բայց Հավանական չէ: Եթև ճիշտ Համարելու լինենք նրա ընթերցումը՝ սեփ և ենթադրենք, որ Ալքիվանքը գոյություն է ունեցել իբրև բրիտանական սրբավայր դեռևս Տրդատ Մեծի ժամանակ:

Ութերորդ տողում առաջին երկու բառը խիստ փաստված են և դժվար են կարդացվում: Այդ բառերը, ինչպես եւ են ենթադրում հնարավոր է լինրես կարդալ ME[AE]A MATH[ΓQ], ենթադրելով երկրորդ բառը Հրամայական եղանակի երրորդ զևեք, **μαθηται**, բայի, որ նշանակում է «որոնեմ, խորհեմ, հետաձենեմ»:

Տոթևերորդ, ութերորդ, իններորդ տողերում **λιτουργος** «սպասավոր, պաշտոնյա, աղթող», **εὐχαριστια** «ագուություն, շնորհակալություն» և **μαρτυριον** «պկալություն, ավետում, քարոզություն» բառերի գործածությունը, որ տվորական էին ուշ շրջանի բրիտանական-կրոնական երկերում՝ մի պարզ նշան է, որ արձանագրությունը գրված է ո՛չ թև Տրդատ I-ի, այլ Տրդատ Մեծի ժամանակ, ինչպես այդ ճիշտ մասնանշել է Սորենացին: **MARTYRION** բառը, Հավանորեն, նշանակում է այստեղ, ինչպես և Նոր Կտակարանում, «ավետում, ավետարանություն, քարոզումն Ավետարանի»¹:

Արձանագրության Հունարեն բնագրի բոլոր այս ճշտումներն ու լրացումները, որ Հավանական են լինում, թևե տեղ-տեղ կարող են առարկելի համարվել, սակայն հնարավոր այդ առարկությունները չեն կարող բառ իս փոխել արձանագրության բնահանուր իմաստը, որն իմ նոր լուսարանությունը, ինչպես տեսնում ենք, ունի հետևյալ բովանդակությունը.

«Էլիոս Տրիփղատես թագավորը Մեծ Հայաստանի, իշխանով որպես գերագույն տեր՝ վերստին կառուցեց տաճարը, անհաղթելիին, իր բրոջ արքայազանը Համար մեծաշուք թագուհու խնդիրքով: Ենեքի Հովանու ներքո սպասավորողը թող երգեր խորհ մեծ սրբին, նաև զօհություն ավետարանման Համար»:

¹ Տե՛ս «Griechisch Deutsches Schulwörterbuchs», von Dr. G. E. Benseler, Achte Auflage, Leipzig, 1886, էջ 518:

Նորադուտ արձանագրության մեր նոր լուսարանությունը, ինչպես տեսնում ենք, ճշտվոյ Համապատասխանում է Սորենացու ցուցմանը, որ Գառնիի Հունարեն արձանագրությունը պատկանում է Տրդատ Մեծին: Պատճառոր այդ կարևոր վկայությունը, որ կարող է մանրամասն քննություն, մեջ են բերում աշխարհաբար թարգմանությունը և գրաբար:

Սորենացի, զիրք II, գլ. Գ, էջ 241-242 (Տփղիս, 1913)¹
«Այս ժամանակ [Արևտակևսի Նրկիայից վերադառնալուց Հետո] Տրդատս վերացնում է Գառնիի շինությունը, որը որձարար ու տաշած քարերից էր, որոնք իրար էին կպցած երկաթե գամերով և կապարով: Նրա մեջ նա շինեց նաև տուն Հովանոց՝ մահարձաններով, սրանելի դրվագներով ու բարձրարանդակներով՝ իր Սուրովիդուխտ քրոջ համար, և նրա վրա գրեց իրեն Հիշատակը Հունարեն գրերով: [Ձայաու ժամանակա կատարել Տրդատս գշինում ամրոցին Գառնոյ զոր կառարար և կոփածոյ փիճօք, երկաթագամ և կապարով մածոցեայ, յորում շինեալ և տուն Հովանոց, մահարձանօք, սրանելի դրօշաածոփք, բարձր քանդակաւ, ի Համար քեռ իրոյ Սուրովիդուխտոյ, և գրեալ ի նմա զիշատակ իւր Հելլենացի գրով]:»

Սորենացու այս վկայություններից, որոնց մեջ կարևոր ու ճշգրիտ տեղեկություններ են հաղորդված Գառնիի ամրոցի և նրա մեջ գտնվող շենքի մասին՝ դժվար չէ կոահել, որ Պատմահայրն ինքն անձամբ եղել է Գառնիում և տեսել է ու կարդացել Հունարեն արձանագրությունը: Նա միանգամայն ճիշտ է որոշել, որ իր տեսած Հունարեն արձանագրությունը, որը պարզապես այժմյան նորադուտ արձանագրությունն է՝ պատկանում է Տրդատ Մեծի ժամանակին: Նա նմանապես ուղիղ է մատնանշել, որ վերջինս Գառնիի ամրոցը կառուցել էր իր քրոջ համար, որին ինքը, Հավանական ենթադրություն անելով՝ նույնացրել է Ագաթանգեղոսի մոտ Հիշատակված Սուրովիդուխտի հետ: Սակայն, ինչպես այժմ արձանագրության մեր ընթերցումից երևում է, Սորենացու ուշադրությունից զրիպել է, որ Գառնիի ամրոցը և նրա մեջ գտնվող տաճարը կառուցված են եղել Տրդատ Մեծից առաջ և որ վերջինս, ինչպես ասված է արձանագրության մեջ՝ այդ շինությունները՝ միայն վերանորոգել էր:

Պորենացու Հատվածի մեջ ուշագրավ է նրա վկայությունը «սուռն Հովանոց»-ի «մահարձան»-ների մասին, որ էմիրն թարգմանել է «КОЛОБЫ» (1893 թ., էջ 138), Պորեն Ստեփանենի՝ «այսուներ» (էջ 224) և Մալխասյանցը՝ «արձաններ» (էջ 163): Բրալան, Պորենացու վկայությունը, ըստ երևույթին, վերաբերում է ո՛չ թե Գառնիի տաճարի սյուներիին, այլ երիտասարդների բարձրարանդակ պատկերներին, որոնք գտնվում էին տաճարի մուտքի աստիճանների երկու կողմում: Այս «մահարձան»-ները, ինչպես և տաճարի մյուս զարդերը, Պորենացին տեսած է Լեզի, ամենայն Հավանականությամբ, ինքն իր աչքերով:

Տարբեր կարծիքներ են Հայտնված նաև Պորենացու Հատվածում Հիշատակված «սուռն Հովանոց»-ի նշանակության մասին: Էմիրն «սուռն Հովանոց» թարգմանել է «ВИАЛА» (էջ 138), Պորեն Ստեփանենի՝ «ամառնային սուռն, Հովանոց» (էջ 224), իսկ Մալխասյանցը՝ անորոշ կերպով «Հովանոց» (էջ 163): Բոլորովին այլ մեկնություն է տալիս «Հովանոց» բառին Թ. Թորամանյանը:

«Հովանոց բառը, մեր կարծիքով, Հոմանիչ պետք է լինի, — ասում է Թորամանյանը, — խորանիմ» գործածության նպատակի տեսակետով, միայն ձևով տարբեր էր: Ամենայն Հավանականությամբ, խորանները բոլորակ կամ բազմանկյունի էին, իսկ Հովանոցները՝ քառակուսի: Գազիկ Արծրունիի շինյլ տված խորանները, ըստ Թովմայի, անկյունավոր էին, իսկ Պորենացու՝ Տրապիսի վերագրված Հովանոցը Գառնիի մեջ՝ քառակուսի է: Հովանոցները, ըստ երևույթին, միշտ քարաշեն եղած էին, փայտաշենի մասին վկայություն չեմ տեսած ոչ մի տեղ, բայց կարող էր նաև փայտաշեն այ չլինել, նայելով իր Հատկության: Ինչ կվի՞ր, թե Հովանոցները եթե ընդ Հանրապետության անդամների մոտը կամ Հեռու անկյուղ կշինվեին, այնուամենայնիվ, երբևէ անորոշ ակնարկներ կան, որ կարծել կուտան, թե սպարաքների շենքերու որևէ մասերու վրա այ Հովանոցներ շինած են»¹:

Թ. Թորամանյանի յուսարանությունը, ինչպես տեսնում ենք, տարբեր է էմիրի, Ստեփանենի և Մալխասյանցի վերոհիշյալ

թարգմանություններից: Թորամանյանը «սուռն Հովանոց» Համարում է ապարանի մաս, այսինքն՝ «քառանկյունի քարաշեն խորան»: Ճիշտ է, ըստ երևույթին, թարգմանիչների տված յուսարանությունը: Ինչպես Հայտնի է, Պորենացու մոտ ամառանոցի իմաստով գործ է անված «Հովանոց» բառը նաև նրա Գառնության մի այլ Հատվածում: Սուսկով այն մասին, թե ինչպես վաղարշակ թագավորը քարեկարգում էր Հայաստանը՝ Պորենացին Հարդրում էր, որ

«Ազգաբաշխը՝ զեղեցիկ կերպով կարգավորեց իր երկիրը և թե՛ լեռնային և թե՛ ջրամային տեղերը Հավասար կերպով դարձրեց իր թագավորության վայելչության Համար քարեխառն ու նման զեղեցկությունը վայելքը, նա պատրաստեց ամառանի ժամանակի Համար Հովանոցներ, երբ չըվելու լինեի Հյուսիսի կողմերը»:
«Գեղեցիկ խմ կարգելով զերկիրն, Հաստատելով զլեռնայինն և զլեռնահատն ի քարեխառն և ի զուգազեղեցիկ վայելչություն իւրոյ թագաւորութեանն, ամառային ժամանակին Հովանոցս պատրաստելով, յորժամ զհյուսիսեաւ Երկիցէ»²:

Պարզ է, ուրեմն, որ Պորենացին Գառնիի ամբողջ Համարել է ամառանոց, որ Տրապ III-ը կառուցել էր իր բրոջ՝ Պարովիդուսաի Համար:

Գտնվելով Պորենացու վկայության ազդեցության տակ՝ Թորամանյանը նույնպես կարծում է, որ իրր թե Հաստատ տվյալներ կան, որ Գառնիի ամբողջ մեջ գտնվող շենքեր «ընամ կուսպաշտական տաճար չէ, այլ արքայական ընդունելության դահլիճ է, և կամ, ինչպես Պորենացին է ասում, Հովանոց է»³:

Նորագույն Հունարեն արձանագրության ընթերցումը այժմ, ինչպես տեսնում ենք, մեզ ցույց է տալիս, որ այդ Հուշարձանը կառուցված է Լեզի Տրապա Մեծից շատ և շատ ստաջ, և չէր կարող Համարվել Պարովիդուսաի «Հովանոց», ինչպես այդ նեմիարել է Պորենացին: Ճիշտ պետք է Համարել, ըստ երևույ-

¹ Տե՛ս Մովսես Պորենացի, II, գլ. 9, էջ 108 (Տփղիս, 1913):

² Տե՛ս «Նյութեր», էջ 282:

¹ Թ. Թորամանյան, Լյուիեր Հայկական ճարտարապետական պատմության, Երևան, 1942, էջ 357:

իին, այն գիտնականների և ճարտարապետների կարծիքը, որոնք նույն այդ շենքը համարում են Հեթանոսական տաճար, մեհյան¹:

Նորոգյուտ արձանագրության մեջ հիշատակված են, համաձայն իմ առաջարկած նոր ընթերցման, Տրդատ Մեծի բույրք և նրա կինը, որն անվանված է **անծառուք թագուհի**։ Գժվար չէ, բայց այսօր համոզվել, որ սրանցից առաջինն Ազաթանզեղոսի մոտ հիշատակված **անծ որդրոց Սուրբովիդուխան** է, որը Հայաստանում ակնազարդ դեր էր կատարել բրիտանական թագավորության ընթացքում, իսկ երկրորդը՝ թագավորի կին Աշխեն սիկիլուն է:

Տրդատ Մեծի բրոջ և կնոջ հիշատակությունն արձանագրության մեջ կարևոր մի մասնանշումն է, անշուշտ, որը ցույց է տալիս, որ Սուրբովիդուխան և Աշխենի մասին Ազաթանզեղոսի ու Ռորենացու վկայությունները, բայց էություն, պատմական են և ոչ փրպական:

Այս խնդրի վրա անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել, որովհետև վերջերս Մ. Արևիյանն իր «Նշարց հին գրականության պատմության» առաջին հատորում խիստ նվազացրել է Ազաթանզեղոսի պատմական արժեքը, և այնտեղ էլ ցույց տալ, որ Մեծն Ռուրով անունով Հայ թագավոր III դարում գոյություն չի ունեցել, և որ Հայկական արքայությունում հիշատակված Ռուրով Մեծը փրպական ստեղծական անձ է²: Նրա նոր այս կարծիքը, որ մանրամասն պատմաառարանված է վերոհիշյալ այնատության չորրորդ հավելվածում՝ իմ կարծիքով, սխալ է և անընդունելի: Հայ և ասար արքայուհիների ուշադրել քննությունը պարզվում է, ընդհանրապես, որ III դարում Ռուրով թագավորի գոյությունը բնավ մեջնողից չի վերանում:

Այդ դարում Հայաստանում գոյություն են ունեցել Ռուրով անունով նույնիսկ երկու թագավոր՝ Վաղարշի որդի Ռուրով I-ը և Տրդատ մեծի Հայրը՝ Ռուրով II-ն: Արևիյանի մատնանշած

պատմական ու բանասիրական երկերում խառնաշփոթումները առաջ են եկել մասամբ այն պատճառով, որ սխալ էր Հասկացվել Կասպուս Դիոնի վկայությունը Սանատրուկի որդի Վաղարշի մասին:

Հայտնի է այժմ, որ վերջինս թագավորը էր Հայաստանում ո՛չ թե 196-215 կամ 194-216 թվականներին, ինչպես սովորաբար ենթադրվել է, այլ շուրջ 117-140 թվականներին: Այդ սխալն է եղել, անշուշտ, հիմնական պատճառը, որ Հայ բանասերներն, ու պատմագետները, ինչպես և իրքը Արևիյանը, չեն կարողացել որոշել, որ Անտոնինոս Կարակապ կայսր ժամանակ (212-217) Հայաստանում թագավորում էր, ինչպես միանգամայն միշտ վկայում է Ռորենացին, հիմնվելով եղևացի Բարդաճանի (154-222) պատմական երկի վրա՝ Վաղարշի որդին՝ Ռուրովը, որը Տրդատ II-ի Հայր Ռուրով I-ն է:

Սակայն Սերևոսի և Ռորենացու պատմական երկերում այս Ռուրով I-ը, բայց երևալովին, Ազաթանզեղոսի Գառնություն ժամանակագրական սխալների ազդեցությանը, թյուրիմացաբար նույնացվել է Տրդատ III-ի հոր՝ Ռուրով II-ի հետ, որը թագավորում էր Հայաստանում, ինչպես այժմ պարզվում է, III դարի երկրորդ կեսում: Այդ ակներև սխալի պատճառով է, որ Սերևոսը և Ռորենացին III դարում ենթադրում են միայն երկու Հայ թագավոր՝ Ռուրով Մեծ և Տրդատ Մեծ¹, մինչդեռ այդ դարում, ինչպես այժմ պարզվում է, Հայաստանում իշխել են հինգ թագավոր Հետևյալ Հաճորդականությանը՝ Ռուրով I, Տրդատ II, Արտավազդ, Ռուրով II և Տրդատ III:

Արևիյանի կարծիքը, որ Հայաստանում Ռուրով Կոտակից առաջ ուրիշ Ռուրով թագավոր գոյություն չի ունեցել, ինչպես տեսնում ենք, բոլորովին անհիմն է:

Կարող ենք ուրեմն, վստահությամբ եզրակացնել, որ Հուսեարեն արձանագրության մեջ հիշատակված Տրդատ III-ի բույրքը, որը Ռուրով II-ի դուստրն էր, անվանվել է, իրոք, ինչպես վկայում են Ազաթանզեղոսը և Ռորենացին, «Ռուրովիդուխան», այսինքն՝ «դուստր Ռուրովի»:

¹ St' u J. Morier, A second journey through Persia, Armenia and Asia Minor, London, 1818, էջ 335; Համնանա նաև H. X. Mapp, Kavkaz u pomezniki ego duxovnoy kul'tury, Peterburg, 1919, էջ 15:

² St' u «Նշարց հին գրականության պատմություն», զրբք առաջին, երևան, 1944, էջ 166 և 591-603:

¹ St' u Մովսես Ռորենացի, աշխ. Խարզմ. Խո. Մալխասյանցի, երևան, 1940, Սիմֆերոպոլ աղյուսակ, էջ 361-365:

Անհրամշտ է մեզ այժմ նաև որոշել, թե Տրդատ Մեծի թագավորության ո՞ր շրջանում և մտաւորապես ո՞ր թվականներին է զրգված արձանագրությունը: Այս խնդիրը լուսարանելիս՝ Հնանկետ է ծառայում այն, որ արձանագրությունը զրգված է եղել, ինչպես վերև տեսանք, Տրդատ Մեծի քրիստոնեությունը ընդունելուց Հետո: Ռեթեմ՝ պետք է պարզել, թե որ թվին Տրդատ III-ը և Հայերը ընդունել էին քրիստոնեությունը:

Այս խնդիրը, զմբավատարք, վերջնականապես զեռ որոշված չէ:

Գեոեռ Մ. Չամչյանի ժամանակները սկսած այդ մասին զերբշտոց կարծիքն այն է եղել, որ Հայերի քրիստոնեության դարձր տեղի էր ունեցել 301-304 թվականներին: Բայց կան նաև գաւնագան այլ ենթադրություններ: Ֆ. Տուրքերիզը, որը մանրասէս ըննել է այս խնդիրը իր «Histoire politique et religieuse de l'Arménie» գրքի Հատուկ Հավելվածում՝¹ մեջ է բերում Հայերի դարձի մասին ականավոր եվրոպացի և Հայ գիտնականների նաև այլ կարծիքներ: Ըստ այդ ենթադրությունների քրիստոնեությունն ընդունվել էր Հայաստանում որպէս պետական կրոն կամ 276 թվականին կամ 285-295 ու կամ 305-311 թվականների միջև:

Վերջերս լույս տեսավ նույն խնդրի մասին «Էջմիածին» ամսագրում Մտ. Մալխասյանցի Հոդվածը²: Վերջինս, Հիմք ընդունելով Ռորենացու Պատմության ժամանակագրական ցուցումները, որոնք Համարում է Հայերի դարձի թվականի ճշտման միակ տպահով աղբյուրը՝ քրիստոնեության Հաստատումը Հայաստանում որոշել է 279 թվականին:

Վերոհիշյալ բոլոր կարծիքները, գլխավորապես, Հիմնված են Ազաթնակեղծի, Ռորենացու և պատմական մյուս Հայ աղբյուրների խառնաշփոթ տեղեկությունների վրա, որոնք վերաբերում են III դարի պատմական անջրբերին: Բացի այդ, պատմագետների ու բանասերների մեծագույն մասը սխալ են

Հասկացել եվսերիուս Կեսարացու Հայտնի վկայությունը Մարտիրոս Գայայի արշավների մասին քրիստոնեյա Հայերի զեռ: Երանք կարծում են, որ Մարտիրոսն Կեսարը 311/312 թվականներին պատերազմել էր քրիստոնեությունը ընդունած Մեծ Հայաստանի զեռ, և կամեցել էր վերահաստատել այստեղ Հեթանոսությունը: Ասկայն, իրապես, ինչպես Հայտնի է այժմ³, նա պատերազմ էր մղել ո՛չ թե քրիստոնեության զեռ Մեծ Հայաստանի, այլ Հռոմեական Հայաստանի, այսինքն՝ Անդրդիրայան երկրներից, մեկի զեռ, որ Գիոզղեախանուսի զորավար Գալսերիոսի 297 թվականի Հաղթությունից Հետո միացվել էր կայսրության:

Միանգամայն պարզ է, Հետևաբար, որ եվսերիոսի վկայությունն այս պատերազմի մասին՝ չէր կարող կուգան ծառայել Տրդատ Մեծի ու նրա երկրի քրիստոնեության զարձի թվականը որոշելու Համար:

Իմ «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» ոտուրեն աշխատության մեջ⁴ ես մտտեռնել էի, որ Տրդատ Մեծի ժամանակ Մեծ Հայաստանը սերտ կերպով միացված էր Հռոմեական կայսրությանը, ոտտի չըտհիվ Հեռց այդ կապի քրիստոնեությունը, որը կայսրության մեջ Հայտարարվել էր պետական կրոն՝ Հաստատվել էր իրրև պաշտոնական կրոն նաև Հայաստանում⁵: Ազաթնակեղծուսի Պատմության վկայությունների բնությունը պարզ ցույց է տալիս, որ Հայածանքերը քրիստոնեության զեռ Մեծ Հայաստանում արձագանք էին Հայածանքների, որ տեղի էին ունեցել Հռոմեական կայսրության մեջ՝ Գիոզղեախանուս կայսր ժամանակ (284-305)՝ նրա իշխանության վերջին տարիներում: Վերաբերումը զեպի բրխատիպաները Հայաստանում ես, Հավանաբար, փոխվել էր 313 թվականից Հետո, Երբ Համաձայն Միլանի Հրովարտակի բրխ-

¹ Տե՛ս Appendix I, «Etude sur la conversion de l'Arménie au christianisme», Paris, 1910, էջ 407-552:

² Մտ. Մալխասյանց, Ե՞րբ են Հայերն ընդունել քրիստոնեություն, տե՛ս «Էջմիածին», 1944, № 1, էջ 22-26:

³ Տե՛ս F. Tournèize, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 443, նաև ուրիշ:

⁴ Տե՛ս «Краткий обзор истории древней Армении», Москва, 1943, էջ 29: Համեմատ նաև իմ աշխատությունը՝ «Месроп Маштоц», Ереван, 1941, էջ 5, ծան. 1:

⁵ Ասաննուպես Հետարրիկ է, որ Ազաթնակեղծուս մոտ Մեծ Հայաստանն անխնկված է սղատակերո կայսերաց, տե՛ս գլ. ժ.Բ. 127, էջ 73 (1909):

⁶ Տե՛ս Ազաթնակեղծուս, Գ. 38, էջ 25, ժ.Բ. 129, էջ 75, ժ.Գ. 154, էջ 87 և ԺԵ, 161, էջ 90:

տոննությունը ճանաչվել էր Հռոմեական պետության մեջ որպես ազատ և իրավահավասար կրոն:

Ըստ այս դիտողությունների՝ կարող է թերևս ճիշտ լինել Նորենացու Պատմության մեջ պահպանված պատճառությունը¹, որ՝ Գրիգոր Լուսավորիչը քահանայապետ էր կարգվել, և Սուրբ Թադևոս առաքյալի աթոռն էր նստել Տրդատի թագավորության (298-330) 17-րդ տարում, այսինքն՝ ճիշտ և ճիշտ Միլանի Հրովարտակից անմիջապես Հևոս (298+ 17) = 314/315 թվականին: Նույն այս պատճառությունը պահպանվել է նաև «Պատմություն Մերջյան Ներսիսի Պարթևի» գրվածքում, որի մեջ Լուսավորչի քահանայապետ կարգվելը ցույց է տրված Տրդատ Մեծի թագավորության ոչ թե տասնյոթներորդ, այլ տասներեքերորդ տարում, այսինքն՝ (298+18) = 316/316 թվականներին²:

Մենք տեսաք, վերև, որ Գառնիի Հունարևն արձանագրությունը վերագրվելու է Տրդատ Մեծին, և գրված պիտի լինի նրա թագավորության այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանում Հաստատվել էր արդեն բրիտանությունը, և ինքը Տրդատն ընդունել էր նոր կրոնը: Արդ՝ Տրդատ Մեծի և Հայերի բրիտանությունից դարձր զինելով 313 թվականից Հևոս՝ արձանագրության ժամանակը կարելի է ենթադրել 315-330 թվականների միջոցում: Առաջադալ է, որ Մովսես Նորենացին նույնպես վկայում է (II, 90), որ Տրդատ Մեծի «Հելլենացի գրով» արձանագրությունը գրված է եղել մտավորապես այն ժամանակներում, երբ Գրիգոր Լուսավորչի Աբիստակես որդին վերագրանք էր Նիկիայի ժողովից:

Որևան, ինչպես տեսնում ենք, Գառնիի Հունարևն արձանագրության ժամանակը որոշվում է ըստ վերահիշյալ մեր դիտողությունների՝ 314/315 թվականից Հևոս, և Տրդատ Մեծի մահից՝ մտավորապես 330 թվից առաջ:

Գառնիի արձանագրության մեր նոր ընթերցումը, ինչպես և Արձավիրի Հունարևն արձանագրությունների մեր նոր լուսավորությունը, ինձ թվում է, կարող են կախված ծառայել ուշագիշտ նոր քննության, թե Լ՛որք են կառուցվել Գառնիի ամրոցը և նրա մեջ գտնվող Հեթանոսական տաճարը:

¹ Գիրք II, գլ. ԳԱ, էջ 242:

² Տե՛ս «Սովիերը Հայկական», Զ. Վենետիկ, 1853, էջ 9:

Այս խնդրի վրա, որ քաջատիկ մեծ կարեորություն ունի Հայկական արվեստի ու ճարտարապետության պատմության համար՝ անհրաժեշտ է մանրամասն կանգ առնել, որովհետև այդ մասին մինչ այժմ եղած ենթադրությունները, ինչպես կտեսնենք, վիճելի են ու անբավարար:

Ինչպես Հայտնի է, զեռես, XIX դարի առաջին կեսում Հայաստան այցելած եվրոպական ճանապարհորդները՝ Ջեյմս Մորիսը¹, Ռ. Կեր-Պորտերը² և Ֆ. Դյուրուան³ նկարագրել են Գառնիի ամրոցի ավերակները և իրենց Հիպոցոմոնին են Հայտնի նրանք քանդակազարդ քարանդակի բեկորների առթիվ: Այս ճանապարհորդների նկարագրություններից կրեում է, որ քաղի Հեթանոսական տաճարից Գառնիի ամրոցի մեջ եղել են նաև արքունի պալատ ու զուցե և այլ շենքեր⁴:

Ճանապարհորդները միանգամայն ճիշտ էին որոշել, որ Գառնիի սյունաշարքով շրջապատված շենքը Հեթանոսական տաճար է: Թորոմանյանի կարծիքը, որ այդ շենքը քաղաքական ընդունելության դահլիճ է... կամ Հովանոց, ինչպես վերև ասացիք, Հավանական չէ: Առանձնապես Հետաքրքիր է տաճարի վերականգնման Դյուրուայի փորձը, որը մասնակնչել էր, որ Հնամակնով եղած բեկորների վրա՝ ճարավոր էր տաճարը վերակառուցել առանց անտեսելու նրա որևէ կարևոր մասը (III, էջ 687): Եվ, իրավի, նա Հենց ինքը կարողացել էր մտավորապես ուրվագծել տաճարի իր վերակազմած արտաքին ճակատը⁵:

Նոր ժամանակներում Գառնիի ամրոցի, Հատկապես, նրա մեջ գտնվող Հեթանոսական տաճարի ավերակների վայրում լուրջ

¹ J. Morier, A Second journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople (1810-1816), London, 1818.

² R. Ker-Porter, Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia, etc. (1817-1820), 2 vol., London, 1821-1822 (Գառնիի մասին երկրորդ Հասորք):

³ F. Dubois de Montreux, Voyage autour du Caucase (1833-1834), Paris, 1839-43, vol. 6 (Գառնիի նկարագրությունը գտնվում է երրորդ Հասորքում):

⁴ Գառնիի ամրոցի մեջ գտնվող արքունի պալատական շենքերը Հիպոցոմոնում է նաև Ն. Բուխխյանը, տե՛ս «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնիի ամրոցում», Երևան, 1933, էջ 3, 4, 12:

⁵ Տե՛ս Ղ. Ալիբան, Այբարատ, Վենետիկ, 1890, էջ 364:

գիտական աշխատանք են կատարել ակադ. Ն. Մատր մասնակցությամբ ակադ. Յ. Բ. Սմիրնովի և ճարտարապետ-արվեստագետ Կ. Կ. Ռոմանովի: 1910-1911 թվականներին նրանք այստեղ կատարել են պեղումներ, բայց են արել կիսով չափ Հողի տակ թաղված տաճարը և կատարել են Հուշարձանների քնդորների հաշվառում ու գրանցում: Մատր և Սմիրնովը եւս, ինչպես և Մորիսն ու Գյուրուսան, այդ շենքը Համարել են անտիկ Հեթանոսական տաճար և ենթադրել են, որ նա Հռոմեական շինություն է և կառուցված է Ք. թվականության II կամ III դարում, այսինքն՝ հայ Արչախունիների իշխանության ժամանակ¹:

Ավելի մոտ ժամանակներում Թորամանյանը, որը տրամադիր էր Համարելու Գառնիի տաճարը Կարթայական քնդունելության դահլիճ... կամ Հովանոց», սրա շինության ու շինողի մասին Հայտնել է Հակոբական կարծիքներ: Իր Հնագույն աշխատություններում նա Հակված էր, Համաձայն Թորեմանցու վկայության, այս շենքը վերագրելու Տրդատ Մեծին², սակայն իր ավելի ուշ շրջանի գրվածքներում նա Հակոբական էր Համարում, որ Գառնիի թև՝ ամրոցը և թև՝ Հովանոցը շինել էր Տրդատ Ա-ն Հռոմից բերած ճարտարապետներով³:

Ինչպես Հայտնի է, վերջին այս կարծիքն աշխատել էր Հիմնադրել ու ապացուցել նաև Ն. Բունիաթյանը Հուշարձանի Հնագիտական-ճարտարապետական ուսումնասիրությամբ:

«Հուշարձանի էլ ավելի ուշադիր քննուճը.— ստում է Բունիաթյանը.— մեզ բերում է այն եզրակացություն, որ տաճարի քնդահունը կառուցվածքը և մանրամասնությունների մշակումը բավականաչափ ճիշտ կերպով որոշում են Հուշարձանի ժամանակը ոչ ուշ քան առաջին դարը Ք. թվ.»⁴:

Բունիաթյանի կարծիքով, Գառնիի կառուցվածքների շինողը

¹ Տե՛ս Կ. Կ. Մարր, Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919, էջ 15, նաև նույնի՝ «Азия», Ленинград-Москва, 1934, էջ 49:

² Տե՛ս «Նշումներ Հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942, էջ 167, 174:

³ Տե՛ս նույնը, էջ 85 և 282:

⁴ Տե՛ս Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պարտիսի կից Գառնի ամրոցում, էջ 5:

ո՛չ թե Տրդատ Մեծն էր, այլ Տրդատ I-ը, որը Հռոմից իր Հետքերը էր քարադործ վարպետներ¹:

Նույն այս ենթադրությունը վերջին ժամանակները տիրող է Հանրահանում նաև Գառնիի նորագույն Հունարեն արձանագրության առթիվ գրված Հողվածներում, որոնք լույս են տեսել Հայաստանի պարբերական մամուլում:

Արդ՝ ճիշտ է արդյոք Հնագետների և ճարտարապետների քնդահունը այդ Համոցում, որ Գառնիի կառուցվածքները Արչախունյաց շրջանի և Հավանոցն, Ք. թվականության առաջին դարի գործ են և շինված են Հռոմեական ճարտարապետական արվեստի ոճով ու Հինոմից բերված վարպետների մեղով:

Իմ «Արձագրի Գառնի արձանագրությունները նոր լուսարանություն» գեղեցյան վերջում ես նոր ենթադրություն էր արել, որ Գառնիի Հեթանոսական տաճարի շինությունը վերագրվելու է ո՛չ թե Արչախունյաց շրջանին, այլ Արտաշեսյան կամ Երվանդյան: Նույն գեղեցյան մեջ ես մատնանշել էի, որ այս կարևոր խնդիրը պետք է լուծեն մասնագետ արվեստագետները Հուշարձանի Հնագիտական-ճարտարապետական մանրագիծն քննությանը:

Սակայն ավելի մոտ ծանոթանալով այս խնդրին՝ ես Համոց-վեցի, որ Գառնիի ամրոցի ու տաճարի շինության ժամանակաշրջանի լուսարանության Համար անհրաժեշտ է, ամենից առաջ, լավ տեղյակ լինել Հայ ժողովրդի պատմությանը և, զգնափորապես, քննական-պատմական այն նոր ուսումնասիրություններին, որոնք լույս են տեսել վերջին տասնամյակներում:

Մենք կուսանելը ներքև, որ վերաբնություն ենթարկելով Գառնիի Հուշարձաններին վերաբերող Հնագիտական-ճարտարապետական ուսումնասիրությունները պատմական տեսանկյունով՝ ո՛չ միայն պարզվում է այդ Հուշարձանների շինության ժամանակը, այլ նաև պարզ որոշվում է Հայաստանի ճարտարապետական արվեստի այն փառահեղ Հին ժամանակաշրջանը, որն անտեսվել է թև՝ Հին և թև՝ նոր Հնագիտական ու պատմական-ճարտարապետական աշխատություններում:

¹ Տե՛ս Ն. Բունիաթյան, էջ 4-6:

Միտ տարրինակ է, որ Հնագետները, որոնք Գառնիի ամրոցը և տաճարը կառուցված են Համարում Հայ Արշակունիների ժամանակ՝ աշխատող են արել, որ այդ ամրոցը գոյություն է ունեցել, ինչպես պարզորոշ վկայում է Տակիտոսը, Արշակունիների Հայաստանում Հաստատվելուց առաջ: Գեոնե Ք. թվականություն 51 թվականին, երբ վրաց Փարսաման թագավորի որդին՝ Հուզարմիզը, կոխ էր սկսել Հայաստանի թագավոր Միհրդատ Վրացու դեմ՝ վերջինս, պատմում է Տակիտոսը¹, Հանկարծակի ներխուժումից ահարկված՝ փախել ու պատասպարվել էր Գառնի ամրոցում (in castellum Gorneas):

Տակիտոսի վկայություններից զգվար չէ Հետեցնել, որ Գառնին արդեն այն ժամանակ աննստույց բերդ էր՝ շրջապատված անառիկ պարիսպով: Գծվար էլ նաև կառնել, որ նույն այդ ժամանակ, I դարի առաջին կեսում (Ք. թվ. Հետո), գոյություն են ունեցել, բացի Գառնիի ամրոցի պարիսպներից, նաև նրա մեջ գտնվող պալատական շենքերը և հեմանտական տաճարը: Այս պարզ երևում է նրանից, որ, ինչպես ամրոցի պարիսպները, նույնպես և արքունի պալատն ու տաճարը, միևնույն շինարարական տեխնիկայի ու ժամանակի կառուցումներ են, և ինչպես են մեծագանգված սրբատաշ որմնաքարերով՝ կապված միմյանց Հետ երկաթե կապերով²:

Ծառ պարզ է, իհարկե, որ Գառնիի մոտումենտայ Հուշարձանների կառուցումը միանգամայն անհավանական կլիներ ենթադրել օտարազգի թագավորների անկալուն իշխանության ժամանակ Հայաստանում (I դարի առաջին կեսում Ք. թվ. Հետո) և կամ Արտաշեսյանների թագավորության խռովահույզ և երկրուն շրջանում (I դարի երկրորդ կեսում Ք. թվ. ա.): Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, ավելի քան Հավանական կարելի է Համարել, որ Գառնիի վերահիշյալ կառուցվածքները ոչ մի կապ չունեն Հռոմեական ճարտարապետության և Հռոմեական արվեստի Հետ: Նրանք, Հավանորեն, Հայաստան մուտք գործած Հելլենիստական կուլտուրայի մի մնացորդ են, և վերագրվելու են

կամ Առաջին Արտաշեսյանների և կամ Երվանդյանների թագավորության ժամանակաշրջանին:

Պետք է սակ, որ Բունիաթյանը, Համարելով Գառնիի տաճարը Հռոմեական տիպի տաճար՝ աշխատել է իր այս պնդումը Հիմնավորել չեների Հնագիտական-ճարտարապետական բնութագրամբ: Սակայն, իրապես, ինչպես զգվար չէ տեսնել, նրա բնութիյունը Հաստատում է, ընդհակառակը, որ Հուշարձանը կառուցված է ո՛չ թե Հռոմեական, այլ Հելլենիստական ոճով: Ուշագրավ են այդ տեսակետից նրա Հետևյալ դիտողությունները.

1. Հունական տաճարները, — ստում է Բունիաթյանը, — կանգնած էին բոլորովին առանձնացած և տեսանելի էին բոլոր կողմերից. մինչդեռ Հռոմեական տաճարները նայվում էին, գլխավորապես, ֆորումի կամ Հրապարակի կողմից, ուր զրահը զուրս էին զայիս իրենց արտաքին ճակատով: Այս տեսակետից մեր Հուշարձանը մոտենում է Հունական մեներին³:

2. «Տաճարի (Գառնիի) իր պլանի բնույթով կարելի է վերադարձել Հունական այսպես կոչված «Հեկտոստիլյան» (Հարյուրոշյան) պերիպտոս»-ների տիպին, այսինքն տաճար, որ բոլոր կողմերից շրջապատված է սյունաշարով և ունի պրոտիք 6-ական սյուներով՝ ծայրի (տորքերի) Փասաղներից յուրաքանչյուրում»⁴:

«Հռոմեացեց մտտ ամրոց՞ չենքը շրջապատող կոյտնադի և անբնՀատ ստիճանավոր ստոյակայութիւնը որոշ չափով զրկում է տաճարներն այն ամրոցջութիւնից, որ մենք տեսնում ենք Հունական տաճարներում»⁵:

3. «Տաճարի օրդերը Հունիական է: Հռոմեացեց տաճարներում այդ օրդերը գործազրկվում էր Հազվագյուտ դեպքերում»⁶:

4. «Մարխիսն աչքի է ընկնում զեղեցիկ և ճաշակավոր պրոֆիլով (պատկ. 23, 29, 86)», թևկուղ և նա չի պարունակում շատ

¹ Tacitus, Ann., XII, 45.

² Համանառ Ք. Թորամանյան, Նյութեր, էջ 136, 145 և 282:

³ Նե՛ս Բունիաթյան, Հիմնադրական տաճար..., էջ 7:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույնը, էջ 8:

մանք մասեր, որոնք խորթ են Հասարակ օրդերներին: Երան կարելի է նմանեցնել այսպես կոչված «Առափկան բազաններին»¹:

5. «Առաստաղի այսպիսի նորը դարձացումը Հիշեցում է Հունական ծածկերը»²:

Փառնիի տաճարի ճարտարապետական ոճի այս առանձնահատկությունները, ինչպես տեսնում ենք, բնավ չեն կարող ապացույց ծառայել, որ այդ Հուշարձանն իբր թե պատկանում է Հռոմեական արվեստի փառաբանչ շրջանին:

Պետք է ասել, որ Հուշարձանի ճարտարապետական ոճի նկատմամբ Բունդախյանին Համաձիտ է նաև Քորանանյանը: Սակայն նրա դիտողությունները ևս Հուշարձանի Հռոմեական ոճի մասին չեն կարող Համոզիչ Համարվել:

Ենթադրելով, որ

«Հռոմի մեջ դաստիարակությունը ստացող Տրդատը միայն կարող էր այս ճաշակը ունենալ և անոր ոճն ընդհանրացնելու ձգտիչ Հայաստանի մեջ»³:

Քորանանյանը միաժամանակ ինքը շատ ճիշտ մատնացույց է արել, որ Տրդատի կառուցած շենքի բանդակները միանգամայն օտար են Հռոմեական արվեստին:

«Երբ քանդակներու մասերն առանձին բնենք,— սառւմ է նա,— մեծ մասամբ Հռոմեական արվեստին օտար կզտենք, և ինչ մասեր որ Հռոմի արվեստին կպատկանին, անոնք այ թե՛ Համաչափություններով, և թե՛ քանդակագործական ոճով դարձայ տեղական ոճին ենթարկված բռնի նմանություններ են»⁴:

Մեր այս թուռցիկ դիտողություններից անգամ երեսու՛ է, որ Փառնիի Հեթանոսական տաճարի ճարտարապետական ոճի խնդիրը կարող է նոր ու ավելի ուշի՛մ բնութխան: Այդ տաճարի տիպը և ճարտարապետական ձևերը, ինչպես ասացինք, Հռոմեական չեն, և Համարվելու են Հելլենիստական:

¹ Տե՛ս Ն. Բունդախյան, Հեթանոսական տաճար..., էջ 9:

² Նույնը, էջ 13:

³ Տե՛ս Ք. Քորանանյան, Նյութեր..., էջ 174:

⁴ Նույն տեղում:

* * *

Փառնիի կառուցվածքների շինության ժամանակի խնդիրը վերաբնեցիս՝ Հնագետներն ու ճարտարապետները, նախ և ստաջ, պետք է նկատի առնեն այն նոր լուսարանությունները, որոնք ևս ավել կի իմ նախորդ աշխատություններում Երվանդյան Հայաստանի և Երվանդաշատի ու Արմավիրի մասին:

Դեռևս 1930 թվականին «Հայաստանի անտեր ու քաղաքների մասին» իմ աշխատության մեջ ևս մատնացույց էի արել, որ Երվանդաշատ քաղաքը Հիմնել էր III դարի վերջերս կամ II դարի սկզբում Ք. թվականությունից առաջ Երվանդ Վերջինը, որն իր աթոռանիստ կենտրոնն Արմավիրից փոխադրել էր Երվանդաշատ¹:

Արմավիրի Հունարեն արձանագրությունների իմ նոր լուսարանությունը, որ արդեն լույս է տեսել, վերջնականապես, Հաստատում է նոր այդ Հետևությունը, և միևնույն ժամանակ Հնարավորություն է տալիս Երվանդյան Հայաստանի մասին անկուկարելու ու Հնաաքրբրական նոր եզրակացություններ:

Արձանագրությունների ընթերցմամբ պարզվեց, որ Արմավիրում, որը Երվանդյանների կրոնական կենտրոնն էր՝ գոյություն է ունեցել Հունական տաճար, որի սպասավորները եղել են Հելլեններ կամ Հելլենացած տեղացիներ: Նաև Հայտնի եղավ, որ Երվանդյանների մարդաբազարը Արմավիրից Երվանդաշատ փոխադրվելուց Հետո, այս վերջինում իշխում էր Երվանդ Վերջինի եղբայր Միթրաք, որը զերազույն բուրժն էր այս կրոնական կենտրոնի: Արմավիրի Հունարեն արձանագրությունները, բացի այդ, ցույց են տալիս, որ Հելլենիզմը մուտք էր գործել և տարածվել Երվանդյան Հայաստանում դեռևս սելևկյանների ժամանակ III դարում Ք. թվականությունից առաջ, և որ այնտեղ գոյություն են ունեցել Հունական տիպի տաճարներ:

Հելլենիստական կուլտուրայի գոյությունն Արարատում և Եփրակում Երվանդյանների իշխանության ժամանակ՝ բացառիկ կարևոր մի փաստ է, անշուշտ, որ այսու Հետև պետք է միշտ նկատի ունենան ո՛չ միայն պատմագետները, այլև Հնագետները և արվեստագետները: Այս վերջինները, գտնվելով Պորենացու ու ավանդական Հայ պատմության ազդեցության տակ, և Համարե-

¹ Տե՛ս Յ. Ա. Մանգուկ, О торговле и городах Армении, էջ 96-98:

յով երվանդաչ...-ի Հիմնադրի երվանդ վերջինին՝ Արշակունյաց ցեղից՝ թյուրքմացարար կարծել են, որ երվանդյան չրջանի Հայկական Հուժկունները վերաբերում են Ք. թվականության I դարին, այսինքն՝ Արշակունյաց ժամանակաշրջանին: Այս Հիմնականն սխալ է պատճառը, որ Քորամանյանը խիստ Հազգագրել Համարելով նախաբերտունական շերտերի զոլոթիցունը Հայաստանում՝ Հայկական ճարտարապետության Հնագույն չրջանը ենթադրում է Ք. թվականության I դարերից մինչև V դարը¹:

Իրապես, ինչպես այժմ պարզվում է, Հայկական ճարտարապետության ու արվեստի վաղագույն չրջանի Հուշարձաններ, որ անտեսել են Հնագետները, պետք է ընդգրկել երվանդաչառի, երվանդակերտի, Արմավիրի, Գառնիի և նրանց ժամանակակից այլ տեղերի Հուժկունները: Այս վաղագույն ժամանակների ճարտարապետության բնույթն ու Հիմնական Հատկանիշն է կղեր կառուցումների նման շինելակերպը՝ նրանց առանձնահատուկ շինարարական տեխնիկան:

Հայտնի է, որ ինչպես Գառնիի ամրոցի ու տաճարի, նույնպես և երվանդյան Հայաստանի մյուս կենտրոնավայրերի պարիսպներն ու շենքերը շինված են կղեր, մեծ մասամբ, մեծազանգված որձաբարձրից, որոնք միմյանց միասնալիցված են կղեր երկաթով ու կապարով: Գուցե Հենց այս է կղեր պատճառը, որ Հնագույն այդ Հուշարձանները, անվնաս մնալով Հազարամյակների ավերիչ ազդեցությունից՝ պահպանվել են մինչև մեր օրերը:

Քորամանյանի Հաղորդած տեղեկություններից կրեւում է, որ երվանդաչառի ու Գառնիի որմնաշինության տեխնիկայի տարբերությունը միայն այն է, որ երվանդաչառի մեծազանգված բարձրն անտաշ են², իսկ Գառնիինը՝ սրբատաշ: Եթե Քորամանյանի այս ցուցումը Հաստատել երվանդաչառի ավերակների նոր Հետազոտությանը, այդ դեպքում՝ կարելի կլինի ենթադրել, որ Գառնիի որմնաշինությունը զարգացած ձև է երվանդաչառի շինարարության: Այս զարգացած ձևի ժամանակը Հայկական կլինի ենթադրել կամ նույն երվանդյան ժամանակաշրջանում, կամ թերևս սրան Հաջորդող Արտաշեսյան չրջանի առաջին կեսում, երբ Հայաստանում Տիգրան-Արտաշազգի ժամանակ ուժգին կերպով զարգանում էր Հելլենիստական կուլտուրան:

Ինձ ավելի Համանական է թվում առաջին ենթադրությունը, որովհետև, ինչպես ներքև կտեսնենք, Հենց երվանդյանների ժամանակ Գառնիի շենքերի սրբատաշ բարձրով կառուցված է կղեր նաև Արմավիրի պարիսպը:

Քորամանյանը, թվես չի կարողացել որոշել վերահիշյալ Հուշարձանների ժամանակը, սակայն միանգամայն հիշտ մատնանշել է, որ նախաբերտունական ժամանակներում կառուցված Հայաստանի բերդերը, որոնք շինված են մեծազանգված տաշված որձաբարձրով՝ շարունակությունն են ու զարգացումը Հայաստանի մեջ նախապես զոլոթիցուն ունեցած բազմաթիվ կլիկոպան շինությունների³:

Քորամանյանի այս գիտազոլությունն արժանի է Հատուկ ուշադրության: Ի՞նչ Միջնական տեսություն Հայ ժողովրդի պատմության» առաջին Հատորում և ի՞նչ ճշմանոտ տեսություն էին Հայաստանի պատմության» ուսեսերն աշխատության մեջ նույնպես մատնացույց էր արված, որ Հին Հայերի կուլտուրական զարգացման Հիմքը և պատվանդանը կազմել է Ուրարտուի բարձր կուլտուրան, և որ Հայերն իրենց Հարթական նախա-Հայերից և, մասնավորապես, ուրարտացիներից ժառանգել էին մետաղագործությունը և արհեստները⁴: Արդ՝ խիստ ուշադրալ է, որ նրանք իրենց պատմական անցյալի Հնագույն չրջանում ժառանգել էին ուրարտացիներից նաև սրանց բարաշինական բարձր տեխնիկան:

Ար այս նոր գիտազոլությունները կարող են, ինչպես տեսնում ենք, բոլորովին նոր ընթացք տալ Հայկական ճարտարապետության Հնագույն չրջանի Հետազոտ ուսումնասիրություններին: Ուստի ավելորդ չեմ Համարում Հիշատակել ավելի ընդարձակ կերպով երվանդաչառի ու այլ վայրերի Հուշարձանները, որոնց շինարարական տեխնիկան կապ ունի Գառնիի ամրոցի ու տաճարի շինարարության Հետ:

Բացի Գառնիի ամրոցից ու տաճարից, որ շինված էին երկաթե

¹ Տե՛ս Ք. Քորամանյան, Նյու Յիք... էջ 84:

² Նույնը, էջ 146:

¹ Տե՛ս Ք. Քորամանյան, Նյու Յիք... էջ 85:

² Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Հատ. II, Երևան, 1944, էջ 34 և «Краткий обзор истории древней Армении», Москва-Ленинград, 1943, էջ 5-6:

կայերով միմյանց միացված մեծազանգված ու մարուք տաշված պինդ որձաքարերով՝ Թորամանյանի «Նյուֆրանկ» Հայկական ճարտարապետության պատմության» մոզոլաժուի մեջ մատանաշված են նաև Համապատասխան Հետևյալ Հուշարձանները.

1. «Նյուֆրանկ...» էջ 283՝

«Այս տարվան ուղեորության վերջին սահմանը եղավ Երվանդաշատ և Երվանդակերտ ըսված երկու Հին քաղաքներու ավերակները, որոնք, ըստ Սորանյանցի, կոտորվին Ախուրյան գետի աջ ու ձախ ափերուն վրա, Արարս գետի խառնարանին մոտ:

Ճանապարհու Քաղաքանուն էր, ուստի առաջին անգամ Հասա Ախուրյանի աջ ափը, ուր պետք է գտնվեր Երվանդաշատը: Առաջորդներս մի քանի ցիրուցան ավերակներ, ցույց տվին գետակերպին ժողով: ... Առանցքն քիչ Հեռու, դեպի Հյուսիս-արևմուտք կըմարտի մի ուրիշ շինություն, որ իսկապես բազմադարյան Հնուֆրանկ գրոշմն ունի իր վրա. որձաքարի մեծամեծ զանգվածներով շինված են պատերը, որ բարձրյան Հայ շինությունների ամենահին շրջանին կվերաբերին»:

2. Նույնը, էջ 284՝

«Երբ անցա Ախուրյանի ձախ ափը, արդեն ամեն բան կերպարանափոխ եղավ, ամեն քայլափոխին կնկատվին մեծամեծ շինություններ՝ ցրված մինչև Հաջի-Քայրամ գյուղի ստորին սահմանները: Գետակերպի Հեռ միասին մինչև Հաջի-Քայրամ ձգվող բարձր տարն այսօր այ ինքնին մի մեծ բերդ կարելի է Համարել, և ամեն Հարձարություններ կներկայացնեն ի Հնումն բոլորովին անտախի զարձակներ: Արդեն կատարին վրա ամբողջ երկաթուղի-ձայնը կերևին որձաքարերով Հյուսված աՀավոր պարիսպներու մնացորդները, որոնք տեղ տեղ 4-5 մետր բարձրությամբ կերևին:

Բացի սարը վերևն շրջապատող պարիսպներն, նաև կերևին առանձին մեծ բերդամասերու բաժանումներ՝ լանջի գոտիպայրեն ցած ձգված, որոնց մի տեսակ նմանություններն են Անիի միջնաբերդի ստորտի բաժանումները Լրզ-Ղալայի Հանդեպ»:

3. Նույնը, էջ 285՝

«Գյուղը [Հաջի-Քայրամը], կարելի է ըսել, ամբողջովին շրջապատված է պարտեզներով ու բանջարատեղներով, ստոնջ բուրբուխը իբրև շրջանակ շարժված են Հին շինություններն անտախված մեծազանգված քարեր, որոնց վրա պահված են տակավին երկաթի կապերու տեղերը գրեթե նույն ձևով, ինչպես որ

Անիի մեջ գոյություն ունի Միջնաբերդի՝ Ծաղկոցաձորի կողմի գոսն քառակուսի բուրգերու վրա»:

4. Նույնը, էջ 330՝

«Հեղա որձաքարերով բերդը, պարիսպներ և ուրիշ զանազան շինքեր շինելու սովորությունը շատ Հին է Հայոց մեջ, գոնե անմիջապես V դարն անկողն պետք է փնտրել առանց կրաշաղախի որձաքարերով շինքեր կառուցելու սովորությունը: V դարն մեզի Հասած Հրաբայային կրատաջ քարերով կրաշաղախ շինվածքներու օրինակներ քիչ չեն: Նույնիսկ III և IV դարերուն այ զանվածուն մեծ Հավանականություն կա, այս պատճառով այ ինչի Հավանական կեմով, որ Տեղորի, Քաղաքանի և Երվանդակերտի առանց չազախի Հեղա որձաքարերով շինված բերդերը նախաքրիստոնեական դարերուն կպատկանին»:

5. Նույնը, էջ 84-85՝

«Քարի գործածության սովորությունը, ինչպես երևում է, մշտանգություն մնացել է մասամբ պարսիկներեն, բայց առավելապես ուրարտացիներեն: Այս վերջիններին շինությունաց մնացորդները, որ զեռ գոյություն ունին մեր օրերուն, շինված են տաշված ու կոկված բազալտ քարերով (բացառությամբ ամբողջերի պատերի): Այս օրվան մեր թանգարաններուն պահվող բոլոր բեռնաման արձանագրություններ՝ Հղկված բազալտի վրա փորագրված լինելի զատ, կան նաև շինություն կարևոր մասնորդներ, որոնք ցույց են տալիս, թե մասնավոր շինքեր ևս շինվում էին բազալտի մեծածավալ Հղկված քարերով: Այս մասնորդները կարելի է տեսնել Արձախիում, Արտաշատի տեղում, Գվինում, նույնիսկ Անիում, ուր նախաքրիստոնեական ժամանակի շինված բերդերը տաշված որձաքարով են շինված: Անշուշտ, այս երևույթը պետք է Համարել Հայաստանի մեջ նախապես գոյություն ունեցող բազմաթիվ կիկլոպյան շինությունաց շարունակությունը և նրանց զարգացումը»:

Թ. Թորամանյանի այս նկարագրությունները և դիտողությունները, անշուշտ, խիստ կարևոր են, որովհետև նա Հայկական Հին ճարտարապետությունն ուսումնասիրել է քննական-Համեմատական եղանակով, և Հայաստանի Հուշարձանների մասին տալիս է միշտ Հմուտացի ու արժեքավոր բացատրություններ: Սակայն նա, անիրագուծ լինելով քննական այս պատմապատկան նորագույն նվաճումներին՝ չի կարողացել որոշել Երվանդաշատի

և Երվանդակերտի Հնուխյունների ճշգրիտ ժամանակը, և ներկազրկ է, որ դրանք նախաբրիտանական ժամանակի և Արշակունյաց շրջանի Հնուխյուններ են: Բրապես, ինչպես վերև տեսանք, Երվանդաշատի ու Երվանդակերտի բերդերն ու շենքերը կառուցել էր Երվանդ Վերջինը՝ III դարի վերջերում կամ II դարի սկզբներում՝ Ք. թվականությունից առաջ:

Առանձին ուշագրություն արժանի են Թորամանյանի գիտությունները երկաթի գործածության մասին Երվանդաշատի ու Գառնիի բերդերի ու շենքերի կառուցման ժամանակ, որ ավելորդ չեմ համարում մեջ բերել ամբողջությունիցս:

1. ՆյուՄեր, էջ 145-146՝

«Հայաստանում երկաթի բազմաթվանի գործածություն մասին տեղեկություններ չատ կան գրական աղբյուրներում: Հնագիտական Հետազոտությունները ևս պարզել են, որ երկաթը շատ է գործածված եղել Հին Հայաստանում, այդ տեղեկություններից մի քանի կարևորագույնների մասին կհիշատակեմ այստեղ: Ըստ Մովսես Խորենացու, առաջին դարում, Երվանդաշատի բերդի կառուցման ժամանակ, Երվանդը չի եղել ավելց երկաթե սանդուխտը, որոնց շինություն կերպերը թեև այժմ մեզ հայտնի չեն, բայց պետք է, որ այն ժամանակի երկաթագործությունը զարգացման որոշ աստիճանի հասած լինել: Ռոբենացին գովեստով է խոսում այդ սանդուխտների ճարտարորեն շինված լինելու մասին: Սակայն ես ինչ տեսել եմ Երվանդաշատի բերդի մեջ պարիսպներից թափված քարերի վրա երկաթե կապի նշանները: Երվանդաշատի բերդը շինված էր հնադարյն պարիսպների նման, մեծազանգված որձաքարի անտաշ բարձրով, որոնք միմյանց մտո լավ ամրացնելու համար, կպցված էին երկաթե կապերով, թեև այժմ երկաթները հանված են, սակայն կապի տեղերը փորված մնում են քարերի վրա: Հաջի-Բայրամ գյուղում շատ կարելի է տեսնել այս քարերից, որոնք ցած են գլորվել բերդից, և գյուղացիք, օգտվելով մեծ զանգվածներից, գլորել, բերել են ու իրենց մրցատանների և այգիների շուրջը պարիսպ շինել:

Նույն երկաթե կապի Հեռքեր այժմ կարելի է տեսնել Գառնիի Տրդատա բերդի ավերակների մեջ: Այս բերդն ու նրա մեջ հռոմեական ոճով կառուցված զեղեցիկ Հովանոցը շինված են

մեծազանգված որձաքարով ու կրաշաղախով¹, այնուամենայնիվ բոլոր քարերը միացած են երկաթե կապերով: Ոչ միայն պատերից բանգված քարերի, այլև կանգուն մնացած պարիսպների վրա, քարերի միացման տեղում, նկատվում են երկաթե կապերի գոյությունը սպացույցները:

2. Նույնը, էջ 355՝

«Արարատյան գավառներու մեջ, քացի Գառնին և Երվանդաշատեն, ուրիշ ոչ մի տեղ Հին Հիշատակագրությունում մեջ չեմ տեսած երկաթի գործածություն: Աստիք այ հազիվ հասնեն մինչև IV դար: Անիի մեջ այ կան թեև երկաթի գործածության Հետքեր, անոնք այ կպատկանին շատ Հին դարերու՝ Հավանաբար կամ-սարականներու տիրապետության շրջանեն ավելի առաջ»:

Թորամանյանի այս վկայությունները երկաթե կապերով միացված քարերի մասին Երվանդաշատում, Գառնիում և Անիում, թեև շատ կարևոր են ու Հետաքրքիր, սակայն նրա այս վկայությունների մեջ երկաթի գործածությունը Հայկական ճարտարապետության Հին շրջանում թյուրիմացաբար ցույց է տրված Ք. թվականությունից IV դարում: Մենք տեսանք սակայն վերև, որ Երվանդաշատա քաղաքը և նրա սմբուխյուններն ու պարիսպները կառուցել էր, ինչպես շատ միտ վկայում է Խորենացին, Արտաշեսյան զինաստիպի Հիմնադրի, Արտաշես Ա-ի, Նախորդը՝ Երվանդ Վերջինը: Շատ պարզ է, որեհմ, որ Երվանդաշատում և, ամենայն հավանականությամբ, նաև Գառնիում ու Անիում՝ քարերի կապումն իբրև երկաթե կապերով՝ որմնաշինության հաստիկ եղանակ է, որը գործածակն է եղել Հայաստանում Թորամանյանի մասնակցած ժամանակից ավելի քան Հինգ հարյուր տարի առաջ՝ Երվանդյանների իշխանության ժամանակաշրջանում:

* * *

Երվանդաշատի կառուցման ժամանակի ճշտումը կարող է թեևն երկվես ծառայել որոշելու, քացի Գառնիի ամբողջ ու տաճարի, նաև մեծազանգված որձաքարերով շինված և Երկաթե

¹ Ք. Թորամանյանի այս տեղեկությունը կարող է ստուգման արժեհան Ն. Բուխթյանը, որը շահագրկել է Գառնիի հուշարձանները, վկայում է, որ շենքերի պատերը սրբատաշ քարերով կին առանց շաղախի, սեւ «Նիմանուական տաճար...», էջ 7:

կապերով անբացված Արմավիրի ու Անիի նախնական շինու-
թյունների ժամանակը:

1880 թվականին Արմավիրում պեղումներ էին կատարել
Ա. Գ. Երիցյանը և Ա. Ս. Ուվարովը: Վերջինս տվել է Արմավիրի
բլրի զազաբնի վրա գտնվող բերդապարիսպի ու նրա աշտարակի
հետևյալ նկարագրությունը¹.

«Նույնպես ուղիղ պարիսպները, նույնպես և աշտարակի պա-
տերը՝ ունեն միևնույն լայնությունը — մոտ 4 արշին: Ներսի ու
զրսի կողմից երանք երեսնապատված են քառակուսի մեծ
բարերով սև-կապույտով բազալտի լավայից, որոնք չորս կող-
մից ուղիղ տաշված են: Այդ բարերն ունեն երկու արշին հաս-
տոթյուն և զրանց կողերում նկատելի են փոսեր՝ ինչ-որ
մետաղյա սրահնազակապեր ամրացնելու համար: Մակերևու-
թյան չորջապատը տաշված է ուղղանկյուն երկազվոր ձևով, իսկ ամ-
բող միջին մասը դուրս է ցցված դարավանդի (bossage) նման:
Այսպիսով բարերը, դարավանդ լինելով միասին՝ չընթացնում են
իրենց ակոտիկով անբողջ քառանկյուն մակերեսը, ուստի և
դարավանդը լավ աչքի է ընկնում:

«Պատերի այսպիսի որմնաձևը, — ասում է Ուվարովը, — ինչպես
ևս հետո ցույց են տալու՝ նույնաման է Հայկական IV դարի
ուրիշ Հուշարձանի (Գառնիի) որմնաձևին և, հետևապես, սրանք
հին Արմավիրի ավերակները չեն, այլ ինչ որ բերդի նույն IV դարի
Քրիստոսից հետո»:

Ս. Ուվարովը, ինչպես տեսնում ենք, համարում է Արմավիրի ու
Գառնիի իր հետարձանած Հուշարձանները տեխնիկական միև-
նույն շինակերպի կառուցվածքներ և, կարծելով ըստ Սորո-
նացու, որ Գառնիի անբողջ շինված է եղել Ք. թվականության
IV դարում՝ ենթադրում է, ընդհանրապես, որ նաև Արմավիրի
բլրի զազաբնի պարիսպը պետք է կառուցված լիներ նույնպես IV
դարում:

Ուվարովի ժամանակագրական այս որոշումը հարկավ ճյու-
րինացության արդյունք է: Սակայն նրա դիտողությունը

Հուշարձանների տեխնիկական-շինարարական համանմանու-
թյան մասին արժանի է հատուկ ուշադրության:

Համառոտ մեր վերահիշյալ դիտողությունների, ինձ թվում է,
կարելի է միանգամայն հնարավոր ու հավանական համարել, որ
Արմավիրում, որը հնագույն ժամանակներում ուրարտական բեր-
դաբազար էր և հետագայում ամրոտանիստ և կրոնական կենտ-
րոնն էր դառնել Երվանդյան Հայաստանի՝ նոր պարիսպներ կա-
ռուցելուց հետո, կառուցված լինելով III դարում Ք. թվականու-
թյունից առաջ: Որ Արմավիրի պարիսպները, ինչպես մասնաւոր
է Մ. Նիկոլսկին², ուրարտական ժամանակակից բարատաշվածք
և ռուստովկա (bossage, рустовка) են ունեցել՝ այդ չէ կարող խոչ-
ընդոտ լինել մեր ենթադրության, որովհետև, ինչպես վերև
ասացինք, Երվանդյան շրջանի շինարարությունը շարունա-
կությունն էր և զարգացումը ուրարտացիների շինարարական
տեխնիկայի:

Այս խնդիրը կարող է, համենայն զեպ, հատուկ բնույթյան
հնագիտների ու ճարտարապետ-արվեստագետների կողմից,
որոնք պետք է միաժամանակ պարզեն, թե արդյոք բարերի իրար
միացումը երկաթիով ու կապարով զործարգվել է միմյան Եր-
վանդյան Հայաստանում, թե նաև Ռարտուտում:

Պետք է ասել, որ Երվանդյան ժամանակաշրջանի Հուշար-
ձանների սխալ ժամանակադրումը հիմք է ծառայել ոչ միայն
Ուվարովի անընդունելի ենթադրության, այլ նաև Կ. Տրեվերի:
Բ. Պրոտրովկու «Ռարտուտի պատմությունն ու կուլտուրան»
աշխատության առթիվ զրգած իր գրախոսականում Կ. Վ. Տրե-
վերը շատ հետաքրքիր մի դիտողություն է արել², որ Մուսասիրի
ուրարտական տաճարի և Գառնիի տաճարի շինություններն
ունեն, ըստ երևույթի, որոշ գեներալի կապ, և որ նրանք երկուսն
էլ շինված են, հավանորեն, ընդհանուր միևնույն նախագծով,
որովհետև երկնիքը կառուրներով են, որոնց ճակատը պահում է
սյուներով, և ունեն մուտք ստիճաններով: Տրեվերը կարծում է,
որ ուրարտական սասանահատկություններ ունեցող Գառնիի
տաճարը հայերը ստացել էին Հռոմի միջնորդությամբ զբաղի,
Ք. թվականության II դարում:

¹ Տե՛ս՝ **М. В. НИКОЛЬСКИЙ**, Материалы по археологии Кавказа, V, էջ 57:

² Տե՛ս՝ «Известия» Академии Наук СССР, серия истории и философии,
т. II, № 2, 1945, էջ 120:

¹ Տե՛ս՝ **А. С. Уваров**, Исследование местности, на которой предполагались
развалины Армавира. Протоколы Подготовительного комитета V Арх. съезда
в Тифлисе, Москва, 1882, էջ 443 և 444:

Այս խնդիրը եւ ստանում է այժմ բոլորովին այլ լուսարարություն: Եթե ճիշտ Համարվեն Տրեվերի գիտողությունները Գառնիի տաճարի ուրարտական պլանի մասին, այդ դեպքում միանգամայն Հավանական կլինի ենթադրել, որ այդ առանձնահատկությունը եւ, ինչպես եւ քարաշինական վերահիշյալ տեխնիկան, Երվանդյան Հայաստանը մտառելի էր անմիջաբար ուրարտական նախորդ ժամանակաշրջանից, ե ոչ Հռոմից:

* * *

Վերաբնութիւն կարող եւ, իմ կարծիքով, նաև Անիում գտնված խորանարդան մեծադանդավաճ որձաքարերի խնդիրը, որոնք նույնպես ունեն՝ Երվանդաշատի, Արձափրի եւ Գառնիի վերահիշյալ որձաքարերի նման՝ երկաթե կապերի Հետքեր: Անիի խորանարդան վիթխարի քարերը մանրամասն Հիշատակված են եւ նկարագրված ահպ. Ն. Մատի Անիի՝ աշխատություն մեջ¹: Այդ քարերը, ինչպես ենթադրում է Մատր, պահպանվել են Անիում, Հավանորեն, ուրարտական Հնագույն ժամանակաշրջանից:

«Ախյան [գրանց] պատրաստուն մի մանրամասնությունը, — ասում է Մատր, — հատկապես, փոսերը՝ այսպես կոչվող ծիծեռնակի պոչերը, որոնք, անտարակույս, ծառայում էին որձաքարի անրագման Համար, մետաղով՝ կարող են թերևս միտք ներշնչել, թե արդյոք այդ նույն արխաիկ մատերիայից չէի՞ն օգտվել դեռ առաջ Հայ Արշակունի թագավորները բերդապարիսպներ կառուցելու Համար: Խորանարդան քարերը նման եղանակով Հայաստանում անբաղնդելն առայժմ նկատված է Գառնիում պեղված II կամ III դարի Հեթանոսական տաճարում, այսինքն՝ Հին Հայկական թագավորության ժամանակաշրջանի: Ոնգրի լրացուցիչ քննարկման Համար պետք է ուշադրության առնել նաև դանազան ավելի ուշ ժրճանի որձաքարերը, նմանապես եւ Վանա ժայռի բերդապարիսպների խաղաղան, եթե ոչ ուրարտական (՞) շինվածքները»²:

Անիում գտնված այս Հուշարձանների մասին ուշադրավ գիտողություններ է արել նույնպես ե Ք. Թորանայանը, որ ավելորդ չեմ Համարում մեջ բերել մանրամասն կերպով:

¹ Տե՛ս Կ. Յ. Մարր, Ани, Ленинград-Москва, 1934, էջ 15 ե 49:

² Նույն տեղում, էջ 49:

1. ՆյուՅթը, էջ 146՝

«Անիում տակավին գոյություն ունեն Հին պայտաններից կամ պարիսպներից բաղկաված սրբատաշ որձաքարեր, որոնք բերված են մի նոր պարսպի շինության Համար, սա այն պարիսպն է, որ պալատն անջատում էր բերդից կամ պարսպապատ քաղաքից: Այս պարսպի վրա նույնպես պարզորոշ նկատվում են քարերի վրայի երկաթե կապերի նշանները, ե ցույց են տալիս, որ նախկին պարիսպը Հավանորեն VI կամ VII դարերում շինված էր երկաթակապ որձաքարերով»:

2. Նույնը, էջ 331՝

«Քանի որ մեզի Հայտնի են V-VII դարերու Կամսարական տոհմի Հիշատակարաններ, որոնք շինված են կրաշագան, Հարթալային սրբատաշ ավազաքարերով, նաև այդ դարերն սկսած բնավ չեն գտնվիր որձաքարե Հին ոճով շինված պատեր ամբողջ Հայաստանի մեջ, բնականարար պետք է Հետեցնել, որ Անիի մեջ այսօրվան մեր տեսած երկաթյա կապերու նշաններով սրբատաշ որձաքարերը, եթե ոչ նախակամսարական, գոնե IV դարու Կամսարականաց այնտեղ շինած շենքերուն կվերաբերին»:

Անջրբերված Ն. Մատի ե Ք. Թորանայանի գիտողություններից երևում է, որ նրանք երկուսն էլ տարակուսանքի մեջ են եղել ե չեն կարողացել Հաստատուն կերպով որոշել Անիի մեջ եղած մեծադանդավաճ որձաքարերի ժամանակը:

Ն. Մատր, որը Գառնիի տաճարը Համարել է Արշակունյաց շրջանի՝ II կամ III դարերի շինք, ենթադրել է, որ երկաթե կապերի նշաններ ունեցող որձաքարերը, բայտ երևույթին, չարտնակել են գործածվել նաև Հայ Արշակունիների ժամանակ: Իսկ Թորանայանը այս մասին արել է տարբեր ենթադրություններ: Վերև բերված առաջին վկայության մեջ եա մատնանշում է, որ երկաթակապ որձաքարերը գործածվել են Անիում, Հավանորեն, Կանսարականների ժամանակ VI կամ VII դարերում, իսկ Երկրորդ վկայության մեջ, բնդՀակատակը, մատնացույց է անում, որ այդ որձաքարերը վերաբերում են եթե ոչ նախակամսարական, գոնե IV դարի Կամսարականների շենքերին:

Իմ կարծիքով, վերահիշյալ մեր նոր եզրակացությունները երկանդաշատի, Երվանդակերտի, Արձափրի ե Գառնիի Հուշարձանների մասին կարող են նոր լույս սփռել նաև Անիի

կամաբարեկանյան կոչմոյ պարսպի Հնազույն որմածրի վրա: Այս վերջինը եւ, ինչպէս և Արմավիրի վերոհիշյալ պարիսպների ու աշտարակը, վերաբերում են, ըստ երևույթին, Հայկական ճարտարապետութեան Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ III դարին կամ II դարի սկզբներին Ք. թվականութիւնից առաջ:

Ճիշտ է, ուրարտական ժամանակներում եւ սովորական էր մեծազանգված տաշված որձաքարերի զորձամութիւնը, սակայն Ուրարտուի շինութիւններում այդ որձաքարերը, որքան մեղ Հայտնի է, եղել են ստանց երկաթե կապերի: Կարելի է հուսալ, որ այս խնդրի վերջնական պարզարանումը կտան, Հիմնվելով ուրարտական և դրան Հաջորդող Հայկական հուշարձանների նոր քննութեան վրա՝ Շաղեռները:

Մեր նոր դիտողութիւնները Երվանդյան Հայաստանի ճարտարապետական մնացորդների մասին, ինչպէս տեսնում ենք, Հնարավորութեան են տալիս նեխարելու, որ բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից նույն այս Հնազույն ժամանակաշրջանի ամբացրած կենտրոնավայրեր են եղել նաև Գանդին և Անին:

Հարկա՞յ, ավելի քան Հափանակի կարելի է Համարել, որ Երվանդյան Հայաստանի կուլտուրայի մնացորդներ կգտնվեն նաև այլ վայրերում: Արդ՝ նկատի առնելով Շաղեռների կողմից անտեսված վաղազույն այդ կուլտուրայի բացառիկ կարևորութիւնը՝ ավելորդ չեմ Համարում տալ Երվանդյանների մասին մի քանի կարևոր տեղեկութիւններ, որ Հայտնի են տար սղորմորներից:

Իմ «Քննական տեսութիւն Հայ ժողովրդի պատմութեան» առաջին Հատորում արդեն մանրամասն հիշատակված էր, որ Երվանդյանների ժառանգական իշխանութիւնը Հաստատուել էր պատմական Հայաստանի մեծագույն մասում զեռես Արեւմեկան Գարեկատանի տիրապետութեան ժամանակ: Ինչպէս Հայտնի է, Քսենոփոնի ու Տասր Հապար Հույն զորքի նահանջի ժամանակ (401-400 թթ. նախքան Ք. թվ.) Արեւելայի ստորապն էր Սրտատար կամ Երվանդը, որը պարսկական բարձր արժեքակաւութեան՝ Վիդարնայի սերնդիցն էր: Այս տոհմը շարունակել էր իշխել Մեծ Հայքում նաև Աղբրանցի Մակեդոնացու և նրա Հաջորդների ժամանակ IV դարի երկրորդ կեսում (Ք. թվ. ա.):

Սկեկյանների ժամանակ, ըստ երևույթին, III դարում, Երվանդյանները, որոնք այդ ժամանակ միաձուլվել էին, Հափանդեն, արմենների հետ՝ զբաղել էին Արարատյան դաշտը և այստեղ նախ Արմավիրը, ու ապա Երվանդաշատը զատել էին նրանց թագավորութեան աթոռանիստ կենտրոնները: Մրանց իշխանութիւնը, որ տևել էր Մեծ Հայքում մոտ երեք դար՝ վերջ էր դրել II դարի սկզբներում (Ք. թվ. ա.) Արտաշեսյան զինատիրայի Հիմնադիր Արտաշես I-ը¹:

Իմ նույն աշխատութեան մեջ եւ նաև մատնացույց էի արել, որ Երվանդյան այս թագավորութիւնն է այն Հին Արարատյան թագավորութիւնը, որի մասին աղտոս Հիշողութիւններ են պահպանված Խորենացու Գատնութեան մեջ:

Ըստ Խորենացու և Լովճանես Կաթողիկոսի վկայութիւնների² Հայկ նահապետի որդին ու Հաջորդը, Արեւնակը, հոր մահից հետո զաղթում է Հյուսիս-արեւել, զբաղում է Արարատյան դաշտը և, բնակութիւն Հաստատելով այս դաշտի Հյուսիսակողմի մի բարձր լեռան ստորոտում՝ լեռն իր անունով կոչում է Արագած, իսկ կազմածն՝ Արագածոտն:

Մրա որդին և Հաջորդը, Արամայիսը, այս նույն դաշտում, Երախ գետի ափին, մի բլրի վրա պինդ և մեծ քարերից շինում է իր Համար բնակավայրը, որն իր անունով կոչում է Արմավիր: Արամայիսի որդին, Ամասիան, բնակվում է նույնպէս Արմավիրում, որը քաղաքական կենտրոնն է դառնում Հայկազայն նահապետների և ապա թագավորների: Մա ունենում է երեք որդի՝ Գեղամ, Փառոս և Յոսիս: Քողնելով Գեղամին Արմավիրում՝ Ամասիան զնում է Մոսիս լեռների կողմը և շինում է այնտեղ երկու բնակատեղի, մեկը արևելակողմում, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, իսկ մյուսը՝ այդ տեղից դեպի արևմուտք ու նրանից հետո՝ հետևակ մարդի մեկ ու կես մեծ օրվա ճանապարհի շափ³: Նա ստալի է այս բնակատեղերը իր երկու որդիների՝ Փառոսին և Յոսիսին, որոնք բնակութիւն են Հաստատում այնտեղ և այս տեղերը կոչում են իրենց անունով Փառախոտ ու Յոսիսկերտ:

¹ Տե՛ս «Քննական տեսութիւն...», Երևան, 1944, էջ 64, 97, 104 և 126:

² Մովսէս Խորենացի, I, Ժբ ու Ի և Լովճանես Կաթողիկոս, Քիֆիս, 1912, էջ 16-19:

³ Տե՛ս իմ աշխատութիւնը «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներ», Երևան, 1936, էջ 29-30 և այլու:

Հետեւելով իր հօր օրինակին՝ Գեղամը եւ թողնում է Արժամալիբուն իր որդուն՝ Հարմային, ե ինքը գնում է մի ուրիշ յեռան արեւելյան-Հյուսիսային կողմերը եւ այնտեղ, ծովակի ափին, շինում է նոր բնակավայր, որ կոչում է իր անունով Գեղարքունի: Այստեղից նա իջնում է դաշտը եւ շինում է ամուր ձորակի մեջ մի մեռակերտ եւ իր անունով կոչում է Գեղամի, որ Հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվում է Գառնի:

Գեղամի որդուն՝ Հարմային Հաջորդում են Արժամալիբուն որդեգորդի՝ Արամը, Արա Գեղեցիկը, Արան, Անուշավանը եւ արա Հաջորդները: Այն Անուշավանը, ինչպես վկայում է Ռորենացի, կոչվում է Սոսանվեր, որովհետեւ նա նվիրված էր Արժամալիբուն թաղարուն Արմենակի ստի ծառերին, որոնց տերեւների խշխշոցի եւ երկրումների համեմատ Հայկազանց աշխարհում արգում էին գուշակութուններ:

Ռորենացու այս վկայութունները Արմենակի ու նրա սերնդի տարածման ու զտեղեմավայրերի մասին Արարատում Հայագետներից շատերը համարել են հնարած ուչ ժամանակներում եւ դուրի պատմական նշանակութունից¹: Այս տեսակետը, ինչպես պարզված է այժմ, ընդունելի է:

Թեև Հայկազանց նահապետների անունները վերոհիշյալ վկայութուններում, մեծ մասամբ, կազմված են արվեստական կերպով, սակայն Ռորենացու Հաջորդած տեղեկութունների հիմքը պատմական է եւ նրանց մեջ պահպանված են Հայ ժողովրդի Արարատյան դաշտ մտնելու եւ այնտեղ տարածվելու հիշողութունները:

Իմ նորագույն աշխատութունները եւ ե, մասնավորապես, Արժամալիբի հունարեն արձանագրութունների իմ նոր լուսարձակութունը նույնպես Հաստատում են, որ Արժամալիբը եղել է, իրական, Հին Հայաստանի հնագույն աթոռանիստ կենտրոնը Արարատում, ե որ նրա մեջ, Աղալլոնի ու Արտանիսի տաճարում, կարող էին, իրոք, ստիների սրբազան ծառատանի տերեւների խշխշոցից զանազան գուշակութուններ արվել, ինչպես այդ վկայում է Մովսես Ռորենացին:

Պատմահօր մտ սխալ է հարկված Հայկազունների ժամանակագրութունը, որ նա կազմել է արվեստական կերպով կրա-

յեցիների, բաղդեացիների նահապետների եւ քաղաք վորների ցանկերի համեմատ: Եւ, իրական, նրա Պատմութեան Հայկազան Արմենակի ու արա Հաջորդների մասին հիշողութունները վերաբերում են, ինչպես դժվար չէ կուսել, III դարի անցրելին Բ. թվականութունից առաջ, երբ արմենները երկվանդանների առաջնորդութեամբ գրավել էին Արարատյան դաշտը եւ Արժամալիբը դարձրել էին նոր իշխանութեան աթոռանիստ կենտրոնը:

Արդ՝ մեր այս երգակցութիւնը Հայկազանց ու երվանդան իշխանութիւնների նույն փնելու մասին, անշուշտ, խիստ կարևոր է ու հետաքրքիր: Ընդունելով, որ Ռորենացու վերոհիշյալ վկայութիւններն իրենց որոշ ծանրամտութիւններով պատմական հիշողութիւններ են՝ կարելի է անել նաև այլ ուշագրավ կուսումներ:

Ռորենացին, ինչպես վերև տեսանք, վկայում է միաժամանակ, որ Հայկազունների ժամանակ Արարատում հիմնված են եղել, րացի Արժամալիբից, նաև Գառնին, Յոյակերտը եւ Փառախոտը: Ես կարծում եմ, որ գուրի չէ պատմական հիմունքից Ռորենացու նաև այս վկայութիւնը: Եվ, իրավի, նրա այս վկայութեանը կարող է այժմ նեցուկ ծառայել մեր նոր հետեւութիւնը Գառնիի ամրոցի ու տաճարի կառուցման մասին երվանդանների ժամանակ, որոնք Ռորենացու մտ անվանված են Հայկազուններ:

Ռորենացու Հաջորդած տեղեկութիւնները կարևոր են, րացի այդ, մի այլ տեսակետից: Վերև մեր ներկայացրելու, որ երվանդաշատի, Գառնիի եւ, հազանարև, նաև Արժամալիբ ու Անիի մեր նշած հուշարձանները վերաբերում են երվանդան ժամանակաշրջանի շինարարութեանը: Արդ՝ ուշագրավ է, որ Ռորենացու վկայութիւններից կարելի է ամենայն հավանականութեամբ նույնպես հետևել, որ նույն այս վաղագույն ժամանակաշրջանին կարող են վերագրվել ո՛չ միայն այդ տեղերի հուշարձանները, այլև Զորկերտ-Յոյակերտի եւ Փառախոտի, որոնց տեղագրութիւնը ծանրամտան ընկած ու որոշված էր իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներ» աշխատութեան մեջ²:

Անշուշտ, այս երկու վայրերի հուշարձանական մնացորդների հաստատուն ու հիմնավորված ուսումնասիրութիւնները եւ սխտը է տան հնագիտական մեր հիմնարկները, ուղարկելով այդ վայրերը գիտական Հաստիկ արշավախմբեր:

¹ Երևան, 1936, էջ 23-31:

¹ Տե՛ս Ա. Մ. Փարազպետ, Բնական պատմութիւն Հայոց, 4. Պոլիս, 1880, էջ 146 եւ այլն: Գր. Халатниці Армянскій эпос..., Москва, 1896, էջ 122-125 եւ ուրիշ:

Երվանդյանների կամ Հայկազունների ժամանակաշրջանի պատմական հուշարձանները, ինչպես վերև տեսանք, հանդիսանում են Հայկական կույտուրայի հնագույն մնացորդներ և ունեն, անուշտ, բացառիկ կարևոր նշանակություն:

Իմ ներկա ուսումնասիրության նոր տվյալները, ինչպես և համոզված եմ, կովան ու խթան են ծառայելու Հայկական ճարտարապետության ամենահին շրջանի ուշադիր լետազոտման և հարկադրելու նև հնագետներին ու արվեստագետներին վերաբնութան ենթարկելու վերահիշյալ Հուշարձանների մասին մինչև այժմ եղած նեխազրույթյունները:

Այդ Հուշարձանների մեջ ամենանշանավոր ճարտարապետական կոթողն է, անշուշտ, Գառնիի շքնադազեղ տաճարը, որը, ըստ մեր նոր յուսարանության, սերտ կապ ունի ո՛չ թե հռոմեական, այլ հելլենիստական արվեստի, ու նաև ուրարտական հին շինարարության հետ: Այս վերին աստիճանի զեղարվեստական ու զեղեցիկ շենքը, որ հելլենիստական-հայկական կույտուրայի եզակի նմուշն է ողջ Պորհրդային Միության մեջ, ինչպես ճիշտ մատնանշել է Թորամանյանը, իր բոլոր կատարելություններով կարող է համարվել Հայաստանի զեղարվեստի թագուհին:

Հայկական մեծ անշխարհի այս փառահեղ մնացորդը Հայ ժողովուրդը պետք է պահի ամենամեծ խնամքով: Եվ ևս չեմ կասկածում, որ փաղ թե ուշ մեր գիտական հիմնարկներն ամեն ջանք գործ կդնեն, որ կարող ու ձեռնհաս արվեստագետներ տան նրա մանրամասն ու ճշգրիտ վերակազմությունը: Իսկ այդ, ինչպես վերև տեսանք, միակզանգի հնարավոր է համարում լուրջ ու ձեռնհաս մասնագետ Պ. Գյուրյանը:

Ուստի կարելի է հուսալ, որ կգա մի օր, երբ վերակառուցված Գառնիի տաճարը կզառնա Պորհրդային Հայաստանի հոյակապ զարդերից մեկը:

ՄԱՐ-ԱՐԿԱՄԻ «ՀԱՅՈՅ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը
(Սերևոսի, Մոլոսես Թորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների հարցի առթիվ)

Ձեռյած «Հայոց նախնական պատմության» մասին զգալի զբաղանդություններն արվարելու, այս գործի ժամանակի և Հեղինակի հարցը մինչ այժմ վիճելի է անհասկանալի է մնում: Մաբացատրելի է երանով, որ այս Հուշարձանի մասին մեր տվյալները լոկ ու չըբանի՝ Սերևոսի և Մոլոսես Թորենացու երկերից են, որ կամ խառնիխառն կամ անճանաչելիության աստիճան աղճատված են: Այդ տեղեկությունների անբավարարությունն ու աղճատվածությունն են Հենց պատճառ հանդիսացել, որ պայմանականորեն Մար-Արաս Մծուրանցուն վերագրված «Հայոց նախնական պատմություն» երկի քննադատությունը շատ համայն հասցվել է ծայրահեղության և վերածվել գերբնագատության:

Քննադատության այդ սխալ ուղղվածությունը հատկապես վառ է երևում գերմանացի Հայտնի գիտնական Ա. Գուտշմիդի և Ֆրանսիացի Հայագետ Ա. Կարիերի գործերում: Բայց եթե Մոլոսես Թորենացու Պատմության կապակցությամբ նրանց քննադատությունը առաջադիմական բայի էր ուսումնասիրման առումով, ապա Մար-Արասի Հասցեին նրանց ծայրահեղ հռոմեականությունը և պնդումը, իբրև թե «Հայոց նախնական պատմության» Հեղինակը Հենց ինքը Մոլոսես Թորենացին էր, ինչպես կուսաներ, բացարձակապես սխալ էին:

Մար-Արասի մասին ստավել հիմնավոր ու բերու է կին Ն. Մառի և Ն. Ազոնցի ուսումնասիրությունները²:

¹ A. Gutschmid, *Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren*, Berichte de kön. Sächsischen Gesellsch, der Wissenschaft, zu Leipzig, phil.-hist. Klasse, Bd. XXIII, 1876. A. Karrière, *Moïse de Khoren et les genealogies patriarcales*, Paris, 1891.

² Н. Я. Марр, *О начальной истории Армении* *Автономия*. «Виз. временник», т. I, вып. 2, 1894. Н. Азоец, «Начальная история Армении» у Себеоса и

Ներկա Հետադոտոմիայն նպատակն է վերանայել Մար-Արասին առնչվող Հարցը և հիմնականում երբ լուսարանում տալ այդ խնդրին:

Ամենից առաջ ծանոթանանք «Հայոց նախնական պատմութեան» պարունակած նյութին:

Ինչպես Հայանի է, Սերետի «Պատմություն» առաջին գլխի սկզբում հիշատակվում է Հայոց և Պարսի Արշակունի առաջին թագավորների մասին արձանագրությունը: Սերետի պատմածի համաձայն այս արձանագրության մասին Մար-Արաս Մժուրանցի փոխտոփայի գրքում տեղեկություն է կոչվել, որ վկայել է, որ արձանագրությունը Հայտնարեթվն է Մժրեթում, Մանատուրի թագավորի պալատի ավերակներում, պալատի դարպասների դիմաց՝ մի պան փրա, ուր այն գտել է ինքը՝ Մար-Արասը: Երբ այդ ապարանքի պուներն անհրաժեշտ էին Պարսից արքայի պալատի կառուցման համար, ավերակները պեղվեցին, և Հենց այդ ժամանակ էլ պատահաբար Հայտնարեթվեց Հիշյալ Հունարեն արձանագրությունը:

Ինչպես նշված է Սերետի մոտ, արձանագրության վերնագիրը Հայտնայն էր. «Ես Ագաթանզեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս պատրիկ ինով ձևոտսու զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ րաջին Տրդատայ՝ առեալ ի դուանն արքունի»: Այնուհետև Սերետը մանրամասնություններ բերում է իրենց նահապետների մասին վիպերու Հայերի գունազարդված և վիպական ոճը:

Աշտարակաշինությունից և լեզուների խառնուժից Հետո, ինչպես հաղորդում է «Հայոց նախնական պատմություն»-ը, Բարեկնում տիրեց Տրտանյան Բելը, որը պահանջում էր, որ իրեն ենթարկվի ամբողջ մարդկային ցեղը: Սակայն Հայոց նահապետ «Հզորը զարտութեամբ ևս րարի անձամբ» Հայկին Հարեթածին ոչ էլամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բելայ՝ սրբայի, արհամարհեաց զնա ստուռած կոչել: Անդ Բէլ ի վերայ Հայկին

յարձակեալ մարտի, իսկ Հայկն արի՝ աղեղամբ հալածեաց զնա (և զարք նորա փոխտոսական լինէին)»:

Տարած հաղթանակից Հետո Հայկն իր ազգով բնակվում է Հայաստանի Հարավում: Հայկի որդին և ժառանգորդը՝ Արծնակը, հոր վախճանից Հետո նախ ապրում է Հարբում, իսկ Հետո գնում Հյուսիս-արևելք և զրաղեցնում Արարատյան դաշտավայրը: Նրա սերունդները Հնագիտական տարմվոցին այդ դաշտավայրում և մերձակա չրջաններում:

Արծնակի որդին և ժառանգորդը՝ Արամայար, իր համար բնակատեղի կառուցեց Արաքի արփին և այն իր անվամբ կոչեց Արծավիր: Նրանից Հետո տիրեցին իր որդին՝ Ամասիան, Ամասիայի որդին՝ Գեղամը, Գեղամի որդին՝ Հարսան, Հարսայի որդին՝ Արամը և Արամի որդին՝ Արա Գեղեցիկը:

Արջինիս մասին «Հայոց նախնական պատմություն» Հեղինակը մի առասպել է բերում, ուր պատմվել է, թե Ասորեստանի թագուհի Ծամիրամը վաճառու կերպով սիրահարված էր Արային, և երբ Արան հրաժարվում է մեկնել նրա մոտ՝ նիմփ, նա մեծաքանակ զորքի գլուխ անցած ներխուժում է Հայաստան, քարոյն Արայի զորքն ու մարտի ժամանակ սպանում նրան: Արայի պարտությունից Հետո Հայաստանում տիրում էին ասորեստանցի թագավորները մինչև Սենեբերիմ արքայի (705-688) մահը: Հենց այդ ժամանակ է, որ ապստամբած Հայերը զուրս եկան ասորեստանցիների իշխանության տակից և Հայաստանում տիրեց Հայկյան Զարեհը, որի տոհմը կառավարեց մինչև Նարեկողոմոստի ժամանակները: Գրանից Հետո Հայերը ենթարկվեցին Բարկյունին և Մեղիային, իսկ Հետո եկավ մակեդոնական տիրապետությունը, որ ձգվեց մինչև Արշակունիներ:

Ինչպես հիշատակված է Սերետի մոտ, Հայկյան Զարեհի սերունդներն էին՝ «Արձոց, ապա Մարհանդ, ապա Ծառալ, ապա Փառնաաղ»: Այստեղ նպատակ է հիշատակվում է Բարապետիների ժառանգարանությունը:

* Այստեղ ուսման մեջբերումն ավարտվում է «...и войско его обратилось в бегство», ստով, որ ոչ թե Սերետի ընդդո Հատվածից է, այլ Հանդիպում է մի փոքր ավելի ուշ: Նույն կերպ նաև ուսման մեջբերման սկզբում՝ «МОЮЮЩИ СЛОВЪ И СЪТННЕМЪ» կառուցությունը, որ վերաբերում է Հայկին, ես վերցված է Սերետի ավելի ներքևում ստված խոսքերից, ուստի ավելացնում ենք ուղղակիան փակագծերով (թարգմ.):

отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского, «Виз. временник», 1901, т. VIII, вып. 1 и 2:

Մերևույի պատմության երկրորդ գլխում, որին ես Հիմնական աղբյուր է ծառայել Մար-Արասի «Հայոց նախնական պատմություն»-ը, նկարագրվում է Արշակ Մեծի օրոք պարթևների պատաստմությունն ու ազատագրումը մակեդոնացիների իշխանությունից: Արշակ Մեծն իր իշխանությունը ենթարկեց ասո-րեստանցիներին, բարելացիներին, պարսիկներին, մեդացիներին և Հայոց երկիրը:

Հաջորդիվ՝ նույն գլխում, տեղեկություն է տրվում, որ իր կյանքի 129-րդ տարում և վախճանից մեկ տարի առաջ Արշակ Մեծը Հայաստանի ինազուրկ է նշանակում իր որդուն՝ Արշակ Կրտսերին: Հայաստանում վերջինիս ընդառա՛մ է կրում «Քա-զարատն Փառազեան... սպակ՛ զնա ի թնազ Հայրենի... եւ տայ նմա զգուտար իւր ի կնութեան»: Եւ քանի որ Բազարատը կամա-փոր Հանձնեց իր իշխանությունը, Արշակը նրան Հայոց երկրի ստպետ է նշանակում, այսինքն՝ իշխան և Հրամանատար:

Երկրորդ գլխի վերջին մասում բերված են պարթև արքաների՝ մինչև Արտավան (Ք. Հ. 224 թ.) և Հայոց Արշակունիների՝ մինչև Պապ (374) ցուցակները:

Հարկ է նշել, որ Մար-Արասի գրքից բաղկածներ պարու-նակող Մերևույի «Պատմությունը» մեզ է հասել միայն մեկ՝ ծայրահեղ վատ պահպանված ձևագրով: Այս է պատճառը, որ մեզ Հետաքրքրող Հուշարձանը խիստ եղծված է և բացթող-րումներ ու անհասկանալի տեղեր ունի, որոնք Հիմնականում բացատրելի են նրանով, որ մասնավոր ձևագրից օգտվող գրիչը, թերթերը չփոխելով, արտագրել է ինչպես պատահի:

Ռնչպես նշուտ նշում է Ն. Մառը, Հուշարձանի վերջին մասը խտտորեն տուժել է նաև Պարենացու Պատմությունից, որից նույնիսկ ամբողջական կապակցություններ են մտցվել երկի մեջ¹:

Մար-Արասի երկն իրեն Հայաստանի մասին Հնագույն աղբյուր օգտագործվել է ոչ միայն Մերևույի «Պատմության» առաջին երկու գլուխներում, այլ նաև Մովսես Պարենացու «Պատմու-թյան» առաջին երկու գրքերի շատ գլուխներում: Ռնչպես բազմիցս նշվել է՝ Պարենացու մոտ Հանդիպող բաղկածները Մար-Արասի երկի ծավալուն և Հիմնավոր կերպով մշակված տարրերակներն են: Մերևույի մոտ ընայած Հանդիպում ենք

սկզբնական և ավելի ճշգրիտ, սակայն կապես կրճատված տարրերակի, ընդ որում՝ եղծված և թերթյուններով լի:

Մար-Արասի «Հայոց նախնական պատմության» մեջ, ինչպես երևում է Պարենացու վկայություններից, ոչ միայն Մերևույի բե-նուժ Հայկի ու Արմենակի պատմություններն են եղել, այլ բացի դրանցից նաև վրայական Պայտերադույցներ Արամի մասին, որոնցում պատկերանում էին Հնագույն չրջանի Հայոց ռազ-մական քաջագործությունները:

Ռնչպես մանրամասնորեն Հայտնելիս է եղել Մար-Արասի գիրքը, Արմենակի սերունդներից Հատկապես փառավորվել է Արամը՝ Հարմայի որդին, որ Հայաստանի սահմանները բոլոր կողմերից ընդլայնեց: Արևելքում նա Հարձակվեց մեղացի նյու-քար Մաղևի վրա, որ երկու տարի շարունակ Հայաստանն իր տիրապետության ներքո էր պահում, և բունդով նրան՝ թեթեց Արմավիր և Հրամայից զամի աշտարակի ծայրին: Նա փառա-բանվեց նաև Հարավում՝ Ասորեստանի սահմաններին, ուր սպանեց իր երկրի Հարատահարիչ, դուրացույուն Բարշամին: Մյանից Հետո նա ամբողջ գործով ուղղվեց արևմուտք և այնտեղ ջախջախեց Տիտանյան Պայապիս Բառապային, որ տիրում էր Պոնտոսի և Միջերկրական ծովի միջև եղած Հողերին: Նոր գրավ-ված երկրում նա կառավարելու ինդեց իր ազգական Մակին, որ այնտեղ քաղաք Հիմնեց՝ Մամաքը, որ Հետագայում կեսարիա անվանվեց:

«Հայոց նախնական պատմության» Հետ անգամ թնուցիկ ծանոթության զեպում նկատելի է, որ Մար-Արասի երկը մտա-ցածին չէ, այլ Հայոց պատմության Հնագույն գրավոր Հուշար-ձանն է: Ռնչպես երևում է վերոբերյալ Հատվածներից, այս երկն իր մեջ ներառելիս է եղել առասպելական պատումներ Հայոց անցյալի մասին և, դրանից բացի, մասամբ Հիմնված է եղել ստա-վածաձեռնյան և այլ աղբյուրների վրա, մասամբ էլ Սանադուրկ ինազավորի պալատի պեղումներից բացված Հունարեն արձա-նագրություն, որում տեղեկություններ են եղել Հայոց և Պարթև Արշակունիների մասին:

Այս «Նախնական պատմության» Հեղինակը կաննցել է պարզել, թե ինչպես է ծագել Հայ ժողովուրդը և ինչպես է սփռվել Հին Հայաստանի տարածքով: Առաջնորդվելով Հին ժամա-նակագիրների սկզբունքով՝ նա իր ժամանակակից մատենա-գիրների Հետևություններ կարծում էր, թե այլաբանի բոլոր ազգերը

¹ Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 282:

ծագել են Նոյի երեք որդիների սերունդներից: Այս խակ պատճառով Հայոց նահապետ Հայկին նա Նոյի Հարեթ որդու սերունդներից է համարում:

Միտա Հետաքրքրական է, որ, ինչպես պետք էր սպասել, «Նախնական պատմություն» վրա առավել մեծ ազդեցություն են գործել իրենց իսկ՝ Հայերի վիպական պատմությունները: Այս ազանդությունների արժեքը կայանում է նրանում, որ զրանք պատմական Հիմք ունեն և Համահունչ են խեթական, ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունների փաստացի նյութին և օգնում են Հայերի ծագումնաբանության պարզմանը:

Հայագիտական գրականության մեջ երկար ժամանակ կայուն էր այն կարծիքը, թե «Նախնական պատմություն»-ը Սերևոսի «Պատմության» հետ ոչ մի կապ չունի և ներմուծվել է վերջինիս մեջ պատահարաբ: Եվ այսու դիտականների մեծամասնությունը կարծում էր, թե Սերևոսի «Պատմության» առաջին երկու բաժինը մի այլ անձանով Հեղինակի՝ Անանունի, մերենապական ընդմիջարկություն է (բանասրբություն):

Այս կարծիքը, որ առաջինն արտահայտել է պրոֆ. Բ. Պատկանյանը Սերևոսի «Պատմության» ռուսերեն իր թարգմանության առաջաբանում¹, փաստելվամբ է ընդունվել զերմանացի գիտնական Ա. Գուստյովի, Ն. Մառի և այլ Հետազոտողների կողմից: Գուստյովը նույնիսկ Հնարավոր էր համարում պնդել, որ «Նախնական պատմության» Հեղինակը ոչ թե Անանունն էր, այլ Մովսես Ռորենացին: Նրա կարծիքով Սերևոսի մտա եղած հատվածն առաջին՝ փորձական գրառումն էր (Entwurf²), որը Հետագայում «Հայոց պատմության» մեջ մշակել է Ռորենացին²:

Ա. Բաումգարտները, որ նույնպես Պատկանյանի կարծիքի կողմնակից էր, «Գիրք պիտոյից»-ի իր Հետազոտության մեջ փորձում էր ապացուցել (մեջ թվում է առանց բավարար

հիմքերի), որ պատմագիր Հովհաննես Կաթողիկոսի ժամանակ Սերևոսի մատյանում դեռևս չի եղել Անանունի «Նախնական պատմությունը»³:

Անանունի մասին բերված կարծիքները ներկայումս սխալ և անբերունելի են համարվում:

Դեռևս Սերևոսի «Պատմության» զրարար բնագրի հրատարակելի Տ. Միհրզայանը, նկատի առնելով, որ իր օգտագործած ձեռագրերում «Նախնական պատմությունը» Սերևոսի երկի անբակտեի մասն է կազմում, այն համարել է անձանք Սերևոսի կատարած բանասրբությունը²: Հենց նույն եզրահանգման էր եկել նաև Ա. Տեր-Միքելյանը՝ Մասուկ Անեցու աշխատության զրարար բնագրի իր հրատարակության մեջ: Նա հիմնվում էր Սերևոսի Պատմության առաջին չորս գլուխների (Պատկանյանի հրատարակության մեջ «Առաջին» և «Երկրորդ» բաժինների) մի շարք հատվածների բովանդակության Հետազոտման, ինչպես այդ գլուխների և բուն սերևոսյան պատմության մասերի լեզվաձևական նմանությունների վրա³:

Գր. Քալաթյանցի կարծիքով «այդ նմանությունը, որ հաճախ կատարյալ նույնության է հասնում, նկատելի է երկու ստեղծագործությունների ռժու և շարադրանքում, խոսքի կառուցման մեջում՝ ոչ միայն շարահյուսական-բերականական առումով, այլ նաև միայն այդ երկուսին հատուկ աշխարհագրական և ազգագրական եզրույթների անորոշության»: Սակայն, Հարկ է ընդգծել, որ Քալաթյանցը «Նախնական պատմությունը» ավելի ուշ՝ VIII-IX դդ. անվավերական համարելով, իր նկատման համընկնումները ոչ թե Սերևոսի և Անանունի նույնականու-

¹ A. Baumgartner, Ueber das Buch «Die Chrie». Zeitschr. Der Deutsch. Morgenl. Gesellsch., Bd. XI, 1886, էջ 466-467, ծան. 1:

² «Սերևոսի նախնական պատմությունը ի ներակի», հրատ. Տ. Միհրզայանի, Կ. Պոլս, 1851, նախաբան:

³ Մամուկ Անեցի, Հատարանք իր զոց պատմագրաց յաղագ գիտի ժամանակաց անցելոց միջև ի ներկայս ծայրագ աբարեայ: Տառաջարկով և ծանրի թիվներով Ա. Տեր-Միքելյան, Վաղարշապատ, 1893, էջ 253-254, ծան. 4:

⁴ Գր. Խալաթյանց, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896, էջ 68 և ՀՀ:

¹ К. П. Патканян, История Себеоса, СПб., 1862, стр. VI-X.

* (Entwurf կարծում ենք խոսքը Entwurf-ի (գերմ.) մասին է՝ նախագիծ, որովայնի (թարգմ.):

² A. Gutschmid, նշվ. աշխ., էջ 38:

Յյանը էր բացատրում, այլ Սերևոսի՝ Անանունի վրա ունեցած ազդեցությունը:

Հակառակ Գր. Թախթյանցի կարծիքին, Սոս. Մալխասյանցը՝ համաձայնում է Տեր-Միրքյանի տեսակետի հետ և համոզիչ կերպով ապացուցում, որ Սերևոսի «Պատմությունը» ներածական մասը, որ իր մեջ ընդգրկում էր Հայոց կարճատև պատմությունը, սկսած առասպելական ժամանակներից, զբաժան է Հենց Սերևոսի կողմից: Ինչպես արդարացի կերպով նշում են Տեր-Միրքյանն ու Սոս. Մալխասյանցը, «Պատմությունը» Հենց սկզբում՝ առաջին իսկ տողերում, առկա է Սերևոսի մատնանշումը, որ իր «Պատմությունը» ներառում է Հայոց պատմության երեք պատմաբանական՝ Հերոսական կամ առասպելական ժամանակները, զրանց հայտնի ժամանակաշրջանը և Հեղինակի օրերի «աղետալի» ժամանակները:

«Են եղև ոչ ի կամայական պիտոյից, ասում է Հեղինակը, վարձ խոզակի գանատրաբեր ժամանակ և զմայնի բաժանցն ձևնարկելով զրոշմել վրպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս, և ի նոյն շարագրելով առացի զառ ի յապայան եղելոյ. և ցուցից համառատիսք զարդեսց ժամանակացս զաղէ-տալսս վերաբերութիւն զանն և զատուս հին թագաւորացն յիշատակելով»:

Եվ իսկապես, խոստովանել հարազատ, Սերևոսը Հերոսական ժամանակը շարադրել է Ա զլիտում, պատմական անցյալը՝ Բ-է զլույսներում, իսկ իր ժամանակի արտեսները՝ Ը-Մ զլույսներում:

Ինչպես տեսնում ենք Սերևոսի և Անանունի նույնակառուցյան մասին Մալխասյանցի տեսակետը կարելի է հիմնավորված և համոզիչ համարել: Ինչպես նշվում է Ն. Աղոնցի և Ն. Ակիմյանի ավելի ուշ աշխատություններում, Հայցի այսպիսի լուծման օգտին խոսող փաստարկները բոլոր հիմնավորումներ ունեն և կարող են ավելի ուժեղացվել նոր ապացույցներով²:

Հետևաբար կարելի է փաստահորեն երբահանել, որ ընդհանրապես ոչ մի Անանուն էլ չի եղել, և Անանունն ինքը Սերևոսն

է: Լիովին բացահայտ է նաև, որ «Նախնական պատմության» Հեղինակը ոչ թե ինքը Սերևոսն էր, այլ ասորի Մար-Արաս Մծուրանցին, որի երկն ինչպես Սերևոսի «Պատմության» այնպես էլ Խորենացու «Պատմության» սկզբնաղբյուրներից մեկն է եղել:

«Նախնական պատմության» ժամանակի և ժազման մասին Խորենացին և Սերևոսը ասորերը տեղեկություններ են հաղորդում:

Խորենացին հայտնում է, որ Հայաստանում Արշակունի հարստության հիմնադիր Վաղարշադը, կամենալով խնայալ այս երկրի անցյալը, գտավ զխոսնական ասորուն՝ Մար-Արաս Կատինային, խնաստուն և բաղդական ու Հուսնական զպորթյանը վարձ մի մարդու, և Հայաստանի մասին հավաստի տեղեկություններ հավաքելու հանձնարարությունը նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծ Պարթև արքայի մոտ, նինվիի արքայական դիվանը Մար-Արասի համար բացելու խնդրանքով: Մար-Արասը, այնտեղ նայելով ձևապրերը, մի անհայտ Հեղինակի մատյան է գտնում, որ Այեբասնդը Մեծի հրամանով բաղդեհերևից Հուսարեն էր թարգմանել: Խորենացին գրում է, որ այդ զբրից Մար-Արասը բազում է Հայոց հավաստի պատմությունը և ընթացում Վաղարշակ թագավորին, որն այն ստանալով պահում է արքունիքում մեծ գգուշույթով և հրամայում մատյանից մի հատված արձանագրել այս փառ՝:

Ք. ա. II դարում Պարթև Արշակունիների մայրաքաղաք Նինվեում Մար-Արասի հայտնաբերած բաղդական մատյանի մասին ընթացած պատմությունը, ինչպես արդեն պարզվել է, ոչ մի քննադատության չի զինանում և ուսումնասիրողների կարծիքով Հենց Խորենացու հորինածն է:

«Նախնական պատմության» Հեղինակի մասին բոլորովին այլ, առավել հիմարտանման տեղեկություններ է հայտնում Սերևոսը: Եվ նրան ոչ թե Մար-Արաս «Կատինա» (=ΛΕΠΙΤΟΣ «3343X», Հայ. ուշին) է անվանում, այլ «Մարաբա փիլիսոփա Մծուրանցի» և մատնանշում, որ այս զխոսնականն ասորի է:

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ա, գլ. ր և Թ, Թիֆլիս, 1913:

¹ Սոս. Մալխասյանց, Սերևոսի պատմությունը և Մովսեսի Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 73:

² Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 6 (առանձնատպով), Ն. Ակիմյան, Սերևոս նախնական Բաղդատունին և նրա Պատմությունը ի Հերակն, Վիեննա, 1924, էջ 48 և 64:

Մծրինում ներկա գտնվելով Սանատրուկ թագավորի պալատի պեղումներին՝ նա ապարանքի փլատակներում պատահաբար գտել է Հունարեն արձանագրություն Հայոց և Պարթև Արշակունի արքաների մասին, որ Տրգատ արքայի Հրամանով գրչանկ էր Ագաթանգեղոսը:

Մծրինում գտնված Հունարեն արձանագրության մասին տեղեկությունը մինչև վերջերս գրեթե բոլոր գիտնականները միտումնավոր Հնարանք էին Համարում: Սակայն Ն. Ակինյանը շատ Համոզիչ կերպով ցույց տվեց, որ այն բոլորովին էլ Հերյոտված անվավերական չէ, այլ պատմական Հավաստի վկայություն: Նա գտնում է, թե պալատ, որի ավերակներում Հայտնաբերվել է Հունարեն արձանագրությանը սյունը, ոչ թե Մծրինում է եղել, ինչպես սխալ մատնանշված է Սերետի և Ռորենացու մոտ, այլ Մծուրնում, որ Սանատրուկ թագավորն է կառուցել: Հին Հայաստանում Մծուրն քաղաքի գոյությունը մասին չիմացող Հիշյալ պատմագիրների մոլորությունը կարելի է Հելտոնիանք րացատրել, քանի որ բնդունելի է Մծրին-Մծուրն այլընկերցումը¹:

Ք. Հ. I-II դարերում Հայաստանում թագավորած Սանատրուկի կողմից Մծուրնի Հիմնադրման մասին, ինչպես նշված է իմ աշխատություններից մեկում², լուկ պատահական գրառում կա Փափաստսի «Պատմության» մեջ: «Ակազ զնայր Մարդպետն Հայր ի ստոր տեղեացն և էջ յայն գետոյն Հասանացն Եփրատու, Հովիտան թանձրախունն անտառնն, ի վեղարտունունան երկուց զետոցնն ի թաուսթ խարձիցն մամխեացն, որ ի տեղուոյն ի Հետն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղուոյն Մծուր կոչի»³:

Մծրինում, այսինքն՝ Մծուրնում, գտնված Հունարեն արձանագրության մասին սերևույան Մար-Արասի Հաղորդումներին

տեղեկությանը վերը ասվածից երևելով կարելի է ենթադրել, որ զեռես Ք. Հ. IV դարի սկզբներին Մծուրը եղել է Հին Հայաստանի քաղաքային կենտրոններից մեկը, և այնտեղ՝ Սանատրուկի պալատում է պան վրա փորագրվել Հունարեն արձանագրությունը՝ «Հրամանա թաջին Տրգատայ», որ Հավանորեն Տրգատ III-ն է: Փափաստի վկայությունը այդ քաղաքն ավերվել է մինչև V Հարյուրամյակը, Հնարավոր է IV դարի երկրորդ կեսին: Ռուչպես տեսանք՝ իր «Պատմության» առաջին գլխում Սերետք Մար-Արաս փիլիսոփային Մծուրանցի է անվանում, զրանով իսկ վկայելով, որ «Նասխանական պատմության» կազմողը ծագումով Մծուրնից էր:

Ինքզած վկայությունները Հնարավորություն են տալիս կարծելու, թե Մծուրն քաղաքից սերող Մար-Արասը, որ ներկա է եղել Սանատրուկի թագավորի պալատի պեղումներին և նկարագրել է Տրգատ III-ի ժամանակվա, այսինքն՝ IV դարի սկզբի, Հունարեն արձանագրությունը, տարել է ոչ թե Ք. ա. II հարյուրամյակ, ինչպես պնդում է Ռորենացին, այլ Ք. Հ. IV դարում: Եվ իսկապես, զեռես Ե. Կատրմերն է ուշադրություն դարձրել այն բանի վրա, որ Մար-Արաս անունն ասորաց մոտ կարող էր Հայտնվել միայն բրիտանական ժամանակներում, երբ Հոպերը գործիչ անվան սկզբում ավելացնում էին Մար կոչումը, որ նշանակելիս է եղել Տեր⁴:

Գիտնականները մատանշում են նաև, թե Հենց Սերետի քաղաք «Նասխանական պատմության» մեջ տվյալներ կան, որ ասՀամանում են զրա գրություն ժամանակը, որովՀետև Հայ Արշակունիների ցուցակում վերջինը Հիշվում է Արշակ II-ի որդի Պապ թագավորը (368-374): Հիմնվելով այս վերջին ժամանակագրական Հիշատակության վրա և Մար-Արասի երկր վերադրելով IV կամ V դարերին՝ Ն. Ստոն անկասկած էր Համանում, որ «Նասխանական պատմության» Հեղինակին ծանոթ էին բիրթական ավանդությունները, և որ նրա «Պատմությունը» Հայաստանում ասորաբրիտանական մշակույթի գերազդեցության արդյունք է:

Հարկ է նշել, որ ինչպես Մաթր այնպես Պ. Ֆետտերը, մատանշելով Մար-Արասի երկր ասորական ծագումը, Հակված էին

¹ Ն. Ակինյան, ելվ. աշխ., էջ 80 և Հջ.:
² Я. А. Манадан, О торговле и городах Армении, Эриван, 1930, էջ 89-91, տե՛ս նաև Բ Հրատու, երևան, 1954, էջ 112-113:
³ Фавстос Бузанд, История Армении, тл. XIV. Перевод под редакцией С. Т. Еремина, Ереван, 1953, стр. 90 [Թրատու ներ քառ՝ «Փաստսի Բիդանի» գաղցու պատմության Հայոց», թագիրը Ք. Պատկանյանի աշխատատրոխար, երևան, 1987, էջ 180 (Թարգմ.):]

⁴ E. Quatremère, Observations sur la ville de Ninve, troisieme article, «Journal des Savants», 1850, էջ 365:

այն մտքին, որ «Նախնական պատմության» սկզբնական քն-
գիրը գրվել է ասորերեն¹: Մակայն Ռորենացու և Սերնոսի
օգտագործած այդ Հուշարձանի գրաբար տեքստերին ման-
րամանակ ծանոթությունը Հիմնի է տալիս կարծելու, որ «Նախ-
նական պատմության» գրաբար թարգմանությունը արվել է
Հունարեն ընթացից, որովհետև Մար-Արաս, Կաղմոս, Կաղզոս
ստույնները Հունականացված ձև ունեն, իսկ Հունարեն անուն-
ները՝ **Κρονος Τίταν Ιαπετος** սխալմամբ թարգմանվել են Զրվան
և Տիտան, Բապտոսիս (փոխանակ Զրուան և Տիտան, Յա-
պտոսիս)²:

Ըստ այդմ կարելի է հարավոր համարել, որ Պրոկոպիոս
Կեսարացին ուղղակիորեն կամ ընդմիջարկված կերպով (նրա
Համար կարող էր աղյուսը ծառայել Փավստոսի «Պատմության»
ստաջին գիրքը³ չի օգտվել Մար-Արասի «Նախնական պատ-
մության» գրաբար ընթացից, ինչպես կարծում են ոմանք⁴, այլ
Հունականից:

Բերենը Պրոկոպիոսի Համապատասխան Հատվածը «Պատու-
ցույթների մասին» գրքից.

«Հայերը Հուտ ունեցել են թագավոր իրենց ցեղից: Այդ մասին
Հրատակություններ կան Հին պատմությունը շարադրող Հեղի-
նակների մոտ: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին գահընկեց արեց
պարսից արքային, պարսիկները խոնարհարար ստանում էին
ստրկական լուծը, բայց պարսիկները մակեդոնացիների դեմ
սպառնալուծություն քարձարեցնելով և Հաղթմանի տանելով, զուր
չպրտեցին նրանց և գրավեցին մինչև Տիգրիս գետն ընկած
ստրածուկները: Գրանից Հեսոս Հինգ Հարյուր տարվա ըն-
թացքում պարսից պետությունը զանվում էր նրանց մեղքում,
մինչև այն ժամանակ, երբ Հռոմայեցիների կայսր զարձավ Մա-
մայայի որդի Ալեքսանդրը: Այն ժամանակ էր, որ պարսիկները
արքաներից մեկը, իր Արչակ անունով եղորոր Հաստատեց Հայոց
թագավոր, ինչպես այդ մասին Հրատակում է Հայոց պատ-

մոթյունը: Ոչ որ աճա չկարժև, որ Արչակունիները Հայական
ժագում ունեն: Եվ այսպես [Հայերի] և [պարսիկների] միջև Հինգ
Հարյուր տարվա ընթացքում խաղաղություն էր տիրում, որը
պայմանավորված էր [իշխող] Հարստությունների ազգակցական
կապերի առկայությամբ»⁵:

Պրոկոպիոսից բերված Հատվածը, ինչպես ճիշտ նշում է
Ն. Աղոնցը, գրեթե ամբողջությամբ վերցված է «Նախնական
պատմությունից». որովհետև միայն այդ պատմության մեջ է
Պարսիկ արքաների թագավորության քաղաքների թիվը հասց-
վում 500-ի և միայն դրա մեջ է Հայ Արչակունիների նահապետ
Համարվում Արչակը⁶:

Ի մի բերելով ամբողջ սավածը՝ մենք կարող ենք փաստահարեն
Լեզրակցանել, որ Մար-Արասի երկը Հայ պատմագրության Հա-
զույն Հուշարձանն է՝ գրված Հունարեն Ք. Հ. IV դարի վերջում:

Իմ Հիշյալ աշխատանքում³ ևս ընդգծել էի, որ Արչակունիների
ժամանակվա Հայաստանի մշակութային-տնտեսական կյանքում
մեծ դեր են խաղացել Հելլենականացած քաղաքաբնակները՝
ասորիներն ու Հրեաները: Այնուհե նշված էր նաև, որ դեռևս Ք. Հ.
III դարում Արտաշատ քաղաքում ապրել է Հելլենականացած
մատենագիր Յամրդիդքոս, որ գրել է 35 գլխից բաղկացած «Βα-
βυλωνιακα»-ն⁴: Ըստ ամենայնի այդպիսի մի Հելլենականացված
ասորի է եղել և Մար-Արաս փիլիսոփան, որ ծնվել է Մծուրում
նրա ավերումից շիշ տասջ:

Մծուրն քաղաքը, ինչպես պարզել է Յո. Մարկվարտը,
տարածվելիս է եղել Արածանիի և նրա ձախ փոսկ Կարասոի
միջև և առևտրային առումով շատ Հարմար դիրք է զբաղեցրել,
այն զանվում էր Տարունի Հարուտա և բերրի դաշտավայրում՝
առևտրային ճանապարհների խաչմերուկում⁵: Մար-Արասի
ծննդավայրն անկասկած Հետաքրքրություն է ներկայացնում,

¹ Procopii Caesariensis, De Aedificiis, III, 1, 4-7. Русский перевод С. П. Кордашевца, ВДМ, 1939, № 4 (9). стр. 241-242 [Թերմոս ընթացքում ասորի պարսիկների Հայաստանի և Հայերի մասին՝ մատենագիր 5-րդ գրքի, Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմ. Հր. Բարթիլյանի, Երևան, 1967, էջ 189 (Թարգմ.)]:

² Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 20 և 31 (առանձնատպիկ):

³ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 69, 2-րդ Հրատ., էջ 84-85:

⁴ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 40, 2-րդ Հրատ., էջ 51:

⁵ J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran. Philol. Supplementband, X, H. 1, էջ 235 և ՀԳ:

¹ Ն. Ման, նշվ. աշխ., էջ 299, 302 և այլն: P. Vetter, Das Buch der Mar Abas von Nisibis, Festgruss. Dr. Prof. Rud. V. Roth zum 50 jährigen Doktorjubiläum, Stuttgart, 1893, էջ 88:

² Մովսես Ռորենացի, Պատմություն Հայոց, Բ. գլ. Թ., էջ 31-32:

³ Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 3 (առանձնատպիկ):

⁴ Մ. Արևիկյան, Հայոց Հին դրամատիկական պատմություն, Հատ. 1, Երևան, 1944, էջ 168:

քանից զրանով իսկ պարզում է, որ Հին Հայոց ճակատագրի մասին խոսող, հիմնականում ժողովրդական ասերի վրա հիմնված «Նախնական պատմությունը» մեաբարվել է ոչ թե եփրատի վերին հասանների մոտ և Գարանաղի և Եփեջաց զախաններում, ինչպես սխալմամբ կարծում էր Ն. Աղոնցը¹, այլ հյուսիսից Հարբին Հարող Տարոնի հյուսիսարևելյան ծայրամասերում:

Այսպիսով պարզում է, որ Մար-Արաս Մծուրանցին ապրել է Հին Հայաստանի այն մասում, որ գտնվել է իր քաղաք ժողովրդական վեպում հիշատակված «Հարք լոնաղաշախ» Հենց Հարեանուկները: Այս դաշտավայրը Հայկանների Հիմնական տարածքն է, և, ինչպես Հարողը մտ է, Սորենացին, այն կոչվել է Կարք («Հայրեր») այնտեղ բնակված Հայոց ետհասակների պատվին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Մար-Արասի երկն իր Հիմնական մասով ներկայացնում է իրենց երկրի անցյալի մասին պատմող Տարոնի և Հարքի ժողովրդական ավանդաբանություններից բնկերներ:

Սերեոսի մոտ եղած «Նախնական պատմությունից» Մոփսես Սորենացու «Պատմության» կախմամբ Մար-Արասից արված սերունդային բաղձաձրի Համեմատական Հեռիմյան պարզման, այնպես էլ Սորենացու պատմագրական երկի ժամանակի և Հայ մասունակաբանության Շուշարձանների շարքում զբաղեցրած տեղի Հարցում:

Դեռևս 1894 թ. Ն. Մատի վերանայող Հողգիծում Համոզել կերպով ցույց էր տրվում, որ Մոփսես Սորենացին ծանոթ է եղել Սերեոսի հիշատակած Մար-Արասի երկին և Արշակունիների ժամանակագրությունը կազմելու անմիջապես որոնք օգտվել է Սերեոսի «Պատմության» սկզբնական գլուխներից: Ի Հակադրություն այս կարծիքին, Սո. Մալխասյանցն իր «Սերեոսի պատմությունը և Մոփսեսի Սորենացի» (Թիֆլիս, 1899) Հետազոտության մեջ փորձում էր սպառնացել, որ Սերեոսի և օգտվել Սորենացու «Պատմությունից», և ոչ թե Հակառակը²:

Մալխասյանցը Հեարավոր էր Համարում այստեղից Հետևություն անել, որ Սորենացու «Պատմությունը» կար և Հայտնի էր մինչ 661 թվականին գրված Սերեոսի «Պատմությունը»:

Ի Հիմնադրում իր կարծիքի Մալխասյանցը բերում է Սերեոսի նշումը և Հիմնում նրա «Պատմության» Գ գլխի վրա, որ Հետևյալ սկզբածրն ունի՝

«Արդ՝ թէ պիտու է թեզ, ո՛վ ընթերցասեր, երկրորդեցից ի պատմագրացն Մոփսիսի Սորենացու և Մոսկիանոսի Տարանացու, Հասաստի և Տյամարիտ մատենագրաց՝ գորգի ի Հարկ, ճանաչել»:

Այնուհետև ըստ Սորենացու և Մոսկիանոս Առողիկի բերվում է Պարթև Արշակունիների ցուցակը մինչև Արտավան, և Հիշատակում են Արտաշես Մասանյանն ու իր Հետնորդները, իսկ ապա, Մամիկոնյանների ծագման մասին պատմությունից Հետո, Համոզում է Հայ, պարսիկ և քրդական իրազեկությունների Համեմատմանակա այդուսակը՝ սկսյալ Սուրբով Մեծից մինչև Վոստապուհ և Հայ Արշակունիների Հարստության ավարտ:

Հարկ է նշել, որ Սերեոսի Գ գլխի առնչությամբ Հայագիտության մեջ լուրջ տարաձայնություններ կան: Դեռևս Ն. Մատն էր շատ միշտ ընդգծում, որ Սերեոսի երկի Բ գլխի վերջի Հայ Արշակունիների ցուցակը «մեզ Հասած տեսքով խիստ սուփյլ է Սորենացու Հետագա ազդեցությունից, որից, բացի ժամանակագրությունից, նկմտովիկ են նաև առանձին արտահայտություններ»³: Հայ պատմագրության տեսանկյունից Արշակունիների ժամանակագրության առումով վերջին խոսքն ասած Մոփսես Սորենացուց Հետո, Հայ մատենագիրները լուրջ զբաղվել են Հեղինակավոր ուսուցչի կրկնությունը²:

Ն. Մատի կարծիքին շատ մոտ են Աղոնցը և Սալաթյանցը: Նրանք վիճարկում են Սերեոսի «Պատմության» Գ գլխի սկզբի վավերականության Հարցը, որ բաղձաձրն ունի Մոփսես Սորենացու և Մոսկիանոս Առողիկի պատմագրական երկերից, և կարծում են, որ Գ գլխի այդ մասը ընդմիջարկություն է և ուշ շրջանի գրչի միջամտություն³: Աղոնցի կարծիքով Սերեոսի «Պատմության» զրազորող կարևոր է Համարել ըստ Հասաստի և

¹ Ն. Աղոնց, նյվ. աշխ., էջ 33 (տեսնեմատակ):
² С. С. Малхасянц, Историк Себеос, см. «Византийский восточник», М., 1949, т. II (XXVII), էջ 99 և հջ.:

¹ Ն. Մատ, նյվ. աշխ., էջ 282:
² Աղո, էջ 283-284:
³ Ն. Աղոնց, նյվ. աշխ., էջ 5-6; Քր. Սալաթյանց, նյվ. աշխ., էջ 58 և այլն:

Հնամարտ մատենագրաց» բերել Արշակունի արքաների ցուցակը, նկատի ունենալով երկրորդ զբրի նախորդ արքայացանկի թերիները:

Ստեփանոս Տարոնեցուն Հին Հերիեակների շարքը դատող Մալխասյանցի տեսակետն Աղոնցն անՀիմն էր Համարում: Ստեփանոս Տարոնեցին, ըստ Աղոնցի, XI դարի պատմիչ էր, Ասողիկ մականվամբ, որովՀետև Գ գլխի սկզբում զրգամ պարսից Արշակունիների ցուցակը թրատ առ ըստ, ստառ ան տառ վերցված է Ասողիկից»: «Քայց տրամաբանական է ենթադրել, որ չնկարագրված ժամանակը և Հին Հերոսների սխրանքները նկարագրել» պատրաստվողը ճանաչելը Ստեփանոսն¹: Ստեփանոս «Պատմությանը» Սերևոսի ծանոթի լինելու մասին Մալխասյանցի կարծիքը զիջվար թեև Հնչտ լինի նաև այլ նկատառումներով: Ռչպես Հայտնի է, Ստեփանոսը և Սերևոսի «Պատմությանը» առաջին շորս գլուխներում եղած ժամանակագրական տվյալների Համեմատական Հետազոտման եզրանակով Հենց Աղոնցն էր Համոզիչ կերպով պարզել, որ ոչ թե Ստեփանոսը երկն էր աղբյուր Հանդիսացել Սերևոսին, այլ ընդհակառակը, Մովսես Ստեփանոսը է օգտվել Սերևոսի սկզբնական գլուխներից՝ Արշակունիների և Սասանյանների ժամանակագրությունը կազմելիս²:

Այս զիրբորշումը միշտ էլ նաև, ինչպես նշում է Աղոնցը, Մամիկոնյանների ծագման մասին պատմության առումով, որովՀետև «Ստեփանոսը երկում նրա ավելի բարդ և ակնՀայտորեն օճանցյալ բնույթը չի խանգարի ցանկացած բանասերի» նրան կայսման մեջ զննելու Սերևոսի Գ գլխից³:

Ռնչպես տեսնում ենք Սերևոսից Ստեփանոսը կոտրված լինելու Հարցում կասկածներ չեն կարող լինել: Սակայն Մալխասյանցը Հնարավոր Համարել իր նախկին տեսակետի պաշտպանությունը և փորձում էր իր կարծիքը Հիմնավորել նոր փաստարկով, այն է՝ «Տրտան», «Քիլ» և «Ջրուան» անունների մեկնությունը: Նա կարծում է, թե այս բառերը մտցրել է Ստեփանոսը, և դրանով փորձում է ապացուցել, որ Ստեփանոսը երկը աղբյուր է Հանդիսացել ոչ միայն Սերևոսի, այլև Սերևոսի Հիշատակած

Մար-Արասի Համար, որի մոտ կան Ստեփանոսը նշած վերորբերյալ անունները⁴: «Տրտանեան Քիլ», «արքայն Տրտանեան», «Տրտանեան» որշիչները, նշում է նա, Սերևոսին ծանոթի Մար-Արասի մոտ բերվում են իբրև պատրաստի անուններ, առանց մեկնարանության, մինչդեռ Ստեփանոսը մոտ դրանք պիտի ըստարժանացնու մեկնարանված են: Մալխասյանցի կարծիքով, Քերտայան Սիրիլյայի վկայությունը՝ «Ջրուան և Տրտան և Յապետոսիլ լի-նելին իշխանք երկրի», Ստեփանոսին այլարժանորեն է մեկնում, կարծելով, որ այդ եզրույթների տակ պատկերացվել են Նոյի որդիները, այսինքն՝ Սեմը, Քամը, Հարեթը: Մալխասյանցը արանից կարկանդակում է, որ այլարժանական Տրտանյան Ստեփանոսը մոտ Համարժեք է «Քամանին», իսկ «Տրտանեան Քիլ» այլարժանության տակ Հասկացվում է «Քաման ներբովքը»: Իր փաստարկը նա ավարտում է այն պնդմամբ, որ «Տրտանեան» և «Քիլ» եզրույթների ստեղծողը Հենց Մովսես Ստեփանոսն է:

Սակայն Մալխասյանցի բերած նկատառումներն անՀիմն են: «Տրտանեան Քիլ», «արքայն Տրտանեան» կապակցությունները Ստեփանոսը Պատմության մեջ կան լուկ այն Հատվածներում, որտեղ վերցված են, ինչպես ինքն է նշում, Մար-Արաս Կատիկայի մատյանից:

Այսպես, նրա Պատմության Ա զբրի ԺԱ գլխի աննաակցում կարգված ենք.

«Եւ յտաջ մատուցել զբանս իր առ, թէ ի Հաստատել Տրտանեան Քիլայ զՄագառորովիս իր առ աննեանեան՝ առաքել ի կողմն Հիստայ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայի արամբը Հաստարմօք, զայ նմա ի Հնագանդուկիսն և կեալ խաղաղութեամբ»⁵:

Հենց այդ՝ Հայիի և Քիլի պատերազմի մասին գլխում, որի Համար աղբյուր է Հանդիսացել Մար-Արաս Կատիկայի երկը, ևս մի բանի անգամ Քիլը Հիշատակվում է իբրև «Տրտանեան Քիլ», «արքայն Տրտանեան» կամ «Տոխացեալ Տրտանեան»⁶:

¹ Աս. Մալխասյանց, նշվ աշխ., էջ 102-105:

² Ա. Մանուկյանի Հատվածը բերում է Մ. Էմիլի Թարգմանությունից՝ Мовсеем Хоренским, История Армении. Русский перевод Н. О. Эмюля, М., 1893, стр. 17): Գնում ենք Մովսես Ստեփանոսը գրաբար բնագիրը (Թարգմ.)

³ Мовсеем Хоренским, История Армении. Русский перевод Н. О. Эмюля, стр. 17-19.

¹ Ա. Աղոնց, նշվ աշխ., էջ 6:

² Անդ, էջ 6-26:

³ Անդ, էջ 26:

Անշուշտ զմփար չէ տանել, որ «Քլեր», «Տրտանեան Քլեր» բրոքուրին էլ Ռորենացու ստեղծած այգարանությունները չեն: Լիովին պարզ է, որ այս անունները կիրառվել են Ռորենացու օգտագործած Մար-Արաս Կառնիայի մասյանում: Ռորենացուց անկախ դրանք եղել են և՛ Մար-Արասի և՛ Արևոտի մոտ:

Սու, Մալխասյանցն իր կարծիքի օգտին խոսող երկրորդ փաստարկ է Համարում «Զրվան» անունը: Այս բառը Հանդիպում է Արևոտի մոտ եղած Մար-Արասի Հետևյալ վկայություն մեջ.

«Քի շուկաց խաղաց գնաց Հայկն ի Բարեկոնել կնանն և ողջուովքն և ամենայն աղխին Հանդերձ, և չոգաւ րնակեցաւ յերկիրն Արարալայ, ի տանն որ ի լեռնտախնն, որ զտառջինն շինեալ էր Զրուանայ՝ Տարրն և Եղրարբքն Հանդերձ»¹:

Սու, Մալխասյանցը Համեմատում է այս շարագրանքը Մովսես Ռորենացու Պատմություն Հետ, որ բերված են Սիմեոնիդորոս փիլիսոփայի պատմությունները Քախտիթրոսի մասին:

«Տես նուևելոյն Քախտիթրայ ի Հայս և զիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սեն ընդ արևմուտս Հիսիսոյ դիտել զերկիրն, և զիպալս զաշտի միում փորու առ երկայնաստիս միով յերամբ, գետոյ ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ատրեստանի, դադարէ առ գետովն երկուտանայ աուրս, և անուանէ յանուն իւր զեւանն Սին, և զտնայ անորն յարեւելս Հարաւոյ, ուստի կէն: Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարրան անուն, երեսուն ուստրօք և Նոպետասան զստրօք և նոցին արամբք մեկնեալ ի Հօրնէ՝ րնակէ անդէն ի նոյն գեանգեր, յորոյ անուն և զգաւտն անուանէ Տարրան, և զանուն տեղւոյն որ րնակեցան՝ կոչէ Տրօսե. զի անդ զտառջինն սկիզբն եղև թաժանելոյ որդւոց նորա ի նմանէ: Նորին դարձան և առ եղերս աճճամանցն Բալխա-րիսոցոց ասին րնակել սակաւ աուրս, մնացել և մի ոմն յորդոց նորա անդ: Քանզի կողմանք արևելից Զրուան զՍեն կոչեն, և Զարուանդ զգաւտն անուանեալ ասնն մինչև ցայժմ»²:

Ռորենացու այս պատմությունից, նշում է Մալխասյանցը, Արևոտի Հիշատակած Մար-Արասին անշուշտ բոլոր վերորերյալ Հանելուկները պարզում են: «Զրվանք», գրում է Մալխասյանցը. «Նոյի որդի Սենի Հեմանտսական անունն է, լեռը, որ Հանդիպեցին՝ Սինն է (կամ Տավրոսը), գետը, որ Հասում է դաշտով՝ երկրան է, րնակատեղին, որ Տարրանը կառուցում է եղրարբքն լեռ, Հայերի գետափնայ տառջին րնակատեղին է, որ Հին Տարրն զավտի անունն է կրում»:

Սու, Մալխասյանցի բերված դիտարկումներն ու եղրահամեմունքը թափարար Համողիչ չեն:

Ինչպես Հայտնի է՝ զեռես ոչ Հեռու անցյալում ներկա Հարցի մասին Տո, Մարկվարտն ամբողջովին Հակասակ կարծիք էր արտահայտել: Նա Համողիչ կերպով ցույց էր տվել, որ Զրվանի մասին Մար-Արասի վկայությունը Ռորենացու Պատմության մեջ էլ³: Եվ իսկապես, այդ վկայությունը, ինչպես զմփար չէ տանել, Ռորենացու Հաղորդածի Հետ թացահայտ Հակասության մեջ է:

